



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



04 NOV 2009



10



Дозволено цензурою, С.-Петербургъ, 16 Октября 1903 года.



1059  
41

„Пушкинская Скоропечатня“, С.-Петербургъ, Лештуковъ 4.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկայ աշխատութիւնը գրելու ձեռնարկել եմ 1880 թուականին, երբ ս. Էջմիածնի հոգևոր ձեմարանում եկեղեցական պատմութեան ուսուցիչ կարգուած լինելով՝ պարտաւորութիւն և առիթ ունեցայ առանձին ուշադրութիւն նուիրելու աւանդած առարկայի ներկայացրած խնդիրների մտադիր քննութեան: Մի անգամ արդէն սկսածը թէև այնուհետև, ուսուցչութիւնը թողնելուց յետոյ էլ շարունակել էի, բայց անաւարտ թողել զանազան պատճառներով՝ մանաւանդ ընդարձակ ուսումնասիրութիւն կատարելու պէտքը տեսնելով, ուսումնասիրութիւն՝ հիմնուած բազմաթիւ կարևոր աղբիւրների վերայ:

Այժմ գործը համարելով աւարտած՝ ներկայացնում եմ ընթերցող հասարակութեան ուշադրութեան, բաւական գտնելով ասել հետևեալը: Ըստ որում քննուած խնդիրը ծագում և ծաւալ է ստացել նախ Արևելեան—Բիւզանդեան և ապա Արևմտեան եկեղեցիներում, ուստի սկզբում մի համառօտ տեսութիւն եմ նուիրել նորա ծագման, ընդարձակուելուն և եկեղեցական վարդապետութիւնների կարգն անցնելուն: Նորանցից յետոյ զալիս է աշխատութեան բուն նպատակը—պարզել թէ պատկերների յարգութիւնը երբ և որպիսի ընդունելութիւն է գտել Հայաստանեայց եկեղեցում: Եւ որովհետև բոլոր պատմական փաստերը բացորոշ կերպով ապացուցանում են թէ եկեղեցին այդ խնդրումն էլ աշխատել է միանգամայն անկախ լինել և առաջնորդուել այնպիսի ուղղութեամբ, որ նորա սեպհական հայացքների և փորձառութեան արդիւնքն է կազմում, ուստի անհրաժեշտ եմ համարել աւելի ընդարձակ տեսութիւն նուիրել այն պատմական անցքերին, որոնք սերտ կապուած են այդ ուղղութեան հետ իբրև նախորդ և հետևորդ պարագաներ:

Բոլոր ծանօթութիւնները համապատասխան էջերում ղետեղե-  
լու յարմարութիւն չգտնելով, միևնոյն ժամանակ չկամենալով ազ-  
բիւրներ ցոյց տուող բազմաթիւ ծանօթութիւններով ընթերցողին  
պատճառ տուած լինել շարունակաբար ընդհատելու ընթերցումն և  
որոնելու պղպիսիները գրքի վերջում՝ բարեւոյ համարեցի առանձին  
ծանօթութիւնները գրքի վերջում դնել սովորական թուանշաններով.  
Իսկ աղբիւրները մասնացոյց անել իւրաքանչիւր էջի վերայ աստղա-  
նիշերով, նշանակելով միայն հեղինակի անունը կամ ազգանունը.  
կամ ուր հարկաւոր լինի՝ գրքի վերնագիրն ամբողջ կամ կիսատ,  
յետագայ ցանկի համեմատ:

9 մայիսի, 1902 թ.

Ա.Ղ.ԲԻԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԿԱՏԻ ԵՆ Ա.Ռ.ՆՈՒԵԼ ՆԵՐԿԱՅ  
ԱՇԽՍՏՈՒԹԻՒՆԸ ԳՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

ՄԱՇՏՈՅ. Զանազան ձեռագիր և տպագիր օրինակներ:  
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ. Զանազան ձեռագիրներ:

ԺԱՄԱԳԻՐՔ. Արարեալ սուրբ և Աստուածաշնորհ թարգ-  
մանչացն մերոց Սահակայ և Մեսրոբայ և երանելի հայրա-  
պետացն Գիւտի և Յովհաննու Մանդակունուց և սրբոյն Ներ-  
սիսի Շնորհալուոյ. ս. էջմիածին, 1853.

ՇԱՐԱԿԱՆ. Հոգևոր երգոց ս. և ուղղափառ Եկեղեցուց  
հայաստանեայց, յօրինեալ ՚ի սրբոց թարգմանչացն մերոց և  
՚ի սրբոց Շնորհալուոյն և յայլոց սուրբ հարց և Վարդապե-  
տաց. ս. էջմիածին, 1861.

ՅԱՅՄԱԿՈՒՐՔ. Տպագրուած «ի Վեհափառ հայրապե-  
տութեան հանուրց հայկազնեաց Տ. Նահապետի սրբազան  
Կաթողիկոսի. ի թուականի Փրկչին ՌէճՁ (1706) իսկ հայոց  
ՌձԾԵ (1155), ներտպարանուծն Գրիգորի դպրի որդուց Մը-  
կրտչի, Կ. Պօլիս»:

ՂԵՐՈՒԲՆԱ. } Լերուբնա Եղեսացի. Երուսաղէմ, 1868.

ԼԱՔՈՒԲՆԱ. } Նոյնը Վենետիկ, 1868.

ԵԻՍԵԻՈՍ. Եւսեբիոսի Կեսարացուց Պատմութիւն Ե-  
կեղեցուց, յեղեալ յասորուոյն ի հայ ի հինգերորդ դարու. պար-  
զարանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ՚ի ձեռն  
հ. Սբբ. վ. ձարեան. Վենետիկ, 1877.

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ. Մովսիսի Խորենացուց Մատենադրու-  
թիւնը. Վենետիկ, 1865.

ՓԱԻՈՏՈՍ. Բուզանդարան Պատմութիւն, շարագրեալ Բուզանդայ մեծի պատմագրի... ի թուիս մերում ՌՃՅԹ (1179)

Կ. Պոլիս.

ԵԶՆԻԿ. Գիրք ընդդիմութեանց, արարեալ 'ի սրբոյ Եզնկայ Կողբացւոյ հայոց Վարդապետէ. Կ. Պոլիս, 1769.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք. Վենետիկ, 1861.

ԵՂԻՇԷ. Պատմութիւն Վարդանանց ըստ Անձեացեացն օրինակի. Թէոդոսիա, 1861.

Ղ. ՓԱՐՊԵՅԻ. Ղաղարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Վենետիկ, 1892.

ՍԵԲԷՈՍ. Պատմութիւն Սերէոսի Եպիսկոպոսի ի Հերակլէն. Կ. Պոլիս, 1851.

ՅՈՎՀՍՆ ՕԶՆԵՅԻ. Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Մատենադրութիւնք. Վենետիկ, 1833.

ՂԵԻՈՆԴ ՎԱՐԴ. Ղևոնդեայ վարդապետի Պատմութիւն. Ս.Պ.Բ. 1887.

ՅՈՎՀ. ԿԱԹ. Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն. Մոսկվա, 1859.

ԹՈՎՄԱ ԱՐԾՐ. Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս.Պ.Բ. 1887.

ԽՈՍ. ԱՆԶԵԻ. Խոսրովու Անձեացեաց Եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից պատարագին. Վենետիկ, 1869.

ԳՐ. ՆԱՐԵԿ. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: Ի հայրապետութեան Տեառն Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսի ամենայն հայոց. Կ. Պոլիս: Գրքիս 339. Երեսուժ «Յիշատակագրութիւն պատմարանութեան Ամենազօր նշանի Աստուածեան խաչին... ի շինուած բնակութեան ուխտին սրբութեան՝ որ կոչի Ապարանք»:

Մ. ԿԱՂԱՆԿ. Մովսիսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի. Մոսկվա, 1860:

ԱՍՈՂԻԿ Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն. Ս.-Պետերբ. 1885.

ՌԻՒՏԱՆԷՍ. Ուխտանէս Եպիսկոպոսի Պատմութիւն հայոց. Վաղարշ. 1871.

ԱՆ. ՍԱՆՍՆ. Անանիայ վարդապետի Սանահնեցւոյ ընդդէմ Երկարնակաց: Զեռաղիր մատենագրանի ս. Էջմիածնի (թուահամար 518) ութածայ, նօտրաղիր. զրեալ ի թրղթի. թիւն անյաչտ:

ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ. Պատմութիւն Արիստակեայ վ. Լաստիվերացւոյ. Վենետիկ, 1844.

ՅՈՎՀ. ՍԱՐԿ. Յովհաննէս Սարկաւազ վարդապետ 1. «Վասն պատկերաց». 2. «Վասն մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց»: Զետեղուած են վերոյիշեալ ձեռագրի մէջ (Անան. Սանահնեցի):

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ. Թուղթ Ընդհանրական ս. Էջմրածին, 1865.

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ. Գիրք որ կոչի Յիսուս Որդի. Ս. Պետերբուրգ, 1785.

Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ. Տեառն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի Եպիսկոպոսի Ատենաբանութիւն և ճառք. Վենետիկ, 1838.

Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ. Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի Եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին. Վենետիկ, 1847.

ԳՐ. ՏՂԱՅ. Գրիգորի Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի. Վենետիկ, 1838.

ՌԻՌՀԱՅԵՅԻ. Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. Երուսաղէմ, 1869. նոյնը՝ Վաղարշապատ, 1898.

Ս. ԱՆԵՅԻ. Սամուէլի Քահանայի Անեցւոյ հաւաքմունք 'ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893.

Մ. ԱՍՈՐԻ. Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց Պատրիարքի. Երուսաղէմ, 1871.

ՎԱՐԴ. ՎՐԴ. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսաբանեալ. Վենետիկ, 1862.

ԿԻՐ. ԳԱՆԶ. Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ. Մոսկուա, 1858.

ՍՏ. ՕՐԲԵԼ. Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատ-

ժողովուրդն տանն Սիսական. Մոսկվա, 1861. նոյնը՝ հրատարակութիւն Կ. Վ. Շահնազարեանց. Փարիզ, 1859:

ԴԱՐԴԵԼ. Յովհաննու Դարդելի՛ ժամանակագրութիւն Հայոց. Ս.Պ.Բ. 1891.

ԳՐ. ՏԱԹԵԻ. Գիրք Հարցմանց երիցս երանեալ սրբոյ չօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն. Կ. Պոլիս, ի թուին Հայոց ՌՃՅԸ (1729):

Ղ. ՋԱՅԿԵՅԻ. Դրախտ ցանկալի. Կ. Պոլիս, 1735:

ԿԼ. ԳԱԼԱՆՈՍ. Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն հռովմայ: Շաշազրեալ ի յերկուս հատորս ի պատմական և վիճաբանական ի Կարդէ Թէոփնոսաց Կլեմէս վարդապետէ. հռոմ, 1648:

Ղ. ՎԱՆԱՆԴ. Ղուկաս Վանանդեցի. Պատկերասէր Պատկերատեաց. Ամստերդամ, 1716.

ՉՍՄԶ. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց Կ. Պոլսեցւոյ, երեք հատոր. Վենետիկ, 1784 — 86:

ԻՆՃԻՃԵՍՆ. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան. Մեծ Հայք. Վենետիկ, 1822.

ՅՈՎՅ. ԵՊ. ՇԱՅԻՍ. Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ. աշխ. Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ. բաժանեալ յերկուս հատորս. Ս. Էջմիածին, 1842.

ՅՈՎՆՍՆ. Պատմութիւն Տիեզերական ժողովոց եկեղեցւոյ, որք յարեւելս զուժարեցան. զոր յօրինեալ է Հ. Պողոս Վ. Յովնանեանց. Վիէննա, 1847.

ՓԱՓԱԶ. Պատմութիւն Եկեղեցական. աշխատասիրութեամբ Տ. Իզնատիոսի Վ. Փափագեանց. Վենետիկ, 1848.

ՍԱՅՍԿԵՍՆ. Յաղագս բարեխօսութեան Սրբոց և զնրշխարս նոցա և զպատկերս մեծարելոյ. աշխատ. Հ. Գարեգին Վ. Սահակեան. Վենետիկ, 1852:

ՀԻԻՐՄԻԻԶ. Աստուածաբանութիւն Տեսական. համա-

նօտեալ ի ձեռն Տ. Եղուարդայ Վ. Հիւրմիւղ. երկու հատոր Վենետիկ, 1862:

ՇԱՅՆՍԶ. Դաշանց Թղթոյ ըննութիւնն և հերքուժր. Կ. Վ. Շահնազարեանց. Պարիս, 1862:

ԸՍՏԿԱՐ. Եկեղեցական Պատմութիւն. զրեց Հ. Վարդան Վ. Ըստկարեան. Վիէննա, 1872:

ՋՍՄԲՌ. Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ Կաթողիկոսէ Երևանցւոյ. Վաղարշապատ, 1873.

ՊԱԼՃԵՍՆ. Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութիւն նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան Սիւնհոլոսի. զրեց Աղէքսանդր Վ. Պալճեան. Վիէննա, 1878.

ՅԱՆՈՍ. Յանոսի՛ յաղագս պապի և ժողովոյ նորա. Թարգմանեաց Գարր. Արքեպ. Այվագեան. Վաղարշապատ, 1871.

Յ. ԱԻԳԵՐ. Դաւանութիւն Եկեղեցւոյն Հայոց. Հ. Յար. Աւզերեան. Վենետիկ, 1845.

ԴՐԷՊԷՐ. Պատմութիւն Մտաւոր Զարգացման Եւրօպիոյ. Ջօն Վիլիամ Դրէպէր. Հատ. Ա. Շուշի, 1879.

ԳԱՐՍԳԱՇ. Գննական Պատմութիւն Հայոց Ա. Մ. Գարազեան. Թիֆլիզ, 1895.

ԱՆ. ՆԱՐԵԿ. Անանիա Նարեկացի. Գիր խոստովանութեան. հրատարակութիւն Միաբանի. Վաղարշապատ, 1892.

Հ. ԱԼԻՇԱՆ. Տեղադիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855.

” ” Շիրակ. Վենետիկ, 1881.

” ” Սիսուան. ” 1885.

” ” Այրարատ. ” 1890.

” ” Սիսական. ” 1893.

” ” Հին Հաւատք կամ հեթանոս. Կրօնք Հայոց. Վենետիկ, 1895.

Հ. ՋՍՐԲ. Հայկական հին Գիրութեան Պատմութիւն (գար Դ.-ԺԳ.) Հ. Գարրիէլ Զարբանայեան. Վենետիկ, 1897.

ԳԱԹԸՐՃԵՍՆ. Հանգանակ Հաւատոյ, որով վարի Հայաստանեայց Եկեղեցի. զրեց Հ. Յովսէփ Վ. Գաթրրճեան. Վիէննա, 1891.

ԳՍԹԸՐՃԵՍՆ. Սրբազան Պատարագածատույցը Հայոց ի  
Հ. Յովսէփայ Վ. Գաթրճեան. Երկու հատոր, Վիեննա, 1897.

Հ. Բ. ՍՍՐԳ. Ուսումնասիրութիւն Մանրէա-Պաշտօնական  
Թոնդրակեցիների ծասին. զրեց Հ. Բարսեղ Սարգիսեան. Վե-  
նետիկ, 1893.

Գ. Թ. Գիրք Թղթոց. Մասննադրութիւն նախնեաց.  
Թիֆլիզ, 1901. Պարբերական հրատարակութիւններ:

ԱԲ. ДЕ ЛА ПОРТЪ. Всемирный Путешественатель. Из-  
данное Господиномъ Аббатомъ де ла Портъ, а на Россійскій  
языкъ перев. съ французскаго. Томъ второй. Издание третіе.  
С. Петербургъ, 1816.

ОПЫТЪ КУРСА ЦЕРК. ЗАКОН. Опытъ Курса церков-  
наго законовѣднія. Архимандрита Іоанна, т. перв. С. П. Б.  
1851.

Նշընը՝ выпускъ второй, С. П. Б. 1851.

МАКАРІЙ ЕП. Православно-Догматическое Богословіе.  
Макарія, Епископа Винницкаго. С. П. Б. 1857.

ИСТ. АГ. Исторія Агванъ, пер. съ Армянскаго (К. Патк.)  
С. П. Б. 1861.

ИСТ. ХАЛ. Исторія Халифовъ. Вардапет Гевонда (К.  
Патк.). С. П. Б. 1862.

ИСТ. ВАРД. Всеобщая Исторія Вардана Великаго, пер.  
Н. Минь. Москва 1864.

МАККЕНЗИ. Римское право. соч. Лорда Маккензи. пер.  
съ Анг. Москва, 1864.

СВ. УБРУСЪ. Подробное сказаніе о перукотворномъ Об-  
разѣ Господа Бога и Спаса Нашего Іисуса Христа, именуемомъ  
святый убрусъ. з. М. Москва, 1865.

ТРОИЦКІЙ. Изложеніе вѣры церкви Армянскія, начер-  
танное Нерсесомъ, Католикосомъ Армянскимъ, Троицкаго.  
С. П. Б. 1875.

СОФОНІЙ. Современный бытъ и литургія христіанъ ино-  
славныхъ... съ присовокупленіемъ переводной записки о несо-  
гласіи церкви Армянской съ вселенскою православною. Софо-  
нія, Епископа Туркестанскаго и Ташкентскаго. С. П. Б. 1876.

ШЛОССЕРЪ. Всемирная Исторія Ф. Шлоссера т. VI  
С. П. Б. 1862.

ВЕБЕРЪ. Всеобщая Исторія Г. Вебера, т. V Москва, 1887.

СУВОР. Римское Папство до раздѣленія церквей. Акто-  
вая рѣчь и. д. проф. Демид. Юрид. Лицея К. Суворова. Яро-  
славль. 1882.

СУВОР. Курсъ церковнаго Права, томъ первый. к. С.  
Ярославль. 1889.

СУВОР. Курсъ церк. Права, томъ второй. К. С. Ярославль  
1890.

ЛЕБ. Вселенскіе Соборы IV и V вѣковъ. часть I. А. П.  
Лебедева, проф. Моск. университета, Сергіевъ—Посадъ, 1896.

ЛЕБ. Вселенскіе Соборы VI, VII и VIII вѣковъ. А. П.  
Лебедева, заслуженнаго проф. Моск. университета, Москва, 1897.

ЛЕБ. Исторія раздѣленія церквей въ IX, X, и XI вѣкахъ  
А. П. Лебедева засл. проф. Моск. университета. Москва, 1900.

ЛЕБ. Церковно-Историческія Повѣствованія. А. П. Лебе-  
дева проф. Моск. университета, Москва, 1900.

ЛЕБ. Очерки внутренней исторіи Византійско-Восточной  
церкви въ IX, X и XI вѣкахъ, проф. Моск. университета  
А. П. Л. Москва, 1902.

ФАРРАРЪ. Жизнь Іисуса Христа. соч. Ф. В. Фаррара,  
новый переводъ съ 30-го англійскаго изданія А. П. Лопухина.  
С. П. Б. 1887.

ФАРРАРЪ. Жизнь и труды св. Апостола Павла Ф. В.  
Фаррара, пер. съ XIX англ. изданія А. П. Лопухина, С. П. Б.  
1887.

БРОК. Энциклопедическій Словарь. Брокгаузъ—Ефронъ.  
С. П. Б.

МАРРЪ. Новые матеріалы по Армянской Эпиграфикѣ.  
С. П. Б. 1893.

МАРРЪ. Ани, столица древн. Арменіи. Историко-архіоло-  
гическій набросокъ проф. Н. Я. Марра. Братская помощь Ар-  
мянамъ. 2-ое изд. Москва, 1898.

ИЗВ. РУС. АРХ. ОБЩ. Извѣстія русскаго Архіологиче-  
скаго Общества въ Константинополѣ. Одесса, 1897.

АННИН. Александръ Аннинскій. Древніе Армянскіе исто-  
рики какъ историч. источники. Одесса, 1899.

АННИН. Исторія Армянской церкви (до XIX вѣка) Ки-  
шиневъ, 1900.

HÉFÉLÉ. Histoire des Conciles. Paris 1869—1873.

ED. DULAURIER. Histoire, dogmes, traditions et liturgie  
de l'Eglise Arménienne, par Edouard Dulaurier. Paris. 1859.

M. BROSSET. Histoire de la Siounie, par Stephanos Orbelian, traduite de l'Armémien par M. Brosset. S. Pétersbourg. 1864.

CHAHNAZ. Histoire des guerres et des conquêtes des Arabes en Arménie, par l'éminent Ghevond Vardapet arménien, trad. par Caraped V. Chahnazarian, Paris, 1856.

Ա.

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԵՒ ՊԱՏԿԵՐՅԱՐԳՈՒԹԵԱՆ ԾԱԽԱԼԸ  
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒՄ.

Քրիստոնէական Եկեղեցում պատկերներ ունենալու և չարդելու սովորութեան ծագումը մինչև այսօր վիճելի խորհրդներին մէկն է համարուել: Այդ նիւթի վերայ խօսող հեղինակները բաժանուած են երկու մասի. մի մասում կանգնած են նորանք, որոնք պատկերների մուտքն և նորանց չարգրնծալութիւնն այնքան հին են համարում, որքան Եկեղեցու իրան սկզբնաւորութիւնն. ոմանք էլ նոյն իսկ տանում հասցնում են Հին Ուխտի ծագումին: Միւս մասն ասում է, թէ մինչև Չորրորդ դարը Քրիստոնէայ եկեղեցիներում պատկերներ չեն եղել. այլ նախնի քրիստոնէաները միայն խորհրդանշաններ են գործածել Փրկչին ներկայացնելու համար, սակայն առանց կրօնական չարգանքի առարկաներ դարձնելու այդ նշանները: Ընթերցողին երկու մասի կարծիքների և փաստերի հետ ևս ծանօթացրած լինելու համար յառաջ ենք բերում ամեն մի կողմի նշանաւոր ներկայացուցիչներից մի քանիսի խօսքերը: Առաջին՝ թէ պատկերչարութիւնը միշտ եղել է եկեղեցում. 1. «Ս. զրքի համաձայն՝ «ինքն Սասուած հրամայեց Մովսէսին կազմել Ուխտի ճապանակն և դնել նորան հնակատկարանեան առաջին եկեղեցու զյխաւորադոյն մասում—ի Սրբութեան սրբոց... իսկ «ճապանակ Ուխտին ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անտեսանելի Աստուծու ներկայութեան տեսանելի պատկերն, որ Իսրայէլացիներին միշտ մտաբերել էր տալիս Եհովային և նորանց «մտածմունքն ուղղում էր զէպի նախատիպը. «Եւ եղէ,» ի

«չուել ճապանակին՝ ասէ Մովսէս. արի՛ Տէր» (Թ. 10,34)...  
 «Ինքն Աստուած հրամայեց Մովսէսին շինել բերովբէների  
 «երկու քանդակեալ պատկերներ և դնել Սրբոց Սրբութեան  
 «մէջ, բաւութեան երկու կողմերում... Յայտնի է նոյնպէս,  
 «որ ինքն Աստուած հրամայեց Մովսէսին բարձրացնել պղնձի  
 «օձր անապատում... Իսկ այդ օձր յաակապէս խաչի վերայ  
 «բարձրացող մեր Փրկչի պատկերն էր... Սողոմոնը՝ խորանի  
 «օրինակով ուրիշ հաստատուն տանար շինելով Աստուծուն՝ դրեց  
 «ճորանում, Սրբոց Սրբութեան բուն միջափայտում, երկու բե-  
 «րօբէների նմանութիւններ, որոնք շինուած էին կիպարիսից  
 «և ոսկեղօծուած... Հին Ուխտի ս. Պլքում այսքան պարզ  
 «հիմունքներ ունեցող ս. պատկերների վարդապետութիւնն  
 «առաւել պարզ և մերձադոյն հիմունքներ ունի նոր Ուխտի  
 «սրբազան Աւանդութեան մէջ: Հաւատի Տիեզերական վարդա-  
 «պետներից մէկը, Մեծն Բարսեղ այսպէս է ասում իւր խոս-  
 «տովանութեան մէջ... յարգում եմ նորանց (Առաքեալների,  
 «Մարգարէների, Մարտիրոսների) պատկերներն և երկրպագում  
 «եմ նորանց առջև մանաւանդ նորա համար, որ նորանք ա-  
 «ւանդուած են ս. Առաքեալներից և արգելուած չեն, այլ նը-  
 «կարուած են մեր բոլոր եկեղեցիներում...»

«Երկու ամենահին ասացուածներ կան. առաջինն այն է,  
 «Թէ ինքը Տէրն մեր Յիսուս Քրիստոս բարեհաճեց սքանչելա-  
 «պէս նկարել իւր կերպարանքը Թաշկինակի վերայ և ուղար-  
 «կել Եգիպտոսի իշխան Սբղարին. ասացուած՝ որի ճշմարտու-  
 «թեան մասին տարակոյս չունեցան և է. Տիեզերական ժողովի  
 «Հայրերը: Երկրորդն այն է, Թէ չորս աւետարանիչներից մէկը  
 «ս. Ղուկաս դիտակ լինելով նկարչութեան արուեստին՝ նկարել  
 «և Թողել է իրանից յետոյ Աստուածամօր պատկերները...  
 «Կան հների զրաւոր վկայութիւններ Թէ ս. պատկերները  
 «յարգուել են առաջին երեք դարերում: Այսպէս՝ Տերտուղիա-  
 «նոսն չիշում է Փրկչի նկարուած լինելն եկեղեցական սկիհ  
 «ների վերայ բարի հովուի կերպարանքով»: \*)

\*) Мак. Прав. Докл. Бол. томъ II, стр. 436—439.

2. «Մտադրութեամբ քննելով առաքելական և (եկեղե-  
 «ցական) Հայրերի աւանդութիւնը, նոյնպէս ս. Գրքի այն աւե-  
 «ղերն, որոնք վերաբերում են Սրբոց և նորանց նուիրական  
 «նկարների յարգմանը՝ ժողովի (է. արեգ.) Հայրերը համոզուե-  
 «ցին 1, որ սուրբ պատկերներ չարգելու սովորութիւնն իւր  
 «սկիզբն առնում է առաքելական ժամանակներից. 2, որ այդ  
 «սովորութիւնը Քրիստոնէաների մէջ ամեն ժամանակ և ամե-  
 «նուրեք զօրութիւն է ունեցել»: \*)

3. «Քանզի և ինքն Աստուած հրաման ետ Մովսէսի  
 «նմանութիւն բերովբէից առնել. և Հերոնիմոս ասէ. զի տա-  
 «պանակին պաշտօն տանէին հրէայք վասն բերովբէիցն և եթ,  
 «որ էին ի վերայ նորա»: \*\*)

4. «Քրիստոնէութեան մուտք զործելուն հետ հռոմէա-  
 «կան նահանգներում մուտք գտաւ և պատկերներ ու սրբոց  
 «նշխարներ յարգելու սովորութիւնը»: \*\*\*)

Երկրորդ՝ Թէ պատկերների զործադրութիւնը Չորրորդ  
 դարից յառաջ չէ եղել:

1. «Հին Կաակարանը պատկերներ արգելում էր. ըստ  
 «որում հրէական ազգի Թուլութեան և զէպի դրացի ազգերի  
 «կռապաշտութիւնն ունեցած մեծ հակամիտութեան հետ միա-  
 «սին այդ պատկերները վտանգած կլինէին մի և հօգեղէն  
 «Աստուծու կերպարութիւնը: Ինչպէս Հին Կաակարանի բոլոր  
 «ժիսական պատուէրները՝ նոյնպէս և այս արգելքը չունէր  
 «այլևս նշանակութիւն նոր օրէնքի մէջ: Ընդհակառակը Քրիս-  
 «տոնէութիւնը ուսուցանում էր մեծարել Ամենաբարձրեալին  
 «բոլոր արուեստների զործակցութեամբ—երաժշտութեան և  
 «բանաստեղծութեան, ինչպէս նաև նկարչութեան և քանդա-  
 «կագործութեան... բայց և այնպէս շատ լաւ հասկանալի է,  
 «Թէ քրիստոնէութիւն ընդունած հրէաներն, որոնք, հետևա-  
 «բար, իրանց նախկին դասախարակութիւնից սովորել էին տա-  
 «ծել խիստ հակակրօթիւն զէպի պատկերները՝ մեծ զժուա-

\*) Опытъ кырса черк. закон. свт. всторыи 510.

\*\*) Սահ. Յաղագս բարեխ. սրբոց... 312.

\*\*\*) Веберъ Всеобщ. Ист. т. пятый. 220.

«բուժեամբ են ըմբռնած քրիստոնէութեան այս մտքերն, որոնք  
 «մանաւանդ աւելի խեթալի պիտի թուէին նորանց, քանի որ  
 «առաջին քրիստոնեաներին շրջապատած էին և սպառնում էին  
 «այն բաղձաթիւ հեթանոսներն, որոնք պաշտում էին պատկե-  
 «րակուռքեր: Վասն որոյ նախնական եկեղեցու հովիւները խո-  
 «հեմութեան պատկառելի իրաւամբ թոյլ չէին տալիս, որ  
 «պատկերապաշտամունքը տարածուի: Այդ արդարեւ կարեւոր  
 «էր՝ նորադարձ հեթանոսներին կրկին կռապաշտութեան յա-  
 «րելու որևէ պատճառանք կամ որևէ հրապոյր տուած չլինե-  
 «լու համար: Վերջապէս Եկեղեցին, որպէսզի իրան կատարե-  
 «լապէս չզիտեցողներին չերևայ մի նոր տեսակի կռապաշտու-  
 «թիւն հաստատող, պէտք զգաց հրաժարուելու Փրկչի պատ-  
 «կերները դործադրել և չարդել տալուց.....»

«Սակայն ժամանակի հետ Փրկչի և Նորանով դտած մեր  
 «փրկութեան յիշատակը միտք ներշնչեց քրիստոնեաներին ու-  
 «նենալու զՅիսուս Քրիստոս ներկայացնող խորհրդանկարներ-  
 «մանաւանդ, որ այդ նկարները թոյլատրուած էին չին Կաթո-  
 «լիկոսներում: Այսպէս օրինակ՝ դործածական դարձան աղանու,  
 «ձկան, քնարի, խարսխի և նաւի նկարները. բայց առաւելա-  
 «պէս խաչի պատկերը դտաւ ընդունելութիւն. փասն որոյ և  
 «քրիստոնեաներն յանախակի կոչուած են եղել խաչապաշտներ:  
 «ԶՔրիստոս-բարի հովուի խորհրդաւոր և մարդկային կերպա-  
 «քանքով ներկայացնելը մի մեծ քաջ անել էր դէպի ընթաց-  
 «քի աւելի մեծ համարձակութիւնը: Տերտուղիանոսի ասե-  
 «լով՝ այդ պատկերը երկրորդ դարից սկսած յանախ դտնուած  
 «էր հաւատացեալների դործածած բաժակների վերայ: Սա-  
 «կայն այդ պատկերներն աւելի երևում էին մասնաւոր անձե-  
 «րի մօտ. հասարակական ազօթանոցներում նորանց տեսնելը  
 «հանելի չէր: Յառաջ քան քրիստոնէական պատկերների՝ ի  
 «չարդանս ընդունուելն ուղղափառներից՝ դտնում ենք այդպի-  
 «սիններն իբրև չարդանքի առարկայ հերետիկոսների, օրինակ՝  
 «կարպոկրատեանների և ընտրական փիլիսոփայութեան (ec-  
 «lectique) հեռուողների մօտ, որպիսին էր Սեբրիանոս կալսորդ:.....  
 «Այդ շրջանից (չ. վարից) սկսած սովորութիւն է լինում

«դՔրիստոս, դառարեալս և դճարգարէս ներկայացնել պատկեր-  
 «ներով, ծողաչիքներով և արձաններով. և ինքը Կոստանդիա-  
 «նոսն այդ պատկերներից մի քանիսը դրեց եկեղեցիներում  
 «կամ բաց երկնքի տակ»: \*)

2. «Պատկերների դործածութիւնը ծաւալ ստացաւ ոչ  
 «միանգամից, այլ հետզհետէ: Առաջին երեք դարերում... քրիս-  
 «տոնեաները բաւականանում էին, իրանց դադափորներն ար-  
 «տաչայտելու համար, զանազան խորհրդանկարներով. օրինակ՝  
 «նաւի, քնարի, աղանու, ձկան...: Միայն առաջին երեք դա-  
 «րիքի վերջում քրիստոնէական նկարչութիւնը խորհրդանկար-  
 «ներից անցաւ պատկերադրութեան... իսկ պատկերների դոր-  
 «ծածութիւնը հաստատութիւն և տարածումն է դտնում յա-  
 «կապէս չորրորդ և հինգերորդ դարերում»: \*\*)

3. «Ամենահին քրիստոնեայ հեղինակները կարծում էին,  
 «որ նկարչութիւնն և քանդակագործութիւնն արդելուած էին  
 «ս. Գրքով և որ՝ սորա համար էլ վնասակար արհեստներ էին,  
 «և թէև Նիկիայի Երկրորդ ժողովն ասում էր, թէ եկեղեցին  
 «միշտ ընդունել է պատկերների դործածութիւնը, բայց կան  
 «շատ փաստեր, որոնք ապացուցանում են, թէ նոցա իրական  
 «երկրպագութիւնն ընդունուած չէր չորրորդ դարից յառաջ,  
 «երբ որ այդ՝ Սպանիայում պատահած դէպքի առիթով մեր-  
 «ժուեց Իլլերիսի ժողովից»: \*\*\*)

Յիշուած Իլլերիսի կամ Նիլլերի ժողովն, որ դուժա-  
 բուեց 306 թուին, պատկերների դործադրութեան ընդդէմ  
 սահմանել է չետադայ 36-երորդ կանոնը. «վնուեց թէ՛ ար-  
 ժան չէ, որ եկեղեցում պատկերներ լինեն. և նա, որ պաշտե-  
 լին ու երկրպագելին է՝ նկարուի պատերի վերայ»: \*\*\*\*)

Պատկերների մուտքն Արևմտեան եկեղեցում շատ չետոյ  
 է տեղի ունեցել քան արևելեան—Յունականում: Սակայն՝ եթէ  
 վերջինումս էլ պատկերներ դործադրուել են արդէն Դ. և Ե դա-

\*) Hefélé. Hist. des conciles. 7. 249—251.  
 \*\*) Леѳ. Вечл. соб. м. 680р. 128.  
 \*\*\*) Դրեպեր. 405.  
 \*\*\*\*) Hefélé. U. 149.

րերում, դարձեալ այդ դորձադրութիւնը կանոնապէս սահմանուած պատկերչարգութիւն (каноническая формулировка законоположения) հասկանալու չէ, — այդ միայն ութերորդ դարում հաստատուեց Նիկիայի Բ. ժողովով: Մինչև այդ ժամանակն եկեղեցին թէև ընդունել է Քրիստոսի, Աստուածամօր, առաքելների և սրբոց պատկերների դորձադրութիւնը, բայց դորա մասին պաշտօնական հրաման չէ արձակել, 1, ուստի. «թէ նկարների թիւը, թէ նորանց չարգանքի աստիճանը «միակերպ չէին քրիստոնեայ աշխարհի զանազան մասերում, «այլ համեմատ տեղական սովորութիւնների և եկեղեցական «ազդեցիկ իշխանաւորների անձնական հակումների տարբերութեան»: \*)

Քանի որ չկար պատկերների չարգութեան մասին պաշտօնական հրաման, չկար հետևաբար և չչարգելու դէմ պատիժ կամ սաստ. այդ պատճառով էլ երկու ուղղութիւններն ևս միաժամանակ սկսուել և շարունակուել են դարերի ընթացքում՝ մնալով և նկատուելով միայն իբրև մասնաւորների կարծիքներ, որոնք տեղիք են տուել միմեանց ընդդէմ հակաճառութիւններին: Այդ մասին բաւական ենք համարում յառաջ բերել պրօֆ. Լեբելի խօսքերը. «Չորրորդ և հինգերորդ դարերն այն ժամանակն են կաղմում, երբ պատկերներն «եկեղեցում հաստատուեցին, տարածուեցին և չարգանքի արժանի բարոգուեցին. բայց այդ դարերից էլ սկսում է անընդհատ դիմադրութիւն նորանց ընդունելութեան և չարգրեմայութեանը. միայն թէ այդ դիմադրութիւնը մխում է վտանգաւոր կալծի նման մինչև Լ. դարն... երբ բորբոքւում, դառնում է մեծ հրդեհ: Հարկաւոր ենք համարում տեղեկութիւններ տալ թէ ի՞նչ էր այն դիմադրութիւնը պատկերների «դորձադրութեան և չարգութեան, որ տեղի է ունեցել մինչև Լ. դարն, ըստ որում այդ դիմադրութիւնը կարելի է «նկատել իբրև իսկական պատրաստութիւն դէպի պատկերամարտութիւնն: Արդէն Դ. դարում, երբ ապրում էին պատ-

\*) Веберъ, Всеобщ. Ист. в. 221.

«կերների այնպիսի խորիմաստ պաշտպաններ, ինչպէս Մեծն Բարսեղ, Գրիգոր Աստուածարանն և Գրիգոր Միւսացին, երևում են առաջին և միևնոյն ժամանակ նոյնպէս հեղինակաւոր հակառակորդներ պատկերների դորձադրութեան: Մեր խօսքը «Կեսարիայի եպիսկոպոս Եւսեբիոսի մասին է, որ Մեծն Կոստանդիանոսի բարեկամն և սիրելին էր և եկեղեցական նշանաւոր պատմիչ ու հիանալի ուսման տէր մարդ: Մեղ հասել է նորա մի նամակն, որ ուղղուած է Մեծն Կոստանդիանոսի քոչր և Լիկիանոս կալսրի այրի՝ Կոստանդիա թագուհուն: «Նամակից երևում է, որ կալսրուհին խնդրել է Եւսեբիոսից «ուղարկել իրան Փրկչի պատկերն. իսկ նա չէ կամեցել կատարել նորա ցանկութիւնը՝ դանելով զայն պախարակելի...»

«Պատկերչարգութեան դիմադրութիւնը չէ զաղարում և չետաղայ դարերում: Նեստորականութիւնն և միաբնակակաճութիւնն, որոնք իրանց ծագումով պարտական են չետաղայ Ե. դարին, իրանցից տուեցին առանձին ազանդներ պատկերամարտ ձգտումներով: Այդ ձգտումները խորթ չէին չնդկաստանի թովմասեան նեստորականներին: Նեստորականները «թշնամանալով ս. Կիւրեղ Աղէքսանդրացու իբրև իրանց զըխաւոր հակառակորդի դէմ՝ նախատում էին նորան, որ իբր «թէ եկեղեցում պատկերչարգութիւն մտցնողը զըխաւորապէս «նա է եղել: Նեստորականների նման և միաբնակականութեան «մի քանի ազանդներ թշնամարար էին վերաբերում պատկերչարգութեան: Միաբնակական մի ազանդի ներկայացուցիչ Փիլոկսենէսն ասում էր. «պէտք չէ անմարմին հրեշտակներին «մարմնաւոր անել և մարմնաւոր կերպարանքով նկատել. իբր «թէ նորանք ունեն մարմնաւոր ձևեր: Նոյնպէս պէտք չէ պատիւ և փառք ընծայել Քրիստոսին նորա պատկերանկարի «միջոցով. ընդհակառակը՝ հարկաւոր է դիտենալ, թէ նա ընդդունում է միմիայն հողով և նշմարտութեամբ երկրպագելը: «Հարկաւոր է և այն դիտենալ, թէ Ամենասուրբ Հոգին ազանդու կերպարանքով նկարելը տղայական մտածողութեան նշան է. ըստ որում աւետարանական ասացուածքներն ոչ մի տեղ «չեն ուսուցանում թէ Ս. Հոգին ազանդի էր. այլ միայն ա-

«սում են թէ նա երբեմն երևացել է աղանու կերպարանքով:  
 «Եթէ նա մի անգամ երևացել է այդ կերպարանքով՝ դորա-  
 «նից չէ հետևում, թէ բարեպաշտ բրիստոնեաներին պատշաճ  
 «է նորան մարմնեղէն կերպարանք յօրինել: Փիլոկսենէսը խօս-  
 «քից անցնում է գործի. պահպանուած կան վկայութիւններ,  
 «թէ նա կործանում էր հրեշտակների պատկերներն, իսկ Փրկչի  
 «պատկերները ծածկում էր անմատչելի տեղերում: Նոյնն էր  
 «անում և մի ուրիշ միաբնակ-Սեբրոսը: Նա կործանում էր  
 «սեղանները, խորտակում ս. անօթներն.— առաջինները ջնջում  
 «էր, իսկ վերջինները հալում. և տաճարներում Ս. Հոգին ներ-  
 «կայացնող ոսկեղէն ու արծաթեղէն աղանիները սեփակա-  
 «նացնում էր իրան, ասելով. աղանու նկարը կարող չէ Ս.  
 «Հոգու անուն կրել: Հաստատում են, թէ Սնաստաս կայսրն  
 «էլ (491—518) պատկերամարտ ձգտումներով յօդուա իւր  
 «գրաւեց Կ. Պօլսի ոսկեղէն և արծաթեղէն նկարները:

«Յետնագոյն ժամանակի— Զ. և Է. դարերի եկեղեցական  
 «գործները տալիս են պարզ տեղեկութիւններ, որոնցից կա-  
 «րելի է եզրակացնել, թէ ատելութիւնը պատկերների դէմ մի  
 «երևոյթ է եղել, որ անընդհատաբար շարունակուել է մինչև  
 «բուն պատկերամարտութեան ժամանակը: Սնաստաս Սինայ-  
 «եցին (Զ. դար) պարտաւոր եղաւ պատկերչարգութիւնը  
 «պաշտպանել պատկերների ինչ որ անչաչա թշնամիների դէմ,  
 «որոնք թոյլ էին տալիս իրանց անպատուել պատկերները.....  
 «Սնցնենք է. դարին: Նիկոպոլի (Կրէտէ կղզու վերայ) Ղևոն-  
 «դիոս եպիսկոպոսի դրուածներից երևում է, որ այդ ժամա-  
 «նակ ևս կային մարդիկ, որոնք շատ, և, ըստ երևոյթին՝ զօ-  
 «րաւոր առարկութիւններ էին անում պատկերչարգութեան  
 «դէմ. այնպէս որ նա ինքը այգալիսիների դէմ զրում է առան-  
 «ձին շարադրութիւն: Եպիսկոպոսի խօսքերով՝ այդ մարդիկ  
 «ստութիւն էին բառնում բրիստոնեաների վերայ, «նորանց  
 «դատապարտում էին պատկերների համար»: Սյգ պատկերա-  
 «մարտների առարկութիւնները բրիստոնեական պատկերչար-  
 «գութեան դէմ հետևեալներն էին. հարկաւոր չէ պատկերներ  
 «յօրինել և չարգել. ըստ որում հին կառկարանում Իսրայէլին

«պատուիրուած էր ոչ մի դրօշեալ չլինել և ոչ պատկերներ  
 «և նմանութիւններ երկնքում և երկրի վերայ դանուածների:  
 «Եթէ Սատուած հրամայեց էլ շինել բերովբէներ և կենդանի-  
 «ների դրօշեալներ, — հրէաներն այդ նմանութիւններին չէին եր-  
 «կրպագում իբրև աստուածների, որպէս բրիստոնեաներն են  
 «երկրպագում պատկերներին: Բրիստոնեաները պատկերի բուն  
 «փայտին երկրպագում են իբրև Սատուածու, նորանք հրճուան-  
 «քով չարգում են այն տեղերն, ուր Բրիստոս շրջել է, նստել է  
 «կամ երևացել է կամ որոնց հպել է. և նշանակում է՝ չար-  
 «գում են սոսկ տեղը, տունը, երկիրը, քաղաքը, քարերը: Սյգ  
 «դէպքում բրիստոնեաները մոռանում են, որ պէտք չէ պատիւ  
 «տալ ոչ մի բանի, որ ձեռագործ է և արարած: Սյգ նոյն  
 «մարդիկ ծիծաղում և ծաղրում էին բրիստոնեաներին, որ նո-  
 «րանք չարգում էին սրբոց մասունքներն, ասելով, թէ նորանք  
 «չարգում են սոսկ ոսկորներ: Սյգալիսի պատկերամարտներն  
 «եթէ տեսնում էին որ բրիստոնեաները համբուրում են Բրիս-  
 «տոսի և նորա ամենասուրբ Մօր կամ որևէ սուրբի պատկերը՝  
 «տրամում էին և հայհոյելով շուռ էին տալիս երեսները պատ-  
 «կերաչարգներից, անուանելով նորանց կռապաշտներ: Միև-  
 «նոյն է. դարում պատկերամարտ ուղղութիւն ունեցող մարդ-  
 «կանց մասին վկայութիւն է տալիս և մի եկեղեցական դրող  
 «էլ— Թեապոնիկէի Յովհաննէս եպիսկոպոսը: Նորա մի «խօս-  
 «քից» երևում է, որ ոմանք բրիստոնեաներին պատկերներ չար-  
 «գելու համար անուանում էին կռապաշտներ, և ասում էին.  
 «Ի՞նչպէս է ներելի զգայական ձևով նկարել Սատուածուն, որ  
 «անաեսանելի է, որ հողի է: Եթէ բրիստոնեաներն իրանց ար-  
 «դարացնելու համար պիտի ասեն, թէ Սատուած երևեցաւ ի  
 «մարմնի, ապա ո՞ր հիման վերայ նորանք նկարում են հրեշ-  
 «տակներին, անմարմին հողիներին, բանական էակներին»: \*)

Վերոյգրեալներն ընդունելով իբրև ապացոյցներ, թէ  
 պատկերը դէմ հակառակութիւնը միշտ զոյութիւն է ու-  
 նեցել սկսած պատկերչարգութեան հաստատութեան սկզբից՝

\*) Всл. Сводна В. 131—135.

պարոն Լեբեզէն ասուծ է թէ՛ կարելի է զրահանապէս հաստատել, որ արեւելեան կայսրութեան մէջ պատկերամարաներ շատ են եղել նոյն իսկ մինչև Լ. դարն, երբ նորանց զիմադրութիւնն ընդունեց շատ ընդարձակ չափեր. և թէ՛ նորանք ներկայացնում էին այնպիսի ոչո՛ր, որից երկիւղ զգալու իրաւունք ունէր եկեղեցին: Ճեւեարաբ, ասուծ է պարոնը, հարկաւոր էին միայն բարեշաշոյ պաշմաններ. երբ այդ պաշմանները յառաջ եկան, պատկերամարտ բաժան ուժերը միացան և պաշտպանութիւն դասն կառավարական բարձր շրջաններում. և ահա պատկերամարտութիւնը յայտնուեց ահարկու ձևով: \*)

Բայց ի՞նչ էին իսկապէս այդ պաշմանները կամ հանդամանքներն, որոնք այդ ուղղութեան զայրադին արտաշայտութեան նպաստաւոր հող պատրաստեցին. արտաշայտութիւն, որ այնքան ծանր կորուստներ պատճառեց թէ՛ եկեղեցուն և թէ՛ կայսրութեանը: Յունական մի քանի պատմիչներ պարզձտութեամբ թէ՛ որոշ գիտումով Լ. դարում սաստկացած պատկերամարտութիւնը կապել են այնպիսի պատճառների հետ, որոնք ներկայումս այլ ևս չեն կարող նկատուել իբրև պատմական որևէ արժէք ունեցողներ: Պէտք է կանխօրէն ասել, որ վերջիշեալ դարում միաժամանակ յայտնուեցին երկու պատկերահալած ինքնակալներ. նախ Սրաբացիների Եղիա ամիրապետն, ապա, երեք տարուց յետոյ, Լեոն կայսր Իսաբացի: Յիշեալ հեղինակների ասելով երկուսի արարքներն էլ — թէ՛ մահմեդական ամիրապետի և թէ՛ քրիստոնեայ կայսրի — հետևանք են եղել երեք հրէանելի նենդամիա թելադրութեան: Այդ հրէաներից մի երևելին Սարանթափերիս անունով գտնելով Եղիաին սղաչամիտ, չիմարի մէկը՝ զրաւում է նորան զանազան դուշակութիւններ անելով. և ապա չարամտութեամբ այսպիսի խորհուրդ է տալիս նորան. եթէ կամենում ես երկար կեանք ունենալ և երկար իշխել՝ հրաման տուր, որ տերութեանդ բոլոր տեղերում ջնջեն, անհե-

\*) Вест. Собраніи В. 136—37.

տացնեն բոլոր պատկերներն և ամեն տեսակ նկարներն, որոնք կամ տախտակների, կամ քրիստոնեաների եկեղեցիների պատերի, կամ ս. անօթների և զարդերի վերայ նկարուած կլինեն. նոյն իսկ այնպիսիներն, որոնք քաղաքների հրապարակների վրայ դրուած կլինեն իբրև զարդ և վայելչութիւն: Եւ երկար ասլրել ու երկար իշխել տենչացող ամիրապետը պատրուած այդ խոստմնալից առաջարկութիւնից՝ ճշտութեամբ սկսում է կատարել թելադրածը. բայց երբ ի դերև է դուրս գալիս Եղիաի պարզմիտ հաւատն և նա երկու ու կէս տարուց յետոյ վախճանում է՝ խաբէբայ հրէան սպանում է: \*)

Եղիաի պատկերաջինջ հրամանի արձակուած միջոցին Կ. Պոլսում թաղաւորում էր Իսաբացի Լեոնը: Սա իբրև ածնշան տոմից ծագած մարդ՝ մի օր իւր դործով նանապարհորդելիս՝ հանդիպում է երկու հրէաների, որոնք տեսնելով նորա մեծաշուք կերպարանը՝ ասում են նորան. — դու մի օր հռոմէական տէրութեան զլուխը պիտի անցնես. երբուի՛ր, որ երբ այդ օրը դա՛յ՝ կատարես ինչ որ բեզանից խնդրենք այն ժամանակին: Նա իսկոյն երկուում է: Այնուհետև այդ մարդը թողնում է հալքենի տունն և առևարական դործը. Կոնոն անունն էլ Լեոնի փոխած՝ մանում է զինւորական ծառայութեան մէջ և նշանաւոր հանդիսանալով՝ 717 թուին բարձրանում է կայսերական պահր: Այդ լսում են այն երկու նախազուշակ հրէաները, շտապում գալիս են Լեոնի մօտ և չիշեցնելով նորան խոստումը՝ խնդրում են նորանից «դսպառ» «ըսպուռ բարձումն պատկերաց և նկարուց, այսինքն՝ զկոր» «ճանումն իսկ պաշտամանց կրօնից»: Եւ «անօրէն» թաղաւորը «յօժարակամ խոստանում է նորանց խնդիրը կատարել, ոչ միայն «վասն երգմանցն, այլ և որպէս ինքն կարժէր ստութեամբ՝ «առ սղատելոյ զեկեղեցի՝ ի կռապաշտութեան մոլորութենէ, «որ այնպիսի սնտաի պաշտամամբ պատկերաց սպրդեալ էր «՛ի քրիստոնեայս»: \*)

Մեր ժամանակի պատմադիտական տեսութիւնները չէին

\*) Յովն. 470—71, Փափաղ. պատմ. եկեղ. 332.

կարող աննշաւակ թողնել այդպիսի դրօշներ յանհետեւութեան: Երկու չայանի հեղինակներ, չէֆէլէ և պրօֆ. Լեբել և մի քանի խօսքեր են նուիրել նորանց իսկական նշանակութեան: Առաջինն համարում է այդ ամբողջ պատմութեամբ շատ ուշ կազմուած դրօշի մնացորդ և անօգուտ է գտնում պարսպել այդ սպառնացանելու վերայ: Եւ թէ հրէաներն, ասում է նա, կայսրից խնդրած լինէին որևէ բարիք, իսկապէս խնդրած կլինէին մի այնպիսի շնորհ, որ իրանց համար աւելի օգտակար կլինէր քան պատկերներ ջնջումն: Միւս կողմից՝ կայսրն այնքան փոքր էր տրամադրուած նորանց երախտահատուց լինելու, որ ստիպեց հրէաներին մկրտուել: \*) Երկրորդն ասում է որ՝ թէ և Լեոն զրամատիկօսք, Կեղբնոսն և ուրիշները պատմում են, թի ինչ որ հրէաներ Լեոնին նախադուշակած լինելով, որ նա թագաւոր պիտի լինի, նորանից առել էին պատկերներ ոչնչացնելու խոստումն, և Լեոնը պարտք համարեց կատարել խոստացածը, բայց ներկայ ժամանակի դիտութիւնը բաւարար հիմունքներ ունեցաւ մերժելու այդ լուրերի ստուգութիւնը: \*\*) Սակայն այդ նոյն դիտանականներից առաջինը՝ չէֆէլէն, ինքը չէ դժուարանում պատկերամարտութեան զարգացման նպաստարար պայման դնել Իսաւրացու անձնական յատկութիւնները. մի կարծիք՝ որ իւր հերքածից շատ էլ հեռու չէ դնում: Նորա ասելով՝ Լեոն Իսաւրացին կայսր լինելով՝ մնաց նոյն անկիրթ մարդը՝ տողորուած զինուորական յոյզերով, և միշտ անմատչելի նաշակադիտական զգացմունքին, որը պիտի կարողացած լինէր արդելել նորան վանդալութեան բոլոր գործերը կատարելուց. գործեր՝ որոնցով չանցաւոր դարձաւ: Նա իսկապէս հաւատացած էր, թէ՛ պատկերներին ընծայուած պաշտամունքը մի վերադարձ էր դէպի կռապաշտութիւնն. և թէ՛ չին Կրտակարանի դրած արդելքը դեռ օրէնքի զօրութիւն ունէր: Այն փոքր տեղեկութիւններն, որ տալիս են մեզ աղբիւրներ-

\*) Hist. des Conciles. 7. 259.  
 \*\*) Вечл. соборн В. 141.

րըն, և մանաւանդ այն փոքր վստահութիւնն, որ մեզ ընծայում են հէնց այդ աղբիւրները, մեզ չեն ներում բացատրել, թէ Լեոն Իսաւրացին ինչպէս էր հասել այդ համոզմունքներին: Ինչ էլ որ լինի՝ Լեոնի բնաւորութիւնն և բիւզանդական կայսրների սովորական օրինակները շատ լաւ պատշաճում էին կրօնական գործերի նկատմամբ ունեցած մտադրութիւնն իրագործելու վայրենութեանն, առանց բնաւ նկատի առնելու խղճի աղաւթութիւնը: \*)

Չէֆէլէի կարծիքն է կրկնում և Լեբելը, տեղ տեղ նոյն իսկ բառացի: Պատկերամարտութեան զարգացման համար, ասում է նա, նպաստաւոր պայմաններ իսկապէս երևում են չանձին Լեոն Իսաւրացու, որ զուրկ էր կրթութիւնից և բարբոլ բիրտ. նորա սիրելի դրաղմունքը պատերազմն էր: Այդ մարդը կարծես իւր իսկական բնաւորութեան մէջ կրում էր պատկերամարտութեան մէջ ցոյց տուած առհաւատչեաները: Բ. դարի պատկերամարտութիւնը քաղաքացիական իշխանութեան զեպոտական միջամտութիւնն էր եկեղեցական գործերում: Կրօնական գործերում իւր մտադրութիւնները բրնութեամբ իրագործելն—առանց չարդելու խղճի իրաւունքները—Լեոնի բնաւորութեան յատկանիշն էր: \*\*) Մի կողմ թողած ուրիշ չայանի հեղինակների ի նպաստ Լեոն Իսաւրացու հազուադիւրս ձիրքերի և արժանիքների տուած վկայութիւններն՝ այսքանը հարկաւոր ենք համարում ասել, թէ պատմութիւնը քմահանոյքից առժամապէս ազդուել կարող է, բայց իւր օրէնքներից հրաժարուել՝ ոչ երբէք: Պատահել է, արդարև շատ անգամ, որ իրաւունքի կամ լիխանութեան պլուս կանգնած մի մարդու անձնական հաշեացքներն և միտումներն ազդեցութիւն են ունեցել պատմական խոշոր մի դէպքի արտաչափութեան կամ ընթացառութեան վերայ, բայց եթէ այդ հաշեացքներն և միտումներն ընդհանրութեան հասկացողութեան և պահանջի համապատասխան չեն եղել՝

\*) Hist. des Conc. B. 253.  
 \*\*) Вечл. соб. В. 137.

մոռացուել անհետացել են իրանց զործադիր անձի կեանքի հետ միասին, երբեմն և աւելի վաղ. մինչդեռ Իսաւրացու թագաւորութեան հետ երեւան եկած պատկերամարտ ուղղութիւնը նորա հետ զերեզման չէ մտնում. այլ նորանից էլ չետոյ երկար ժամանակ—հարիւր չիտուն տարիների ընթացքում—շարունակում է սոսկալի խռովութիւններով տակն ու վրայ անել արեւելեան քրիստոնեայ աշխարհն և սարսափ տարածել ամենուրեք անկասելի և դարհուրեցնող խստութիւններով. ըստ որում՝ ինչպէս փաստերն են ապացուցանում, այդ ուղղութիւնը մի կայսրի բռնապատուար քաղաքականութիւն չէ եղել, այլ ընդհանուրի, առաւել ևս եկեղեցական և աշխարհական բարձր և կրթուած դասակարգերի հասունացած պահանջ: Այդպիսի փաստեր են, օրինակ, նախ՝ որ երբ Լեոն կայսրը պատկերները բառնալու մասին առաջադրութիւն տուեց սենատին՝ վերջինս ընդունեց խիստ օգեւորուած միաձայնութեամբ 3). երկրորդ՝ որ պատկերներ չնչելու, ոչրնչացնելու զործում ամենից աւելի եռանդ և նախանձախնդրութիւն ցոյց տուողները բարձրաստիճան եկեղեցականութեան ներկայացուցիչներն եղան,—Նիկոլիայի Կոստանդին եպիսկոպոսը, կլաւդիուսի թովմաս եպիսկոպոսն, Եփեսոսի Թէոփոս արքեպիսկոպոսն և պատրիարքի օղնական Անաստասը, որ չետոյ եղաւ 4. Պոլսի պատրիարք: Պակաս նշանաւոր չէ և այն հանգամանքն, որ 754 թուին 4. Պոլսում դուժարուած պատկերչարգութեան դէմ վճիռ արձակող ժողովին մասնակցում էին 338 եպիսկոպոսներ:

Իսկ թէ ինչո՞ւ այդպիսի մի պահանջ էր յառաջ եկել եկեղեցականներից շատերի, աւագորեարի և հասարակութեան կրթուած դասակարգի համար: Կասկած չկայ, որ իրերի այս դրութիւնը տեղի չէր ունենայ, եթէ պատկերչարգութիւնը պահպանած լինէր իւր սկզբնական նշանակութիւնը: Եկեղեցին պատկերների զործադրութեան և յարգութեանն իւր հաւանութիւնը տալով նպատակ ունէր նորանցով միմիայն չիշեցնել հաւատացեալներին թէ՛ Փրկչի խորհրդասքանչ արնօրէնութիւններն և թէ՛ սրբոց աստուածահանոյ կեանքն ու

արիական վկայութիւնները ս. հաւատի համար: Եւ եկեղեցու նախնի հայրերն, երբ կամեցել են հասկացնել պատկերների կարեւորութիւնը՝ միշտ այդ են ասել թէ՛ պատկերները ծառայում են բարի օրինակ լինելու և կրթելու հաւատացեալներին. 4) միևնոյն ժամանակ եկեղեցու զարդարանք են: 2. դարում Մարտիրոսի Սերինոս եպիսկոպոսը չնչել էր եկեղեցիների բոլոր պատկերներն, իսկ Գրիգոր Մեծը (590 թ.) զրոււմ էր նորան. «Իու պիտի չխորտակէիր ինչ որ գրուած էին եկեղեցում ոչ թէ պաշտուելու, այլ լոկ պատուած լինելու համար: Այլ բան է պաշտել պատկերն, և այլ բան է ուսանել այն, ինչ որ մի պատկեր ներկայացնում է, որին «մարդիկ պիտի ուղղեն իրանց աղօթքները: Իրաւի՛ ինչ որ «ս. Գիրքը կարդալ իմացողների համար է, միևնոյնն է պատկերը կարդալ չիմացողների համար: Տղէաներն այս պատկերներին են ուսանում ճանաչել այն ճանապարհն, որին պիտի «հետեւեն: Այդ պատկերը մի գիրք է նորանց համար, որոնց «անձանթ է ս. Գիրքը: \*)

«Պատկերամարտներն, ասում է պրօֆ. Լերեդե, անշուշտ «կարող էին զանել հասարակական կեանքի մէջ շատ փաստեր, «որոնք վկայում էին թէ պատկերչարգութիւնն ազատ չէր «սնապաշտութեան խառնուրդից: Այսպէս օրինակ՝ յայտնի է, «որ պատկերչարգութեան տարածուելու և հաստատուելու «բուն սկզբից արդէն պատահում էին թիւր հասկացողութիւններ պատկերների մասին: Դ. դարի հեղինակ Ամփիլոքիոս «Իկոնիացին վկայում է, թէ իւր ժամանակում ոմանք եկեղեցիները շերմեռանդօրէն պատկերներով զարդարելը բաւական «էին համարում իրանց փրկութեան համար և փոյթ չունէին «իրանց սեպհական հողին զարդարելու առաքինութիւններով: «Նոյն ժամանակի միւրիշ հովիւ, Սատերիոս Սմասիացին վկայում է, թէ ոմանք զարդարում էին իրանց հագուստները պատկերազարդուած նկարներով, երևի՛ բարեպաշտութիւն համարելով այդ: Աւելի չետոյ սնապաշտութիւնները շատացան»: \*\*)

\*) Hefélé. Դ. 252.  
\*\*) Вел. соборы II. 139, даиод.

Մնապաշտութիւններէ տեսակներ չիշատակում է թ. դարից մնացած պաշտօնական մի գրութիւն. այդ՝ Կակաղ Միքայել Բ. կալսրի նամակն է, որը զրել է նա արեւմուտք Լուդովիկոս Բարեպաշտ կալսրին: Խօսելով իւր ժամանակի արեւելեան սրատկերաբանութեան մասին, Միքայելն ասում է. «նորանք (պատկերապարզները) նախ և յառաջ հեռացրել են «եկեղեցիներէն ս. խաչն և նորա տեղը զրել պատկերներ ու նորանց առաջ կանթեղներ: Այդ պատկերների առջև խուսնկ են «ծխում, և առհասարակ ցոյց են տալիս նորանց այնպիսի «յարդանք, ինչպէս խաչին, որի վերայ Քրիստոս խաչուեց: Պատկերների առջև երգում են սաղմոսներ, երկրպագում են նորանց, և չատկապէս նորանցից են սպասում իրանց օգնութիւն: Շատերը ձգում են կտակէ ծածկոցներ պատկերների վերայ և նորանց կնքաւորներ են անում երեսաներ մկրտելիս: «Կրօնաւորութիւնն ընդունողները թողել են այն առաջին սովորութիւնն, որ, երբ կրօնաւորներ էին ձեռնադրուում, նորանց մազերն իւր ձեռքի վերայ էր ընդունում յայտնի մարդկանցից մէկն ու մէկը. և դնում են (այժմ) մազերը պատկերների վերայ: Քահանաներից և կղերականներից ոմանք պատկերների ներկերը քերում, խառնում են հալորութեան հետ. «և կան ուրիշներ էլ, որ հալորութիւնը դնում են պատկերների վերայ և այնտեղից վերցնում, նաշակում: Ոմանք հալորութեան խորհուրդը կատարում են ոչ եկեղեցիներում, «այլ մասնաւոր տներում, որտեղ պատկերները դործադրուում են պատարագամատոյց սեղանի փոխարէն»: \*)

Մինչդեռ մի կողմից պատկերաւիթ խռովութիւններն և շփոթութիւններն էին խանդարում բիւզանդական կալսրութեան և չատկապէս նորա մայրաքաղաքի ներքին անդորրութիւնը, միւս կողմից արտաքին մի մեծ վտանգ էր սպառնում այդ կալսրութեանն: Արաբական ահարկու արշաւանքը կարճ միջոցում աիրելով Սսորիքին, Պարսկաստանին

\*) Всел. Соборы В. 220—221. Энциклоп. словарь Брокгауза, 2. Фр.

և Սփրիկէին՝ ուղղեց իւր երեսը դէպի Եւրոպա և եկաւ պաշարելու Կ. Պօլիսը:

Նոր տէրութիւնն իւր դոյութեան առաջին տարիներում նուաճումների քաղաքական նպատակների հետ միացրեց և կրօնականն: Ամենուրեք, ուր որ երևում էր արաբական սուրը՝ այնտեղ էլ խիստ մոլեռանդութեամբ հաստատուում էր նոր կրօն, որի դաւանած նշանաբանն էր. «Մի է Աստուած և Մահմէտը Նորա առաքեալն է»:

Իեռ Մահմէտի մահից 12 տարի հաղիւ էր անցել, որ Արաբներն արդէն իրանց տիրապետած Սսորիքի, Պարսկաստանի և Սփրիկէի մէջ քանդել էին չորս հազար եկեղեցիներ, և կառուցել հազար չորս հարիւր մզկիթներ: Բաց այդ կատարի մոլեռանդութեան շրջանը շատ կարճատե եղաւ: Արաբները դարձանալի արագ կերպով ծանօթացան և իւրացրին յաղթուած ազգերի մասաւոր դարդացման արդիւնքներն, և զարձան դիտութեան և կրթութեան հովանաւորներ. և այս արագ փոփոխութիւնը կատարուեց հրէաների և Նեստորականների շնորհիւ. առաջիններն Սփրիկէի, վերջիններն Եգիպտի մէջ ունեցած իրանց բժշկական դպրոցների ազդեցութեամբ զարձան Արաբների ուսուցիչներ:

Մասաւորական զարգացման անմիջական հետեանքն եղաւ կրօնական ներողամտութիւնը, թէև փոքր չափով. ըստ որում նախ՝ խալիֆաները բոլորովին ձրի չէին տալիս Քրիստոնեաներին և հրէաներին աստուածապաշտական ծէսեր կատարելու ապահովութիւն. — դորա համար մի թեթև հարկ կար սահմանուած, երկրորդ՝ եթէ սուրն այլ ևս չէր գործադրուում իբրև կրօնադարձութեան դործիք՝ նորա փոխարէն կային ուրիշ հրապուրիչ միջոցներ. օրինակ՝ ուղղահաւատներին վերապահուած արտօնութիւններ. ծառայական կամ ստրկական վիճակում գտնուածներն էլ ընդունելով մահմէտականութիւն՝ տիրապետողներին հաւասար իրաւունքներ էին վայելում. քրէական յանցաւորը փրկուում էր Իսլամի կրօնը դաւանելով և. այլն 5):

Եթէ ամիրապետներն այսպիսի միջոցներ էին ընտրել՝

15  
6501



Իսլամի տարածմանն որքան կարելի է շատ յաջողութիւն տուած լինելու համար, հարկաւ չէին կարող անուշադիր թողնել այն երևոյթներն, որոնք կրօնափոխութեան գործին մեծ արդելքներ էին: Մահմետականութիւնն իբրև կրօն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միքանի յաւելուածներ ընդունած Մովսիսականութիւն: Մովսէս պատուիրում է. «Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած քո, Տէր մի է». և Մահմէտն ասում է. «Մի է Աստուած»: Մովսիսական տասնաբանեայ պատուիրաններից մէկն ասում է. «Մի արասցես դու քեզ կուսքս քստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր և որ ինչ յերկիր ի խոնարհ». Մահմէտն ևս, որի շանքն էր աղատել իւր ազգը բիրտ կռապաշտութիւնից, իւր քարոզած կրօնի մէջ չթոյլատրեց պաշտամունքի որևէ նիւթական նմանութիւն: Միակ մեծ զանազանութիւնն յիշեալ երկու կրօնների մէջ՝ Իսլամի դաւանական նշանաբանի երկրորդ մասն էր—Մահմէտի առաքելութիւնն, որն ընդունել չկարողացան Մովսիսական ուխտի հաւատարիմ որդիները. բայց և այնպէս այդ տարբերութիւնն արդելք չէր նորանց միանալու այն ատելութեան մէջ, որ երկուսն էլ միակերպ տածում էին զէպի Գրիստոնէութիւնն, որ իւր դաւանաբանական սկզբունքներով երկուսի համար էլ անհասկանալի և օտարոտի էր: Այդ ատելութեան զիւրաբորբ նիւթ մատակարարեցին մի կողմից էլ նեստորականներն, որոնք քրիստոնեայ կրօնին պատկանելով հանդերձ՝ դատապարտուած և հալածուած էին իբրև հերետիկոսներ:

Բացի կրօնական հայեացքներից յառաջացած ատելութիւնից՝ արաբացի աշխարհակալների համար կար և քաղաքական նպատակ: Իսլամի ընդհանրականութիւնն իշխանութեան ապահովութեան խնդիր էր, ուստի ինչ որ այդ նպատակին— կրօնական ձուլմանն արդելք էր, պէտք էր ոչնչացնել: Նորանց կարծիքով ամբոխի մէջ դաւանաբանական փոփոխութիւն կատարելն այնքան դժուար չէր, որքան տեսանելի, նիւթական պաշտամունքներինը. իսկ այդ զէպքում առաջին տեղն էր բռնում քրիստոնեայ աշխարհում այնքան մեծ ծա-

ւալ և այնպիսի նշանակութիւն ստացած պատկերապաշտութիւնը: Կար և մի երրորդ հաշիւ, նոյնպէս քաղաքական: Տիրապետական ձգտումների և պատերազմական յաջողութիւնների համար շատ անգամ զէնքից աւելի գործ է տեսել դաւանանութիւնն: Արաբացիներին Եդիպոսս հրաւիրողները տեղական քրիստոնեայ Ղպտիներն եղան, որոնք չկարողանալով տանել այն բռնութիւններն և նեղութիւններն, որ թափում էր նորանց զլխին յունական աններողամիտ հալածասիրութիւնը, վճռեցին դաւանանութեամբ վերջ դնել իրանց զրկանքներին: Դաւանանութիւնն էր զարծեալ, որ մեծ ծառայութիւններ մատուցեց արաբական առաջին արշաւանքների յաջողութեանն Ասորիքում: Խալիֆները շատ լաւ դիտելին թէ բիւզանդական կայսրութեան մայրաքաղաքում և նահանգներում պատկերատեսաց և պատկերաչարդ կուսակցութիւնների ատելութիւններն և թշնամական կրքերն որպիսի չափեր էին առել. և թէ՛ առաջին կուսակցութիւն կազմողներն էին զօրքը, աւազանին և եկեղեցականների մի ստուար մասը: Նախադարաստ նպատակ ունենալով յարձակուել Կ. Պօլսի վերայ՝ նորանք հարկաւոր պիտի համարէին ունենալ այնտեղ իրանց տիրապետութեան համակրողներ. և այդպիսիները կարող էին լինել միմիայն պատկերատեսացների մէջ: Ինչպէս տեսանք վերևում, Եդիս ամիրապետն արձակեց պատկերաչինջ հրաման:

717 թուին բիւզանդիայի կայսերական զահր բարձրացաւ Լևոն Իսաւրացին, որ կարողացաւ աղատել մայրաքաղաքն արաբական պաշարումից: Այս յաղթութեան նշանակութիւնը նոյնքան մեծ պէտք է համարել արևելեան քրիստոնէութեան ապահովութեան նկատմամբ, որքան այն յաղթութեան, որ ունեցաւ Կարոլոս Մարթէլ 732 թուին Տուրի ձօտ տուած պատերազմում: Եթէ Մարթէլի քաջարի ճակատամարտի շնորհիւ Սարակինոսների տիրապետութիւնն Արևմտեան Եւրոպայում սահմանափակուեց Սպանիայում, Լևոնի քաջութեամբն էլ Արևելեան աշխարհի քրիստոնէութեանն սպառնացող վտանգը բարձուեց. այս իսկ պատճառով Իսաւ-

րացու այդ ժամանակում իշխանութեան զլուխ կանգնած լինելը պիտի առանձին բաղդ համարել թէ Բիւզանդական կայսրութեան և թէ Արևելեան քրիստոնեայ աշխարհի համար: Լևոն Իսաւրացուն թէև պակասում էր կրթութիւնը, բայց նորանում միացած էին ընտիր զօրապետի տաղանդի հետ միասին վարչական հաղուադիւտ խելքն և կամքի ոյժը: Արտաքին յարձակումի վտանդից տէրութիւնը փրկելուց չեաոյ Լևոն կայսրը նուիրեց իւր ուշադրութիւնը ներքին օրէնսդրական կարգադրութիւնների, որոնց մէջ ամենազլխաւոր տեղը բռնում է պատկերչարգութիւնն արդելոյ հրովարտակն, որ արուեց տէրութեան բարձրագոյն խորհրդարանին (սենատին) 726 թուին: Կան հեղինակներ, որոնք Լևոն Իսաւրացու պատկերաչինչ ուղղութեան և շանքերի մէջ ուրիշ, աւելի զուտ քաղաքական շարժառիթ են նկատում. այսպէս օրինակ՝ Վերէրն ասում է, թէ այդտեղ գործ էր տեսնում նաև քրիստոնէութիւնը մահմէտականներին զիւրընտել զարծնելու դիտաւորութիւնն: Երբ որ Արաբացիները տիրեցին Ասորիքին, Եղիպատոսին և Ափրիկէին՝ վերջիններիս քրիստոնեայ բնակիչները հեշտութեամբ ընդունեցին իսլամական կրօնն, ըստ որում հեշտութեամբ հրաժարուեցին պատկերչարգութիւնից. իսկ քրիստոնէութեան և մահմէտականութեան միջև ամենից ակնյայտնի տարբերութիւնը պատկերների գործադրութիւնն է. և այս հանդամանքը չէր կարող վրիպել Լևոն Իսաւրացու ուշադրութիւնից, որ Սարակինոսների դէմ մղած պատերազմում Բիւզանդական զէնքի պատիւը վերահաստատելուց չեաոյ յոյս էր տածում կայսրութեանը վերադարձնել կորցրած Ասորիքն, Եղիպատոսն և Ափրիկէն. իսկ այդ նպատակին հասնելու համար կամենում էր քրիստոնէութեան միջից բառնալ այն, ինչ որ կորցրած երկիրների նորակրօն աղղերի զայլթակողութեան առիթ էր և վերադարձին արգելք: \*) Միևնոյն միտքն է յայտնում և պրօֆ. Նազլէր, ասելով. «Նասարակ ժողովրդի պատկերներին ընծայուած չափազանց յար-

\*) Вееоду. Ист. в. стр. 221.

զանքի մէջ կայսրը տեսնում էր հին կուսպաշտութեան հիմքը և մահմէտականներին ու հրէաներին ի քրիստոնէութիւն զարծնելու զլխաւոր արգելքը: \*)

Լևոն կայսրի լիշեալ պատկերհայած հրովարտակի գործադրութեան առնուածին պէս ընդդիմադիր կանգնեցին եկեղեցականների պատկերաչարգ մասի ներկայացուցիչներն և մանաւանդ վանականներն, որոնք ահագին խռովութիւններ յարուցին ժողովրդի մէջ, անուանելով կայսրին քրիստոնէութեան թշնամի, հրէութեան և մահմէտականութեան յարուած: Այսպիսի դիմադրութիւնից և անհնազանդութիւնից զայրացած կայսրը սկսաւ ոյժ գործադրել. հրամայեց խորտակել Փրկչի արձանն, որ դրուած էր քաղաքի դռներէց մէկի վերայ. և եկեղեցիներից դուրս հանել, շարպտել բոլոր պատկերներն. իսկ եկեղեցիների պատերի վերայ նկարուածները ներկ քսելով ոչնչացնել: Սակայն զինուորը հաղիւ սանդուխտ դրել, բարձրացել և կացինի առաջին հարուածն իջեցրել էր փրկչական արձանին, որ քաղաքի կանանց բազմութիւնը յարձակուեց նորա վերայ, սանդուղը ցած զլորեց և զինուորին սպանեց. որի հետևանքն եղաւ վրայ հասած զօրաբաժնի գործած արիւնհեղութիւնն: Այնուհետև խիստ պատիժների ենթարկուեցին ընդդիմադրութեան զլխաւորները (6): Պատիժների երկիւղից փախուստ տուած կրօնաւորները տարածուեցին կայսրութեան բոլոր կողմերն, աշխատելով ամենուրեք յարուցանել խռովութիւն և ապստամբութիւն կայսրի դէմ՝ նորան զահրնկէց անելու դիտաւորութեամբ: Տողևորականների զրգումունքներին նպաստաւոր եղան վերահաս աղէտները՝ մի կողմից սաստիկ կոտորածներ անող ժանտախտը. միւս կողմից՝ երկրաշարժն, որ Կ. Պօլսում, Նիկիայում և Նիկոմիդիայում շատ եկեղեցիներ և բազմաթիւ տներ կործանեց, հաղաբաւոր մարդկանց թաղելով աւերակների տակ: Կրօնաւորները տարածեցին ժողովրդի մէջ, թէ այդ հարուածները Լևոնի մեղքի պատիժներն են՝ Աստուծուց ուղարկուած: Ժո-

\*) Лекція по всемирной истории. Харьковъ. 1888. В. стр. 77.

ղովրդի տժգոհութեան և վրդովման պատճառներէց մէկն էլ եղաւ արտակարգ հարկն, որ երկրաշարժից վնասուած շէնքերը վերանորոգելու համար դրուեց: Թէպէտև անյողողղ կամք ունեցող կայսրը ճնշեց այդ խռովութիւններն և իւր դէմ կայսրութեան մի մասում ծաղած ապստամբութիւնը, սակայն անկարող եղաւ նուաճել մի ուրիշ ապստամբութիւն, որ պուլս բարձրացրեց Արևմտեան մասում, որի հետևանքն եղաւ կայսրութեան համար զգալի կորուստ:

Պատմական նշանաւոր անցքերի շնորհիւ որքան հռոմէական արևմտեան կայսրութիւնը խոնարհուում էր դէպի քայքայումն և անկումն, այնքան աճում և զօրանում էր Հռոմի եպիսկոպոսի իշխանութիւնը: Յետոյ գուցէ տեսնենք, թէ որպիսի հանդամանքներում նախնական եկեղեցու հաւասարապատիւ աթոռներից այդ մէկը փոքր առ փոքր աշխատեց ձեռք բերել դահերէցութեան իրաւունք՝ ի վնաս միւսների, և վերջապէս ընդարձակել, հասցնել այնպիսի իշխանութեան, որին վիճակուեց ահագին ազդեցութիւն ունենալ ամբողջ Եւրոպայի միջնադարեան շրջանի քաղաքական և կրօնական անցքերի ընթացքի և ուղղութեան վերայ: Ութերորդ դարում այդ իշխանութիւնն այնպէս արժատակալել էր, որ այլևս չէր կարող զուտ եկեղեցական հողի մէջ սնունդ գտնել. նա որոնում էր նոր աիրապետութիւն և պատրաստուած էր իւր սահմանի միւս կողմն անցնել. մնում էր միայն քանդել մի թուժք, որ իւր առաջը փակում էր. այդ թուժքը Բիւզանդական կայսրների իշխանութիւննէր, որը կարելի էր միայն յաջող բուսկում թօթափել: Յաջող բուսկն ինքն իրան հասաւ:

Լեոն Իսաւրացու պատկերաչինջ հրովարտակի հրատարակութեան միջոցին Հռոմի հայրապետական աթոռի վերայ նստած էր Գրիգոր Բ: Թէ պատկերչարգութիւնն Արևմտեան եկեղեցիներում որչափ ընդունելութիւն էր գտած՝ կտեսնենք յետոյ, այժմ հարկաւոր է ցոյց տալ թէ Հռոմի աթոռն որպիսի նարպիկութեամբ օգտուեց դէպքից՝ բոլորովին ազատուելու Արևելեան կայսրի իշխանութիւնից, տալով իւր ապստամբութեանը կրօնական նախանձախնդրութեան կերպա-

րանք: Կայսրը պահանջեց, որ պապը ժողով կազմելով իւր սահմանում՝ ընդունել և գործադրել տայ պատկերաչինջ հրամանն. իսկ պապը Հռոմում ժողով կազմեց 727 թ., որպէս զի պատկերչարգութիւնը պաշտպանի կայսերական հրովարտակին ընդդէմ: \*) Գրիգոր Բ-ին յաջորդում է Գրիգոր Գ., որ կայսրի պահանջի դիմաց մի նամակ է գրում նորան, խորհուրդ տալով չետ կենալ բռնած ընթացքից և հասկացնելով միևնոյն ժամանակն, որ եթէ աշխարհական իշխանը ձեռքում սուր ունի դատելու համար, եկեղեցին էլ Աստուծուց ստացած ունի կապելու կամ բանադրելու իրաւունք: Կայսրը սպառնացաւ անհնազանդ քահանայապետին, թէ նորան էլ շղթայակապ բերել կտայ Կ. Պոլիս, ինչպէս մի ժամանակ բերուել էր նորա նախորդներից մէկը—Մարտինոսը. բայց պապը նորանից վաղ և հեշտութեամբ իրագործեց իւր սպանալիքը: Նա 731 թուին Հռոմում ժողով գումարեց, որ արձակեց չետազայ վճիռը. «Փրկչի, Նորա ս. Մօր, առաքեալների և այլ ս. պատկերների տեղահան անողը, ջնջողն, անպատուողը կամ անդոսնողը զրկուած է Տիրոջ մարմնի և արեան հաղորդութիւնից, և մերժուած է եկեղեցուց»: Այս արդէն մի բանադրանք էր, որ ուղղուած էր յապակապէս կայսրի դէմ: Եւ այսքանը բաւական էր: Իտալիայում ունեցած կայսերական տիրապետութեան հպատակները հրաժարուեցին նղոված կայսրին հարկատու լինելուց և անձնատուր եղան Լոնբարդացիներին: Այսպիսով կայսրութիւնը կորցրեց իւր Իտալական երկիրներն, իսկ պապութիւնը հանդիսացաւ մեծ գորութիւն, որ եղաւ նորա աշխարհական իշխանութեան հիմնաքարը: Երբ որ Պեպինը մտադրուեց իւր թագաւորից չափշտակել Գաղղիայի արքայական թագը՝ դիմեց պապի հողեր աջակցութեանը: Զարքարիա Բ. իւր հաւանութիւնով և օրհնութիւնով վաւերացնելով նորա տիրադաւ չափշտակութիւնը՝ վարձատրուեց երախտագէտ Պեպինից նորանով, որ վերջինս Լոնբարդացիներից խլած Իտալական երկրի մի մա-

\*) Hefélé. Դ. 291.

սըն ընծայեց պապին. որով եկեղեցու հայրապետը դարձաւ և աշխարհական իշխան:

Հռոմի ժողովի հետևեալ տարին, 732 թ. Լեոն կալստր ձի շատ զօրեղ նաւատորմիղ ուղարկեց դէպի Իտալիա. նա կամենում էր պատժել հպատակութիւնը մերժող ժողովրդին իրանց քահանայապետի հետ միասին, բայց Ալբրիականի շրե-րում սաստիկ ալէկոծութեան հանդիպած նաւերից շատերը խորտակուեցին և զօրքը ծանր կորուստ ունեցաւ:

Ինչ որ Լեոնն անձեռնհաս եղաւ անելու կալստրութեան արևմտեան մասում՝ նոյնը հետևեց զործադրել մինչև իւր մահը արևելեանում, խստութեամբ պատժելով հակառակորդ-ներին, ըստ որում սպանով էր իւր կողմնակից ազնուակա-նութեան և զօրքի հաւատարմութեան վերայ: Հակառակորդ-ների մէջ ամենից աւելի բարձր դիրք և նշանակութիւն ու-նեցողը Կ. Պօլի Գերմանոս պատրիարքն էր, որ պապ Գրի-գոր Բ-ի հետ թղթակցութիւն ունէր: Լեոնը նորան գահից զրկեց և տեղը կարգեց Սնաստասին, որ համաձիտ էր կալ-սերական կարգադրութեան:

Մի կէտ ունենք փոքր ինչ լուսարանելու: Բիւզանդա-կան կալստրութիւնն որքան էլ մեր չիշած ժամանակում մի քանի կողմերից անփառունակ, տխուր դրութիւն էլ ներկայա-ցնի, այսուամենայնիւ մի պետութիւն էր, որ ունէր մշա-կուած հարուստ օրէնսդրութիւն ամեն մի հասարակական իշխանութեան և իշխանաւորի համար. այնպէս որ օրէնքի չեղաշրջուած կամ չարմարեցրած իմաստով մի օրէն անձնա-կան միտումի բաւականութիւն տալը դեռ հասկանալի կա-րող էր լինել, իսկ օրինադանցութիւն, իրաւագանցութիւն, կամայականութիւն-շատ դժուար: Լեոն Իսաւրացու պատ-կերընդդէմ կարգադրութեան վերայ խօսող ժամանակակից և չետադայ յոյն և լատին դրողներ, նոյն իսկ մեր ժամանակի ուսումնականներից շատերն անուանել են այդ ընթացքը բռնութիւն, «անօրէնութիւն», զեսպոտական միջամտութիւն եկեղեցու կրօնական զործերում և այլն. բայց միևնոյն ժա-մանակ տեսնում ենք, որ եթէ եկեղեցականների և ժողովրդի

մի մասը անուանել է կալսերական հրամանն ապօրինի և ընդ-դիմադրել է, նոյն դասակարգերի միւս և աւելի ստուար մասը ճանաչել և զործադրել է իբրև օրինական հրաման: Միևնոյնը նկատում ենք և չետադայ կալստրների նկատմամբ: Ինչ որ յան-ձին Լեոն Իսաւրացու պախարակուել է իբրև իրաւագան-ցութիւն, նորանից չետոյ եկող կալստրներից շատերը զործա-դրել են իբրև կալսերական իշխանութեան իրաւունք: Երևան են եկել դարձեալ ընդդիմացող և հպատակող կուսակցութիւն-ներ: Իհարկէ այսպիսի մի դրութիւն պատահական երևոյթ համարուելուց շատ հեռու է. ուրեմն և բացատրութեան կա-րօս:

Այդ բացատրութիւնը տալիս է պատմութիւնը:

Յայտնի է, որ Հռոմում, երբ կառավարութիւնը թագա-ւորական էր, կրօնի ձէսերի կատարման և պահպանութեան վերայ հսկելու պարտաւորութիւնն և իրաւունքը թագաւո-րինն էր: \*) Իսկ Օղոստոսից սկսած՝ կալստրները համարուե-ցին և ծայրագոյն քահանայապետներ: Երբ որ քրիստոնէու-թիւնը նախաջուեց հռոմէական կալստրութեան մէջ պետական կրօն՝ նոյն իրաւունքներն անցան քրիստոնեայ կալստրներին: Այդ կալստրներից առաջինը՝ Մեծն Կոստանդիանոս միանդա-մից քրիստոնէութեան պիսաւորի դիրք տուաւ: Այդ ժամա-նակում եկեղեցու մէջ երևան եկած Արիոսեան վտանգաւոր ազանդի առաջն առնելու համար ուղղափառ եկեղեցին կալստրի հղօր միջամտութիւնից և պաշտպանութիւնից օգտուած լի-նելով՝ նոյն կալստրին չայտարարեց. «Աստուծու հոգով լուսա-ւորուած և ներշնչուած անձն, Աստուծուց կարգուած՝ եկե-ղեցու միութիւնն և ուղղափառութիւնը պահպանելու հա-մար»: Այսպիսով կալստրը ստացաւ քահանայապետական պա-տիւ և դարձաւ հաւատի կանոն: Նորա օրէնքները պատու-հասում էին եկեղեցու թշնամիներին—հերեաիկոսներին և հեթանոսներին այնպէս, ինչպէս և պետութեան թշնա-միներին: Նորա օրէնքներով կանոնաւորուած էին եկեղե-

\*) Макс. Римское право, стр. 3.

ցական գործերը: Նորա կամքը եկեղեցու մէջ ևս դարձաւ գերագոյն կամք: \*) Իհարկէ եկեղեցին սկզբում աչգքան յօժարակամ ընդունեց կալսերական կամքն իբրև իւր գործերի մէջ էլ գերագոյն իշխանութիւն նորա համար, որ կաշարը ուղղափառութեան հետևող և պաշտպան էր: «Եւ «որովհետև քրիստոնէութեան մէջ յանախ երևան եկող կրօնական տարբեր հայեացքներն պատճառով կուսակցութիւններ էին կազմուած, որոնցից ամեն մէկն իրան էր ուղղափառ համարում և պահանջում էր, որ պետական իշխանութիւնն «ոչ թէ միայն իրան պաշտպանի, այլ որ միւս բոլոր կուսակցութիւնները զսպի, ճնշի, ուստի անբաւական կողմերն «այլ կարծիքներ էին արտայայտում եկեղեցու՝ առ պետական իշխանութիւնն ունենայիք յարաբերութեան մասին: Երբ «որ Մեծն Կոստանդիանոսի Թագաւորութեան վերջում և նորա յաջորդի՝ Կոստանդի ժամանակին ուղղափառ կուսակցութիւնն, որ յաղթել էր արիոսականութեանը Նիկիայի ժողովում, զրկուեց կաշարի հովանաւորութիւնից, և վերջինս «հակառակ կուսակցութիւնն—Սրիոսեանը համարեց եկեղեցու ուղղափառութեան ներկայացուցիչ, միևնոյն եպիսկոպոսներն, որոնք յառաջագոյն ընդունել էին կաշարի գերագոյն իշխանութիւնն եկեղեցու վերայ, սկսան հակառակը «պնդել, թէ՛ կաշարը բնաւ իրաւունք չունի միջամտելու եկեղեցական գործերում: Նոյնը պատահեց և Վաղէս կաշարի միջոցին: Այս կաշարի արիոսական լինելու պատճառով արիոսականութիւնը հանդիսացել էր իշխող կրօնական միւս բոլոր կուսակցութիւնների, որոնց թուում և ուղղափառ եկեղեցու վերայ, իբրև միակ ճշմարիտ կրօն, որին հովանաւորում էր կաշարութիւնը՝ ճնշելով բոլոր մնացածները: Միևնոյնը վերջապէս կրկնուել է մեծ կամ փոքր չափով մի քանի գարերի ընթացքում, ամեն անգամ, երբ կաշարներն անցնում էին ոչ-ուղղափառ կուսակցութեան կողմը, որն և հա-

\*) Сув. Римское панетво, 18.

«մարում էին իսկական ուղղափառ վարդապետութեան զուգոսիպ:

«Սրիոսականութեան դէմ մղուած պայքարի մէջ ուղղափառ եպիսկոպոսներն այն հայեացքն յայտնեցին թէ՛ եկեղեցին անկախ պիտի լինի. թէ՛ եկեղեցական իշխանութիւնն «եկեղեցական գործերում բարձր է քան կալսերականն: Սրեւելեան եկեղեցու ամենանշանաւոր հայրերից մէկը՝ Յովհան «Ոսկերեանը մինչև անդամ պահանջում էր, որ պետութիւնը ստորադրուի եկեղեցուն և վերջինս առաջինի վերայ անպայման իշխող լինի: Բայց Սրեւելքն այն հողը չէր, որի մէջ անել կարողանային այսպիսի հայեացքներն. այստեղ Թագաւորում էր մի իշխանութիւն—կաշարինն, որ պետական «և եկեղեցական միութեան ներկայացուցիչն էր: Եւ որչափ «լուծումն էին առնում բոլոր նշանաւոր կրօնական վիճարանութիւններն, որչափ քրիստոնէական վարդապետութիւնների «ըրջանը վախճանական լրումն էր առնում արեղբրական ժողովներում, որչափ ուղղափառութիւնը դառնում էր մշակուած, հաստատուած ձևակերպութիւն, զառւած նախնի կրօնական հակառակութիւններից—այնչափ էլ կալսերական իշխանութեան, իբրև եկեղեցական և պետական միացած իշխանութեան դէմ ցոյց տուած եկեղեցական նուիրապետութեան հակառակութիւնը հետզհետէ պակասում էր»: \*)

Բիւզանդական կաշարը սուրբ անձն էր ճանաչուած եկեղեցում: Երբ նա մեծ տօներին եկեղեցի էր դնում, այլ ևս աշխարհական Թագաւոր չէր, այլ Թագաւոր—քահանայապետ: Այդ հանդիսաւոր զնացքների միջոցին նա դնում էր իր զլխին Թանկագին քարերով զարդարուած և խաչակիր միթր, որ մօտաւոր նմանութիւն ունէր պատրիարքական միթրին. կրում էր և վակաս ու մինչև գետին հասնող զգեստ. իսկ ուսերը պատած էին լինում պատրիարքական եմփորոնի նման մի ոսկեհուռ փաթոյթով, որ զարդարուած էր լինում մեծագին ակունքներով: Նորա հետևախումբն էլ աչգ հանդէսների

\*) Суворова. стр. 18—19.

միջոցին նույնպէս կրում էր եկեղեցականին նմանող զգեստ: Այդ հանդիսական զնացքների միջոցին կայսրն օրհնում էր ժողովրդին. օրհնում էր նախ ուղղահայեաց կանգնածներին, ապա աչ ու ձախ կողմերը: Այդպիսի օրհնութիւն նորանք տալիս էին և ամեն հանդիսական զէպրեքում, երբ երևում էին «հաւաքուած բազմութեան մէջ. «կայսրը իբրև Աստուծու «փոխանորդ երկրի վերայ՝ օրհնում է զբանիկ աստիճանաւոր- «ներին և ժողովրդին զահի բարձրութիւնից», ասում է կոստանդին Պերփեռուժէն: Շատ պարզ է ուրեմն՝ թէ թագաւոր— քահանայապետներն ինչ հիմունք ունէին միջամուխ լինելու եկեղեցական—կրօնական գործերին և որոշումներ տալու. մի խօսքով՝ իշխելու եկեղեցում:

Այդ միջամտութիւնները գարերի ընթացքում մինչև անգամ այլանդակ չափերի հասան, որոնցից մի քանիսը կլիշատակենք: Նիկեփորոս Փոկաս կայսրը մի հրովարտակ ուղղեց եպիսկոպոսներին, որով յայտարարում էր, թէ եկեղեցական բոլոր գործերը պատկանում են կայսրի հաւանութեանը կամ անհաւանութեանը—հաստատմանը կամ մերժմանը. ուրիշ խօսքով ասած՝ նա չէր կամենում ճանաչել եկեղեցական ազատ, անկախ օրէնսդրութիւն: Եւ սակաւ անգամ չէ պատահել, որ կայսրը կամ ինքն է եկեղեցական կանոններ սահմանել և Խուլի գործադրելու, կամ եկեղեցու սահմանաձևերը կամեցած փոփոխութեան ենթարկել: Լևոն իմաստուն կոչուած կայսրը լինելով գործունեայ օրէնսդիր քաղաքացիական մասում՝ կատարեալ ինքնիշխանութեամբ սահմանում էր և զուտ եկեղեցական օրէնքներ մէկը միւսի ետևից. օրինակի համար՝ նա տուեց և այսպիսի օրէնք—արգելում է նշանադրութիւնը եօթ տարեկան լինելուց յառաջ. իսկ պսակն արգելում է՝ եթէ տղան 14՝ իսկ աղջիկը 13 տարեկան հասակին չեն հասել. բայց եթէ կայսրը հարկաւոր համարի որեւէ բացառութիւն անել այս կանոնից՝ գորանով օրէնսդրութեանը վնաս չէ լինում: Այլ օրինակներ: Տրուլլեան ժողովը կանոնադրում է թէ այրի քահանան, եթէ երեխաներ ունի, եպիսկոպոս չէ կարող ձեռնադրուել. իսկ Լևոն կայսրը

առանձին օրէնքով ոչնչացնում է այդ կանոնն: Եկեղեցում օրէնք կար, որով բարձր աստիճան ունեցող եկեղեցականներն ամուսնանալու զէպրում զրկուում էին հոգևոր կոչումից և դասում աշխարհականների կարգը. Լևոնը շատ խիստ է դտնում այդ օրէնքն և փոխում է այսպէս. ստորին եկեղեցականներն ամուսնանալու զէպրում զրկուում են բարձր աստիճանների հասնելու իրաւունքից. իսկ բարձր աստիճաններ ունեցողները թէև զրկուում են պաշտօնից, բայց կարող են մնալ հոգևորականներ: Այսպիսի շատ օրէնքներ տուեց Լևոնը: Եկեղեցուն մնում էր միայն գործադրել պատրաստած ու տուած օրէնքները: Սակայն կայսրներն աւելի ևս յառաջ զնացին իրանց քահանայապետ կոչման հետ միացած իրաւունքների մէջ: Եղան նորանց մէջ և այնպիսիներն, որ իրանց արտօնութիւնն համարեցին «ի կարգս սրբոց դասելու» գործն էլ, թէև այդ «սրբացուցեալներն» եկեղեցու համար ոչ մի արժանիք էլ չունէին: Օրինակ՝ Վասիլ Մակեդոնացին իւր անդրանիկ Կոստանդին որդուն, որ մեռաւ մանկական հասակում, «ի կարգս սրբոց» դասեց, և եկեղեցին էլ անխօս ընդունեց: Լևոն Զ. նույնպէս ինքնիշխանաբար «ի կարգս սրբոց» համաթուեց իւր երկու վախճանուած կանանց, ի պատիւ և յանուն նորանց եկեղեցիներ կառուցանելով. իսկ Նիկեփորոս Փոկասը պահանջեց ասել իբրև մարտիրոսների այն բոլոր զինսուորներին, որոնք մեռած էին պատերազմում: Այդ զէպրում եկեղեցին վրդովուեց, և պատրիարքն ու եպիսկոպոսները վճռական դիմադրութիւն ցոյց տուին և զօռով կարողացան համոզել կայսրին, որ հրամայածից ձեռք վերցնի: Եղաւ և այնպիսի կայսր, որ մինչև անգամ կապելու և արձակելու իրաւունքը խորթ չհամարեց իւր համար. մինչդեռ այդ ճանաչուած է պարզ եկեղեցական իշխանութիւն: Կայսր Ռոմանոս Ա. անաթեմաներ սահմանեց դաւադիրների և ապստամբների, նորանց մասնակից—գործակցողներին, խորհրդատուների և զրգուողների համար. նաև այն քահանաների, որոնք այդպիսիներից մէկն ու մէկին խոստովա-

նեցնել չանձն առնելով՝ չէին ստիպի և յորդորի, որ զղջան և հրաժարուեն իրանց չանցաւոր արարմունքից: \*)

Այս ամենն ի նկատի առնելով՝ պէտք է ուրեմն դարձանալ, եթէ Լևոն Իսաւրացին իրան իրաւունք համարեց հրաման տալ իբրև օրէնք, որ պատկերները վերացուեն եկեղեցիներէից: Նա, այդ օրէնք տուողը յայտարարել էր. «Ես թագաւոր եմ և քահանայապետ»: \*\*)

Յայտնի չէ, թէ Լևոն իւր կեանքի վերջին տարիներում ուրիշ ի՞նչ է արել պատկերների դէմ. բայց չամենայն դէպս նա նանաչուած է սկզբից մինչև վերջը պատկերների չամառ հալածող: 7)

Լևոն Իսաւրացին վախճանեց 741 թուին, թողնելով զահր իւր Կոստանդին որդուն, որ Կոպրոնիմոս նախատական մականունն էր առել, մկրտութեան միջոցին աւաղանի շուրք ապականելու համար: Սա ժառանգել էր հօր վարչական և զինուորական ձիրքերը, պատկերատեաց ուղղութեան մէջ էլ նորանից պակաս չմնաց, այլ մանաւանդ անցաւ, դորժ վրած խտութիւններով, որոնք հետեանք էին պատկերասէր կուսակցութեան գաւազրութեան: Սա թագաւորելուն պէս նոր հրովարտակով վերահաստատեց հօր պատկերաչինջ կարգադրութեան զօրութիւնը: Նախառակ կուսակցութիւնը նորա հրամանի զործադրութեան խափանման լաւագոյն միջոց համարեց նորա զահրնկէցութիւնը: Երբ որ Կոստանդինն հեռացաւ մայրաքաղաքից և գնաց Արաբների դէմ կռուելու՝ գաւազրութիւնն հեշտութեամբ զլուխ եկաւ. և կաշորի փեսայ (քրոջ մարդը) Նաչաղդի Արտաւազդ իշխանն, որ մեծ յարգանք էր վայելում և այդ միջոցին Նաչաստանում Արաբների դէմ զործող զօրքի հրամանատարն էր, կանչուեց Կ. Պոլիս և կաշոր հրատարակուեց. բայց Կոստանդինն երկու և կէս տարուց չետոյ կարողացաւ վերստին տիրանալ գահին, և Արտաւազդին ու նորա երկու որդիներին ձերբակալեց և կու-

\*) Лед. Всел. Соб. В. 71—81.

\*\*) Անդ. եր. 150.

րացրեց: Այնուհետև գաւազիր իշխանների և եկեղեցականների պարազլուխները չարաչար պատժուեցին: 8

Այս ամեն միջոցներից չետոյ կաշորը կամեցաւ պատկերների մասին արուած կարգադրութեան զործադրութիւնն ապահովել և եկեղեցու պաշտօնական հաւանութիւնով—ժողովով, որը չկամեցաւ անել իւր հայրը: Գուցէ Կոստանդինն ունէր և պատճառ աչքի առաջ, որ ժողով զօւմարելու միտքը նորան ընդունել տուեց: Թէև պապական աթոռն արեւելեան եկեղեցիների վերայ ոչ մի իրաւասութիւն չունէր, բայց ձեռք բերած դիրքի և զօրութեան շնորհիւ եթէ մի խնդրում նորա ձայնը չօգուտ կամ ՚ի վնաս մի կողմի լսելի էր լինում, մեծ ազդեցութիւն էր ունենում մտքերի վերայ, մանաւանդ որ արեւելեան եկեղեցականների մէջ սակաւ չէին լինում բարձրաստիճան անձինք և նոյն իսկ պատրիարքներ, որոնք նեղն ընկած կամ պարտութիւն կրած դէպքում հռոմի աթոռի աշակցութեանը կամ խորհրդին դիմելով՝ ոչ ժ էին տալիս նորա ձայնին: Գրիգոր Գ-ի հռոմում կաղմած ժողովի պատկերանարգների համար սահմանած բանադրանքն անշուշտ մի դէնք կլինէր պատկերասէր մասի ձեռքում Լևոնին և Կոստանդինին նղովքի ենթարկուած հերետիկոսներ հրատարակելով՝ զրդուել, պատրաստել կուսակցութիւն նորանց դէմ, և արդարացնել իրանց վարմունքը ժողովրդի աչքում: Վերջապէս խնդիրը կարևորութիւն ունէր և եկեղեցական տեսակետով: Այդ ժամանակում յունական և հռոմէական եկեղեցիների միութիւնը դեռ խղուած չէր. արդ՝ եթէ եկեղեցու երկու մասերից մէկը բանադրում էր պատկերներ մերժողներին, նշանակում էր բանադրանքին անուղղակի բաժանորդ անել և եկեղեցու այն մասը, որ ընդունել և զործադրել էր կաշսերական հրամաններն, ուրեմն հարկաւոր էր բիւզանդական եկեղեցու ինքնուրոյնութիւնն և արժանապատուութիւնը պաշտպանել՝ հռոմի ժողովի դիմաց ազդաչին եկեղեցու ժողով գնելով և առաջին վճռի ոյժն ու արժէքը վերջինի վճռով ոչնչացնել:

Կաշորի հրամանով 754 թ. Կ. Պոլսում զուժարուեց ժո-

զով, որին մասնակցում էին 338 եպիսկոպոսներ և որն անուանելով իրան «Յօթներորդ աիեղերական մեծ ժողով»՝ վեց ամիս-փետրուարի 10-ից մինչև օգոստոսի 27-ը շարունակեց իւր պարապմունքները: Թէև ժողովի գործունէութեան մանրամասնութիւնները չեն մնացել մինչև այսօր, բայց մնացել են նորա որոշումներն ու վարդապետածն, որոնց համառօտութիւնը միայն յանձն ենք առնում բերել այստեղ. այն էլ յատկապէս նորա համար, որ աշխատութեանս ընթացքում առիթ պիտի ունենանք մատնանիշ անելու մի երկու կէտերն, որոնց կանխաւ ծանօթացնել ընթերցողներին հարկաւոր համարեցինք: Ահա այդ համառօտութիւնը. — Սատանան առ նախանձու խաբեց մարդկանց՝ Արարչի փոխարէն արարածներին երկրպագելու. որպիսի մոլորութիւն դատապարտել են Մովսիսական օրէնքն ու մարգարէները: Սատուած մարդկային սղզը փրկելու համար ուղարկեց իւր Որդուն, որ մեզ դարձնի կռապաշտութիւնից և ուսուցանի պաշտել զՍատուած հոգևով և ճշմարտութեամբ: Ի փրկութիւն առաջնորդող այս հաւատի մէջ մեզ հաստատելու համար Փրկիչն ուղարկեց իւր առաքեալներին և աշակերտներին, որոնք պաշտառացրին Եկեղեցին սքանչելի վարդապետութիւններով: Եկեցու ս. Հայրերն և վեց աիեղերական ժողովներն անարատ պահպանեցին հաւատը. բայց սատանան չկարողանալով տանել այդ՝ փոքր առ փոքր մտքեց կռապաշտութիւնը քրիստոնէութեան կերպարանքի ներքոյ: Սակայն Քրիստոս ինչպէս ուղարկեց ի շնորհաց հոգևոյն Սրբոյ զօրացած իւր առաքեալներին հին կռապաշտութիւնը բառնալու և աւետարանելու ամբողջ աշխարհին, այնպէս էլ յարուցեց իւր ծառաներին — մեր բարեպաշտ կայսրներին (Կոստանդին և իր Լեոն որդին) նոր կռապաշտութեան դէմ և առեց նորանց նոյն իմաստութիւնն, որով զօրացած կայսրներն այլ ևս չկարողացան տեսնել Եկեղեցին տղարտուած զիւական չարութեամբ, և ի ժողով դուժարեցին յՍատուծոյ սիրեցեալ եպիսկոպոսներին, որպէսզի ս. Գրքի հետևողութեամբ ըննութեան առնուի պատկերընկալութեան գալթակղեցուցիչ սովորութիւնն, որ

մարդկային միտքը Սատուծուն հանոյալիս և սուրբ երկրպագութիւնից հեռացնում տանում է դէպի արարածների նիւթական և ամօթալի պատուազրութիւնն: Այս ներածութիւնից չետոյ խօսքը դարձնելով այն վկայական ցուցմունքներին կամ ապացոյցներին, թէ պատկերապաշտութիւնը ներելի չէ եկեղեցուն և արտաքոյ է վեց աիեղերական ժողովների վարդապետութիւններից՝ ժողովը մէջ է բերում և այսպիսի բացատրութիւն այն մասին, թէ Քրիստոսին չեա մարդեղութեան նկարելն աններելի է: Նկարիչները պատկերազրելով Փրկիչի արտաքին կերպարանքն և մարդկայնութիւնն, իսկ նորա աստուածութիւնը նկարել չկարողանալով՝ մի Սատուածամարդը նետորաբար բաժանած են լինում. իսկ միւս կողմից՝ եթէ նկարուած Քրիստոսի միայն մարդկային բնութիւնը տեսնելով և նորան երկրպագելով պատկերաչարգները կարծում են թէ երկրպագում են և նորա հետ միացած աստուածութեան — այդ էլ լինում է միաբնակների հերետիկոսութիւն, որ միացնում, շփոթում է երկու բնութիւններն: «Ահա նկարիչը յօրինել է պատկեր և անուանել է նորան Քրիստոս, ասում է ժողովը. բայց անունս Քրիստոս Սատուծու և մարդու անուն է միանգամայն. ուրեմն պատկերն էլ Սատուծու և մարդու պատկեր է. հետևաբար նա (նկարիչը) խառնել է անխառնելի միութիւնն և ընկել է շփոթող չարափառ մոլորութեան մէջ. և այդ պատկերին երկրպագողներն էլ ընկնում են նոյն աստուածընդդէմ մոլորութեան մէջ»: «Միակ վաւերական ներկայացուցիչ Քրիստոսի մարդկայնութեան, ասում է ժողովը, ս. խորհրդի հացն և զինին է. Նա ընտրեց այս տեսակն և ոչ մի ուրիշը. այս տիպն և ոչ մի ուրիշը՝ իւր մարդկայնութիւնը ներկայացնելու համար. Նա է հրամայել նուիրագործել հացն և ոչ իւր մարդկային կերպի որևէ նմանութիւնն, որ տեղի տուած չլինի կռապաշտութեան վերստին ծնունդ առնելուն»: Որովհետև նուիրագործուած հացն այլ ևս հաց չէ, այլ մարմին Տեառն, կամ ինչպէս ասուեց՝ Քրիստոսի մարմնի ներկայացուցիչ, ժողովը նուիրագործութեան նշանակութեան տեսակէտից էլ պատկերաչարգու-

Թիւնն աններելի համարելու մի փաստն էլ այն է զանուձ, թէ պատկերների օրհնութեան համար չկայ սահմանուած ազօթք, որով այդ հասարակ առարկաները նուիրագործուէին. հէնց այդ պատճառով նորանք միշտ մնում են ոչ մի առանձին նշանակութիւն չունեցող հասարակ իրեր:

Այսպիսով նախ՝ ս. Գրքի, երկրորդ՝ ս. Հայրերի խօսքերի, երրորդ՝ չառաջ բերուած պատճառների վերայ հիմնուած՝ ժողովր տալիս է իւր որոշումն և ութը կանոններ: Որոշումն այս է. Արդ՝ հիմնուելով ս. Գրքի և Հայրերի վկայութիւնների վերայ՝ միաձայն սահմանում ենք յանուն ամենասուրբ Երրորդութեան, թէ մենք մեր բոլոր զօրութեամբ պախարակում, մերժում ենք բոլոր պատկերներն և արտաքսում ենք Եկեղեցուց, ինչ նիւթից էլ որ լինին շինուած նկարչի անմաքուր արուեստով: «Ով որ այսուհետև համարձակի նմանօրինակ պատկեր յօրինել, կամ պատուել, կամ դնել եկեղեցում կամ մասնաւոր տան մէջ, կամ ով որ համարձակի՝ ի ծածուկ ունենայ այդպիսի պատկերներ, եթէ եպիսկոպոս կամ քահանայ կամ սարկաւազ է՝ ի բաց որոշուի (պաշտօնից զրկուի). իսկ եթէ կրօնաւոր՝ կամ աշխարհական՝ բանաւորուի: Այդպիսին կենթարկուի նաև պետական օրէնքի սլատիին իբրև աստուածուրաց և թշնամի մեր Հայրերից մեզ աւանդուած վարդապետութեան»: Այսպիսի վերա արձակելով՝ ժողովր նախատեսել է թէ կարող են լինել շահասէր եպիսկոպոսներ, որոնք ժողովի որոշումը զորժագրելու պատրուակով կողեւան չափշտակել կամ փոփոխել եկեղեցու պատկերադարպ անօթներն, ուստի զգուշաբար սահմանում է հետևեալը. «նոյնպէս հրամայում ենք, որ ոչ մի եկեղեցական պետ պատկերներ ոչրնչացնելու պատճառանքով ձեռնամուխ չլինի սուրբ անօթներին, որ իբր թէ նորանց վերայ պատկերներ կան, և պէտք է վերցնել՝ ուրիշը դնելու համար: Նոյնպէս ձեռնամուխ չլինել եկեղեցու զարդերին, զգետտներին և առհասարակ այն ամենին, ինչ որ աստուածային պաշտամունքին է ծառայում: Եթէ մի եպիսկոպոս կամենայ նուիրական զարդերից և անօթներից մէկն ու մէկը փոխել, այդ կարող է անել միմիայն մեր աիւ-

ղերական սրբազան պատրիարքի (Կ. Պոլսի) և մեր աստուածասէր կայսրի հրամանով: Ոչ մի իշխան կամ քաղաքացիական պաշտօնեայ իրաւունք չունի պատկերներ ոչնչացնելու պատրուակով կողոպտել եկեղեցիներ, ինչպէս մի քանի անգամ պատահել է» \*):

Ժողովի ութ կանոնները սորանք են.

1. «Ով որ համարձակի երանգներով նկարել մարմնացեալ Բանի չեա մարդեղութեան պատկերը՝ նզովեալ եղիցի»:
2. «Ով որ համարձակի նիւթական գոյներով և մարդը չիշեցնող նկարներով պատկերացնել Բանի էութիւնն և անձն, որ աննկարագրելի է, և չի խոստովանի, թէ Բանն և չեա մարդեղութեան աննկարագրելի է, նզովեալ եղիցի»:
3. «Ով որ համարձակի պատկերի մէջ նկարել երկու բնութեան անձնաւորական միութիւնն, և նկարուածն անուանել Քրիստոս, նզովեալ եղիցի»:
4. «Ով որ բաժանի Աստուծոյ—Բանի անձնաւորութիւնը նորա հետ միացած մարմնից և կամենայ այդ մարմինը ներկայացնել ի պատկերի, նզովեալ եղիցի»:
5. «Ով որ բաժանի զմի Քրիստոսն չերկուս անձնաւորութիւնս և կամենայ նկարել ի Կուսէ ծնուածն, որ ասել է թէ բնութեանց ըստ աղերսի միութիւն է ընդունում՝ նզովեալ եղիցի»:
6. «Ով որ նկարի Քրիստոսի մարմինն, որ աստուածացած է միաւորութեամբն ընդ Բանին, և այսպիսով բաժանի նորան Աստուածութիւնից՝ նզովեալ եղիցի»:
7. «Ով որ Աստուծոյ Բանն—ժառայական կերպ ընդունելու համար—կնկարի նիւթական երանգներով, իբրև թէ նա լինէր սոսկ մարդ, և կբաժանի նորան նորանից անբաժան Աստուածութիւնից, այս կերպով մուծանելով Երրորդութեան մէջ չորրորդութիւն, նզովեալ եղիցի»:
8. «Ով որ կնկարի սրբոց կերպարանքը նիւթական երանգներով անշունչ պատկերների վերայ, որոնք ոչ մի օգուտ չեն

\*) Héfélé. Դ. 298—303.

բերում, ըստ որում այդ միտքը (պատկերներին երկրպագելու մասին) սուտ է և սատանայից ծագումն առած — և չի շահալ յանձին բերել նորանց (սրբոց) առաքինութիւններն — այդ կենդանի օրինակները — նզովեալ եղիցի»):

Պէտք է ասել նաև, թէ ժողովր բանադրանք է սահմանել և նորանց համար, որոնք չեն խոտտովանում Ամենասուրբ Մարիամ Կուսին բարձր քան բոլոր տեսանելի և անտեսանելի արարածներն և չեն հաւատում նորա միջնորդութեան, և որոնք առհասարակ մերժում են սրբոց արժանիքներն և չեն խընդրում նորանց բարեխօսութիւնը 8):

Ժողովի որոշումներն ի լուր հասարակութեան կարգալուց չետոյ «եպիսկոպոսունքն և ժողովուրդ միաբերան համաշունչ գոչէին ի գովութիւն Կոպրոնիմոսի. «Սյսօր եղև փրկու թիւն աշխարհի, զի դու, ոյ ինքնակալ, աղատեցեր զմեզ ի դրօշելոց \*): Սյսուամենայնիւ պատկերաչարդ եկեղեցականներն և զլիսաւորապէս վանականները յանձն չառան հնազանդել ժողովի վճիռներին, որով և վերստին զրգուեցին իրանց դէմ կայսրի զայրոյթն, որ արտայայտուեց աւելի մեծ խրատութիւնով. ըստ որում այժմ պատժուում էին յանցաւորներ, որոնք արհամարհում էին թէ՛ պետական օրէնք և թէ՛ եկեղեցական կանոն: Բայց տեսնելով՝ որ կրօնաւորները պատիժներից էլ չեն ընկնում, կայսրը վճռեց կրօնաւորութիւնը ջնջել. և հրամայեց վանականներին արտաքսել վանքերից ու աշխարհականացնել. և կոչսերին ամուսնացնել. իսկ վանական շինուածները կառավարութեան և ժողովուրդի պէտքերին ծառայեցնել:

Կոստանդին Կայսրը վախճանուեց 775 թուին. և նորան յաջորդեց օրդին Լևոն դ, որ չնայելով իւր թոյլ բնաւորութեան՝ զարձեալ պահպանեց պապի և հօր պատկերհալած ուղղութիւնը. թէև պատժելու կողմից աւելի մեղմ եղաւ: Սա յանկարծակի վախճանեց 780 թ. և ասողներ կան, թէ նորան սպանել է տուել իւր կինն, Իրինէ, որին նա հեռացրել

\*) Յովհ. պատմ. տիեղ. ժող. 487.

էր պալատից, և որը մարդու մահից չետոյ դարձաւ անչափահաս որդու, Կոստանդին դ-ի խնամակալուհին: Սյս կինն, որին պատմութիւնը Թաուր հուշակ է տուել, և որի իշխանասիրութիւնը չափ ու սահման չունէր, սկզբում որդու անունով կառավարելով պետական գործերը՝ մի քանի տարուց չետոյ թէև ստիպուած եղաւ իշխանութիւնը յանձնել որդուն, բայց շուտով դարձեալ զրաւեց: Կոստանդին դ, որին մայրը ոչ մի կրթութիւն չէր տուել, ձեռքն առնելով կայսերական իշխանութիւնն՝ անընդունակ գտնուեց միայնակ կառավարելու, և դարձեալ մօրն ընտրեց իրան աշակից և իշխանակից: Սյս անզգաստութեան հետևանքն այն եղաւ, որ ինքն ստիպուեց մօր ձեռքից փախչել Ասիա. իսկ երբ Արաբիայի սահմանների վերայ գտնուող զօրքի հետ վերադարձաւ տիրելու իւր դահին՝ Իրինէն իւր յանցանքների վերայ մի քստմենելին ևս աւելցրեց, ձերբակալելով հարազատ որդուն՝ բրել տուեց նորա աչքերը «այն միւսնոյն ծիրանազարդ սննեակում, ուր ինքը ծնել էր նորան»):

Իրինէն դեռ իւր ամուսնու կենդանութեան միջոցին ծածկարար համակրանք և խնամք ցոյց տուած լինելով հալածուած հողեւորականներին՝ իշխանութեան զեկն իւր ձեռքն առնելուն պէս յայտնի հովանաւոր հանդիսացաւ նորանց, և հրաման տուեց կրօնաւորներից խլուած վանքերը վերադարձնել իրանց: Սյնուհետև մնում էր վերանորոգել պատկերչարութիւնը. բայց այլ ևս կայսերական ուղղակի կարգադրութիւնը ցանկալի արդիւնք չէր կարող տալ. մի անգամ արդէն եկեղեցական ժողովի կանոնական զօրութիւն առած մերժումն պիտի վերացուէր նոր ժողովով: Կ. Պոլսի պատրիարքն այդ միջոցին Պօղոսն էր, որ իւր համոզմունքով պատկերատեսաց էր: Նա ստիպուեց հրաժարուիլ և նորա փոխանակ պատրիարք կարգուեց Տարասիոս, որ եղած էր կայսրի ատենադպիր և կայսրուհուն սիրելի էր: Կարճ միջոցում մէկ մէկից չետոյ ստանալով եկեղեցական աստիճաններն և եպիսկոպոս ձեռնադրուելով նա բազմեց պատրիարքական աթոռի վերայ: Կայսերական հրամանով նշանակուեց ժողով, որ բացուեց մայրա-

քաղաքի եկեղեցիներին մէկուժ 786 թուի օգոստոսին. բայց հէնց բացման օրը պատկերաաեսաց համոզմունքով տողորուած զօրքը վրայ հասնելով՝ մերկացրած սրերով մասն եկեղեցին և սպառնացան կոտորել բոլոր ժողովականներին ու թոյլ չտալ նորից պատկերների չարգութեան խօսք մէջ տեղ բերել: Ժողովականներն ստիպուեցին թողնել հեռանալ, մինչև որ կայսրուհին մի ժամանակից չետոյ դտաւ բարեյարմար պատճառանքներ մայրաքաղաքի զօրքը զաւառը փոխադրելու, հինօրեայ պաշտօնակալներին իրանց ծննդավայրերը վերադարձնելու, նոր զօրք բերել տալու և կարգելու իրան անծնանուէր նոր զօրապետներ: Հետեւալ տարին եպիսկոպոսները նորից հրաւիրուեցին ժողով կազմելու, սակայն չնայած նախընթացօրէն ձեռք առած միջոցներին՝ Կ. Պօլսում ժողով կազմելը դարձեալ երկիւղալի համարուեց. վասնորոյ իբրև աւելի ապահով աեղ ընտրուեց Նիկիա քաղաքը: Այնտեղ հաւաքուեցին հրաւիրուածներն, այնտեղ եկան և Տարասիոս պատրիարքն ու կայսրուհու նշանակած պալատական իշխանները: 787 թուի սեպտեմբերի 24-ին բացուեց ժողովը 367 եպիսկոպոսների և վանականների մասնակցութեամբ: Ներկայ էին և հռոմի Արքիանոս Ա. պապի պատգամաւորներն. ըստ որում թէ կայսրուհին իւր և որդու անունով և թէ պատրիարքը խնդրել էին չիշեալ հայրապետին մասնակցել ժողովին և նա ուղարկել էր ներկայացուցիչներ: Ժողովը շարունակեց և վերջացրեց նիստերը քսան օրում: Առաջին երեք նիստերը նուիրեց տասն և մէկ եպիսկոպոսների դարձի խնդրին: Այդ եպիսկոպոսները լինելով պատկերամարտ ուղղութեան հետևողներ՝ այժմ Նիկիա դալով՝ ներկայացրին իրանց զղջման զրերն և ընդունեցին ժողովից թողութիւն: Զորքօրդ և հինգերորդ նիստերում ժողովն զբաղուեց ս. Գրքի և Հայրերի վկայութիւններով պատկերչարգութեան հաստատութիւնն ապացուցանելու դործով: Ս. Գրքից կարգացուեցին հետեւեալ վկայութիւնները. Հին Կտակարան՝ Ելից զերբ (Իե-18), ուր Իսրայէլացիներին աստուածային պատուէր է տրուում ոսկեայ քերովբէներ շինելու և դնելու վկայութեան տապանակի վերայ. Թուոց զիրբ, (է, 89), ուր ասուած է թէ Աստուած

խօսեց Մովսէսի հետ «ի միջոյ երկուց քերովբէիցն, որ էին ի վերայ տապանակին վկայութեան»։ Եղեկիէլ մարդարէի տեսիլն (խա, 17-20), ուր ասուած է. «Եւ ի վերայ տանն շուրջանակի ներքոյ և արտաքոյ քերովբ քանդակեալ... և երկու քերովբէքն հանդէպ միմեանց, միոյ քերովբէի դէմքն մարդոյ»։ Նոր կտակարանից մէջ բերուեց առ Եբրայեցիս թղթի խօսքերը (Թ. 2-5). «Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս... և տախտակը կտակարանացն, և ՚ի վերայ նորա քերովբէքն փառաց, որ հովանի ունէին ՚ի վերայ քաւութեանն»։ Վերոյիշեալների ընթերցումից չետոյ Տարասիոս պատրիարքն ասաց. «Եթէ Հին Կտակարանն ունէր քաւութեանն հովանաւոր քերովբէներ, ուրեմն մենք էլ պիտի ունենանք սեղանին հովանաւոր Տէր Յիսուսի Քրիստոսի և Աստուածամօր պատկերները \*»։ Ս. Գրքից չետոյ կարգացուեցին եկեղեցու հայրերի վկայութիւնները. 1. Ս. Յովհան Ոսկերեւանի խօսքը թէ՛ նա տեսել է ս. Մելիտոսի պատկերն ամենուրեք-փողոցներում, շուկաներում և ճանապարհների վերայ 9)։ Եւ դարձեալ նորա մի այլ խօսքը թէ՛ «Ես սիրեցի մոմից շինուած պատկերը»։ 2. Գրիգոր Նիւսացու խօսքերը թէ՛ տեսնելով Իսահակի ՚ի զննումն հանուելու նկարը՝ չէ կարողացել անցնել առանց արտասուելի»։ 3. Ամասիայի Աստերիոս եպիսկոպոսի խօսքը, որով ս. Եփիմիայի նարտարարուեստ նկարը՝ նկարչի բարեպաշտութեան դործ է համարում, որը լսելով ժողովականներն ասացին. «Եթէ Աստերիոսը նկարչին համարում է բարեպաշտական դործ կատարող մարդ, նշանակում է թէ նկարչի արուեստը նուիրական դործ է և ոչ բնաւ այնպիսի, որ նշաւակել կարելի լինի, ինչպէս ոմանք (պատկերամարտներ) անմտաբար ասում են»։ Իսկ արևելեան պատրիարքների ներկայացուցիչն, սրպէսզի հերքած լինի պատկերամարտների առարկու թիւնը թէ՛ նկարիչն անկարող է կաւալի և տախտակի վերայ արտադրել այն, ինչի մասին Ս. Գրքն է խօսում՝ ասաց. «Նկարիչները ս. Գրքին չեն հակասում. այլ ընդհակառակն ներ-

\*) Леб. Всел. соборы. В. 183—190.

կայացնում են այն, ինչ որ ս. Գիրքն է ասում»): Կարգացուեցին նաև Կիւրեղ Աղէքսանդրացու խօսքերը Ակակ եպիսկոպոսին զրած թղթից, ուր զովութեամբ է չիշում զարձեայ Իսահակի զենման նկարը. Գրիգոր Նաղիանցու խօսքերը Պոլեմոնի պատկերի մասին և այլն \*):

Այդ վկայութիւնների ընթերցումից յետոյ ժողովը ուշադրութեան առաւ պատկերչարգութեան խնդրի ամենակարևոր մի կէտի բացատրութեան պէտքը: Ի՞նչպէս հասկանալ և ի՞նչպէս արտայայտել պատկերներին ընծայելի չարգանքը: Ժողովականներն այդ մասին յայտնեցին ոչ բոլորովին միանման հայեացքներ: Ոմանք պատկերչարգութիւն ասելով հասկանում էին երկրպագութիւնը. միւսները՝ մեծարանքով համբուրելը: Գերակշռող հանդիսացաւ առաջին հայեացքը, թէ ոչ միայն պէտք է չարգանքով համբուրել պատկերներն, այլ և երկրպագել նորանց ծնրադրութեամբ, բայց թէ այդ երկրպագութիւնը չունենայ այն նշանակութիւնն, որով հասկացւում է Աստուծուն մատուցածը: Խնդիրը միաձայն վճռելուց յետոյ ժողովը սահմանեց մերժել Կ. Պոլսի 754 թուի ժողովի որոշումները, բանադրել պատկերամարտներին, այլել նորանց բոլոր պատկերներն զրուածներն և վերստին զնել պատկերներն իրանց տեղերում: Ժողովի զաւանաբանական որոշումների վախճանական ձևակերպութեանը նուիրուեցին վերջին երկու նիստերը: Պատկերչարգութեան մասին սահմանուեց յետագայ վճիռը. «Որոշում ենք, որ սուրբ և անարատ պատկերներին նոյն երկրպագութիւնը մատուցուի, ինչ որ սուրբ և Կենարար Խաչի նշանին, թէ՛ զեղով նկարուած լինեն այդ պատկերները, թէ՛ մօզալիքից և կամ որ և է այլ նիւթից շինուած, թէ՛ Աստուծու տանարի մէջ լինեն՝ նուիրական անթմենքի և զգեստների, պատերի և տախտակների վերայ, թէ՛ տներում և ճանապարհների վերայ. նոյնպէս թէ՛ լինեն զօրանք Տէր Յիսուսի Քրիստոսի պատկերները, թէ՛ Տիրուհի

\*) Леб. Всел. Соборы В. 190—192. Зодн. պատմ. տիւղ. ժող. 499—500.

Աստուածածօր, թէ՛ սուրբ հրէշտակների և բոլոր սրբոց ու սարգար մարդկանց: Որքան յաճախ նայեն (հաւատացեալները) նորանց պատկերներին, այնքան աւելի կրչորագորուեն չիշելու նախատիպերն և սիրելու նորանց. և կունենան աւելի յօժարածութիւն մատուցանելու նորանց համբուր, չարգութիւն և երկրպագութիւն, բայց ոչ բնաւ այն իսկական պաշտօնն, որը մեր կրօնի համաձայն վայել է միմիայն աստուածային բնութեան \*):»:

Գործը վերջացնելուց յետոյ Տարասիոս պատրիարքը կայսերական պալատից ստացած հրաւերի համաձայն ժողովին մասնակցող եկեղեցականների հետ միասին զնացին Կ. Պոլիս, ուր կայսրուհին և որդին վաւերացրին նորանց որոշումներն, և ժողովն յայտարարուեց Եօթներորդ Տիեզերական, ինչպէս արդէն անուանուել էր չորրորդ նիստի արձանագրութեան մէջ:

Եկեղեցականները մաղթանքով օրհնելով կայսրուհուն և որդուն՝ 10) ցրուեցին իրանց տեղերը 11):

Սակայն այս ժողովի որոշումներն էլ չմնացին վերջնական: Ինչպէս պիտի աեսնենք փոքր ինչ ներքև, երկու ժողովներ ևս զուժարուեցին զարձեայ պատկերչարգութեան առիթով—մէկն ընդդէմ և միւսն՝ ի նպաստ: Նիկիացի ժողովը սահմանեց 22 կանոններ, որոնցից երկուսը (7 և 9), որոնք կապ ունեն ներկայ խնդրի հետ, զնում ենք այստեղ երեք հեղինակների տարբեր խմբագրութիւնով:

Կան. 7. 1. «Ինչպէս մի մոլորութիւն քարշում բերում է մի ուրիշ մոլորութիւն, նոյնպէս քրիստոնեաներին զրպարատողների (պատկերամարտների) հերետիկոսութիւնն իւր հետ բերեց ուրիշ ամբարշտութիւններ, որոնք ոչ միայն մերժեցին սուրբ պատկերներն, այլ և մի կողմը թողին եկեղեցական շատ սովորութիւններ, որոնց բարեպէս վերահաստատելն անհրաժեշտ է: Սրդ՝ հրամայում ենք, որ այն տանարներում, որոնք օրհնուել են առանց մասունք ունենալու, այժմ մասունքներ դրուեն սովորական աղօթքներով հանդերձ: Եթէ այսուհետև

\*) Леб. Всел. Соборы В. 192—203. Nef. 7. 364.

մի եպիսկոպոս կնուիրագործի մասունք չունեցող եկեղեցի՝ զրկուի պաշտօնից») 12):

2. «Գրիստոնէութիւնը զրպարտողների ամբարիշտ հերետիկոսութեանն հետեւեցին ուրիշ ամբարշտութիւններ, ըստ որում ինչպէս կենդանադրեալ ս. պատկերները կորզեցին եկեղեցուց, նոյնպէս բարձի թողի արին և մի քանի ուրիշ սովորութիւններ, որոնք հարկաւոր է վերահաստատել և նոյնպէս պահպանել ըստ գրաւորական և անգիր օրէնսդրութեան: Վասն որոյ որոշում ենք.—եթէ կան այնպիսի տաճարներ, որոնք սրբադործուած են առանց ունենալու մարտիրոսների ս. մասունքներ՝ զրուեն նորանցում մասունքներ սովորական աղօթքներով: Իսկ եթէ այսուհետև գտնուի մի եպիսկոպոս, որ տաճարներ նուիրագործի առանց ս. մասունքների՝ պաշտօնագուրկ լինի իբրև եկեղեցական աւանդութիւններն արհամարհող 13»):

3. «Ս. ի խափանել զանկարգութիւն պատկերամարտից, որք չամենայն եկեղեցեաց բարձին զնշխարս սրբոց վկայից, հրամայեմք չամենայն եկեղեցիս հանդերձ սովորական խորհրուածովք զնել զսուրբ նշխարս: Եւ եթէ որ չեպիսկոպոսաց չայսմհետէ նուիրեսցէ զեկեղեցի ինչ՝ չև եպեալ ՚ի նմա զնրշխարս սրբոց, ի կարգէ իւրմէ լուծցի \*)» 14):

Կան. 9. 1. «Մեծարելի պատկերների զէմ զրուածները բոլորը պիտի զրուեն Կ. Պօլսի եպիսկոպոսարանում (պատրիարքարան), հերետիկոսական այլ զրբերի հետ միասին մի կողմում մնալու համար: Այդպիսի զրբեր ծածկապէս պահողն եթէ եպիսկոպոս է կամ քահանայ կամ սարկաւազ՝ պիտի պաշտօնագուրկ լինի. իսկ եթէ արեղայ է կամ աշխարհական—բանադրուի»: \*\*)

2. Բոլոր երեխայական առասպելներն, անզուսպ ծանականքներն և ստապատիր զրուածներն, որոնք չօրինուած են ս. պատկերների զէմ, պիտի յանձնուեն Կ. Պօլսի եպիսկոպո-

\*) Պատմ. Տիեզ. ժող. 546.

\*\*\*) Nef. 7. 374.

սարանին, որպէսզի զրուած լինեն հերետիկոսական այլ զրբերի հետ միասին: Եթէ այդպիսի զրբեր ծածուկ պահող մէկը լինի, թէ եպիսկոպոս է, քահանայ կամ սարկաւազ՝ աստիճանից զրկուի. իսկ թէ աշխարհական կամ արեղայ—եկեղեցուց զրկուի») (որոշեցի չեկեղեցուց: \*)

Իրինէ կայսրուհին 802 թուին զրկուեց իշխանութիւնից և աքսորուեց. իսկ կայսերական զահի վերայ նստաւ Նիկեփորոս, որ դարձեալ հետեւեց պատկերահալած ուղղութեան: Նորա խստութիւններն և վանականների դէպի նորան տաճած ատելութիւններն երկու անգամ պատրաստեցին նորան զահրնկէց անելու դաւադրութիւն. առաջին անգամում զահի թեկնածու ունենալով չայազգի Վարդան պատրիկ զօրավարին, և երկրորդ անգամում Արշաւիր (Չայ) պատրիկին... բայց Նիկեփորոս չաղթող գտնուեց և զահի թեկնածուներն երկուան էլ (Վարդանն աչքերից զրկուած) փակուեցին վանքերում:

Նիկեփորոսին չաչորեց 811 թուին Միքայէլ որդին, որին համարում են բարի, բայց անխելք և երկչոտ մարդ, խաղալիկ իւր Պրոկոպիա կնոջ ու պալատականների ձեռքին:

Միքայէլն հանդիսացաւ կրօնաւորների հովանաւոր և հալածեց պատկերանարգներին, բայց թագաւորեց միայն երկու ասորի: Երբ որ Բուլղարներն արշաւանք գործելով հասան Կ. Պօլսի պարիսպներին, Միքայէլը թէև զօրքի զուխն անցած դուրս եկաւ նորանց դէմ, սակայն կռիւն սկսած միջոցին փախաւ ու մտաւ քաղաքը, մինչդեռ իւր զօրքը շարունակում էր պատերազմը թշնամու հետ: Այդ ամարդի փախուստն առիթ տուեց զայրացած զօրքին ու ժողովուրդին զահրնկէց անելու նորան և կայսր հրատարակելու քաջարի զօրապետ չայազգի Լևոնին (Արծրունի), որ Ասիական զօրաբանակի հրամանատարն էր և մեծ համակրութիւն էր վայելում: Զինուորական անվեհերութեան և փալլուն ձերբերի հետ միասին ունենալով և վարչական կորովամտութիւն և արդարադատութիւն՝ Լևոնը շուտով կարողացաւ թէ վերականգնել զօրքի մէջ ըն-

\*) Опытъ креста черк. закон. свт. встор. 529.

կած կարգապահութիւնն և թէ ամենքին նանաչել տալ օրէնքի և իշխանութեան նշանակութիւնն ու յարգը: Ինքը համոզմունքով պատկերատեսաց լինելով՝ դարձեալ հանել տուեց պատկերներն եկեղեցիներէց, հակառակողներին խիստ պատիժների ենթարկելով: Հակառակողների գլխաւորներն էին Կ. Պօլսի Նիկեփորոս պատրիարքն և Ստուղիացի Թէոդորոս վանականն: Առաջինը պաշտօնազուրկ եղաւ և նորա տեղ պատրիարք կարգուեց Թէոդորոս, պալատական աստիճանաւորներից մէկը. իսկ Ստուղիացին բանտարկուեց: Եւ որպէսզի կաշսերական հրամանին ընդդիմանալը չարդարացուի եկեղեցու վարդապետութեան պաշտպանութեան անունով՝ Կալսրի հրամանով 815 թուին ժողով գումարուեց Կ. Պօլսում, որ երեք նիստ ունեցաւ և փոխելով Նիկիայի 787 թուի ժողովի վճիռները՝ վերահաստատեց Կ. Պօլսի 754 թուի ժողովի որոշումներն. որից յետոյ կրկին սկսուեց պատկերներ շարդելու և փշրտելու գործողութիւնն այնպիսի եռանդով, որը ցոյց տալ կարող էր պատկերատեսացների առ ժամանակ զսպուած դայրոյթը: Ինչպէս Իսաւրացու և որդու ժամանակին՝ նոյնպէս և այս անգամ վանականները կանգնեցին պատկերների պաշտպաններ, ուստի և իբրև ըմբոստներ և խռովարարներ ենթարկուեցին պատիժների, բանտարկութեան և արքայի: Նորանցից շատերը պատուհասներէց ազատուելու համար փախան դնացին Արևելք և Իտալիա: Իտալիա փախածներին Հռոմի հայրապետը շատ սիրով ընդունում էր և պատսպարում վանքերում:

Սակայն Լևոն Ե-ի խստութիւնների հետևանքն եղաւ մի դաւադրութիւն, որ 820 թուին վերջ գրեց նորա կեանքին: Փրկչի ծննդեան տօնի զիշերային ժամերգութեան միջոցին կալսրը դնաց եկեղեցի. այնտեղ կանխապէս պատրաստուած թշնամիներն յարձակուեցին նորա վերայ և սրբի հարուածներով սպանեցին. որից յետոյ բանտից հանելով Միքայէլ թլուստին նստացրին կալսեր դահի վերայ:

Նոր կալսրը համոզմունքով պատկերատէր չերևաց, ինչպէս ձևացրել էր իրան՝ Լևոնի թշնամիների ծառայութիւնից օգտուելու համար. և իբրև այդ ծառայութեան փոխարինու-

թիւն բաւական համարեց պատկերչարողութեան համար դատապարտուածներին ներուծն շնորհել, որոնց թուում և Ստուղիացի Թէոդորոսին, և արքայութեանը ու փախստականներին իրաւունք տալ իրանց տեղերը վերադառնալու: Թագաւորութեան առաջին տարում հրովարտակ արձակեց, թէ Լևոնի օրով գումարուած ժողովի (815 թ.) վճիռներն իւր իշխանութեան միջոցին էլ պահպանում են իրանց ուժը. միայն թէ ամենքին էլ տրուած է կրօնական ազատութիւն այն պայմանով, որ ոչ ոք չհամարձակի խօսել կամ ընդդէմ կամ իշատագովութիւն պատկերների: Սակայն կան ասողներ, թէ Միքայէլ թլուստն էլ յետոյ դարձաւ խիստ պատկերահալած այն պատճառով, որ նորանից աւելին սպասող կուսակցութիւնն անբաւական մնալով այդ անտարբեր ուղղութիւնից՝ սկսաւ վատաբանել ժողովրդի մէջ կալսրին, և նա զայրացաւ ու փոխեց իւր ընթացքը:

Միքայէլ կալսրը վախճանեց 829 թ. և նորան յաջորդեց Թէոփիլոս որդին, որ թէև սկզբում հետևեց հօր ուղղութեանն և ընթացքին, բայց յետոյ դարձաւ պատկերաչարգների թուեղ հալածող: Կրօնաւորները դարձեալ հակառակ կանգնեցին նորա պատկերաչինջ հրովարտականի գործադրութեանն, և այդպիսով զրգուեցին Թէոփիլոսի զայրոյթն, որ նորոգեց նորանց դէմ հալածանքներ, պատիժներ, բանտարկութիւն, զանակոծութիւն և արքայ: Մեթոփիոս վանակաւին, որ մեծ յարգանք վայելող անձն էր, բանտարկեց մի հեռաւոր կղզում. իսկ կրօնաւոր Լաղար նկարչի երկու ձեռքը հրաշէկ երկաթով այրել տուեց՝ պատկերներ նկարելու համար: Նա նորից փակել տուեց շատ վանքեր:

Թէոփիլոսի կինը, Թէոդորա կալսրուհին իւր աղաչանքներով երբեմնապէս կարողանում էր թեթևացնել տալ պատժուածների վիճակն. իսկ երբ ինքը մարդու մահից յետոյ (842) Միքայէլ որդու անչափահասութեան պատճառով իբրև խնամակալուհի իւր ձեռքն առաւ իշխանութիւնը՝ դործերի դրութիւնը բոլորովին փոխուեց պատկերաչարգների օգտին: Իսկոյն գահընկէց եղաւ Կ. Պօլսի Յովհաննէս Գրամատիկոս պատ-

րիարքն, որ պատկերաչինչ ուղղութեան պաշտպանն էր և չկամեցաւ իւր համոզմունքից հրաժարուել, իսկ արքսորուած և բանտարկուած Մեթողիոսը բերուեց և կարգուեց պատրիարք: Նոյն 842 թուին կայսրուհու հրամանով զուժարուեց ժողով, որ որոշեց վերահաստատել Նիկիայի 787 թուի ժողովի վճիռներն և բանադրել պատկերատեսիլներին: Այս որոշումները յայտարարելուց չետոյ պատկերները մեծաշուք հանդիսով տարան ս. Սովիա եկեղեցին և դրին իրանց տեղերում: Հանդիսին մասնակցում էին կայսրուհին, նորա մանուկ որդին և խորհրդարանի անդամները: Ժողովին չհպատակող եպիսկոպոսներն այս անգամ զրկուեցին իրանց աթոռներից (15):

Թէոփիլոսի որդին, Միքայէլ Գ. օրինական տարիքին հասնելով՝ իւր ձեռքն առաւ իշխանութիւնը: Սա իրան ցոյց տուեց պատկերչարդութեան այնպիսի շերմեռանդ պաշտպան, որ մինչև անգամ Կոստանդին Կոպրոնիմոսի ոսկորները դերեղմանից հանել և այրել տուեց: Սակայն քրիստոնէական կրօնին այնքան անարդութիւն չէ կարող պատճառել հալածող ձեռքի նկարներ շարդել-փշրելն, որքան կեղծ բարեպաշտող մարդու համբույրը: Պատկերներն ատողներն և ոչնչացնողներն իրանց խստութիւններով թէև արևելեան-չունական եկեղեցուն վիշտ և նեղութիւն էին պատճառում, բայց եկեղեցուն շանակութիւնն և քրիստոնէական կրօնի սրբութիւնը պատկառանքով պաշտում էին. մինչդեռ Միքայէլ Գ. հրապարակով անպատկառ ծաղրի առարկայ է դարձնում քրիստոնէական հաւատի էական մասերը, հաւատադեպ սրտերի ամենաչերմ և սուրբ զգացմունքները:

Միքայէլ Երրորդի ծաղրը քրիստոնէական կրօնի վրայ այն տեղն էր հասնում, որ եկեղեցական սրբազան խորհուրդներն և արարողութիւններն էր ընտրում զուարճութեան միջոցներ: Մի անգամ նա իւր բարեկամներից մէկին հազրեց պատրիարքի զգեստ, իսկ ինքն և իրան մշտապէս շրջապատող 11 անձինք եպիսկոպոսական զգեստներ հագած նստան կերուխումի: Երբ արդէն զինին սկսել էր ազդել նորանց տրամադրութեան վերայ՝ սկսեցին եկեղեցական երգեր, որի միջո-

ցին եկեղեցական անօթների մէջ քացախ և քաղցու խառնած՝ միմեանց մօտեցնել խմելու իբրև հաղորդութեան խորհրդի բաժակ: Իսկ մի անգամ մի եկեղեցական նշանաւոր տօն օր, երբ պատրիարքն իւր հոգևորականներով զգետաւորուած և թափօր կազմած անցնում էին փողոցով՝ կայսրն և իւր մտերիմ ընկերակիցներն եկեղեցական զգեստներ հագած՝ նստեցին էշերի վերայ և դիմաւորելով թափօրին՝ սկսեցին զանազան շարժումներով սրբազան արարողութիւնը ներկայացնել, ծաղրել, ծիծաղել բարձրածայն և կատակաւոր երգեր երգել: Թափօրին հետևող ժողովրդական բազմութիւնը դառնազին զգացմամբ ականատես էր լինում այդ տեսարանին \*):

Թէև Կ. Պոլսի 842 թուի ժողովը վերահաստատեց պատկերչարդութիւնը, սակայն դիմադիր ուղղութիւնը նորանից չետոյ էլ ժամանակ առ ժամանակ երևան է գայիս իբրև վերարծարծող մի կազմ՝ հրդեհելու երկիւղալի նշաններով. ուստի և Բիւղանդ. Արևելեան եկեղեցին հարկադրուած է լինում երեք ժողովներում դարձեալ ուշադրութեան առնել սպառնացող վտանգն և նորա դէմ նորից վճիռներ կարգել: Երբ որ Միքայէլ Գ. կայսրի օրով 861 թուին Կ. Պոլսում ժողով զուժարուեց Փօս-Իզնատիոսեան կուսակցական յուղմունքներին վերջ տալու համար՝ հարկ եղաւ ձիջոցներ սահմանել և պատկերամարտութեան հետևողների դէմ. թէև յայտնի չէ, թէ որպիսի որոշումներ եղան այդ մասին.— չիշեալ ժողովի արձանագրութիւնները չեն պահպանուել \*\*):

Իզնատիոս Պատրիարքի օրով Կ. Պոլսում 869 թուին զուժարուած ժողովը պատկերամարտների դէմ հաստատել է երկու կանոն, որոնցում ասուած է, թէ Քրիստոսի պատկերները պիտի չարգել այնպէս, ինչպէս չարգուում են Աւետարանն և ս. խաչը. ըստ որում ինչպէս վերջիններս՝ նոյնպէս և առաջինները միանման չիշեցնում են Փրկչին և փրկութիւնը: Ով որ չէ չարգում Քրիստոսի, նորա Մօր և սրբոց պատկերը՝

\*) Леб. Очерки внутр. Ист. Визант. вост. церквей, стр. 10.  
\*\*) Ист. разд. церквей, 60.

ղրկուած է ի հաղորդութենէ եկեղեցւոյ և կորցնում է փրկութեան յոյսը \*): Այդ ժամանակում մեծ ծաւալ էր ստացել պատկերամարտութիւնը մանաւանդ Սիկիլիա կղզում: Փոտ պատրիարքի մի նամակն, որ անկորուստ է մնացել, պարունակում է պատրիարքի յորդորը Թէոփանէս վանականին ուղղած, որ ամեն շանքով կռուի չիշեալ կղզում զօրացած պատկերատեսաց ուսման դէմ \*\*):

Միքայէլ Դուկաս և Ալէքս Կոմնենոս Կայսրների օրով Կ. Պօլսում շատ հետևողներ զտած էր Իտալ ուսուցիչն, որ ի միջի այլոց մերժում էր և պատկերչարգութիւնը: Նորա ուսմունքները դատաստարտեց 1082 թուին գումարուած ժողովը \*\*\*):

Այժմ անցնենք Արևմտեան եկեղեցուն:

Արդէն նախօրօք ասել ենք, թէ պատկերների մուտքն այստեղ տեղի է ունեցել աւելի ուշ: Մուտք ասելով ոչ այն սկզբնական նշանակութիւնն ենք ի նկատի առել, ինչ որ պատկերներն ունէին իբրև եկեղեցիների զարգարաններ և հին անցքերի չիշատակներ զարթեցնող առարկաներ, այլ նորանց յարզանք և պաշտօն մատուցանելու վարդապետութիւնը. թէպէտև առաջին նշանակութեամբ ևս առած կարող ենք ասել, որ պատկերների պորձածութիւնը թէ այնպիսի ծաւալ չէ ունեցել Արևմտեան եկեղեցում, ինչպէս Արևելեանում և թէ ժամանակ առ ժամանակ յարուցել է բողոքներ և զործնական խիստ դիմադրութիւններ: Այսպէս օրինակ՝ եկեղեցու հայրերից Երանոս, Եպիփան և Օզոստինոս պախարակել են Գնոստիկեանների և Կարպոկրատեանների պատկերասիրութիւնն. իսկ նոյն Եպիփանը (Ե. դար) Պաղեստինի մի եկեղեցում պատառել է եկեղեցու վարագոյժը վրացի պատկերանկարի պատճառով, գտնելով «ընդդէմ վկայութեան ս. գրոց նկարեալ»:

Զորրօրդ դարի սկզբում Սպանիայում չիլիբերի ժողովը կանոնական վեճով մերժեց պատկերների գործածութիւնը,

\*) Очерки, 138.

\*\*) Очерки, 138.

\*\*\*) Անդ.—141. Известія русск. Арх. Общ. вѣ-Конст. 7.

գտնելով՝ որ անպատշաճ է պաշտելին ու երկրպագելին պատերի վերայ նկարել: Իսկ Զ. դարում Մարսիլիայի Սերինոս եպիսկոպոսն էր ջնջում, ոչնչացնում պատկերները: Եւ այդ առիթով պապ Գրիգոր Մեծի Սերինոսին գրածն ամենալաւ փաստն է, թէ հռոմէական եկեղեցին մինչև վեցերորդ դարի վերջն էլ չէր ընդունել պատկերչարգութիւնը:

Գրիգոր Բ. պապն եղաւ, որ 727 թուին գումարած ժողովով կանոնական վարդապետութեան ձև տուեց նորան. թէև հռոմի ժողովի այս որոշումն միմիայն Իտալիայում ընդունուեց: Երբ որ Աղրիանոս պապը կամեցաւ նիկիայի Բ. ժողովի պատկերչարգ որոշումն ընդունել տալ Կարոլոս Մեծին և տարածել նորա թագաւորութեան սահմաններում, արքայի հրամանով 794 թուին Փրանքֆուրտ քաղաքում ժողով գումարուեց 300 եպիսկոպոսների և պապի փոխանորդների ներկայութեամբ և մասնակցութեամբ, որ բացուած լինելով Մեծն Կարոլոսի նախագահութեամբ և ընդարձակ առեւարանութեամբ՝ երկու ամիս շարունակ նիստեր ունեցաւ, և խնդիրը մանրամասն քննելուց յետոյ պապի ցանկութեան բոլորովին հակառակը վճռեց.—պատկերներին որեւէ յարզանք կամ պաշտամունք ընծայելը մերժեց, թոյլ տալով, որ իբրև զարգարանք մնան եկեղեցիներում: Ժողովիս 2 կանոնն ասում է. «Քննուեց և Կ. Պօլսում (Նիկիայի ժողովն՝ անգամների վերջին անգամ կայսեր. պալատում գումարուելու պատճառով կոչուած է Կ. Պօլսի ժողով) գումարուած ժողովի մասին եղած խնդիրը: Այդ ժողովը սահմանել է բանադրանք նորանց համար, որոնք սրբոց պատկերներին չեն տալիս այն պաշտօնն և երկրպագութիւնն, ինչ որ արւում է Երրորդութեանը: Ներկայ գտնուող բոլոր եպիսկոպոսները մերժեցին տալ պատկերներին պաշտօն և երկրպագութիւն, և հրաժարուեցին համամիտ լինելուց այդ ժողովին»:

Բայց աւելի հետաքրքրական է նոյն ժամանակին և նոյն

\*) Néf. Ե. 113.

խնդրին վերաբերող բաւական ստուար մի գրուածք, որ կր-  
 րուծ է Libri Carolini-Կարոլոսեան Մատեանք-վերնագիրն, և  
 որ բաղկացած է չորս գրքից, իսկ ամեն մի գիրքը բաժա-  
 նուած է առանձին գլուխների: Եղած են 'ի հարկէ հեղինակ-  
 ներ, որոնք կամեցել են այդ Յիշատակարանի գրութեան  
 թուականը յետ տանել, նշանաւոր մեծ կայսրի Կարոլոսի  
 մասնակցութիւնը նորանից բառնայու համար. սակայն ա-  
 պարդիւն մի ջանք է եղել այդ, զուրկ պատմական որեւէ  
 արժէքից, ինչպէս ասում է չէֆէլէն: Վերջինս այդ գրուած-  
 քի Կարոլոսեան, այսինքն Կարոլոսի հրամանով, բայց արքու-  
 նիքի գիտնականներից մէկի ձեռքով գրուած լինելու վաւե-  
 րական վկայութիւնը դառնում է նոյն իսկ Սղրիանոս պապի  
 առ Կարոլոս գրած պատասխանի մէջ, ուր պապը խօսելով  
 այդ «Մատեանի» վերայ՝ բերում է նորա առարկութիւնների  
 դիմաց հակառակն ապացուցանելու նշանակութիւն ունեցող  
 վկայութիւններ: \*)

Կարոլոսեան Մատեանը (Մատեանք) նուիրելով ընդար-  
 ձակ և ծանրամասն քննադատութիւն Նիկիացի ժողովի պատ-  
 կերայարդ որոշումներին՝ հերքում է նորա շատագուրած հի-  
 մունքներն և ս. Գրքից ու Հայրերի խօսքերից առած վկայու-  
 թիւնների իմաստներն համարում է անիսկական: Նա պա-  
 խարակում է և Կ. Պօլսի (754) ժողովը: Չէֆէլէն տալիս է  
 Կարոլոսեան Մատեանի յայտնած առարկութիւնների հետե-  
 կալ ամփոփումներն:

1. «Արևելեան երկու ժողովներն էլ—թէ պատկերա-  
 ւարտներինը (Կ. Պօլսի 754) և թէ պատկերապաշտներինը  
 (Նիկիացի Բ.) անպատշաճ են և ամօթալի, երկուսն էլ անց-  
 նում են ճշմարտութեան սահմանից: Ընդդէմ առաջինի պէտք է  
 ասել թէ՛ պատկերները կուռքեր չեն. ընդդէմ երկրորդի թէ՛  
 պատկերները պաշտելի չեն»:

2. «Պաշտօն և երկրպագութիւն մատուցանելի են մի-  
 միայն Աստուծուն»:

\*) Nef. b. 121—122.

3. «Սուրբերին լուկ պատուել հարկաւոր է»:

4. «Կան սակայն դէպքեր, երբ մարդկանց տրւում է  
 երկրպագութիւն, որ լինում է չերկիր խոնարհելով նորանց  
 առաջ կամ համբուրելով նորանց, բայց այս տեղի է ունե-  
 նում ողջունելու աղաքաւ և ի ցոյց սիրոյ կամ խոնարհու-  
 թեան»:

5. «Իսկ այդպիսի երկրպագութիւն պէտք չէ տալ պատ-  
 կերներին»:

6. «Շատ էլ կարևոր չէ պատկերներ ունենալը կամ  
 չունենալը. ըստ որում նորանք անհրաժեշտ բաներ չեն. և  
 Նիկիացի ժողովը շատ իզուր է նդովքով սպառնացել նորանց  
 բոլորին, որոնք չեն մեծարում պատկերները»:

7. Պէտք չէ որևէ ձևով պատկերները համեմատել Քրիս-  
 տոսի խաչին կամ ս. գրքին, նուիրական անօթներին, սրբոց  
 մասունքներին և հանդերձներին: Այս բոլոր առարկաները  
 մեծարելի են Արևմուտքում համաձայն նախնաւանդ սովո-  
 րութեան. իսկ պատկերներն—ոչ»:

8. Անմատութիւն է պատկերների առաջ մոմ վառել կամ  
 խոնկ ծխել»:

9. Եթէ պատկերները սուրբ են համարւում, պիտի չը-  
 դրուեն անմարուր տեղերում. օրինակ՝ ճանապարհների վերայ,  
 ինչպէս այդ անում են յոյները»<sup>16)</sup> \*)

Սղրիանոս պապը լուութեամբ տարաւ այդ մեծ պար-  
 տութիւնն և չհամարձակեց մերժել Փրանքֆուրտի ժողովի  
 վճիռները: Բայց և այնպէս այդքանով զոհացումն չառաւ  
 այն զարոյթն, որին նա տեղի էր տուել՝ պաշտպան և ջա-  
 տաղով հանդիսանալով Նիկիացի Բ. ժողովի որոշումներին.  
 և Կարոլոս Մեծի մահից յետոյ Պարիզում 824 թուին գու-  
 մարուած եկեղեցական ժողովը դատապարտեց Սղրիանոսին,  
 անուանելով կռապաշտական սնտի պաշտամունքի պաշտ-  
 պան և ուսուցանող<sup>17)</sup>: Ըստ Չէֆէլէի՝ Լուդովիկոս Բարե-  
 պաշտը 825 թուին է գումարել Պարիզի ժողովն «ընտիր և

\*) Nef. b. 132.

ապտուածաբան» եպիսկոպոսներէց (Hist. des conc. Ե. 236): Եթէ եկեղեցու մի հայրապետ կամենում է պատկերչարգութիւնն ընդունել տալ, և նորա կամքն ու առաջարկութիւնը մերժում է մի բազմամարդ ժողով, որին մասնակցում են Գաղղիայի, Գերմանիայի, Սպանիայի և նոյն իսկ հայրապետական վիճակի-Իտալիայի եպիսկոպոսներն, <sup>18)</sup> և եթէ այդ հայրապետի մահից մի քառորդ դար անցնելուց չետոյ էլ եկեղեցին չէ ներում նորա արած քայլը կամ ունեցած ծղտումն, և իւր ներկայացուցիչներն բերանով դատապարտում է նորա չիշատակը,— այդ եկեղեցին պատկերչարգութեան պատրաստելու համար «հարիւր ամբ» բաւական չեն, ինչպէս սովորաբար ցոյց են տալիս հռոմէական եկեղեցու վարդապետները (Փափաղ. պատմ. եկեղ. 398):

**Բ.**

Պատկերների չարգութիւնն ե՞րբ և ո՞րպիսի ընդունելութիւն է դառել Հայաստանեայց եկեղեցում:

Հայ եկեղեցական պատմութեան մէջ սակաւ չեն այնպիսի խնդիրներ, որոնք մինչև այսօր մնացած լինելով առանց ուշադիր ուսումնասիրութեան՝ տեղի են տուել տարակուսութիւնների և հակասական կարծիքների: Այդպիսիներից մէկն էլ մեր ներկայ աշխատութեան նիւթն է, որի նկատմամբ թէ՛ Հայ և թէ՛ օտարազգի հեղինակներ երկու տարբեր խմբերի են բաժանուում. մէկը յայտարարում է, թէ՛ Հայոց եկեղեցին բուն սկզբից պատկերներ ընդունել և չարգել է. միւսը դորա ներհակն է պնդում: Որպէսզի կարելի լինի ապացուցանել թէ՛ երկուսից ո՞րն է ուղիղն և անհերքելին՝ պիտի լսել նախ մի կողմի, ապա միւսի ասածներն, իսկ չետոյ անցնել համեմատական եզրակացութեան: Այսպիսով այս երկրորդ գլուխը պիտի բաժանենք երեք մասերի:

**Ա.**

Հայոց եկեղեցին չարգում է պատկերներ.

Այս ասողներն իբրև աղբիւրներ աչքի առաջ ունեցել են

1. Հայաստան բերուած նշանաւոր պատկերների պատմու-

թիւներն. 2. ի պատիւ պատկերների յօրինուած երգերն. 3. եկեղեցու զործածական մատեններն (Մաշտոց, Յայսմաւուրք). 4. հեղինակաւոր Հայրերի անուաններ կրող գրուածներն և 5. եկեղեցիների որմանկարները:

Ժամանակագրական կարգով չառաջ ենք բերում թէ՛ այդ աղբիւրներն և թէ՛ նորանց վերայ հիմնուող հեղինակների խօսքերը:

1. Մովսէս խորենացին պատմում է Քրիստոսի անծնուագործ պատկերի կամ դաստառակի առ Աբգար թագաւոր ուղարկուիլը հետևեալ կերպով:

Աբգարի դեսպաններն, որոնք ուղարկուած էին Պաղեստինի հռոմէական իշխան Մառինոսի մօտ, Երուսաղէմ հանդիպած լինելով՝ վերադարձին պատմում են թագաւորին Յիսուսի կատարած սքանչելիքներն: Աբգարը տարիներէց ի վեր վարակուած լինելով բորոտութեան անբուժելի հիւանդութիւնով՝ ցանկանում է հրաշագործող փրկչին հրաւիրել իրան բժշկելու: Նա գրում է նորան հրաւիրադիր և ուղարկում է առանձին դեսպանութեան ձեռքով: Փրկչն Եղեսիա դնալ յանձն չէ առնում, բայց թղթով խոստանում է Աբգարին իւր համբաւնալուց չետոյ ուղարկել իւր աշակերտներից մէկին, որ նորան բժշկի: Այս պատասխանադիրը փրկչի պատկերի հետ միասին Անանն, Աբգարի ուղարկած դեսպանութեան գլխաւորը, բերում է արքային: Այդ պատկերը պահուել է Եղեսիայում մինչև խորենացու ժամանակն էլ: «Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵղեսացուց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի» \*):

Փրկչական այս դաստառակի մասին չիշատակում են չետազայ դարերի մատենագիրներից.— Յովհաննէս Կաթ. պատմաբան (թ. դար.), նոյնութեամբ մէջ բերելով խորենացու խօսքերը. «Զթուղթ Փրկչին բերեալ առ Աբգար Անանայ «սուրհանդակի ընդ նմին և զկենդանագրութիւն փրկչական

\*) Պատմ. Հայ Վեմետ. 1865, 106.

«պատկերին, որ կայ մինչև ցայսօր ժամանակի չեղեսացւոց քաղաքի» \*):

—Թովմա Արծրունի (Թ. դար). «Յանդիման Փրկչին «կացուցին զառաքեալսն (դէսպաններին) հանդերձ թղթովք «Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ... զրե- «լով և զպատասխանի թղթոյն ի ձեռն թովմայի առաքելոյ, «և զխոստաբանութիւն՝ զթաղէոս առաքել ընդ զփափազումն «խնդրոյն. և զանձկայից տեսութիւնն հրաշափառապէս և «անճառաբար ի վարշամակի տպաւորեալ ելից զկարօտութիւնն «Աբգարու աղբիւրն կենաց Քրիստոս» \*\*):

—Ուխտանէս եպիսկոպոս (ժ. դար). «պատասխանի թրդ- «թոյն Աբգարու, զոր զրեաց Թովմաս Առաքեալ հրամանաւ «Փրկչին: Երանի իցէ այն՝ որ հաւատալցէ չիս... Զայս թուղթ «բերին սուրհանդակք Աբգարու, ընդ որում զկենդանադրու- «թիւն Փրկչական պատկերին, որ կայ չեղեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի» \*\*\*):

—Ստեփաննոս Ստղիկ (ժ. դար). «Որում (Աբգարին) «և պատասխանի հրամայէ Փրկչին զրել Թովմայի Առաքելոյն: «Եւ եբեր զայս թուղթ Անան Սուրհանդակ Աբգարու, ընդ «որում և զկենդանադրութիւն փրկչական պատկերին, որ «կայր չեղեսացւոց Ուռհայ քաղաքին մինչև յաւուրս Նիկի- «ֆոռայ Յունաց արքայի, զոր նա ի ձեռն Աբրահամու մեա- «րապօլտի տարաւ ի Կ. Պօլիս» \*\*\*\*):

—Մխիթար Այրբւմանեցի (ժ. դար). «Առաքեաց Աբգար «առ Յիսուս զիր աղաչանաց, և նա առաքեաց նմա զպատ- «կերն իւր՝ նկարեալ ՚ի դասառակի, զոր յետոյ նիկիփօս տարաւ ի Կ. Պօլիս \*\*\*\*\*):

—Վարդան վարդապետ (ժ. դար). «Ելին յԵրուսաղէմ «(Աբգարի դեսպանները) և տեսին զՏէրն զի առնէր նշանս

\*) Պատմ. Մոսկվա, 1853, 21-22.

\*\*) Պատմ. տանն Արծրունեաց Ս. Պ.-բուրգ. 1887, 46.

\*\*\*) Պատմ. Հայոց. Վաղարշապատ. 1871. 48.

\*\*\*\*) Ստեփ. Տարօն. Պատմութիւն, Ս. Պ.-բուրգ. 1885. 45—46.

\*\*\*\*\*) Պատմ. ժամանակագրական. Ս.-Պ.-բուրգ. 1867. 59.

«մեծամեծս, և հաւատացին ի նա, և բերին զտեսեալ նշանսն «Աբգարու, և զարձան մեծարել զնա և բերին զպատկերն. և «եկաց յՈւռհայ, մինչ ի Նիկիփօս թաղաւորն Յունաց, որ տա- «րաւ ՚ի Կ. Պօլիս» \*):

—Յալսմաւուրք (Նաւասարդի զ. և օգոստոսի 16). «Յի- «շատակ պատկերին Քրիստոսի ի ս. դաստարակին: Աբգար «արքայն Հայոց և Սսորոց Միշաղետաց, որ էր ՚ի քաղաքն «յՈւռհայ, լուաւ զսքանչելի զորձն Յիսուսի՝ զոր առնէր ի «Հրէաստանի: Եւ առաքեաց առ նա զԱնանէ զհաւատարիմ «նախարարն իւր, զտէրն Սպահունեաց՝ Ժ. (տասն) արամբք, «և պատկերահան մի, Յովհաննէս անուն, և ընծայս պատուա- «կանս, և պատմուեան մի առանց կարանի»... Այդ պատգա- «մաւորները զնում ներկայանում են Յիսուսին և տալիս Աբ- «գարի նամակն և ընծաները: Յիսուս ընդունում է և պա- «տուիրում թովմա առաքելին զրել պատասխանն, որով յայտ- «նում է թէ չէ կարող զալ Եդեսիա, բայց իւր համբառնալուց յետոյ կուղարկի իւր աշակերտներից մէկին, որ կբժշկի նո- «րան և կեանք կտայ թէ նորան և թէ մօտը եղածներին: «Իբ- «րև տեսին թէ ոչ էառ յանձն Յիսուս զալ առ Աբգար, ապա «սկսաւ նկարիչն նկարել զպատկերն Յիսուսի... իբրև սկսաւ «ճրադրել զերիտասարդական հասակն, որպէս և էրն, և իբ- «րև զարձեալ հայեցաւ ի նա՝ և ետես զնա ծեր. և շնչեալ «զառաջինն՝ և սկսաւ զայն ձեացուցանել: Եւ չորժամ դար- «ձեալ հայեցաւ՝ ետես զնա պատանի երկոտասանամեայ: Եւ «յայնժամ զարհուրեալ՝ եթող զնկարելն: Եւ Յիսուս զիտա- «ցեալ զխորհուրդս նոցա՝ և զովեաց զհաւատս նոցա: Եւ առ- «եալ դաստառակ մի... արկ զաստուածային երեսօրն, և իս- «կոյն նկարեցաւ ի նմա պատկերն տերունական. աչքն՝ և «յուռնքն, բիթն՝ և բերանն. զոյն՝ և կերպն. զիրքն երեսացն, «և մօրուսն ամենեւին անպակաս: Եւ ինքն Յիսուս ծալեալ «զայն և զթուղթն, ետ յԱնանէ»: Այնուհետև պատմելով այն տեսիլքներն, ինչ որ կատարուել են պատգամաւորների վերա-

\*) Պատմութիւն. Վննտիկ. 1862—34.

զարծին ս. դաստառակի պատճառով՝ Յաչսմաուրբը կնքում է պատմածն ասելով. «Եւ եղեալ (պատկերը) յարբունիսն՝ «պաշտէին իբր զնոյն ինքն զՔրիստոս: Եւ առողջացան ամենայն ախտաժետք և ցաւազարք քաղաքին, ի փառս Քրիստոսի պատկերին» 19):

2. Նոյն Մովսէս խորենացին «ի խնդրոյ Սահակայ Արծրունեաց իշխանի» գրում է հոգւոց վանքում դրուած և սքանչելագործութիւններով յայտնի պատկերի (Տիրամօր) պատմութիւնը: Սահակ Արծրունին խնդրում է ասել թէ հոգեաց վանքի սքանչելագործ պատկերն ո՞վ և ո՞րտեղից է բերել այնտեղ, ըստ որում, ասում է նա, ուրիշները շատ զանազան բաներ են պատմում միմեանց աննման և չենք կարողանում հաւատալ թէ ո՞վ է ստույգ պատմում: Խորենացին նորա այդ փափազը կատարելով՝ գրում և ուղարկում է այդ պատմութիւնը, որից իմանում ենք թէ՛ երբ Քրիստոսի աշակերտներն իմացան, որ Տիրամայրը հրաւիրուած է փոխուելու իւր Որդու մօտ՝ Յովհաննէս Աւետարանիչը կիպարիս փաշտի վերայ կերպածեում է Սրբուհու պատկերն. ապա միւս աշակերտների հետ միասին աղաչում են Տիրամօրը փաշտեղէն աւօթը դնել իւր աստուածատիպ պատկերի վերայ և օրհնել զայն. և խնդրել Տիրոջից իւր, Սրբուհու փոխման միջոցին, որպէս զի բարիք անի երկրին. ըստ որում բորոտութեան ախտը սաստիկ տարածուած էր երկրում, մանաւանդ Երուսաղէմում: Երբ որ Պօղոս և Յովհաննէս բնկերներով միասին դնում են աղաչելու Տիրամօրն՝ ասում է Պօղոսն ամենօրհնեալ ս. Կոյսին. «Աստուծոյ բանի անարատ առաջատ, աղաչում ենք քեզ, բնգունիր Յովհաննէսի նկարած այս փաշտեղէն պատկերը քո ս. ձեռքն և օրհնիր. և արա աշխարհի կեանքի նշան. և աղաչիր քո Որդուն և մեր Աստուծուն, որ այս պատկերի միջնորդութեամբ բառնայ բորոտութիւնը մարդկանցից, երբ որ կապաւինեն քո բարեխօսութեանը: Ս. Կոյսն սկզբում չի համաձայնում և նորանց պատասխանում է. ինչպէս էք ստիպում ինձ, որ Տիրոջ աղախինն եմ, իմ անունով անել այնպիսի բան, որ պատշաճ չէ: Դուք էք մեր արարչի,

—Քրիստոսի աշակերտներն և ձեզ շնորհեց իշխանութիւն դներ հալածելու, ախտեր և հիւանդութիւններ բժշկելու... Դուք ինչ բան որ կամենում էք, խնդրեցէք ակը Աստուծուց և կկատարի. ըստ որում՝ եթէ երկրի վերայ լինելով երկինքը փակելու իշխանութիւն առիք և կարգուեցիք տիեզերքը բոլոր կողմերի վերայ իշխաններ, և եթէ Տէրը ձեզ իւր բարեկամներ անուանեց—ձեզ համար սքանչելիքներ էլ կլինեն, և ուր որ ձեր ոտքերը հասնեն, անկարելի բան չի լինի ձեզ համար: Սակայն Պօղոս առաքեալն ապացուցանելով իրանց փոքրութիւնը նորա համեմատութեամբ՝ համոզում է Տիրամօրն, որ պատկերն առնելով իւր ձեռքը՝ աղօթում է առ հայրն Աստուած.—խնդրում եմ քեզնից, վերացրու բորոտութեան ախտը մարդկանցից այս փաշտեղէն պատկերի միջնորդութեամբ, տպաւորելով սորանում Երրորդութեանդ զօրութիւնը: Երբ նա աղօթքը վերջացնում է և առաքեալներն ասում են «ամէն», իսկոյն ամպեղէն լոյսը խաչանման կաթում է սուրբ պատկերի վերայ: Ապա Տիրամայրը դնում է պատկերն իւր երեսի վերայ և թրջում չորդառատ արտասուքով: Պետրոս և Պօղոս առաքեալներն առնում են պատկերը ս. Աստուածածնի ձեռքից և ամենքը երկրպագում են: Այնուհետև՝ Տիրամօր փոխումից չետոյ քանի այդ պատկերն առաքեալների մօտն էր Երուսաղէմում, քաղաքի բորոտները դալիս էին նորանց մօտ, և առաքեալներն այդպիսիներին իւրով օժում և պատկերովը տեսանադրում էին և իսկոյն բժշկում էին իրանց ախտից: Բայց մի հանգամանք պատճառ եղաւ ս. Պատկերի տեղափոխութեան: Տիրամօր ննջման և թաղման միջոցին Բարդղիմէոս առաքեալը բացակայ էր.—այդպէս էր տնօրինել Տիրոջ կամքը: Յետոյ միայն լուր առնելով և Երուսաղէմ գալով՝ նա ստիպում է միւս առաքեալներին, որ զոնէ Տիրամօր զերեզմանը բանան, որպէս զի ինքը տեսած լինի աստուածային դանձը—ամենօրհնեալ կուսի մարմինը: Նորա փափազը կատարում են. սակայն բանալով սուրբ զերեզմանը՝ նորանում չեն գտնում սրբասնեալ մարմինը, և հիացմամբ իմանում են, որ թաղումից երեք օր չետոյ հրեշ-

տակների ձեռքով փոխադրուել է երկինքը: Բարդղղիմէոսի տրտմութիւնը կրկնապատկուած է. նա արժանի չեղաւ ոչ Տիրամօր ննջման միջոցին ներկայ լինելուն և ոչ ս. մարմինը պերեղմանում տեսնելուն: Առաքեալները նորան մխիթարելու համար տալիս են նորան Տիրամօր պատկերն, և նա անչափ ուրախացած՝ շտապում, գալիս է հայաստան և Անձեացեաց երկրում, դարբնաց քար կոչուած տեղում կառուցանելով ս. Աստուածածնի անունով մի տանար՝ դնում է նորա մէջ չիշեալ ս. պատկերը, որի պահպանութիւնը յանձնում է ս. կանանց. իսկ տեղի անունը դնում է հոգեաց Վանք:

(«Նրաւիրեալ սրբուհին ի փոխումն առ որդին իւր, յայտ-  
«նեալ աւետարանչին զփայտն Կիւպարիս, յորմէ կենսաբեր  
«խաչն, մեծաւ թախանձամբ կերպածէ զպատկեր Տիրամօր  
«առ ի մնալ նշխար կենաց մերոց, առ անձուկ սրտին իւրոյ  
«չոյժ բաղձացեալ աւետարանիչն... Արդ ի ժողովել աշակեր-  
«տացն համագումար միաբանութեամբ ի չղարկել զաստուա-  
«ծամայրն իւրեանց... Խորհեցեալ այնուհետև և Յովհաննու  
«ընդ այլ առաքելոսն աղաչել զՏիրամայրն իւրեանց, դնել  
«զփայտեղէն անթն ի վերայ աստուածատիպ պատկերին իւ-  
«րոյ, և օրհնել զնա, և խնդրել ի տեառնէ բարի առնել  
«երկրի ի փոխմանն իւրում. քանզի աստ բորոտութեան մե-  
«ծապէս ցասմամբ եռայր չերկրի, բայց չերուսաղէմ առա-  
«ւել ևս: Երթեալ Պաւղոսի և Յովհաննու հանդերձ միաբան  
«զնդիւն աղաչել զՏիրամայրն, ասէ Պաւղոս ցամենօրհնեալ  
«ս. Կոյսն. Անարատ առաջատ Աստուծոյ Բանին, աղաչեմք  
«զքեզ, բնկալ զփայտեղէն պատկերս զայս զնկարեալս ի Յով-  
«հաննէ ի ս. ձեռս քո, և օրհնեա զսա, և տուր զսա նշան  
«կենաց աշխարհի. և աղաչեա զորդին քո և զԱստուածն մեր,  
«բառնալ ի ձեռն պատկերիս զբորոտութիւն յորդոց ի մարդ-  
«կանէ, որք ապաւինին ի քո բարեխօսութիւնդ: Պատասխա-  
«նի ետ ամենօրհնեալ ս. Կոյսն և ասէ ցնոսա. Եւ զիմօրդ  
«հարկեցուցանէք զիս զաղախին տեառն առնել յանուն իմ իրս  
«որ չէ արժան: Ի ուր աշակերտք զոլով արարչին մերոյ Քրիս-  
«տոսի, ձեզ շնորհեաց իշխանութիւն հայածել զվես, և բժրչ-

«կել զախտս և զհիւանդութիւնս, կոխել զաներևոյթ գա-  
«զանն, և բառնալ յաշխարհէ զկռապաշտութիւն: Ի ուր վասն  
«որոյ իրի և կամիր, աղաչեցէք զաէր ձեր և զԱստուածն, և լինիցի  
«ձեզ. զի թէ զերկինս փակել իշխանութիւն առէք չերկրի, և  
«կարգեցայք իշխանք ընդ ոլորտս տիեզերաց, և զձեզ բարե-  
«կամս իւր կոչեաց տէր, և նշանք հրաշալիք վասն ձեր լի-  
«նին, և ուր ոտք ձեր հասանեն ոչինչ անհնար լինիցի ձեզ...  
«Ասէ Պաւղոս. Կոյս սուրբ և մայր Աստուծոյ, մեր ծառայք  
«անպիտանք եմք արարչին աշխարհի, որ հանեցաւն ի քէն  
«մարմնանալ... իսկ դու տիրամայր զոլով մեր... աղաչեմք զքեզ,  
«արա մէզ նշան զպատկերս զայս, որպէս և միածին որդին  
«քո, որ զփայտ մահուն իւրոյ անմահութեան զործարան ետ  
«աշխարհի, և դանձ կենաց, հալածիչ զիւաց: Եւ այժմ շնոր-  
«հեա, զի սա լիցի բժիշկ վիրաւորելոց, և նշխար հաւատա-  
«ցելոց, զի տեսանելով զսա, որք փափագեն տեսանել զքեզ,  
«լցեալ եղիցին խնդրուածք իւրեանց»:

«Յայնժամ առեալ ամենօրհնեալ սրբուհուցն զպատկերն  
«նկարեալ ի սուրբ ձեռս իւր, տարածեաց զաստուածընկալ  
«ձեռս իւր չերկինս և ասէ. Տէր Աստուած ամենակալ, հայր  
«տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... աղաչեմ զքեզ այժմ և  
«խնդրեմ ի քէն, բարձ տէր զախտ բորոտութեան ի մարդկանէ  
«ի ձեռն այսր նկարեալ փայտեղէն պատկերիս, զզօրութիւն  
«երրորդութեանդ սպաւորելով ի սմա ի ձեռն իմոյ աղաչանացս  
«և խնդրոյս... Եւ ասացեալ առաքելոցն զամէնն, նոյն ժա-  
«մայն կամար լուսեղէն եկաց ի վերայ սրբուհուցն, և լոյս  
«ամպեղէն խաչանման կաթեաց ի սուրբ պատկերն: Եւ եղեալ  
«սրբուհուցն զսուրբ պատկերն ի վերայ երեսաց իւրոց, և բաց-  
«եալ յորդառատ արտասուօքն զոր հեղոյր առաջի տեառն:  
«Եւ առեալ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի զպատկերն  
«ի ձեռաց սրբուհուցն, և ամենեքեան երկրպագեցին... և բո-  
«րոտք, որ էին ի քաղաքին, զային առ սուրբեալսն և օծա-  
«նէին իւղով, և տեառնադրէին սուրբ պատկերաւն, և առ-  
«ժամայն բժշկէին յախաիցն... Արդ Բարթողիմէոս առաքեալ  
«մի չերկոտասանիցն ոչ գոյր ընդ նոսա ի զուգահաւարքման

«կուսին, վասն զի կամք էին տեսուն այսմ այսպէս լինել. զի  
 «ընդ Թովմայի ի հնդիկս էր երթեալ: Եւ եկեալ նա յետոյ  
 «առ առաքեալսն, բռնադբօսեաց զնոսա, ցուցանել նմա զգանձն  
 «աստուածային զմարմին ամենօրհնեալ կուսին: Եւ յօժարեալ  
 «նոցա լնուլ զփափագ տենչանաց եղբօրն իւրեանց, բացեալ  
 «այնուհետեւ զսուրբ զերեղմանն, զտին ունայն յաստուածա-  
 «կիր մարմնոյն: Եւ հիացեալք իմացան թէ ի դադարել օրհ-  
 «նութեան հրեշտակացն և սաղմոսերդութեանցն զկնի երից  
 «աւուրց ի նոցանէ փոխադրեցաւ մարմինն սուրբ ի ձեռն  
 «նոցին հրեղինաց դասուցն: Ապա յոյժ սգացեալ Բարթողի-  
 «մէոս, զի ոչ ժամանեաց նա տեսութեան սուրբ կուսին, և  
 «ոչ լուաւ զօրհնութիւնսն վերջին որպէս զայլ առաքեալսն  
 «և զաշակերտսն տեսուն, և ոչ ի զերեղմանին եզիտ, տրամէր  
 «առաւել քան զառաւել: Զայն տեսեալ երանելի առաքեալքն,  
 «մխիթարել զեղբայրն իւրեանց կամեցեալ, ետուն նմա զպատ-  
 «կեր Տիրամօրն, որ էր ի փայտն նկարեալ, բնաւորեալ զօ-  
 «րութեամբն: Զոր առեալ Բարթողիմէոսի զուարճացաւ...  
 «Ապա մեծաւ փութով ել ի հայս հրամանաւ սուրբ հոգւոյն...  
 «Եւ եկեալ յաշխարհն Անձեացեաց ի համբաւ քարի միոջ,  
 «քանզի զեք բազումք բնակեալ էին անդ... կռանածայնս  
 «դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս զործէին... և անուա-  
 «նէին զանուն տեղւոյն այնորիկ Դարբնաց քար... Անդ հիմ-  
 «նարկեալ սուրբ առաքեալն զհիմն տանարի սրբուհւոյն իւ-  
 «րովք իսկ ձեռօքն, շինեալ եկեղեցի փոքրագոյն, և անուա-  
 «նեաց զնա Սուրբ Աստուածածին. և եղ ի նմա զպատկեր  
 «տիրուհւոյն, և տայ զնա սուրբ կանանց. և դուխ կացու-  
 «ցանէ անդ զքոյր Յուսկանն... և անուանէ զտեղին հոգեաց  
 «վանս յանուն Տիրամօրն և սուրբ կուսին» \*)<sup>20)</sup>

Հոգեաց վանքի պատկերի մասին խորենացու ճառից յե-  
 տոյ առաջին չիշատակողը Յովհաննէս Սարկաւազ վարդա-  
 պեան է (Ժբ. դար.), որ պատկերների մասին զրած մի ճա-  
 ուր մէջ ասում է. «Այլ զսրբոյ և զաստուածածնի կուսին

\*) Մովս. Խոր. Մատենագր. Վենետ. 1865. 290-295.

«ամենաշնորհ պատկեր, զտուեալն, որպէս ասի հաստատու-  
 «թեամբ խնդրողացն զայն երանելի առաքելոցն, առաւել ա-  
 «մենեցուն սրբոցն համարել»: Այս ճառը յետոյ կտեսնենք  
 իւր տեղում: Երկրորդն է Կիրակոս Գանձակեցին (Ժգ. դար.).  
 «Աքանչելին Մովսէս... (դրեց) զպատմութիւն սրբուհւոյ Աս-  
 «տուածածնին և պատկերի նորա՝ ի խնդրոյ իշխանացն Արծ-  
 «րունեաց» \*):

3. Կայ հայաստան բերուած երրորդ պատկերի պատ-  
 մութիւն ևս: Աւոնդ պատմագիրը (բ. դար.) Բագրատունի  
 Սշոտ պատրիկին զովելով իբրև խոհական և բարեպաշտ անձն՝  
 ասում է հետևեալն.— Սշոտը շինեց Դարօնքի եկեղեցին և  
 դրեց նորա մէջ Քրիստոսի մարդեղութեան հրաշագործ պատ-  
 կերն, որ բերած էր Արևմուտքից: «Եւ շինէր զեկեղեցին Դա-  
 րիւնից չիւրում ոստանին, և զկենդանադրեալ զպատկեր մար-  
 դեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտիցն արևու մեծասքանչ  
 զօրութեամբ՝ հանդուցանէր ի նմա. և նորա անուամբ զեկե-  
 ղեցին անուանեաց» \*\*):

— Տասներորդ զարի հեղինակ Ստեփաննոս Տարօնեցու  
 կամ Ասողիկի պատմութեան մէջ երկրորդ չիշատակութիւնն  
 ենք գտնում այդ պատկերի մասին Աւոնդի միւսնոյն խօսքե-  
 րով. «Սշոտ պատրիկ... շինեաց զեկեղեցին Դարիւնից. և զկեն-  
 դանադրեալ պատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածէր ի  
 մտիցն արևու, մեծասքանչ զօրութեամբ հանդուցանէր ի նա,  
 յորոյ զեկեղեցին անուանեաց յանուն» \*\*\*): (Երևի զըչազրի  
 սխալ է ստորակէտի՝ արևու բառից յետոյ դրուելը, փոխա-  
 նակ զօրութեամբ բառից յետոյ դրուելու):

— Երրորդ չիշատակողը Վարդան Վարդապետն է, բայց  
 ոչ այնքանով, որքան նախակարգեալ պատմիչներից մէկն հա-  
 զորդել է և միւսը կրկնել: Անցած բաւական երկար ժամա-  
 նակն արդէն ձեռնամուխ է եղել և ճոխացրել այդ պատկերի

\*) Կիր. Պատմագիր. Մոսկուա. 1858. 17.  
 \*\*) Աւոնդեայ Վարդ. Պատմութիւն Ա.-Պ.-բուրդ, 1887, 16.  
 \*\*\*) Ստ. Տարօն. Պատմ. Ա.-Պ.-բ. 1885. 123.

պատմութիւնը նոր տեղեկութիւններով: Վարդանի ասելով՝ թէ՛ այդ պատկերի հետ մասունք է եղել, և թէ՛ եկեղեցին կառուցանողը նաւակատիքի հանդէսը կատարելիս երգ է երգել. «(Սմբատ) առնու զկիւրապաղատութիւնն զկնի Աշոտոյ, որ շինեաց զԴարօնից եկեղեցին յանուն վրկչական պատկերին, զոր երեք որդի նորա յարեմտից մասամբ. և ի նաւակատիսն երգեաց (Մ. Էմինիօրինակն՝ դրեաց \*) «Զորս ըստ պատկերին» \*\*):<sup>21)</sup>

Մենք իւր տեղում ամբողջովին յառաջ կրերենք թէ՛ այդ երգն և թէ՛ Դարօնքի պատկերի պատմութեան երկրորդ մասը:

Քանի որ առիթ ունեցանք չիշխու «Զորս ըստ պատկերի» երգը, չիշենք և մի այլ երգ, որ երգում է մեր եկեղեցում. «Զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմբ առաջի անոխակալ տէրութեանդ քո. յորժամ Կաս փառօք հօր դատել զթշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց, բարեխօտութեամբ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ Տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ»: Ոմանք այս երգի հեղինակ անուանել են Զորափորեցի Սահակ կաթողիկոսին (1677-703). բայց կան և ասողներ, (Վանական Վ. և ուրիշները) թէ՛ երկու երգերն էլ «Զորս ըստ պատկերի» և «Զկենդանագիր անարատ ծնողի քո» յօրինել են Գրիգոր Մաղիսարոսն և իւր որդին—Վկայասէրը:

Յիշեալ երեք պատկերների մասին խօսելուց յետոյ չենք կարող անտես առնել և ուրիշ մէկը—Վարադայ վանքի ս. Աստուածածնի պատկերն, որը թէ՛ և միւսների նման ոչ ընդհանուր նշանակութիւն ունի և ոչ սեպհական պատմութիւն, որից կարելի լինէր իմանալ թէ՛ ճրտեղից, ե՞րբ և ո՞ւմ ձեռքով է բերուել, սակայն այն էլ բաւական է, որ չիշուում է իրլե մի որոշ տեղի համար կրօնական յարգանքի առարկայ: Մատթէոս Ուռհայեցին (Ժբ. դար.) ասում է, թէ՛ Գաղիկ Ա. թագաւորի որդի Աշոտն ապստամբելով թագաւորած եղբօ-

\*) Всеобщ. Ист. Вард. Вел. Утукцв. 1861. Ծանօթ. 325 եր. 119.

\*\*) Պատմ. Վենետ. 71.

րից—Յովհաննէսից 972 թուին՝ օգնութիւն դտնելու յուսով անցնում զնում է Վասպուրական. և Վաթագ լերան հասած լինելով՝ «մտանէր ի Վանք ս. Նշանին Քրիստոսի, և երկրը— «պագեալ առաջի աստուածընկալ Խաչին Աստուծոյ և պատկերի սրբոյ Աստուածածնին» \*): Նոյն պատմադրի առելով՝ այդ պատկերը ս. Նշանի հետ միասին 1093 թուին տարւում է Ուռհա քաղաքը: Այժմ անցնենք պատկերյարգութեան մասին խօսող հեղինակներին:

1. Յովհաննէս Կաթողիկոս Օձնեցի, Իմաստասէր (718-729):

Այս հայրապետի անունով մեզ հասած գրուածներից մէկն ուղղուած է «Ընդդէմ Պաւղիկեանց»: Կարևոր ենք համարում մէջ բերել այստեղ հատուածներ բնադրից, զնելով և աշխարհաբար թարգմանութիւնը: Գրուածն սկիզբն անելով Յովհաննէս առաքեալի կաթուղիկեաց թղթի այն խօսքից, թէ «բազումք են ելեալ յաշխար և նեռինք» և յայտնելով թէ իւր ժամանակում աւելի շատ և աւելի չարագոյն նեռեր են երեւացել, ասում է, թէ՛ այդ «նեռինքը» աշխինքն «Պաւղիկեան- «ները» չարեաց ի չարիս վերացեալ էլին. ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեցութիւն, և «անտուստ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն: Այլ «և խորամանկեալ դտին զստութեանն իւրեանց զէն խողխողիչ «քրիստոսատիրաց անձանց, զաշնակից լինելով բռնակալաց... «Եւ ուղիղ և աստուածաւանդ կրօնիցն մերոց լուսաւորութեամբ նախատել զմեզ յանդգնին պղծալիցն իւրեանց շրբ- «թամբք, կռապաշտս անուանելով տէրունեան աղաղաւ նշա- «նապաշտութեամբ. զոր անխտրապէս յանդեղեւուն մտաց առ- «եալ մեք կապեցաք զհռչակելին զայն նշան ընդ ամենայն «նիւթս, որ և բերովբէիցն է սարսափելի և պատկառելի, զբու- «ժիչն հողեկանաց մերոց և մարմնականաց ախտից, զպակու- «ցանոց և զղարհուրեցուցիչ զիււաց: Այլ և կենդանադրեալ «պատկերաւ մարդացելոյ բանին աստուծոյ պախարակել զմեզ «անամօթին, չիմարեալք և խելագարեալքն յայսոյն անհաւա-

\*) Պատմ. Երուսաղէմ. 1869, 9.

«տուժենէ, զսրբոց մարգարէիցն զբանս ընդդէմ մեր բերելով,  
 «զոր առ ի յանդիմանութիւն հեթանոսական կռամոլութեանն  
 «է ասացեալ: Ոչ կարացեալ տեսանել խաւարեալքն մտօք,  
 «թէ զի՞նչ նմանութիւն է աստուածապաշտութեանս մերոյ առ  
 «բաղմաստուածութիւնն հեթանոսաց. մեք զմիայնոյ միածնի  
 «Որդւոյն աստուծոյ պաշտեմք զպատկեր և զնշան յաղթու-  
 «թեան. իսկ զհեթանոսս անհուն և անթիւ պաշտամամբք մո-  
 «լորեցոյց սատանայ»:

Եւ սկսում է թուել այդ մոլար պաշտամունքները.—  
 ոմանց՝ աստղեր, լեռներ, բլուրներ և ծառեր աստուածաց-  
 նելն. ոմանց՝ զօրաւոր կամ դժնեայ կենդանիները. ոմանց՝ կեն-  
 ցադական պէտքերի համար պիտանի տարրերը—հուրը, շուրն  
 և հողը. ոմանց՝ արիւնարբու և թարախածուծ կենդանիներն  
 իբրև բուժարարներ և ախտահալածներ (տղրուկը, ճաններ,  
 մժեխը), ոմանց՝ ձի, շուն և կատու պաշտելն, առաջինի՝ ե-  
 րազաշարժութեան, երկրորդի՝ տիրասիրութեան և երրորդի՝  
 կերակուրների ապականիչներն ոչնչացնելու համար. և վեր-  
 չապէս մարդապաշտութիւնը կամ դիցապաշտութիւնը: Այդ  
 թուարկութիւններից չետոյ ասում է. «Եւ արդ վասն զի  
 «բացայայտակի քօղախնդրեալ զկռապաշտիցն հոլանեցաք զլի-  
 «մարութիւն, ոչինչ են պէտք գերանունութեամբ զայնոսիկ,  
 «յաղազս որոց բանս ընթանայր, նշանակել. զի համագործու-  
 «թիւն իրի յանդիմանակաց եղեալ, ոչ կարօտանայ անուա-  
 «նակոչութեան: Արեգական երկիր պաղանելով, նորայուժն լծակ-  
 «ցին երկրպագուաց, մկնորսակացն լինելով պաշտօնամատուց,  
 «յայնոցիկ մղեալ անկանին խորխորատ՝ որք զձի և զշուն ընտ-  
 «րեցին իւրեանց լինել աստուածս, և կամ չեզիպտացւոցն  
 «ընկղմին զազանասնոց զետ: Ընդ խաւար զխաւարայինսն  
 «կատարելով ծանակութիւնս, ի պարսկական մայրապակա-  
 «նութեանցն վայր վտանդեալ իւրին խոհերս: Եւ կամ զնոյն  
 «ինքն զՔամովսայն և զԱստարտայն անկեալ զգարչելի կուռսն  
 «ողորեն: Զկայծակնահանու զիւրին զգեհենին հրոյ ցայտմունս  
 «բարեբանիչը լինելով ընդ Յանեսի և Յամբեսի յՈլոմպիոս  
 «լերին զեանաթաւալ և փրփրերախ զիւրին խոնարհեալ երկիր

«պաղանեն: Տղայոցն արեամբ զանդեալ ալիւր, զանօրէնն  
 «ժուալթելով զօրէնս, անդր ևս քան զխոփիցն գտանին զան-  
 «բղղայ ծննդակերութիւն: Որք և զնոցին դիակունս առ եր-  
 «դովքն ուրեմն ի տանիս զեղէալս բարձրահայեաց և երկնա-  
 «պիշ լինելով, երդնուն այլ ընդ այլոյ ասացեալք. բարձրեալն  
 «զիտէ: Իսկ զարեգակն աղաչել կամեցեալ, ասեն. Արևիկ, Լու-  
 «սիկ, և ի ծածուկ զօղային և զվերնոտ զեան կոչեն ըստ Մա-  
 «նեայ և Սիմոնի կախարդի մոլորութեանցն: Դոյնպէս և զասա-  
 «ցեալ զառաջնածին կնոջ զմանուկն ի ձերբածղութենէ առ  
 «իրեարս չարամահ առնելով, զայն՝ չոյր ձեռս ոգեսպառ եղեալ  
 «սատակի՝ չազանդապետական կարգեալ պատուի մեծարեն:  
 «Եւ չիւրաքանչիւրոցն անուն երդմունս կատարել զառածա-  
 «նին: Երդուեալ, ասեն ի միածինն որդի: Եւ դարձեալ՝ թէ  
 «վկայ ունիմ քեզ զփառս այնորիկ, չոյր ձեռս միածինն որ-  
 «դի զողի իւր աւանդեաց:

«Այսպէս ազգի ազգի խաբկանաց բանիւք զանձինս ծած-  
 «կեն. և զանդէտս ի հաւատացելոց չինքեանս հնարին յան-  
 «կուցանել: Եւ որպէս ինչ գորտոցդ առնեն ազգ, զանդամս  
 «մարմնոց իւրեանց ի լինսն սուղանելով, զձայնն և եթ բե-  
 «րանովքն ի դուրս առաքեն, միանդամայն և գտանին և կո-  
 «րրնչին. այսպէս և ասացեալքս այսօրիկ, տղմասէրք և ժան-  
 «տապօրժք, առ միմեանս անպատկառացոյցք են պղծութեանն,  
 «իսկ ի մէնջ վրիպանուն պատրողականութեամբ զանխլանալ  
 «կարծեն: Ոչ զիտեն՝ թէ որպէս հոտոցն անկարածակելիք  
 «են, ընքեամբ առ հոտոտելիսն բերեալ, բուրմունքն, սոյնպէս  
 «և վասն գործոցն հողմով համբաւուցն զչոլովից բաղխեալ զե-  
 «կուցանէ զլսելիս: Այլ սակայն և դժուարազիտելի է չօր-  
 «նաղան և բաղմախուռն ի նոսա անտառացեալ չարութիւնն:  
 «Քանզի որոշաբար սատանայականն ուսմունք ի մի իմն տե-  
 «ղի հաւաքեալ ծովացան ուղիք ամբարշտութեան նոցա:

«Նախկին մժղնէութեան պաշտակենութեան խեղերանք.  
 «որք խրատեալք, և ոչ իմաստնացեալք, ի Ներսիսէ Կաթո-  
 «ղիկօսէ. զկնի նորուն մահուանն խուսեալք չօգան զողեցին  
 «չոլորտս ուրեք աշխարհիս մերոյ: Եւ ի նոսա հատուածեալք

«եկին յարեցան կշտամբեալքն ի կաթողիկոսացն Սղուանից  
 «պատկերամարտք ոմանք, զի սիրէ առ համանմանիսն իւր  
 «հասանել վրիպեալն ի նշմարտութենէն: Եւ մինչ չև էր նոցա  
 «գորավիզն գտեալ զկարապետս դերաքրիստոսին, երկուցեալք  
 «և սարսեալք կային չուղիղ և ի գերապանծ կրօնից բրիս-  
 «տոսականաց. մանաւանդ թէ և ինքն զինքն դատապարտէ  
 «անզգամն, չիւրոց տանջեալ խորհրդոց: Իսկ յորժամ այսմիկ  
 «որպէս մեծագունի ինչ և նորոյ՝ հնացելոյս և աղօտացելոյ՝  
 «հասանել կարծեցին, յայնժամ ի դարանամտութեանն իւրեանց  
 «սողեալ յորչից՝ յաշխարհամէջս և ի ժողովրդաբնակս համար-  
 «ծակեցան յարծակել տեղիս. ի հեղեղական հեղձուցիչ ջուրցն  
 «մասն հասեալ նմա, Զրկայ անուանելով: Ուրանօր ի միա-  
 «սին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք, որպէս անգեղք  
 «աշխարհաց ի նեխաշաղիղ ինչ գէշ. և զանուանն իւրեանց  
 «զախտախինս յանդգնեցան կախել զայնցանէ, որ զերկնից  
 «բարութեանցն բուռն հարեալ ունիցին չուսով: Ընտրեալք  
 «ի մարդկանէ և աստուածային բնակութեանն արժանաւոր  
 «լինել գտեալք, որք ի վերայ երկրի գերկնայնոցն հանդիսա-  
 «նան կատարել վարս, զայսպիսեօքն անամօթին փսխել զամ-  
 «բարշտութեանն իւրեանց զմաղծ. անզգայեալք յայսոյն հայ-  
 «հոյութենէ, կռապաշտս ասելով:

«Ոչ նուաստանամ որովնոխատել վարկուցեալք անուամբս,  
 «բարեպաշտաբար լուեալ. զի արդարև իսկ կուեմք և կովեմք  
 «և քանդակեմք և բերեմք որովք միանգամ աստուածպաշ-  
 «տութեանս մերոյ կատարին կարգք, զեկեղեցիս, զսեղանս,  
 «զխաչս, զպատկերս: Այլ ոչ եթէ ընդ ձեռն այնոցիկ և հա-  
 «մապաշտօն հեթանոսացն. զի նոցա մեհեանքն կուոցն ընդու-  
 «նարանք շինեալ լինէին, իսկ եկեղեցիք բարեպաշտացն տա-  
 «նարք աղօթից և խնդրուածոց, և ժողովարանք որոց առ  
 «աստուած մերձենալ կամիցին: Յաղազս որոյ և կարի յոյժ  
 «աննմանիք միմեանց են տանարն Սասուածոյ և մեհեանք կուոցն:

«Դարձեալ՝ կռապաշտիցն զմեռելոց ոմանց զնմանութիւն  
 «յանշունչ նիւթս կերպագործեալ սպաւորելով, յաղազս որոյ  
 «միանգամայն և ի նախատպէն և ի պատկերէն զրկեալ լի-

«նէր չուսոյ պատկերագործն: Իսկ մեք՝ զկենդանին և զկենդանա-  
 «ցուցիչն Քրիստոս յամենայն նիւթս մարդակերպ նմանութեամբ  
 «նկարագրեմք. նորին աղազաւ և հաստատուն է յոյսն մեր...»

«Որ ի սկզբանէ արար զմարդն ըստ պատկերի իւրում  
 «և ըստ նմանութեան, ինքն եկն... և զկերպարանս ծառայի  
 «էսու... զի ի ձեռն այսորիկ միւս անգամ զարդարեսցի դե-  
 «ղեցկագունութեամբ յօրինեալ պատկերն ըստ առաջին աս-  
 «տուածատեսակ նմանութեանն:

«Եւ այս է, որ զմարմնացելոյ բանին աստուծոյ վարդապե-  
 «տեաց մեղ պաշտել զկենդանագրեալ մարդկային ձեռով զպատ-  
 «կեր, և զպատուականն զայն յաղթութեան նշան: Որոց երկրպա-  
 «գեալ, ոչ յերկուանամ նմին ինքեան բազմեցելոյն ի նոսա Քրիս-  
 «տոսի զերկրպագութիւնն մատուցանել, ոչ հայելով յերեւելին  
 «առաւել՝ քան թէ զանտեսանելին ի նմա զանձեալ ընդ միտ  
 «ածելով: Թէպէտ և ի զանազանից և յայլատեսակաց իցէ նիւթն,  
 «զմիւսնոյն յամենեսին տեսանեմ զօրութիւնս:

«Միթէ՞ յորժամ տեսանեմ քարեղէն կամ ոսկեղէն խաչ  
 «յօրինեալ և կամ պատկեր, ի քա՛րն կամ յօսկի՞ն զնիցեմ  
 «զոյս իմ... մեք զայն միայն չիւրաքանչիւրոցն բացօրոշեալ  
 «պատուեմք ի նիւթոց, յորոց վերայ զնմանութիւն պատկե-  
 «րին Քրիստոսի և խաչին իւրոյ ձեացուցանիցեմք... Քրիս-  
 «տոսի բնակել ի նոսա և մեղ աներկբայի սրտիւ մեծարել:  
 «Եւ ոչ միայն սոյս, այլ և քահանայական ձեռնն և բանն զեր-  
 «րորդութեան սրբոյ ի նոսա կոչեալ բնակեցուցանէ զօրու-  
 «թիւնն. որով ձեռամբ և բանիւ պարգևք և պատուհասք ի  
 «մարդիկ կարկառին, որովք և երկնայինն փակեալ և բացեալ  
 «լինին զրուներ, որոց և տարերքս ամենայն տեղի տուեալ հնա-  
 «զանդի: Եւ զի՞նչ ասեմ զբան և զձեռն, որ և զի նոյն ինքն  
 «հոգւոյն սրբոյ առհաւատչեայն վստահացուցանէ զմեղ, իբրև  
 «ի գերազանցեալս ոմանս և յաստուածաբնակս ի նոսա մեր-  
 «ձենալ և ապաւինել. զիւղոյն սրբոյ ասեմ զհեղումն, որով  
 «իւրք զքահանայսն և զթաղաւորսն ի նախնումն աստուա-  
 «ծեղէն հոգին յանձնիւրսն շարժէր ներգործութիւնս:... Որ-  
 «պէս և ահաւասիկ մեք... նկատեմք օձեալ իւղովն զփրկու-

«Թեանն զործարանս, զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս,  
 «և հաւատամբ ընդ նմին ի ներքս դալ աստուածային զօ-  
 «րու թեանն:... Եւ նշանակ հաւատարմութեան այս է մերուս  
 «բանի. զգորութիւնսն և զնշանսն ի նոցանէ առ մարդիկ կա-  
 «տարել. զիւաց սարսել և փախստեալ լինել... Ոչ կարէին  
 «անշունչ նիւթք ի կենդանի մարդիկ օգնականութեան մա-  
 «տուցանել շնորհ, եթէ ոչ աստուած ի նոսա էր բնակեալ» \*):  
 (Որոնք մի չարիքից միւս չարիքին անցան.— պատկերամար-  
 տութիւնից խաչամարտութեան և քրիստոսատեցութեան, և  
 այնաեղից էլ՝ անաստուածութեան և զիւսպաշտութեան: Այլ  
 և խորամանկութեամբ դաշնակից լինելով բռնակալներին՝ իրանց  
 չարութեանը զէնք դասն քրիստոսասէր անձերին խողխողելու  
 համար... Եւ մեր ուղիղ և աստուածաւանդ կրօնի լուսաւո-  
 րութեան համար չանդգնում են մեզ նախատել իրանց պղծալից  
 շրթունքներով, կռապաշտ անուանելով (մեզ), Տէրունական նշա-  
 նը պաշտելնուս համար. որք հաստատունմտքով առնելով ան-  
 խտրապէս բոլոր նիւթերի հետ կապեցինք այն հռչակելի նշանն,  
 որ բերովբէներին էլ սարսափելի է և դարհուրելի. նշանն՝ որ մեր  
 հոգեկան և մարմնական բժշկողն է և դեւերին պակուցանող և  
 դարհուրեցնող: Այլ և Աստուծու մարդացած բանի պատկերի հա-  
 մար անամօթաբար մեզ պախարակում են այդ չիմարացածներն և  
 անհաւատութեան դեկից խելագարուածները, մեզ չարմարեցնե-  
 լով ս. մարդարէներին այն խօսքերն, որոնք ասուած են հեթանո-  
 սական կռամոլութիւնը չանդիմանելու համար: Այդ՝ մրտ-  
 քով խաւարածները չեն կարողանում հասկանալ, թէ ինչ  
 նմանութիւն կարող է լինել մեր աստուածպաշտութեան և  
 հեթանոսների բազմաստուածութեան մէջ. մենք միայն Աս-  
 տուծու Որդու պատկերն և յաղթութեան նշանն ենք պաշտում  
 իսկ հեթանոսներին սատանան մոլորեցրել է անհուն և ան-  
 թիւ պաշտամունքներով:... Ըստ որում քօղը վերցնելով բա-  
 ցաջաջա կերպով մերկացրինք կռապաշտների չիմարութիւնը՝  
 պէտք չկալ գերանունաբար նորանց նշանակել, որոնց մասին

\*) Յովհաննու Իմաստ. Աւմնեցոյ Մատենագրունք. Վննտ. 1822,  
 Եր. 34—44:

սկզբում խօսք եղաւ.— արարքների համանմանութեան ակրն-  
 չայանի լինելու պատճառով անունները տալով կարօտութիւն  
 չկալ:— Սրեգակին երկրպագելով՝ նորա նախկին երկրպագու-  
 ներին լծակից են. կատուներ պաշտելով՝ ընկնում են այն խոր-  
 խորատն, որի մէջ ընկած էին ձի և շուն աստուածացնողները.  
 կամ ընկղմւում են Եզիպտացիների գաղան սնուցանող գետի  
 մէջ: Խաւարի մէջ խաւարային խաղբուլթիւններ կատարելով  
 պարսկական մայրապականութիւնների խոհերքի մէջ են խրը-  
 ւում, և կամ նոյն իսկ Քամովս և Աստարա գարշելի կուռ-  
 քերն են ողորում: Կայծակնահան դեւի գեհեհեհական կրակի ցայտ-  
 մունքը բարեբանելով՝ Յանէսի և Յամբէսի հետ միասին Ողիմ-  
 պոս լերան վերայ գետնաթաւալ և բերանափրփուր դեւին են  
 երկրպագում խոնարհելով: Տղայոց արիւնով ալիւր շաղախե-  
 լով՝ անօրէն օրէնքը ժայթքելով՝ իրանց անդղայ ծնունդն ու  
 տող խոզերիցն էլ վատթարագոյն են լինում: (Դորանք) այդ  
 տղաների դիակները տանիքների երգերի մօտ ծածկելով բարձ-  
 րահայեաց և երկնքին ակնապիշ նայող կերպով՝ երկդիմի խօս-  
 քերով երգում են—բարձրեալը գիտէ: Իսկ երբ կամենում են  
 արեգակին աղաչանք նուիրել՝ ասում են. Սրեկի, Լուսիկ. և  
 ծածուկ օդային և վերնոտ դեւերին են աղօթում Մանիայի և  
 Սիմոն կախարդի մոլորութիւնների համաձայն: Նոյնպէս և  
 ասացեալ առաջնածին կնոջ մանուկը մէկը միւսին ձեռքէ  
 ձեռք ձգելով չարամահ են անում. և որի ձեռքի վերայ սա-  
 տակել է, նորան աղանդապետի պատիւն են տալիս և մեծա-  
 րում. և իւրաքանչիւրի անունով երգումներ կատարելու են  
 զառածանում. Երգում են, ասում են, միածին որդովր: Եւ  
 դարձեալ թէ՛ երգում են քեզ նրա փառքով, որի ձեռքում  
 միածին որդին իւր հողին աւանդեց:

Այսպէս զանազան խաբէական խօսքերով իրանց ծածկում  
 են և կարողանում են հաւատացեալներից անդէտներին իրանց  
 կողմը քաշել: Ինչպէս զօրտերը լներում իրանց մարմնի ան-  
 դամները ջրի մէջ ծածկելով միայն բերաններով ծայն են դուրս  
 հանում, որով և զտնւում են և կորչում, այսպէս էլ սորանք,  
 չիշեալ տղմասէրներն և ժանտագործներն են. միմեանց մօտ

անպատկառ են պղծութեան մէջ, և համարում են թէ մեղանից ծածկուած են սուտանուն խաբեբայութիւններով: Չեն իմանում, որ ինչպէս հոտերը չեն կարող ծածկուել, եթէ հոտոտելիքին մօտիկ են բուրում, նոյնպէս էլ համբաւների հողմը շատերի լսելիքը բաղխելով իմացնում է: Բայց սակայն նորանցում անտառացած բաղձատեսակ և բաղձախուռն չարութիւնը դժուարագիտելի է. ըստ որում դանազան սատանայական ուսմունքների մի տեղ հաւաքուելու պատճառով նորանց ամբարշտութեան հեղեղները (ուղիս) ծովացել են:

Սորանք պաշլակենութեան նախկին մծղնէութեան խեղերանքն են, որոնք խրատուեցին Ներսէս Կաթողիկոսից, բայց չխելօքացան. և նորա մահից չետոյ խոյս տալով դնացին թագնուեցին մեր աշխարհի մի կողմում: Եւ Աղուանից Կաթողիկոսներից կշտամբուած մի քանի պատկերամարտներ դնացին միացան նորանց հետ. ըստ որում հշմարտութիւնից վրիպածը սիրում է իւր նմանների մօտ լինել: Եւ քանի որ նորանք դերաքրիստոսի կարապետներին իրանց աշակից չէին դտել, քրիստոսական ուղիղ և զերապանծ կրօնից վախենում և սարսում էին, մանաւանդ որ անդգամն իւր մտածմունքից տանջուելով ինքն իրան դատապարտում է: Իսկ երբ որ այս հնացածն ու աղօտացածը գտնելով կարծեցին թէ նոր և շատ մեծ բան են դտել, այն ժամանակ դուրս եկան իրանց դարանամուտ որջերից և համարձակեցին աշխարհամէջ և ժողովրդաբնակ տեղերը գնալ: Չանազան տեղերից եկան, հաւաքուեցին մի տեղ, որ հեղեղող խեղդող ջրերի մասն ունենալով՝ Ջրկայ էր կոչուում, ինչպէս դանազան կողմերի անդղները հաւաքուում են նեխած դիակի վերայ. և յանդգնեցին իրանց անուան կեղտելը փակցնել նորանց, որոնք իրանց յոյսը երկնքի բարութիւնների վերայ են դրել: Հայհոյութեան դէից անդգաջացածները չեն ամաչում կուսպաշտներ անուանելով իրանց ամբարշտութեան մաղծը թափել այնպիսիների վերայ, որոնք ի մարդկանէ ընտրեալ են և աստուածային բնակութեան (Աստուծու բնակարան) արժանաւոր լինելու վիճակին հասած, և որոնք երկրի վերայ երկնայինների վարքով են ընթանում:

Չեն նուաստանում, եթէ այն անունով, որը ես բարեպաշտութեամբ եմ լսում, նորանք նախատել են կարծում: Ըստ որում արդարեւ կուում ենք, կոփուած ենք, քանդակում ենք և սրբում ենք այն ամենն, որոնցով մեր աստուածապաշտութեան կարգերն են կատարուում. այսինքն եկեղեցիներ, սեղաններ, խաչեր, պատկերներ. բայց դորանց համար հեթանոսներին համապաշտօն չենք լինում, որովհետեւ նորանց մեհեանները կուռքերի ընդունարան լինելու համար էին շինուած. իսկ եկեղեցիները բարեպաշտօնների աղօթք և խնդրուածք անելու համար շինուած տանարներ են, և ժողովարաններ նորանց համար, որո՞ք կամենում են Աստուծուն մօտ լինել: Սորա համար էլ Աստուծու տանարը և կուռքերի մեհեանները միմեանցից շատ տարբեր բաներ են: Դարձեալ՝ կուսպաշտները մեռածներից ոմանց նմանութիւնը կերպագործում, տպաւորում էին անշունչ նիւթերի վերայ. դորա համար էլ պատկերագործը միանգամայն թէ նախատիպից և թէ պատկերից ակնկալութիւն ունենալուց զրկուած էր: Իսկ մենք կենդանի և կենդանարար Քրիստոսին ենք նկարում ամեն նիւթի վերայ. վասն որոյ և մեր յոյսը հաստատուն է:

Մարդուն ի սկզբանէ ըստ իւր պատկերի և նմանութեան ստեղծողն ինքն եկաւ... և ծառայի կերպարանք առաւ, որպէս զի զեղեցկագոյն ստեղծուած պատկերը միւսանդամ դարդարուի առաջին աստուածատեսակ նմանութեամբ: Եւ այս է, որ ուսուցեց մեզ պաշտել Աստուծու մարմնացած բանի մարդկային ձևով նկարուած պատկերն և յաղթութեան պատուական նշանը. որոնց երկրպագելիս անտարակոյս եմ թէ նորանցում բաղձած Քրիստոսին իրան եմ երկրպագութիւն մատուցանում, այնքան տեսանելի իրին չնայելով, որքան նորանում զանձուած անտեսանելին մտաբերելով: Թէկուզ նիւթը դանազան և այլատեսակ լինի-բոլորի մէջն էլ միևնոյն զօրութիւնն եմ տեսնում: Երբ որ տեսնում եմ քարից կամ ոսկուց յօրինած խաչ կամ պատկեր, մի՞թէ յոյսս քարի կամ ոսկու վերայ եմ դնում... մենք նիւթերից իւրաքանչիւրից այն ենք դատում և պատում, որի վերայ նկարում ենք Քրիստոսի և

իւր խաչի նմանութիւնը: Գրիստոս նորանցում է բնակում, և մենք աներկբայելի սրտով մեծարում ենք: Եւ միայն այս չէ.— քահանայի ձեռն և խօսքը ս. Երրորդութեան զօրութիւնը կոչում և բնակեցնում են նորանց մէջ. այն ձեռն և այն խօսքը, որոնցով թէ պարզենք և թէ պատիժներ են տրւում մարդկանց, որոնցով երկնային դռներն են փակւում և բացւում, որոնց խոնարհւում, հնազանդում են բոլոր տարերքը: Եւ ի՞նչ եմ ասում խօսք և ձեռն, երբ որ նոյն իսկ ս. Հոգու առհաւատչեան, այսինքն ս. Իւղի հեղումն վստահացնում է մերձենալ և ապաւինել նորանց իբրև զերազանց և աստուածաբնակ առարկաների. այն իւղի, որով հնումն ս. Հոգին քահանաներին և թագաւորներին զօրացնում էր իւրաքանչիւրին իւր զօրժերի մէջ... Որպէս ահաւասիկ մենք էլ... օծեալ իւրովը նկատում ենք փրկութեան զօրժիքներն... եկեղեցիներ, սեղաններ, խաչեր, պատկերներ. և միւսնոյն միջոցին հաւատում ենք, թէ աստուածային զօրութիւնը զալիս բնակում է նորանցում... Եւ մեր խօսքի հաստատութեան ապացոյցը նորանցից առ մարդիկ կատարուած զօրութիւններն և նշաններն են և դեբրի սարսափելն ու փախչելը... Անշուք նիւթերը կենդանի մարդկանց օգնելու շնորհ չէին ունենայ, եթէ Աստուած նորանցում բնակած չլինէր):

2. Գրիգոր նարեկացի (Ժ. դար.): Գրած ունի սա «նառ ի գովեստ ս. Աստուածածնի», որի մէջ ասում է «ծուեր կրրկնացի արժանապատիւ բուժող պատկերի»:

3. Մովսէս Կաղանկատուացի: Սորա անունով մեզ հասած Աղուանից աշխարհի պատմութեան մէջ գտնում ենք մի գլուխ, որի վերնագիրն է. «Դաւթի Մեծկողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց և նկարազրութեանց հալցուած ի «Յովհաննէ Մալրազոմեցոյ», որ պատմում է հետեւեալը. «Ընդ այն ժամանակս, յոր դեռ ևս վարէր զհայրապետութիւնն «Աղուանից տէր Ուխտանէս և զկնի նորա Եղիազար, խռովութիւնք և հերձուածք բազումք ՚ի կողմանս կողմանս դիտանաւորաց և տգիտաց լինէին, մարտ և մրցումն Յունաց և «Հայոց, և աշխարհն Աղուանից անվրդով մնայր յայնցանէ:

«Եհաս համբաւ իմն առ նոսա, եթէ ոմանք պատկերս ոչ ընդ «դունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ոչ աղ օրհնեն և ոչ «պսակ դնեն հարսանեաց, յայս պատճառս թէ քահանայութիւն բարձեալ է յերկրէ: Վասն որոյ Դաւթի եպիսկոպոս «Մեծկողմանց խնդրեաց զրով ի Յովհաննէ վարդապետէ Հայոց «զպատճառս իրացն. և նա արար հմուտ այնմ ճշմարտապէս՝ «այսպէս ասացեալ. «եթէ աղանդդ այդ յետ առաքելոցն ե- «րևեցաւ, և պատկերամարտութիւն նախ ի հոռոմս երևեցաւ, «վասն որոյ ժողով մեծ եղև ի Կեսարիա. հրամայեցին նկարել «զպատկերս ի տանն Աստուծոյ: Բայց բարձրամտեալ նկար- «չաց՝ զինքեանս զերազոյն կամէին լինել քան զամենայն ա- «րուեստաւորս եկեղեցականս և ասէին. «մեր արուեստս լոյս «է, զի ծերք և տղայք առհասարակ վերժանեն, իսկ զգիրս «սուրբս սակաւք ընթեռնուն»: Աստանօր աղմկեալ կրկին լի- «նի ժողով. և քննեալ արդարացուցին զգրիչս և զվերժանողս «և զմեկնիչս և եղին յառաջ քան զնկարիչս: Եւ անտի մին- «չև զՄովսէս Հայոց Կաթողիկոսն այն աղանդ հերձուած ինչ «էր յայտնեալ. ապա ընդ երկուանայն հայրապետութեան «Հայոց՝ էր մեծ մարտ ընդ Մովսէս և ընդ Թէոդորոս Կար- «նոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին, և ուղղա- «փառքն աղարտէին զհոռոմոց զամենայն Կրօնան: Եւ առնէր «Մովսէս ժողով իւր կողման վարդապետացն և հրամայէր «ամենեւին ոչ հաղորդել ընդ հոռոմս՝ հնազանդեալս քաղկեդո- «նական ժողովոյն... մի՛ զիրս, մի՛ պատկերս և մի՛ նշխարս ի «նոցանէ ընդունել: Յայնժամ Թէոդորոս ետ հրաման ժողո- «վիլ եպիսկոպոսացն Հայոց, որ ի նորայն կողմանն, ի Կար- «նոյ քաղաք և ասէ. «պարտ է մեզ առնել Կաթողիկոս. և «ամին զՅովհանն ոմն Սիւնական, ձեռնադրեցին և հնազանդե- «ցան քաղկեդոնական կրօնիցն. և ոչ որ ի նոցանէ եղև խրնդ- «րող ուղղափառ հաւատոց՝ բաց յՅնովսայ երանելոյ, որ «զնաց ի նոցանէ և եկն առ Մովսէս Կաթողիկոս, զոր ու- «րախութեամբ ընկալան: Մովսէս նստէր ի Դուին Կաթո- «ղիկոս. պատշաճեցին և Հովմայեցիքն Յովհաննու զկաթո- «ղիկոսարան յԱւանի՝ մօտ առ միմեանս, և էր խռովութիւն

«ի միջի նոցա՝ չընդունելով զՅովաննու ձեռնադրեալսն: Ապա  
 «Յեսուս անուն քահանայ և Թադէոս և Գրիգոր, որք ի Մով-  
 «սիսի կողմանէն էին, զնացին ի Դուռնայ և ելին ի Սոթից  
 «զաւառն բնակելով չանապատս, զի կրօնաւորք էին, և սկսան  
 «ուսուցանել, եթէ զպատկերս, որ չեկեղեցիսն են նկարեալ ի  
 «բաց շնչեցէք և ընդ աշխարհական քահանայս մի հազոր-  
 «գիրք: Եղև խռովութիւն ի դաւառին. և համբաւն եհաս առ  
 «Մովսէս հայրապետն, որ իսկոյն զրեաց թէ փութով աչարէն  
 «եկալք: Եւ նորա ոչ անսացին հրամանին, այլ անտի զնա-  
 «ցեալ բնակեցան ի ձերուձ Սրբախական դաւառի: Եւ հար-  
 «ցեալ հայրապետին զգետնաւորս իւր, եթէ զլաճիք են այնց  
 «մարդկան գործք, նորա զոր վասն հռովմայականին էր թիւ-  
 «րութիւն՝ ետուն պատնառս, ապա զրեցին նամակ, թէ մի  
 «որ իշխեսցէ խոտել զնկարս, որ չեկեղեցիս են: Եւ ի վախ-  
 «ճանել հայրապետին Մովսիսի և ի տիրելն Խոսրովու Հայոց՝  
 «միաւորեցաւ երկիրն. և նստուցին զՍբրահամ ճշմարիտ և  
 «ընտիր այր, որ զժողովն Գաղկեղոնի նախ եբարձ նզովիւք,  
 «և ապա ձեռնադրեցաւ Իսկ պատկերամարտքն, որ իշին չՍ-  
 «ղուանս՝ պղտորեցին զերկիրդ ձեր: Ապա Գարսամանայ տէրն  
 «կալեալ զերեսին արսն, որոց անուանքն ի թղթիդ են, ետ  
 «կապանօք ածել ի Հայս. և եղեալ նոցա չանդիման մեզ՝ հար-  
 «ցաք. «Թէ չոր պատնառս չընդունիք զմարմնացելոյ Աս-  
 «տուծոյ զպատկերն». ետուն պատասխանի՝ «Թէ արտաքոյ է  
 «պատուիրանաց և եթէ կուպաշտից է գործդ այդ, որոց դա-  
 «մենայն արարածս ի պաշտօն էր առեալ. մեր ոչ պագա-  
 «նեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման ի Գրոց»:  
 «Ապա մեր չաչտ արարեալ զՄովսիսականն ի խորանին նկա-  
 «րակերտութիւն և զՍողոմոնեան տահարին զանազան քան-  
 «զակագործութիւնսն՝ զնոյնն նկարադրեալ և ի մեր եկեղե-  
 «ցիս: Զայս և զսոցին նմանս ասացեալ՝ զթիւրութիւնս նո-  
 «ցա ուղղեցաք» \*):

(Աղուանից Ուխտանէս և Եղիազար Կաթողիկոսների ժա-  
 մանակին շատ խռովութիւններ և հերձուածներ կային տեղ

\*) Պատմ. Աղուանից Աշխարհի. Մոսկ. 1860, 211—214.

տեղ զիանաւորների և տղէտների մէջ. կռիւ և մրցումն Յոյ-  
 ների և Հայերի միջև, իսկ Աղուանից աշխարհն ազատ էր  
 նորանցից: Մի լուր հասաւ նորանց, թէ ոմանք պատկեր չեն  
 ընդունում, ոմանք՝ մկրտութիւնն են մերժում, ոմանք՝ հար-  
 սանիքի պսակ դնելն և աղ օրհնելը: Վասն որոյ Մեծկողմանց  
 Դաւիթ եպիսկոպոսը զորանց մասին դրեց և հարցրեց Հայոց  
 Յովհաննէս վարդապետից, և նա, իբրև իսկապէս հմուտ (այդ  
 բաներին) պատասխանեց այսպէս ասելով. «Թէ այդ աղանդն  
 երևեցաւ առաքեալներից չեսոյ և պատկերամարտութիւնը  
 նախ Յոյների մէջ երևեցաւ, որի համար Կեսարիայում մեծ  
 ժողով եղաւ. և հրամայեցին պատկերներ նկարել Աստուծու  
 տան մէջ: Բայց նկարիչները բարձրամաելով՝ կամենում էին  
 իրանց աւելի բարձր համարել եկեղեցական բոլոր արուես-  
 տաւորներից և ասում էին. «մեր արուեստը լոյս է, ըստ որում  
 թէ ձերերն և թէ տղաներն առհասարակ կարգում են. իսկ  
 ս. Գիրք քիչերն են կարգում: Դորա վերայ աղմուկ է ծա-  
 զում և կրկին ժողով է լինում. և քննելով պաշտպանեցին  
 զրիչների (օրինակողների), ընթերցողների և մեկնիչների իրա-  
 ւունքն և նորանց նախամեծար համարեցին քան նկարիչնե-  
 րին: Եւ այն ժամանակից մինչև Հայոց Մովսէս Կաթողիկոսն  
 այն աղանդը մի հերձուած էր հանաչուած: Յետոյ երբ որ  
 Հայոց հայրապետութիւնը բաժանուեց երկուսի՝ մեծ կռիւ  
 էր Մովսէսի և Կարնոյ թէոզորոս եպիսկոպոսի մէջ, որին փի-  
 լիսոփայապետ էին անուանում. և ուղղափառներն ազարտում  
 էին Հոռոմների ամբողջ կրօնքը: Մովսէսն իւր կողմի վար-  
 դապետներին ժողովի է գումարում և հրամայում է քաղկե-  
 ղոնական ժողովին հնազանդած Հոռոմների հետ ամենևին հա-  
 զորդակից չլինել. ոչ զիրք ընդունել նորանցից, ոչ պատկեր-  
 ներ, ոչ մասունքներ: Այն ժամանակ Թէոզորոսն էլ իւր կող-  
 մի Հայոց եպիսկոպոսներին է ժողովում Կարնոյ քաղաքն և  
 ասում. «Մենք պիտի կաթողիկոս կարգենք». և բերին Յով-  
 հան Սիւնական անունով մէկին ձեռնադրեցին և հնազանդե-  
 ցին քաղկեղոնական (ժողովին) կրօնին. և նորանցից ոչ որ ուղ-  
 զափառ կրօնի նախանձախնդիր եղաւ, բացի երանելի Ենովից, որ

Թողեց նորանց և եկաւ Մովսէս Կաթողիկոսի մօտ և նորան ուրախութեամբ ընդունեցին: Մովսէսը նստում էր Գուին քաղաքում. Յոյներն էլ Յովհաննի Կաթողիկոսարանը հաստատեցին Աւանում՝ միմեանց մօտիկ. և խռովութիւն կար նորանց մէջ. Յովհաննի ձեռնադրածներին չէին ընդունում: Ապա Մովսէսի իշխանութեան ներքոյ գտնուածներից Յեսու անունով քահանան և Թադէոսն ու Գրիգորը հեռացան Գուինից և գնալով Սոթք գաւառը՝ բնակեցին անապատում, ըստ որում կրօնաւորներ էին. և սկսան ուսուցանել թէ եկեղեցիներում նկարուած պատկերները չնչեցէք. աշխարհական քահանաների հետ մի հաղորդուէք: Գաւառում խռովութիւն սկսուեց և համբաւն հասաւ Մովսէս Կաթողիկոսին, որ իսկոյն գրեց (նորանց) թէ շուտով եկէք այստեղ. իսկ նորանք չկատարեցին հրամանն. այլ այնտեղից մեկնելով գնացին բնակեցին ձեր Արցախական գաւառում: Երբ որ Կաթողիկոսը հարցրեց իւր զխոնականների կարծիքն այդ մարդկանց գործերի (ուսմունքների) մասին, նորանք պատճառներ համարեցին այն թիւրութիւնն, ինչ որ յունականի համար էր. ապա գրեցին նամակ, թէ ոչ որ իշխի արհամարհել եկեղեցիներում գտնուած նկարները: Երբ որ վախճանեց Մովսէսն և Խոսրովն էլ տիրեց Հայերին՝ երկիրը միացաւ. հայրապետ կարգեցին Աբրահամին, որ ճշմարիտ և ընտիր մարդ էր. և որ նախ նդովքով մերժեց Քաղկեդոնի ժողովն և ապա ձեռնադրուեց: Իսկ Աղուանից երկիրդ եկած պատկերամարտները պղտորեցին ձեր այդ երկիրն: Ապա Գարդմանի իշխանը Կալանաւորեց (այն) երեք մարդկանց, որոնց անունները թղթիս մէջ կան և կապանքով բերել տուեց ՚ի Հայս, և երբ որ ներկայացան մեղ՝ հարցրինք. «Թէ ի՞նչ պատճառով չէք ընդունում մարմնացած Աստուծու պատկերը». պատասխանեցին՝ «Թէ պատուիրանքներից դուրս է այդ և կռապաշտներին վաչել, որոնք բոլոր արարածներին պաշտում էին. մենք պատկերների չենք երկրպագում, ըստ որում ս. Գրքից հրաման չունենք»: Մենք պատասխանեցինք, թէ Մովսիսական խորանում նկարակերտութիւն կար, իսկ Սողոմոնեան տաճարում քանդակագործու-

թիւններ. միւսնոյնը մենք էլ նկարում ենք մեր եկեղեցիներում: Այս և սորանց նման խօսքերով նորանց թիւրութիւնն ուղղեցինք):

4. Գրիգոր Մաղիստրոս (Ժ. դար.). գրում է մի իշխանի. «Մատերը մոլորուած իրանց սնտոի մտածութեան տառութեամբ մէջ՝ պախարակում են (բաղբաղեն) և իրանց մտքերում կասկածանք բերելով՝ կարկատուն զբաբանութիւնով մեր պաշտօնը կռապաշտութիւն են համարում. իբր թէ մենք խաչի նշանն և սրբոց պատկերները պատուողներս տակաւին դիւսպաշտութեան հաւանածներ ենք... և այդպիսիներն Աստուծուց բոլորովին հեռացածներն և յարութեան յոյս չունեցողներն են— Մանինեցիների աշակերտներն, որոնք կոչւում են թոնարակեցիներ: Իսկ դու, որ քրիստոնեայ ես, որ արժանացել ես այդ կոչման և ս. աւագանի լուսափայլութեան, որ հաւատում ես յարութեան յոյսին և ս. Երրորդութեան երկրպագող ես, երբ որ տեսնում ես խաչի նշանն, երկրպագիր, չիշելով՝ որ Յիսուս Քրիստոս քեզ համար խաչուեց. և համարիր քեզ նորան խաչակցեալ... Իսկ սրբոց պատկերները պատուիր և աղօթք արա (նորանց դիմաց) միտ բերելով նորանց չարչարանքներն և նահատակութիւնը, համարելով նորանց քո ուսուցիչներ. և քո ազգակցին, որ եղել է ճշմարտութեան վկայ, առ Աստուծոյ բարեխօս բռնիր, որպէս դի նա, որ չէ ննջում, տեսնելով քո հաւատարմութիւնը իւր մարտիրոսացած ծառան, քեզ, մարտիրոսասիրիդ, ողորմի» \*):

5. Ներսէս Շնորհալի (Ժբ. դար.). Հայոց եկեղեցու դաւանութեան և ծէսերի մասին երկու տեղեկագիր ունի կազմած. մինը Յունաց սպարապետ Ալէքս Իշխանի խնդրի պատճառով, և միւսը՝ Մանուէլ Կաչարի: Որովհետեւ թէ իշխանն և թէ Կաչարը Հայ եկեղեցու Յունականից ունեցած տարբերութիւնների կարգում չիշել էին և պատկերչարութեան չդոյութիւնը Հայերի մէջ, շնորհալին այդ մասին գրում է.

\*) Չամչ. Բ. 1020.

1. Այէքս իշխանին զրած թղթում. «էր ի զիրս ասացեալ և «վասն սրբոց պատկերաց՝ եթէ ոչ ընդունին հայք ամենեկին. «և որ յայտօսիկ է ճշմարտութիւնն՝ յայտնի ցուցանեմք: Ի «հակառակութենէ անտի՝ որ ի մէջ երկուց ազգացս է, բա- «զում չարիս սերմանեաց սատանայ. որպէս առ ոմանս ի սղէտ «ժողովրդոց մերոց զպատկերաց սրբոց զանրնդունելութիւնն, «որք ի մէնջ դորսովին այնպիսիքն. նաև նզովս ի վերայ զնեմք «որք յանդրնին հայհոյել. քանզի մեր՝ որք զառաջնորդականն «ուենեմք զաստիճան, ընդունիմք և երկրպագեմք պատկերի «անօրէնութեան փրկչին մերոյ. այլ և զամենայն սրբոց պատ- «կերս՝ ըստ իւրաքանչիւր կարգի պատուեմք, զորս չեկեղեցիս «մեր նկարեմք և ի պատարագամատուցի հանդերձս. և պա- «տուհասեալ ըմբերանեմք զոչ ընդունողսն ի մերոց զտգէտսն «և զտխմարսն» \*):

2. Կայսրին ուղարկած «Սահմանք հաւատոյ հայաստա- «նեայցս եկեղեցւոյ» թղթում. «Ըստ այսմիկ և յաղագս Փրկի- «չականն պատկերի և սրբոց նորին ի մերոց ոմանց տղիտաց «հակառակութիւն ցուցանի. և ձեր առ այնոսիկ գայթակ- «ղեալ՝ իբրև օրինադրութիւն ի մէնջ կարծելով համօրէն ազ- «գիս: Այլ մեր և որ ըստ մեզ այսպէս ունիմք և քարոզեմք, «թէ որպէս զաստուածընկայն խաչ տեսանելով՝ ոչ երևելի «նիւթոյն, այլ աներևութին աստուծոյ որ ի նմա՝ զերկրպա- «գութիւն մատուցանեմք. այսպէս և փրկչական պատկերին՝ «ոչ նիւթոյն և դեղոցն, այլ քրիստոսի, որ է պատկեր անե- «րևութին աստուծոյ հօր՝ երկիրպագանեմք նովալ» \*\*):

6. Ներսէս Լամբրոնացի (ժբ. դար.). Լևոն արքային զրած թղթում ասում է թէ, իւր արքեպիսկոպոսական եկեղեցում (Տարսոնում) ս. Աստուածածնի պատկերին հաւատով երկր- պաղօղ Յոնների թիւն այնքան մեծ է, որ նորանց ընծայա- բերած մոմի, ձէթի և խունկի տուած եկամուտով եկեղեցու և արքեպիսկոպոսարանի ծախքերը հոգացում են:

\*) Ընդհանրական. Էջմիածին, 1865. 131—132.

\*\*) Անդ. 190—191.

7. 1204 թուին Սիս գումարուած ժողովի մէջ սահմա- նուել են ութ կանոններ, որոնցից մէկը պատուիրում է չար- գել պատկերները, կամ ինչպէս ասում է Կիրակոս Գանձակե- ցին. «Ընդունել զնկարադրութիւն պատկերի Փրկչին և ամե- «նայն սրբոց և մի խոտել զնոսա իբրև զպատկեր հեթանո- «սաց» \*):

8. Թովմա Վ. Մեծոբեցի (ժե. դար.): Յովհաննէս Վ. Մե- ծոբեցին 1420 թուին իւր ընկերների և աշակերտների հետ զալիս է հաւուց թաօի Ամենափրկիչ վանքը: Նորանց հետ լի- նում է և չիշեալ Թովմա վարդապետ պատմիչն, որ այդ ճա- նապարհորդութեան շարժաօթի դնում է. «Երկիրպագանել «աստուածամուխ դեղարդեանն և առաջի պատկերին Ամենա- «փրկչին, որ և զրոշմեալ եղև աղօթիւք սուրբ աւետարան- «չին Յովհաննու ի վերայ սրբոյն Գողգոթայի, ՚ի խնդրոյ Տի- «բածօր Աստուածածնին. և յետոյ պարզեօք տուաւ Աշոտոյ «թագաւորին Կուրապագատ իշխանին» \*\*):

9. Աբգար Սեբաստացի (ժդ. դար.): Միքայէլ Կաթողի- կոսի կողմից Աղէքսանդր քահանայի հետ հռոմ պատգամա- ւոր ուղարկուած լինելով՝ կազմում և ներկայացնում է Պիոս պապին հայոց եկեղեցու դաւանութեան և սովորութիւնների համառօտ տեղեկագիր, որի մէջ և պատկերների համար ա- սուած է. «Զպատկերս օրհնեալս պատուեմք, և զնեմք ի սե- «ղանս: Երկիցս ի տարւոյ քահանայք մեր և պաշտօնեայք «եկեղեցւոյ տանին ի տունս խաչ և պատկեր, որպէսզի «տկարք և հիւանդք՝ որք վասն ձերութեան և խօթութեան «ոչ կարեն զալ չեկեղեցի, մատուցեն այնց զարժանաւոր պա- «տիւ և համբուրեսցեն. և այդքիկ պատկերք և խաչք սքան- «չելիս կատարեն առ մեզ յահախ<sup>22)</sup> \*\*\*):

10. Ղազար Զահկեցի (ժբ. դ.). թուելով այն առանձ- նական բարիքներն, որոնք պարդուած են «յաստուածպետա- «կանէն ազգիս հայոց», ասում է. «Անդ (հայաստանում) է և

\*) Պատմ. 98—99.

\*\*) Այրարատ. Վեներ. 1890. 357.

\*\*\*) Զամյ. Գ. 523.

«կենդանադիր պատկեր աստուածածօրն: Անդ է և փրկչական  
«պատկերն Գրիստոսի որ ի դաստառակին... Անդ է ամենա-  
«փրկիչ պատկեր խաչելութեան տեառն մերոյ Գրիստոսի աս-  
տուծոյ» \*):

11. Միքայէլ Վ. Չամչեան: Այս բաղմարդիւն հեղինակը  
չայ եկեղեցու պատկերչարգութեան խնդրին առանձին բա-  
ժին է նուիրել իւր Պատմութեան բ. հատորի ծանօթութիւն-  
ների մէջ, ուր բերում է վկայութիւններ ապացուցանելու հա-  
մար, թէ պատկերները վաղուց անտի ընդունուած են եղել  
չայոց եկեղեցում. և թէ եղել են մերժողներ, դորանք եղել  
են սակաւաթիւ անսպայ (անկիրթ) և տղէտ մարդիկ:—Նոյն  
խօսքերն, ինչ որ ասել է Ն. Շնորհալին:

Այստեղ աւելորդ չենք համարում ասել, թէ Մխիթա-  
րեան հայրերից ոչ ոք չէ եղել որ ինչպէս չայ եկեղեցու միւս  
դաւանաբանական խնդիրների, նոյնպէս և պատկերչարգու-  
թեան նկատմամբ աշխատած չլինի դոնել միանմանութիւն  
միւս մեծ եկեղեցիների հետ, քանի որ վերջիններս իրարից բա-  
ժանուած չէին. իսկ ի մասնաւորի հռոմէականի հետ այն խըն-  
դիրներում, որոնք վերջինի առանձնաշատուկ վարդապետու-  
թիւններն են: Միմիայն չ. Ղևոնդ Ալիշանը պատկերչարգու-  
թեան մասին իւր եղբայրակիցներից տարբեր կարծիք է յայտ-  
նում, որը թէև նորան յատուկ երկիւղածութեան և զգուշու-  
թեան կնիքն է կրում, այսու ամենայնիւ կկարգենք երկրորդ  
մասում: Չամչեանի խօսքերից չետոյ կկարգենք հ. Եդ. Նիւր-  
միւղինը միայն, որովհետև նորանցում արդէն ամփոփւում են  
այն բոլոր հիմունքներն, որոնց վերայ սովորաբար մատնացոյց  
են լինում Մխիթարեան չայրերը:

Ա. Չամչեան. «Ի վերայ յարգութեան ս. Պատկերաց ի  
չայս»: «Գիտել արժան է աստանօր և դայս, զի Սամուէլ,  
«Կիրակոս և Վարդան ի պատմելն զմերժիլ Վահանայ Կա-  
«թուղիկոսի յաթոռոյ իւրմէ, յետ պատճառս տալոյ՝ թէ  
«փասն զի միաբանեցաւ ընդ ազգս քաղկեդոնականաց՝ ընդ չոյնս

\*) Դրախտ Յանկալի. 672.

«և ընդ զիրս, յաւելուն ասել, թէ ետ և պատկեր բերել և  
«դնել չեկեղեցու: Յայսմանէ ոմանք յօտար ազգաց համարե-  
«ցան, թէ ոչ զոյր ի հայս յարգութիւն պատկերաց, և թէ  
«մտեալ էր ի նոսա մոլորութիւն պատկերամարտութեան:  
«Բայց զիտելի է, զի այն պատճառ՝ զոր տան նախակարգեալ  
«պատմիչքդ, ոչ հայի ի բան յարգութեան ս. պատկերաց, այլ  
«չայլ ինչ, իբր զի դայն պատկեր՝ զոր եբեր և եդ Վահան  
«չեկեղեցու, համարեցան ոմանք զնոյն իբր նշան յայտնի միա-  
«բանելոյ ի ծէաս յունաց. և զի այլք ոմանք յանուպայ ան-  
«ձանց անհամողելի դտան յայն միաբանութիւն, յարուցին  
«խռովութիւն վասն այսր ի վերայ Վահանայ, և պէս պէս  
«ամբաստանութիւնս յանախեալ՝ վարեցին զնա յաթոռոյ:

«Եւ դարձեալ՝ առ այսպիսի անուպայ և տղէտ անձինս  
«թէպէտև պատուեալ լինէին պատկերք սրբոց՝ ի հայս, որք  
«ի վաղնչուց էին նկարեալք, բայց որք նկարեալ լինէին ի  
«յունաց՝ մանաւանդ յայնմ դարու՝ ոչ էին ընդունելի առ նո-  
«սա վասն ատելութեան, որպէս է տեսանել դայս ի թուղթն,  
«զոր զրեցին ոմանք անանուն և անծանօթ վարդապետք յա-  
«ւուրս Խաչիկ Կաթուղիկոսի առ միտրապօլիտն Սեբաստիոյ,  
«զոր և ի մէջ բերէ Ստողիկ:

«Այլ թէ չիրաւի՝ բաց ի բանէ այսպիսի հակառակու-  
«թեան ոմանց տղիտաց, ոչ երբէք եմուտ ի հայս ազանդ  
«պատկերամարտութեան, ցուցանի ի բազում զլիտոց: Նախ՝ զի  
«ի ծաղել անդ պատկերամարտից Պողիկեանց՝ անդէն վաղ-  
«վաղակի մերժեցին զնոսա հայք ի ժամանակս Յովհաննու  
«իմաստասիրի, և ոչ իսկ թողին բնաւ և ոչ արմատ մի ծղել  
«ուրեք ի հայս: Երկրորդ՝ զի ազգն առհասարակ միշտ պա-  
«տուեաց և պատուէ զպատկերս սրբոց, որպէս յայտնի տե-  
«սանի չեկեղեցիս նոցա ի սկզբանէ հետէ. այսմ վկայ կա-  
«րեն լինել և մնացուածք որմոց եկեղեցեաց ինչ ի հին ժա-  
«մանակաց շինելոց, որք կան դեռ մինչև ցայսօր ի չայաս-  
«տան, յորս տեսանին նկարեալ և քանդակեալ պատկերք. թո-  
«ղում ասել դաստուածաշունչ զիրս, և զսպասս եկեղեցույ,  
«յորս յամենայնի բազում պատկերք նկարեալ կան: Երրորդ՝

«ի հին հայոց ի բազում տեղիս բանք լինին զյարգութենէ  
 «սուրբ պատկերաց, որպէս և տեսեր իսկ և ունիս ևս տէ-  
 «սանել ի կարգի պատմութեանս: Վկայէ և Ասողիկ՝ որ  
 «փոքր մի յետոյ էր քան զՎահան, բ. 4. թէ ի ժամանակս  
 «Լևոնի Իսաւրացւոյ՝ Իդիտ ամիրապետ «տայր հրաման փրշ-  
 «րել զկենդանադրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան  
 «տեսան և նորին աշակերտացն» և այն մանաւանդ ի հայս <sup>23</sup>):  
 «ուրեմն կայր ի հայս յարգութիւն պատկերաց: Չորրորդ՝ զի  
 «հայր մեծարեն զեօթներորդ ընդհանուր սուրբ ժողովն՝ վասն  
 «հաստատելոյ նորա զյարգութիւն սուրբ պատկերաց, և զայն  
 «ժողով դասեն ընդ տօնելի ժողովս, որպէս է տեսանել յայս-  
 «մաւուրս, ուր ի հոկտ. 11. եր. 15 զրի այսպէս. (Յայսմա-  
 «ւուրքի խօսքերը յետոյ կոչենք իւր տեղում) ... Սոյնպէս զրի  
 «և ի դեկտ. 5, եր 296 և 297, ի վարս Ստեփաննոսի ճրգ-  
 «նաւորին, և բազում բանիւք և օրինակօք շատագովի յար-  
 «գութիւն պատկերաց ի բերանոյ նորին սրբոյ. և պատմի  
 «թէ զիարդ նահատակեցաւ նա վասն պատուելոյ զպատկերս:  
 «Հինգերորդ՝ զի հայրապետք և վարդապետք հայոց ի բանս  
 «իւրեանց յամենայնի և միշտ շատագովեն զյարգութիւն պատ-  
 «կերաց: Յովհաննէս իմաստասէր զրէ ի ճառն ընդդէմ Պօ-  
 «ղիկեանց, որք մերժէին զպատկեր և զխաչն քրիստոսի, այս-  
 «պէս (ճանօթ է արդէն ընթերցողներին):

«Սուրբն Գրիգոր նարեկացի ժամանակակից նախայիշա-  
 «տակեալ Վահանայ կաթողիկոսի ի գովեստ սուրբ Աստուա-  
 «ծածնին՝ (կարգել ենք իւր տեղում):

«Գրիգոր Մաղիստրոս ի թուղթն լր. առ իշխան ոմն,  
 «ի բանն յաղագս նկարագրութեան սրբոյ եկեղեցւոյն սրահի՝  
 «զրէ այսպէս. «բազմաց մոլորեալ ի սնտի մտածութեան իւ-  
 «րեանց» (աշխարհաբարը զրուած է վերևում):

«Սուրբ Ներսէս Շնորհալին ի թուղթն դաւանութեան  
 «զրեալ առ Ալէքս՝ խօսի այսպէս. «էր ի զիրս ասացեալ և  
 «վասն սրբոց պատկերաց...»

«Մխիթար Կաթողիկոս ի պատասխանին՝ զոր գրեաց  
 «առ հռովմայեցիս, ըստ որում աւանդի ի հաւաքմունս ժո-

«ղովոց. հատ. իե. եր. 1249. խօսի այսպէս. «Առաջնորդք  
 «հայոց միշտ ընկալան զպատկերս սրբոց, զորս և ունիմք  
 «եղեալ յեկեղեցիս մեր. և թէպէտ երբեմն գոյր հակառակու-  
 «թիւն ընդ յոյնս և ընդ հայս ի վերայ այսր, բայց այդ ի  
 «մէջ տղիտաց և տխմարաց ոմանց էր... իսկ պատճառ նուա-  
 «զութեան պատկերաց ի տեղիս տեղիս աշխարհին հայոց մե-  
 «ծաց՝ է բունութիւն ալլազգեաց, որք տիրենն ի հայս, և հա-  
 «լածեն յոյժ զպատկերս, և զուսոյս նոցին»: Թողում ի մէջ  
 «բերկ և զբազում այլ վկայութիւնս ի բանից այլ և այլ  
 «վարդապետաց հայոց՝ և յազգի ազգի երգոց և ի շարականէ:  
 «Այլ ի վախճանի՝ ի հաստատութիւն այսոցիկ ամենայնի մարթ  
 «է յաւելուլ և զայն բան սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսա-  
 «ւորչի, յասել նորա ի զիրս Ազատանդեղոսի. եր. 29. վասն  
 «ղիմաց պատկերին քրիստոսի՝ որ ի խաչին. «Փոխանակ դրօ-  
 «շելոց փայտից՝ զխաչն կանգնեաց ի մէջ տիեզերաց, զի որ  
 «սովորն էին երկիրպագանել փայտից, սովորականաւն հաւա-  
 «տասցեն երկիրպագանել փայտի խաչին, և որ ի վերայ նորա  
 «մարդագէմն իցէ պատկեր»:

«Յայսմ ամենայնէ յայտ է, թէ յարգութիւն պատկերաց  
 «միշտ ընդունելի եղև հայոց, ուստի և զուր զրպարտութիւն  
 «է այն, զոր առնեն ոմանք ի մատենադրացն Յունաց և այ-  
 «լոց, թէ հայք ոչ պատուեն զպատկերս»:

Բ. Հ. Եղ. Հիւրմիւղ. «ի հաստատութիւն յարգութեան  
 «պատկերաց ունիմք և զկանոն օրհնութեան նոցա ի մաշ-  
 «տոցս, ուր յետ օրհնելոյ զպատկեր՝ ազգ առնէ կարմրագիր  
 «վարդապետութիւնն խնկել զայն և համբուրել: Եւ ի շարա-  
 «կանս խաչի երգեմք. «Ձկենդանագիր անարատ ծնողի բո» \*)...  
 12. Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց. «Ամենա-  
 «փրկիչ անուանեալ պատկեր Յիսուսի ի յմանն ի խաչէն...  
 «ձեռագործ Յովհաննու աւետարանչի... բերեալ ի Յունաստանէ  
 «ի հայս յորդոյ Աշոտոյ իշխանի Բագրատունւոյ տեսան Դա-  
 «րունից ի սկզբանդ անդ եօթներորդ դարու, զոր չընկալնուլ

\*) Աստուածաբ. Տես. Հատ. Բ. 169.

«իշխանին ի ձեռաց որդւոյ իւրոյ դաշտալիսի դանձ սրբու-  
 «թեան, անդէն անդ տայ հիմն արկանել եկեղեցւոյ սրբոյ ի  
 «կոփածոյ քարանց յանուն Փրկչական պատկերին՝ ի ստորոտ  
 «անդ քաղաքին Դարունից (Պայազիտ)... Այս հրաշալի պատ-  
 «կեր փրկչական իւրով հնութեամբ, մանաւանդ լինելով ձե-  
 «ռազործ Յովհաննու աւետարանչի՝ պահպանիւր ի մենաս-  
 «տանի անդ չաւաց թառայ որչափ կայր այն ի շինութեան.  
 «այլ զկնի վերջին ասպատակութեանց յայս նահանգ չայաս-  
 «տանի... բերաւ այս սուրբ պատկեր ի ս. Աթոռ այսր Կա-  
 «թուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի և կայ այժմ ընդ այլ  
 «սրբութեանց ի դանձարանի անդ» \*):

13. Կարապետ Վ. Շահնազարեանց: Սա 1859 թուին Պարիզում ի լոյս է ընծայել Ստեփաննոս Տարօնեցու (Ասո-  
 դիկի) «Տիեզերական պատմութիւնը» բաղձաթիւ ծանօթու-  
 թիւններով միասին, որոնցից մէկում (84) յայտնում է թէ  
 ինքն ունի զրաժ առանձին ճառ «Յաղագս յարդութեան պատ-  
 կերաց ի Հայս»: Այդ ճառը տպագրուած չէ. դոնէ մենք չենք  
 տեսել և ուրիշներէ մօտ էլ նորա մասին չիշատակութիւն  
 չենք գտել: Երևի մնացել է միայն ձեռագիր և հեղինակի մա-  
 հից յետոյ կորուստի մատնուել: Այսուամենայնիւ դժուար չէ  
 ասել, որ այդ խնդրի մասին պաշտպանողական ճառ զրոզն,  
 ով որ էլ լինի, ամենաշատը Հ. Չամչեանի յառաջ բերած հի-  
 մունքների վերայ միայն կանգնել կարող է, որքան էլ կամե-  
 նայ լայն չափել ու ձեւել իւր զրուածք: Շահնազարեանցի նոյն  
 մտքով մի այլ տեղ արտայայտած կարծիքը կլսենք երկրորդ  
 մասում, երբ կխօսենք Վահան կաթողիկոսի մասին:

Հայ եկեղեցու պատկերյարդութեան ի նպաստ կարծիք  
 յայանող օտարազգի ազբիւրներ, որոնց վերայ արժէ ուշա-  
 դրութիւն դարձնել (24), հետեւեալներն են:

14. Տրօիցիկի. «Ուղղափառական վիճաբանութիւնների  
 «մէջ կարծիք է յայտնուած, թէ հայերը բնաւ չեն ընդունում  
 «սրբոց պատկերներ: Որքան էլ այս կարծիքը համարձակ թուի,

\*) Ստոր. Հատ. Ա. 60—64.

«սակայն իւր հիմքն առնում է միաբնակականութեան պատ-  
 «մութիւնից: Յայտնի է, որ Փիլոկսենէսն ընդդէմ էր աս-  
 «տուածութեան որևէ կերպագրութեան, և քարոզում էր եր-  
 «կրրպագել աստուծուն հողով և ճշմարտութեամբ: Եւ այդ  
 «պատահականութիւն չէր: Սկզբնական միաբնակականութիւնը  
 «պատկերամարտ ուղղութեան հիմքն է: Միաբնակներն ուրա-  
 «նալով Քրիստոսի մարմնի համազօլութիւնը մեր մարմնի հետ  
 «և աղիտաբար ըմբռնելով ինչպէս մարմնառութիւնը, նոյն-  
 «պէս և Փրկչի երկրաւոր կեանքը՝ բնականաբար պիտի ըն-  
 «դունէին մարմնացեալ Աստուածն աննկարագրելի, և պիտի  
 «թշնամաբար վերաբերէին նորան պատկերադրելու ջանքերին:  
 «Թէ չայաստանումն էլ կային, այն էլ Ներսէս Շնորհալու  
 «ժամանակին, որոնք այդպէս էին վերաբերում պատկերներին՝  
 «հաստատում է Շնորհալու իրան խոստովանութիւնով (ժա-  
 «նօթութեան մէջ գնում է Շնորհալու խօսքերը): Իսկ թէ  
 «չայոց եկեղեցուն օտար է եղել այդ մոլորութիւնն՝ հաստա-  
 «տում են բացի Հայ եկեղեցու այդ նշանաւոր ներկայացուցչի  
 «պաշտօնական վկայութիւնից և նորա տանարներն, որոնցում  
 «պատկերներն ունեցել են միշտ իրանց պատշաճ տեղն. և այն  
 «եկեղեցական պաշտամունքն, որ տալիս է պատկերներին նոյն-  
 «պիտի չարդանքի նշաններ, որպիսիներ տրւում են և ուղղա-  
 «փառ եկեղեցիներում: Այս հիման վերայ իրաւունք ունենք  
 «վերոգրեալ կարծիքն արդարացի հանաչել Հայ եկեղեցու ան-  
 «դամների յայտնի թուի նկատմամբ միայն. անդամների, որոնց  
 «այդ մասին ունեցած կարծիքին ինքն եկեղեցին բաժանորդ  
 «չէ եղել և չէ, և կատարելապէս ազատ է իբրև պատկերա-  
 «մարտ կասկածի տակ լինելուց» <sup>25</sup> \*):

15. Սովոնիոս եպիսկոպոս. «վեցերորդ տիեզեր. ժողովի  
 «որոշումն և վարդապետութիւնն ի Յիսուս Քրիստոս երկու  
 «կամք և երկու ներդործութիւն դաւանելու մասին, և եօթ-  
 «ներորդ ժողովինը—պատկերների յարդութեան մասին ամե-  
 «նեւին ընդդէմ չեն և իրանց, հայերի դաւանութեանը» \*\*):

\*) Изложение вѣры уек. Арм. 214—215.

\*\*\*) Современ. бытѣ и жит. христ. 402.

16. Նիկողայոս Մառ. «Նուժը հայ տանարների շքե-  
 «ղազարդութեանը ծառայում էին և հարստութիւնն և ա-  
 «րուեստը. և այդ մասում պատկերազրութիւնը զբաւում էր  
 «ոչ չետին տեղը: Ճշմարիտ է՝ ժ. դարում Վահան կամ Վա-  
 «հանիկ կաթողիկոսի վիճակը—նա ժողովով դատապարտուեց  
 «և փախաւ Վասպուրական—կապում է այն բանի հետ, թէ  
 «նա մտցնելով հայ եկեղեցում վրացի կարգեր՝ պատկեր զրեց  
 «սեղանի վերայ և արգելեց եկեղեցիներում ժամերգութիւն  
 «կատարել առանց սեղանի վերայ պատկեր ունենալու... բայց  
 «այդ հանգամանքում պէտք է նկատել հայերի անբաւակա-  
 «նութիւնը միայն ծիսական նորմութիւնների և ոչ բնաւ  
 «պատկերների դէմ, քանի որ Թովմա Արծրունու ասելով...  
 «ղարձեալ ժ. դարում, Վանայ լճի կղզու վերայ Գաղիկ Վաս-  
 «պուրականցին Աղթամարի եկեղեցում «իներքուստ կողմանէ  
 «գորբութիւն սրբոցն հրաշալիս իմն յօրինէ նկարապանոցն  
 «զեղովք, զբամբք արծաթապատօք և լի ոսկեհուռն զարդիւք,  
 «ոսկեպաա պատկերօք»... «Անիի մի փոքրիկ եկեղեցում (ս.  
 «Գրիգորի) զտնուած որմանկարները (ժբ.—ժգ. դար.) որչափ և  
 «վնասուած՝ ցոյց են տալիս, թէ որմանկարութիւնը նշանա-  
 «ւոր չափով զարգացած է եղել հայերի մէջ յունական սկզբ-  
 «բունքների վերայ, ընդունելով ազգայնական մի բանի բաներ,  
 «զլիսաւորապէս նիւթերը (сюзетъ). և զորանով էլ ցոյց են  
 «տալիս ընդհանրապէս պատկերազրութեան որոշ (узовет-  
 «ны) զպրօցի զոյութիւնը հին հայաստանում»: Գրուածքի  
 «86 երեսում ծանօթութեան մէջ էլ ասուած է. Չամչեանը  
 «(Պատմ. Բ. 1017—1021) ժողովել է, թէ և թերի՝ միւս հայ  
 «հեղինակների վկայութիւնները յօգուտ հայերի պատկերչար-  
 «գութեան» \*):

Նոյն շարքելի պրօֆեսօրը մի այլ տեղում խօսելով Անիի  
 ս. Գրիգոր Լուսաւորչի անունով 1215 թուին կառուցուած  
 բնագործակ և փառաւոր եկեղեցու և նորա որմանկար պատ-  
 կերների վերայ՝ ասում է. «Պատերի ձեւերի վերայ զանուած

\*) Новое мат. 86—87.

«վրացի տառերն և տեղ տեղ էլ յունականները մի բանի ու-  
 «սումնականների մէջ կասկած են յարուցել եկեղեցու հայկա-  
 «կան ծագման մասին: Միքանիսներն եկեղեցին ուղղակի  
 «անուանել են յունական. ըստ որում՝ ի միջի այլոց՝ եկեղե-  
 «ցին զարդարող պատկերազրութիւնը նորանց երևացել է  
 «անյարմար հայ եկեղեցու համար: Սակայն՝ հայ եկեղեցիների  
 «աւելիակների ուշադիր հետազօտութիւնը ցոյց է տուել, թէ  
 «այդ եկեղեցիները մեծ յօժարութեամբ տեղ են տուել նկա-  
 «րազրութեան. Իսկ մեր 1892 թուին կատարած պեղում-  
 «ները բաց արին մի փոքրիկ եկեղեցի, նոյնպէս ս. Գրիգորի  
 «անունով, որ ունի որմազիր պատկերների առաւել լաւազօյն  
 «օրինակներ» \*):

17. Այ. Աննինսկիյ. «Այդ շրջանում (խօսքը դ. և ե.  
 դարերի մասին է) հայերը բարեպաշտական պաշտամունքի ա-  
 ռարկաններից առանձնապէս պատուում էին ս. Խաչը, Տիրա-  
 մօր պատկերն և սրբոց մասունքները» \*\*):

Չնայելով այս խօսքերին՝ հեղինակին պիտի տեսնենք և  
 առաջիկայ մասում:

Ուշազրութեան առնելու ենք, վերոգրեալներից չետօյ,  
 երկու կարևոր կէտեր ևս, որոնք հետևեալներն են.

Ա. հայոց եկեղեցին և Նիկիայի Երկրորդ (է. տիեզ.)  
 ժողովը.

1. Յայտնաւորք. Սահմի բ. և հոկտ. ժա. «Տօն է եօթ-  
 «ներորդ ժողովոյն, որ ի Նիկիայ: Ի ժամանակս բարեպաշտ  
 «արքային Կոստանդիանոսի և մօրն նորա հեղինեաց, (Իրինէ)  
 «ոչ մեծին և առաջնոյն՝ այլ փոքուն և յետնոյն: Որոչ հրա-  
 «մանաւ ժողովեցան ի Նիկիա քաղաք Բիւթանացուց սուրբ  
 «հարք և վարդապետք եկեղեցու՝ և նորոգեցին զպատիւ և  
 «զերկրպագութիւն սրբոց պատկերաց և զնշխարաց մարտի-  
 «րոսաց, զոր հերձուածող արքայն Լևոն և որդին իւր Կոս-  
 «տանդին Կաւալիոսս... արհամարհանօք անարգեցին զպատ-

\*) Брат. пом. Армянамъ. 216—218.

\*\*\*) Ист. Арм. церкви. 57.

«կերս աէրունական և դամենայն սրբոց՝ և զնշխարս մար-  
 «տիրոսաց: Բայց միւս Կոստանդին և մայրն իւր Հեղինէ չեա  
 «ժամանակաց վերստին նորոգեցին զերկրպագութիւն և զպա-  
 «տիւ պատկերաց սրբոց, և զսուրբ նշխարացն մարտիրոսաց  
 «բանիւ եպիսկոպոսացն և վարդապետացն՝ որ ժողովեցան ի  
 «Նիկիայ ի փառս բրիտանոսի աստուծոյ մերոյ» (6ժա—ժբ):  
 Նոյնը՝ մի այլ աեղում (եր. էնխա. 741). «Իսկ թագաւորն  
 «Լևոն սատանայական խորհրդակցութեամբ քսկսաւ անար-  
 «դել զտէրունական պատկերսն և զնշխարս սրբոցն ասաու-  
 «ծոյ: Եւ սուրբ հայրապետն Գերմանոս խրատէր զնա ի  
 «բաց կալ յայնպիսի չար մտածութեանցն, և նա ոչ լսէր  
 նմա» <sup>26</sup>):

2. Եղուարդ Դիւլորիէ. «Եօթներորդ տիեզերական—Նի-  
 «կիայի երկրորդ—ժողովում 788 թուին ներկայ գանուե-  
 «ցին երեք հայ եպիսկոպոսներ, Ստեփաննոս, Վարդան, Բար-  
 «սեղ. և երկու վարդապետներ, Վահան և Վարդան, որոնք  
 «ընդունեցին սուրբ պատկերների յարգութիւնն, և այս ըն-  
 «դունելութիւնն Հայոց Եկեղեցին միշտ և բարեպաշտօրէն  
 «պահպանել է մինչև այսօր: Ուրեմն եօթը ժողովներից միայն  
 «մէկն է Քաղկեդոնինն, որը Հայոց Եկեղեցին պաշտօնապէս  
 «չէ ընդունել, բայց վարդապետօրէն ընդունել է նորա խոս-  
 «տովանածն, որ ըստ ինքեան միւսնոյն այն է, ինչ որ դա-  
 «ւանում է Հայոց Եկեղեցին: Նոյնպէս եթէ վերջինում պաշ-  
 «տօնապէս չեն ընդունուած հինգերորդ, վեցերորդ և եօթնե-  
 «րորդ ժողովները՝ չէ կարելի ասել թէ իրապէս էլ չեն ըն-  
 «դունում. որովհետև այդ ժողովների քարոզած վարդապե-  
 «տութիւնը բոլորովին նման է Հայոց Եկեղեցու դաւանածին:  
 «Եթէ ճշմարիտ է, թէ Հայերը ներկայացուցիչներ չեն ունե-  
 «ցել այդ ժողովներում՝ այդ նորա համար է, որ չորրորդ ժո-  
 «ղովից չետոյ Հայերի և Յոյների յարաբերութիւնները խզուած  
 «էին. սակայն Հայերն երբէք չեն բողոքել նորանց (ժողովնե-  
 «րի արած) որոշումների դէմ» \*):

\*) Nistoire, Dogmes traditions l'u tr. 33—34.

Իրրև այս խօսքերի հաստատութիւն հեղինակը նոյն ե-  
 «րեսի ժանօթութեան մէջ ասում է. «Հայ պատմիչների մէջ  
 «չկայ համաձայնութիւն այն մասին, թէ այդ վերջին երեք  
 «ժողովներում Հայ եպիսկոպոսներ ներկայ եղել են թէ ոչ:  
 «Շատերը հաստատում են թէ ներկայ են եղել Հայերն էլ և  
 «ընդունել են նորանց որոշումները: Յովհաննէս Կաթողիկոսը  
 «1847 թուին առ Ն. Մ. ամենայն Ռուսիոյ կայսրը գրած  
 «նամակում իւր Եկեղեցու անունից պաշտօնապէս (sollemnel-  
 «lement) ընդունում էր առաջին երեք և վերջին երեք ժո-  
 «ղովներն և յայտնում թէ որն է Հայոց Եկեղեցու իսկական  
 «դաւանութիւնը»:

3. Տրօիցկից: Ստելով թէ Հայոց եկեղեցու եպիսկոպոսա-  
 «կան ձեռնադրութեան կարգը (Մաշտոցը) աւելի ևս մօտե-  
 «նում է ուղղափառութեան՝ յառաջ է բերում ի միջի այլոց  
 «և հեռեկայը, որ թարգմանում ենք գրաբար լեզուով. «Դար-  
 «ձեալ հարցանէ հայրապետն ցձեռնադրելին.— Ընդունի՞ զսուրբ  
 «ժողովն Նիկիոյ և զայլ ամենայն ուղղափառ ժողովս որ չեա  
 «նորա. այն է զեօթն սուրբ ժողովս, որը հաստատեցին զուղ-  
 «ղափառ սուրբ հաւատս և դատապարտեցին զհերետիկոսս» \*):

Թէ հեղինակն որպիսի՞ աղբիւրից է օգտուել, չգիտենք,  
 բայց այն, ինչ որ առել է այդպիսի աղբիւրից՝ Հայ Եկեղե-  
 «ցու Մաշտոցից զուրս է: Ընթերցողներից շատերը հնարաւո-  
 «րութիւն ունեն թէ ձեռագիր և թէ տպագիր Մաշտոցների  
 «միջոցով ստուգել, որ Հայոց եկեղեցին թէ քահանայական և  
 «թէ եպիսկոպոսական ձեռնադրութիւնների միջոցին միայն ա-  
 «ռաջին երեք ժողովների ընդունելութիւնն է պահանջում ըն-  
 «ձայացուից. «Սշակերտի՞ս Նիկիոյ ս. ժողովոյն... Կ. Պօլսոյ  
 «ս. ժողովոյն... Եփեսոսի ս. ժողովոյն»: Առիթ կունենանք այս  
 «մասին դարձեալ խօսելու:

Բ. Հայոց եկեղեցիների պատկերադրութիւնը:

1. Վասպուրականի թագաւոր Գաղիկ Արծրունին շինել  
 «և պատկերադրել է տալիս Աղթամարի եկեղեցին. «Տրաշա-

\*) Излож. веры церк. Арм. 297—298.

«կերտէ զեկեղեցին զարմանազործ արուեստիւ. և զոր վե-  
 «րագոյնն ցուցաբ կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զբա-  
 «րինսն ճշգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ Յրբահա-  
 «մայ և ի Դաւթէ և մինչև ցտէր մեր Յիսուս Քրիստոս,  
 «զգասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքան-  
 «չիւր հանդիսի զարմանազործ տեսեամբ: Ստեղծագործեալ  
 «չոկադրէ և ի կարգս եկեղեցւոյն զհոլովս երէոց և վերամս  
 «հաւուց, միանգամայն և զգասս զազանաց, խողից և առիւ-  
 «ծուց, ցլուց և արջոց. ընդգէմ միմեանց զարգարեալս, զկեն-  
 «դանականին նոցա չուշ առնելով զմարտ, որ է յոյժ ըզձալի  
 «իմաստնոց. ածեալ զթիկամբք եկեղեցւոյն և շրջապատ պա-  
 «րունակ մի պանծալի մանրամասն հատուածովք յօրինեալ,  
 «կերպագրեալ որթս խաղողաբերս այգեղործովք և դադա-  
 «նովք և սողնովք հանդերձ համակեալք. որոց և կերպարանքն  
 «այլ և այլ զանազանութեամբք ըստ իւրաքանչիւր մասին  
 «առբերեն զտեսակս: Իսկ ի չորից կողմանց ի վերայ դա-  
 «դաթան սրբութեանցն ճշգրտագործեալ զչորից աւետարան-  
 «չացն պատկերս, որք և արժանաւորապէս իսկ են պսակ ու-  
 «րախութեան սրբոյ եկեղեցւոյ և վերագոյն քան զամենայն  
 «սուրբս: Նկարագրեալ է տեսանաղբելով և զփրկչական պատ-  
 «կերս, որ վասն մեր զգեցաւ մարմին երեւելով մարդ, և է ի  
 «կամարս արեւմտական խորանին. նմանահան ճշգրտութեամբ  
 «յօրինեալ է ընդգէմ Փրկչին և զփառագարդ պատկեր ար-  
 «քային Գաղկայ, որ մեծապարծ հաւատով բարձեալ ունի զե-  
 «կեղեցին ի վերայ բազկացն... Իսկ ի ներքուստ կողմանէ ըզ-  
 «սրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապա-  
 «նոցն զեղովք, զբամբք արժաթապատօք և լի ոսկեհուռն զար-  
 «զիւք, ոսկեպատ պատկերօք... Իսկ զօր նաւակատեաց սորա  
 «դասիւք եպիսկոպոսաց և իշխանաց շքեղացուցանելով տօն  
 «մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարծանօք չիշա-  
 «տակ ազգաց յազգս» \*):

2. Ապարանից Խաչ կոչուած վանքի վանահայր Ստե-  
 փաննոսն եկեղեցու որմերը նկարներով զարդարուծ է կամ

\*) Թովմա Արծ. 297—299.

նկարագրուծ. «Զորմոցն վերադրութիւն՝ վիմախարիսխ արձա-  
 «նակառուց կերպիւ առկայեաց. և իբք յականց վանեաց չե-  
 «ռելոց՝ ճարտարագործ արուեստաչարմար բաղմատեսակ երփ-  
 «նիւ նորոգեաց. և զեղեկիւնիան տեսեանն երևոյթ անյօդ  
 «էութեամբ՝ նոր նմանութեամբ՝ իբր զգայութիւն իրի ար-  
 «ժարծեաց... Ի նոյն և զաներևոյթ հանդերձեալ բարեացն ծա-  
 «նօթութիւն փառացն ապառնեաց... Իսկ զգեղանկար ծաղ-  
 «կայօրինուորակ պատկերացն կենդանադէր տեսակի զեղոցն  
 «զստուերացեալ հին ամանակացն՝ զաներևոյթն աչաց ներ-  
 «կայիցս՝ իբր զառերևոյթ յայտնի տեսակի՝ ունոդաց շնչոյ և  
 «զգայութեան արգասաւորնաց» \*):

3. Աղուանից Զուանշիր իշխանը Գարդմանի մի եկեղե-  
 ցին նկարագրադել է տալիս. «Գայր իշանէր ի գաւառն Գարդ-  
 «ման, ուր իսկ և իսկ մտանէր ի յարկ ապաւինին իւրոյ (ե-  
 «կեղեցին)... որ և զեղագեղիչս ի գործ արկեալ նկարեաց ի  
 «զմբեթէն մինչև ի բարաւորս զրանն պատագահիւթ կեր-  
 «պասագործեալ» \*\*):

4. Սիւնեաց երկրուծ տասներորդ դարուծ Տաթևի և  
 Գնդեվանքի տաճարները նկարագրադուծ են. (Յակոբ եպիսկո-  
 պոս Սիւնեաց) «Շինէ (Տաթևուծ)... զմբեթաչարկ խորան մի  
 «յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա  
 «ետ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամե-  
 «նայն տնօրինական և տէրունական պատկերս և զառաքելոց  
 «և զհայրապետաց»:

«Այս Յակոբ ետ ածել նկարիչս և զաւուսիս որ է պատ-  
 «կերագործ ի հեռաւոր աշխարհէ Փռանդ ազգաւ. և զլուսա-  
 «նեմ յարկս աստուածաբնակ տանարիս բաղուծ և անհուռն  
 «ծախիւք ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչև ի վայր,  
 «և զփրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսեամբ ետ նկա-  
 «րել... և շուրջ զսեղանովն՝ զմարդարէական և զառաքելա-  
 «կան և զհայրապետական կենդանագրութիւնս... Եւ արար

\*) Գրիգոր Նարեկ. (Ապար. խաչի ծառ) 352—356.

\*\*\*) Մովս. կաղանկ. 156.

«գալն ի թուականին Հայոց 379: Եւ ապա մեծաժողով հան-  
 «դիսիւ կոչեաց զկաթողիկոսն Հայոց բազում կախկոպոսօք  
 «և զիշխանսն ի նաւակաթիս օրհնութեան և սրբազործու-  
 «թեան պատկերացն ոչինչ ընդհատ քան զառաջին հանդէսն  
 «որ վասն օրհնութեան տանարին»<sup>27)</sup>:

«Երանելի և բարեպաշտ տիկինն Սոփիա զնայ ի խո-  
 «րածոր վալըն որ Գնդեվանս կոչի... և յոյժ հաճեալ ընդ տե-  
 «ղին... սկիզբն առնէ շինուածոյն՝ (տանարի) կացուցեալ...  
 «զործակալ զեղիշա երէց և նկարիչ. և յանձնէ զնա Տեառն  
 «Յակօբայ մեծաւ հողաբարձութեամբ ի կատարուծն ածել...  
 «կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ յօրինուածօք զար-  
 «գարեն զառաստաղ և զորմունս նորա. և արարեալ նաւա-  
 «կատիս՝ մեծահանդէս ժողովով օրհնեն զնա» \*):

Երեք պատկերազրուած եկեղեցիների նաւակատեաց հան-  
 դէս կատարելու մասին խօսք ենք լսում թովմա Արծրու-  
 նուց և Օրբելեանից: Հանդէսներից երկուսն՝ Աղթամարինն  
 և Գնդեվանքինը պէտք է հասկանալ նորակառուց եկեղեցու  
 օրհնութիւն. իսկ մէկը՝ Տաթևինը՝ «Պղծեալ տանարի» ա-  
 րարողութիւն, որ կատարուում էր և սովորաբար այժմ էլ կա-  
 տարուում է, երբ որ մի անգամ օրհնուած և սրբազործուած  
 եկեղեցուում որևէ անմաքուր զործ է կատարուում կամ ներ-  
 քին մասերում որևէ նորոգութիւն կամ փոփոխութիւն է լի-  
 նում. որպիսին համարուելու էր հարկաւ հնումն և նկարչի  
 զանազան դեղերի զործաւորութիւնն. ապա թէ ոչ՝ ինչպէս  
 պիտի տեսնենք շուտով, «նկարեալ եկեղեցի» օրհնելու «կարգ»  
 առաջին անգամ երևում է Տասնևչորսերորդ դարի սկզբում  
 (1304 թ.) զրուած Մաշտոցում. իսկ առանձնապէս «պատկեր  
 օրհնելու» կարգն աւելի ուշ է սկիզբն առնում: Այս պատ-  
 նառով էլ Օրբելեանի մի տեղում զործ ածած խօսքերը «օրհ-  
 նութեան և սրբազործութեան պատկերաց» մեղ թուում են  
 յետամուտ յաւելուած:

5. Անի քաղաքի պատկերազրուած եկեղեցիներ—

\*) Պատմ. նահանգին Սիսական, Ստ. Օրբել. Փարիզ. 1859. 300—307

—Ս. Գրիգորի եկեղեցի՝ շինուած Ժ. դարի վերջում...  
 Զարդարանքներով հարուստ չէ... որմանկարները մաշուած են:

—Ս. աքելոց եկեղեցի... նուիրատուութիւններից մէկի  
 թուականը՝ 1091 ցոյց է տալիս, որ եկեղեցին զոյութիւն է  
 ունեցել Ժա. դարի սկզբում: Բնորոշ զարդարանքները նկա-  
 րուած են խիստ նախնական ոճով:

—Փրկչի եկեղեցի. շինութիւնն աւարտուել է 1033<sup>3/4</sup> թուին:  
 Եկեղեցու ներսը կան պատկերներ: Պատերի վերայ նկարուած  
 են Փրկչի, նոր կտակարանի անձերի և անցքերի պատկերներ:  
 Սեղանի ձեղունի վերայ նկարուած է Հայր Աստուած, շր-  
 շապատուած հրեշտակներով: Արարչի ձեռքում կայ բաց զէրք,  
 որ ունի տառեր, բայց այժմ այլ ևս անկարելի է կարդալ:  
 Սեղանի հետ կապակցուող կամարների աջ ու ձախ կողմերից  
 նկարուած է Տրբոյ իշումն. միւսներում—խորհրդաւոր  
 ընթրիքն, Աւետարանիչներն և այլն: Մատթէոսի պատկերի  
 ներքև նկարուած է Սարգիս Փարշիկի կամ Փարշիկի ծնկա-  
 չօք պատկերն, որ խնդրում է աւետարանչի բարեխօսութիւնը:  
 Ամենայն հաւանականութեամբ սա է եկեղեցին նկարազարդող  
 արուեստագէտը \*):

Չկայ սակայն ապացոյց թէ այդ պատկերներն եկեղե-  
 ցիների շինութեանց աւարտուածից անմիջապէս յետոյ են նկա-  
 րուել, թէ բաւական ուշ: Անին իբրև քաղաք զոյութիւն ու-  
 նեցաւ մինչև Ժդ. դարն: Արդեօք Զաքարեանների տիրապե-  
 տութեան միջոցին վրացիները մասնակից կամ պատճառ չե՞ն  
 եղել այդ նկարներին կամ նոյն իսկ յոյն աստիճանաւորներն  
 (Կատապաններն), որոնք Բագրատունի թագաւորութեան բար-  
 ծումից յետոյ Բիւզանդիայի կայսրներից էին նշանակուում և  
 ուղարկուում կառավարելու Անին և իւր սահմանը: Պ. Մառը  
 եկեղեցու մասին ընդունում է, որ վրացիները նկարազրու-  
 թիւններին տուել են փոփոխութիւններ, բայց և այնպէս նո-  
 րանից յառաջ էլ այդ նոյն եկեղեցին ունեցել է նկարներ: Պա-  
 րոնի անուանածը ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին է, որ ինչ-

\*) Պրոֆ. Մառ. Братская ном. 205—207.

պէս ասում է, շինուած է 1215 թուին, ս. Աստուածածին  
 րնդարծակ և փառաւոր աւագ եկեղեցու նմանութեամբ, բայց  
 ճարտարապետական զարդարանքներով նորանից գերադանց:  
 Այս եկեղեցին զարդարուած է ներքուստ կենդանիների և  
 թռչունների նկարներով ու նաև պատկերներով, որոնց մէջ  
 կան և Լուսաւորչի կեանքից վերցրած տեսարաններ: Եւ պ.  
 Մառն այդ նկարազիրը տալուց յետոյ ասում է. «Պէտք է,  
 «սակայն, նկատել, որ ս. Գրիգոր եկեղեցու մնացած այժմեան  
 «որմանկարութեան մէջ դուցէ և այն պատկերները չեն, որոնց  
 «մասին խօսում է եկեղեցու շինողը 1215 թուի արձանա-  
 «գրութեան մէջ: Բանն այն է, որ ճայ եկեղեցուն վերջում  
 «վրացիները տիրապետեցին. և վերջիններս պատերի նկարա-  
 «գրութիւններին զոյներ (փոփոխութիւն) են տուել և վրացի  
 «արձանագրութիւններ աւելացրել իբրև բացատրութիւն այս  
 «կամ այն նկարի: Բնական է ենթադրել, թէ վրացիները տէր  
 «լինելով եկեղեցուն՝ որմանկարների մէջ որևէ փոփոխութիւն-  
 «ներ կանէին. բայց քանի որ եկեղեցում զլխաւոր տեղ են  
 «բռնում ճայոց Լուսաւորչի կեանքից վերցրած տեսարաններն,  
 «երևում է ուրեմն՝ որ եթէ վրացիներն իրանց զբաւած եկե-  
 «ղեցիներում չեն պահպանել սկզբնատիպ նկարները, գոնէ պահ-  
 «պանել են նորանց սկզբնական առարկաները: Պատերի ձե-  
 «փերի վրայ գտնուած վրացի տառերն և տեղ տեղ էլ յու-  
 «նականները մի քանի ուսումնականների մէջ կասկած են յա-  
 «րուցել եկեղեցու հայկական ծագման մասին» և այլն. (մնա-  
 «ցածն արդէն մէջ բերուած է վերևում) <sup>28</sup>):

Այդ ս. Լուսաւորիչ եկեղեցում Կարոյոս Տէսիէ պատ-  
 կերահան ճանապարհորդի ասելով «ի դոգ գմբէթին կայ մեծ  
 պատկեր Քրիստոսի բազմելոյ ի դահ, վառ ի վառ և պայ-  
 ծառ երանգօք» \*):

Բայց Անիի աւագ կամ կաթողիկէ եկեղեցին, որի շինու-  
 թիւնն աւարտել է Սմբատ Բ-ի ամուսին Կատրամիդէ թա-  
 գուհին 1001 թուին, ամենևին չունի պատկերներ, ինչպէս

\*) Շիրակ. եր. 94.

ասում են նկարազրոյ այցելուներն: Մենք ունենք բազմա-  
 թիւ հռչակաւոր վանքեր և եկեղեցիներ, որոնց մի շարք ստո-  
 րագրութիւնները կատարուել են զանազան անձերի ձեռքով:  
 Այդ շարքից դուրս ձգելով վստահութեան անարժաններն՝  
 ունենում ենք զարծեալ մի քանի պատուական աղբիւրներ,  
 որոնք մեզ հնարաւորութիւն են տալիս նշանակելու այն բո-  
 լոր եկեղեցիներն, որոնցում երևում են քանդակներ և պատ-  
 կերներ: Նախ վերցնենք քանդակները:

Ա. Էջմիածնի տաճար: Հիւսիսային պատի մէջ արտա-  
 քուստ զրուած է Պօղոս առաքեալի և Թեկղի կուսի վիմա-  
 քանդակը յունարէն տառերով. «Մերձ ի կիսաբոլորակ բուրգն  
 սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի զնի միւս այլ վէժ  
 հինաւուրց յորում կոփեալ են... պատկեր Պօղոսի առաքե-  
 «լոյն նստեալ յաթոռ ծալովի... և պատկեր Թեկղեայ կուսի  
 «կանգուն ի յօտին, երկոցունցն անուանք ևս յունական տա-  
 «ռիւք» \*):

Բ. Մրենի վանք: Յովհաննէս կաթողիկոսի ասելով՝ շի-  
 նուած է է. դարի սկզբում Սահառունի Դաւիթ իշխանի հրա-  
 մանով: Յետագայ պատմիչներից «Ասողիկ, Սամուէլ, Վար-  
 «դան և այլ ժամանակագիրք իբրև յոյժ հրաշակերտ և աշ-  
 «խարհահռչակ շինուած յիշեն զ ե կ ե զ Ե ց ի ն կամ զ կ ա թ ո-  
 «ղ ի կ է ն Մ ր ե ն ո յ, և զշինութիւնն կամ զհիմնարկութիւնն  
 «ասեն յամի 613—4: Այլ նշանաւոր քան զայլ ինչ ի կաթո-  
 «ղիկէիս, ըստ այժմեան մնացուածոց, են բարձրաքանդակ  
 «պատկերքն ի վերայ դրանցն. արեւմտայնոյն հրեշտակք երկու  
 «կանգուն և արք վեց ի ստորև, ոմանց մատեան ի ձեռս ու-  
 «նելով. հիւսիսայնոյն՝ մանուկ, ձողաբարձ խաչ ունելով ի ձե-  
 «ռին, և ձեր մի երկրպագու, երկոքին ևս անկեալ ի ծունր,  
 «և երիվար համետեալ առ նմին, զոր է կարծել զՍահառու-  
 «նին. նոյնպէս և այլ ձեր մօրուեղ երկայն պարեգօտիւ քսակ  
 «ի ձեռին, և ծառ ի թիկանց նոցին. բայց յարուեստէ ճար-  
 «տարութեան զուրկ են քանդակքն» \*\*):

\*) Շահխ. Ստորագր. Ա. 19—20.

\*\*\*) Շիրակ. 138: Տեղագիր Հայոց Սեծաց. 33.

Գ. Հոռոմոսի վանք: Նախաշէն եկեղեցին ըստ Կ. Ղ. Ալիշանի՝ պիտի խանդարուած լինի 982 թուին: Նորից շինել է «Յովհաննէս Շահանշահ որդի Գաղկու» ինչպէս ասում է 1038 թուի արձանագիրն: Եկեղեցու արեւելակողմի երեք լուսամուտների ներքեւ արձանադրուած են. «Այս է ս. Աստուածածին», «Այս է ս. Յարութիւն», «Այս է ս. Գրիգոր»: որոնք Կ. Ալիշանն համարում է «աներկբայաբար յայտարարը պատկերաց, որ ի վերայ նոցին կամ աորնթեր ձեւակերպեալք էին» \*):

Գ. Ամաղու նորավանից եկեղեցի: Նորավանից ժամատունը կամ եկեղեցին շինել է Էլիկուծ Օրբելեանի որդի Լիպարիար 1222 թուին: Եկեղեցու դրան հիւսիսակողմն, արտաքուստ «Քանդակ պատկեր կարճագեւստ և սաղաւարտեալ «Երիտասարդի հեծելոյ (միոյ ի քաջացն Օրբելեանց), մենամարտողի ընդ վաղեր կամ առիւծու. իսկ ի նակատ դրան ժամատանդ պատկեր Տիրամօր բաղմելոյ ի գահ... ունելով զՅիսուս ի զրկի, Հոգին Սուրբ ՚ի վերոյ. և ձերուներ ոմանք «յաջմէ և յահեկէ, և զիր 1221 թուականաւ: Ի վերոյ քան «զայն՝ քանդակապատկեր Հօր Աստուծոյ հինաւուրց կերպարանօք և լայն հանդերձիւք... Յաջմէ և յահեկէ պատկերք «խաչելութեան Քրիստոսի, Աստուածածնի... Մազդազինացւոյ և այլոց» \*\*):

«Ե. Մի այլ եկեղեցի նորավանից. «Երրորդ եկեղեցի Նորավանիցս, որոյ անուն ոչ յայտնի... զաստակերս է Բուրթէլ ի իշխանի... կրկնայարկ... ի վերայ մանր զրուագեալ դրան «ներքնայարկին (արտաքուստ) կայ քանդակ պատկեր ս. Աստուածածնի՝ Յիսուս ի զրկին, բաղմեալ ի բարձի... յաջմէ «և յահեկէ Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետքն թեօքն հովանի առնելով Տիրուհւոյն: Բարաւորք դրանն ևս ունին պատկերս հրեշտակաց կամ թռչնախառն մտացածին էակաց:

«Ի նակատ աւագ սեղանոյն քանդակեալ կայ Քրիստոս «ի վերայ չորեքկերպեան աթոռոյ, ի միջի երկուց հրեշտա-

\*) Շիրակ. 138. Տեղագիր Հայոց Մեծաց. 33.  
\*\*) Սիսական. 187.

«կաց. ի վերայ լուսամտին՝ Աղաւնին խորհրդական՝ ծաղկա- «հիւս տառիւք զրեալ Հոգին Սուրբ... Ի վերայ դրանն ար- «տաքուստ քանդակեալ է պատկեր Քրիստոսի՝ աւետարանի «ձեւին... երկուստեք առաքեալքն Պետրոս և Պաւղոս» \*):

Զ. Կարսի ս. Առաքելոց եկեղեցին. շինուած ժ. դարում: Նորա զմբէթի վերայ, ինչպէս ասում է և Կ. Ալիշանն (Այրարատ, 83) կան 12 առաքելների պատկերներն. «Յերկոտասան երեսս բաժանեալ (զմբէթը) մէն կրելով զնկարէն «պատկեր միոյ առաքելոյ»:

Աւելի յետին ժամանակների քանդակներն, որոնք երկրորդական նշանակութիւն միայն կարող են ունենալ ներկայ աշխատութեան համար, սորանք են—Սուրբ Էջմիածնի մեծ կաթողիկէի շուրջն և զանգակատան միջնայարկի կամարադուխների վերայ (Շահխ. 28): Եղվարդի մենաստանի մէջ (անդ. 129—131), Դարաշամբի Նախավկայի վանքի կաթողիկէի վերայ (անդ 314) և Յովհաննու վանքի արեւմտեան դրան նակատի վերայ (Այրարատ 160): Առաջինում՝ մեծ կաթողիկէի շուրջն առաքելների պատկերաքանդակներն. իսկ զանգակատան կամարադուխների վերայ՝ արտաքուստ «երեքին պատկերք... Փրկչին Յիսուսի... Մեծին Տրդատայ... ս. Գրիգորի Լուսաւորչի». Եղվարդում՝ Փրկչի, Աստուածածնի, առաքելների և մարգարէների: Դարաշամբի վանքում՝ «երկոտասան առաքելոց, Տիրամօր կուսի, Յովհաննու Կարապետի, Ստեփաննոսի Նախավկայի և ս. Լուսաւորչի. և նոյնաթիւ այլովք պատկերօք զանազան կենդանեաց»: Իսկ Յովհաննավանքի դրան նակատինք «նշանաւոր քանդակ պատկերակերպ... Իսկ խորհուրդ պատկերիս՝ առակ իմաստուն և լիմար կուսանացն, յաջմէ և յահեկէ Փրկչին»: Աւելացնենք մի քանդակ էլ Ազուլիսի Թովմա առաքելի վանքի դրան նակատինք «Ս. Թովմայի ձեռնմխութիւն ի կող Փրկչին» (Սիսական. 326) և փակած կլինենք քանդակապատկեր վանքերի կամ եկեղեցիների ցանկը:

\*) Սիսական. 202.

Այժմ վերցնենք նկարագրատերերը.

Ա. Էջմիածնի տանար: 1604 թուին Շահաբասի դէպի Երևան արշաւած միջոցին զերմանական զեսպանին ուղեկցող Տեկտանդէրը զնացել է Էջմիածին: Միաբանները տարել են նորան տանարն և ցոյց են տուել մասուներն և այլ սպասներ: Տեկտանդէրը տանարում պատկերներ չէ գտել. «Չկային պատկերք» \*):

Բ. ժր. դարի կէսում Էջմիածնին այցելած մի ճանապարհորդ կրօնաւոր նոյնպէս տանարում պատկերներ չէ գտել. «ներսում (տանարի) գրում է նա, չկայ ոչ մի զարդարանք, ոչ նկարչական և ոչ փորագրական». Внутреннею частью не было ни украшений, ни живописного, ни резьбового) \*\*):

Միմէօն կաթողիկոս Երևանցին Զմիւռնիայում առաջնորդ եղած միջոցին տեղական հայերի նուիրատուութեամբ շինել է տալիս Էջմիածնի աւագ սեղանի համար մի ոսկեզօծ խաչկալ, որի երկու զոների վերայ նկարուած են Թագէոս և Բարդողիմէոս առաքեալների պատկերները:

Իսկ նորա յաջորդ Ղուկաս Կաթողիկոսը 1786 թուին նորոգում է տանարի որմերն և առաստաղն և զարդարում է «Բազմատեսակ զեղեցիկ նկարուք և խորհրդաւոր պատկերօք՝ «ի ձեռն հաննարաւոր արհեստագէտ նկարչին Յովնաթանու» (նաղաշ Յովնաթան) \*\*\*):

Գ. Մուրափիեօվը խօսելով Էջմիածնի տանարում տեսած պատկերների մասին՝ չէ գտնում մի պատկեր կամ մի զարդ, որ ժէ. դարից այն կողմն անցնի. իսկ ընդհանրապէս չայոց եկեղեցիների մէջ նկատած սակաւաթիւ պատկերների մասին ասում է. «Իմ տեսած հայ վանքերում ոչ մի տեղ չհանդիպեցի «սքանչելագործութեամբ յայտնի հին պատկերների. մինչդեռ «ընդհակառակն յոյն և վրացի եկեղեցիները մինչև այժմ փառաւորում են նորանցով իբրև իրանց լաւագոյն գանձով» \*\*\*\*):

\*) Այրարատ. 232.

\*\*\*) Всемирный путешественник. С. Петербурга, 1816, стр. 141.

\*\*\*\*) Շահի. 36, 41.

\*\*\*\*\*) Грузия и Армения, часть втор. С. II. Б. 62.

Յիշեալ ճանապարհորդը Գեղարդայ վանքումն էլ տեսել է պատկերներ «միանգամայն նորեր» (եր. 114):

Դ. Մի ճանապարհորդ, Յիսուսեան կարգի կրօնաւոր վիլյօղը 1691 թուին Գողթան դաւառի Յղնա գիւղում լինելով՝ տեսել է տեղական եկեղեցում ս. Լուսաւորչի և Սեղբեստրոսի պատկերները \*):

Ե. Մի այլ ճանապարհորդ, ձեմելլի իտալացին, 1694 թուին Թալինի եկեղեցիներից մէկի խորանում տեսել է «նկարս պատկերաց Առաքելոց». բայց հ. Սլիշանը չգիտէ՝ ո՞ր Թալինում» թէ ի նոյնն զիշերեաց ձեմելլի» (Այրար. 141): Երևի չին Թալինն է լինելու, որի կաթողիկէ եկեղեցու պատկերներ ունենալու մասին չիշում է և Շահխաթունեանցը. (Ստոր. Բ. 64):

Վերջինս չիշում է նաև Կուլաշի կամ Կոշի մենաստանն, որի պատերի վերայ, ասում է. «Նշմարին հետք նկարուց և աէրունի պատկերաց և սրբոց ի ներքուստ»: Սակայն թէ Թալինի և թէ Կոշի եկեղեցիների պատկերազրութիւնն ամենայն հաւանականութեամբ Զաքար-Իվանեան աշխարհակալութեան շրջանի արդիւնքներ են, յառաջ եկած անկախ չայոց եկեղեցու սովորութիւնից և յօժարամտութիւնից, ինչպէս և այն բոլորն, որ երևում են այդ աշխարհակալութեան սահմանում և սահմանակից գաւառներում, ուր որ կառավարող կամ հրամանատար եղել է Զաքարէի եղբայր Իվանէն, կամ ուր որ երևացել են նորա ազգականներն և զործակալներն: Ինքը Զաքարէն թէև մինչև իւր մահը մնաց ազգային գաւառութեամբ, բայց յայտնի է, թէ որքան փափագ ունէր նա վերացնելու չայ եկեղեցուց այնպիսի տօնական և այլ տարբերութիւններն, որոնք գաւառական հիմնական խնդիրներ չլինելով՝ միևնոյն ժամանակ առիթ էին տալիս վրացիներին անարգելու իւր ազգայնական զգացմունքը:

Որ Թալինի եկեղեցու պատկերներն այդ շրջանի և վրացի սովորութիւններն ընդունած մարդկանց զործ են լինելու, ցոյց

\*) Սիական. 342.

է տալիս նոյնիսկ մի եկեղեցու պատի 1267 թուականի արձանագրութիւնն, որից իմանում ենք թէ արձանագրել տուողն, Սյուպուդայն, է. «Թուռն մեծին Շահանշահի, որդի Իվանէի» (Սյրարատ, 141): Իսկ Կոշի մենաստանի պատկերներն այդպիսի ծագման վերագրելու իրաւունք է տալիս մեզ այդ զիւղի հանդստարանում մեր տեսած փոքրիկ մատուռն, որի պատերի վերայ արտաքուստ կայ վրացերէն խուցուրի տառերով մի տող արձանագրութիւն: Շահխաթունեանցն ևս չիշում է այդ մատուռն, բայց առանց արձանագրութեան մասին խօսելու. «Յարեմտից գեղջս է գերեղմանուտ, յորում է մատուռն տեղի պատարագելոյ ի կոփածու քարանց չարգարեալ» \*):

Յ. Չածչեանն չիշում է և մի ուրիշ պատկերաւոր եկեղեցի: Նորա ասելով (Գ. 614) Պօղոս Սեդերնացի լատին կրօնաւորը 1634 թուին Երևանում ընծայում է Փիլիպպոս կաթողիկոսին «զմեծ պատկեր մի վայելչանկար. և Փիլիպպոս ետ դնել զայն ընդ այլ պատկերս եկեղեցւոյ այնր վանից» (Սնանիա առաքեալի վանքը կամ անապատը Երևանում):

Հաւատալ արդեօք, թէ մինչդեռ Էջմիածնի մայր տաճարում մինչև ժր. դարի վերջերն ամենևին պատկեր չէ լինում, Երևանի վանքում կային պատկերներ:

Յովհ. եպիսկ. Շահխաթունեանցը շէն է գտել այս մենաստանն և օրինակել է արձանագրութիւններ, բայց պատկերների մասին չէ խօսում:

Բ.

Հայոց Եկեղեցին պատկերներ չէ չարդում.

1. Մաշտոց: Հայաստանեայց Եկեղեցին նախնաւանդ սովորութեամբ կրօնական առարկաներն ընդունում է ի պատուադրութիւն միայն այն ժամանակ, երբ նորանց վերայ կատարւում է կամ օրհնութիւն և օծումն կամ լոկ օրհնութիւն, նայելով առարկայի նշանակութեանը: Հետևաբար՝ որ-

\*) Ստորագր. Բ. 63.

քան հին լինի առարկայի ընդունելութիւնը, նոյնքան էլ հին պիտի լինի նորա համար սահմանած օրհնութեան կամ օծման կարգը:

Քրիստոնեայ եկեղեցում բնական է տեսնել ամենից յառաջ խաչի գործածութիւնը նուիրական ւառամբ. այդ պատճառով էլ նորա օծումն երևում է հայոց եկեղեցում շատ հնուց սահմանուած կարգ: Մեր կանոնադրերի մէջ կան «Յովհաննու Իմաստասիրի» կանոններ, որոնցից երկու յօդուած (27-և 28) յատկապէս խօսում են չօծուած և օծուած խաչերի տարբերութեան վերայ: Եթէ մէկը փայտից կամ որևէ նիւթից խաչ շինելու լինի, ասում է առաջինն, և չտայ քահանային օրհնելու և ս. մեռոնով օծելու՝—հարկաւոր չէ այդ տեսակ խաչին երկրպագութիւն մատուցանել. ըստ որում նա թափուր է աստուածային զօրութիւնից, և առաքելական եկեղեցու աւանդութիւնից դուրս է այդպիսին ի պատիւ և չերկրպագութիւն առնելն: «Եթէ որ խաչ արասցէ փայտեայ «և կամ չինչևիցէ նիւթոյ և ոչ տացէ քահանային աւրհնել «(օրհնել) և աւժանել զնա մեռոնովն սրբով, ոչ է պարտ զնա «ի պատիւ ընդունել կամ չերկրպագութիւն մատուցանել. զի «դատարկ և ունայն է յաստուածային զաւրութենէն և ար- «տաքոյ աւանդութեան առաքելական եկեղեցւոյ»:

Իսկ օրհնուած և օծուած խաչերը պէտք է պատուել և պաշտել, երկրպագել և համբուրել, ասում է երկրորդն, ըստորում նորանցում բնակում է ս. հոգին և նորանցով մատակարարում է մարդկանց պահպանութիւն և հոգեկան ու մարմնական ախտերի բժշկութեան շնորհ: «Իսկ զայնոսիկ, «որք աւրհնութեամբ և աւժամբ կատարեալ է, որք միան- «զամ և իցեն յաստուածային խորհրդոյն գործարանք, պարտ «է զնոսա պատուել և պաշտել, երկրպագանել և համբուրել, «զի ի նոսա բնակէ հոգին սուրբ և նորաւք (նորօք) մատա- «կարարէ ի մարդիկ զպահպանութիւն և զշնորհս բժշկու- «թեան ախտից հոգւոյ և մարմնոյ» \*):

\*) Չնուազիր Կանոն. ս. Էջմիածնի Մատենադարանի.

Խաչն անպատճառ օծելն և օծումից յետոյ միայն ի պաշտօն առնելն այնպիսի պարտադիր պահանջ էր եկեղեցում, որ ժ. դարում Անանիա կաթողիկոսն Անձեաղեաց Խոսրով եպիսկոպոսի դէմ արձակած բանադրական թղթում մեղադրական կէտերից մէկն էլ չայտարարում էր հետեւեալը. «Քանզի չաղագս քրիստոսական խաչին այսպէս ասէր, թէ Այն «խաչն, որ քահանայքն աւրհնեն և այն՝ զոր ոչ աւրհնեն՝ «միապատիւ է և աւելորդ դաւրհնելն վարկանեմ» \*):

Ճիշտ այսպիսի սկզբունք է տիրել մեր եկեղեցում և պատկերների նկատմամբ. այս պատճառով էլ կամեցանք այս մասում ամենից յառաջ ցոյց տալ թէ Հայաստանեայց Եկեղեցին ե՞րբ և որպիսի կարգ է սահմանել պատկերի օրհնութեան և օծման համար, որպէս զի կարելի լինի իմանալ, թէ պատկերչարգութեան դէմ զրողներն էլ, որոնց շուտով պիտի տեսնենք, մեղանչել են թէ ոչ եկեղեցու սկզբունքի և կարգի դէմ, ինչպէս օրինակ մեղանչել է Խոսրով Անձեաղեին օծուած և չօծուած խաչի միջև տարբերութիւն չընդունելով:

Ինչ կասկած՝ որ միակ աղբիւրն, որից այդ իմանալ և պարզել կարելի է, մեր Ծիսարանը կամ Մաշտոցն է:

Ս. էջմիածնի մատենադարանում կան Մաշտոցի 58 ձեռագիր օրինակներ, որոնցից Մայր Մաշտոց 29 օրինակ. Առձեռն կամ Համառօտ Մաշտոց՝ 29 օրինակ: Այդ ձեռագիրներից չորսը բաց թողնելով իբրև թերատներ՝ նշանակուած ենք միւսներն իրանց համառօտ բովանդակութիւններով, թուականների կարգով <sup>29)</sup>:

\*) Արարատ. 1897. Յունիս, 276.

Համար բառ-ակնարկով	Անուն, թուական, զրիչն և տեղը.	Ունի՞ օրհնութիւն պատկերի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
997.	Առձեռն Մաշտոց. գրեալ ի թուին էճիւէ. (1296). զրիչն Անանիա սարկաւարդ. ի Բարդանջ գեղջ Անձգա գաւառի:	Չ ունի.	(Գրեցաւ) «ի թագաւորութեան Հայոց Հեթումայ և ի Հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի»:
953.	Մայր Մաշտոց. ի թ. ձժգ. (1304). զրիչը՝ Ներսէս ոմն. ի վանս Աժանայ:	Ունի «կանոն նկարեալ եկեղեցիս օրհնել»:	
(497). մատ. Գ. կ.	Մայր Մաշտոց. ձկգ. (1314). զրիչը՝ Ներսէս. Սկեռայ վանքի առաջնորդ Պեհոցի Պոստանդին եպիսկոպոսի հրամանով. ուրեմն Պիլիկիայում:	Ունի «կանոն զնկարեալ եկեղեցի օրհնել»:	Բովանդակութիւնը. ա. «Հիմնարկէք» օրհնել. բ. «Եկեղեցի» օրհնել. գ. «Հանդերձեղէն և սպաս.» գ. «սկիհ և մաղղմայ.» և. «աւազան». զ. «նկարեալ եկեղեցի». է. «նոր դուռն» (եկեղեցոյ). ը. «պղղծեալ տաճարի». թ. «նորակերտ գիւղ». ժ. «ժամհար» (կոշնակ օրհնել). ժա. «խաչ». ժբ. «տեառնական» (մատաղ). ժգ. «աղ». ժդ. «ողեհանդիստ առնել». ժե. «սեղանոյ». ժզ. «հատի մարտիրոսի». ժէ. (կարգ) «միրաութեան». ժը. «հաղորդ տալոյ». ժթ. «աշխարհաթաղի». ի. «այգոյն աշխարհաթաղի». իս. «ապաշխարող առնել». իբ. «ա-

Համար ըստ քույրակի կարգի	Անուն, թուական, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնութիւն պատկերի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
952.	Մայր Մաշտոց: պճա (1432). գրիչը Գաւիթ կրօնաւոր. տեղի անունը եղծուած:	Ունի 1. «կանոն զնկարեալ եկեղեցի օրհնելոյ»: 2. «Վանոն փրկչական պատկեր օրհնելոյ»: 3. «Վան. զս. զԱստ.-ծնի պատկեր օրհնելոյ»:	պաշխարող արձակել). իգ. «ոտնալուսայ». իգ. «մոնողոն առնել». իե. «սարկաւազուհի առնել». իգ. «զարմոխ օրհնել». իէ. «խաչալուսայ առնել». իը. «չուր օրհնել». իթ. «պսակ առնել». լ. «պսակ վերացուցանել». լա. «վասն երաշտութեան». լբ. «վասն որ պիղծ կերակուր կերեալ իցէ». լգ. «որ ի կերակուր միայն պղծեալ իցէ». լդ. «վասն երդմնաճարաց». լե. «զնշխարս սրբոց ի հանգիստ փոխել». լզ. «խաղող օրհնել». լէ. «տղայաթաղ առնել». լը. սյգոյն գերեղմանի». լթ. «սարկաւազաթաղ առնել». խ. քահանայաթաղ առնել». խա. «սյգոյն քահանայաթաղի». խբ.—խէ. (երրորդ-ութեր. աւուրց). խը. «պղծեալ ջրհոր օրհնել»:
			Խրատի մէջ ասուած է. «խակ թէ ի յորմն նկարեալ իցէ, կամ ի յարկի, կամ ի յայլում պատուական տեղւոյ, արժան է զխրաքանչիւրսն զօրհնութիւնսն կատարել»:

Համար ըստ քույրակի կարգի	Անուն, թուական, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնութիւն պատկերի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
1011.	Մաշտոց, 1438. գրիչ Վարապետ արեղայ. ի գեղս, որ կոչի Վարդիսարան:	2 ունի պատկերի օրհնութիւն:	Ունի կանոններ՝ հիմնարկէրի և օրհնութեան եկեղեցւոյ, սկիհ, մաղղմայ, և այլն օրհնելու, ձեռնադրութեան, քահանայաթաղի և այլն:
979.	Մայր Մաշտոց: պճ. (1041). գրիչը Յոնի (Յոհան), տեղն անյայտ:	«Վանոննկարեալ եկեղեցի օրհնել»:	
986.	Մայր Մաշտոց: ջգ. (1454). գրիչը Վարապետ երէց. Վան քաղաք:	«Վանոննկարեալ եկեղեցի օրհնել»:	
996.	Առձեռն Մաշտոց. ջէ. (1458). գրիչն Յովհաննէս արեղայ, Այրիվանք:	2 ունի.	
945.	Մայր Մաշտոց. ջէ. (1458). գրիչն Յակոբ կր ն. Աղթամար:	«Վանոն զնրկարեալ եկեղեցի օրհնելոյ»:	Յածի տողում նոյն գրով գրած. «Զծաղկաց եկեղեցի օրհնել»:

Համար ըստ ցուցակի կա- րինանցից	Անուն, թուա- կան, զրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
498. Գ. կ. Գր.	Մաշտոց 1463. զրիչը Գրիգոր բաՏ. Աղթա- մար:	«Վանոն նկար- եալ եկեղեցի օրհնել»:	«Ի հայրապետութեան տեա- րն Չարարիայի»:
944.	Մայր Մաշ- տոց. 1473. զրիչը Խաչա- տուր ոմն. Ա- րարատեան գ. Ուրձ գիւղ:	Ունի կանոն ներ Փրկչական, Աստուածածնի և սրբոց պատ- կերներ օրհնե- լու:	«Ի հայրապետութեան տեա- րն Արիստակէսի»:
975.	Մայր Մաշ- տոց. ջիգ. (1477). զրիչը Գաբր. եպիսկ. Յովհաննու վանք:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	«Ի կաթողիկոսութեան տէր Յովհաննիսի»:
941.	Մայր Մաշ- տոց: ջլլ. (1487). զրիչն Աղարիա բաՏ. Սղգայոյ վանք (Վասպուրա- կան):	«Վանոն նկա- րեալ եկեղեցի օրհնել»:	Խրատի մէջ ասուած է. «Եւ տեառնագրէ մեռնաւն ղբոյր եկեղեցին»: Աղօթքը՝ «Սուրբ ես տէր»:
947.	Մայր Մաշ- տոց: ջխե. (1498). զրիչը Վանական վարդ. Չորե- վանք:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	

Համար ըստ ցուցակի կա- րինանցից	Անուն, թուա- կան, զրիչն և տեղը:	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
949.	Մայր Մաշ- տոց. ջՏԹ. (1530). զրիչն Յովհաննէս Ե- րէց. Արճեշ բաղ:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցիս օրհնել»:	«Ի հայրապետութեան տեա- րն Չարարիայի»:
959.	Մայր Մաշ- տոց. ջՃբ. (1533). զրիչն Յովսէփ աբե- ղայ. Լիմ անա- պատ.	2 ունի.	
942.	Մայր Մաշ- տոց. ջՃտ. (1534). զրիչն անյայտ. Չէյ- թուն:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնելոյ»:	«Ի կաթողիկոսութեան տեառն Յովհաննիսի»:
939.	Մաշտոց. ջցե. (1546). «Յով- հաննէս անուն տղէտ զրչի գործ». տեղն անյայտ: Մաշ- տոցս սկզբից թե- րի:	Ունի պատկե- րի օրհնու- թեան կանոն: «կանոն ըղ- սուրբ զաս- տուածածնին պատկեր օրհ- նել. լուանան նախ ջրով և ապա զինով» են: «Վանոն զա- մենայն սրբոց պատկեր օրհ- նել»:	Եպիսկոպոսի ձեռնադրու- թեան կանոնի մէջ (թերթ 289, ա. երես) ասուած է. «Արժամ կատարես ձեռնա- դրութիւնն ըստ կանոնական հրամանաց արասցես ըստ բա- րեկարգութեան եկեղեցւոյս Հոովմայ»: Յետոյ «Հոովմայ» բառը ջնջել են և ււելացրել «Հայաստանեայց»:

Համար ըստ ցուցակի կա- րինանցի:	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
963.	Մաշտոց. ոբ. (1553). գրիչն Յովհաննէս բաճ. տեղն ան- յայտ.	2 ունի.	
958.	Մաշտոց. ուս. (1562). գրիչը Վարա- պետ բաճ. յեր- կիրն Ղլա- թայ):	2 ունի.	
948.	Մայր Մաշ- տոց. ոբ. (1577). գրիչը Ներսէս բաճա- նայ. «Ի Բաղէշ բաղարի ի գիւ- ղն որ Վամախ կոչի»:	Գլ. իէ. «կա- նոն նաւակա- տեաց զնկա- րեալ եկեղեցի օրհնելոյ, զկեր- պագորութիւն սրբոց»:	Չնայելով վերնագրին՝ խրատն և աղօթքն «զնկա- րեալ եկեղեցի օրհնելոյ» են:
989.	Առձեռն Մաշ- տոց. ուլէ. (1588). գրիչը Գրիգոր դպիր. Ղարաղալայ գիւղ:	2 ունի.	
978.	Մաշտոց. ուս. (1597). գրիչը Յովհան- նէս երէց. տեղն անյայտ:	2 ունի.	

Համար ըստ ցուցակի կա- րինանցի:	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
974.	Մաշտոց. ոծ. (1601). գրիչը Գրիգոր ոմն. Վաֆայ (Թէո- դոսիայ):	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	
(502 Գ. կաթ.)	Առձեռն Մաշ- տոց. ոկա. (1602). գրիչն և տեղն ան- յայտ:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնելոյ»:	
957.	Մայր Մաշ- տոց. գրիչը Վա- րապետ բաճ. ստացողն Սա- հակ վարդապ. տեղն անյայտ:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնելոյ»:	
937.	Մայր Մաշ- տոց. ոծն. (1656). գրիչը Յովհան. բաճա- նայ. Յովհան- նավանք, Արա- ղածոտն դա- ւառ:	«Վանոն նկա- րեալ եկեղեցի օրհնել».....«Եւ տեառնագրէ մեռոնաւն զբո- լոր եկեղեցին. Ապա վասն ի վերուստ՝ ա- ղօթք՝ Սուրբ ես տէր»:	Գրիչն սկսել է գրել Աղ- բակեցի Փելիպպոս կաթողի- կոսի օրով և աւարտել է Յա- կոբ Զուղայեցու կաթողիկո- սութեան ժամանակ:
964.	Մաշտոց. ուծն. (1656). գրիչը Վեղեցի Մարկոս. (տե- ղը չէ նշանա կուած):	2 ունի.	

Համար ըստ ցուցակի կա- րինանցի	Անուն, թուա- կան, զրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
987.	Մայր Մաշ- տոց. ոճէ. (1658). զրիչը Վիրակոս երէց. նոր Զուղայ.	2 ունի.	
961.	Մաշտոց. ոճժե. (1666). զրիչն անյայտ. Կերջանի գա- ւառ. «ի գիւղս Բուլին»:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնելոյ»:	Խրատի մէջ ասուած է. «Եւ տեառնազրէ զպատկերս միայն մեռոնաւ»: Նախընթաց երկու օրինակներում «Եւ տեառնա- զրէ մեռոնաւն զբոլոր եկե- ղեցին»:
969.	Մաշտոց. ոճժը. (1669). զրիչն Անդրե- աս երէց. Բըզ- նունեաց Արծ- կէ բաղաբ:	2 ունի.	
981.	Առձեռն Մաշ- տոց. ոճիւ. (1672). զրիչն Աթանաս ոմն. Ղարս (Վարս) բաղ.	2 ունի.	
955.	Մայր Մաշ- տոց. ոճիէ. (1678). զրիչը Մխիթար ոմն, «ի յերկիրն Զաղամ, ի գիւղս որ կոչի Սուլղանեցիք»	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցիս օրհնել»:	

Համար ըստ ցուցակի կա- րինանցի	Անուն, թուա- կան, զրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
943.	Մաշտոց. 1689 թ. զրիչն Նփրեմ վարդ. տեղն անյայտ.	2 ունի.	
1029.	Մայր Մաշ- տոց. ոճիւ. (1693). զրիչը Մինաս քահա- նայ Աղբիանու Պօլիս.	Ունի «կան. փրկչական պատկեր օրհ- նելոյ. կան. ս. Աստուածածնի պատկեր օրհ- նելոյ. Վան. ամենայն սրբոց պատկերս օրհ- նելոյ»:	
988.	Մայր Մաշ- տոց. ոճժը. (1763). զրիչն և տեղն ան- յայտ:	«Վանոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»: «Վան. Փրկչ պատկ. օրհնե- լոյ»: Վան. ս. Աստ- ուածածնի պա- տկ. օրհնելոյ»: «Վան. ամե- նայն սրբոց պատկերս օրհ- նելոյ»:	
938.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան.	2 ունի.	

Համար ըստ ցուցակի կա- րենաճցի:	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
940.	Առձեռն Մաշ- տոց. 2 ունի յի- շատակարան:	«Այնոն զնը- կարեալ եկեղե- ղեցի օրհնել»:	
946.	Մայր Մաշ- տոց. չունի թուական. գրի- չըն Յովհաննէս արեղայ. տեղն անյայտ:	«Այնոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել». «Կան. փրկչա- կան պատկեր օրհնել Ս. Աս- տուածածնի պատկեր օրհն.» (մեռոնով օծու- մն):	
965.	Մայր Մաշ- տոց. անթուա- կան գրիչը Սի- մէն ուն.	2 ունի.	
966.	Մաշտոց. ան- թուական. գրի- չըն Յովհ. արե- ղայ:	2 ունի.	
967.	Մաշտոց. ան- թուական. գրի- չըն Յակոբ. Ե- րէց.	«Այնոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	
968.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	2 կ ա յ.	

Համար ըստ ցուցակի կա- րենաճցի:	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
969.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան: Ստացողն է Եւ- գոկիսյի առաջ- նորդ Պօղոս արքեպիսկո- պոս:	«Այնոն զսըր- բոց պատկեր օրհնելոյ, զՔրիստոսի և զԱստուածած- նին և զառա- քելոցն զՊետ- րոսի և զՊօղո- սին, կամ Յով- հաննու Մկրտ- չի կամ զսյլս ի մարտիրո- սաց, զորս զնո- սա ի սրբոց վկայարանս արժան է օրհ- նել զառաջեա- բեմին». (մեռոնով օ- ծումն):	Այս Մաշտոցն ունի թողա- կան կրօնաւորներից մէկի գրչութիւնը պիտի լինի. ըստ որում նորանուժ կան և այս- պիսի կանոններ և խրատներ— «Կանոն օրհնութեան ջրոյ, որ յամենայն կիրակի .քահանայն օրհնէ և ցանէ ի վերայ ժո- ղովրդեան»: «Այն. Հիւանդի ձէթ .րհ»: «Այն. երեխայի ձէթ օրհնել»: Իսկ մեռոն օրհնութեան կա- նոնի մէջ այսպիսի մի խրատ կայ. «պարտ է դիտել թէ Հոռմայ եկեղեցւոյն հրամանքն է ի վերայ ամենայն լատի- նացւոցն, որ մեռոնն զամ- նայն գլխաւոր է և միւս զա- տիկն զհինն այրեն ի կան- թեղս և նորն օրհնի»: Այս նաև «Կանոն Փրանք մոնողոն օրհնել»: Իսկ թա- ղաւորի օրհնութեան «կար- գաւորութիւնն» «ըստ մեծի եկեղեցւոյն Հոռմայ»:
970.	Մայր Մաշ- տոց. անթուա- կան. գրիչն Աս- տուածասուր ուն.	«Այնոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	
971.	Առձեռն Մաշ- տոց. անթուա- կան. գրիչն	2 ունի.	

Համար քամ ցուցակի ա- րինանցի	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
	Աղամալ Ջու- ղայեցի:		
972.	Առձեռն Մաշ- տոց. շունի յի- շատակարան:	2 ունի.	
973.	Առձեռն Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	«Անոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	
977.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	2 ունի.	
980.	Առձեռն Մաշ- տոց. անթուա- կան. գրիչն Ստեփաննոս գպիր.	2 ունի.	«Ի հայրապետութեան տեա- ռըն նորոճեալ Տէր Յակով- բին»:
990.	Առձեռն Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	2 ունի.	
991.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	2 ունի.	Վերջին ստացողի թիւը ոճե.
995.	Մաշտոց. չու- նի յիշատակա- րան:	Ունի պատ- կերների օրհ- նութեան կա- նոններ:	Երևում է թարգմանու- թիւն. պարունակում է հո- մեական եկեղեցու կարգեր:

Համար քամ ցուցակի ա- րինանցի	Անուն, թուա- կան, գրիչն և տեղը.	Ունի՞ օրհնու- թիւն պատկե- րի.	Գ Ի Տ Ե Լ Ի Ք
1066.	Մայր Մաշ- տոց. չունի յի- շատակարան:	«Անոն զնը- կարեալ եկեղե- ցի օրհնել»:	Մաշտոցի աղօթքը նկա- րեալ եկեղեցու օրհնութեան կանոնն ունեցող Մաշտոցնե- րի աղօթքից տարբեր նախա- դասութիւն է պարունակում, որը կտեսնենք իւր տեղում:
—	Մաշտոց (մեր գրատան ձե- ռագիր). թուա- կան ոճժէ. (1668). գրիչը Վարդան քա- հանայ. կարին քաղաք:	Ունի «կանոն զնկարեալ ե- կեղեցի օրհնե- լոյ»:	

Վերոկարգեալ 59 ձեռագիրների նկատառման հետեւեալ արդիւնքն ենք զտնուծ. 1. մինչև ժէ. դարի կէսը Հայոց եկեղեցու ծիսարանում պատկերների օրհնութեան կարգ չէ երեւում. Իսկ պատկերները ս. մեռնոյ օծելու սովորութիւնը մուտք է գտել աւելի ուշ: Առաջին անգամ օծումն չիշատակող Մայր Մաշտոցը (թուահամար 988) 1763 թուականի զրչութիւն է:

2. Թէև 1432 թուին զրած Մայր Մաշտոցում երևում է տէրունական և սրբոց պատկերների օրհնութեան կարգ կամ կանոն, բայց զարծեալ այդ թուականից յետոյ զրուած Մայր Մաշտոցի 21 և Առձեռն կամ Համառօտ Մաշտոցի 25 օրինակներ չունեն այդ օրհնութեան կարգը. իսկ ունեցողներն են միայն Մայր Մաշտոցի 6 օրինակներ և Առձեռն Մաշտոցի 2 օրինակ. զորանցից էլ մի Մայր Մաշտոց և մի Առձեռն Հայ եկեղեցու ծիսարաններ կոչուել չեն կարող<sup>30</sup>): 3. պատկերների առանձին օրհնութիւնից վաղ (1304 թ.) երևում է «նկարեալ եկեղեցի օրհնելու» կարգը. բայց որովհետև բոլոր եկեղեցիներն էլ նկարադարձելու կամ ինչպէս ասում է 1458 թուի Մայր Մաշտոցի ներքևի աղյի ծանօթութիւնը՝ «ճաղկեցնելու» սովորութիւնը պարտադիր պահանջ չլինելուց դատաւ շատ սակաւ է զործադրուել, ուստի և այդ օրհնութեան կարգն էլ երևում է 58 օրինակներից միայն Մայր Մաշտոցի 17 և Առձեռն Մաշտոցի 8 օրինակներում:

Ձեռագիրներից յետոյ պիտի տեսնել տպագիրները:

Մաշտոցի առաջին տպագրութիւնը կատարուել է «ի տպարանի սրբոյ էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարին ծախիւք և սրբադրութեամբ Ոսկանայ Վարդապետի և Արքի Եպիսկոպոսի Երևանեցւոյ. ի յՍ.մասէլօղամի (Ս.մատերղամ) ի թւոյ փրկչին 1667. իսկ ըստ Հայոց 1116»: Վերնագիրն է «զիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի. Արարողութիւնք հանապազօրգեան եկեղեցեաց հայաստանեայց: Պարունակութեանց զլիաւորաց խորհրդունակ սրբազնագործութեանց, և այլոց մասնաւորաց պաշտամանց հաւատացելոց ի հնագունից հարցն սրբոց առ ի լրումն հոգեկանին հարկաւորութեան, և

մարմնակարին (կանին) պիտանացութեան. սահմանադրեցեալ օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ»: Ոսկանի Մաշտոցը բովանդակում է կանոններ-չուր օրհնելու (Ջրօրհնէք Յայտնութեան տօնի), եկեղեցական խորհուրդների կատարման, ննչեցելոց թաղման, Ոտնալուաչի արարողութեան, «Ջապաշխարոզսն արծակելոյ», «խաղող օրհնելոյ ի տօնի վերափոխման սրբուհւոյ Աստուածածնին, և սրբոյ խաչին», «ժամահար օրհնելոյ. այսինքն Ջանգակ և Կոչնակ», «խաչալուաչ առնելայ», «օրհնութիւն աղի», «ճանդերձեղէն օրհնել», «Սկիհ և զմաղղման օրհնել», «նոր դիրք օրհնել», «խունկ օրհնել», «նաւակատեաց տանարի ի պղծեալ տանարի», «Ջարմախ սերմանց, զշեղչ և զհնձան օրհնելոյ», «Օրհնութեան սեղանոյ Տեառնականի և Պատարապի», «ճնձան օրհնելոյ», «Աղօթք վասն երաշախի»:

Պատկերի օրհնութեան կամ օծման կանոն չկայ:

Թէ այս վերջին կանոնը երբ է մտել տպագրուած Մաշտոցների մէջ՝ կիսօտնք ուրիշ անգամ:

Այժմ վերադառնանք պատմական վկայութիւններին և հեղինակների կարծիքներին:

Ա. Վահան Կաթողիկոս: 965 թուին Կաթողիկոս է ընտրուում սիւնեաց «Ջուանշիր իշխանի որդին Վահան արքեպիսկոպոս, որ հինգ տարուց յետոյ զահրնկէց է լինում և «փախչում է Վասպուրական: Այդ անցքի և նորա պատճառի «մասին Հայ պատմիչները զրում են.—Ս. Ստեփաննոս Աստղիկ. «Եկաց Կաթողիկոս Վահանիկն ի Բաղաց զաւառէ... «Սա ընդ քաղկեդոնական սիրելութիւն և հաճութիւն կամ «մեցաւ առնել թղթովք: Յորոյ վերայ ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի քաղաքն Անուոյ,—Տէր Խաչիկ Արշարունեաց «եպիսկոպոս և հայր Պողիկարպոս առաջնորդ Կամրջածորոյ, «և հայրն Սարգիս հռոմոսի վանաց վանական և հայր Ստեփանոս Սեւանայ վանաց վանական, և այլ եպիսկոպոսունք «և հարք բազումք: Իսկ Վահանիկն փախստեալ անկանի ի «Վասպուրական առ Ապուսահյ թաղաւոր... Իսկ ժողովն «կամակցութեամբ Աշոտոյ Շահանշահի կաթողիկոս հաստա-

«տեաց Հայոց զՍտեփանոս վանական Սեանայ: Եւ յերկունց  
«կողմանց նդովիւք լցին զաշխարհս Հայոց» \*).

Բ. Սամուէլ երէց Անեցի. «Յեա մահուան Տեառն Անա-  
«նիայի՛ կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի տէր Վահան ի բա-  
«ղաց: Սա դաշնադիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ.  
«վասնորոյ ժողովեալք յամուրն Անի ի թագաւորութեան Աշո-  
«տոյ որդւոյ Սմբատայ բազում եպիսկոպոսաց և խաչակրօն  
«վանականաց, որք ծանուցեալ հաւաստեալ գինքնուած կորրս-  
«տեան մտաց նորա, զի ետ բերել պատկերս վասն նորոգման  
«աղանդոյն Քաղկեդոնի. և որոշեալ զնա հալածական արարին:  
«Եւ միաբանեալք նստուցին յաթոռ սրբոյն Լուսաւորչին զԼս-  
«տեպաննոս... Իսկ վասն զի Վահանիկն կենդանի էր ի Վաս-  
«պուրական ի Զորափանք, հաւանեցոյց զոմանս ի պարզա-  
«մբտաց՝ սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձուածոյն: Եւ  
«վասն այնորիկ զմիջոց Հայաստան աշխարհիս լցին նդովիւք» \*\*):

Գ. Վարդան վարդապետ. «Ակնի սորա (Սեանիայի) էառ  
«զաթոռն Վահան... որ և ապա կարծիս առեալ, եթէ դաշ-  
«նադիր է Վրաց, և պատկերս ետ ածել, վասնորոյ փոխեն  
«զնա» \*\*\*):

Դ. Կիրակոս Գանձակեցի. «Տէր Վահան ի Բաղաց... Սա  
«դաշնադիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ. վասն-  
«որոյ ժողովեալ յամուրն Անի ի թագաւորութեանն Աշո-  
«տոյ որդւոյ Սբասայ բազում եպիսկոպոսաց և խաչակրօն  
«վանականաց, որք ծանուցեալ հաւաստեալ գինքնուած կո-  
«րրստական մտաց նորա, զի ետ բերել պատկերս վասն նո-  
«րոգման աղանդոյն Քաղկեդոնի. և որոշեալ զնա հալածական  
«արարին. և միաբանեալ նստուցին յաթոռ Լուսաւորչին  
«զՍտեփաննոս... Բաց քանզի Վահանիկն կենդանի էր ի Վաս-  
«պուրական, հաւանեցոյց զոմանս ի պարզամտաց՝ սուտ ըզ-  
«նմանէ կարծել զհամբաւ հերձուածոյ. և վասն այնորիկ զմի-  
«ջոց աշխարհիս Հայոց լցին նդովիւք» \*\*\*):

\*) Պատմ. Տիեզ. 181.

\*\*) Սամուէլ Անեցոյ Հաւարմունք ի գրոց Պատմ. 100—101.

\*\*\*) Պատմ. 89.

\*\*\*\*) Պատմ. 48—49.

Ե. Ստեփաննոս արքեպ. Օրբելեան (ժդ. դար.) (Վահան)  
«կեցեալ ամ մի՛ սկսաւ պատկերս բերել ի Վրաց և դնէր ի  
«վերայ սեղանոյն, և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առ-  
«նել, ըստ հոռոմոց սահմանին կաւնիւք զարդարել և առանց  
«կաւնի (կօն, իկօն) ոչ առնել պատարագ. վասնորոյ կար-  
«ծիս իմն առեալ ամենեցունց եթէ դաշնադիր է ընդ Յոյնս  
«և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին  
«առ թագաւորն, և նա հրաման տայր ժողովոյ յԱնի քաղաքի  
«զի քննեցեն զարժանն: Իմացեալ զայն Վահանայ ոչ եկաց  
«ի ժողովն, այլ ել զնաց յաշխարհն Վասպուրական առ Հա-  
«մազասպ որդի Գաղկայ թագաւորի և հաւանեցոյց զնա ին-  
«քեան, և զրպարտեալ ասէ զինքն ի նախանձաւոր արանց,  
«և բնակեցաւ ի վանսն, որ կոչի Զորոյ վանք: Իսկ նորա,  
«որ յԱնի ժողովեցան, իբրև գիտացին զերթն նորա, ապա  
«հրամանաւ Աշոտոյ թագաւորի կարգեցին ի տեղի նորա զայլ  
«ոմն կաթողիկոս և լուծին զՎահան» \*):

(Վահանը) մնալով մի տարի՝ պատկեր բերել տուեց Վրաս-  
տանից և զնուծ էր սեղանի վերայ, և հրամայուծ էր նոյնն  
անել բոլոր եկեղեցիներուծ, հոռոմների նման պատկերներով  
զարդարել և առանց պատկերի (անպատկեր սեղանի վերայ)  
պատարագ չմատուցանել. վասնորոյ ամենքն էլ կարծիք տա-  
նելով՝ թէ նա Յոյների հետ դաշնադիր է եղել և կամենուծ  
է նորանց աղանդը մուծանել եկեղեցու մէջ՝ բողոքեցին թա-  
գաւորին և նա հրաման տուեց, որ Անի քաղաքուծ ժողով  
լինի և գործը քննեն ինչպէս պէտք է: Վահանն այս իմանա-  
լով՝ չսպասեց ժողովին, այլ վեր կացաւ զնաց Վասպուրա-  
կան աշխարհը Գաղիկ թագաւորի համազասպ որդու մօտ, և  
նորան դարձրեց իրան կողմնակից, ներկայացնելով իրան չա-  
րանախանձ մարդկանցից զրպարտուած. և բնակեց Զորոյ վան-  
քուծ: Իսկ Անի քաղաքուծ ժողովուածներն երբ որ լսեցին  
նորա զնալն՝ Աշոտ թագաւորի հրամանով նորա տեղը կար-  
գեցին կաթողիկոս մի ուրիշին և Վահանին զահրնկէց յայ-  
տարարեցին):

\*) Պատմ. Սիւննաց. Փարիզ. հատ. Բ. 32:

2. Յայտնաւորք. Մարերի ի. և մայիսի իէ: Գնելով «Յի-  
շատակ Աշոտոյ Բագրատունոյ հայոց թագաւորի» և նորա  
բարեպաշտական գործերը համառօտ պատմելուց չետոյ՝ անց-  
նում է վերոյիշեալ յուզմանն, որ տեղի ունեցաւ նորա թա-  
գաւորութեան օրով. «Եւ յետ Անանիայի եղաւ տէրն Վա-  
«հան, ի Բաղաց, որ դաշնագիր եղև ընդ Վիրս միաբան դա-  
«ւանութեամբ: Վասնորոյ ժողովեաց Աշոտն Ողորմած, որդին  
«Աբասայ, յԱնի բաղում եպիսկոպոսունս և վարդապետս և  
«խստակրօն վանական արեղայ (ս): Որք ծանուցեալ զիտա-  
«ցին զհերձուած կորստական մտացն Վահանայ, զի ետ բե-  
«րել զպատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի. և  
«նզովեալ զՎահան հալածեցին և եղին յաթոռ սուրբ Լու-  
«սաւորչին զտէր ըստեփաննոսն... որ եկաց յաթոռն ամս  
«երկու»:

Նորանք, որոնք ընդունում են թէ պատկերչարգութիւնը  
զոյութիւն է ունեցել չաչերի մէջ, Վահանի դատապարտուե-  
լու և դահրնկէջ լինելու եղելութիւնը վերագրում են ուրիշ  
պատճառի և ոչ պատկերի գործադրութեան: Ընթերցողներն  
արդէն ծանօթ են Մ. Վ. Չամչեանի և Պրօֆ. Մառի բացա-  
տրութիւններին. այժմ չառաջ կբերենք ուրիշներին: Կ. Վ.  
Շահնազարեանցը Պարիզում 1859 թուին լուս է ընծայել Սա-  
եպիսկ. Օրբելեանի պատմութիւնը՝ նոխացրած ծանօթու-  
թիւններով: Այնտեղ, ուր պատմիչն ասում է թէ Վահանն  
«սկսաւ պատկերս բերել ի Վրաց և դնէր ի վերայ սեղանոյն  
և հրամայէր յամենայն եկեղեցիս... կաւնիւք զարդարել և ա-  
ռանց կաւնի ոչ առնել պատարագ, հրատարակիչը դնում է  
հետեւեալ ծանօթութիւնը. «Կիրառութիւն պատկերաց առ  
«չայս կանուխ էր քան զկաթողիկոսութիւն Վահանայ. ուս-  
«տի և անտեղի համարել պատճառ արսորման նորին զպատ-  
«կերս: Զօրէն Օրբելեանի մթին են և այլ պատմադիրք ազ-  
«դիս ի խօսելն զՎահանայ, որ թերևս ոչ զիկօնս, այլ զի-  
«կօնաստաս (խաչկալ) Յունաց կամեցաւ մուծանել չեկեղեցի  
«մեր և միաբանութիւն հաւատոյ առնել ընդ նոսա, վասն-  
«որոյ և անկաւ»: Սամուէլ Անեցի ասէ զնմանէ. «սա դաշ-

«նաղիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ» և Կիրա-  
«կոս Գանձակեցի զնոյն կրկնէ»:

Ստեփաննոս Օրբելեանը սովորութիւն ունի պատմու-  
թեան ընթացքում զտնադան յունական բառեր գործածելու,  
որոնցից մէկն էլ և կաւն բառն է փոխանակ հայերէն պատ-  
կեր գործածելու: Այսուամենայնիւ այդ մի օտարազգի բառը  
չէ կարող մթնացնել խօսքի իմաստն, որովհետև նորանից յա-  
ռաջ ուրիշներն են ասել, թէ պատկեր բերել տուեց: Վերջա-  
պէս հրատարակիչը պիտի ուշադրութիւն դարձրած լինէր,  
որ ինքն Օրբելեանն էլ չետոյ, Անաւարդեցուն զրած նամա-  
կում չիշելով Վահանի անցքը՝ ասում է թէ պատկեր մրա-  
ցրեց: Բայց Շահնազարեանցի բացատրութիւնն անհիմն է և  
ուրիշ կողմից: «Պէտք է սակաչն նկատել, ասում է պրօֆ.  
Ն. Մառն այդ նոյն բացատրութեան առիթով, թէ յունա-  
կան իկոնաստասն, որն ի նկատի ունի հայ ուսումնականը,  
յունական եկեղեցու համար էլ չետնադոյն ժամանակի նորա-  
մուծութիւն է ինչպէս բուն Յունաստանում, նոյնպէս Վրաս-  
տանում և Ռուսաստանում» \*):

Շահնազարեանցի շատ չառաջ «իկօնն» իկոնաստաս հա-  
մարողն, ինչպէս երևում է, եղել է Կղեմէս Գալանոսը: Սա  
թէև իւր «Միաբանութիւն հայոց ս. եկեղեցւոյն ընդ մեծի  
ս. եկեղեցւոյն հռովմայ» զրուածքի առաջին հատորի 284-5  
երեսում ասում է. «Զսա (Վահանին) փախստական արարեալ  
«վասն կարծեաց դաւանութեան ժողովոյն Քաղկեդոնի և վասն  
«պատկերս մուծանելոյ չեկեղեցի և ի սեղանն սուրբ», իսկ  
«մի ուրիշ տեղ էլ «Ուղղափառք չարք և վարդապետք հայոց»  
«զլխում. «Վահան կաթողիկոս, որ վասն երկրպագութեան  
«սրբոց պատկերացն և վասն դաւանութեան Քաղկեդոնի ժո-  
«ղովոյն հալածեցաւ ի հերձուածողաց» (եր. 152—3), բայց  
Բրոսսէ՛ն մատնացոյց անելով նորա՝ Պարիզում հրատարա-  
կուած մի աշխատութեան (Hist. Armena) Բ. հատ. 277  
երեսն՝ ասում է, թէ նա «իրաւունք ունի Վահանի դէմ ե-  
«ղած դժգոհութեան պատճառը սնտի համարելու. նա կար-

\*) Новые Матер. по Арм. Энциклопедия, С. II. Б. 1893, 86:

«ծուճ է, թէ կաթողիկոսն ոչ թէ պատկերներ, այլ դուցէ խաչկալներ է կամեցել մտցնել (եկեղեցիներում) չունական սովորութեան համաձայն, փոխանակ հայկական պարզ վարագուրի, որ ժամարարին բաժանում է ժողովրդից: Գիտենք թէ որպիսի ազմուկի պատճառ է լինում (թէկուղ) շատ թեթեւ նորամուծութիւնն էլ, ինչպէս վարդապետութիւնների և հրահանգների, նոյնպէս և ծէսերի խնդրում: Ինչ որ յայտնի երևում է այն ցուցմունքներից, ինչ որ տալիս են կամ ժամանակակից պատմիչներն, ինչպէս Ասողիկը. կամ ժամանակով մերձաւորներն, ինչպէս Սամուէլ Անեցի, Մատթէոս Եղեւսացի. կամ հեռաւորներն, ինչպէս Կիրակոս, Վարդան, Ներսէս Լամբրոնացի և ուրիշներն,—այն է, որ Վահանն երևում է հակուած Գաղկեղոնի վարդապետութիւնների կողմն. և բերել է տալիս կամ Վրաստանից կամ Յունաստանից, այդ երկիրներում պատրաստուած ս. պատկերներ. իսկ չայերը մերժում էին այդ պատկերներն, ատելով «նորանց նկարողներին» \*):

Վերջին ենթադրութիւնը Բրոսսէն առած է դուցէ Վարդանի պատմութեան Վենետիկ հրատարակութեան 89 երեսի 3 ծանօթութիւնից, որ ասում է. «Ոչ առ պատկերսն բերի հակառակութիւնդ, այլ առ ի վրաց անտի բերումն»:

Կայ և մի պատմիչ ևս, որ խօսում է Վահան Կաթողիկոսի մասին, — Մատթէոս Ուռհայեցին կամ Եղեւսացին (Ժբ. Կար.), որին թողեցինք այժմ չիշելու առանձին, ըստ որում իւր խօսքերով նա միանգամայն տարբերում է միւսներէր: Սա ոչ Վահանի պատկեր բերել տալն է չիշում, ոչ նորա գէճ կազմուած չուզմունքն ու ժողովն, և ոչ գահընկէցութիւնը. այլ անուանելով նորան սուրբ և ամենից լաւ մարդ՝ ասում է, թէ հինգ տարի հայրապետական զահի վերայ նստելուց չետոյ նորա սեղր ձեռնադրեցին Ստեփաննոսին, բայց Վահանի իրան հրամանով և օրհնութիւնով: «Ձեռնադրեցին... զլաւն «ի բնաւիցս զերանելին զՎահան... մեռանէր սուրբ հայրա-

\*) Histoire de la Siounie 166—167.

պետն չայոց Վահան, կացեալ զամս հինգ ի յաթոս սրբոյն Գրիգորի. և ձեռնադրեցին յաթոս կաթողիկոսութեանն չայոց զտէր Ստեփաննոս՝ զայր աստուածազգեաց... նստուցանեն զնա հայրապետ չայոց հրամանաւ և օրհնութեամբ անուն «Վահանայ» \*):

Յայտնի բան է, եթէ չլինէին վերջին խօսքերը, Ուռհայեցու վարմունքը կարելի էր բացատրել նորանով թէ երևի, համոզմունքով լինելով Վահանի կրօնական հայեացքներին համակրող, ընդունել է նորան սուրբ և ամենից լաւ մարդն, և չէ կամեցել ուրիշներին հետևելով մեղադրելի ցոյց տալ նորա արածը: Բայց կազ փաստի կամ իրողութեան ազաւազումն.— Ստեփաննոսը կաթողիկոսացել է Վահանի հրամանով և օրհնութեամբ: Արդեօք Ուռհայեցու ազնուամտութիւնը կասկածի ենթարկել— քանի որ չենք կարող նորան համարել տղէտ այն ամենին, ինչ որ կատարուել է. թէ ենթադրել, որ հաւանօրէն օտար ձեռք է դիպել նորա զրածին:

3. Խաչիկ Ա. կաթողիկոս (Ժ. դար): Չայրապետիս ժամանակակից Սեբաստիայի մետրապօլիտը չայոց եկեղեցու կատաղի թշնամիներից մէկը լինելով սկսում է մի շարք արմարդի խստութիւններ զորձ դնել Սեբաստիայի չայերի գէճ, նորանց կրօնափոխ անելու նպատակով: Ասողիկը համառօտակի, միքանի տողերով զաղափար է կազմել տալիս այդ խստութիւնների մասին. «Եւ կանացի հովիւքն և մետրապօլիտն Սեբաստիոյ սկսան նեղել զազն չայոց վասն հաւատոյ. և զբռնութիւն ի ձեռն անեալ՝ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ, և զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն «թաղաւորին: Եւ ի բանդի շարչարեալ զաւապն երիցանցն «գԳաբրիէլ սպանին, զի էր այր ծեր և իմաստիւր լի և քաջապինդ ի հաւատս աստուածեղէնս: Այս եղև ի Նլէ (986) «թուականին: Իսկ այլք յաննշան քահանայիցն և երկու եպիսկոպոսուներ Սեբաստիոյ և Լառիսոյ, Սիօն և Յովհաննէս,

\*) Պատմ. Մատթ. Ուռհ. 40—42.

«ի ձեռն նոյն մետրապօլիտին ընկալան զժողովն Գաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենէն Հայոց: Եւ յայնմհետէ «արդելին զժամածայն Հայոց ի քաղաքէն՝ Սերաստիոյ... Եւ «ապա մետրապօլիտն այն և այլ մետրապօլիտք սկսան «թուղթս մեծամեծս զրել առ տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս»: \*)

Կաթողիկոսն սկզբում այդ «մեծամեծ թղթերն» իրանց նախատական և դռնողամիտ ոճի ու բովանդակութեան պատճառով արհամարհանքի միայն տալով՝ վերջում ստիպուած է լինում մէկին պատասխանել (բացի Մելիքի մետրապօլիտին դրածից): Այդ պատասխանն որ կաղմուած է կաթողիկոսի և ուրիշ եկեղեցականների մասնակցութեամբ, և ըստ Ասողիկի՝ «քաջակորով իմաստիւք», ուշադրութեան արժանի է թէ բարեկիրթ և հեղահամբոյր ոճի և թէ լրջմտութեան կողմից, թուղթն սկսում է հետեւեալ խօսքերով:

«Աստուածային վեհադոյն քան զմիտս, երկնածիր և անբաղդադելի խաղաղութեանն արժանացեալ բանականքս ի «ճաղման բանին Աստուծոյ, և նմին չարատեւեալքս յոյժ զբժուարիմք ընդ խռովութիւն, ոչ միայն ընդ մեծադոյն իրի՝ «այլ և ընդ դուզնաքեայ ինչ խնդիր, մանաւանդ որ առաւել ի թշնամութիւն ածէ ըստ հաւատոցն բաժանման բան, «որ աչժմ ի զրեալս ձեր ծանեաք, ով պատուական զլուխ «եպիսկոպոսաց և մետրապօլիտ մեծի վիհակիր Սերաստիոյ: «Բայց քանզի սաստելն ոչ է մեծ, զիւրին է և յոյժ վատթարագուճացն, որպէս ասէ Գրիգոր Նանծիանծու, բայց ցածութեան և զգաստութեան բանս բարբառել է արանց իմաստասիրաց և կատարելոց՝ վասն այսորիկ և մեր ոչ թրշնամութեան բանս հակառակ թշնամանացն ձերոց զրեմք. «զի ոչ մեր և ոչ եկեղեցիքն Աստուծոյ ունիմք այնպիսի սովորութիւն, որպէս ասէ Պօղոս երանելին»:

«Արդ քանզի ի սկիզբն թղթոյս ձերոյ և զկնի բաղում «անգամ եռեաթիկոս զմեզ չեղանակեալ էիք... Սակս այսորիկ «և մեր գհաւատոյս մերոյ զբարեպաշտութիւն յայտնի քա-

\*) Պատմ. տիեզ. 201—202.

«րողեմք և զրեմք ի նամակի աստ»: Այդ բարեպաշտութիւնն (ուղղափառութիւնն) ապացուցանող ընդարձակ պատասխանի մէջ մտնում է և մետրապօլիտ հերետիկոսական կարծուած կէտերից մէկի—պատկերներ չընդունելու մասին բացատրութիւնն, որ հետեւեալն է. «Չտէրունեան և զաստուածախառն մարմին և զաստուածացեալ ծառայական և արարածական բնութիւն օտարացուցանէք ի բանէն, և զքանդակեալն կամ զզրեալ պատկերն ի նիւթս ոմանս՝ պաշտէք «աստուածարելաբար այնքան բաղմութեամբ և պաշտօնասիրութեամբ, մինչ զի և չանձանօթս և որք ոչ են մեղ՝ չանուն եկեալ ձգիք, զի իւրաքանչիւր որ առանձին է քուրմ «և տօն. և յանախադոյն ընդ նիւթ գալով աղիտաց՝ ոչ է «զգուշագոյն: Եւ յայտ առնէ Աստուածաբանն յաստուածաբանութեան հառին: Են ոմանք, ասէ, որք պատկեր սիրելեաց «ցըն արարին. և որք զկնի եկին, անղիտացան զպատճառն «և սովորութիւն կալեալ՝ Աստուած պաշտեցին, վասնորոյ «Մովսէս խրատէ օրինօքն զԻսրայել, թէ «Մի՛ արասցես նր՝ «մանութիւն ինչ և պատկեր. և չերկրորդ օրէնսն խրատէ, «թէ «Յորժամ երեւցաւ Աստուած՝ նմանութիւն ինչ ոչ տեսար. և զհրեշտակաց լինելութիւնէ ինչ ոչ հառեաց վասն «նորին պատճառի: Եւ հրեշտակք որդի և պատկեր Աստուծոյ ոչ կոչեցան իբրև զմարդ չաղազս սորին խորհրդոյ, զի «մի՛ ի բաղում պաշտամանցն մոլորութիւն լինիցի ի մարդիկ»: Իսկ եթէ ի Պեննաղայ քաղաքի, ի խառնուրդս Յար «և Դան աղբերացն Յորդանանու զարարեալ պատկեր Փրկչին ի տեռատես կնոջէն չիշեցէս՝ նոյն, որ պատմեաց ըզպատմութիւնն զայն՝ Եւսերի չեկեղեցական շարածին ասէ, «եթէ «Չեն ինչ զարմանք, զի հեթանոսաբարոյ մարդիկ ըստ «հեթանոսական սովորութեանն արարին զայն»: Եւ եթէ ասիցես զանձնազործ պատկերն, զոր Փրկչին Աբղարու շնորհեաց՝ մեղ ոչ մարթի ձեռագործի օրինակ առնուլ, որպէս և «ոչ փոխանակ անեղին Աստուծոյ եղական Աստուած: Այլ «փառաւորեմք և երկրպագեմք զանեղն Աստուած և զանձնազործ պատկեր Փրկչին»:

(Բանականներս՝ Աստուծոյ Բանի ծագմամբ արժանացած լինելով մարից շատ բարձր կանգնած աստուածային, երկնապարզ և անհամեմատելի խաղաղութեանն, և նորան միշտ հետեւած լինելով՝ շատ դարձում ենք խռովութիւնից, թէ մեծագոյն բանի համար լինի այն և թէ չնչին խնդրի. մանաւանդ՝ երբ առաւել թշնամութիւն ցոյց տուողը հաւատի բաժանման մասին եղած խօսքն է, ինչպէս այժմ ճանաչեցինք ձեր գրուածում, «ով պատուական դուրս ելիսկոպոսների և Սերաստիայի մեծ վինակի մետրապօլիտ»։ Բայց որովհետև սաստելը մեծ բան չէ, այլ դիւրին է նոյն իսկ ամենից վատթարների համար էլ, ինչպէս ասում է Նաղիանդացի Գրիգորըն. իսկ խոնարհօրէն և զգաստութեամբ խօսելն է իմաստուն և կատարեալ մարդկանց (գործ), ուստի մենք ձեր թշնամանքների փոխարէն թշնամական խօսքերով չենք պատասխանում, բարորում ոչ մենք ունենք այդպիսի սովորութիւն և ոչ Աստուծոյ եկեղեցիներն, ինչպէս ասում է Պօղոս երանելին։ Արդ՝ որովհետև ձեր թղթի սկզբումն էլ, չետոյ էլ շատ անգամ մեզ հերետիկոս էիք անուանել... վասնորոյ մենք էլ մեր հաւատի բարեպաշտութիւնն չայտնի քարոզում ենք և գրում այս նամակում... Տէրունեան և աստուածախառն մարմինն և աստուածացած ժառայական և արարածական բնութիւնը Բանիցն օտարացնում էք, և մի քանի նիւթերի վերայ քանդակուած կամ նկարուած պատկերներն աստուածացրած պաշտում էք այնքան բազմութեամբ և պաշտօնասիրութեամբ, որ մինչև անգամ պաշտամունքի էք առնում անձանթներին և անունով մեզ անյայտ եղածներին էլ. այնպէս որ ամեն մէկն և բոլրմ է և տօն. և շատ անգամ տգէտներն անզգուշարար նիւթն են պաշտում։ Աստուածաբանն էլ աստուածաբանութեան հառի մէջ ասում է. «Եզան ոմանք, որ իրանց սիրելիների չիշատակին պատկեր յօրինեցին, իսկ չետոյ եկողները պատնառը չգիտենալով՝ նոյնն իբրև Աստուած պաշտելու սովորութիւն արեցին»։ Դորա համար է, որ Մովսէսը պատուիրանքովը խրատում է Իսրայէլին թէ «Որև է նմանութիւն և պատկեր չիւնես»։ Երկրորդ

օրէնքումն էլ խրատում է թէ «Երբ որ Աստուած երևեցաւ՝ որևէ նմանութիւն չտեսանք»։ Նոյն պատնառով նա հրեշտակների լինելութեան մասին էլ բան չգրեց։ Միևնոյն նպատակովն է, որ հրեշտակներն Աստուծոյ որդի չկոչուեցին, ինչպէս մարդը. որպէս զի շատ պաշտամունքները մարդկանց մոլորութեան պատնառ չլինեն։ Իսկ եթէ օրինակ կբերես Փրկչի այն պատկերն, որը տեւատես կինը շինեց Պեննադա քաղաքում, Եւսեբիոսն, որ այդ պատմութիւնը պատմել է, ինքն էլ եկեղեցական պատմութեան մէջ ասում է թէ՛ պէտք չէ դարձանալ, որ հեթանոսաբարոյ մարդիկ այդ արեցին հեթանոսական սովորութեամբ։ Եւ եթէ չիշես Փրկչի անձեռագործ պատկերն, որը շնորհեց Աբդարին, մենք չենք կարող անձեռագործը ձեռագործի օրինակ առնել, ինչպէս չենք կարող անստեղծ Աստուծու փոխանակ արարած Աստուած ընդունել։ Այլ փառաւորում և երկրպագում ենք անեղ Աստուծուն և Փրկչի անձեռագործ պատկերին)։

4. Անանիա Վ. Սանահնեցի (Ժա. դար). Թողել է զանազան գրուածներ, որոնցից մէկը կրում է այս վերնագիրը. «Անանիայի վարդապետի հայոց՝ բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր զբեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի»։ Գրքի նիւթը հայոց և Յունաց մէջ վինաբանութեան առիթ տուող կրօնական խնդիրներն են, որոնցից մէկն էլ հայոց եկեղեցու պատկերներ չչարգելն է, որի համար Յոյները նոյնպէս չէին դադարում հայերին մեղադրելուց։ Սանահնեցու այդ գրքի մի օրինակն, որ գրուած է թղթի վերայ նօսր գրով, և չունի թուական, սուրբ էջմիածնի մատենադարանի ձեռագիրների 518 թուահամարն է կրում, որից և բերում ենք հեղինակի դրածը պատկերչար-«գութեան մասին. «Կարծեալ ասացից սուղ ինչբան չաղազս «պատկերապաշտաման պատկերաց, թէ՛ ուստի՞ ընկալեալ զայդ «պիսի պաշտօն. ոչ ահա սկիզբն կռապաշտութեան դոյն իսկ «եղև. զի զառաջինն ոչ վասն պաշտաման ստեղծին այլ վաստի «սըն չիշատակի տարաժամ մանկանց մեռելոց։ Եւ առ սակաւ «ընդերկարեալ չետոյ ի տգիտացն ի պաշտօն առաւ, զոր բա-

«զում անդամ շանիւք Աստուած խափանեաց պատժիւք օրի-  
 «նացն և պատուէր տալով թէ մի արասցես նմանութիւն  
 «զինչ և իցէ պատկերի. և Եսայի մարգարէիւ ասէ Աստուած.  
 «Ո՛ւմ նմանեցուցանէք զիս. մի՞թէ ի հիւսանց ճարտարաց  
 «պատկերի՞ նմանեցայց. և ահա ոչ ունիմք վկայութիւն (ի)  
 «մարգարէիցն պատկերի երկիր պաղանել, և ոչ յառաքելացն,  
 «բայց միայն խաչին. ապա թէ ոչ ցուցէք մարգարէիցն վր-  
 «կայութիւն, թէ ո՞վ հրամայեաց երկիր պաղանել պատկերի,  
 «որպէս խաչին ունիմք վկայութիւն բազում յօրինաց և ի  
 «մարգարէից. բայց վասն պատկերի երկրպաղութեան ոչ ուս-  
 «տեք կարես ցուցանել վկայութիւն: Եւ զիսորք զպատճառ  
 «զայթակղութեան զոր Աստուած հրաժարեցոյց երկրպաղել,  
 «զարծեալ ի պաշտօն առէք: Ապա թէ ասիցես թէ ոչ պաշ-  
 «տեմ, այդ զիտութիւն ոչ ամենեցուն է այլ սակաւուց, իսկ  
 «տխմարք և աղէտք ի պատուելն քո պաշտելի և երկրպա-  
 «ղելի համարեն. և այսպիսոյ՝ մտօք երկրպաղելն ո՞չ ահա կռա-  
 «պաշտութիւն համարեալ է... Իսկ արդ՝ եթէ ասիցես եթէ  
 «Քրիստոսի պատկերին երկիր ո՞չ պաղանեմ, ասացից առ այդ.  
 «Ես զՔրիստոս կենդանի պատկեր միշտ ի խաչին խոստովա-  
 «նիմ, որպէս ուսայ ի մարգարէիցն, որում երկիրպաղանեմ:  
 «Եւ զիսորք մարթի զկենդանի պատկերն ի խաչին բեւե-  
 «ռեալ, թողուլ և նմանութեան լոկոյ, որ ի ճարտարաց նկա-  
 «րեցաւ, այնմ երկիր պաղանել: Եւ արդ՝ ո՞վ որ զթաղաւոր կեն-  
 «դանի տեսեալ չաթոռ փառաց նստեալ, թողու զայն և մե-  
 «ռեալ պատկերի, որ ի մարդկանէ նմանազրեալ, այնմ երկիր-  
 «պաղանիցէ: Այլ մեր նկարագրեմք զպատկեր Քրիստոսի և  
 «զառաքելոց և զմարգարէից և հայեցեալ տեսանեմք և պա-  
 «տուեմք, այլ ոչ հրամայեմք ախմարաց և աղիտաց ժողո-  
 «վրդոց առաւել քան զչափն պատիւ և պաշտօն մատուցա-  
 «նել, զի մի ազիտութեամբ զայթակղեալ ի կռապաշտութիւն  
 «անկանիցին: Այլ եթէ զայս պատճառես, եթէ տօնել չիշա-  
 «տակ մարտիրոսի և պատուել զպատկեր նորա բարեխօս ու-  
 «նիմք առ Աստուած, այդ իսկ է յետին ազիտութիւն: Զի  
 «մեր զիանմք զմարտիրոսքն կենդանիք և անմահացեալք և

«մերձ առ Աստուած, որ և բարեխօս են մեր... արդ՝ զկենդանի  
 «պատկերսն որ մերձ առ Աստուած են թողեալ՝ զանբարբառ  
 «պատկերսն որ մերձ առ Աստուած են թողեալ՝ զանբարբառ  
 «պատկերս ունիք բարեխօս: Գիտեմ ես զժողովրդականսդ,  
 «մանաւանդ թէ զզխաւորս իսկ, որ առաւել քան զխաչ և  
 «զեկեղեցի պատուեն և պաշտեն զպատկերս, և շրջեցուցա-  
 «նեն առաւել պատուով քան զխաչն և զայթակղին յայնմիկ,  
 «և զուր ոչ զգուշացուցանէք, այլ առաւել չորհորէք պատ-  
 «կերապաշտ լինել. և համարձակութիւնդ ձեր յայդ զայթակ-  
 «ղութիւն լինի տկարաց. և այս առաւել քան զչափան պա-  
 «տուելով զմիտս տկարացն զկծեցուցեալ ի Քրիստոս մեղան-  
 «չէք, և զայթակղեցուցանէք զապէսս, վասն որոյ Քրիստոս  
 «մեռաւ: Եւ արդ բաւական լիցի այսքան ի յանդիմանութիւն  
 «տղիտաց և խրատ իմաստնոց»:

(Իարծեալ՝ մի փոքր էլ կխօսեմ պատկերների պաշտա-  
 մունքի մասին, թէ ո՞րտեղից մուտք գտաւ ոչ ապաքէն կռա-  
 պաշտութեան սկիզբն այդտեղից եղաւ. բստ որում առաջին  
 անգամ պատկեր նկարեցին ոչ թէ պաշտելու, այլ տարաժամ  
 վախճանած մանուկների չիշատակի համար. որ սակաւ առ  
 սակաւ երկարելով՝ վերջում ազէտներից պաշտուեց, որը Աս-  
 տուած շատ անգամ շանքով խափանեց օրէնքի պատիժներով  
 և պատուէր տալով թէ «որեւ պատկերի նմանութիւն չլի-  
 նես». և Եսայի մարգարէի բերանովն էլ ասում է Աստուած.  
 «Ինձ ո՛ւմն էք նմանեցնում. մի՞թէ ճարտար հիւսնների կազմած  
 պատկերի՞ն պիտի նմանեմ»: Ահա ուրեմն՝ պատկերին երկր-  
 պաղելու համար ոչ մարգարէներից վկայութիւն կայ, ոչ ա-  
 ռաքեալներից. կայ վկայութիւն միայն խաչին երկրպաղելու  
 համար. ապա թէ ոչ ցոյց տուէք մարգարէների վկայութիւնը  
 թէ ո՞վ հրամայեց երկրպաղել պատկերին, ինչպէս խաչին եր-  
 կրպաղելու համար կան շատ վկայութիւններ մարգարէ-  
 ներից և Օրէնքից: Բայց պատկերին երկրպաղելու համար մի  
 տեղ էլ կարող չես վկայութիւն գտնել: Եւ զուր ի՞նչպէս  
 զարծեալ պաշտելի դարձրիք զայթակղութեան առարկան, որին  
 երկրպաղելն Աստուած արգելեց: Եթէ կասես թէ չեմ պաշ-

տում այլ պատուում եմ,—այդպէս ամենքը հասկանալ չեն կարող, այլ սակաւներն. իսկ տխմարներն և տղէտները տեսնելով քո պատուելն՝ իրանք պաշտելի և երկրպագելի են համարում. ո՞չ ապաքէն այդպիսի մտքով երկրպագելը կռապաշտութիւն է համարուած... Եթէ հարցնես՝ Քրիստոսի պատկերին չէ՞ս կամենում ուրեմն երկրպագել, դորա դէմ կասեմ. —Ես, ինչպէս ուսել եմ մարդարէններից, Քրիստոսին եմ խոստովանում միշտ կենդանի պատկեր խաչի վերայ, որին երկրպագում եմ: Եւ ինչպէս կարելի է խաչի վերայ բեռուած կենդանի պատկերը թողնել և արուեստաւորներից նկարուած լոկ նմանութեանն երկրպագել: Կլինի՞ միթէ այնպիսի մարդ, որ կենդանի թագաւորին փառքի աթոռի վերայ նստած տեսնելիս՝ նորան թողնի, և մարդկանցից նկարուած անկենդան պատկերին երկրպագի: Իսկ մենք նկարում ենք Քրիստոսի, առաքեալների և մարդարէնների պատկերներն և մտիկ տալով պատուում ենք, բայց տխմար և տղէտ ժողովրդին չենք հրամայում չափիցն աւելի պատիւ և պաշտօն մատուցանել, որ մի դուցէ տգիտութեամբ դաշթակղուելով՝ կռապաշտութեան մէջ ընկնեն: Իսկ եթէ այսպիսի պատճառ կրերես, թէ տօնելով մարտիրոսի չիշատակն և նորա պատկերը պատուելով (սուրբին) բարեխօս ենք ունենում առ Աստուած,—ամենամեծ տգիտութիւնն էլ այդ է. ըստորում մարտիրոսներին մենք ընդունում ենք կենդանիներ և Աստուծուն մօտիկներ, որոնք և մեր բարեխօսներն են... արդ՝ թողած Աստուծուն մօտիկ դանուող կենդանի պատկերներն, անխօս պատկերներն էք բարեխօս բռնում: Ես գիտեմ ձեր ժողովրդականներին, մանաւանդ թէ զխաւորներին էլ, որ խաչից և եկեղեցուց աւելի պատկերներն են պատուում և պաշտում, և շրջեցնում են առաւել պատուով քան խաչը, և նորանում դաշթակղուում են և դուք չէք զգուշացնում, այլ առաւել յորդորում էք պատկերապաշտ լինել. և ձեր այդ համարձակութիւնը տկարներին դաշթակղութիւն է լինում. և չափից առաւել պատկերները պատուելով և տկարների միտքը կսկծացնելով՝ մեղանշում էք առ Քրիստոս, և դաշթակղեցնում էք տղէտներին,

որի համար Քրիստոս մեռաւ: Այսքանը թող բաւական լինի իբրև տղէտներին յանդիմանութիւն և իմաստուններին խրատ):

5. Յովհաննէս Սարկաւազ վարդապետ, Անանիա Սահնեցուց փոքր ինչ յետոյ, ժա. դարի երկրորդ և ժբ. դարի առաջին կիսումն է ապրել: Սահնեցու վերոյիշեալ «Բան հակաճառութեան» զրքում կան և Սարկաւազ վարդապետի երկու ճառերը. մէկը «վասն պատկերաց» վերնազրով. միւսը՝ «վասն մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց դարձեալ»:

1. Վասն պատկերաց. «Փրկչին կենդանազրութիւն նրկարեալ չեկեղեցիս, և կամ զբուն իսկ, որ երբեմն չեղեսացւոց քաղաքին և կամ զոր տեռատես կինն և քաջահաւատ կանգնեաց ի Պեննադա յորժամ տեսանեմք, առ մարմնացեալ բանն որ վասն մեր զճառաչի կերպարանս առ, որում զգրժազրութիւնն տեսնելով առաւել ևս գամք ի չիշատակ. աղաչել պարտիմք և գոհանալ սրտի մտօք և երկրպագելով սրտի մտօք նմին ինքեան Փրկչին, առաջի նորա զպաղատանքս առնել. իսկ առաջի Աստուածածնին պատկերի կամ որ ի սուրբ եկեղեցիս քանդակեալք իցեն, որդուց նորա երկրպագել և աղաչել զճնողն ի բարեխօսութիւն. այլ եթէ զառաքելոց և զմարդարէից և զյայտնեաց վկայիցն տեսանիցեմք չեկեղեցիսն և ի վկայարանս զգրոշմեալ կենդանազրութիւնն, օրհնել պարտիմք զայն, որ ընտրեացն զնոսա և նմա երկրպագելով գոհանալ զսիրոյն առ ազգս մարդկան. իսկ զնոսա ի բարեխօսութիւն ածել այլ ոչ նիւթապաշա և պատկերապաշտ լինել. բայց զհայհոյիչս և զանարդիչս աչնպիսի պատկերաց չիմարս կարգասցուք և շամբշեալս, որք և յարձանս ամբարշտաց զրեացին: Են և անչաչտք ոմանք սուրբք, որոց զպատկերսն բերեն, տունք և տախտակք և անդրիանդք. առաջի նոցա ոչ համարձակ առ տէր աղօթել, վասն որոյ երկբաշութիւն է, այլ զոր անուանեն նօքա սուրբս, որոց հերձուածն և պղծութիւնն ցարդ ևս յայտնի է, զնոսա նզովել և ի բաց փախչել. եթէ մեր, ա-

«սէ, կամ հրեշտակ չերկնից կամ այլ ոք աւետարանեսցէ  
«ձեզ աւելի քան զոր առէքն, նդովեալ լիցի»:

«Բազմութիւն պատկերաց ոսկեղինաց և արծաթեայ և  
«այլոց նիւթոց զորս շրջեցուցանեն ընդ ինքեանս կամ ի տունս  
«հասարակաց, ոչ հաճեցայ, մանաւանդ զաննշանից ոմանց:  
«էր ժամանակ զի հպարտացան կենդանադիրք ի վերայ զըչաց  
«զրոց Աստուծոյ և պատմութեան այլոց, որպէս թէ նախա-  
պատվագոյն իցէ նոցայն արուեստ քան զըչաց. զի դուք,  
«ասեն, «զբանս զրելով ի լսելիս ածէք ի հին ինչ իրուց, իսկ  
«մեր աչաց յայտնի կտցուցանեմք հաւատարմագունին զգայ-  
«ութեանց, և իմաստասիրի զիրազործութիւնս և զպատճա-  
«ոս նոցա. իսկ սորա զընդդէմսն վիճէին իրաւաբանելով բա-  
«ղում իրօք. և եղևոյ ժողովոյ և քննութեան, առաւել ցու-  
«ցաւ զըչութիւն զրոց. յայսմանէ ոմանք պատճառս առեալ  
«անարգէին զամենայն պատկերս, անդիտանալով զպատճառ-  
սըն, որք և անարգեցան իսկ. իսկ դու ըստ տուեցելումդ  
«վարեսցիս առ տէրունականն և առ սրբոցն կենդանադրու-  
«թիւն. իսկ զանսրբոցն անարգ և խոտան համարեսցիս, բայց  
«զերկբայելիսն ոչ պատուել և ոչ անարգել: Եւ վասն պատ-  
«կերացն զրօշելոց առ այժմ լուռ եղէց»:

(Երբ որ տեսնում ենք Փրկչի կենդանադրութիւնն եկե-  
ղեցիներում նկարուած, լինի կամ բուն այն պատկերն, որ  
երբեմն Եղեսացոց քաղաքումն էր, կամ այն, որը տեոատես  
և քաջահաւատ կինը կանգնեցրեց Պեննադայում, — պարտա-  
ւոր ենք զիմել ձեզ համար ծառայի կերպարանք առաժ մար-  
մրնացեալ բանին. նորա զժադրութիւնը տեսնելիս առաւել ար-  
ծարժուած է նորա չիշատակը. պարտաւոր ենք աղաչել և բո-  
լորասիրտ երկրպագութիւն մատուցանել Փրկչին իրան, նորա  
առջև մեր պաղատանքն անել: Իսկ զտնուելով Աստուածածնի  
պատկերի կամ ս. եկեղեցիներում քանդակուածների առջև՝  
պէտք է նորա որդուն երկրպագել, և ծնողին աղաչել, որ բա-  
րեխօս լինի. այլ եթէ տեսնենք եկեղեցիներում և վկայարան-  
ներում զրօշմուած առաքեալներ ի և մարգարէների և յայտնի  
վկաների կենդանադրութիւնը՝ պարտաւոր ենք օրհնել Նորան,

որ ընտրեց նորանց. և Նորան երկրպագելով զօհանալ այն սի-  
րոյ համար՝ որ ունեցաւ զէպի մարդկային ազգս. իսկ սուր-  
բերին բարեխօս ունենալ, միայն թէ ոչ նիւթապաշտ և պատ-  
կերապաշտ լինել. բայց այդպիսի պատկերներն անարդօղներին  
և հաչոյոյններին չիմար անուանենք և խենդ. զորանք թող  
զրուեն անբարիշտների ցանկում: Կան և մի քանի սուրբեր  
ևս, որոնց պատկերները լինում են տներում (Յոյների մասին  
է խօսքը. հայ աներում երբէք պատկերներ չեն եղել), և տախ-  
տակների ու անդրիների վրայ — նորանց առջև վստահօրէն չա-  
ղօթել առ Տէր, քանի որ երկբայելի են. իսկ նորանց (Յոյների)  
սուրբ անուանածներից այնպիսիներին, որոնց հերձուածն և  
պղծութիւնն մինչև այժմ յայտնի է, նդովել և (նորանցից)  
հեռու փախչել: «Եթէ մենք», ասում է (առաքեալը), «կամ եր-  
կրնքի հրեշտակը կամ այլ ոք աւանդածից աւելին ուսուցանի,  
նդովեալ եղիցի»: Ոսկուց և արծաթից և այլ նիւթերից կաղ-  
մած պատկերների բազմութեանը չհաւանեցի, որպիսիքը շր-  
ջեցնում են իրանց հետ կամ դնում են հասարակաց տներում,  
մանաւանդ աննշան ոմանց պատկերները: Կար ժամանակ երբ  
նկարիչները հպարտութեամբ էին նայում աստուածային զրքի  
և ուրիշների պատմութեան զրիչներին, ասելով՝ թէ իրանց  
արուեստը, նկարչութիւնն աւելի նախապատիւ է քան զրող-  
ներինն, ըստ որում դուք զրելով, ասում են, հին բաներն էք  
լսելի անում. իսկ մենք նկարելով՝ ի տես ենք դնում աչքին —  
որ զգալարանքներից բոլորից աւելի ստոյգն է — և (այդպի-  
սով) իմաստասիրում ենք զօրծողութիւններն և նորանց պատ-  
ճառները: Իսկ զրօղները վիճում էին նորանց հետ և շատ  
բաներով իրանց իրաւունքը ցոյց տալիս: Ժողով և քննու-  
թիւն եղաւ, և զրքերի զըչութիւնը նախամեծար յայտարա-  
րուեց. այս բանից ոմանք պատճառ առաժ՝ անարդում էին  
բոլոր պատկերներն, անդիտանալով պատճառներն. և պատ-  
կերներն անարգուեցին էլ: Իսկ դու վարուիր տէրունական և  
սրբոց պատկերների նկատմամբ այնպէս, ինչպէս ասում է.  
սակայն անսուրբների պատկերներն անարգ և մերժելի կհա-  
մարես. և որոնք էլ երկբայելի են՝ — ոչ պատուել, ոչ անարգել:

Իսկ զբոշեալ պատկերներ թաղմութեան մասին առ այժմ կլուծմ):  
2. Նորին՝ «վասն մասանց պատուոյ, չորում և վասն պատկերաց դարձեալ»:

«...Միթէ Պետրոս սքանչելին կամ Փիլիպպոս կամ քրիստոսասէր կանայքն մատուցին ինչ պաշտօն կամ երկրպագութիւն երեւելոցն հրեշտակաց. և եթէ կենդանի և սուրբ զօրութեանցն և ոչ տուեալ է պաշտօն և երկրպագութիւն, զի՞նչ ասասցեն որք պատկերս իմն նոցա և որակութիւնս ըստեղծանեն, անձե և անորակ բնութեանցն, և պաշտօնատարք լինին. ոչ ընկալաւ զայս ի հարցն եկեղեցի. բայց վասն մարդկան գրեալ է զի երկրպագեցին միմեանց, և սուրբքն իսկ, այլ ոչ իբրև Աստուծոյ. զորոյ զպատճառն եթէ ուսցուք հաւաստեալ, ոչ սխալեսցուք... Պատուել զսուրբ նրջխարս երանելեացն օսկերաց բարիք սովորութեամբ և զեղեցիկ աւանդութեամբ ուսեալ է եկեղեցի և աղաչել զնոսա ի բարեխօսութիւն առ տէրն իւրեանց. այլ փոխանակել զնոսա ընդ Փրկչին Տեառն անսրբութիւն է, և ոչ ինքեանք վկայքն նշարտութեան յանձն առնուն և ներեն զանպատուութիւն և զթշնամանս, զի այսպէս արդարև վարկանիմ զաստուածացուցանելն... այսինքն առանց ընտրութեան և իմաստութեան զմեծ գործ բարեպաշտութեան վնարել կարծելով զանբաղդատական պատիւ աստուածութեան ծառայից նորա կամ ումբ չարարածոց տալցեմք, և ոչ զարարիչն և եթ, այլ և զծառայս նորա պատուել կարծելովն տրամեցուցանեմք: Զայս ասելով ոչ զպատիւ սրբոցն կամիմ փոքր կացուցանել, քաւ լիցի. զի լուաչ ի Տեառնէ զասելն առ սիրելիսն իւր, թէ որ զձեզ անարգէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն իմ (անարգէ). այլ զոմանց պատկերապաշտաց զչարամտութիւն և զսխալանս կամիմ զղաստացուցանել: Սրգ՝ ի պատուելեացն է ինչ, որ վասն ինքեան է պատուելի, որպէս ինքն Աստուած. զի ըստ բնութեան ունի զաննառելի և զանիմանալի պատիւն, զորոյ զպաշտօն և զպատիւ ոչ վայել է տալ ումբք. և է ինչ, որ վասն այլոց որպէս տէրունական և սուրբ նշան խաչին. քանզի ինքն ըստ

«ինքեան ի սկզբանն տանջանարան և մահու գործի, և ոչ անօթ երկրպագելի էր, և վասն զի Բանն արարիչ մարմնովն չարչարեցաւ ի նմա, որով աղատեցաք ի կրկնատեսակ մահուց, երկրպագեմք նմա չաղագս պատճառին, զանպատմելի շնորհացն երախտիս Փրկչին մերոյ նովաւ չիշատակեալ ի խորհուրդս և ի զէմս... Իսկ զսուրբս վասն զի չաղագս չարչարանաց տեսան իւրեանց չարչարեցան և ընտրեալքն Աստուծոյ (են), վկայարանօք և չիշատակօք պայծառապէս մեծաբեմք զնոսա ի փառս Տեառն և ի փրկութիւն եկեղեցուց... Նոյնպէս և չորժամ զկենդանագրութիւն նոցա պատկերաց տեսանեմք չեկեղեցիս և ի վկայարանս, երկրպագելով Աստուծոյ և զնոսութիւն նոցա միջնորդ և աւժանդակ մեղ առ նոյն ինքն մատչելոյ առնումք աղաչել նորօք, որոց պծագրութիւնն և ոչ եթէ զունովք երանգոցն, և կամ զինչնիւթովք իցէ, զՏէր մեր և Աստուած ի հաշտութիւն ածել: Այլ զյանախութիւն պատկերաց օտարաեաց ոմանց և անձանօթից անուանելոց սրբոց, մանաւանդ որոց զկնի հակառակ Քրիստոսի ժողովոյն Քաղկեդոնի, ոչ արժանի և տեսանելոյ անգամ արասցուք... Բայց մեղ զսրբոցն պատկերս, ըստ որում ասացաւ զվերագոյն, չափով սրբութեան և չաղագս պատճառին պատուել ի զովեսա Աստուծոյ և չիշատակ քաջութեան նոցա, այլ ոչ որպէս արտաքոյ սահմանին հեղուլ մտօք: Իսկ զտուեալն ի Տեառնէ իւրն անպարագրութեան ամենասուրբ և աստուածային պատկեր բարեպաշտին Սրգարու երկրպագել նմին, որպէս ինքեան մարմնացելոյ բանին. և զնոյն նկարագրեալ չեկեղեցիս ի մարդկանէ տեսանելով և երկրպագելով Քրիստոսի անկանիլ առաջի և աղաչել վասն փրկութեան զայն, որ ի չափ և ի նմանութիւն ծառայի վասն ծառայից զոյ անչափ խոնարհութեամբ արժանի արար: Այլ զսրբոյ և զԱստուածածնի կուսին ամենաշնորհ պատկեր, զտուեալն, որպէս ասի հաստատութեամբ, ինչորոզացն զայն երանելի առաքելոցն, առաւել ամենեցուն սրբոցն համարել, և երկրպագութեամբ որպէս զմօր Տեառն պատուել զտիպ պատկերի, աղաչելով լինել բարեխօս վասն

«մեր առ որ մարմնացաւ ի նմանէ վասն թշուառութեան մե-  
 «րոյ բնութեան, և առ ծնող Բանին Միածնին Որդուոյ, որ  
 «առաքեացն զնա ի խնդիր մօլորելոյ բնութեան մարդկու-  
 «թեանս, և առ Հոգին Սուրբ, որ աւետարանեցաւ նմա ի Գար-  
 «րիէլէ ի սպաս և ի յարդարումն անձառելի մարմնաւորու-  
 «թեան Բանին: Սրբ՝ ցուցաւ ասացելովքդ, թէ այլ պատիւ  
 «է այնր, որ ըստ բնութեան ունի զանդուգական փառսն և  
 «ճշմարիտ թաղաւորութիւնն, որ է երանելի և միայն հոգոն.  
 «և այլ պատիւ առ ի նմանէ եղելոցն. և ի նոսա զարծեալ  
 «զանազանութիւն, որպէս բնութեանց և դործոց. իսկ ի մարդ-  
 «կանէ սրբոցն չափ պատուոյ արժան է. և թէ զիմօրդ զսուրբ  
 «ոսկերս նոցա պատուեսցուք, և կամ թէ զ՞որս արժան է  
 «ընդունել կենդանադրութիւնս և զ՞որս ոչ. և թէ որպիսի՞  
 «զանազանութիւն ընկալելոցն է: Եւ վասն տէրունական  
 «պատկերին մտածութեան և սրբոյ Աստուածածնին և վասն  
 «այլոցիկ շատ լիցի այսքան. բայց կարևոր համարիմ չի-  
 «շել և վասն որոյ բազում անգամ կրեն ի միմեանց մար-  
 «դիկ երկրպագութիւն. զի միտք բազում անգամ ի քըն-  
 «նին մտեալ խնդրեն վասն այսր՝ և թէ արժան իցէ կամ  
 «ոչ համարձակապէս առնել վճիռ կազան: Բայց ինձ այս-  
 «պէս բարիօք զոյ թուի, զի թէ էր արդեօք հնար, ոչ այլ  
 «ուճեք երկրպագել բայց Աստուծոյ միայն հաճեալ եմ յօյժ.  
 «այլ վասնզի տեսանեմ հին զիրացդ պատմութիւն, որպէս  
 «ցուցաւ, և անհնարագոյն զխափանումն, յաւելցուք զայս,  
 «եթէ իմաստութեամբ պարտիմք և զգործն և զիրացն քըն-  
 «նութիւն առնել»...

(... Միթէ սքանչելի Պետրոսը կամ Փիլիպպոսը կամ քրիս-  
 տոսասէր կանաչքն որևէ պաշտօն կամ երկրպագութիւն մա-  
 տուցի՞ն երևեցած հրեշտակներին. և եթէ կենդանի և սուրբ  
 դորութիւններին պաշտօն և երկրպագութիւն տուած չէ, ինչ  
 են ասելու նորանք, որոնք այդ անձև և անորակ բնութիւն-  
 ներին մի տեսակ պատկերներ և որակութիւններ են ստեղծում  
 և պաշտամունքի առարկայ անում: Եկեղեցին այս բանը հաշ-  
 րերից չէ ընդունել. բայց մարդկանց համար զրուած է, թէ

միմեանց երկրպագեցին, և սուրբերն էլ, այլ ոչ իբրև Աստու-  
 ծոյ, որի պատճառն եթէ ճիշտ ուսանենք, չենք սխալուի: ...  
 Եկեղեցին բարուք սովորութեամբ և զեղեցիկ աւանդութեամբ  
 ուսել է երանելիների ոսկորների սուրբ նշխարները պատուել  
 և աղաչել (այդ սուրբերին) բարեխօսելու իրանց Տիրոջն. բայց  
 փոխանակել նորանց Տէր Փրկչի հետ-անսրբութիւն է. և ոչ  
 իրանք, ճշմարտութեան վկաները յանձն կառնեն և կներեն  
 (այլպիսի) անպատուութիւնն և թշնամանքն. ըստ որում այս-  
 պէս անելն համարում եմ (նորանց) աստուածացնել... այսինքն  
 առանց ընտրութեան և իմաստութեան՝ բարեպաշտական մեծ  
 գործ կատարած կարծելով՝ աստուածութեան անբաղդատա-  
 կան պատիւը նորա ծառաներին կամ արարածներից մէկին  
 տալը. որով ոչ միայն Արարչին, այլ և նորա ծառաներին  
 պատուել կարծելով՝ արտմեցնում ենք: Այս ասելով չեմ կա-  
 մենում սրբոյ պատիւը փոքրացնել. քաւ լիցի. ըստ որում  
 լսել եմ Տիրոջ ասելն իւր սիրելիներին թէ՛ «ով որ ձեզ ա-  
 նարգում է, ինձ է անարգում. և ով որ ինձ է անարգում,  
 անարգում է ինձ ուղարկողին». այլ կամենում եմ ուղղել մի  
 քանի պատկերապաշտների չարամտութիւնն և սխալանքը:  
 Սրբ՝ պատուելիներից կաչ այնպիսին, որ պատուելի է ըստ-  
 ինքեան, ինչպէս է ինքն Աստուած. ըստ որում բնութեան  
 մէջ ունի անճառելի և անիմանալի պատիւն, և նորա այդ  
 պատիւն ու պաշտօնը վայել չէ տալ ուրիշին: Կայ և այն-  
 պիսին, որին պատուել արժան է ուրիշի համար, ինչպէս տէ-  
 րունական սուրբ խաչի նշանն է. ըստ որում ինքն ըստ ինք-  
 եան սկզբում տանջանարան և մահուան գործիք լինելով՝  
 երկրպագելի չէր, բայց որովհետև Արարիչ Բանը մարմնով  
 չարչարուեց նորա վերայ, որով մենք ազատուեցինք կրկնա-  
 տեսակ մահից, ուստի երկրպագում ենք նորան պատճառի  
 համար, գորանով չիշելով մեր խորհրդի մէջ և մեր երեսի վե-  
 րայ մեր Փրկչի անպատմելի շնորհների երախտիքը... իսկ  
 սուրբերին-ըստ որում չարչարուեցին իրանց տիրոջ չարչա-  
 րանքների համար և Աստուծոյ ընտրեալներն են—վկայարան-  
 ներով և չիշատակներով պայծառապէս մեծարում ենք Տիրոջ

փառքի և եկեղեցու փրկութեան համար... նոյնպէս երբ որ եկեղեցիներում և վկայարաններում տեսնում ենք նորանց պատկերների կենդանազրութիւնն՝ Աստուծուն երկրպագելով՝ նորանց եզնութիւնը մեզ միջնորդ և օժանդակ ենք առնում Աստուծուն մօտենալու համար. նորանցով, որոնց զձագրութիւններն ենք տեսնում (և ոչ թէ զեղերի գոյներով և կամ որևիցէ նիւթով), աղաչել մեր Տիրոջն և Աստուծուն ի հաշտութիւն: Բայց օտարոտի ոմանց և սուրբ անուանուած անձանօթների պատկերներն, մանաւանդ նորանց, որոնք Քրիստոսին հակառակ Քաղկեդոնի ժողովից չետոյ են—տեսնելու անգամ արժանի պիտի չանենք:...

Բայց մենք, սրբոց պատկերներն, ինչպէս վերագոյն ասուեց, պիտի պատուենք (իրանց) սրբութեանց չափով ի զովեստ Աստուծոյ և ի չիշատակ իրանց քաջութեան. այլ ոչ որպէս սահմանից դուրս մտահեղ լինել: Միայն տիրական անպարազրութեան ամենատուրբ և աստուածային պատկերին, որ Տէրն ինքը տուեց բարեպաշտ Սբգարին, պէտք է երկրպագել ինչպէս իրան մարմնացած Բանին, և նոյն պատկերը մարդկանցից եկեղեցում նկարուած տեսնելիս՝ Քրիստոսին երկրպագել, նորա առջև ընկնել և փրկութեան համար աղաչել նորան, որ անչափ խոնարհութեամբ ծառաների փրկութեան համար արժան համարեց ծառայի չափն ու նմանութիւնը յանձն առնել: Իսկ սուրբ Աստուածածին կուսի ամենաշնորհ պատկերն, որ, ինչպէս հաստատապէս ասուում է, տրուած է զայն խնդրող երանելի առաքեալներին, բոլոր սուրբերից առաւել համարել և երկրպագութեամբ պատուել որպէս Տիրոջ մօր պատկեր, աղաչելով բարեխօս լինել մեզ համար նորա մօտ, որ մարմնացաւ նորանից մեր բնութեան թշուառութեան համար... Սբդ՝ ասածներովս ցոյց արուեց թէ այլ է նորա պատիւն, որ ըստ բնութեան ունի անդուգական փառքն և նշմարիտ թաղաւորութիւնն, որ երանելի է և միշտ հզօր. և այլ է նորանից ստեղծուածներինը. վերջիններումս էլ զանձեալ կայ բնութիւնների և պատուի զանազանութիւն. իսկ սուրբ մարդկանց պատուի մէջ ևս հարկա-

ւոր է, որ չափ լինի, թէ ի՞նչպէս պիտի պատուենք նորանց սուրբ օսկերբք. կամ թէ՛ որոնց կենդանազրութիւնն արժանի է ընդունելութեան և որոնցը՝ ոչ. և թէ ընդունուածների մէջ որպիսի՞ զանազանութիւն պիտի լինի:

Այսքանը թող բաւական լինի տէրունական, ս. Աստուածածնի և միւսների պատկերների մասին: Սակայն կարևոր եմ համարում այն ևս չիշել, որ մարդիկ շատ անգամ միմեանցից երկրպագութիւն են ստանում. ըստ որում միաբը շատ անգամ քննութեան մտնելով՝ ցանկանում է զիտենալ—արժան է այդ թէ ոչ,—և համարձակապէս վճիռ տալ կարողում են: Բայց ինձ այնպէս է բարուոք երևում, որ եթէ հնարաւոր լինէր՝ ոչ ոք ի, այլ միայն Աստուծուն երկրպագելու ևս այդ եմ շատ հաւանելի համարում: Այլ որովհետև տեսնում եմ, որ այդ բաների պատմութիւնն, ինչպէս ասուեց, հին է, և խափանելն աւելի անհնարին,—այս ասենք, թէ պարտաւոր ենք և՛ զործն և՛ իրերի քննութիւնն իմաստութեամբ անել):

6. Վարդան վարդապետ: Գովելով Գարգմանի Յովհաննէս եպիսկոպոսի խստակրօն կեանքն և Նրուսաղէմում սքանչելիքներով փառաւորուելն, ասում է հետևեալն, իբրև Յովհաննէսի իրան պատմածը. «Ասաց ինքնին և զայս բան եթէ, «չողայ ի սուրբ Բեթղեհէմ, և տեսի անդ զսուրբ առաքել լոցն պատկերսն նկարեալ ի պարիսպ եկեղեցւոյն, և Տաճիկը ի պատճառս անարգութեան փորեալ էին զաչսն. «տրամեցայ ընդ իրսն. և աղօթեցի առ սուրբ առաքեալսն «աղաչելով յայտնել ինձ՝ եթէ հաճոյ է նոցա ամենայն ուրեք «նկարել զնոսա: Եւ յորժամ դարձայ յՆրուսաղէմ՝ յայնմ զիճերի տեսի ի տեսլեան երկու արս փառաւորս, զի զային «առ իս. և ելի ես ընդ առաջ նոցա և ասացի, թէ ո՞վ էք «սուրբքդ Աստուծոյ. և նոքա ասեն. Պետրոս և Յովհաննէս, «որ աղաչեցեր ցուցանել քեզ վասն ձեակերպելոյն զմեզ քրիստոնէից՝ որ բնաւ չէ մեզ հաճոյ և ձանձրացեալ եմք. և «յայտնեմք ուրեք ուրեք և չլսեն մեզ»: \*)

\*) Պատմ. 154—155.

(Ինքն (Յովհաննէս) այս էլ ասաց, թէ զնացի ս. Բեթղէհէմ, և այնտեղ տեսայ եկեղեցու պարսպի վերայ նկարուած սուրբ առաքեալների պատկերներն. և Տաճիկներն, անարգելու մտքով, նորանց աչքերը փորել էին: Տրամեցի տեսածիս վերայ և աղօթելով աղաչեցի ս. առաքեալներին յայտնել ինձ, թէ իրանց հաճոյ է, որ ամեն տեղում իրանց նկարեն: Եւ երբ որ դարձայ Երուսաղէմ՝ նոյն զիշերը տեսիլքի մէջ տեսայ, որ երկու փառաւոր մարդիկ զալիս էին զէպ ինձ. զուրս եկայ նորանց առաջ և ասացի. Դուք ո՞վ էք, Աստուծոյ Սուրբեր, և նորանք ասացին. Պետրոսն և Յովհաննէսն ենք. զու աղաչեցիր յայտնել քեզ՝ հաճոյ է մեզ թէ ոչ որ քրիստոնեաները մեզ նկարում են. և ասում ենք, որ մեզ բնաւ հաճոյ չէ այդ և ձանձրացել ենք, և տեղ-տեղ յայտնում ենք—(բայց) մեզ չեն լսում <sup>31</sup>):

Շատ պարզ է երևում այն բողոքն, որ, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Այ. Աննինսկից, ուղղուած է պատկերյալութեան դէմ: Վենետեան հրատարակութիւնն այդ առիթով զնում է հետեւեալ ծանօթութիւնը. «Պատկերք առաքելոցդ գտանէին և չեկեղեցիս հայոց, ուր աղօթէին հեղինակդ և տեսանողդ, այլ թերևս ոչ շատք մինչև ի ձանձրութիւն նոցին»:

7. Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելեան: Գրիգոր Անաւարդեցին 1293 թուին կաթողիկոսական աթոռի վերայ նստելով՝ կամենում է եկեղեցու տօների և ծէսերի մէջ փոփոխութիւններ մտցնել: Կաթողիկոսութեան երկրորդ տարում հանդիպում է ծաղապիկ, և Անաւարդեցին հրամայում է Զատիկը տօնել մի շաբաթ յառաջ, ծաղկադարպին, յոյների հետ. թէև «պարկեշտ վաներն ոչ ընկալան և բաղումք յեպիսկոպոսաց և ՚ի վարդապետաց ոչ հաւանեցան», ասում է Օրբելեանն: Այնուհետև նոյն կաթողիկոսը ձեռնարկում է ուրիշ փոփոխութիւնների. «Եւ սահման զի մի լուծցեն զճրագալոցն չեղ և ՚ի թան և որ ինչ առանց մտչ է. և մի առաջնն նաւակատիս մեծախորհուրդ տօնիցն: Եւ հրամայեաց «ծէթ օրհնել հիւանդաց և մեղուցելոց և երեսալից. և սկսաւ

«առ սակաւ սակաւ դամենայն աւանդութիւնս հոռոմոց եկեղեցւոյն սարգեալ մուծանել ի մերս եկեղեցի, և ի մերոյս ի բաց քեցել մի մի: Եւ բաղում դեսպանս և նամակ հաւանութեան «առաքէր առ պատրիարքն ի Կ. Պօլիս և խոստանայր յանձն «առնուլ զոր ինչ և խնդրեսցեն»: Կաթողիկոսի բռնած այս ուղղութիւնը սաստիկ զայրոյթ և մտատանջութիւն է պատճառում արևելեան հայ եկեղեցականներին և իշխաններին, որոնք և որոշում են զրել զգուշացնող և ազդարարական թուղթ. «վասն հաւատոյ և կարգաց եկեղեցույ յարևելեան աշխարհէս առ կաթողիկոսն հայոց տէր Գրիգոր»: Այս թրղթով կաթողիկոսից պահանջելով անխախտ պահպանել հայաստանեայց հկեղեցու դաւանական վարդապետութիւնները, ծէսերն ու կարգերը՝ չիշատակում են այն ազգային-եկեղեցական ժողովներն, որոնք այդ վարդապետութիւնների և կարգերի սահմանադիրներ են եղել: Այդ ժողովների կարգում չիշուած է և Անի քաղաքի ժողովն, «չորում քննեալ գտին համախօս «Վրաց զՎահան Կաթողիկոս, որ ի Բաղաց, և զի պատկեր «եմոյժ չեկեղեցիս հայոց, և յամենայն սեղանոյ բարձեալ էր «խաչին պայծառութիւն և կաւնիւր զարդարեալ՝ որոշեցին «ղնա նզովիւր և զՍտեփաննոս ոմն եղին ի տեղին» \*):

Թուղթ գրողներն ոչ միայն յայտնում էին Անաւարդեցուն, որ եթէ պնդելու լինի իւր նորամուծութիւնների վերայ, իրանք չեն հպատակի նորան, այլ և նզովելով այդպիսի փոփոխութիւններն, որոնք ընդդէմ էին հայոց եկեղեցուն՝ ինքն ըստ ինքեան նզովում էին և փոփոխութիւններ մտցնողին իրան: Նորանց ստորադրութիւններն և բանադրական վեճիւններն հետեւեալ վերնադրով և կարգով են զրուած.— «Ձեռնարկ միաբանութեան եպիսկոպոսաց Արևելից և վարդապետաց և իշխանաց»:

«Մեր Տէր Սարգիս և Տէր Գրիգոր ի նոյն վիճակէ «(Սիւնեաց) համախօս և միաբան եմք այս վերողբելոցս հարցն «աւանդից՝ և որք ոչ միաբանին այսմ հայրենաւանդ և հայքրապետական հաստահիմն դաւանութեանցս, նզովեալ եղիցին որպէս Սարէլ և Արիոս:

\*) Պատմ. Տանն Սիսակ. Մոսկվա. 333.

«Ես տէր Յովհաննէս աթոռակալ Բշնոյ (նոյն համաձայնութիւնն և նդովքը)»

«Ես Գրիգոր եպիսկոպոս Բշնոյ նոյն համ. և նդով.»

«Ես տէր Յովհաննէս Հախպատայ » » »

«Ես տէր Մխիթար Հաւուց Թառայ եպիսկ. » » »

«Ես տէր Մարգարէ եղբորորդի Վանական վրդի » » »

«Ես նուաստ եպիսկ. Գողթան տէր Սարկաւազ » » »

«Ես Դաւիթ նուաստողի... վարդապետ » » »

«Հայաստանս եկեղեցւոյ » » »

«Մեր անպիտան ծառայքս Քրիստոսի էլիկամս և Լիպարիտս... եղբարքք մերովք և որվուովք և ամենայն ազատօք հաւանեմք և հնազանդ մահու չափ այսմ աստուածատուր և հայրենաւանդ կտակիս, և որ հակառակին, որոշեալ լիցին ի ս. հարցն մասնակցութենէ:

«Մեր մեղուցեալ ծառայքս Աստուծոյ Պապաքս և էաչի՝ որդիք բարեպաշտ իշխանին Պռօշայ, մերովք ազատօք համակամ և համախօհեմք ամենայն հնազանդութեամբ սուրբ հարցն աւանդութեանց վերողրելոց ի նամակի աստ. և որ որ ոչ հաւանի՝ նդովեալ և որոշեալ լիցի ի սուրբ հարցն մերոց և յատուածարեալ եպիսկոպոսացս»:

8. Ներսէս Ե. Աշտարակցի: 1851 թուին նոյեմբերի 30-ին 435 համարով արձակած կոնդակով Գէորգ եպիսկոպոսին ուղարկելով Շամախի՝ քաղաքի նորակառոյց եկեղեցին օծելու համար, ի միջի այլոց տալիս է և հետեւեալ պատուէրը. «Օձցես վասն նոցա (եկեղեցիների) զվէմ սեղանոյ պատարագաց, զխաչսն նորակերտ և զպատկերսն որեւիցէ անձանց ամենասուրբ Երրորդութեանն. զի բաց ի պաշտելի պատկերաց երից անձանց ամենասուրբ Երրորդութեանն և սրբոյ խաչին Քրիստոսի՝ այլ ամենայն պատկերք որոց և իցէ սրբոց չեն պաշտելի և երկրպագելի չազգի Հայոց, այլ միայն պատուելի. ըստ որոյ և ոչ օժանին մեռոնաւ, այլ օրհնին միայն... և վասն պատկերաց երից անձանց ամենասուրբ Երրորդութեան պատուիրեմ ձերում սրբազնու-

«Թեան, զի որոց նկարքն չիցեն քաշարուեստ ըստ վայելչութեան անուան անհասանելի նոցին էութեանց, չունիցիս օժանել զայնպիսիսն, և ասացես ամենեցուն մերազանց հոգեւորականաց և ժողովրդականաց անվայելչական համարել տաճարի փառաց տեառն Աստուծոյ սրբոյ եկեղեցւոյ և աղօթարանաց իւրեանց զամենայն ինչ տգեղ. և բաւական համարիլ ունիլ ի վերայ սրբութեան սեղանոյ զնշան տէրունական ամենապատուական ս. խաչին Քրիստոսի»:

9. Ղևոնդ Վ. Ալիշանեան. «Անդրիազորութիւն և նրկարչութիւն պատկերաց յեկեղեցիս քանզի ի հասարակի անընդունելի էր ի Հայս, թէպէտ ոչ առանց բացառութեան, «վասն որոյ և չէր խնամով ձշակեալ»:

10. Այ. Աննինակից. Հայոց եկեղեցու մասին խօսող ժողովի հեղինակներից նորագոյնը լինելով՝ միևնոյն ժամանակ համարուելու է առաջինն, որ տալիս է Հայ աղբիւրների ուսումնասիրութեան վերայ հիմնուած բաւական եռիս մի պատմութիւն, թէև, տարաբաղդաբար, պարոնի աշխատասիրութիւնն ազատ չէ սխալներից, որոնք մասամբ աղբիւրների լուսարանուած չլինելու, իսկ գլխաւորապէս Հայոց եկեղեցու նկատմամբ դարերով կազմուած միակողմանի հայեացքների արդիւնքներն են: Երկու հանդամանքներն էլ ազդել են հեղինակի վերայ և Հայերի պատկերչարութեան խնդիրը տեսութեան առնելիս, ինչպէս պիտի նկատեն ընթերցողները նորահետեւալ խօսքերից. «Եթէ հաւատանք Հայ պատմիչներին, «պատկերչարութեան խնդիրը Հայաստանում երևան է եկել զբեռ 2. դարում, և արդէն վճռուած էր, երբ է. տիեզերական ժողովն էր զուժարուած: Այդ խնդրի յարուցանելուն «առիթ տուողը հետեւեալ հանդամանքն է եղել: Կաթողիկոս Մովսէս Երկրորդը յոյներին հերետիկոս հրատարակելով՝ արգելեց ընդունել նորանցից զբեր, պատկերներ և մասունքներ: Ոմանք այդ արգելքը մեկնեցին այն մտքով, թէ պատ-

\*) Շիրակ. սր. 95.

«կերներն ինքնին, անկախ իրանց ծաղուծից, անթոյլատրելի  
 «են նորա համար, որ նորանք, և ի մասնաւորի Փրկչի պատ-  
 «կերներն իբրև նորա բնութեան նիւթական ձեւադրութիւն-  
 «ներ աւելի համապատասխանում են նեստորականութեան  
 «ողուն քան հայ մտքով հասկացուած ուղղափառութեան: Ինչ  
 «որ երեք կրօնաւորներ զալիս են Սիւնեաց երկիրն և ըսկը-  
 «սում են քարոզել. Ձնչեցէք եկեղեցիներում նկարուած պատ-  
 «կերներն, և աշխարհիկ քահանաների հետ հաղորդակցութիւն  
 «մի ունենաք»: Երկրում յառաջ եկան վրդովմունքներ և համ-  
 «բաւը հասաւ Մովսէս կաթողիկոսին, որի կարգադրութեամբ  
 «թուղթ գրուեց, որպէսզի «ոչ ոք չհամարձակուի եկեղեցի-  
 «ներում պատկերներ շնչոտել»: Մովսէսի մահից յետոյ, Աբ-  
 «րահամի օրով, այդ երեք կրօնաւորները ձերբակալուեցին  
 «Աղուանից երկրում և չաչաստան ուղարկուեցին դատուելու:  
 «Է. դարի վերջում պատկերչարդութեան խնդիրը նորից յա-  
 «րուցուեց չաչաստանում: Այս անգամ պատկերամարտու-  
 «թիւնը ծագեց նոյնքան միաբնակական (μονοφυσιտικῶν)  
 «համոզմունքներից, որքան և արաբական աղգեցութիւնից:  
 «Արաբներն իրանք իբրև մահմեդականներ չէին ընդունում  
 «նկարուած պատկերներ, մանաւանդ կրօնական նշանակու-  
 «թիւն ունեցողները. քրիստոնեաների պատկերները նորանք  
 «համարում էին կուռքեր և նորանց երկրպագելը—կռապաշ-  
 «տութիւն, որը Ղուրանի համաձայն պարտաւոր էին ան-  
 «խնայաբար շնչել: Խաղաղ դրացիութիւն ունենալով չաչերի  
 «հետ՝ Արաբները նորանց էլ պատուաստեցին իրանց հայեացք-  
 «ները պատկերների և պատկերապաշտութեան մասին: Հակա-  
 «եկեղեցական այլ աղգեցութիւնների շնորհիւ պատկերամար-  
 «տութիւնը չիշեալ ժամանակում սկսաւ արագ աճել: Մով-  
 «սէս Կաղանկատուացին ասում է. «Այն ժամանակում, երբ  
 «Ուխտանէսն էր կաթողիկոս Աղուանից աշխարհում և նո-  
 «րանից յետոյ Եղիազարը, և ծագել էին դանազան տեղե-  
 «րում խռովութիւններ և հերձուածներ, համբաւ հասաւ մեզ,  
 «թէ շատերը պատկերներ չեն ընդունում. ոմանք մկրտու-  
 «թիւն չեն կատարում, աղ չեն օրհնում, պսակակատարու-

«թեան միջոցին պսակ չեն դնում, այն պատճառելով, թէ  
 «երկրի վերայ քահանայութիւնը դադարել է»: Այս համբաւն  
 «իւր ներգործութիւնը ցոյց տուեց. «ուրիշ» շատերի օրի-  
 «նակով Աղուանից երկրումն էլ, ուր մինչև այն ժամանակը  
 «պահպանուած էր ուղղափառութեան հողին, սկսաւ պատ-  
 «կերամարտ շարժումն: Պատկերների խնդիրն այնքան վիճելի  
 «դարձաւ, որ տեղական բարձրաստիճան եկեղեցականները չը-  
 «զիտէին թէ ինչպէս վճռեն. մինչև անգամ նոյն ժամանա-  
 «կում յարգուած Դաւիթ Մեծկողմանց եպիսկոպոսը տարա-  
 «կուսի մէջ էր, և իր տարակոյսը փարատելու համար դիմեց  
 «զիտնական Յովհան Մալբաղոմեցուն, որ հաղորդեց նորան  
 «չաչաստանում տեղի ունեցած պատկերամարտութեան մա-  
 «սին վերոգրեալ պատմական տեղեկութիւնը:  
 «Եղիզ Բ.-ի յարուցած պատկերհալածութիւնը բացեց  
 «քրիստոնեաների աչքերը, ցոյց տալով՝ որ պատկերամարտ-  
 «ները գործում են ոչ մաքուր քրիստոնէական այլ Ղուրանի  
 «շահերի համար: Հակագործողութեան բնական զօրութեամբ  
 «չաչերն ընդունեցին պատկերչարդութիւնը, նաչելով նորա  
 «վերայ իբրև նախնեաց աւանդի վերայ, որ հալածուած է  
 «այլակրօններից: Սակայն պատկերչարդութեան մասին եղած  
 «վէճերի դադարումն չէր ապացուցանում թէ հաչերն այդ  
 «խնդրում վերջնապէս կանգնեցին ուղիղ ճանապարհի վերայ:  
 «Չաչերի վերաբերմունքը դէպի պատկերներն առանձնատեսակ  
 «էր: Չաչ յայտնի աղբիւրների մէջ ոչ մի տեղ չէ չիշում  
 «յատկապէս պատկերների առջև երկրպագելու մասին: Ամե-  
 «նուրեք, ուր որ խօսուած է աղօթական երկրպագութեան և  
 «համբուրման մասին, չիշում են միմիայն խաչեր և մասունք-  
 «ներ: Բացառութիւն էին գուցէ երկու պատկերներ—Բար-  
 «դղիմէոս առաքեալի չաչաստան բերած Տիրամօր պատկերն  
 «և Սշոտ պատրիկի արեւմուտքից բերած և Դարունքում  
 «դրած Փրկչի սքանչելագործ պատկերը: Չաչերի կասկածելի  
 «վերաբերմունքը դէպի պատկերներն է. տիեզերական ժողովի  
 «շրջանում արտայայտուեց նորանով, որ թէև նորանք չէին  
 «խօսում պատկերչարդութեան ընդդէմ, բայց նորա օգտին

«էլ ոչինչ չարեցին իրանց որևէ ժողովում: Կարելի է մի  
 «բան միայն մատնացոյց անել.— այն շրջանում, երբ բիւզան-  
 «դական կայսրութեան մէջ զօրացել էին պատկերամարտ շար-  
 «ժումներն, չաչաստանում յանախեցին հին սքանչելագործ  
 «խաչերի և մասունքների յայտնուելու դէպքեր: Բայց հէնց  
 «այդ էլ պատկերյարգութեան կողմնակի դատապարտութիւնն  
 «է: Նայ բրիտոնեաների անկիրթ միտքը չկարողանալով ըմ-  
 «բռնել նկարուած պատկերների սրբութիւնը՝ պահանջում  
 «էր բուն առարկայի սրբութիւնը.— պահանջում էր, որ խա-  
 «չերը լինեն Քրիստոսի իսկական խաչի մասերը կամ՝ որ ու-  
 «նենային զոնէ որևէ պատմական արժէք. իսկ սրբոց դէմ-  
 «քերի փոխարէն լինէին նորանց իսկական մասունքները: Կաս-  
 «կածանքով նայելով պատկերներին՝ հայերն առանձնապէս պա-  
 «հանջողներ չէին մասունքների արժանաւորութեան նկատ-  
 «մամբ: Այս շրջանում երևացին չաչաստանում շատ կասկա-  
 «ծաւոր ծագում ունեցող մասունքներ: Չաչաստանի զանա-  
 «զան կողմերում երևացին ս. Գրիգորի, Նովոսիմէի և Գայիա-  
 «նէի մասունքներն, և իրանք հայերն այդ մասունքների ծագ-  
 «ման բացատրութիւնների մէջ շփոթում էին» \*):

Ձեռք կարող փոքր ինչ կանգ չառնել ցոյց տալու հա-  
 մար հեղինակի արտայայտած սխալ հայեացքներն, որոնցից մի  
 երկուսը, սակայն՝ ուրիշներն էլ ասել ու կրկնել են:

Նախ՝ միանգամայն անտեղի է պատկերամարտ բառը  
 գործածել հայերի համար: Եթէ Բիւզանդեան Կայսրութեան  
 մէջ ծագումն և գործադրութեան յարմարութիւն ունեցաւ  
 այդպիսի մի անուանադրութիւն, — հասկանալի է, որովհետև  
 իսկապէս մի սոսկալի պատերազմ էր, որ 150 տարուայ ըն-  
 թացքում մղուեց պատկերասէր և պատկերատեաց ուղղու-  
 թիւնների միջև: Իսկ այնտեղ, ուր միմեանց դէմ կռուելու  
 պատրաստուած հակառակորդներ և անցքերի բնական բեր-  
 մամբ սանդժուած կուսակցութիւններ չեն եղել, ուր եկեղե-  
 ցին ինքն իւր որոշ համոզմունքն է ունեցել պատկերների նկատ-

\*) *Исторія Арм. церкви. 125—127.*

մամբ և նորանից հեռանալ չէ ցանկացել, այնտեղ չէին կա-  
 րող լինել և չկային ոչ կռուողներ և ոչ կռուի նիւթ. եթէ  
 երևացել են երբեմն անհատներ, որոնք միտուած են եղել սո-  
 վորականից տարբեր համոզմունքի, զորանք մնացել են այն-  
 բան աննշան իրանց թուի կողմից, որ ոչ մարտնչող բանակ  
 կարող էին կազմել, ոչ բանակ զնելու դաշտ դառնել:

Երկրորդ՝ կարծում ենք, թէ պատմութեան անուշով  
 խօսողի համար ժամանակ է մի կողմ զնելու այնպիսի միա-  
 կողմանի մտքեր, որոնք սնունդ առնելով մի կողմից՝ դարա-  
 ւոր նախապաշարմունքի պարարտացրած հողից, միւս կող-  
 մից՝ անցքերի և փաստերի թեթեւամիտ ուսումնասիրութիւ-  
 նից, եղել են և շարունակում են լինել մի քանի հեղինակների  
 անբաժան ուղեցոյցները: Կանխապէս տեսանք, որ Տրոիցկին  
 չիշելով Յոյների այն առարկութիւնը թէ՛ չայերը չեն ընդու-  
 նում սրբոց պատկերներ, այդ բանի հիմքը տանում անսցնում  
 է միաբնակականութեան համոզմունքին. Փիլոկսենէս, որ չէր ըն-  
 դունում աստուածութեան նիւթական կերպարութիւնն, այլ  
 ուսուցանում էր Աստուծուն երկրպագել հողով և ճշմար-  
 տութեամբ, միաբնակ էր: Միաբնակներն ուրանալով Քրիս-  
 տոսի մարմնի համազօյութիւնը մեր մարմնի հետ, բնականա-  
 բար պիտի ընդունէին մարմնացեալ բանն աննկարագրելի. և  
 որովհետև նոյն հեղինակը գտնում է թէ «չայոց եկեղեցին  
 միաբնակների հետ որոշակի դաւանում է ի Քրիստոս մի  
 բնութիւն», \*) — ահա ուրեմն հասկանալի է թէ ինչու ճնոր-  
 հալու ժամանակին կային պատկերներ չչարգող հայեր — այդ-  
 տեղ նպաստում էր միաբնակ համոզմունքը: Նոյնն այժմ կրրկ-  
 նում է Աննինսկին, որ պատկերամարտութիւն գտնելով  
 չաչաստանում է. դարի վերջում՝ նորա ծագումը բացատրում  
 է արարական և միաբնակ համոզմունքների ազդեցութեամբ:

Թողնենք մի կողմն Արարական ազդեցութիւն ասուածը,  
 քանի որ այդ լուր խօսք է, զուրկ որևէ հիմքից. ինչպէս  
 և այն, թէ Եղիզ Բ.-ի պատկերահալած հրամանը գործա-

\*) *Излож. вѣры церкви. Армянскія вѣр. 86.*

դրուել է և Հայաստանում, մինչդեռ ոչ մի Հայ պատմիչ այդ մասին ակնարկ անգամ ունի, ինչպէս ասել ենք 23 ծանօթութեան մէջ: Թողնենք և այն անիրաւացի կարծիքը, թէ Հայոց եկեղեցին միաբնակ է.—այդ մասին կխօսենք ուրիշ անգամ, եթէ առիթ լինի:—Սչտեղ կամենում ենք այս հարցը միայն տալ.—կա՞յ արդարեւ որեւէ կապ կամ առնչութիւն միաբնակականութեան և պատկերատեցութեան, կամ ինչպէս սովորաբար ասում են՝ պատկերամարտութեան մէջ: Պրօֆ. Լեբել Ե. Տիեզ. Ժողով. պատմութեան առաջին մասը գրելիս եղել է նույնպէս այն կարծիքի, թէ «Հաստատապէս կարելի է «պնդել, որ է. տիեզերական ժողովի յայտարարած վարդապետութիւնը պատկերներն եկեղեցում գործադրելու և յարգելու մասին իւր չնակէտը գտնում է ամենից աւելի Քաղկեդոնեան դաւանաբանութեան մէջ: Պատկերամարտները մեր «ժում էին պատկերների գործադրութիւնն եկեղեցում այն «հիման վերայ՝ թէ Քրիստոսի աստուածամարդկային դէմքը «աննկարագրելի է. թէ՛ կտաւի և տախտակի վերայ առնուում է միայն նորա մարդկային և ոչ Սաստուածային կերպարանքը: «Նորանց այս կարծիքը հիմնուում էր մօնօֆիզիտական այն «հայեացքի վերայ, թէ Քրիստոսի մէջ Սաստուածութիւնը մի «սեռակ ունայնացրեց նորա մարդկութիւնը: Պատկերամարտականին ներհակ որոշումն կարող էր հիմնուել զխաւորապէս այն վարդապետութեան վերայ, թէ ի Քրիստոս կար «երկու կատարեալ բնութիւն—Սաստուածային և մարդկային. «—երկու, բայց անշփոթ և անբաժան բնութիւն, ուստի և «Քրիստոսի միայն արտաքին կերպարանքի նկարագրութիւնն «էլ քրիստոնէական զգացմունքի հետ զօրեղապէս պիտի խօսէր Սաստուածամարդու մասին: Եւ այդ վարդապետութիւնն «է, որ յայտարարուեց Քաղկեդոնի ժողովի որոշման մէջ: Տիեզերական է. ժողովն աւելի մօտ է երևում քաղկեդոնականին, քան որչափ կարող է երևալ առաջին հայեացքով» \*): Մի տարուց յետոյ հրատարակած աշխատութեան երկ-

\*) Всел. Соборы, часть I. 279:

րորդ մասում չիշեալ հեղինակը բոլորովին փոխելով կարծիքը՝ եկել է հետեւեալ եզրակացութեան. «Պատկերամարտութեան «երևումն իւր պատմական զոյութեան մէջ անմիջապէս հետեւում է այնպիսի շարժումների, ինչպէս էին Սաստուածամարդու անձի և կամքի մասին եղած խնդիրների յառաջացրած եկեղեցական շարժումներն: Անվիճելի է, թէ այդ շարժումները խիստ զօրեղ էին և անշնչելի ապաւորութիւն թողեցին մտքերի վերայ: Բայց կարելի է արդեօք այդ շարժումների և պատկերամարտութեան մէջ ազդակցական կապ «դնել. կարելի է ընդունել, թէ այդ շարժումներն այսպէս «կամ այնպէս իրանցից պատրաստեցին, զարգացրին պատկերամարտութիւնը: Հաղիւ թէ: Պատկերամարտութեան ամբողջ պատմութեան մէջ չէ կարելի գտնել մի փաստ, որ ցոյց «տայ թէ որեւէ պատճառական կապ կար պատկերամարտութեան և այն նախընթաց, տիեզերական ժողովներից դատապարտուած հերետիկոսութիւնների մէջ, որոնք վերաբերում էին Քրիստոսի անձին և նորա գործողութիւններին: «Ընդհակառակն աւելի շուտով կարելի է նկատել դրականապէս թշնամական վերաբերմունք պատկերամարտութեան և «նեստորական, միաբնակ և միակամեայ հերետիկոսութիւնների միջև: Պատկերամարտներն ոչ իրանց, այլ պատկերաչարգներին էին անուանում նեստորականութեան և միաբնակականութեան առնչակիցներ:...

«Պատկերամարտութիւնն ըստ իւր ծագման բնաւ կապ «չունի առաջին ժամանակի մոլորութիւնների հետ. նա անկախ և ինքնուրոյն երևոյթ է, որ պատրաստուում էր ամբողջ դարերով» \*):

Եթէ մինչև անգամ պ. Լեբելեն էլ մնացած լինէր իւր առաջին կարծիքի վերայ, դարձեալ իսկութիւնն իսկութիւն կմնար. բաւական է միտ բերել նախ՝ թէ միաբնակականութիւնը ծագումն է առել Ե. դարում, իսկ Սպանիայի եկեղեցական ժողովը (Իլբերիսի) պատկերների դէմ վճիռ արձակեց

\*) Всел. Соборы часть II. 126—127:

306 թուին: Երկրորդ՝ պատկերչարդութեան դէմ որոշուածներ տուող ժողովներն եղան Կ. Պօլսինը՝ 754 թուին, Պրանք-Ֆուրտինը՝ 794 թուին և Պարիզինը՝ 824 թուին, որոնցում զուգարուածներն յունական և հռոմէական եկեղեցու եպիսկոպոսներ էին: Իսկ զորանց վճիռները մօնօֆիղիտական հայեացքի ազդեցութեան վերադրել կարելի է: Երրորդ՝ պ. Անինսկին եկեղեցական—պատմական խնդիրների ուսումնասիրութեան անձուկ սահմանի վերայ զտնուելու մի ապացոյցն էլ տալիս է ասելով, թէ Բիւզանդական կայսրութեան պատկերամարտութեան շրջանում Հայաստանում յաճախ են յայտնուում կասկածելի ծագում ունեցող սքանչելագործ խաչեր և սրբոց մասունքներ, և այդ էլ ընդունում է պատկերչարդութեան մի տեսակ կողմնակի դատապարտութիւն:

Մասունքների յայտնուելու դէպքերն սկսում են երևան դալ այդ շրջանից յառաջ էլ, այդ շրջանումն էլ, նորանից չեաոյ էլ. և աւելի միւս քրիստոնեայ աշխարհներում, որոնցում վաղուց արդէն սովորութիւն էր մտել բոլոր եկեղեցիներում անպատճառ մասունքներ ունենալ: Վեցերորդ դարի վերջում, 592 թ. Սպանիայի Սարագոս քաղաքում զուգարուած եպիսկոպոսական ժողովի 2 կանոնը, թէ «Քահանաները պիտի այրեն արիոսական եկեղեցիներում գտնուած մասունքները», \*) արդէն ապացուցանում է որ Արևմուտքում մասունքներն զրբան վաղ ընդունելութիւն են դատած եղել և զրբան շատ տարածուած են եղել:

Նոյն դարի վերջում Պարիզում զուգարուել է եպիսկոպոսական ժողով, որի 2 կանոնն ասում է. «Սեղաններ պիտի պահպանել միայն այն եկեղեցիներում, որոնցում զտնուում են սրբոց մարմիններ (մասունքներ)»: \*\*)

Եօթներորդ դարի սկզբում Գալիցիայի Պրագա քաղաքում ժողովուած ութն եպիսկոպոսներն իրանց կանոնների 6 յօդուածում ասում էին, թէ մի քանի եպիսկոպոսներ մար-

\*) Hef. q. 598.  
\*\*) Անդ. 611.

տիրոսների տօների միջոցին մասունքներ են կապում իրանց պարանոցին և շրջեցնում եկեղեցում: \*)

Իսկ 787 թ. Նիկիայում զուգարուած է. տիեզ. ժողովըն, ինչպէս նախօրէն տեսանք, մինչև անգամ նդովում է այն եպիսկոպոսներին, որոնք կհամարձակեն օրհնել մասունք չունեցող եկեղեցիներ:

Բացի եկեղեցիներից, Յոյներն, ինչպէս ասում է Թ. դարի պատմիչ Անաստաս Գրապետը, սովորութիւն ունէին կուրծքի վերայ կրել խաչեր, որոնցում զրուած էին լինում կամ Քրիստոսի խաչափայտի մասը, կամ սրբոց մասունք: Կայսրներն այսպիսի խաչեր ուղարկում էին այս և այն անձին ի նշան ապահովութեան ի վտանգէ: Նիկեփորոս կայսրը մի այդպիսի խաչ ուղարկեց Վարդան զօրապետին. Թէոփիլոսն՝ — իւր փեսայ Ալէքսին: Եղել է օրինակ ևս որ Տոյն իսկ կայսրն ինքը հետամուտ է եղել նշանաւոր մասունքներ գրտնել և փոխադրել Կ. Պօլիս: Պատմութիւնն ասում է Յովհաննէս Զմշկիկ կայսրի համար (Ժ. դար), թէ դէպի Սիրիա և Պաղեստին ունեցած արշաւանքներից վերադառնալով՝ բերեց Կ. Պօլիս շատ մասունքներ, որոնց մէջ առանձնապէս նշանաւոր էին Փրկչի հողաթափներն և Յովհաննէս Մկրտչի մաղերն, որոնք դեռ թաց էին իբրև նոր արիւնոտուած: \*\*)

Յայտնի է նմանապէս, թէ Ռոմանոս կայսրն էլ Արաբների դէմ ունեցած արշաւանքից վերադառնալիս բերել է Երեսիայից այն պատկերն, որ համարւում է Քրիստոսի առ Աբգար ուղարկուածը: \*\*\*)

Ընդհանուր քրիստոնեայ աշխարհի այս բարեպաշտական շերմեռանդութիւնը դէպի ս. մասունքները մուտ գործեց և Հայաստան. բայց աւելի ուշ. և այն զանազանութեամբ, որ Հայաստանեայց եկեղեցին երբէք պարտադիր չէ համարել բո-

\*) Hef. 657.  
\*\*) Леб. Очерку. 24.  
\*\*\*) Անդ. 60.

լոր եկեղեցիներու մէջ ս. մասունք ունենալ, կամ այդ նանա-  
 չել եկեղեցիների օրհնութեան և օծման դիւանոր պայման:  
 Եւ երբ արդէն բոլոր բրիտանական եկեղեցիներում այսպի-  
 սի ընդունելութիւն և յարգանք դտան ս. խաչերն և մա-  
 սունքներն, հարկաւ այնուհետեւ դժուար կլինէր թէ եկեղե-  
 ցական հայրերին և թէ հաւատացեալներին մուտք չտալ իս-  
 կականների հետ և այնպիսիներին, որոնք արդարեւ կեղծ ծա-  
 դուծից կարող էին լինել: Որ հայաստանում յայտնուած խա-  
 չերից և մասունքներից շատերը կասկածելի ծագումն են ու-  
 նեցել—ընդունում ենք մենք էլ. և իրանց տեղերում մատ-  
 նանիշ կաններ այդպիսիները. Բայց ի՞նչ ասենք այն հեղի-  
 նակին, որ միայն այս կամ այն եկեղեցու խաչերի և մասունք-  
 ների մէջ կասկածաւորները նկատելու կարողութիւն ունի:

Գ.

Մինչև այժմ յառաջ բերածները կարգալով՝ ընթերցողն  
 իրաւունք ունի հարցնելու.—այս ի՞նչ հակասութիւններ են.  
 ո՞րն է իսկապէս հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան  
 և սկզբունքի արտայայտութիւնը:

Եւ չհարցնէլ նա չէ կարող:

Մի կողմում տեսնում է նշանաւոր պատկերներ իրանց  
 հրաշալի պատմութիւններով, և ի պատիւ նորանց յօրինուած  
 հոգևոր երգեր, նորանց յարգութեան համար սահմանուած կա-  
 նոն (Ստոյ ժողով), և այդ յարգութիւնն ընդունող և պաշտ-  
 պանող կաթողիկոսներ, հեղինակներ, Յայտնաւորք, եկեղեցի-  
 ների պատկերագրութիւն և վերջումն էլ նորանց օրհնութեան  
 կարգ. իսկ միւս կողմում դարձեալ նոյն եկեղեցու հայրապետ-  
 ներ և եկեղեցական հեղինակներ, որոնք կամ իսպառ մեր-  
 ժում են պատկերների կարևորութիւնը կամ ամենաշատն՝  
 ընդունում են միմիայն եկեղեցու զարգարանք և անցեալ դէպ-  
 քերի յուշարար լինելու նշանակութիւնով և ոչ աւելի:

Որպէս զի ընթերցողին իրան դիւրացրած լինենք վերո-  
 կարգեալ հարցման պատասխանը գտնելու, պիտի նորից վե-  
 րադառնանք այն ամենին, ինչ որ գտանք հնութիւնից և ամ-

փոփեցինք Ա. մասում իբրև վկայութիւններ և ապացոյցներ՝  
 թէ պատկերների զոյութեան և թէ նորանց յարգընծայու-  
 թեան մասին հայաստանում, բայց այս անգամ քննութեան  
 առնելով նորանց պատմական ստուգութիւնները:

1. Փրկչական պատկեր կամ անձնադործ դաստառակ:

Ո՞րտեղից է առնում Մովսէս Խորենացին Աբգարի առ  
 Քրիստոս զեսպաններ և նամակ ուղարկելը, նամակի պա-  
 տասխանն և պատկերն ստանալն և այլն: Նա իւր պատմու-  
 թեան Բ. գրքի 14. դիւտում ասում է. «Ղերուբնայ որդի Ափ-  
 շադարայ զպրի զրեաց զամենայն դործս, որ ինչ յաւուրս Աբ-  
 գարու և Սանատրկոյ, և եղ ի դիւանին յԵղեսիայ». և այդ  
 էլ համարուել է նորա աղբիւրը: Խորենացուց յառաջ նոյն  
 աղբիւրից օգտուել է Դ. գրքի հեղինակ Եւսեբիոս Կեսարա-  
 ցին, որ իւր Եկեղեցական պատմութեան մէջ (Ա. դպր. 44.  
 44.) յառաջ բերելով Աբգարի նամակն ու պատասխանը, Թա-  
 դէոս առաքեալի զայլուստն յԵղեսիա և այլն, նոյնպէս մատ-  
 նացոյց է անում նոյն աղբիւրն՝ առանց հեղինակի անունը  
 տալու. «Ի իշտատակարանս հասարակաց, չորս վաղեմի անցք  
 «պատմութեան քաղաքին և դործք քաջութեան Աբգարու  
 «գրոշմեալ կաշին, գտաք և զայսօսիկ պահեալ մինչև ի մեր  
 «իսկ ժամանակս. և չէ ինչ անդէպ լսել զնոյն թուղթ, զոր  
 «առեալ է մեր ի տունէ անտի դիւանին, և յԱսորոց բար-  
 «բառոյն չեղեալ ի Յոյն»:

Մինչև անցեալ դարի կէսը Ղերուբնայի դրուածը հա-  
 մարւում էր կորած. բայց ԺԹ. դարի պրպտող հետազոտու-  
 թիւնների շնորհիւ այդ կորած, անդիւտ համարուող դրուածն  
 էլ լոյս աշխարհ եկաւ թէ իբրև բնագիր՝ ասորերէն լեզուով  
 և թէ իբրև հայերէն թարգմանութիւն՝ երկու օրինակով: Դեռ  
 1848 թ. «բաղմահմուտ ասորադէտ» Դիւրըզոն անդպիացին  
 Բրիտանական մուսէոնի ասորական երկու ձեռագիրների մէջ  
 գտնում է Լարուբնայի, կամ ինչպէս կոչել են յառաջ՝ Ղե-  
 բուբնայի գործը: Ձեռագիրներից մէկը համարւում է դրուած  
 «զրեա թէ յառաջ քան զժամանակ մատենադրութեան խո-  
 «րենացուց, այն է ի սկզբան Ե. դարու. միւսն ի 2. դարու.

«բայց երկօրին ևս անկատարբ. առաջինն թերատ ի սկզբանէ  
«Թուղթ մի միայն... երկրորդն բաղում ուրեք պակասաւոր» \*):  
Իւրրդոնի հրատարակած բնադիրներն ունեցող ձեռագիրները  
բերուած են Եզիպտոսից, Նիտրիայի վանքերից <sup>32</sup>:

1867 թ. հայազէս Վ. Լանդլուան հրատարակում է  
Ֆրանսերէն թարգմանութեամբ Ղերուբնայի «Թուղթ Ար-  
դարու», որը նա գտել էր Պարիզի գրատան հայերէն ձեռա-  
գիրներից մէկում. իսկ հետեւեալ 1868 թուին միաժամանակ  
թէ Վենետիկի և թէ Երուսաղէմի վանքերում հրատարակուած  
է չիշեալ «Թղթի» հայերէնը: Առաջինի օրինակն, ինչպէս ա-  
սում է հրատարակիչը, գտնուած էր 1852 թուին Պարիզի  
գրատան երկաթագիր մի ճառքնախրի մէջ, («դրելոյ հաւա-  
նօրէն չ'ժբ. դարու»): իսկ Երուսաղէմիւն՝ նոյն վանքի գրա-  
տան մի ձեռագիր ճառքնախրից, որի գրիչն ու թուականն  
անյայտ: Այս հրատարակութիւնները զիտնականներին հնա-  
րաւորութիւն տուեցին քննելու և պարզելու երկու հետաքրք-  
րական հարց. առաջին՝ զանուած Յիշատակարանն ինքըն-  
րատինքեան ռըբան վաւերականութիւն կամ պատմական ար-  
ժէք ունի. երկրորդ՝ խորենացին ռըբան հարադատաբար է օդ-  
տուել այդ ազրիւրից, եթէ միայն ուղղակի նորանից է օգտուել:

Առաջին հարցմանը քննադատները հետեւեալ պատաս-  
խանն են տուել. — Բոլորն, ինչ որ պատմուած է իբրև Ար-  
դարի առ Քրիստոս և Քրիստոսից առ նա նամակազրու-  
թիւն և Արդարի դարձ, վկայաբանական զրոյց կամ կեղծիք  
են, և Փրկչ. Գ. դարից չառաջ զոյու թիւն ունենալ չէին կա-  
րող <sup>33</sup>): Բայց եղել են և վերոգրեալ (Լաբուբնայի) զրուած-  
քի կողմնակիցներ, որոնք նկատած պատմական և ժամանա-  
կազրական վրիպակները համարում են «եկամուտ» <sup>34</sup>):

Երկրորդ հարցմանը քննադատներից ոմանք պատասխա-  
նում են, թէ խորենացին արդարև Լաբուբնայի զրուածն է

\*) Լաբուբնայի Թուղթ Արդարու. Վենետ. Յառաջ. եր. Ժ.: Աւելորդ  
կրկնումիւնից խոյս տալու համար Արդարի Թղթի այս հրատարակումիւնը  
կանուանենք Վենետ. օրինակ. միւսը՝ Երուսաղէմի:

ազրիւր ունեցել, միայն թէ վերջինի խօսքերն ինքը փոփո-  
խել կամ ուղղել է իւր կամեցածի պէս. օրինակ՝ Լաբուբնան  
Արդարին Եզեսիայի, ուրեմն Ասորոց թագաւոր է անուանում,  
իսկ Խորենացին նորան զարձնում է Հայոց թագաւոր. նա  
Լաբուբնայի հայ թարգմանութեան մէջ գտնելով Արդար Ար-  
շամայ խօսքերը՝ կարծել է, թէ նշանակում է Արդար որդի  
Արշամայ, և ստեղծել է մի հայ թագաւոր էլ Արշամ անու-  
նով. մինչդեռ հայերէնի Արշամայ բառն, ինչպէս երևում է  
ասորի բնագրից, է աղաւաղումն Ուկամայ խօսքի, որ նշանա-  
կում է սև. և տուած է եղել Արդարին իբրև մակղիր. — Ար-  
դար սև:

Թող ներուել մեզ մեր համեստ կարծիքն էլ յայտնել վե-  
րոյիշեալ խնդիրների մասին:

Ղերուբնայի կամ Լաբուբնայի անունը կրող գրուածն  
անկասկած ասորական ծագում ունեցող բաղմաթիւ կեղծիք-  
ներից մէկն է, բայց մեզ յայտնի եղածը յօրինուած է աւելի  
ուշ այն ժամանակից, որին սովորաբար ընծայում են, և յօ-  
րինուած յայտնի նպատակով, որ այդ ստաւոյ կարկատանք-  
ների միջուկն է կազմում. այսինքն՝ Եզեսիայի եկեղեցու ա-  
ռաքելական ծագումն հաստատելու համար, ինչպէս նկատել  
են արդէն և ուրիշները: Մենք չեստոյ առիթ կուենանք տես-  
նելու թէ քրիստոնէական եկեղեցու հողերը վարչութեան ներ-  
կայացուցիչ հանդիսացող առաջնորդական աթոռներն ե՞րբ և  
ռրպիսի պայմաններում ձգտեցին զահերեցութեան և իշխա-  
նապետութեան, և ռրպիսի հետեւանքներ ունեցան այդ ձրգ-  
տումներն: Այստեղ այսբանը միայն կասենք, թէ դեռ երկ-  
րորդ դարի վերջում և մանաւանդ երրորդի կէսում իշխանա-  
սիրական մրցութիւնը մեծ չափեր էր առել եկեղեցիներում:  
Առաջին քայն անողն այդ ուղղութեամբ ի հարկէ Հոռոմի ե-  
պիսկոպոսական աթոռն էր: 196 թուին Վիկտոր պապը փոր-  
ձեց իշխանաբար միջամտել Փոքր Ասիայի եկեղեցիների զոր-  
ձերում. և պահանջեց, որ նորանք էլ Չաակի տօնը կատարեն  
այն օրում, որ օրում ինքն է կատարում, որին սակայն ոչ  
մի նշանակութիւն չտուեցին Ասիական եկեղեցիներն, ինչպէս

և Վիկտորի բանադրանքներին: Միջամտելու և հրամայելու երկրորդ և համարձակ փորձն արեց Ստեփաննոս պապը Գ. զարի կէսուձ, երբ ծագեց զարձի եկած հերետիկոսներին կրրկին մկրտելու.—չմկրտելու խնդիրն. և այս անգամ էլ Կարթագինէի ժողովը (252—253 թ.) խնդիրը լուծեց իւր սեպհական իրաւասութեամբ, բանի տեղ չդնելով Ստեփաննոսի թէ բողոքը, թէ բանադրանքի սպառնալիքը: Այսպիսով Հռոմի եպիսկոպոսները վաղ արդէն իշխանական դիրք բռնելու փորձեր անել սկսան. բայց արևելեան եկեղեցիներն էլ հէնց բուն սկզբից մերժեցին նորանց ձգտումը, պաշտպանելով առաքելական բոլոր աթոռների հաւասարապատուութիւնն: Այս մտքով, և Ստեփաննոս պապի դէմ, ասուած են համարում նշանաւոր Կիպրիանոս եպիսկոպոսի խօսքերը. «Մեզանից ոչ ոք չէ համարում իրան եպիսկոպոսների եպիսկոպոս (եպիսկոպոսապետ). ոչ ոք բռնի ուժի երկիւղով չէ հարկադրում իւր եղբայրներին իրան հնազանդելու»: Սակայն Հռոմի փառասիրական ձգտումներին դիմադրողներն իրանք էլ քաջ առքաջ ձգտեցին սեպհականեցնելու իրանց եպիսկոպոսապետական նոխութիւն և իշխանութիւն իրանց սահմաններում և ճնշելու դաւառական աթոռների «ըստ սովորութեան» վայելած իրաւունքներն: Եկեղեցիներում պահուած սովորութիւն էր օրինակ՝ որ դաւառների եպիսկոպոսները ձեռնադրուէին դաւառական երկու կամ երեք եպիսկոպոսներից. որ՝ նորանք տարին երկու անգամ ժողով գումարելով՝ իրանք վճռէին աստուածապաշտութեան և եկեղեցական բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներն, և այս սովորութիւններին մինչև անգամ տեղ էր տուած առաքելական կանոնների մէջ. (յօդ. 1 և 37). այն ինչ մայրաքաղաքների առաքելական աթոռներն սկսել էին իրանց իրաւունքներն համարել եպիսկոպոսներ ձեռնադրելը, դատելն և այլն: Գլխաւորներից չետոյ իրանց պահանջներով չառաջ եկան երեք եկեղեցիներ—Եփեսոսի, Կարթեգոնի և Կեսարիայի (Կապադովկիա), որոնք Գ. զարի վերջում արդէն որոշ առաւելութիւններ ձեռք բերած մետրապոլիտական աթոռներ էին: Իրերի այս դրութեան մէջ շատ

հասկանալի է, որ ճնշուող և զրկուող եկեղեցիներն էլ միջոցներ և շանքեր պիտի գործադրէին իրանց պատիւն և իրաւունքները պաշտպանելու. իսկ այդպիսի միջոցներից զըլխաւորն էր հին և նուիրական ծագումն: Իշխանապետութեան առաջին հիմնաքարը զրուեց առաքելական ծագման վերայ, ուրեմն ուրիշներն էլ պիտի աշխատէին իրանց ծագումն կապել առաքելներից մէկն ու մէկի անուան հետ. չետոյ, ժամանակի ընթացքում բաւական եղաւ նոյն իսկ առաքելներից մէկն ու մէկի աշակերտին մէջ բերել կամ զոնէ նորանց մարմնի նշխարներն ունենալ կամ կենաց փայտի մասն և այլն: Նիկիական առաջին տիեղերական ժողովը (325) թէև գումարուեց միմիայն Արիոսի չարափառ վարդապետութեան առաջն առնելու համար, բայց և այնպէս չկարողացաւ անուշադիր թողնել և եպիսկոպոսական աթոռների մէջ զգրացած դժտութիւններն: Ափսոս, որ այդ ժողովից արձանագրութիւններ չեն մնացել, որոնցից կարելի լինէր իմանալ թէ այդ խնդիրն ի՞նչպէս և ո՞ւմ կողմից է չարուցուել և ճրպիսի թէր և դէմ վիճաբանութիւններ են տեղի ունեցել. մեզ հասել են միայն երկու կանոններ—6 և 7, որոնցից առաջինով ժողովը վաւերացնում է Անտիոքի և Աղէքսանդրիայի աթոռների ցանկացած ընդարձակ իշխանութիւնն իրանց սահմանների դաւառական աթոռների վերայ, հաւասար այն իրաւասութեան, որ ունէր Հռոմի աթոռն Արևմուտքում. իսկ 7 կանոնով որոշում է Երուսաղէմի և Պաղեստինացոց Կեսարիայի աթոռների չարաբերութեան խնդիրը: Սորանց մէջ ծագած տարածայնութիւնն այլ բնաւորութիւն ունէր. մէկն առաքելական աթոռ էր, միւսն երկրի վարչութեան մայրաքաղաքի. և երեւի ամեն մէկն իւր առաւելութեան վերայ էր պնդում: Ժողովն եկեղեցական նախամեծարութիւնը տալիս է առաքելականին, իսկ վարչականը՝ մայրաքաղաքի աթոռին: Մնում էր և մի այլ նշանաւոր մայրաքաղաքի աթոռ.—Կ. Պոլսինը. բայց Նիկիայի ժողովը նորան չճանաչեց Հռոմի, Անտիոքի և Աղէքսանդրիայի աթոռներին հաւաստարգօր. ապացոյց՝ թէ այդ ժամանակում եկեղեցական զերիշխանութիւնն առաքե-

լական ծագման վերայ էր հիմնուած: Կ. Պօլսի աթոռին հաղիւ հազ յաշորդուեց ցանկացած հաւասարապատուութիւնը ձեռք բերել 381 թուին, նոյն մայրաքաղաքում զուժարուած երկրորդ տիեզերական ժողովից, որ սահմանեց (Կան. 3). «Կ. Պօլսոյ եպիսկոպոսն ունիցի զպատիւ աւագութեան յետ եպիսկոպոսին հռովմայ, քանզի Կ. Պօլիս նոր հռովմ է»: Սակայն այս աւագութիւնը լոկ պատիւ էր և ոչ թէ եկեղեցական իշխանութիւն շրջակայ եպիսկոպոսների վերայ, որպիսին ստացան միւս մայրաքաղաքների առաքելական աթոռները. կամ՝ ինչպէս ասուած է օրթոդոքս եկեղեցու կանոնադէտ վարդապետը. «Ժողովի ս. հայրերը խօսուած են ոչ թէ Կ. Պօլսի աթոռի որեւէ հոգեւոր կամ եկեղեցական առաւելութիւնների «մասին, ինչպէս օրինակ՝ առաքելական յաշորդութեան կամ «զորա նմանի, այլ միայն արտաքինի—տեղի պետական նշանակութեան մասին.—քանի որ այդ քաղաքը նոր հռոմ է».—ուրիշ ոչինչ... Կ. Պօլսի աթոռին ընծայուած պատուի մէջ նորանք ի նկատի ունեն միայն եպիսկոպոսական դասակարգութիւնն, եպիսկոպոսի արտաքին տարբերութիւնն, և աւելի ոչինչ» \*):

Իայց Կ. Պօլսի աթոռն այդքանով չզոհացաւ: Վերջիշեալ կանոնի «պատիւ աւագութեան» խօսքը բացատրելով հոգեւոր իրաւունքի կամ առաւելութեան նշանակութեամբ՝ աշխատեց տարածել իւր իշխանութիւնն արքեպիսկոպոսական թեմական սահմանից դուրս դտնուած եկեղեցիների վերայ ևս: Այդ ժամանակից էլ սկսուած է նորա և միւս մետրապօլիտական աթոռների մէջ թշնամութիւն, մանաւանդ նորա և Կեսարիայի (Կապադովկիա) մետրապօլիտի մէջ. մինչև որ Քաղկեդոնի ժողովը վերջ դրեց վէճերին: Այդ ժողովը իւր 28-րդ կանոնով Կ. Պօլսի աթոռին տուեց պատրիարք տիտղոս և նորա բարձր իրաւասութեանն ենթարկեց Թրակիայի, Պոնտոսի և Փոքր Ասիական զաւառների բոլոր եկեղեցիները: Այսուամենայնիւ Կ. Պօլսի աթոռը բացի ժողովական վճիռ-

\*) Ονωμο κύρια υπερ. закон. Հատ. Ա. 500—502.

ներից հարկաւոր էր համարել ունենալ և առաքելական մասունքներ: Յովհաննէս կաթողիկոսը (պատմ. եր. 28—29) կամենալով բացատրել թէ որքան իրաւունք ունէին հայոց թագաւորն և նախարարները Մեծն Ներսէսին եկեղեցու պատրիարք ճանաչելով չուղարկել այլ ևս Կեսարիա ձեռնադրուեալու, ասուած է. «Քանզի փոքր ինչ յառաջ քան զայս Կոստանդոս որդի մեծին Կոստանդիանոսի յԵփեսոսէ ի Կ. Պօլիս զնշխարս ոսկերաց Յովհաննու Աւետարանչին փոխեալ, «և յայնմանէ համարձակութիւն առեալ պատրիարք ի Կոստանդինուպօլիս կացուցանէ: Ապա ըստ նմին յայսմ պատճառի համարձակութիւն և Երուսաղէմացուոցն առեալ զիւրեանցն ևս աթոռ հաստատէին, ի պատիւ պատրիարզութեան իրաւունս համարեալ, ըստ որում և ի նմա գոյ տեսեալ եղև Բանին հօր ծնունդ և ընդ մարդկան շրջիլ... Եւ «վասն զի ցայն վայր չորք միայն էին ընդ երկրաւ պատրիարք ըստ չորից աւետարանչացն՝ Մատթէոսին յԱնտիօք, «Մարկոսին յԱղէքսանդրիա, Ղուկայն ի հռովմ և Յովհաննուն յԵփեսոս, ապա յայսմանէ՝ իրակերտութեանց վեց բովանդակեալ կային: Ըստ սմին սակի սպա և մերն թագաւոր Սրշակ և նախարարութիւնք հայոց համարձակութիւն «առեալ կացուցին ի պատրիարզութիւն տանս Թորդոմայ «զմեծն Ներսէս, փաստ իրաւախորհս ըստ արժանին ի մէջ «առեալ զսուրբ առաքեալսն մեր զԲարթոլղիմէոս և զԹադէոս, որք Ասքանաղեանս աղին վիճակեցան ի Տեառնէ «քարոզք և աւետարանիչք. և նշխարեալ ոսկերք նոցա կան «ի միջի մերում, զորոց և զաթոռն իսկ ընկալաւ կենդանի «մարտիրոսն Գրիգոր»:

Կ. Պօլսի աթոռը ձեռք էր բերել նաև Անդրէաս և Ղուկաս առաքելայների և Պողոսի աշակերտ Տիմոթէոսի մասունքներն: Երբ որ Թ. դարում հռոմէական և յունական եկեղեցիների մէջ ծագել էր խիստ տարածայնութիւն՝ Նիկոզայոս պապը կաշարին դրած նամակում աշխատելով պաշտպանել հռոմի աթոռի զերիշխանութիւնն և ստորացնել հակառակորդին՝ ասուած էր.—հռոմի աթոռն առաքելական է, այն ինչ

4. Պօլսիներ չունի այդպիսի ծագումն, այլ միայն ուրիշ եկեղեցիներից չափշտակելով նորանց հովանաւորներին՝ նորանցով է իրան հարստացրել: \*)

Վերագառնանք Լաբուբնային:

Որ «Վարդապետութիւն Աղէի» կամ «թուղթ Աբգարու» կազմուել է մեր չիշած ուղղութեամբ և ժամանակամիջոցում—կասկած չէ կարող լինել: Դարերի ընթացքում Ասորոց Միշագետքի կամ Ուռհայաստանի մայրաքաղաքը լինելով՝ իսկ 215—17 թ. այդ պատիւը կորցնելով՝ Եգեսիան, մտաւոր զարգացման այդ նշանաւոր կեդրոնը պիտի աշխատէր գոնէ ըստ հոգևորին անկախ դիրք ունենալ, և Միշագետքի բազմաթիւ եկեղեցիներն և հետզհետէ բազմացող եպիսկոպոսական թեմերը միանգամայն բաւական էին մետրապօլտական մի աթոռին շուք և պատիւ բերելու, եթէ միայն այդ աթոռը ժամանակի պահանջած նուիրականութեան պատիւը ձեռք բերած լինէր: Այդ մասին պերնախօս վկայութիւն է այն, որ չիշեալ գործի հեղինակն ամեն ինչ պարաստելուց յետոյ—և՛ Աբգարի ծանօթութիւնն ու նամակազրութիւնը Քրիստոսի հետ, և՛ Թադէոս առաքելի գալն ու Եգեսիայում բրիստոնէական եկեղեցի և եպիսկոպոսական աթոռ հաստատելը—հրեւուանքով չայտարարում է իբրև արդէն կատարուած իրողութիւն թէ՛ Ուռհան գարծաւ արևելեան կողմերի ամբողջ աշխարհի մայրաքաղաք. ըստ որում նախ նորանում քարոզուեց Քրիստոսի աւետարանը. նորանում շինուեց առաջին եկեղեցին. դորա համար էլ այժմ նա է իշխում ամբողջ Միշագետքում. նա է տալիս արևելքին եպիսկոպոսներ. «Եւ հնադանդեցան ամենայն Միշագետք և ամենայն կողմանք արևելից ընդ ձեռամբ Աղէի, ըստ վարդապետութեան զոր ընկալաւ չԱղգէէ առաքելոյ: Քանզի յայնմ «ժամանակի մայր քաղաքաց եղև Ուռհայ ամենայն աշխարհին կողմանցն արևելից. վասն զի ի նա նախ քարոզեցաւ «աւետարանն Քրիստոսի, և անդ յառաջ շինեցաւ եկեղեցի.

\*) Лебед. Ист. разд. черквей. стр. 94.

«և անտի ընդունին զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան «ամենայն արևելք»:

Յիշեալ զրուածն այն զրուեթեամբ, ինչպէս երևում է ասորական երկրորդ բնագրում և հայերէն թարգմանութեան մէջ, սկզբնականը ճոխացնող երկրորդ խմբագրութիւն է: Ն. Յ. Տաշեան Լաբուբնայի գործի հեղինակին ճանաչում է «խմբագրիչ... որ Աբգարու զրուցին նախնական պատմութիւնը վերածեց իւր այժմու ձևին»: \*)

Այդ նախնական պատմութիւնն սկիզբն է առել շատ վաղ. նոյն իսկ զուցէ առաջին դարում, երբ որ, հաւանօրէն, բրիստոնէութիւնը մուտք է գտել Ասորիքում և Միշագետքում: \*\*) Ըստ որում արդէն երկրորդ դարի ասորական վկայաբանութիւնների մէջ չիշատակուում են Աբգարի և Թադէոսի գործերը: \*\*\*) Այս սկզբնական՝ անշուշտ շատ ամփոփ չիշատակութիւնը մինչև Գ. դարին հասնելն ընդունում է նոր յաւելումներ. «Աբգրիս Բաբելոնացի... (ոչ երիցագոյն քան «Գ. դար) չիշէ ի գործս Թովմայի առաքելոյ զառաքումն «եղբօր նորին Թադէի ի նմանէ առ Աբգար ըստ զրով խոստ«մանն Քրիստոսի»: \*\*\*)

Այսքան տեղեկութիւնների վերայ էլ կազմուել է Լաբուբնայի գործի սկզբնական խմբագրութիւնն, որ և երևում է Եւսեբիոսի աղբիւրը: Վերջինիս Եկեղեց. պատմութեան Առաջին դարութեան ԺԳ. դուրսն եթէ այդ սկզբնական խմբագրութեան ամբողջական թարգմանութիւնը չէ, գոնէ բովանդակութեամբը նորա վերայ չափած ձևած է: Գ. դարի վերջերում Աբգրիսի և ուրիշների պատմած աւանդութիւններն Աբգարի և Քրիստոսի նամակազրութիւնը զիտեն և Թովմասի զԹադէոս առաքելն առ Աբգար, նորան բժշկելն և ի բրիստոնէութիւն դարձնելն: Եւսեբիոսն էլ միայն չիշեալ նամակներն ունի և Թադէոսի գալն ու քարոզութիւնը: Մի ուրիշ տեղ էլ (Երկր. դպ. դլ. Բ.) Եւսեբիոսը Տերտուղիա-

\*) Հանդէս Ամս. 1893. սր. 193.

\*\*) Վենետ. օր. Յառաջ. 2.

նոսին իրան աղբիւր ցոյց տալով՝ ասուծ է, թէ Պիղատոս Տիբերիոս կայսրին զրեց Յիսուսի կատարած նշանները, յարութիւնից չետոյ շաւերին երևալն, որ ապացոյց էր նորա աստուածութեան: Եւսեբիոսից չետոյ նորա աղբիւրը կրել է նոր նոր յաւելուածներ, նոր խմբադրութիւն: Այստեղ արդէն Թադէոսը (Ադէ) ոչ միայն Աբգարին բժշկել և զարծի է բերել, այլ և Եղեսիայուծ հաստատել է եկեղեցի և ձեռնադրել է իրան յաջորդ Եպիսկոպոս և քահանաներ, և այդտեղ էլ վախճանել ու թաղուել է: Բացի դորանից նորանուծ կան այնպիսի նամակներ, որոնց չէ պատահել Եւսեբիոսն իւր աղբիւրի մէջ.— Աբգարը զրով յայտնուծ է Ասորեստանի Ներսէհ թագաւորին, վերջինիս խնդրի համաձայն, Ադէ առաքեալի Եղեսիայուծ կատարած սքանչելիքներն և գործերը: Նոյն Աբգարը նամակ է զրուծ Տիբերիոսին և յայտնուծ այն, ինչ որ Տերաուղիանոսի ասելով Պիղատոսն է յայտնել: Տիբերիոս պատասխանուծ է Աբգարին թէ՛ Պիղատոսին փոխեցի, ինչպէս խնդրել էիր. թէ՛ պատերազմից վերադառնալուց չետոյ Յիսուսին խաչող հրէաներին պիտի պատժեմ. և կատարուծ է:

Մինչև անգամ այդ երկրորդ, ճոխացրած խմբադրութեան մէջ ևս մուտք են գտել այնպիսի կէտեր, որոնք պարզապէս երևուծ են չետոյ արուած յաւելուածներ: Օրինակ նախ՝ հէնց Աբգարի չիշեալ նամակն առ Տիբերիոս, որ կայ Զ. դարի զրութիւն համարուող «Գիրք մանկութեան Յիսուսի» ասորական մի ձեռագրուծ. նոյնն ունի և Դիւրրդոնի գտած բնագիրների երկրորդ օրինակն, որ նոյնպէս Զ. դարի զրութիւն է համարուծ. \*) հասկանալի է ուրեմն՝ թէ երբ կարող է մտած լինել «Աբգարի թղթի» մէջ, և հաւանական է ասել, թէ այս նամակը կազմուած է Տերաուղիանոսի զրուածից, քան թէ Վենետ. հրատարակչի հետ ասել՝ Աբգարի թուղթը «ոչ անձանթ լեալ այնքան ճարտար հեղինակի» (Տերաուղիանոսի): \*\*)

\*) Վենետ. օր. եր. 8 և 35.

\*\*\*) Անդ. յառաջ. Զ.

Երկրորդ՝ Եւսեբիոս իւր աղբիւրից առնելով՝ ասուծ է թէ Քրիստոս Աբգարին նամակ զրեց. իսկ հայերէն թարգմանութեան երկու օրինակներուծն էլ (Վենետ. և Երուսաղ.) Քրիստոս ոչ թէ նամակ է զրել, այլ Անանին յանձնել է զնալ ասել. «Եւրնկալեալ Յիսուսի զթուղթն... ասէ ց Անան հաւատարիմ արքային <sup>37</sup>». «Երթ և ասա տեառն քուծ... Երանի է քեզ զի հաւատացեր չիս» և այլն: Ի՞նչպէս բացատրել այս խոշոր տարբերութիւնը: Միակ բացատրութիւնն, որ հաւանօրէն կարելի է տալ, այն է թէ բնագրի երկրորդ խմբադրութեան մէջ մի օտար ձեռք զիրը խօսքի է փոխել. իսկ այդ կարող էր լինել կրօնական այն ձեծ վէճերից չետոյ, որոնք ծագել էին Քրիստոսի նամակի իսկութեան և անիսկութեան խնդրի շուրջը. մինչև որ Գելասիոս պապը վիճաբանութիւններին վերջ տալու համար 494 թ. անվաւեր հրատարակեց այդ նամակագրութիւնը <sup>38</sup>): Գուցէ առարկող լինի, թէ այդ դէպքուծ փոփոխութիւն անողն ինչո՞ւ և Աբգարի զրածը խօսքի չէ վերածել: Սակայն պէտք է գիտենալ, որ Աբգարի զրելը չէր կարող այն նշանակութիւնն ունենալ քրիստոնեայ աշխարհուծ, ինչպէս Փրկչի զրածը. վերջինի պատճառով էին ծագել վէճերն. և թէ նա անվիճաբար ընդունուէր՝ հարկաւ պիտի անցնէր կանոնական զրքերի շարքը: Իհարկէ այս կէտն աւելի անկասկածաբար կպարզուէր այն ժամանակն, եթէ Դիւրրդոնի ասորի բնագիրները թերատ չլինէին սկզբից. կամ թէ մի օր յայտնուի անթերի մի օրինակ:

Մի քանի խօսք էլ հայերէն թարգմանութեան մասին:

Այդ զրուածն ե՞րբ է արդեօք թարգմանուել ասորերէնից հայերէն:

Վենետիկեան օրինակի հրատարակիչը կարծուծ է, թէ Խորենացու պատմագրելուց յառաջ «չեղեալ էր յասորուոյն ի մեր լեզու պատմութիւնս այս գործոց Աբգարու. և յստակութիւն իսկ հայերէն շարադրութեանս հաւատարմացուցանէ զայս» (Յառաջ. Ը), ուրեմն Ե. դարի առաջին կէսուծ: Նոյնն է ընդունուծ և Հ. Զարբանալեան (Նալկ. հին Գպր. Պատմ. 100). իսկ Երուսաղէմի օրինակի հրատարակիչը համարուծ է

Թարգմանուած Խորենացուն աշակերտակից մէկի ձեռքով. և մինչև անգամ ասում է թէ ով պիտի լինէր այդ աշակերտակիցն.— Եղնիկը կամ Յովսէփ Պաղնացին, որոնք հայկական դրերի զիւտից յետոյ ս. Մեսրոպի հրամանով ուղարկուեցին Եղեսիա Թարգմանութեան համար (Յառաջ. եր. է): Սակայն պէտք է շարադրութեան յստակութեան վերայ միայն վրստահանալով՝ աչքաթող անել այնպիսի կէտեր, որոնք ոչ մի կերպ իրաւունք չեն տալիս Թարգմանութիւնը Չ. դարից յառաջ տանելու: Այդ կէտերն արդէն վերեւում ցոյց տրուածներն են, որոնց աւելացնում ենք և հետևեալը: Ինչպէս պիտի տեսնենք իւր տեղում, Քրիստոսի պատկերի չիշատակութիւնն առաջին անգամ Չ. դարումն է լինում: Եղել է արդեօք այդպիսի չիշատակութիւն ասորի՝ այժմ թերատ յայտնուած բրնազրում թէ ոչ՝ միևնոյն է. երկու դէպքումն էլ հայերէն Թարգմանութեան ժամանակն է որոշուած:

Այժմ պիտի մատնացոյց ամենք հայերէն Թարգմանութեան օտար ձեռքերից կրած յետնագոյն յաւելուածները:

Ա. Գիւտ Խաչի Պատրոնիկէի ձեռքով.

Վենետկեան օրինակի մէջ 12—17 երեսները զրաւում է մի աւանդութիւն, որի բովանդակութիւնն այս է. Կղօղիանոս կայսրի կին Պատրոնիկէն քրիստոնէութիւն ընդունած լինելով՝ իւր որդիների և աղջկայ հետ զնում է Երուսաղէմ: Այնտեղ Յակովբոս առաքեալից խմանալով, որ Գողգոթան և Յարութիւնը (գերեզմանը) հրէաների իշխանութեան ներքոյ են, պատուիրում է նորանց այդ տեղերն յանձնել Յակովբոսին. ապա վերջինիս և ուրիշներին հետն առած՝ զնում է տեղերը տեսնելու. մանաւանդ որ փափաղ ունէր ս. խաչափայտը գտնելու: Երբ որ կայսրուհին մտնում է գերեզմանը՝ զանում է այնտեղ երեք խաչափայտ: Մտնելուն պէս ընկնում մեռնում է նորա դուստրը, և Պատրոնիկէն որդու խորհրդով նախ մի խաչն է զնում զստեր զիտակի վերայ և աղօթում. մի ժամ սպասելով և զօրութիւն չտեսնելով՝ զնում է երկրորդ խաչն և դարձեալ աղօթում. այս անգամ էլ երկու ժամ սպասելով և դարձեալ զօրութիւն չտեսնելով՝ այն էլ վերց-

նում է և զնում երրորդն. և անա խնդոյն դուստրը կենդանանում է և ոտքի կանգնում: Այդ հրաշքից յետոյ Պատրոնիկէն Քրիստոսի ս. խաչափայտն յանձնում է Յակովբոսի պահպանութեանն և ինքը վերագառնում է ճոռմ. իսկ Յակովբոս առաքեալն, որ «ինքն իսկ աչօք իւրովք ետես զիրս զայս, գրեաց և ետ տանել ընկերաց իւրոց առաքելոցն ամենեցուն յաշխարհս և ի քաղաքս, ուր շրջէին ի նոսա». նորանց թուումն էլ և Թադէոսին. վերջինս էլ սլատում է Սբզարին և Եղեսացիներին:

Երուսաղէմի օրինակում չկայ այս աւանդութիւնը. բայց թէ նորա և թէ Վենետիկի օրինակի հրատարակիչներն որքան էլ իրանք հասկանալի երկիւղածութեամբ կամենում են նորա հնութիւնն և նոյն իսկ ճշմարտանմանութիւնը պաշտպանել<sup>39)</sup>, դարձեալ կեղծիքի մերկացման փաստ են տալիս՝ առանձին զնելով ձառքնախրներից հանած մի մի օրինակ:

Մինչև վերջին ժամանակս չայ հեղինակներն անելանելի զրութեան մէջ էին մնում վերողրեալ աւանդութեան մասին խօսելիս, չիմանալով ինչպէս բացատրել նորա զօրութիւնը. — ընդունել իբրև քիչ թէ շատ վստահութեան արժանի, իբրև իրողութիւն. բայց պատմութիւն կար աչքի առաջ, որ ասում էր, թէ խաչի զիւտն եղել է 326 թ. Նեղինէ դշխօյի ձեռքով: Ընդունել առասպելական զրոյց. բայց ի՞նչպէս. չէ՞ որ նորա կողմն են Մովսէս Խորենացի, Յայսմաուուրը, ձառքնախրներ. և սորանք բոլորն էլ Պատրոնիկէի զիւտին են տալիս ճշմարտանման բերած խաչի ծագումն. այն խաչի, որ արդէն աօն ունի եկեղեցում և շարական առանձին: Մինչև անգամ իւր պատմագիտական խորին հմտութեամբ յայտնի Տ. Մ. Չամչեանը թէև համարում է (Նատ. Բ. 548—49) որ «Այս պատմութիւն զիւտի խաչին ի ձեռն կնոջ Կղօղեայ կայսեր նոյն է, զոր յոյնք և լատինք, հալք և ասորիք աւանդեն լինել յաւուրս Նեղինէ Թադուհուոյն՝ մօր մեծին Կոստանդիանոսի՝ ալովք պարագայիւր». բայց դարձեալ ստիպուած է ասել, թէ ս. Նովիսիմէի ստացած խաչը կարող էր լինել խաչափայտի այն մասերից, որոնք հաւանօրէն եղել են

առաքեալներն ձեռքուծ, և որոնցից մէկն անցել է Պատրոնիկէին. «Եւ եթէ այսպէս է», այսինքն երբ խաչի զիւոր չնդինէն է կատարել և ոչ Պատրոնիկէն, «ապա պարտ է ա-  
«սել, թէ այն խաչ չօրհանեալ՝ որ յայտնեցաւ ի լեռն Վա-  
«րագայ ակն յանդիման ազգին հայոց, ոչ էր ի խաչէն գտե-  
«լոյ, այլ՝ թերևս ի մասնէ ինչ խաչափայտի յառաքելոց  
«անտի մնացելոց. զի հաւանականագոյն է ասել, թէ կային  
«չաւուրս առաքելոց մասունք ինչ խաչափայտին Քրիստոսի  
«ի ձեռս հաւատացելոց, յորոց և մասն ինչ հասեալ է ի ձեռս  
«թագուհւոյն, և անտի ի ձեռս չօրհանեալ. կամ գուցէ այն  
«խաչ՝ որ յայտնեցաւ ի Վարագ, իցէ յայլ ինչ մասնէ, զոր-  
«մէ այլ ինչ չունիմք ասել»:

Սակայն ս. Խաչը Պատրոնիկէին գտնել տալ ցանկացող-  
ները չնդինէի զիւտի պատմութեանն էլ պիտի տեղ թողնէին,  
որ կեղծիքը ծածկուէր. և մտածել են Պատրոնիկէին գտնել  
տալուց յետոյ կրկին թաղել տալ խաչափայտն, որ չնդինէն  
նորից գտնի: Թէ Երուսաղէմի և թէ Վենետիկի առանձին տպա-  
գրած Պատրոնիկէի պատմութեան օրինակները վերջանում են  
հետեւեալ խօսքերով. «Եւ զկնի մահուանն Կղաղեայ և Պատ-  
«րոնիկէայ չրէայքն... փախստական արարին զհաւատացեալս,  
«սպանին և զՅակովբոս զեղբայրն Տեառն, և առեալ թաղե-  
«ցին զսուրբ Խաչն յերկրի ի տեղոջ զազաթանն՝ անչայտ  
«ի մարդկանէ» (Երուս. օր.):

«Եւ զկնի մահուան Կղաղեայ և Պատրոնիկէայ չրէայքն...  
«փախստական արարեալ զհաւատացեալսն. և ի նմին ժամու  
«յաղագս սորին պատմութեան առեալ թաղեցին զսուրբ Խաչն  
«յերկրի տեղոջ զազաթանն մինչև ցայսօր. զի յամենեցունց  
«փառաւորեսցի սուրբ Երրորդութիւնն, այժմ և միշտ և  
«չաւիտեանս»: Յիշեալ «պատմութիւնն» «Սբգարի թղթի»  
մէջ մուծանողը Պատրոնիկէի մահն և խաչափայտի կրկին թա-  
ղուծը թողել է. իսկ ձառքնտիրների օրինակները թողել են յետա-  
գայ շարունակութիւնն, որ վերաբերում է ս. չօրհանեալին և  
նորա նանապարհորդութեանը զէպի չայաստան, կամ աւելի  
հիշտ ասած՝ զէպի Վարագ, ուր պիտի պահուէր խաչամասը:

Որովհետև յետոյ առիթ պիտի ունենանք խօսելու թէ  
այդպիսի մի «պատմութիւն» ճիշտի նպատակով, երբ և  
ճրտեղ է ծագումն առել, ուստի այստեղ այսքանն ենք յայտ-  
նում, թէ Պատրոնիկէի զիւտի պատմութիւնը Ժ. դարից վաղ  
կարող չէր մտնել Սբգարի թղթի մէջ <sup>40</sup>):

Բ. Լաբուբնայի հայերէն թարգմանութեան մէջ մտած է  
19 տողից բաղկացած մի հատուած (Վենետ. օր. 43—44),  
իբրև Թաղէոսի քարոզած խօսքեր, որ չկայ ասորական նոյն  
խոյն Զ. դարի բնագրում. բայց Իլերրդոնը գտել է առանձին  
գրուած ուրիշ ասորի ձեռագրում և թարգմանել է: Չայե-  
րէնումն էլ, ինչպէս ասում է Մխիթարեան հրատարակիչը  
(44. ծանօթ.) «գտանի և ուրոյն գրեալ բանս այս ի կանո-  
նագիրս կամ ի ձառքնտիրս ուրեր»: Նոյն հատուածն առան-  
ձին գրուած կայ և Երուսաղէմի գրատան ձառքնտիրի մէջ,  
որ գրուած է Փրկչի 1419 թուին (Եր. օր. եր. 76):

Թէ որքան յետնագոյն ժամանակի յաւելուած կարող է  
լինել այդ հատուածը—ցոյց են տալիս յետագայ խօսքերը.  
«Բայց զայս զիտէք զուր, զի ասացի յառաջագոյն, թէ ողիք  
«ամենայն մարդկան, որ ելանեն ի մարմնոյ աստի՝ ոչ մեռա-  
«նին, այլ կան մնան կենդանի, և են նոցա օթ և անք և  
«բնակութիւնը հանգստեան»:

Գ. Ասորական հնագոյն աղբիւրներում չիշուում են Աղ-  
ղէ հայրապետին մէկ մէկից յետոյ յաջորդող առաջնորդներ—  
Փղոտ, Բարշղամայ և Բարսեմի. վերջինս Բ. դարի սկզբում  
(Վենետ. օր. 32 ծանօթ. 2): Լաբուբնայի գործում գորանք բո-  
լորն էլ ժողոված են Թաղէոս առաքեալի շուրջն իբրև նախ  
նորան աշակերտածներ և ապա ձեռնադրութեամբ նորան գոր-  
ծակից կարգուածներ: «Բայց Աղէ կերպասագործ... և Փր-  
«ղոտ և Բարշղամայ և Բարսեմի հանդերձ այլովք ընկերօք  
«իւրեանց՝ յարեցան յԱղէ առաքեալ. և ընկալաւ նա զնոսա  
«հաղորդելով ընդ իւր ի պաշտօն և ի վարդապետութիւն»:  
Այս խօսքերի նպատակն այն է, որ Եղեսիայի եկեղեցու ա-  
ռաքելական աթոռի առաջին յաջորդների ընտրութիւնն և  
բահանայական ձեռնադրութիւնն առաքեալին իրան կատա-

րել տայ, իսկ այնուհետև՝ Աղղէի եպիսկոպոսանալուց չետոյ աթոռն ինքր կշարունակի տալ եպիսկոպոսներ. «Իսկ Աղղէ, որ աշակերտեցաւ նմա՝ եղև առաջնորդ և հրամանատար և «ժառանգաւոր աթոռոյն Աղղէի առաքելոյն... և անտի ըն- «դունին զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան ամենայն ա- «րևելք»: Դորանից չետոյ բնադիրը վերջացնում է իւր պատ- մութիւնն ասելով՝ թէ երբ Աղղէ եպիսկոպոսի սրունքը խոր- տակեցին և նա Փղոտին և Բարշղամային պատուէրներ տա- լուց չետոյ մեռաւ՝ եկեղեցին ծանր սուգ կրեց, ինչպէս կրել էր և առաքելի մահուան առիթով. մինչդեռ հայերէն թարգ- մանութիւնը շարունակում է ասել ուրիշ բան.— երբ որ խոր- տակեցին Աղղէի սրունքն և նա շուտով վախճանեց՝ չկարո- ղանալով ձեռնադրել Փղոտին, վերջինս զնաց Անտիոք և ձեռ- նադրուեց տեղւոյն Սրապիոն եպիսկոպոսից. Սրապիոնն էլ ձեռնադրուած էր Հռոմի Զեփրիանոս եպիսկոպոսից. Զեփրիա- նոսը Պետրոսից. «Եւ քանզի իբրև խորտակեցին զոտս նորա՝ «վաղվադակի մեռաւ փութապէս, և ոչ ժամանեաց ձեռնա- «դրել զՓլոտ, ապա զնացեալ Փլոտ չԱնտիոք և ընկալեալ անդ «զձեռնադրութիւն քահանայութեան ի Սրապիոնիէ եպիսկո- «պոսէ չԱնտիոք քաղաքէ, որ և ինքն իսկ Սրապիոնի ընկա- «լաւ զձեռնադրութիւն ի Զեփրիանոսէ եպիսկոպոսէ ի Հռոմիմ «քաղաքէ, որոյ ընկալեալ զքահանայութիւն ի Սիմոնիէ Վի- «մէ, որ ընկալաւ ի Տեառնէ» (Վենետ. օր. 49, 50): Սրա- պիոն եպիսկոպոսը վախճանել է 211 թ. Զեփրիանոս պապը՝ 218 կամ ըստ Զամչեանի 217 թուին: Երևի այդպիսի սրբ- բազրութիւն նախապէս կատարուել է Բարսեմի եպիսկոպոսի վկայաբանութեան մէջ և չետոյ նորանից խոխազրել են հայե- րէնին: Ըստ որում չիշեալ վկայաբանութեան Դիւրրդոնի հրա- տարակած օրինակի վերջաբանում, ինչպէս ասում է Վենետ. օրինակի հրատարակիչը (եր. 50, ծանօթ. 1), նոյնպէս ասուած է. «զՓլոտ ձեռնադրեալ ի Սրապիոնիէ, և զնա ի Զեփրի- «նոսէ. իսկ զսա ոչ անընդմէջ ի Սիմոնիէ Վիմէ՝ այլ ի Վիկ- «տորէ, և զսա չելեթերիոսէ, և այսպէս մի ըստ միոջէ թուեալ «զքահանայապետս Հռոմիայ հանէ ի Պետրոս»: Ինչ էլ որ լի-

նի, ժամանակագրական վրիպակները պարզապէս ցոյց են տալիս խարսխուածն, որի նպատակը յայանի է.— Սասրուց Միշազեաքի հետ միասին Անտիոքի աթոռն էլ զնել Հռոմի գերիշխանութեան ներքոյ: Այդպիսի նպատակով է կաղմուել և հուշակաւոր «Դաշանց թուղթը», որպէս զի Հայոց Գրի- գոր Հուսաւորիչը Հռոմի աթոռից ստացած լինի հայրապե- տական իշխանութիւն:

Այսքանը Լաբուրնայի մասին ասելուց չետոյ վերադառ- նում ենք մեր բուն խնդրին:

Խորենացին Աբղարի և Յիսուսի նամակներն առել է Եւ- սեբիոսի Եկեղ. պատմութիւնից, ինչպէս ընդունում են և Գա- թրընեանն ու Գարազաշեանը \*): Սակայն Եւսեբիոսը պատ- կերի մասին տեղեկութիւն չունի: Արդ՝ Խորենացին ինքն ի- ռանից է աւելցնում, թէ մի տեղից առած է: Չենք կարող ասել, թէ առել է Լաբուրնայի հայերէն թարգմանութիւնից. ըստ որում՝ ինչպէս վերն ասացինք, այդ թարգմանութիւնը Զ. դարից չառաջ չէր կարող լինել. և եթէ օգտուած լինի նա այդ զրուածքից՝ պիտի օգտուած լինի ասորերէն բնա- գրից, քանի որ զիտէր այդ լեզուն և Եդեսիայումն էլ եղած է: Եթէ Խորենացու նորագոյն բնագատները եղրակացու- թեան համաձայն ընդունենք թէ այդ պատմութիւնը Ե. դա- րի Խորենացու անունով ներկայացնողը շատ ուշ ժամանակի — է. կամ Լ. դարի — հեղինակ է, թէև այդ եղրակացութիւնը զեռ վերջնական ստուգութեան կարօտ խնդիր է, այն ժա- մանակն արդարև Լաբուրնայի հայերէն թարգմանութիւնը կեղծ-Խորենացու աղբիւրն եղած կլինի, և երկուսի մէջ նկա- տուած խոշոր տարբերութիւնները՝ վերջինի արած կամայա- կան փոփոխութիւններ: Սակայն այդ ընդունել և նորա վե- րայ հիմնուած՝ հարցը վճել չենք կարող. ուստի մնում է զործ ունենալ Ե. դարի Խորենացու հետ, որ կարող էր դար- ձեալ կամահան կերպով վարուել ասորի բնագրի հետ, իրա- նից ուղղելով և փոփոխելով նորա տուած տեղեկութիւններն, եթէ միայն փաստեր լինեն այդպէս ընդունելու:

\*) Գննակ. Պատմ. Գ. 264.

Լաբուբնայի «Թուղթ Աբգարու» ասում է թէ Անանն «առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր զեղովք, քանզի արուեստաւոր թագաւորին էր.» Խորենացին Անանի «զեղովք նկարելու» մասին լռում է և ասում միայն. «Եբեր Անան... զկենդանադրութիւն Փրկչական պատկերի». Լաբուբնան ասում է, թէ Աբգարն Յիսուսի պատկերն ընդունեց և դրեց «պատուով ի սենեկի իւրում յապարանս իւր». իսկ Խորենացին այդ թողնում է. և «Անանը բերեց» ասելուց չեւոյ անմիջապէս աւելացնում է. «Որ կայ չեղեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի»: Ի՞նչ զիտաւորութեամբ արդեօք այսքան տարբերութիւնը տեղի ունեցած պիտի լինի: Առաջին փոփոխութիւնը Խորենացուն տալը հասկանալի կլինէր միայն այն ժամանակ, եթէ Ե. դարում Հայաստանում պատկերների շարգութեան խնդիր արծարծուած լինէր, և ինքը, պատմագիրն էլ շարգողներից մէկը լինէր: Վերջապէս ի՞նչ պէտք կար աւելացնելու «Որ կայ չեղեսացւոց քաղաքի մինչև ցայսօր», մինչդեռ ինքը Եղեսիալում եղած լինելով՝ չէր կարող ոչ պատկեր տեսնել և ոչ նորա մասին լսել մի բան այն քաղաքացիներից, որոնք իրանք չգիտէին նորա դրութիւնը. քանի որ, ինչպէս աւանդութիւնն է ասում, այն ժամանակից, երբ Աղդէ եպիսկոպոսը Անանէի երկիւղից պատկերն իւր դրած տնդում թաղցրեց՝ կղմինդրով ծածկելով և սուղելով, Եղեսացիներին ոչ միայն տեղը չայտնի չէր՝ այլ հինգ հարիւր տարուայ ընթացքում մինչև իսկ պատկերի դրութիւնը նորանց մտքից մոռացուած էր, մինչև որ 545 թ. երբ պարսից Խոսրով թագաւորը պաշարում է քաղաքը, պատկերը տեսիլքով չայտնւում է տեղական եպիսկոպոսին և հրաշքով ազատում պաշարուած քաղաքը: \*)

Այս աւանդութեան՝ որով և փրկչական պատկերի առաջին չիշատակողն է Զ. դարի հեղինակ Եւաղըրը, որ ազգով ասորի է, ծնուած Եպիփանիա քաղաքում 536 թ., գնացած լինելով Կ. Պօլիս՝ պաշտօն է ունեցել արքունական դրանը:

\*) Св. Убогъс. 27—28:

Իւր Եկեղեցական պատմութիւնը դրել է չունարէն և հասցրել մինչև 594 թուականը:

Յայտնի է, թէ այդ ժամանակում պատկերչարգութեան դէմ կային վիճաբանութիւններ և հակառակութիւններ, թէև ոչ ընդարձակ չափով:

Յիշեալ աւանդութեան հետ սերտ կապ ունի և Լաբուբնայի գրուածքում մուտք գտած պատկերի չիշատակութիւնը:

Ութերորդ դարում երբ որ Լևոն Իսաւրացին խիստ հալածանքներ սկսեց պատկերչարգութեան դէմ, թէ Կ. Պօլիս Գերմանոս պատրիարքը, թէ Հռոմի Գրիգոր Բ. պապը, (վերջինը գրով) կայսրի հետ խօսելիս ի պաշտպանութիւն պատկերչարգութեան՝ չենւում էին այդ աւանդութեան վերայ. միայն թէ այդ միջոցում փրկչական պատկերն այլ ևս Անանի «զեղովք» նկարածը չէ կոչւում, այլ «անձեռագործ»: Նոյն դարի հեղինակ Յովհան Դամասկացին դրում է «Յաղագս ուղղափառ հաւատոյ» գրքում. «Զրոյց ի վաղ ժամանակաց աւանդութեամբ մինչև առ մեզ հասեալ կայ, թէ Աբգար թագաւոր Եղեսիոյ լուեալ՝ զոր միանգամ պատմեալ լինէին գտեառնէ, և վառեալ ՚ի սէր աստուածային, առաքեաց առ նա «հրեշտակ» աղաչել զնա, զի հաճեսցի գալ և արժանի առնել զինքն տեսութեան իւրոյ, և պատուէր ետ հրեշտակաց, զի եթէ այսմ չիցէ հնար լինել, զպատկեր նորին նկարեալ «բերցնն առ ինքն: Զայն իբրև զիտաց, որ զիտակն է ամենայնի, և կարող յամենայնի, էառ զգաստառակ, և մերձեցողեալ զայն ի դէմս իւր՝ տպաւորեաց ի նմին զիւր կենդանագիր: Եւ այս գաստառակ պահեալ կայ մինչև ցայսօր «ժամանակի»: \*)

Յայտնի է արդէն թէ որչափ էլ Հայոց Եկեղեցին իւր որոշ հայեացքներով և սկզբունքներով է զեկափարուել արևմրտեան և արևելեան եկեղեցիներում շարուցուած և որոշումների ենթարկուած դանապան կրօնական խնդիրների նկատ-

\*) Չամչ. Ա. 579:

մամբ, որքան էլ նա աշխատել է հեռու կամ անմասն մնալու ընթացքին հետևել, այսու ամենայնիւ ջանքեր անսպասելի են եղել կամ չափանապէս կամ դադարաբար տարածել հայոց մէջ այս կամ այն դաւանարանական որոշումները կամ սահմանուած ծէսերը: Այդպիսի ջանքեր աւելի շարմարութեամբ գործ դնողներն եղել են կամ կրօնով արդէն բաժանուած, կամ առանց չափանի բաժանման հայ եկեղեցում ապրող, բայց համոզմունքով և ուղղութիւնով նորան անհամակիր եկեղեցականներ, կամ քարոզչական պաշտօնով եկած եկեղեցականներ: Մի կողմից այդպիսի մարդկանց աշխատութիւնները, միւս կողմից առանձին հակուածներով առաջնորդուող «բարեպաշտ խարէութիւնը» չեն խնայել «նպատակի համար» օգտուել մեր առաջնադարեան և միջնադարեան մատենագիրների անուններից էլ, դրուածներից էլ. մենք այսօր զրեթէ չունենք այդ շրջաններից մեզ հասած գրուածք, որ փոքր թէ մեծ չափով աղաւաղուած և այլապէս չլինի անմարուր ձեռքերի կատարած սրբագրութիւններով և չաւելուածներով:

Ընդհանրապէս անսակ ձեռքի գործ է և Խորենացու Պատմութեան ամբողջ նախադասութիւնը պատկերի մասին: Դամասկացու գրուածից է առնուած «կենդանագրութիւն» (կենդանագիր) խօսքն էլ, նախադասութեան վերջին մասն էլ, «Որ կազ մինչև ցայսօր ժամանակի», աւելացրել են միայն «չեղեւսացուց քաղաքի» բառերը. հետևաբար այդ չաւելուածը Խորենացու Պատմութեան մէջ մուտք կարող էր դանել շատ ուշ, չամենայն դէպս Ը. դարից ոչ վաղ:

Այդ նոյն չաւելուածը մտցրած է և մի այլ գրուածքում, որ նոյնպէս վերագրուած է Խորենացուն. — Աշխարհագրութեան մէջ. «Միջագետք... ունի... քաղաքս բազումս, չորոց մի է Ուռհա, ուր անձեռագործ պատկերն է Փրկչին» \*): Բայց այս վերջինը չէր կարող առանձնորդ դարից վաղ տեղի գտած լինել. բոս որում «անձեռագործ» բառը մտել է մեր ձառնատիրների և Յայսմաւուրքի մէջ այդ ժամանակներում, երբ արդէն պատկերի գրուցի երկրորդ ձևակերպութիւնն է

\*) Մովս. Խորեն. Մատենագր. Աշխարհացոյց. եր. 611:

երևան զայիս—հրաշքով նկարուելը. <sup>41)</sup> Ժ. դարի առաջին քառորդում վախճանած Թովմա Արծրունու Պատմութեան մէջ երևում է այդ երկրորդ ձևակերպութիւնն, աւելի Յայսմաւուրքի, քան պատմագրի խօսքերով. «Եւ զանձկալից տեսութիւնն հրաշափառապէս և անճառաբար ի վարչամակի տպաւորեալ էլից զկարօտութիւնն Աբգարու աղբիւրն կենաց Գրիստոս»: \*)

Վերոյիշեալ նախադասութիւնը պատկերի մասին միակ անհարազատ չաւելուածը չէ Խորենացու Պատմութեան մէջ: Այդպիսիներն աւելի շատ են, քան որչափ մինչև այժմ նկատել են բանասէրներն և քննադատները, նորանում կան նոյն խակ ազնատուած գլուխներ: Գարազաշեանը շատ հաւանական է համարում օրինակ՝ «թէ ԿՍ. զլխոյն այն վերջին հատուածը և ԿԲ. զլուխն ամբողջ՝ են եկամուտ և անհարազատ»: \*\*) Եթէ տարակուսական գտնենք չիշեալ զլխի ամբողջութեան անհարազատութիւնը՝ դոնէ անտարակուսելի պիտի համարել նորա վերջին տողերն, որ Խորենացուն տանում են Իտալիա «հողմերի բռնութեամբ», որպէս զի ս. Պետրոսի և Պողոսի շիրիմները համբուրի: Իսկ որ կասկածից դուրս անհարազատութիւն է ներկայացնում Պատմութեան երկրորդ Գրքի ԼԴ. գլուխն է, «Յաղագս վկայութեան Առաքելոցն մերոց», որի մէջ չիշուած ս. Թագէտոսի և Սանդուխտ կուսի նշխարների զիւտն և փոխադրութիւնն առիթ է տուել Կ. Յ. Տաշեանին ասելու. «Ի հարկէ Մ. Խորենացի կարգա-«ցած է սրբոց նշխարաց զիւտի պատմութիւն մը. վասն զի «կը չիշէ «աստ ուրեմն չափանել նշխարաց երկոցունց և «փոխել յԱռապարն»: Խորենացու այս խօսքն առիթ տուած է «Չամչեանի՝ նշխարացս զիւտի ժամանակն Ե. դարուն կէ-«սերը մղելու... Եւ արդեօք նաև այստեղ նշան մը չունինք «պնդելու, թէ Խորենացուց զրքին այս (ընդմիջարկեալ) խօս-«քը Եօթներորդ դարէն չառաջ չէր կրնար գրուիլ: Խո-

\*) Պատմ. Տանն. Արծ. 46.

\*\*) Բնն. Պատմ. Դ. 63.

«րենացի նշխարները «Սուսպարն» փոխադրուած կ'ըսէ իրեն «ժամանակները (աստ ուրեմն): Բայց արդ Ս. սուսպարի ս. Գրիգոր հռչակաւոր եկեղեցին «ի վերայ պողոտային Վա- «ղարշապատ քաղաքի յարդարելով զվայրսն առապար... «գեղեցկագիր յօրինուածով բարձր պարսպաւ» շինեց ներ- «սէս Գ. Շինող (իբր 640—661): Պէտք չէ ուրեմն ըսել, որ «այս ժամանակէն ետքն է «աստ ուրեմն» բառերով բացա- «տրուած ժամանակը: Եթէ հարազատ է այս խօսքը, կ'ու- «նենանք նոր ապացոյց մ'ալ այն կարծեաց, զոր մօտերս «յայտնեց հայագէտ ուսուցչապետն Գարիէր»: \*)

Խօսքն այն ժամանակի մասին է (Է.—Ը. դար), որին հասցնում է հանդ. պրօֆ. Կարիէրը Խորենացու պատմա- գրութիւնը:

Ո՛չ գիտնականների քննադատութիւնների զիմաց Խորե- նացուն իբրև Ե. դարու պատմագիր պաշտպանելու միակող- մանի ցանկութեամբ՝ այլ նոյն գիտնականների ուշադրութիւ- նը հրաւիրելու մտքով քննուող խնդրին մի այլ կողմից ևս նայելու համար, հարկ ենք համարում ասել հետևեալը: Մին- չև այժմ քննադատութիւնը դրեթէ մի ուղղութիւն է ընտ- րել.— Ուր որ նկատուած է Խորենացու Պատմութեան մէջ՝ կամ ժամանակագրական տարակուսանք, կամ համանմանու- թիւն Ե. դարից չետոյ զրած կամ թարգմանուած զրական գործերի հետ՝ Խորենացուն համարել նորանցից օգտուողն և նորան տանել հասցնել այն ժամանակին, ուր կանգնած է աղբիւրն. իսկ թէ Խորենացու իրան զրուածի մէջ չեանագոյն ձեռքեր չաւելուածներ և ընդմիջարկութիւններ կարող էին անել,—այդ մասին շատ հարեանցի ուշադրութիւն է դար- ծուած: <sup>42)</sup> Ինչո՞ւ, օրինակ, Լ. Գ. զլխում հանդիպելով սրբա- բանական մի հատուածի՝ պէտք է ասել թէ Խորենացին ինքն է կարգացել Է. դարում կազմուած «Սրբոց նշխարաց գիւտի պատմութիւնն». ուրեմն ինքը Է. դարից յառաջ ապ- րած հեղինակ չէ. և ոչ ասել, թէ նորա Պատմութեան այդ

\*) Հանդ. Ս.մ. 1893. 261.

զլուխը Է. դարում կրել է ընդմիջարկութիւն: Կամ թէ՛ ինչո՞ւ գտնելով Խորենացու Պատմութեան մէջ Սրբարի այն- պիսի նամակներն, որոնք չկան ոչ Եւսեբիոսի և ոչ Լաբուր- նայի մօտ՝ Խորենացուն համարել նորանց կեղծողն և ոչ թէ նամակները չետոյ յօրինուած և մուծուած <sup>43)</sup>:

Յետամուտ ընդմիջարկութիւններ համարուելու են Խո- րենացու Պատմութեան մէջ և հետևեալ հատուածները.

1. Գիրք Երկր. զլ. ՆԳ. «ի դաւառն... Սրտազ... ուր «յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի Սուաքելոյն Թաղէի... Սրդ «ի բնակելն Անակայ ի դաշտին Սրտազու, պատահէ սորա «տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Սուաքելոյն, որպէս «թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին. և անդ ասեն «զյղութիւն մօր սրբոյ և մեծի Լուսաւորչին: Վասն որոյ և «զնորին առաքելոյ շնորհն ընկալեալ, որ առ հանդստարանաւ «նորին զլինելութիւնն էառ, զնորին էլից զհոգևոր մշակու- «թեանն պակասութիւն»:

2. Գիրք Երկր. ՂՍ. «բայց ս. Գրիգորի ի Մանեայ ալըն «կեցեալ աներևութաբար ամս բազումս, փոխի մահուամբ ի «կարգս հրեշտակաց: Եւ հովուաց, զտին զնա վախճանեալ, «ի նմին տեղուոյ թաղեցին, ոչ գիտելով թէ ով որ նա իցէ: «Վայել էր իսկ նոցա, որք Փրկչին մերոյ ծննդեանն եղեն խոր- «հրդածուք, լինել և աշակերտի չրդարկմանն սպասաւորք: «Եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն տեսչութեամբ, «իբրև զՄովսէսն զայն ի հնումն, զի մի՛ ի պաշտօն առցի ի «գեռահաւատ բարբարոսացն ազգաց: Իսկ չորժամ սերտեալ «հիմնեցան հաւատք կողմանցս այտոցիկ, զինի չեա բազում «ժամանակաց յայտնեցաւ ճգնաւորի ումեմն Գառնիկ անուն «կոչեցելոյ և բերեալ եղաւ ի զիւղն Թորդան նշխարք սրբ- «բոյն Գրիգորի» <sup>44)</sup>:

Երկու չաւելուած նախադասութիւններ էլ մատնացոյց կանենք չետոյ:

Իսկ Երրորդ գրքի Ի. զլուխն աղճատուած է. և ինչպէս երևում է, նորանից յապաւել են ներսէս Մեծի Կեսարիայի արքեպիսկոպոսից ձեռնադրուելը: Նոյն գրքի ԺԶ. զլխում ներ-

սէսը Բիւզանդիոն է զնուժ ամուսնանալու, երբ Փառներսէհին էին ընտրուժ կաթողիկոս «վասն ոչ կալոյ այր չաղղէ Գրիգորի»։ Իսկ չորս տարուց՝ Փառներսէհի մահից չետոյ, նոյն Ներսէսը «եկաց եպիսկոպոսապետ Հայոց... Եւ ի Բիւզանդիոյ «դարձեալ ի Կեսարիա, և եկեալ ի Հայս, զամենայն կարգս «ուղղութեանց հարցն իւրոց նորոգեաց»։ Իսկ թէ երբ և ո՞ւր ձեռնադրուեց— յայտնի չէ։ Սակայն նոյն Խորենացին մի ուրիշ անգ ընդունում է թէ Ներսէսն էլ Կեսարիայումն է ձեռնադրուել։ Պապ Թադաւորն, ասում է նա, (զլ. ԼԹ.) «եպիստոմոս... անուն Շահակ... զոր կացոյց փոխանակ Ներսիսի առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու»։ Եթէ Ներսէսից չետոյ է, նորա ասելով՝ զադարել Հայոց կաթողիկոսների ձեռնադրութիւնը Կեսարիայի արքեպիսկոպոսից, ուրեմն նա անչիշատակ չէր թողնի նշանաւոր հայրապետի ձեռնադրութիւնն. և Ներսէսի Բիւզանդիոնից Կեսարիա գալն էլ յատկապէս ձեռնադրութեան հետ պիտի լինէր կապուած <sup>45</sup>):

Այժմ հարկ ենք համարում առանձնապէս կանգ առնել Խորենացու Պատմութեան օտարամուտ յաւելուածներից մէկի վերայ։ Երկրորդ զրքի ԼԳ. գլխում կարդացինք, թէ Թագէոս առաքեալը գալիս է Հայաստան, իւրայինների հետ միասին նահատակում է Շաւարշան զաշտում, քարը պատառում իրար է գալիս և ընդունում Սուաքեալի մարմինն, այնտեղից աշակերտները վերցնում թաղում են զաշտի մէջ։ Թագաւորի աղջիկ Սանդուխտն էլ մարտիրոսանում է ճանապարհի մօտը և այժմ էլ յայտնուժ են երկուսի նշխարներն և փոխադրում Սուապար։

Ս. Թագէոսի և ս. Սանդուխտի նշխարաց զիւար, մի փոքրիկ զրութեան ասելով՝ տեղի է ունեցել Յովհան Մանգակունու կաթողիկոսութեան օրով, Կիրակոս Միայնակեացին յայտնուած տեսիլքով։ Երբ էլ զրուած լինի Սովեթի մէջ առնուած այդ սրբարանական զրոյցը՝ պէտք է անկասկած համարել, թէ ինչպէս ս. Թագէոսի նշխարաց զիւարի համբաւը, նոյնպէս և Խորենացու պատմութեան ընդմիջարկութիւնը կարեւորութիւն են ունեցել է. դարում մի յայտնի նպատակի— Սուապար փո-

խադրուելու համար. որովհետեւ Ներսէս Գ. կաթողիկոսն, որ Շինոդ է կոչուել, պէտք է չիշեալ Սուապարի վերայ հիմնարկէր և շինէր մի եկեղեցի։

Իսկապէս ի՞նչ միտք ունէր Հայոց Լուսաւորչի կառուցած մեծ «կաթողիկէ» եկեղեցին կամ Մտչր Աթոռը թողած՝ նորանից երկու վերստ հեռաւորութեան վերայ շինել նոր աթոռանիստ եկեղեցի։ Մեր պատմիչները միամիտ հիացմամբ անուանել են այդ շինութիւնը «հրաշալի բաղձապաշտ» կամ «հրաշապաշտ» և անցել են։ Միայն ժ. Գարի վերջում գտնուել է մի եկեղեցական— Սիմէօն կաթողիկոս Երեւանցին, որ գտել է շինութեան իսկական նպատակն և ասել, թէ Ներսէս Գ. «շինէլ զսուրբն Գրիգոր խոչ էջմիածնի» \*): Եւ նորա նկատածը միանգամայն ճիշդ է։ Մենք դեռ չունենք պատմութիւն, այդ պատհառով էլ մեր անցեալը չգիտենք այնպէս, ինչպէս եղել է իրօք։ Մենք, օրինակ՝ այն միայն կարգում ենք թէ՛ Քաղկեդոնի ժողովից չետոյ Բիւզանդիոնի կաշարները բռնի միջոցներ և անդութ խստութիւններ են գործ դրել Հայոց եկեղեցին Յունականի հետ միացնելու համար. թէ՛ յոյն եկեղեցականների աններողամիտ հալածասիրութիւնը չէ թողել ոչ մի անիրաւութիւն և զրկանք, որ գործ դրած չլինի այդ եկեղեցու դէմ. և ահա բոլորը։ Սակայն արտաքին խստութիւններից և ճնշումներից դատ եղել է նենգամիտ քաղաքականութեան զաղտնի ծրագիր, որ կազմուել և գործադրուել է այդ նպատակի համար,— չայ եկեղեցու անկախութիւնը ջնջելու համար մի կողմից խլել բաժանել նորանից նորան ակնածելի զիրք տուող մասերը. միւս կողմից աննկատելի կերպով նորա կեդրոնումն էլ դնել այնպիսի կաշի, որ չառաջ բերի քայքայող, կործանող պայթիւն։ Դորա համար ջանքեր են գործ դրուել, նիւթական մեծ-մեծ զոհողութիւններ են եղել, և որ զլիսաւորն է՝ առանձնապէս կրթութիւն, պատրաստուել են մարդիկ, որոնք պիտի աշխատէին իրանց համոզմունքները ծածկելով համազգիներին՝ մնալ նորանցում և

\*) Ջամրո. 13.

նորանց եկեղեցում, մինչև յաշող ըոպէի հասնելն, և ապա սկսել իրանց զործունէութիւնն: Իսկ այգպիսիներին բարձր զիրք և իշխանութիւն ձեռք բերելու համար չէին պակասում ոչ դադարնի նպաստներ, ոչ կողմնակի ազդեցութիւններ: Այսպիսի ծրագրի զործադրութիւնն սկսաւ իւր արդիւնքն արդէն ցոյց ապա Զ. դարի վերջից: Այդ ժամանակում տեղի ունեցաւ Վրաց եկեղեցու բաժանումն Հայկականից 40). այդ ժամանակում մի նոր կաթողիկոսական աթոռ հաստատուեց Կոտայք գաւառի Սւան դիւղում, որտեղ Յովհան կաթողիկոսի համար նույնպէս շինուեց, անշուշտ կայսերական դանձարանի առատաշնորհութեամբ, «պայծառակերտ քաւարանն (եկեղեցի) սուրբ, և շուրջանակի նորա կալուած կայանի» (կաթողիկոսարան): Նոր կաթողիկոսարանի հաստատութեան նպատակն էր լինելու մի կողմից թուլացնել և սահմանափակել Դուինում նստող կաթողիկոսների իշխանութիւնն և ազդեցութիւնն, իսկ միւս կողմից անմիջական հաղորդակցութիւն կապել Սիւնեաց և Սղուանից երկիրների եպիսկոպոսների հետ՝ այս անուանի մասերն էլ Հայոց եկեղեցուց խելու համար: Սակայն պարսից յարձակումն Յունաց բաժնի վերայ Աշոտ զօրապետի առաջնորդութեամբ և տարած յաղթութիւններն, որոնց միջոցին դերի ընկաւ Յովհան Կաթողիկոսն և անարուեց Պարսկաստան, ցոյց առւին, թէ նոր կաթողիկոսական աթոռի տեղի ընտրութիւնը յաշող չէ արուել: Յովհանից յետոյ Սւանում այլ ևս երկրորդը չնստեց, և այնուհետեւ խորամանկ քաղաքականութիւնն որոշեց Դուինի աթոռը զործունէութեան կէտ նպատակի անել: Այգպիսով յաւաջ է դալիս Եզրի կաթողիկոսութիւնն, որոշ ուղղութեան հետեոյ խորհրդականներով շրջապատուելն և այլն: Եզրին յաջորդում է Ներսէս Գ. մի մարդ, որի անձնատուր պատրաստականութիւնն և ճարպիկ զործակցութեան ընդունակութիւնն ստացած կրթութիւնովն էր երաշխաւորուած: Նա սկզբում զինուորական պաշտօն ունէր Յունաստանում: Քաղաքական երկիւղալի հանդամանքների միջոցին, երբ այլ ևս բռնութիւններ զործադրել չէր կարելի, այգպիսի մի մարդ

ներկայանում էր Բիւզանդիոնի քաղաքականութեան ամենավստահելի նեցուկը. Ներսէսն այն տեսակի մարդկանցից էր, որոնք իրանց իղձերին հասնելու համար տասնեակ տարիներով վարժուած են ժամանակակից ամբօխը խաբելու համար նորա պահանջների և զգացմունքի կատարելատիպը ներկայանալ արտաքին բոլոր նշաններով: Ներսէսին ժամանակակից Սեբէոս եպիսկոպոսն իւր պատմութեան մէջ զարմանալի երշտութեամբ բնորոշում է նորան, նորա ներքին իսկական մարդը՝ թաղնուած արտաքին բարեպաշտական ձեւերի հանուշական զիմակով: Խօսել տանք պատմադրին իրան. «Արդ՝ ասացից «փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի, զի «էր նա բնակութեամբ ի Տայոց՝ ի գեղջէն՝ որում իշխանն «կոչէն: Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց և ուսեալ զլեզուս և զգպրութիւն Հռոմին, և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւ զինուորութեան, և հաստատեալ «զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի, և ի վերայ տու «ճարին Լևոնի: Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդս ամ «բարշտութեանն՝ մինչև եհաս յեպիսկոպոսութիւն աշխար «հին, և անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան: Եւ էր «այր առաքինի վարուք, պահաւք և աղաւթիւք: Բայց ի սրտի «իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան. և խորհէր «հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր «հանել զբանն ոչ համարձակէր: Մինչև եկն արքայ Կոստան «ղին և նստաւ ի տան կաթողիկոսին, և քարողեցաւ յեկե «ղեցուչն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի յաւուր կիւ «րակէի: Եւ մատեաւ պատարագ Հռոմերէն ի Հռոմ երիցուէ. «և հաղորդեցաւ թագաւորն՝ կաթողիկոսն՝ և ամեն եպիս «կոպոսունքն, որ կամաւ և որ ակամայ: Եւ այսպէս շար «ժեաց կաթողիկոսն զՆշմարիտ հաւատ սրբոյն Գրիգորի... «Եւ զսուրբ և զվեհիտ և զականակիտ աղբերացն պղտորեաց «զշուրս, զոր ի վաղնշուց իսկ ունէր ի միտս իւր կաթու «ղիկոսն. և ոչ իշխեաց յայտնել մինչև ցայն աւր: Եւ «ապա զտեալ ժամանակ՝ կատարեաց զկամս իւր» (ԼԶ. 220-21):

Ձարմանալի չէ, եթէ այդպիսի ճարգը կարողացել էր խաբել և Թէոդորոս Ռշտունու նման «իմաստուն» հայրենասէրին, ու նորա հաւանութիւնն էլ վաստակել իւր կաթողիկոսական ընտրութեան համար: Մինչև անգամ այս դէպքումն էլ նա զիմում է իւր սովորական կեղծաւորութեան.— երբ արդէն ընտրութիւնը կատարուած վերջացած էր, ցոյց է տալիս թէ պատրաստուում է փախչելու, ըստ որում իրանում այնքան ոյժ չէ զգում այդ ծանր պաշտօնը վարելու համար. «Գաղտազնաց փախստեայ լինել խորհէր՝ իբր ոչ կարող կալ «ի քաղաքավարութեան այնմ աստիճանի մեծի: Սպա յողոքական բանից և ի սատրելոյ նախարարացն հնազանդեալ «հաստատէր» \*):

Թէ որպիսի գործունէութեամբ առաւել պիտի փառաւորէր Ներսէսը «դժուարութեամբ» յանձն առած կաթողիկոսութիւնն, եթէ քաղաքական վրդովմունքներն և արարական անաբան արշաւանքները յունական ախրապետութեան զօրութիւնը չխափանէին և չխորտակէին— չցիտենք. այսքանն է միայն յայտնի, որ նորա երկզիմի վարմունքը վաղ արդէն զրգոեց նորա զէմ Թէոդորոս Ռշտունու ծանր զայրոյթն, որից և նա ստիպուած էր խոյս տալ, փախչել: Մեր յետնադոյն պատմիչների ասելով՝ Ներսէսը Կոստանդին կայսրի հետ թողեց Դուինն և զնաց ծածկուեց Տաշք նահանգում, ուր մնաց վեց տարի, մինչև Թէոդորոս Ռշտունու մահը լսելը. մինչդեռ նոյն ժամանակակից Սեբէոսն ասում է թէ նա կայսրի հետ զնաց Կ. Պոլիս, ուր ընդունուեց պատուով. ստացաւ զանձ և այնպէս վերադարձաւ. և եկաւ ու բնակեց Տաշքում 6 տարի, մինչև Ռշտունու մահը. որից յետոյ համարձակեց կրկին դալ նստել կաթողիկոսական զահն և ջանալ աւարտել Վաղարշապատում սկսած հոյակապ եկեղեցու թերութիւնը. «Իսկ կաթողիկոսն Հայոց Ներսէս զնաց ընդ թաղաւորին, «որպէս վերադոյն ասացի. և չուեաց ընդ նմա ի Կ. Պոլիս: «Եւ ընկալան զնա անդ պատուով, և ետուն նման ինչս՝ և

\*) Յովն. Կան. Պատմ. 48.

«արձակեցին զնա անդրէն ի տեղի իւր. և եկն դադարեաց «ի Տաշա՝ մինչև մեռաւ Ռշտունեաց տէրն... և այս յետ վեցերորդի ամի հալածահացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր, «և հաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան. փութաչր «կատարել զշինուած եկեղեցւոյն՝ զոր շինեաց ի վերայ պոքոտային Վաղարշապատ քաղաքի» (ԼԸ, 235):

Սչդ եկեղեցու և կաթողիկոսարանի շինութեան պահանջած մեծագումար ծախսը տալիս էր Կոստանդին կայսրի դանձարանը. մինչև անգամ նաւակատեաց հանդէսին ներկայ է եղել ինքը կայսրը, երևի առաջին արշաւանքի միջոցին. որից և պէտք է հասկանալ, թէ եկեղեցու շէնքն արդէն աւարտուած էր, երբ Ներսէսը փախաւ Դուինից. և վերադարձից «յետոյ սկսածը շէնքի յաւելուած մասերն էին. «Նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս... Սա էր հայրադիր նորին «Կոստանդին և զանձիւք նորա շինեաց զբաղմապայժառ փառախն բանաւոր հօտից ի Քաղաքու դաշտի ի սուրբն Գրիգոր և ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հռոմոց, որ յաւելժ հիւսցեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն զնալ «զկնի իւր, զի զնոյնածեն յարմարեցէ ի պալատանն»: \*)

Դարձեալ կրկնում ենք.— ի՞նչ միտք ունէր, ինչ կարևորութիւն կար արդեօք Հայոց Մայր Կաթողիկէ տաճարի դիմաց այսպիսի մի վաչելչակերտ, մեծածախս եկեղեցի և կաթողիկոսարան շինելուն. ի՞նչ շահ էր տեսնում դորանում Բիւզանդիոնի կայսերական կառավարութիւնն, որ բոլոր ծախսերն հողում էր ի հաշիւ իւր դանձարանի և նաւակատեաց հանդէսին էլ հարկ էր համարում շուք տալ կայսրի ներկայութեամբ: Թէպէտ և մօտ երկու դար էր անցնում այն ժամանակից, երբ հայրապետական աթոռը Վաղարշապատից փոխադրուել էր Դուին, բայց և այնպէս ս. Գրիգորի հիմնարկած և կառուցած տաճարն այդ անշքութեան ժամանակին էլ մնում էր ամբողջ Հայ ազգի համար «Աթոռ Քահանայապետութեան», «Կաթողիկէ եկեղեցի», որի «պատուի մեծու-

\*) Պատմ. Մովս. Կաղանկ. 255.

թեան և բարձրութեան» խորհրդանշան էր տուել ս. Գրիգորին տեսիլքի «Սիւնն Սուաշին» իւր բարձրութիւնով: Ուր էլ որ լինէր նստած ս. Լուսաւորչի յաջորդը, նորա ուժի և զօրութեան ազդիւրն այդ տանարն էր: Եթէ մի օր պատահէր դուրսերում աստանշող հայրապետական զահի զօրութեան և նոյն իսկ զոյութեան վախճան դնել՝ ազդը Լուսաւորչի զահր նորից կբարձրացնէր նորա տանարի մէջ. այդ իրաւունքը նորան տուել էր տեսիլքով յայտնուած «աստուածային տեսչութիւն»: Ուրեմն ապագայ ձեռնարկելի միջոցների յաջողութեան համար պէտք էր աշխատել աննկատելի կերպով թուլացնել այդ կաթողիկէ տանարի նշանակութիւնն. և մատնելով նորան ամայութեան ու ժամանակի աւերող ուժին՝ մոռացնել տալ նորա զօրութիւնը, զիմացը կանգնած ունենալով հրաշապայծառ մի տանար—կաթողիկոսարան: Այդ նոր տանարն, որպէս զի ունենար կրօնական բարձր նշանակութիւն՝ պիտի կապուէր ազդի համար նուիրական անունների և յիշատակների հետ: Եւ ահա յայտնուած է, թէ՛ նոր եկեղեցու տեղն այն տեղն է, ուր ս. Գրիգորի խորվիրապից զալիս Տրդատն ընդառաջել է նորան իւր խողակերպ տեսքով. թէ՛ Լուսաւորչը մի զիշեր այդտեղ մնալով՝ տեսիլքի մէջ տեսնում է երկնային հրեշտակների զօրքը. թէ՛ այդտեղ փոխադրուել և ամփոփուել են ս. Թադէոսի և ս. Գրիգորի մասունքները:

Սերէոսն չիշում է այդ զրօցներն իրրև արդէն տարածուած աւանդութիւն. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր «կաթողիկոսն չաչոց ներսէս շինել իւր բնակութիւն մերձ «առ սուրբ եկեղեացն՝ որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ հանապալհին յորում աս են ընդառաջ եղև թաղաւորն «Տրդատ՝ սրբոյն Գրիգորի: Եինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր զուարթնոցն, որոց երևեալ ի տեսեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն. և շինեաց «եկեղեցին բարձր շինուածովք՝ և չքնաղ զարմանալեալք. արժանի աստուածային պատուոյն՝ որում նուիրեացն»: (ԼԳ. «186):

Սերէոսին յայտնի չէ եղել ոչ Թադէոս առաքելի և ոչ ս. Լուսաւորչի նշխարների փոխադրութիւններն այստեղ: Ս. Թադէոսի մասանց փոխադրութիւնը Խորենացու պատմութեան մէջ այդ ժամանակում պիտի մուծած լինին, երբ նոր եկեղեցու համար մտածել են տեսիլքով թէ՛ նորա, թէ՛ ս. Սանդուխտի մասունքները զտնել տալ, Սուապար բերելու համար. բայց այլ ևս ոչ որ նորա մասին չէ գրել, երևի փոխադրութեան միտքը թողնուած լինելու համար<sup>47</sup>): Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարաց փոխադրութիւնն է, որի մասին թէև զրուծ են յետագայ դարերի պատմիչներ, սկսած Յովհաննէս կաթողիկոսից, բայց և այնպէս խնդիր է, թէ արդեօք ժամանակակից Սերէոսը, նոր եկեղեցին տեսնողն ու նրկարադրողը կարող էր լուծութեան տալ չիշեալ նշխարների այդտեղ ամփոփուիլն, եթէ արդարև եկեղեցու շինութեան միջոցին նորա չորս սիւների ներքև զրուել են նորանք. «Սուի անշուշտ մնացականութեամբ պահիլ զանձոյն երկնաւորի ի գերչաց ապականչաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց». և եթէ արդարև նոյն Լուսաւորչի «քրիստոսադրոշմ և պատուական զլուխն» էլ զրուել է այդտեղ «ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի գգրոցի... ի յոյս բարեաց փափազողաց նմա և ի բժշկութիւն ախտակրելոց»:

Ստեփաննոս Ասողիկ տասներորդ դարում արդէն «վիեալ և կործանեալ» զիտէ այս եկեղեցին. և զարմանալին այն է, որ վիչելուց չեաոյ ոչ որ նորա նորոգութեան մասին չէ մտածուծ. միայն Գաղիկ թագաւորը, նոյն Ասողիկի ասելով՝ նորա հարտարտպետութեամբ շինել է մի եկեղեցի Սնի քաղաքում: Յայտնի չէ թէ երբ և ի՞նչպէս է աւերուել Զուարթնոց կամ Սուապարի ս. Գրիգոր կոչուած այս եկեղեցին: Կիրակոս Գանձակեցու ասելը թէ «աւերեցաւ ի Տանկաց» ոչ մի հաւանութիւն չի կարող գտնել:

Սրարացիք իրանց առաջին արշաւանքներում ձեռք չէին տայ նորան, և ոչ էլ հաստատուն տիրապետութեան միջոցին, ինչպէս առհասարակ չեն ձեռք տուել ուրիշ եկեղեցիներին. և վերջապէս եթէ նորանք կրօնական ասելութեամբ քան-

դել կործանել են այդ եկեղեցին, ինչո՞ւ չեն աւերել կործանել էջմիածնի և մերձակալ վանքերի տաճարները: Ամենից հաւանականն այն պէտք է համարել, որ չետազաններն ըմբռնելով այդ եկեղեցու շինութեան նպատակը՝ լքել թողել են ուշադրութիւնից. և ինքն իրան, ամայութեան և հնութեան շնորհիւ քայքայուել, կործանուել է:

2. Հոգեաց վանքի պատկեր:

Իւր տեղում արդէն ասել ենք, թէ պատկերիս պատմութիւնը համարուած է Մովսէս Խորենացու դորժը, դրուած Սահակ Արժրուենի իշխանի խնդրանքով. և միևնոյն ժամանակ յառաջ ենք բերել նորանից այն մասն, որ խօսուած է պատկերի ծագման, ստացած հրաշագործ զօրութեան և հայաստան բերուելու մասին: Եթէ մինչև անգամ մեզնից յառաջ Ա. Մ. Գարաղաշեանն ասած և պարզած էլ չլինէր, թէ «Այս առասպելական դրուած, առ հասարակ ծանօթ իբրև թուղթ խորենացուց առ Սահակ Արժրուենի՝ է դործ անվաւեր, ոչ հին «քան ԶԺ. դար», \*) դարձեալ պէտք է ինք ունենայ երկար խօսելու, որպէս զի այդ միևնոյնն ապացուցած լինէինք. ըստ որում զրուածն այնքան տղէտ մտքի ծնունդ է, որ ինքն իրան իսկոյն մատնուած է ամեն մի տողում. և ամենից յառաջ այն նամակում, որ յօրինուել է խորենացու բերանից առ Սահակ Արժրուենի: Այստեղ էլ խորենացուն կրկնել են տուել նոյն խօսքերն, ինչ որ ուղղուած է հայոց պատմութիւնը զրել խնդրողին—Սահակ Բագրատունուն. «Զյորդութիւն առատութեան աստուածային հողուցն շնորհաց, որ ի վերայ քո անգուլ մտացդ, որ վասն դրոց ծանօթութեան... յառաջ քան «դտեսութիւն ի ձեռն համբաւուց լուեալ իմ զխոհականութիւն մեծի հօրիդ ծանեալ... Վասնորոյ զբանին վառ և բորբոք պահելով զկաջժակն անմահանամ» \*\*):

Գարաղաշեանի ասելով «նպատակ թղթոյն կը թուի թէ «էր ցուցնել զերկիրն Անձևացեաց իբրև ասպարէզ առաքելու-

\*) Բնակ. Պատմ. Մ. Դ. 84.

\*\*\*) Մովս. Խոր. Մատենագր. 283—84.

«թեան Բարթուղիմէոսի. բայց հեղինակն ի հեռուսա կառնու «դիւր նիւթ. այն է ի փոխմանէ Կուսին և ուրիշ պարագաներէ, որ նորա կենաց կը վերաբերին» \*): Մեր կողմից կասենք այսքանը, թէ նպատակը միմիայն կեդրոնանում է հոգեաց վանքի առաքելահաստատ լինելու նախապատուութիւնն և նորա պատկերի առաքելական ծագումն և յԱստուծոյ ստացած սքանչկահրաշ զօրութիւնն ապացուցանելու վերայ: Այս նախապատուութեան խնդիրն այնքան զբաղեցրել է հեղինակին, որ նա չէ բաւականացել միայն Բարդուղիմէոս առաքելին հրաշագործ պատկերի հետ միասին այստեղ բերելով, այլ կամեցել է, որ Գրիգոր Լուսաւորիչն էլ եղած լինի այդ տեղում և նոր եկեղեցիներ կառուցած Առաքելայի շինած տաճարին կից, և վանական իրաւունքները վերահաստատած. «Զոր եկեալ չետոյ սրբոյն Գրիգորի, վանս հաստատեաց զտեղին, շինեալ եկեղեցիս. բայց զտանար սրբուհուոյն ոչ քակեաց, «դի ձեռագործ առաքելական էր, թողեալ զնա ի փառս և «ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. և կայ մինչև ցայսօր ժամանակի, յորում բժշկութիւնք բազումք լինին, և «ուրախութիւնք ոչ սակաւք: Եւ լուսաւորէ զախտացեալս «ամենայն, որ զան առ նա հաւատով և յուսով»:

Այստեղ էլ ճիշտ այնպէս են վարուել, ինչպէս Վարագայ վանքում: Նորա համար էլ զարձեալ նոյն հեղինակաւոր Խորենացու անունով կազմուել է «Պատմութիւն սրբոց հռիփսիմեանց <sup>48)</sup>, որպէս զի Խորենացին վկայած լինի թէ՛ երբ որ հռիփսիմէի ծնողներն իրանց աղջկանը յանձնեցին հոռմի այն կուսանոցին, որի մայրապետը ս. Գալիանէն էր, վերջինս «խաչ «զսրբոյն Յակովբայ զմածեալն աէրունական արեամբն, ի «կենաց փաշտէն հատեալ վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ... արկանէր ի պարանոց սրբոյ մեծին հռիփսիմեայ». թէ՛ երբ Գալիանէն և հռիփսիմէն իրանց ընկերների հետ ստիպուած լինելով հոռմից փախչելու՝ եկել և մի առժամանակ Վարագ լերան վերայ զաղար են առել, այդտեղ ծածկաբար

\*) Բնակ. Պատմ.—80.

պահելով ս. Նախիվսիմէի պարանոցի խաչը՝ իրանք անցել զնացել են Վաղարշապատ, թողնելով Վարազի վերայ իրանց ընկերակիցներին մի քանիսին և երկու քահանաների. թէ՛ յետոյ ս. Գրիգորն այգաեղ գալով՝ եկեղեցիներ է շինել, սեղան է կաղմել և իւր գօտին ու դաւազանը «նշան» թողնելով՝ զնացել է:

Իսկապէս ե՞րբ պիտի յօրինուած լինեն այս երկու «Պատմութիւնները»: Առաջինի— չոգեաց վանքի պատկերի պատմութեան յօրինման ժամանակը կարելի է հասկանալ կեղծ Խորենացու Սահակ Արծրունուն ուղղած յետագայ խօսքերից. «Յայտցանէ զիտացի լեալ զքեզ, մեծ իշխանդ Վասպուրականի, «որ թէպէտ և ի նախարարս ես թուեալ, սակաչն ի տանէ «[Թաղաւորազուն, և ազգաւ ես քաջ և նախնական... Զի որպէս երկուց մարդոց լինելութեամբ երկիրս հաստատեցաւ, «այսպէս ի ձեռն երկուց տանցդ, Արծրունեաց և Բագրատունեաց, այս աշխարհիս սերունդք բնակեն... Եւ որպէս «երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս և երկու կողմանքդ արեւելից և հիւսիսոյ լուսաւորին. և որպէս երկու «ձեռք միացեալ ի գործ պիտոյանան, այսպէս և երկիրս ճայոց «ի ձէնչ զոյանան: Եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինն հաստատի, այսպէս և ի ձեռն երկուց տանց ամենայն «ազգ ճայոց հնազանդ լինելով ի մի մարդ կատարեալ ի Քրիստոս լինին: Եւ դուք երկօրին ցեղք ընդ միմեանս միացեալ «անշարժ կայք:

«Քեզ ասեմ իշխանդ Արծրունեաց, եցոյց ինձ տէր, զի «յորդուց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, և մինն «վրիպեալ ի նոցանէ և ոչ յայսմ վայելէ:

«Վասն նոցա Աստուած զթաղն թաղաւորին Սենեքե «ըիմայ յորդիս քո զարծուցեալ յերկարածգէ յերկրի: Ես Բագրատունուոյդ ասեմ. չիշէ տէր զբանն իւր, եթէ թաղաւորք «ի քէն ելցեն, և թաղաւորէք ի Դուին և այլ ինչ չունեմ «սել ձեզ յորժամ տէր տացէ տեսանել»: \*)

\*) Մ. Խոր. Մատն. 284:

Այս խօսքերի հիման վերայ է, որ Գաբազաշեանն եկել է «այն եղրակացութեան, թէ «հեղինակ թղթոյն չէ ոչ յառաջ «և ոչ յետոյ քան զԹ. դար, այսինքն այնպիսի ժամանակ, «մինչդեռ կանգուն էր թաղաւորութիւնն Արծրունեաց (908 «—1021)»: Զայս կը ցուցնէ ասելն. «Աստուած զթաղն թաղաւորին Սենեքերիմայ յորդիս քո զարծուցեալ յերկարածգէ «յերկրի: Անուն ասորեստանցի թաղաւորին կրնայ տալ «կարծել, թէ հեղինակ թղթոյն էր առ Սենեքերիմաւ Արծրունով (1003—1021)»: \*)

Վերոգրեալի չարգելի հեղինակն, ինչպէս երևում է, սխալ է ըմբռնել իմաստն. և սխալն յառաջ է եկել «յերկարածգէ» բառը ներկայ ժամանակի մտքով ընդունելուց—երկարածգում է. մինչդեռ այդ ասացուածը զուշակողական բարեմաղթութիւն է ապագայի համար.— Աստուած ձեր նախնիների արձատ Սենեքերիմ թաղաւորի թաղը պիտի քո որդիներին զարծնի և հաստատ պահի երկրի (Վասպուրականի) վերայ: Որ հեղինակը չէ եղել ոչ Սենեքերիմի և ոչ մի այլ Արծրունի թաղաւորի ժամանակի մարդ՝ պարզ երևում է այս խօսքերից. «Թէպէտ և ի նախարարս ես թուեալ, սակաչն ի տանէ թաղաւորազուն»: Մեր կարծիքով չիշեալ թուղթը յօրինուած է Թ. դարի սկզբում: Դորա համար ապացոյցներ են նախ ասելը նորանում. «Եցոյց ինձ տէր, զի յորդուց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, և մինն վրիպեալ ի նոցանէ և ոչ յայսմ վայելէ»: Այդ ակնարկութիւնը ճամաղասպ, Սահակ և Մեհրուժան Արծրունի եղբայրների մասին է: Եզիտ ոստիկանն ամիրապետից հրաման ստացած լինելով ճայերի ապրտամբութիւնը ճնշելուց յետոյ կասկածելի զլխաւոր իշխանները ջնջելու, բացառութեամբ մահմէտական կրօն ընդունողներին՝ հրաւիրում է իւր մօտ չիշեալ եղբայրներին և առաջարկում է ընտրել կամ մահ կամ կրօնափոխութիւն: ճամաղասպն և Սահակն յանձն են առնում մեռնել քրիստոնէական

\*) Գննակ. Պատմ. Մ. Դ. 87—88

կրօնով և զլխատուում են. իսկ Մեհրուժանն ընդունում է խալսմութիւն և վերադառնում Վասպուրական. բայց զեռւտուն չհասած Դաւիթ մամիկոնեանը զուրս է զալիս նորա առաջ և սպանում է նորան: \*) Այս անցքը տեղի է ունենում 786 թուին:

Երկրորդ ապացոյցն է Արծրունի և Բագրատունի իշխանների միաբան և համերաշխ զործակցութեան զովքը և Բագրատունիներին Դուինում թագաւորելու զուշակութիւնն: Այդ խօսքերը ցոյց են տալիս, որ չիշեալ երկու իշխանական աները մի ժամանակ միախորուրդ աշխատելիս են եղել զաշնակցական անկախ թագաւորութիւններ հաստատելու մասին, ի նկատի ունենալով աթոռանիստ քաղաքներ անել Վան և Դուին: Այդպիսի մի գաշնակցութեան գոյութեան, թէպէտ և Տարօնում իշխող Բագրատունի տան և Վասպուրականի Արծրունի տան մէջ, վկայում է և Թովմա Արծրունին հրկուտեղում: Երկրորդ դպրութեան Ե. զլխում պատմում է, թէ Ջափր ամիրայետն ուղարկում է Հայոց երկրի վերակացու կամ ոստիկան Ապուսէթ անուն իշխանին, պատուէր տուած լինելով՝ Հայ նշանաւոր իշխաններին կամ խաբէութեամբ կամ զէնքի ուժով ձերբակալել և ջնջել. ուստի և Ապուսէթ, որ զալիս էր մեծ զօրքով, մօտենալով Տարօնի գաւառին՝ կամենում էր մտադրութեան իրազօրծումն սկսել Բագրատ Բագրատունի իշխանից. բայց, ասում է պատմիչն, «իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ «միմեանս Աշոտոյ և Բագրատայ՝ ոչինչ յայանեաց «զխորհուրդքս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. «բայց միայն զհարկաց և զալլ հողաբարձութենէ ծանուցանէ «զպատճառ զայստեանն. և նորա տան տանել նմա զհարկս և «զհասս արքունի և զարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: «Նորա զարձեալ... և ծանուցանէ արքայի... թէ զիարդ են «առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց» (եր. 107—108)<sup>49</sup>: Ապուսէթի վերադարձից յետոյ նշանակ-

\*) Չամչ. Բ. 416—418:

ւում է ամիրայետից նոյն պաշտօնով և յանձնարարութեամբ Մուսէ՛ն, որ Տարօնի վերայ զինուորական չարձակումն է զօրծում. ուստի Բագրատ իշխանն էլ զէնքով զիմադրում է նորան: Թովման խօսելով այդ պատերազմի մասին, ասում է. «Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ չերկիրն Տարօնոյ տալ պատերազմ ընդ Բագրատայ... իբրև ետես իշխանն Հայոց զգօրսն Տառկաց... «հայեցեալ և չիւրեանց սակաւութիւնն՝ զիր պաղատանաց «փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան, զի «թէ հնար իցէ՝ անյապաղ երազութեամբ անձամբ իւրոյ և «զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յոգնականութիւն «նմա: Իբրև յանդիման եղեն զեսպանքն մեծի իշխանի Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զչիշատակարան «նախնեացն և զմերձաւորութիւն հարազատութեանն և «զկապակցութիւն ուխտին որ ընդ միմեանս՝ երդ- «մամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւն և «տէրունական նշանաւն՝ համադունդ ժողով առնէր «ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրա- «կան տէրութեանն»: \*) Երևի այդպիսի «երդամբ հաստատեալ ուխտ» ունեցել են Արծրունի իշխաններն և Այրարատի նահանգում իշխող Բագրատունիների հետ. ապա թէ ոչ կեղծ-Խորենացին Տարօնի իշխանին Դուին չէր տայ իբրև արքայանիստ քաղաք: Իսկ եթէ եղել է արգարև այդպիսի մի ուխտ՝ գոյութիւն կարող էր ունենալ մինչև այն ժամանակ, քանի որ Բագրատունի տոհմի ներկայացուցիչները չէին փոխել իրանց զօրձելու ծրագիրը — փոխանակ զաշնակիցներով ապստամբութիւն բարձրացնելու, որ կասկածելի հեռանքներ կարող էր ունենալ, իսկ լաւազոյն զէպքում՝ մի քանի հաւասարազօր անձանց իշխանութիւններ, ամիրայետին իրան մօտենալ, նորա վստահութիւնը զրաւել և նորանից ստանալ միահեծան իշխանութիւն<sup>50</sup>): Ինչպէս յայտնի է, այս ուղութեամբ զօրձել սկսեց Բագրատունի Սմբատ սպարապետն,

\*) Պատմ. Տանն Արծր. 108—109.

որը, սակայն, վերջում միւս իշխանների հետ ամիրայպետի մօտ ուղարկուեց իբրև նոյնպէս կասկածելի. և երբ մերժեց ընդունել իսլամութիւն՝ նահատակուեց, բայց նորա որդին, Աշոտ իշխանն այնքան մեծ վստահութիւն գրաւեց, որ 859 թուին արդէն ամիրայպետից կարգուեմ է լիազօր «իշխան իշխանաց», որից յետոյ զալիս է և թագաւորութիւնը: Իշխանաց իշխանն իւր բնակութիւնը հաստատուեմ է Շիրակում, երբեմն Սնի և երբեմն Երազդաւորս նստելով. մինչև որ 886 թուին Անին ընտրուեմ է թագաւորանիստ քաղաք: Աշոտի ձեռք բերած իշխանաց իշխանութիւնն այնքան յանկարծադէպ էր միւս իշխանների համար, որ նորանցից ոմանք իսկոյն ընդգրկեալութիւն ցոյց տուին, բայց չաղթուեցին Աշոտի եղբայր Արասից, որ նոր կարգուել էր սպարապետ: Աշոտի դէմ ապստամբող երևաց մի փոքր ժամանակից յետոյ և Արծրունի Գրիգոր Գերենիկ իշխանն, որ Աշոտի էլ փեսան էր: \*)

Ուրեմն անկասկած է, որ կեղծ-Խորինացին գրել է թուղթը 786 թուականից յետոյ և 859-ից յառաջ:

Ուշադրութեան արժանի է այն, որ այս պատկերի պատմութիւնը մինչև ժ. Գարր չիշատակուած չէ ոչ մի պատմագրից: Նոյն իսկ անչիշատակ թողնուեմ է Թովմա Արծրունին, որին յայտնի է «երէցն Թէոզորոս զլիսաւորն հոգեաց վանից» (եր. 212) և որ՝ յատկապէս իւր տոհմի, Արծրունիների պատմութեան նիւթեր ժողովելու համար շրջել է շատ տեղեր: Ի՞նչպէս արդեօք բացատրել: Ասել, թէ չեն չիշատակել, բնութեամբ թուղթը յօրինուել և երկար ժամանակ նոյն Վանքումն է պահուել, թէ՞ ասել, որ պատմիչները զիտեցել են նորա գոյութիւնը, բայց արհամարհել են իբրև կեղծիք. մանաւանդ որ, ինչպէս երևում է, սկզբից Մովսէս Խորենացու անուան հետ կապուած չէ եղել: Մենք ասանք իւր տեղում (Ժանօթ. 20) թէ Բաղէշի եկեղեցու մի հին ձառնատիրի մէջ այդ միւսնոյն պատմութեան հեղինակ

\*) Յովհ. Կաթ. 76:

Յովհան Մանգակունին է ձանաչուած: Արդեօք այդպիսի նկատմամբ չէ՞, որ հ. Մ. Չամչեանն ևս «Ի վերայ յարգութեան պատկերաց ի հայս» ժանօթութեան մէջ Բարդուղիմէոս առաքեալի բերած պատկերը չէ չիշուեմ իբրև փաստ պատկերյարգութեան գոյութեան, մինչդեռ մի այլ տեղ նոյն Առաքեալի հայաստան զալու առիթով չիշել է նորա բերած այդ պատկերը <sup>51</sup>):

Պատկերի պատմութեան ժամանակը զանելուց յետոյ դժուար չէ որոշել և հռիփսիմեանց պատմութեան յօրինման հաւանական ժամանակը: Որ վերջինս առաջինից կրտսեր է ժամանակով՝ այդ պարզ ցոյց են տալիս թէ նոյն պատկերի չիշատակութիւնն և թէ մի քանի փոխառութիւններն: Երբ որ Ս. Գայանէն և ս. հռիփսիմէն Երուսաղէմում աղօթելիս են եղել ս. Աստուածածնի զերեզմանի վերայ՝ Տիրամայրը տեսիլքի մէջ հրաման է տալիս նորանց «զնալ ի հայք չերկիրն արարատեան ի Բաժին Թագէոսի առաքելոյն: Եւ ըզպատկերն փայտեղէն որ կգեալ է յերեսս իմ յաւուր փոխման «իմոյ, զնա խնդրեսջիք» ասուեմ է. և սուրբ կոչսերը զանուեմ և համբուրուեմ են:

Պատկերի պատմութեան մէջ ասուած է թէ տեղն, ուր Բարդուղիմէոս եկեղեցի շինեց և պատկերը գրեց «է... լեռնամէջ վիմաց, ի վերայ դետոյն մեծի, որ կրչի Տիրաբիս, հուպ «ի բերդն ամուր, որ կոչի Կանդուար, և միւսոյն Աղաւաղ «քար, ուստի շուրք բազումը հոսին ի լեռանց ամրոցին... «և խառնեալ օժանդակեն զգետն մեծ Տիրաբիս»: հռիփսիմեանց պատմութիւնն էլ ասուեմ է. «Եւ անտի յառաջ անցեալ ուստի հոսի դետն բովանդակ, որ փոքրազոյն չար շուրքն հոսեալ ի լեռանց Կանդուարաց, որ կոչի Աղաւաղաքար, և զարնանալին ուղիքն «գետացեալ, դան յօժրնդակութիւն դետոյն մեծի, «որ կոչի Տիրաբիս, հասին ի տեղի մի, և գտին սակաւ «ինչ քրիստոնեայս՝ մեանշան ունելով զպատկեր Տիրամօրն, «որում երկրպագեցին»:

Պատկերի պատմութիւնն ասուեմ է. «Բարթողիմէոսն «եկեալ յաշխարհ Անձեւացեաց ի համբաւ քարի միոյ, քան զի

զէք «բազումք բնակեալ էին անդ... կռանածայնս  
 «զարբնաց անաւոր հրաշիւք արհաւիրս զորժէին... Հասեալ  
 «սուրբ առաքեալն անդ... հայածեաց զգարբինսն զգործո-  
 «նեայս չարին, և զկուռսն փշրեաց որ յանուն Անահտայ  
 «էր: Յոր ժողովեալ բազմութիւն զիւացն ի վերայ լերինն  
 «բարձու, քարածիզս առնելով անթիւ բազմութեամբ յոյժ, և  
 «ծայնս և ճիւղս և դռչիւն սաստիկ արծակէին:  
 «Իսկ սուրբ առաքեալն տառնադրեաց խաչ մի փոքրիկ և  
 «կանգնեաց ի վերայ քարի լերինն, և անդէն զէ-  
 «քըն չիք լինէին»: Հռիփսիմեանց պատմութիւնն էլ սուրբ  
 «կոյսերին բերում է այլտեղ «ի գլուխ լերինն Պաղատոյ,  
 «զոր ասէին սաստիկ յոյժ ի նմա լեալ զիւացն տուն Արա-  
 «մազայ և Աստղկայ... Եւ անտի գնացեալք ի կատար  
 «լերինն... Եւ յայրս քարին որչացեալ կային փիշապք  
 «երկու զիւացեալք և սեացեալք, որոց աղջիկ կոյս և պա-  
 «տանիս անմեղս զենուին: Սչնոցիկ արեամբն զուարճացեալ  
 «զէքն... անհազին իմն տեսիլ և փայլումն և թրնդ-  
 «մունս և կայթմունս զորժէին... Անդ հասեալ սուրբ  
 «կանանցն... առեալ զսուրբ նշանն... և փախստա-  
 «կան եղեալ զիւացն ի բազինն անկանէին վայ զփայլե-  
 «նիչեալ»:

Պատկերի պատմութիւնն ասում է թէ՛ այնտեղ, ուր  
 Առաքեալն «եզ ի նմա զպատկեր տիրուհւոյն և... շինէ խոր-  
 «նիթս վանիցն... եկեալ յետոյ սրբոյն Գրիգորի, վանս հաս-  
 տատեաց զտեղին, շինեալ եկեղեցիս»:

Հռիփսիմեանց պատմութիւնն էլ ասում է թէ՛ երբ ս.  
 կոյսերն եկան Կորիթ զիւղը «զկուռսն փշրեցին... յետոյ զտե-  
 զին սուրբն Գրիգոր շինեաց եկեղեցիս երկուս». բայց այստեղ  
 վերջին պատմութիւնն ունի մի չաւելուած, որից զուրկ է  
 պատկերի պատմութիւնն. այն՝ որ ս. Լուսաւորիչը Կորի-  
 թում եկեղեցի շինելով՝ «նշան թողու անդ զգօտին և  
 զգաւազան իւր»:

Վերջին ընդգծած խօսքերի մէջ որոնելու ենք թէ՛ պատ-  
 մութեան նպատակը, թէ՛ յօրինման հաւանական ժամանակը:

Կանխօրէն արդէն ասել ենք թէ՛ եպիսկոպոսական աթոռ-  
 ների զահերիցութեան խնդրում հին և նուիրական ծագումն  
 ուրպիսի նշանակութիւն ստացաւ. թէ՛ ինչպէս իշխանապե-  
 տական առաւելութեան հիմնաքար սկզբում առաքելականու-  
 թիւնն ընդունուեց, սպա հետզհետէ սովորութիւն եղաւ դա-  
 հերիցական կամ զէթ ինքուրոյնութեան իրաւունքի վերայ  
 պնդելու համար ունենալ չայանի նուիրական սրբութիւններ  
 — փրկչական խաչի, հանդերձեղէնի և այլ առարկաների մա-  
 սեր, առաքելական և նշանաւոր սուրբերի նշխարներ:

Եպիսկոպոսական զլխաւոր աթոռների զերիշխանութեան  
 համար վարած մրցութեան վախճան առնելուց յետոյ յառաջ  
 է զալիս և հետզհետէ զօրանում է դաւառական առաջնորդա-  
 կան աթոռների և վանական ուխտերի կամ վանքերի միջև  
 մրցութիւն՝ իրաւունքների և անկախութեան համար: Այս  
 դէպքում, ի հարկէ, մէկի իշխանութեան և միւսի ինքնու-  
 թոյնութեան կամ անկախութեան ձգտումներն որքան հո-  
 դեւոր—տեսական իրաւունքների, նոյնքան և նիւթական շա-  
 հերի հասկացողութեան հետ էին կապուած: Եկեղեցական կա-  
 նոններով վանքերը կախումն ունէին տեղական թեմակալնե-  
 րից. նորանց պիտի ներկայացնէին իրանց ելեմուտքի հաշիւ-  
 ները. նորանց հրահանգներով պիտի ընթանային իրանց ներ-  
 քին կառավարութեան մէջ: Որքան մերձաւոր իշխանաւորի  
 միջամտութիւնն և պահանջները զօրանային, այնքան էլ պի-  
 տի զօրանար ճնշուող ստորապրեալների՝ նորանցից ազատ-  
 ուելու ձգտումն: Վերջինն երկու միջոց գտաւ. մէկն այն, որ  
 վանքերից մի քանիսն աշխատեցին վաստակել պատրիարքա-  
 կան աթոռի հովանաւորութիւնն, որ և չաջողեցին ձեռք բե-  
 րել. ըստ որում վերջինների շահն էլ պահանջում էր այդ:  
 «Արդէն է. դարում ինչպէս Արեւմուտքում՝ նոյնպէս և Արե-  
 «ելքում՝ երևում են մի քանի վանքերի համար առանձին  
 «արտօնութիւններ, որոնք տալիս էին անկախութիւն տեղա-  
 «կան եպիսկոպոսներից և ներքին ինքնիշխան կառավարու-  
 «թիւն: Արեւելքում այդպիսի վանքերը գտնուում էին պատ-  
 «րիարքական դերագոյն իշխանութեան անմիջական տեսու-

«Թեան ներքոյ: Այգպիսի առաւելութեան հիմքն այն էր, որ «վանքը կառուցանելիս խաչը կանգնեցնողը լինում էր պատ- «րիարքը (և ոչ տեղական եպիսկոպոսը): որպիսի սովորու- «թիւն ստացաւ Յոյն եկեղեցում ստաւրոպիգիա անուն: «Ստաւրոպիգիայի իրաւունքի համաձայն՝ այգպիսի վանքե- «րում ժամերգութեան միջոցին չիշուում էր պատրիարքի ա- «նունն և ոչ տեղական եպիսկոպոսի. և վանական իշխանա- «ւոր պաշտօնեաներին նշանակում էր ինքը պատրիարքը. նա «էր վանքի կառավարութեան վերայ հսկում, նա էր դատում «միաբանութեան դորժերն և սահմանուած նուէրների հա- «ւարժման տնօրէնութիւնն անում և այլն. և այս բոլորի հա- «մար պատրիարքն ունենում էր վանքերում տեղակայներ»:\*)

Միւս միջոցն, որ կարող էր վերօլիշեալ ձգտումին նը- պաստաւոր լինելուց զատ նաև շահաւէտ լինել վանքերի հա- մար եկամտի կողմից—ընդհանուր հռչակի և շերմեան- ցութեան առարկայ դարձած նուիրական սրբութիւններ ու- նենալն էր:

Մեզանում վանքերն, և մանաւանդ զլիսաւորներն, ի- րանց հաստատութեան օրից հանդիսանում են առաջնորդա- նիստ աթոռներ. դորա համար էլ այստեղ երկուստեք մրցու- թիւններ տեղի ունենալ չէին կարող. ընդհակառակն երկրորդ ուղղութիւնը ժամանակի ընդհանուր տիրող ոգու և սովո- րութեան համեմատ անբարեխղճաբար է օգտուել ամբօխի հասկացողութիւնից և զիւրահաւանութիւնից: Եթէ սորա վերայ աւելացնենք և այն հրապուրիչ տենչանքներն, ինչ որ միւս կողմից երկրի քաղաքական զրութիւնն է պատրաստել հայկական մի քանի նահանգների վանական հաստատութիւն- ների փառասիրութեան համար՝ առանց զժուարութեան կա- րող կլինենք պարզել բաղձաթիւ մութ և կնճռալի խնդիրներ:

Առ այժմ մեր խօսքը կլինի Վասպուրականի մասին:

Աշոտ Բագրատունին հաղիւ թէ զրել էր զլիսին արքայա- կան թագը (885), որ ապստամբութեան զրօշակը պար-

\*) Опытъ курса верк. закон. в. 268—269:

զուեց Վասպուրականում. և պարզողն եղաւ նոյն իսկ Աշո- տի քեռայր Գրիգոր Դերենիկ: Այսպիսով Հայաստանի նորա- կազմ թագաւորութիւնը բուն սկզբից արդէն իւր զօրանա- լու և ամբանալու առաջին մեծ խոչընդոտը դտաւ ընտանի թշնամու մէջ: Թագաւորը չփորձեց զէնքի ոյժով վարուել իւր փեսայի հետ, զուեց նորա համար, որ այնքան էլ հեշտ չէր ճնշել մի հակառակորդի, որ ունէր անառիկ զիրքեր և բաւական զօրք. կամ նորա համար, որ կարծում էր թէ զբ- տուած փեսան ինքն իւր արածի վերայ կփոշմանի և կհաշ- տուի կատարուած իրողութեան հետ: Այսպէս թէ այնպէս՝ այդ զրութեամբ թողեց Աշոտը Վասպուրականն և մեռաւ, և նորան յաջորդեց Սմբատ որդին: Մեռաւ և Գրիգոր Դերե- նիկ և նորա տեղն անցաւ 896 թ. որդին, Աշոտ Արժրունի, որ օգտուելով Սմբատ թագաւորի և Ատրպատականի ոստի- կան Ափշինի թշնամական լարուած յարաբերութիւնից, մտաւ ոստիկանի իշխանութեան ներքոյ, յայտնելով իւր պատրաս- տականութիւնը ծառայելու նորան թէ զէնքով, թէ՛ նիւթա- կան օղնութեամբ: Այս ծառայութիւնն իհարկէ լինելու էր Հայոց թագաւորի դէմ ձղելի պատերազմների միջոցին: Խո- րամանկ ոստիկանը լաւ հասկանալով ներքին ինքնասպան պառակտումների քայքայող ոյժը՝ արքայական թագ խոս- տանալով Աշոտին՝ վերադարձրեց իւր տեղը, հարկաւոր դէպ- քում կանչելու պայմանով: Սակայն Աշոտի վերադառնալուց յետոյ նորա աներ Գաղիկ Վասպուրականը խաբէութեամբ ձերբակալելով՝ բանտարկեց նորան և իշխանութիւնն իրան սեպհականեց, հնազանդութիւն յայտնելով մենոյն ժամանակ Սմբատ թագաւորին. հնազանդութիւն՝ որ առերես էր.— մինչև յաջող ժամանակ գտնելը: Երբ որ Միշաղեաքի Ահմատ ոստիկանն ամիրապետից ապստամբելով՝ ինքնիշխան տիրա- պետութեան սահմանն ընդարձակելու մտքով եկել յարձակ- ուել էր Տարօնի վերայ և Սմբատ թագաւորը զօրքով դուրս էր եկել նորա դէմ, Գաղիկ Վասպուրականը կամենալով բա- րեջաջող դէպքից օգտուել և իրան թագաւոր հրատարակել Սմբատին ուժարեկ անելով՝ դուրսնի պայմանաւորում է

Ահմատի հետ: Սմբատ առաջին կռուի մէջ փառաւոր չարդէ տալիս բաղդախնդիր Ահմատի զօրքին. բայց Գաղիկ, որ զըսնըւում էր արքայի բանակում և վայելում էր նորա և զօրքի փստահութիւնը՝ դաւաճանութեամբ ապարդիւն է անում առաջին յաղթութիւնն և ստիպում է Սմբատին փախչել տրկարացած թշնամու առաջից: Մինչդեռ այդ դրութեան արդիւնքից չեաոյ Գաղիկ Վան վերադառնալով՝ իրան թագաւոր հրատարակելու նախօրեակի հանդէսն էր կատարում, բանտարկուած Աշոտի Գաղիկ եղբայրն իւր համախոհներով չարծակում է նորա վերայ և սպանում: Այնուհետև Աշոտն ազատուելով բանախց՝ կրկին ստանձնում է երկրի իշխանութիւնը 896 թ.՝ օգնական ունենալով իւր Գաղիկ և Գուրգէն եղբայրներին:

Աշոտ Արծրունի մեռնում է առանց հասնելու իւր նպատակին. բայց 901 թուին նորան յաջորդող Գաղիկ եղբայրն եօթը տարի միայն անուանական հնազանդութիւն ցոյց տալով Սմբատին՝ 908 թ. այգբանն էլ մերժում է. և զնալով Ստրպատական Սմբատի կատաղի ոտխ Յուսուփի մօտ՝ ստանում է թագաւորական իշխանութիւն և տիադոս, և վերադառնում Վասպուրական: 922 թուին ամիրապետն էլ վաւերացնում է այդ թագաւորութիւնն՝ ուղարկելով Գաղիկին արքայական թագ և պարզէներ, ինչպէս ուղարկել էր Այրարատում թագաւորող Աշոտին: Գաղիկ Արծրունի թագաւորը վախճանում է 936 թուին. նորան յաջորդում է երէց որդին — Աշոտ Գերենիկ. իսկ վերջինիս մահից չեաոյ 953 թ. թագաւորում է եղբայրն — Սբուսահլ Համազասպ, որ մեռնում է 971 թուին:

Պէտք է սակայն ասել, որ Արծրունիների թագաւորութիւնը թէև սովորաբար կոչւում է Վասպուրականի թագաւորութիւն, բայց իսկապէս նա իշխում էր այդ ընդարձակ նահանգի կեդրոնում. երկրի միւս մասերն իրանց իշխանական աներով թագաւորութեան ամբողջութիւնից դուրս երբեմն կիսանկախ, իսկ երբեմն բոլորովին անկախ գիրք են բռնած եղել: Հաւանական է, թէ Թ. դարի սկզբում չիշխող

մասերը դեռ Տոսպի կեդրոնական իշխանութեան հետ աւելի սերտ միութիւն են ունեցել. այդպէս կարծելու իրաւունք է տալիս և պատկերի պատմութիւնն, որն, ինչպէս ասանք, ընդհանուր ցանկութեանն հետեւելով՝ Տոսպի իշխանական սան համար էր դուշակում նախահայր Սենեքերիմի թագի վերադարձը, Բաղրատունիների հետ համերաշխութիւնն ի նկատի ունենալով: Ընդհակառակն՝ դարի վերջում այդ կապը կարուած է երևում. հանդէս են դալիս ինքն իրանց աղատօրէն, առանց իշխանապետի կամ թագաւորի զիտութեան և կամքի պատերազմ յայտարարող ու շարունակող և արտաքին իշխանների հետ բանակցութիւններ սկսող ու պայմաններ կապող ինքնազուլ իշխաններ: Մինչդեռ Աշոտ Արծրունի 896 թ. զնում էր Սփշինի մօտ Վասպուրականի թագաւորութիւնն հաստատելու, նոյն միջոցին էլ երկրի մասերում անդի ունէր տիրապետական ներքին պատերազմ. — Անձեացեաց Գուրգէն իշխանն արիւնահեղ կռիւ էր սկսել Մոկաց Մուշեղ իշխանի դէմ, որին և սպանեց. բայց ինքն էլ երկու տարուց չեաոյ զիպուածով մեռնելով՝ իշխանութիւնը թողեց որդուն, Ատովմին, որ թէև կոչւում է միայն «մեծ նախարար Անձեացեաց»՝ բայց անկախ մէկն էր. այնպէս որ՝ երբ Յուսուփը, կրկին ամիրապետից կարդուած իւր պաշտօնին՝ վրէժխնդրութեամբ Կորդուաց երկրից արշաւանքն ուղղեց Գաղիկ Արծրունի թագաւորի վերայ՝ Ատովմ Արծրունուն առանձին առաջարկեց ամիրապետին հասանելի հարկը վճարել և Գաղիկ թագաւորին առանձին \*): Իսկ Ապուսահլ թագաւորի մահից չեաոյ (971 թ.) Անձեացեաց և Ռշտունեաց երկիրներն առանձին թագաւորութիւնների էին բաժանուել: Այն օրից, երբ Արծրունիների տունը հասաւ բաղձացած անկախ թագաւորութեան, նորա համար առաջնակարգ կարևոր խնդիր էր դառնում երկրի հողեոր անկախութիւնն և սպահովել, որպէս զի Բաղրատունի թագաւորները Այրարատի հայրապետական աթոռի ազդեցութիւնը չզործադրեն քաղա-

\*) Չաւց. Բ. 805—806.

քական նպատակների համար, իսկ մինչև այդ հոգալը նորանք կամ հրաւիրուծ բերուծ էին և երկար ժամանակով իրանց մօտ պահուծ հայոց հայրապետին, կամ նոր հայրապետի ընտրութիւնը վաւերացնուծ էին և իրանց հաւանութիւնով: Ստեփաննոս կաթողիկոսի ընտրութեանը հաւանութիւն են տալիս թէ Բաղրատունի Աշոտ թագաւորն և թէ Արծրունի Գագիկ թագաւորը: Ստեփաննոսը նստուծ է Աղթամար կղզուծ. մի տարուց չետոյ նա մեռնուծ է. յաջորդուծ է Թէոփորոս Ա. որ նոյնպէս նստուծ է Աղթամարուծ: Բայց այս այն ժամանակուծն էր տեղի ունենուծ, երբ Աղթամարի եկեղեցին շինուել էր. իսկ նորանից յառաջ Արծրունի թագաւորները կաթողիկոսական աթոռի յարմարաւոր տեղ պիտի ընարէին: Ինչպէս երեսուծ է, Գագիկ Արծրունին նախ քան Աղթամարի նոր արքայական ապարանքը շինելը տեղի ընտրութեան մասին տատանուել է. նա սկզբուծ ձեռնարկել է կառուցանելու Վանտոսպ քաղաքուծ «եկեղեցի հրաշագործ հրաշագան յօրինուածով յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ» . իսկ սեղանի աջ և ձախ կողմերուծ առանձին մատուռներ Գողթթաչի, Յարութեան և Համբարձման անունով \*): Հաւանական է, թէ նա մտաղիբ է եղել Երուսաղէմի տնօրինական տեղերին ընծաջուած եկեղեցուծ դնելով նուիրական սրբութիւններ՝ սեպհականել նորանուծ հաստատելի կաթողիկոսական աթոռին նախամեծարութեան պատիւ և իրաւունք. բայց «Ս. Սիօնի» շինութիւնից չետոյ նա թողել է այդ մտադրութիւնը, նուիրելով առանձին ուշադրութիւն և հաւանութիւն Վարազայ վանքին. ըստ որուծ ուխտ գնալով այնտեղ՝ նորա նշանաւոր ս. Նշանի կամ խաչի համար ոսկուց պահարան է շինուծ և թանգագին քարերով զարդարուծ. «ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարազ և երկրպագեալ աստուածազարդ բրիստոսապսակեալ փայտի խաչին Քրիստոսի, պատուանդանի օտիցն Աստուծոյ, որով պարծի և պսակի ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց

\*) Թովմա Արծր. 253.

«երածք: Եւ ոսկեզործ ահանակապ կաղմեալ՝ պատեաց ոսկով «ղփրկագործ սուրբ խաչն, և ընդելուղեալ մարդարտով զար- «դարեաց զսխրագործ փայտն» \*):

Անկասկած այդ ժամանակուծն էլ յօրինուել է «Նուփսիմեանց պատմութիւնը»:

Տեսանք վերևուծ, թէ վանքերից շատերի համար երբ և ո՞րպիսի պահանջ էր դարձել յայտնի նուիրական սրբութիւններ ունենալը: Վարազի վանքն էլ, ինչպէս պարզ երևուծ է, այդ պահանջի ազդեցութեամբ ունեցել է այն խաչն, որ կրուծ է Վարազի ս. Նշան անունն:

Իսկապէս ո՞ր ժամանակից կարող է յայտնուած լինել այդ խաչը:

Յայտնաւորքի և ճառընտիրների մէջ պատմուծ է, թէ ս. Նուփսիմէի հետ բերած ս. խաչամասը Վարազի լերան վերայ ծածկուած մնալով՝ է. զարուծ յայտնուծ է Թողիկ անուն ճղնաւորին, որ «հանապաղ աղօթէր առ Աստուած և խնդրէր ի նմանէ յայտնել ինքեան զտեղի նորուն: Յաւուր «միուծ յաղօթել նորա ի զիշերի հանդերձ աշակերտաւն, եկն «առ նոսա ձայն. և տեսին լոյս պայծառ ի բարձր տեղուջ ի «վերայ վիմի ի լերին անդ Վարազայ, և երկոտատան լուսե- «ղէն սիւնը գնովաւ. ուր և բուրեաց հոտ անոյշ. և լսելի եղեն «ձայնք հրեշտակաց քաղցր մինչև ի վեց ժամ աւուրն: Եւ «ասպա վերացաւ ի վիմէ անտի լուսեղէն նշանն, յորոյ միջի «վերամբարձ երևէր խաչն. որ և նովին լուսափայլութեամբ «եկն և եմուտ չեկեղեցին, և եկաց ի վերայ սուրբ սեղանոյն: «Եւ նոցա ահիւ և ուրախութեամբ մտեալ ի ներքս՝ մատ- «եան առ ս. սեղանն, և երկրպագեալ սրբոյ խաչին՝ համբու- «րեցին զայն արտասուօք և զօհացան զԱստուծոյ»: \*\*)

Ներսէս Գ. կաթողիկոսը լսելով ս. խաչի սքանչելահրաշ գիւտը՝ Տայք նահանգից գալիս է Վարազ և կարգուծ է «տօն Վարազայ խաչին ի մեհեկի 20, ամ յամէ կատարել զայն առանձին շարականաւ»:

\*) Թովմա Արծր. 254.  
\*\*) Չամբ. Բ. 355.

Գժուար չէ ապացուցանել, թէ այս պատմութիւնն որքան ուշ ժամանակում պէտք է յօրինուած լինի: Նախ թէ ժամանակակից և թէ յետագայ հայ պատմիչներից ոչ մէկը չգիտէ և չէ յիշում «Վարազայ Խաչի Գիւտ» և նորա համար կարգուած տօն և շարական: Նոյն իսկ Սեբէոսն, որ ժամանակակից լինելով և Ներսէս Գ-ին՝ բաւական տեղ է տուել նորա գործունէութեանն իւր պատմութեան մէջ՝ նորա Վարազ զնալն և հայոց եկեղեցում նոր տօն և շարական հաստատելը չգիտէ. նոյնպէս Աւոնդ, Յովհաննէս կաթողիկոս, Ասողիկ և Կիրակոս պատմիչները չիշելով Ներսէս Գ-ին՝ որքա՞տ, որք սակաւ, դարձեալ նորա Վարազ զնալը, կամ խաչի զիւտ նորա ժամանակին չգիտեն և ոչ էլ որեւէ ս. Նշան Վարազի վանքում: Անագան ուրեմն՝ ԺԲ. դարի հեղինակ Մատթէոս Ուռհայէցին չիշում է միայն Վարազի ս. Նշան, որ 1092 թ. տարուել է Ուռհա. իսկ Վարդան վարդապետը չիշում է նոյն խաչը Սեբաստիայում. «Որդիքն Սենքերիմայ տան նմա (Պետրոս կաթողիկոսին) զվանքն, զոր յանուն Վարազայ ս. Նշանի շինեալ էին» (եր. 98):

Եթէ միւսները տեղեկութիւն չեն ունեցել այդպիսի մի նշանաւոր զիւտի և տօնի պատմութեան մասին, դո՞նէ Թովմա Արծր-րունին իւր հայրենիքի—Վասպուրականի ամեն մի ճնչին անցըն էլ, ամեն մի անձնաւորութեան գործերն էլ քիչ ու շատ մեծացնողն և ուրախութեամբ արձանագրողը պիտի գիտենար Վարազի «փրկագործ ս. խաչի» զիւտի դէպքն և պատմութեան մէջ տեղ տար նորան: Այո, նորա պատմութեան 255 երեսում, այն խօսքերից յետոյ, թէ Գաղիկը շինեց ս. խաչի համար ոսկի պահարան և ականակուռ դարգարեց, գտնում ենք հետեւեալ տողերը. «Այս այն խաչ է, զոր վերագոյնն զրեցաք վասն նորա, մԺԹ. (219) ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսէսի Երկրորդի հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տան-«կաց զհայկական աշխարհս»:

Որչափ էլ մէկը Թովմայի պատմութիւնն ուշադրութեամբ կարգացած լինելով՝ չկարողանայ մտաբերել չիշեալ

«յայտնութեան ցոյցի» մասին եղած խօսք, այնուամենայնիւ հանդիպելով վերոյիշեալ տողերին՝ ստիպուած է լինում նորից յետ դառնալ, նորից մատուցեալ կարգալ ամբողջ 254 երես, որ զտնի թէ ի՞նչպէս է նկարագրել պատմիչը Վարազի ս. խաչի յայտնութիւնը կամ զիւտը Ներսէս Բ-ի (փոխանակ զնելու Գ-ի) և Վարդ կամ Վարդան պատրիկի օրով.— բայց ի դուր: Հեղինակը Վարդան պատրիկի անունը նախընթացաբար ամենեւին չունի չիշատակած. իսկ Ներսէս Բ-ի անունն էլ մի տեղ (331 երես) թէ և չիշում է, սակայն այն էլ միմիայն մի քանի խօսքով, երբ հարկաւոր է համարել ասել թէ Գէորդ կաթողիկոսն էրկրաշարժից քարուքանդ եղած Դուխըր թողնելով՝ «ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոյն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելուց տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի»: Ընդհակառակն՝ Վարազայ խաչի զիւտի չիշատակութիւն գտնուած ենք Թովմա Արծրունու պատմութեան Դ. Դպրութեան ԺԲ. զըլխում, 306 երեսում, բայց ոչ թէ է. դարում, այլ ԺԱ. դարի սկզբում տեղի ունեցած, Սենքերիմ թագաւորի օրով, երբ Գուրբերն առաջին անգամ յարձակուել էին Վասպուրականի վերայ. «Ի սոցա (Սենքերիմի և Դերենիկ եղբոր) ժամանակի «երևեցան զանձք աստուածային նշանին, յորոյ վերայ եհեց «գարիւն իւր միածին որդին Սասուծոյ. և էր համբարեալ ի «լերինն Վարազայ, ի գաղաթն քարանձաւին ի ձեռն սուրբ «որոյն և թագաւորազն կուսին հոփսիմեաց, յայանեաց «Սասուած, որպէս և յաւուրսն Կոստանդիանոսի արքայի և «Կիւրղի հայրապետին, զնոյն և զաւառն Վասպուրական ի «լեառն Վարազայ ցոյացեալ նշան տէրունական խաչին՝ չեր-«րորդ ժամու թռուցեալ ի գաղաթանէ քարանձաւին՝ բնա-«կեցաւ ի նոյն լերինն ի հովիտ մի, ուր են այդիւրք բարե-«համբ. և սուրբ թագաւորն Սենքերիմ շինեաց ի նոյն տե-«ղիս եկեղեցիս մեծածախս, և ի ստորոտ լերինն շինեաց «զհոյակապ և զհուշակաւոր մայրաքաղաք մենաստանացն «զՎարազ<sup>52</sup>) և կարդեաց ի նմա արս հաւատարիմս և զար-«դարեաց բազում կրօնաւորօք և երկնադուժար դասիւք սուրբ

«քահանայիւրք, և կարգեաց նոցա ոտնիկս և կէին ի խաղա-  
«ղութեան»:

Ընդունում ենք, որ Թովմա Արծրունին Գաղիկ թաղա-  
ւորի գործերի պատմութեամբ, կամ թէկուզ ինչպէս կար-  
ծում է հ. Գ. Զարբանալեան «ընծայականով ճր կամ խօսքն  
«առ Գաղիկ դարձնելով՝ աւարտած է իւր երկասիրութիւ-  
«նը... սակայն այս վերջաբանը մեղի հասած չէ. հոս կիսատ  
«կը մնայ գիրքն, և թէպէտ դեռ ուրիշ բաներ կը կարդանք  
«Արծրունւոյն անուամբ հրատարակեալ գրոց մէջ և Ե. զրպ-  
«րութիւն մ'ալ, բայց իրմէ ետքի զրոզի և շարունակողի  
«գործ է այն»: \*) Բայց և այնպէս այդ «ետքի զրոզի և  
շարունակողի» խօսքերն էլ ուշադրութեան պիտի արժանա-  
նան, պիտի առնուեն ներկայ խնդրում: Ի՞նչ է նշանակում  
պատմագրի ասելը, թէ Վարազի խաչի յայտնութեան մասին  
«վերագոյն» գրել ենք, երբ վերագոյն ոչինչ չենք գտնում. իսկ  
նորանից յետոյ շարունակողը գրում է, թէ Վարազի խաչը  
գտնուեց Սենեքերիմ թագաւորի ժամանակին, երբ թուրքերը  
նոր էին չարձակուել Վասպուրականի վերայ: Նախ՝ եթէ Թ.  
Արծրունին գրել է իսկապէս չիշեալ զիւտի մասին, կարո՞ղ էր  
ժամանակագրական այնպիսի խոշոր սխալ անել, ինչպէս է  
մթթ. թուականը. Ներսէս Գ. վախճանել է 661 թ. «եթէ  
մթթ. ամօք չառաջ» ասելով՝ պատմիչը կամեցել է ասել, թէ  
պատմած դէպքը — Գաղիկի Վարազ գնալու ժամանակից 219  
տարի չառաջ էր, — Գաղիկ յաջորդել է Աշոտ Արծրունուն  
901 թուին. թող թէկուզ նա իւր իշխանապետութեան ա-  
ռաջին ասրումն էլ Վարազ գնացած լինի և այդ հաշուով  
էլ 901 թուականից հանենք 219 թուականը. դարձեալ Ներ-  
սէս Գ. 21 տարի չառաջ վախճանած էր. ուրեմն նորա օրով  
ոչ խաչ է գտնուել, ոչ տօն ու շարական կարգուել: Երկրորդ՝  
եթէ Թովման գրել է այդ զիւտի մասին, ուրեմն պիտի կար-  
ծել թէ յետոյ հանել են այդ հատուածը նորա պատմութիւ-  
նից. արդ՝ այդ անողը միևնույն ժամանակ կ'ըզոնէր իրանց

\*) Հայկ. Հին Դպր. Պատմ. 527.

տեղում նորա այն խօսքերն, որոնք զիւտի պատմուածքի գոյու-  
թիւնն են մատնացոյց անում. կամ՝ ի՞նչպէս արդեօք նորա  
պատմութեան շարունակողը կհամարձակէր խաչի զիւտը դը-  
նել ԺԱ. դարի սկզբում, երբ Թովման ասել է թէ այդ դէպքը  
տեղի է ունեցել է. դարում, Ներսէս Բ-ի ժամանակին: Պարզ  
է ուրեմն, որ Արծրունու պատմութեան 255 երեսի խօսքերն  
անհարազատ ձեռքի յաւելուած են, արուած հաւանօրէն մին-  
չև ԺԳ. դարի վերջերն, ըստօրում Աղթամարի ձեռագիրն,  
որից օգտուել է հանդ. Պատկանեանցն իւր տպագրութեան  
միջոցին, օրինակուած է 1303 թուին:

Ի նկատի առնելով վերոգրեալները՝ զայիս ենք այն եղ-  
րակացութեան, թէ առաջին՝ Վարազի վանքում Լ.-Թ. դա-  
րում եղել է մի խաչ, որ սովորաբար կոչուել է Վարազայ  
ս. Նշան. թէ ո՞րտեղից է բերուել, չայտնի չէ, բայց բերանա-  
ցի աւանդութեամբ կոչուել է վրկչական խաչափայտի մասն:  
Երկրորդ՝ երբ Վասպուրականի թագաւորութեան հետ միա-  
սին չառաջ է զայիս առանձին կաթողիկոսութիւն հաստա-  
տելու պահանջ, և համեմատ այդ պահանջի թէ չարմարաւոր  
տեղի և թէ նոր աթոռին նուիրական շուք տուող սրբու-  
թիւններ ունենալու խնդիր՝ նախ յօրինուած է Պատրոնիկէի  
խաչի զիւտի պատմութիւնն և ապա հռիփսիմեանց պատ-  
մութիւնն, որի նպատակն է առաջին՝ հաստատել Խորենա-  
ցու մեծ անունով, թէ Պատրոնիկէի գտած կենսատու ս.  
խաչի մասը ս. հռիփսիմէին է անցել, և սա էլ Վասպուրա-  
կան բերելով՝ ծածկել է Վարազ լերան վերայ, որ գտնուել  
և զրուել է չիշեալ վանքում. սկզբում այդքանը բաւական է  
համարուել, և չեն մտածել յօրինել մի նոր պատմութիւն —  
զիւտի՝ հրաշքով կատարուած լինելու մասին: Երրորդ՝ որով-  
հետև հայերի համար պաշտելի ս. Գրիգոր Լուսաւորչի ա-  
թոռի դիմաց հաստատած մի նոր աթոռ չէր կարող ճանա-  
չուել և չարգուել, եթէ նոյն ս. Լուսաւորչի անուան հետ  
կապուած չլինէր, ուստի Խորենացին պիտի վկայէր նաև, թէ  
Լուսաւորիչն եղել է Վարազում և նորա մերձակայ տեղե-  
րում. շինել է եկեղեցիներ, կազմել է պատարագելու սեղան

և նշան է թողել «զգօտին և զգաւազանն իւր». ուրեմն՝ եթէ մէկը կրօւմ է ս. Լուսաւորչի գօտին և զաւազանը, պատարագում է Նորա հաստատած սեղանի վերայ՝ Նորա օրհնութեանն և շնորհաբաշխութեանը բաժանորդ է: Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան մէջ ևս (եր. 100) կարդում ենք, թէ երբ Գէորդ կաթողիկոսը Վասպուրականում վախճանում է «տարեալ համախումբ քահանայիցն և իշխանաց աշխարհին՝ եղին զնա ի քնարանի Զորոյ Վանաց, որ ի Տոսք մերձ «չեկեղեցին, ուր եղեալ ի սկ էր սրբոյ Լուսաւորչին «մերոյ զգաւազանն իւր և զսեղան տէրունական «խորհրդոյն, զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սրբոց ի հայս ընդ իւր շրջեցուցանէր»: Յիշեալ պատմարան կաթողիկոսը հնարաւորութիւն չունենալով Այրարատում մնալով՝ 924 թ. գնում է Վասպուրական, յառաջագոյն շատ անգամ հրաւէր ստացած լինելով Գագիկ Արծրունուց: Այնտեղ, Վասպուրականումն էլ նա մեռնում է 925 թուին: Կարելի է կարծել, թէ կամ այնտեղ լինելիս լսել և հաւատացել է, թէ արդար և ս. Լուսաւորչի թողել է չիշեալ տեղում գաւազան և սեղան, կամ նորա մահից չետոյ պատմութեան մէջ աւելացել են վերևի ստորագծած սողերը:

Սակայն երևում է, որ Գագիկ Արծրունի իւր վերջիշեալ մատգրութիւնը թողնում է ամիրապետից թաղաւոր հաստատուելուց չետոյ նա 922 թուին մեռնարկում և կառուցանում է արքունական նոր ապարանք Աղթամար կրդղում, որի հետ միասին և հոյակապ եկեղեցի, որպէս զի նոր արքայանիստ ապարանքի մօտ ունենար և Վասպուրականի հայրապետական աթոռը: Նոր աթոռին և նոր եկեղեցուն հարկաւոր էր ժողովել և ամփոփել իրանցում թէ այնպիսի սրբութիւններ, որոնք կրօնական պատկառելի նշանակութիւն պիտի տալին աթոռին, և թէ այնպիսիներն, որոնք հօգաւառած լինելով իրանց ծաղման և սքանչելադործութեան պատհառով՝ ուխտաւորների բազմութիւնը պիտի ձգէին բերէին զէպի հայրապետական եկեղեցին, և այդպիսով աւելի սէր և

սերտ կապ պիտի հաստատուէին ժողովրդական ամբօսի և հայրապետանոցի միջև. Թ. Արծրունու պատմութեան շարունակողի ասելով՝ «Ի սուրբ կաթողիկէն, յաստուածադարդ և «զերպանոյն սուրբ եկեղեցուն և զեղապանձ անուանակոչութեան սուրբ Խաչին, զի զնա ընարեաց Աստուած և հանեցաւ բնակիլ ի նմա, և եղ ի պահեստի զգանձս աստուածայինս զաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին զՊարթևին Գրիգորի, և զսեղանն սրբարար աստուածային «խորհրդոյն և զզօտին սուրբ միջոյն և զգաւազան «ամենաղօր աջոյն, որ հովուէր զժողովուրդն տեառն... «և զհոգաթափն աշխատասէր ոտիցն սուրբ կուսին Հովսիսի մեայ և զփողապատն ներկեալ «սուրբ արեամբն, և զբազուկ սուրբ մարտիրոսին տղային «Արղմսէհի... և զայլ ևս նշխարս մարտիրոսացն, և զնշան «տէրունական խաչին, յորոյ վերայ էր կաթուած արեան կենարարին... որ դեռ ևս կօչի ս. Նշան ապարանից» \*):

Ի հարկէ այս բոլորը միանգամից չէին հաւաքուած լինի Աղթամարում, բայց անշուշտ բուն սկզբից նոր եկեղեցում պիտի դրուած լինէին ս. Լուսաւորչի սեղանը, գօտին և գաւազանը, նաև Վարագի ս. Նշանը: Թէև վերջինս յատկապէս յանուանէ լիշուած չէ, սակայն այդպէս հասկանալու համար բաւական է այն էլ, որ նախ՝ Աղթամարի եկեղեցին շինուել էր ս. Խաչի անունով. երկրորդ՝ որ Թ. Արծրունին լիշում է (եր. 299) նոյն եկեղեցում «սրբութիւն սրբութեանց», որը Գագիկ Արծրունին զարդարել է «գրամբք արծաթապատօր... և սկամբք պատուականօր»: Երբ ս. Նշանը դեռ Վարագայ վանքումն էր՝ Գագիկը «ոսկեգործ ականակապ կաղմեալ»՝ պատել էր ոսկով «զփրկագործ ս. խաչն, և ընդելուզեալ մարգարտով» զարդարել «զսխրագործ փայտն... թողեալ մասն ինչ յառաջնում խաչակերտ փայտեղէն գլորցկանն». այժմ, երևի, պահարանն է աւելի շքեղացրել «նկարապանոյն» զարդարանքով, պատկերներով և թանգազին սպասներով: Ուրիշ

\*) Պատմ. Տանն Արծր. եր. 310:

կերպ էլ դժուար է բացատրել, եկեղեցու ներսի մասերից ոչ մինը չէ կարող կոչուել «սրբութիւն սրբութեանց». ս. խաչի վերացման տօնի երրորդ օրուայ շարականի մէջ ս. խաչը կոչուում է սրբութիւն սրբոց. «Սրբութիւն սրբոց շնորհեցեր եկեղեցւոյ սուրբ զխաչ քո տէր»:

Ս. Նշանի Աղթամար փոխադրուելովը Վարազի վանքը պիտի կորցնէր իւր կրօնական շուքն և նշանակութիւնն, և մանաւանդ ուխտաւորներից ստացուող արդիւնքները: Նորա համար այդպիսի զրկանքը տանելի լինել չէր կարող. և վերջապէս գտնուում է դորա առաջն առնելու հնարը. հրատարակել, որ ս. Հովիթիմէի բերած իսկական ս. խաչամասը ծածկուած է եղել և նոր միայն յայտնուել է հրաշքով: Թովմայի պատմութեան շարունակողն այդ զիւտի մասին այնքանն է ասել, որքան իւր ժամանակին խօսուել է, նորանից չետոյ զիւտի պատմութիւնը զնալով աւելի նոխացել է և այդպէս զետեղուել Յայսմաւուրքի և Ճառքնախրների մէջ: Ի պատիւ Վարազայ ս. խաչի յօրինուած շարականը յայտնապէս ցոյց է տալիս, թէ անծանօթ հեղինակը զործ է ածել Թովմայի պատմութեան շարունակողի խօսքերն. օրինակ՝ վերջինս ասել է. «որ ի վերայ սորա հեղեր զարիւնդ»: Առաջինն ասել է. «ի լեառն Վարազայ ցոյացեալ նշան տէրունական խաչին». շարականն էլ ասում է. «Որ զլոյս աճառելի աստուածութեանդ քո Քրիստոս ի վերայ խաչին ծագեցեր այսօր ի լեառն Վարազայ»: Առաջինն ասում է. «Ի լեառն Վարազայ նշան տէրունական խաչին... թռուցեալ... բնակեցաւ ի նոյն լերինն». շարականը՝ «թռուցեալ եկաւորի ի լեառն Վարազայ բնակել ի նմա»: Հռչակաւոր մասունքներն, որոնց թուում և Վարազի ս. Նշանն Աղթամարում ունենալը կամ գոնէ այդպէս հրատարակելը մի ուրիշ շարժառիթ էլ ունէր.—բառնալ նշանաւոր վանքերի Աղթամարի աթոռից ապստամբելու և ինքնակաց, անկախ հաստատութիւն դառնալու հնարաւորութիւնը:

Աղթամարի եկեղեցու սուրբ մասունքների մէջ վերևում տեսանք և Ապարանից ս. խաչը: Մոկաց երկրում կար մի

վանք, որ իշխանանիստ սպարանքի մօտ շինուած լինելուն համար կոչուած էր Ապարանից վանք: Ճասնորոյ դարի վերջում այդ վանքն էլ տիրող հանգամանքների շնորհիւ պատրաստուում է հռչակ և նախամեծարութիւն մեռք բերել, իսկ դորա համար ցանկանում է ունենալ հռչակաւոր նուիրական սրբութիւններ, և ունենում է այսպիսի պատմութեամբ: Վանքի առաջնորդ Իաւիթ եպիսկոպոսը, մի սուրբ մարդ՝ վախճանում է 951 թուին, և նորա հրաշագործ գերեզմանը բազմաթիւ ախտաժէտներին և ցաւազարներին բժշկութիւն է պարգևում. այդ պատճառով էլ շատերն իբրև մասունք նորա գերեզմանի հողը վերցնում պահում էին իրանց մօտ: Այդ Իաւիթի մի եղբորուդին էլ նոյն հողից մաս վերցրած լինելով մօտը՝ գնում է Կ. Պօլիս և կայսերական պալատում զինուորական պաշտօնի մէջ մտնում: Նա իւր արիական գործերով աչքի ընկնող զինուոր է դառնում. բայց աւելի համբաւ և յարգանք վայելում է շնորհիւ հետը վերցրած հրաշագործ հողի, որը բազմաթիւ հիւանդների վերայ դրուելով՝ բժշկութիւն է պարգևում: Հրաշագործութեան համբաւը հասնում է և Վասիլ կայսրին ու Կոստանդին եղբօրն, որոնք կանչելով Մանգլաւտ մականուն կրող այդ հայ զինուորականին և տեղեկանալով՝ որ այդ բոլորը կատարում է իւր հօրեղբօր, Իաւիթ եպիսկոպոսի գերեզմանի հողը, թէ նորան իրան պատրիկի և մագիստրոսի բարձր աստիճանն և պատիւն են շնորհում, և թէ ցանկութիւն են յայտնում այդպիսի հրաշագործ մարդու գերեզմանն իրանում ամփոփող վանքին ծանրազին ընծաներ տալու, սակայն Մանգլաւտ յայտնելով կայսրներին թէ վանքը մարմնաւոր պարզեցներ չի ցանկանայ ստանալ՝ իրաւունք է առնում հարցնել վանքի առաջնորդի և միաբանութեան՝ ինչ պարգևի փափագելն. և պատասխան է ստանում, թէ ինքնակալներից ուրիշ բան չենք խնդրում, այլ միայն «զի շնորհեսցեն մեզ ի պարգև զմասն ինչ ի փրկչական և յաստուածընկալ կենաց փայտէ սրբոյ խաչին, որ կայր մինչև ցայն վայր ի թագաւորական քաղաքի անդ ի Կ. Պօլիս» \*): Կայսրն և

\*) Չամչ. Բ. 855.

եղբայրը գովելով այսպիսի հողերը փափազն՝ իսկոյն կաղծել են տալիս ոսկեկուռ, ձուլածոյ մի խաչ, որի մէջ զնուծ են ոչ միայն ս. խաչափայտի մասն, այլ և փրկչական փշեայ պսակի, բեւոճերի, խանձարուրի, զենչակի և այն սպունդի, որով Փրկչին լեզի մատուցին նաշակելու, նորանց հետ էլ և Աստուածածնի հանդերձների մասեր: Այս բոլորը մի թանգապին տապանակի մէջ դրած՝ կայսրները յանձնուծ են Մանդլաւտին և նա անձամբ բերուծ ու զնուծ է Ապարանից վանքում: Այստեղ էլ հարկաւոր է լինուծ գրել այդ սրբութիւնները ձեռք բերելու պատմութիւնը, և դրողը լինուծ է Գրիգոր Նարեկացին, որ սկսուծ է այսպիսի վերնագրով. «Յիշատակագրութիւն Պատմարանութեան Ամենագոր նշանի Աստուածեան խաչին, որ... ի ստորին կողմանց կայից աշխարհի ազգացն յունաց բերեալ հանդուցաւ... ի շինուած բնակութեան ուխտին Սրբութեան՝ որ կոչի Ապարանք» \*):

Նպատակ չունենալով պատմութեան հարադատութեան կամ անհարադատութեան խնդիր չարուցանել, ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում չառաջ բերած տողերի այն խօսքերի վերայ, որոնք սակայն խաչի մի այլ տեղից քան Կ. Պոլսից բերուելը կարող են հասկացնել. — «Ի ստորին կողմանց կայից աշխարհի ազգացն յունաց բերեալ»: Ահա այս խաչն է, որ գտնուծ ենք Աղթամարուծ ԺԱ. դարի սկզբուծ: Իսկապէս Մոկաց երկրի այդ խաչը Աղթամար է փոխադրուել, թէ մի այլ խաչի այդպիսի անուանակոչութիւնն են տուել, Ապարանից վանքի ունեցածն անվաւերական ցոյց տալու գիտաւորութեամբ — նպատակը միւսնոյն է. ինչպէս ասացինք՝ վանքերից բառնալ ինքնիշխանութեան և նախամեծարութեան ձգտելու հնարաւորութիւնը: Թովմայի պատմութեան շարունակողի խօսքերից տեսանք, որ խաչի գիւտի առիթով Վարազի վանքը կոչուած է «հոյակապ և հոչակաւոր մաշրաքաղաք մենաստանաց»: Սենեքերիմ Սրժբունի թագաւորը 1021 թուին թողնելով Վասպուրական երկիրը՝ փո-

\* ) Գիրք Աղօժից ս. Գրիգ. Նարեկ. Կ. Պոլիս. եր. 339.

խաղրուծ է Սեբաստիա, տանելով իւր հետ և Վարազի խաչը կամ ս. Նշանը, որ վեց տարուց չետոյ դարձեալ Վարազէ բերուծ, Սենեքերիմի՝ մահից չառաջ յայտնած կամքի համաձայն: Այժմ աւելորդ չենք համարուծ անցնել այն դործունէութեան, որի մէջ երևուծ է մեզ ԺԱ. դարի վերջուծ և ԺԲ. դարի առաջին կէսուծ նոյն Վարազի վանքը, նոր նանապարհի վերայ կանգնած:

Հայոց պատմական գրականութեան ծանօթ բանասէրներին քաջ յայտնի է համբաւաւոր «Դաշանց թուղթը». յայտնի է նմանապէս քննադատների նորա մասին տուած վճիռը — խարդախութիւնը մերկացնող եղրակացութիւնը: Բայց դարմանալին այն է, որ դեռ այդ կեղծ դաշնագրի իսկական յօրինողներն և յօրինման տեղը որոշուած չեն: Կարապետ վ. Շահնազարեանցն, որ զժբաղդութիւն ունեցաւ ամենայն Հայոց հայրապետական աթոռի վերայ բազմած խորին ազիտութեան պաշտօնապէս յայտարարած ամօթալի մոլորութեան «Հերքումն» հրատարակելու առանձին գրքոյկով 1862 թուին, չիշեալ «թղթի» յօրինման ժամանակը շատ նշաւութեամբ որոշուծ է. — ԺԲ. դարը — ասելով՝ «Դաշանց գիրը մետասաներորդ դարէն չառաջ անձանօթ էր Հայոց» \*). կամ թէ՛ երբ խօսելով Ներսէս Շնորհալու մասին (եր. 85), ասուծ է, թէ նա «խաչակրաց տաւեր կապրէր. Դաշանց թուղթն ալ յատկապէս ան տաւերի շէնք է». միայն թէ «շէնքի» տեղը նորա խօսքերից Կիլիկիան է երևուծ, որ սխալ է: Իսկական տեղն իմացած կլինէր հեղինակն, երբ որ գրելով «Սեղբեստրոս պարզեւներ կուղարկէ Վարազայ վանքին (որ դեռ շինուած չէր)»՝ այսպիսի հարց տար ինքն իրան. — Եթէ յօրինուծ էր մի կեղծ դաշնագրութիւն հռոմի և Հայոց հայրապետների անուաներից՝ նպատակը հասկանալի է. իսկ Վարազի վանքն ի՞նչ կարևորութիւն պիտի ունենար այդ նպատակի համար, որ Կիլիկիացուծ դործողները հարկ համարէին Վասպուրականի այդ վանքի անուանը մտցնել դաշնագրի մէջ, հարկ համարէին հռոմի հայրապետից նորան պարզեւներ ուղարկել Լշճիածնի, հռիփ-

\* ) Դաշանց Թղթոյ Գնտութիւն և Հերքումը. եր. 64:

սիմէի, Գայիանէի և ս. Կարապետի վանքերի հետ միասին: Մեր պատմութեան մէջ մինչև խաչակիրների Սրբեկըում և րեւելն, ուրեմն մինչև ԺՍ. դարի վերջը, չէ երևում ամենևին թէ Հռոմի հայրապետական աթոռն որևէ ուշադրութիւն դարձրած լինի Հայոց եկեղեցու վերայ, և որևէ կերպով ջանքեր զործ զրած լինի ի վնաս նորա անկախութեան և ինքնակացութեան: Այդ պատճառով էլ մեր կրած զրկանքների և նիւթական ու բարոյական ծանր կորուստների պատճառ մէջ տեղում տեսնում ենք միայն Բիւզանդիան: Ժիշտ է՝ նա է սկզբից մինչև վերջը վարուել մեզ տկարացնելու և կլանելու քաղաքականութեամբ. նա է յարուցել անվերջ ճնշումներ և հալածանքներ խղճի և կրօնի ազատութեան դէմ. նա է, յուզմունքներ և պառակտումներ ձգելով Հայ եկեղեցու զաւակների մէջ՝ խլել տարել մեծ-մեծ հատուածներ այդ եկեղեցու զրկից: Այս ամենը պատմական փաստեր են և անհերքելի կմնան. սակայն պէտք չէ կարծել, թէ այդ բոլոր ժամանակը, մինչև ԺԲ. դարը՝ Հռոմի պապական աթոռը հեռուն կացած չէ կամեցել որևէ փորձութեան ենթարկել առանց այն էլ շարունակ փորձութիւնների մէջ տառապող եկեղեցու դոյութեան իրաւունքը: Այս տարի Լեոն ԺԳ. պապը մի կոնդակ էր ուղղել Յունաստանի կաթողիկէ կալիսկոպոսներին, որով պատուէր էր տալիս յորդորել, հրաւիրել հելլենական ժողովուրդը հրաժարուելու հերձուածից և ճանաչելու պապական աթոռի գերիշխանութիւնն: Այդպիսի առաջարկութիւնից զայրացած յոյն լրագիրներից մէկը — «*Messenger d'Athenes*» թուելով պապերի անցնալ ժամանակների հակամարդկային և հակաքրիստոնէական արարքները, — սահմանած խարոյկներն և ուրիշ զարհուրելի միջոցները՝ խղճի ազատութիւն պաշտող քրիստոնեաներին անհատաբար և համայնաբար պատժելու և ջնջելու համար, ի միջի այլոց Հայերի նկատմամբ էլ այսպիսի դադանիք է խոստովանում. «Երբ Բիւզանդական «կայսրութիւնը հիմնուեց և քրիստոնէութիւնը մուտք զոր- «ձեց նրա մէջ, երբ յոյներն ընկան հռոմէական կեսարների «լծի տակ, որոնք փոխադրեցին Բիւզանդիա Հռոմի բարբերի

«ամբողջ ապականութիւնը, նրա քաղաքականութեան նեն- «գութիւնը, նրա հոգևորականութեան բունակալութիւնը և «Ֆանատիկոսութիւնը, նրանք, յոյները, ակամայ զործիք դար- «ձան Հռոմի պապերի և այլասեռուած կեսարների ձեռքում ի «կորուստ մի հերոսական քրիստոնեայ ժողովրդի, որ պա- «տուար էր ծառայել Յունաստանին հեթանոս աշխարհակալ- «ների դէմ: Քրիստոնեայ Հայերը ամբողջ դարեր յուսահատ «կուիւ մղեցին իրանց ճնշող պարսիկների, արաբների և մի- «ջին-ասիական բարբարոսների դէմ: Բիւզանդական կեսարները «հռոմէական հոգևորականութեան ճնշման տակ, փոխանակ «հայերին օգնելու, ուղարկում էին նրանց դէմ հզոր զորքեր, «որոնք աւերում էին թշուառ քրիստոնեայ երկիրը. — աւելի «անգլթութեամբ քան Ալփի-Սալանների և Տուղրուլների վայրե- «նի հրոսակները: Աւելի տմարդօրէն վարուեցին նրանք հայերի «հետ, երբ սրանք կուիւ սկսեցին արաբների դէմ: Եւ այդպի- «սի կոյր Ֆանատիկոսութեան ու հակա-քրիստոնէական Ֆա- «նատիկոսութեան հետեանքն այն եղաւ, որ թիւրք-սելջուկ- «ները և Օսմանլիները տիրեցին Հայաստանին և հաստատ- «վեցին այդ երկրում, իսկ չեսոյ ենթարկեցին ստրկութեան «և մեզ և ամբողջ Բալկանների թերակղզին: Իսկ ո՞վ էր խա- «չալրաց արշաւանքը յարուցանողը. նոյն քրիստոնէական «Հռոմը, որ ձգտում էր, զլիսաւորապէս, ոչ թէ սուրբ աե- «ղերը ազատել մահմետականներից, այլ Պալեստինում կա- «թողիկ իշխանութիւններ հաստատել: Զինաւորելով ամբողջ «մուսուլման աշխարհը քրիստոնեաների դէմ, Հռոմի քահա- «նայապետները խաչակիրների ամբողջ լեզիոններ ուղարկեցին «Կիլիկիայի հայկական թագաւորութեան դէմ, որ այնքան «ծառայութիւններ էր մատուցել իրանց, որովհետեւ այդ թա- «գաւորութիւնը չէր կամենում ընդունել պապի նախաթո- «ռութիւնը: Քրիստոնեայ ազգը ընկաւ նրա դէմ կատաղած «եզիպտական սուլթանների հարուածների տակ. և այդ սուլ- «թանների հետ դաշնակցութիւն էին կնքել Պալեստինում հիմ- «նուած լատին իշխանութիւնները» \*).

\*) Մշակ. 1902. № 8:

Որ Կիլիկիայի Հայոց թագաւորութեան կործանումն յառաջ եկաւ արգարե աչն պատճառից, ինչ որ յիշուած է այստեղ-այդ շատ յայտնի է մեզ բոլորիս, իսկ թէ այդ շրջանից յառաջ էլ Հայերի կրած կորուստներն մէջ Բիւզանդիան կատարել է հռոմէական պապերի դործիքի դերը՝ չգիտենք: Եթէ վերոյիշեալ լրագրի խմբագրութիւնն այդպիսի մի խոստովանութիւն անում է իրան յայտնի, դուցէ և սաշտօնական աղբիւրների վերայ հիմնուած, երեւի վաղ կամ ուշ այդ աղբիւրները լոյս կտեսնեն և պատմութեան մէջ նոր հետաքրքիր էջեր կաւելացնեն: Առ այժմ այսքանը կարելի է ասել, թէ մեզ համար անկասկած է միայն այն, որ հռոմի պապական աթոռը շատ վաղուց արդէն ունեցել է Հայաստանեայց եկեղեցու անկախութիւնն և ինքնուրոյնութիւնը շնչելու դիտաւորութիւնը: Նախօրէն տեսանք, թէ է. դարում միւսնոյն դիտաւորութեամբ դործող Յունաստանի ծրագիրներից մէկն էր առանձին հոգատարութեամբ կրթել, պատրաստել անձնուէր դործողներ հայերից իրանցից, որոնք մեծ զգուշութեամբ ծածկելով իրանց ձգտումները՝ միաժամանակ մի քանի կողմերի վերայ պիտի սկսէին իրանց դործունէութիւնը, մի օր յանկարծ կեղրոնից խլելու հանելու նորա նշանաւոր ուժերը կազմող մեծ մասերը: Այս ծրագիրն էլ արդեօք հռոմն էր սուել Բիւզանդիային թէ ոչ—չգիտենք—միայն թէ տեսնում ենք ընդունուած և առանձնապէս դործադրուած հռոմի աթոռի կողմից: Նոյն է. դարում հռոմում կային Հայ կրօնաւորների երկու վանքեր, մինը Վատիկանեան բլրի վերայ, որ համարուած էր ս. Պետրոսի խաչելութեան և զերեզմանի տեղը, միւսը՝ Սալուիական ջրերի մօտ, ուր Պօղոսին էին համարում զլխատուած: Պալեստինի ասելով՝ 649-ին Լատերանում զուժարուած ժողովի դործերի մէջ ասուած է. «Տալա-«սիոս երէց՝ Հայր մեծարեալ մենաստանի Հայոց, հաստատե-«լոյ ի քաղաքիս յայսմիկ հռոմայ, որք և վերածնեալք «կոչին. և Գէորգ երէց՝ Հայր մեծարեալ մենաստանին Կիլի-«կեայ, որ կայ առ Սալուիական ջուրս, և ծանօթադոյնք են «բնակութեամբ իւրեանց ի հռոմէական քաղաքիս, և որք

«ընդ նոսին արբայք և միանձուներ են, յանդիման եղեալ տ-«ռաջի սրբոյ սիւնհոգոսին զայս ինչ ասացին, և այլն»: Նոյն հեղինակը յիշում է և մի երրորդ հայ վանք էլ. «հռոմայ ա-«մենէն հին եկեղեցիներուն ցանկին մէջ, որ դրուած է ԺԳ. «դարու մէջ, կը տեսնենք՝ որ Վատիկանեան արքունի եկե-«ղեցուցն (Basilica) մօտերը Հայ միանձանց վանք մ'ալ կար «այս յիշատակարանաւ. «Մատուռն ս. Յակովբայ Հայոց, որ «ուրի երկոտասան միանձուներս» \*):

Կասկած չկայ, որ այս վերածնեալ Հայ կրօնաւորների կոչումն և պաշտօնն եղած պիտի լինէր աշխատել իրանց ազգակիցների մէջ ևս «վերածնութեան» դործը յաջողեցնել, շրջելով և քարոզելով բուն Հայաստանում. և երեւի նորանց շրջազայութեան և քարոզութեան պատգմներից պէտք է լինէին Բենեդիկտոս Է.-ի 983 թ. կազմած Լատերանի ժողովում դանուած «եպիսկոպոս մի Հայ, լցեալ զիտութեամբ և սրբակրօն վարուք». Միմէօն Հայկազն հղնաւոր, հայրենիքով Հայաստանի այն կողմերից, «ուր բարձրաբուղիս Եփրատէս և ուր Երասխ խոխոջան». որ յետոյ Արևմուտքում համբաւ ստացաւ իբրև «սքանչելագործ սուրբ» և Իտալիայի Մանտուա քաղաքի պաշտպան համարուեց. այսպէս և Արևմուտքի ուրիշ հաջազի սուրբերը \*\*):

ԺԱ. դարի վերջում Արևելքում յայտնուեցին խաչակիրների բանակները: Նորանց կազմել սոււոյն և ուղարկողը— հռոմի աթոռը թէև պատերազմը յայտարարել էր մահմէտականութեան դէմ, Փրկչի տնօրինական ս. տեղերի ազատութեան անունով, բայց միւսնոյն ժամանակ ունէր մի այլ նպատակ. սուրբ տեղերն ազատելուց չետոյ թէ ուժով թէ քարոզչական ջանքերով նուաճել յունական և միւս արևելեան եկեղեցիներն և բերել ի հնազանդութիւն իւր քահանայապետական գերիշխանութեան: Թէ՛ յիշեալ ուղղութեամբ ինչէ՞ր դործուեցին Կիլիկիայում, թէ՛ սրբաբնի նենդամիտ հնարքնե-

\*) Պատմ. Կաթողիկէ Վարդապետութեան ի Հայս. սր. 54.

\*\*\*) Բազմալէպ. 1884. Հատ. ԽԲ. Պրակ. Ա. սր. 5—12.

րով և խոստումներով մօտեցան և իրանց ձեռքն առան Հայոց թագաւորներին և կաթողիկոսներին, և ի՞նչ սոսկալի փոխարինութեամբ վարձատրեցին Հայերի զրկաբաց ընդունելութիւններն և միամիտ ծառայութիւնները՝ չենք յիշում. մեր նպատակն է այստեղ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն անցքերի վերայ, որոնք Միջագետքում և Եդեսիայում կամ Ուռհայումն են տեղի ունեցել խաչակիրների հաստատուելուց յետոյ. բայց նախ մի ակնարկ ձգենք Հայոց եկեղեցու ժամանակակից դրութեան վերայ, որ շատ անփառունակ և տխուր պատկեր է ներկայացնում:

Մտտիւնքս Ուռհայեցին յիշելով 1085 թուի մի քանի անցքեր՝ ասում է. «Յայսմ ժամանակիս էր աղծուկ և խռո- «վութիւն մեծ ի վերայ աթոռոյն սաւրբ Լուսաւորչին Գրի- «գորի, վասն զի յաւուրս այսոսիկ ոչ հրամանաւն Աստուծոյ «և կամ արժանաւորութեամբ, կամ ընտրութեամբ էր կար- «գադրութիւն սրբոյ Աթոռոյն, այլ զօրութեամբ և կարո- «ղութեամբ և բարձրագահ իշխանութեամբ, և այս ոչ լինէր «չայանութեամբ հոգւոյն սրբոյ, այլ լինէր ի ձեռն պատահ- «մանց և չաջողութեանց և արօք ոսկւոյ և արծաթոյ: Եւ ահա «յայսմ աւուրքս ամաչելով յետս դարձան դասք սրբոցն և «առաքինեացն, և յառաջ մատեան դասք անկելոցն յերեսաց «տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ: «Աստանօր սկիզբն եղև կատարելոյ տեսլեանն սրբոյն Սահա- «կայ Պարթևի, չորս ասաց՝ ջնջել ոսկեղիր կարգացն, և զը- «ծագրել սևազիր թանաքովն. վասն զի ահա ի ժամանակիս «յայսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի «ահա տէր Վահրամ յեղիպտոս, և տէր Թէոդորոս ի հոնին, «և տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց Անի, և «տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. և սորա իւրաքանչիւր որ «առնէին ձեռնադրութիւնս, և օժանէին եպիսկոպոսունս, և «տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն (մեռոն)... Եւ էր այս «ամենայն սուղ մեծ եկեղեցւոյն Աստուծոյ. վասն զի փարա- «խըն ոչխարաց ընդ չորս հայրապետութիւնս բաժանեցաւ «և զայլք եղեն պահապանք հօտին Քրիստոսի... հարք ատե-

«ցին զձեռնդս իւրեանց, որչիք հայհօյլիք և շարչարիչք ծնո- «ղաց իւրեանց: Եւ արդ ահա այս ամենայն կարապետքն են «Նեոխն, և սկիզբն կատարածի աշխարհի, և առ ի բառնա- «լոյ հաւատոց և աստուածպաշտութեանց»: \*)

Չորս աթոռների վերայ երկուսն էլ աւելցնելու ջանքեր էին երևում. և շանացողներն էին Աղթամարի և Վարազի վանքերը: Վերոյիշեալ չորս կաթողիկոսներից մէկը—Պօղոսը Վարազի վանքի վանահայրն էր, որ կաթողիկոսանալուց մի քանի ամիս յետոյ Մարաշը թողնում է և անցնում զնում Վարագ: Հ. Չամչեանի ասելով (Գ. 9) Պօղոսն այդպէս վարուեց նորա համար, որ կաթողիկոսական աթոռների բաղձնալու պատճառով ազգի մէջ յուզմունքներ կային, իսկ նա չկամեցաւ յուզմունքների պատճառներից մէկը լինել. «զի էր նա այր խոնարհ և խաղաղասէր». սակայն խոնարհ և խաղաղասէր մարդն, որ արդէն տեղեակ էր ազգի մէջ տիրող յուզմունքներին, յանձն չէր առնի Վարազից Մարաշ զնալ և հակառակութեան մի նոր աթոռ ևս աւելցնել մի դաւանափոխ եղած իշխանի—Փիլարտոսի կամքով, ինչպէս ժամանակակից Ուռհայեցին է ասում. «Եւ նստաւ տէր Պօղոս կաթողիկոսն ի Մարաշ հրամանաւ Փիլառտոսին և ոչ հրամանաւն Աստուծոյ» (եր. 279):

Աւելի հաւանականն այն պիտի լինի, որ երբ զեռ Փիլարտոսն Անախորումն էր իշխում, իսկ նորա Վարսամ որդին Եդեսիայում, Վարազի վանքը նորա օրնութիւնը խնդրած է եղել իւր ջանքերի իրադործման համար, թերևս ոչ առանց վճարման կամ խոստման «արոց ոսկւոյ և արծաթոյ», որ, Ուռհայեցու ասելով՝ այլ ժամանակում զլիսաւոր դործ կատարողն էր. իսկ Փիլարտոս Իկոնեայի սուլթանի յարձակման պատճառով փախչելով նախ հոնի և ապա այնտեղից Մարաշ՝ կանչում է այնտեղ Վարազի վանքից վանահայր Պօղոսին և կաթողիկոս ձեռնադրել տալով՝ վերադարձնում է իւր տեղը: Շատ կարելի է Պօղոսի վերադարձից յետոյ Վարազի

\*) Պատմ. Մատն. Ուռհ. Երուսաղէմ. եր. 276—277.

վանքը շուտով պիտի չաչառարուէր կաթողիկոսական աթոռ, եթէ վերահաս քաղաքական անցքերը չխանդարէին: Հէնց այդ ժամանակուծն էր, որ Պարսից Մելիք-Շահ թաղաւորը զօրանալով եկաւ և տիրեց Հայաստանի պարսկական նահանգներին, որոնց տիրել էին Յոյներն: Իբրև հեռատես քաղաքագէտ՝ Մելիք-Շահը հասկացաւ այն մեծ նշանակութիւնն, որ ունէր Հայոց կաթողիկոսական աթոռն իւր աէրութեան մէջ պահպանելն և նորա ազդեցութիւնը զօրացնելն. և նա Անիի Բարսեղ կաթողիկոսին սիրով և պատուով ընդունելով՝ կատարեց նորա խնդիրները—հարկերը թեթևացնել, դէպի հայերը զթած լինել, և «զիշխանութիւն կաթողիկոսութեան ամփոփել ի մի՝ առ ի բառնալոյ զառիթ երկպառակութեան չաղզէն Հայոց»: \*) Այս վերջին խնդիրն իրագործելու համար նա յանձին Բարսեղի Անիի կաթողիկոսին անուանեց «հրամանատար և իշխան այլոց կաթողիկոսաց՝ ըստ կամս իւր անօրինել զամենայն. և թոյլ ետ նմա կրել խաչ առաջի իւր»: Այս իրաւունքն ստացուած է 1089 թուին. և Բարսեղը 1091 թուին Հոնի զնալով Շահի կողմից իրան ուղկից և կարգադրութիւնների զործադիր տրուած «փառաւոր արանց» հետ՝ (Ուռհ. 290) Թէոփորոսից խլում է հայրապետական քօղը, զաւաղանն և ս. Նշանն, ու զրկում իրաւունքներից: Այսպիսով մնում են երկու կաթողիկոսներ. ինքը Բարսեղն Այրարատում, իսկ իւր բեռին Գրիգոր Վկայասէրը Տորոս լեռան կողմերում: Թէոփորոսին իրաւագօրեկ անելուց չետոյ Բարսեղն ուղղակի Ուռհայ է գալիս և պատուէր է ուղարկում Պօղոս անուանեալ կաթողիկոսին զալ իւր մօտ, բերելով հետը Վարադի ս. խաչն և Աստուածածնի պատկերը (Չամչ. Գ. 14): Հոնից ուղղակի Ուռհայ գալն և այսպիսի կարգադրութիւն անելը ցոյց է տալիս պարզապէս, թէ կաթողիկոսին չաչանի են եղել Վարադի վանքում մի նոր հայրապետական աթոռ հաստատելու մտադրութիւնն և շանքերն, և նա կամեցել է խափանել, նա թէ բերել տուած խա-

\*) Չամչ. Գ. 13.

չըն ու պատկերն և թէ բերող Պօղոսին պահել է տալիս այդտեղ. մի տարի մնալով՝ Պօղոսը վախճանում է և այգտեղ էլ թաղուած. իսկ ս. խաչն ու պատկերն Ուռհայցեցու ասելով (եր. 391) մինչև 1110 թուականն էլ դեռ Եղեսիայումն են եղել պահուած: Ինքը, Բարսեղ հայրապետն չիշեալ կարգադրութիւններն անելուց չետոյ զնացել է կեսարիա, եկել Անտիօք, և այստեղից նորից վերադարձել Եղեսիա (Ուռհ. 291). սակայն Մելիք-Շահի յանկարծական մահից չետոյ ի նկատի առնելով ծագելի վրդովմունքներն և վտանգներն՝ ստիպուել է շուտով թողնել հեռանալ. «Իբրև փախստական անկանէր ի քաղաքն Անի և նստաւ յաթոռ իւր» ասում է Ուռհայցեցին (եր. 294):

Վարադի վանքի կողմից սպասելի պառակտման առաջն առնելուց չետոյ Բարսեղ կաթողիկոսը խորհում էր Աղթամարի վանքի ծղոման իրագործումն ևս խափանել: Այս վանքըն աւելի մեծ յաջողութիւն ունէր իւր նպատակին հասնելու. նախ՝ որ արդէն մի քանի կաթողիկոսների աթոռանիստ էր եղել. երկրորդ՝ ս. Լուսաւորչի քօղի, զօտու և զաւաղանի հետ միասին այժմ ունէր և Նորա ս. աչր: Եղեսիայից Անի վերադառնալուց չետոյ Բարսեղ հայրապետը հետեւեալ 1093 թուին եկաւ Աղթամար և նստեց միառժամանակ այնտեղ. բայց երևի երկիւղ կրեց անձամբ վերցնել տանել վերոյիշեալ սրբութիւններն, քանի որ այլ ևս արքունական պաշտօնեաներ չկային իւր հետ, ինչպէս Հոնի և Եղեսիա զնալիս. ուստի անցաւ զնաց Սրգնի և այնտեղից մարդիկ ուղարկեց Աղթամար՝ բերելու Ս. Լուսաւորչի աչր, քօղը, զաւաղանն և զօտին. բայց Աղթամարցի վանականները չտուեցին տանելու:

ԺԲ. դարի սկզբում մի քանի պատերազմներից չետոյ խաչակիրները զրաւել էին նախ Անտիօքն և ապա ամբողջ Միջագետքն իւր նշանաւոր Ուռհայ քաղաքով միասին. և բաժանել էին նուսնած երկիրները կոմսութիւնների: Ուռհան, որին մօտ կէս դար տիրեցին Գաղղիացի խաչակիրներն, այս ժամանակում ունէր շատ հաչ բնակիչներ: Սկզբում Պաղտին կոմսը ցոյց էր տալիս համակրութիւն դէպի քաղաքի

քրիստոնեայ բնակիչները, բայց շատ չանցած բոլորովին փոխեց իւր ընթացքն և նոյն այդ քրիստոնեաներից շատերի անմեղ արիւնը թափեց, հաւատալով իւր ազգակիցներին անհիմն չարախօսութեան, կոտորածից ազատուեցին փախչողներն, որոնք զնացին զանազան տեղեր, այնպէս որ Ուռհան այդ միջոցին բոլորովին դատարկուեց բնակիչներից. մինչև որ յետոյ կոմսը հասկանալով իւր սխալը՝ կենդանի մնացածներին կրրկին հրաւիրեց բերեց իրանց տեղերը: Ուռհայեցին իւր ծնրնդավայրին հասած գառն այգետը պատմելով՝ դառնութեամբ և լի աւելցնում է, թէ քրիստոնեաներն որպիսի հանդէսներով դիմաւորեցին խաչակիրներին, որպիսի ծառայութիւններ և օգնութիւններ մատուցին նորանց, երբ վերջիններս կարօտ էին այդ օգնութիւններին, իսկ փոխարէն ինչ ստացան. «Եղև «մայրաքաղաքն Ուռհայ գատարկ. և նստաւ իբրև զկին մի «այրի. այն որ մայր էր յառաջ ամենայն արարածոց, և առ «ինքն ժողովէր զամենայն ցրուեալսն աշխարհի, և կամ այն «որ յառաջագոյն ելանէին խաչօք ընդդէմ Փռանկաց, յոր «ժամ մուրանալով զային առ նոսա, և ահա փոխանակ բա «րեացն զայս այսպէս դործեցին ընդ նոսա, և զայս հատու «ցին ամենայն հաւատացելոց» (եր. 408): Ս. Գրքս, սակայն, որ նոյն Ուռհայեցին երկիւղից չէ համարձակել խաչակիրների բոլոր արարքները զրել, ինչ որ տեսել և լսել է. «Զբա «ղում անիրաւութիւնս նոցա կամէի զրել, ասում է, բայց ոչ «համարձակեցայ, զի ընդ իշխանութեամբ նոցա էար» (եր. 428):

Արդեօք եթէ պատմիչը զրած լինէր ամեն բան, ինչ որ զիտէր, կթողնէր մեղ տեղեկութիւններ և խաչակիրների անբաժան հետևող հստակեան «բաղում եպիսկոպոսների, քահանաների և սարկաւաղների» այն խմբի գործունէութեան մասին, որ հաստատուած է եղել Ուռհայում և գործել է տասնեակ տարիների ընթացքում, թէ՛ այդ գործունէութիւնը պահուէլ է, ինչպէս ամենուրեք, այնպիսի զգուշութեամբ, որ ոչ ոքի չայտնի լինել չէր կարող, բացի արտաքին բարեչարգար պաշտօնակատարութիւնից. ինչ էլ որ լինի՝ անկարելի է ենթադրել, թէ Միջագետքում հաստատուած լատինական

կղերը կարող էր անտես առնել այն ուղղութիւնն և այն ծրագիրն, ինչ որ Կիլիկիայումն էին գործադրուած:

Հայիւ 2-3 տարի էր, որ խաչակիրները տիրել էին Եղեսիային, և ահա Բարսեղ կաթողիկոսը նորից զայիս է այդտեղ իշխանների, եպիսկոպոսների և քահանաների բազմութեան ուղեկցութեամբ. և Պաղտին կոմսը մեծ պատուով ընդունում է նորան, ցոյց է տալիս առանձին սէր և համակրութիւն. և կալուածներ ու դրամական նպաստ է յատկացնում նորան. «Յայսմ ամի (1103) ասում է Ուռհայեցին, իջ «եալ հայրապետն Հայոց տէր Բարսեղն ի քաղաքէն Անուոյ «ամենայն պաշտօնէիւք իւրովք և ազատօք, եպիսկոպոսօք և «քահանայիւք և զայր ի քաղաքն Ուռհայ, և կոմսն Փռան «կաց Պաղտինն մեծարեաց զնա մեծաւ պատուով որպէս վաչել «է հայրապետի, և զիւզս և տուրս պարգևէր նմա, և յոյժ «սիրեաց զհայրապետն Հայոց» (եր. 364):

Արդեօք հայրապետն ի՞նչըր գործ ունէր հողալու այդտեղ, ինչպէս առաջին անգամները, թէ նորան հրաւիրել էին դալու, որպէս զի նորա աթոռն էլ իրանց մօտն ունենային, նոյն դիտաւորութեամբ, ինչ որ ունէին Կիլիկիայի աթոռի մասին: Հ. Չամչեանն Ուռհայեցուց է առնում Բարսեղի Եղեսիա դալը, բայց միևնոյն ժամանակն այնպիսի պատճառ է տալիս զալստեանն, որ Ուռհայեցու մտքովն էլ չէ անցել ասելու. այսինքն թէ՛ Բարսեղ կաթողիկոսը տեսնելով, որ Պարսից իշխանութեան ներքոյ Սնի քաղաքում չէ կարող հանդիսա գտնել, թողեց եկաւ Եղեսիա (Պատմ. Գ. 25) որ, սակայն, ոչ մի հաւանականութիւն չունի: Եթէ նա այդ պատճառով եկած լինէր, կնշանակի թէ փախուստ տուած էր պարսից իշխանութիւնից, ուրեմն և վերջինիս կասկածն ու զայրոյթը շարժած լինելով իւր ղէմ՝ թշնամի տէրութեան ապաւինած լինելուն համար, այլ ևս պիտի չփստահանար վերադառնալ իւր տեղն. այն ինչ նա Եղեսիայում փոքր ժամանակ մնալով՝ Սղուանից Կաթողիկոսի մահուան պատճառով վերադարձաւ և զնաց Գանձակ նոր կաթողիկոսի ընտրութեան ներկայ լինելու և ձեռնադրելու համար:

Որքան էլ տէր Բարսեղ հայրապետի կողմից եռանդուն շանքեր գործ դրուեցին միանգամայն ոչնչացնելու Աղթամարի և Վարազի վանքերի փառասիրական ձգտումներն, այսու ամենայնիւ այդ ձգտումները չմեռան. այլ առժամանակ միայն զսպուած մնացին Բարսեղի երկիւղից, քանի նա կենդանի էր: Վերջինս փախնանում է 1113 թ. նոյն տարուան էլ Աղթամարի վանքն իրազործում է իւր դիտաւորութիւնն և Դաւիթ արքեպիսկոպոսը ձեռնադրուած է ինքնիշխան կաթողիկոս:

Հասկանալի է, թէ նոր աթոռն ինչ հիմքերի վերայ վաւերական պիտի հրատարակէր իրան. բացի նորանցից, որ Վասպուրականում կային Վահանի և ուրիշ մի քանի կաթողիկոսների գերեզմաններ, Դաւիթ կաթողիկոսը շրջաբերական օրհնութեան թղթում չիշում էր «սեղան սրբոյն Գրիգորի, «և քօղ և դաւաղան և մաշկեղէն զօտի, և սուրբ աչ նո-  
«րուն, և հողաթափ մի սրբոյն Հռիփսիմեայ, և շղարշ կամ «դաստառակն նորա»: \*) Չնայած՝ որ Գրիգոր կաթողիկոս Պահլաւունին Սև լեռան վերայ զուժարած մեծ ժողովով բանալից Դաւթին և յայտարարեց սուտ կաթողիկոս, այսու ամենայնիւ նորա աթոռն ոչ միայն շարունակեց մնալ իւր տեղում, այլ և ունենալով իւր մօտ հայոց Լուսաւորչի ս. աշր, դաւաղանն և քօղը՝ կարող էր նոյն իսկ Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի իրաւասութիւնը խնդրական դարձնել. այդ պատճառով հարկաւոր համարուեց չիշեալ սրբութիւնները գողանալ և բերել տալ Կիլիկիա:

Աթթամարի կաթողիկոսական աթոռ դառնալում Վարազի վանքը գտաւ իւր փայփայած ձգտումների խորտակումն. ինքն էր, որ դեռ Աղթամարից վաղ սկսել էր միևնոյն նպատակի համար նախապատրաստական միջոցների դիմել. ինքն էր, որ ընծայեց կենաց փայտի մասի Վասպուրական բերուելու և վերնական յայտնութեամբ գտնուելու պատմութիւնները. ինքն էր, որ ս. Գրիգորին Վասպուրական բերել տուեց, որպէս զի այդպէս թողնի իւր սեղանը, դաւաղանն

\*) Չամբ. Գ. 37:

և զօտին, որոնք չեսոյ իրանում պիտի ամփոփուէին, բայց հանգամանքի բերմունքով Աղթամարին ժառանգութիւն մնացին: Բաւական չէր, որ իւր նպատակի իրազործման խանգարողն Աղթամարն եղաւ, սա դեռ իրան էլ պիտի իշխէր իրան, որ «մայրաքաղաք մենաստանաց» էր անուանուել, որ երկու կաթողիկոսների—Անանիայի և Պօղոսի աթոռանիստն էր եղել:

Չարմանալի չէ, որ չուզման և երկիւղի մէջ տազնապող փառասիրութիւնը թշնամուն զիմադրելու և յաղթելու համար որոնէր այն ձեռքն, որ կարող էր իրան օղնութեան պարզուել. իսկ ով պիտի լինէր ձեռք պարզողը:

Հռոմէական քարոզչական կամ միսիոներական խումբը չէր եկել Միշաղեաք՝ այնտեղ էլ նստած մնալու: Նորանք ուր որ եղել են թէ անցելու և թէ ներկայուծս, իրանց հիանալի պատրաստութեան և կաղմակերպութեան շնորհիւ ուր զրած տեղերում իսկոյն սկսել են ուսումնասիրել տեղն էլ, շրջակայքն էլ, և տարածուել զանաղան կողմերը, ժանօթանալ, կշռել տեղական ոյժերն և մեծ հմտութեամբ օգտուել նորանցից իրանց զործունէութեան արդիւնաւորութեան համար:

Միշաղեաքում հաստատուած միսիոներներն, որոնց մէջ անշուշտ կլինէին և հռոմի հայ վանքերի «վերածնեալ» կրօնաւորներ, երկու ուղղութեամբ մօտիկ նանապարհներ ունէին հայաստանի մի քանի նահանգները մտնելու և գործելու համար: Եւ նորանց զործունէութեանը նպաստաւոր հող էր գտնուում զխաւորապէս Վասպուրականի և Տարօնի նահանգներում: Եթէ մի կողմից այդ հողը պատրաստել էին նախընթաց անցքերն, որոնց վերայ այժմ կանգ չենք առնում, միւս կողմից էլ հողին պարարտացնող նոր սնունդ էր մատակարարում հայոց մի քանի վանքերի փառասիրական և շահասիրական նոր յոյսը: Այդ է պատճառն, որ համեմատաբար կարճ ժամանակից չեսոյ ներսէս Լամբրոնացին Լեոն արքային զրած նամակում պարծնում էր ի միջի այլոց և Վասպուրականում ու Տարօնում ունեցած իւր ուղղութեան, կամ ինչպէս ինքն էր հասկանում՝ «ճշմարտութեան» շատադոյն-

րի թուով. «Եւ զի յետին են նորա (Սանահնեցիք և Հաղ-  
 «բատեցիք) որ յայս յանդգնին՝ (որ իրան մեղաւորում են) բո-  
 «լոր հարց, որք մերում ճշմարտութեանս շատադովք են. նոյն  
 «ինքն մեր աշխարհս և սուրբ լեռոնս, և որ ի սմա հովիւք  
 «սուրբք, և բոլոր գաւառն Վասպուրականի, և որ անդ  
 «հռչակաւոր ուխտն Վարագ, և երևելի արքն Ստեփաննոս  
 «Տիրացուն ուսուցիչն մեր, և Գէորգ ճգնաւորն, և Ստեփան-  
 «նոս՝ մեր ուսումնակից, և Քրիստոսաւոր և Տիմոթէոս ճրդ-  
 «նաւորք... Բոլոր գաւառն Տարօնոյ, և որ ի նմա իմաստուն  
 «եպիսկոպոսն Եսայի և վարժապետ Թէոփորոս, որ զմերս  
 «հռչակեն բարեկարգութիւն և երանեն զհաղորդեալսն: Գա-  
 «ւառն Եկեղեցաց, և լեռն ս. Գրիգորի, և որ ի նմա հարքն՝  
 «և եպիսկոպոսքն՝ որք զրովն իւրեանց բարեհամբաւեն զմեր  
 «ճշմարտութիւնս, և աւաղեն վասն աղքատութեամբ, և ա-  
 «նօրինացն բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ: Իշխանքն Խա-  
 «չենոյ, և որ անդ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ  
 «և զկարգաց մեր վարժապետ՝ որպէս զհրեշտակ պատուեն,  
 «և կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն»: \*)

Խաչէնի իշխաններին և վանքերին Լամբրոնացուն շատա-  
 գով համարելու համար հիմք չունենք. գուցէ Կիլիկիայից  
 այնտեղ գնացած կամ ուղարկուած մի-երկու կրօնաւորներ  
 այդպէս զրել և հաւատացրել են իրան Լամբրոնացուն, իսկ  
 միւս նահանգների մասին ասածները մեր յառաջ բերած ու  
 յառաջ բերելի փաստերն էլ են ապացուցանում:

Պէտք է ասել, որ հռոմէական միսիոնարների գործու-  
 նէութիւնը Վասպուրականում (ուրեմն և միւս նահանգնե-  
 րում) շատ չափաւոր բնաւորութիւն է ունեցել և զրեթէ  
 արտաքին ոչ մի բանով ուշադրութիւն չէ զրաւել. այդ հռո-  
 մէական քարոզիչների բնորոշ յատկութիւնն է եղել միշտ և  
 ամեն տեղ.— գործել վերին աստիճանի զգուշութեամբ, որ ոչ  
 մի կասկածի տեղիք չարուի, մինչև տեղացիներից իրանցից  
 պատրաստուեն գործողներ. և այն ժամանակ միայն պարզել

\*) Ներս. Լամբր. Թուղթ. Վննտ. 1838. Եր. 224—25:

ուղղութեան գրոշակն և գործ դնել զէպի նպատակակէտը  
 տանող բոլոր միջոցներն: Այդպէս հեղ ու համեստ գառներ  
 էին նորանք, երբ մտան Կիլիկիա, քանի որ տեղական եկե-  
 ղեցականներից չէին գտել համակրողներ և աշակցողներ. Վաս-  
 պուրականում նորանց աշակիցներ պիտի լինէին Վարագի և  
 Անձեւացեաց վանքի կրօնաւորները. բայց նորանք որոշ նպա-  
 տակի համար էին մտերմացել, յարել այդ քարոզիչներին. իսկ  
 յայտնի գործելու դէպքում ոչ միայն նպատակի չէին կարող  
 հասնել, այլ և անխուսելի վտանգի պիտի ենթարկէին իրանց:  
 Աղթամարի կաթողիկոսական աթոռն իւր գոյութիւնը պահ-  
 պանելու համար մի կողմից պիտի հաւատարիմ աւանդապահ  
 մնար Հայոց եկեղեցուն, միւս կողմից պիտի վայելէր երկրի  
 մահմէտական իշխանութեան վստահութիւնն, ուստի որեւէ  
 կրօնական յուզումներ պիտի հարկադրէր նորան տիրող իշխանի  
 ուշադրութիւնն և օղնութիւնը խնդրել. իսկ այդ դէպքում  
 յուզումներների առիթ առնողները պիտի կորցնէին ունեցած-  
 ներն էլ և կեանքներն էլ. ըստ որում պիտի նկատուէին և  
 դատուէին իբրև քաղաքական յանցաւորներ, իբրև օտար տէ-  
 րութեան գործակատարներ: Այդպիսի հանդամանքում այն էլ  
 մեծ բան կլինէր, եթէ մեծ զգուշութեամբ գործի հիմքը դրուէր,  
 ապապաշտում, յաջող պայմաններում, շէնքը նորա վերայ կա-  
 ուուցանելու համար: Այդ հիմքը պիտի լինէր ապացուցանել,  
 թէ Հայոց եկեղեցին հպատակ է եղել և պիտի հպատակի հռո-  
 մի աթոռին, ըստորում Հայոց Լուսաւորիչն այդ աթոռից  
 առնելով հայրապետական ձեռնադրութիւնն՝ ընդունել է նո-  
 րա զերիշխանութիւնն իւր վերայ և անքակտելի դաշինքով  
 էլ նոյն հպատակութիւնը պարտադիր է արել իւր յաջորդնե-  
 րի համար: Եւ Ուսուցում, հռոմէական եկեղեցու ներկայա-  
 ցուցիչների, «վերածնեալ» Հայ կրօնաւորների և Վարա-  
 գի վանականների խմբադրութեամբ և մինչև իսկ տեղա-  
 կան կոմսի թելադրութեամբ յօրինուած է գաշինքի թուղթ.  
 այն գաշինքի, որը ահաւոր երզմամբ, նոյն իսկ Քրիստոսի  
 արիւնով զրել և կնքել են մի կայսր և մի թագաւոր-Վոս-  
 տանդիանոս և Տրդատ, և երկու եկեղեցիների ներկայացու-

ցիւները-Հոռմի Սեղբեսարոս պապն և Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

«Թուղթը» կազմուած է այնպիսի զարմանալի վարպետութեամբ, որ բաւական է Հային ունենալ մի փոքր միամբտութիւն, և ահա նորա հրեռուանքն իւր զաղաթնակէտին կհասնի.— այսքան շոյուած շողորթութեամբ է նորա աղգային ինքնասիրութիւնն: Ի՞նչ անդնահատելի պարզեւներ ասէք, որ չէ տուած Հայոց ազգին. Կոստանդիանոսը Տրդատին ընծայուած է «զԲեթղէհէմ քաղաք մեծին Դաւթի զտեղի ծննդեան Քրիստոսի». իսկ Սեղբեսարոսը Լուսաւորչին — «զվկայարան ս. Յակոբայ» և «տեղի պատարաղի ի Յարութեան մեծի եկեղեցւոյն, զԳողթթայ խաչելութեանն» միջի մշտավառ կանթեղով: Կոստանդիանոսը Տրդատին ընծայուած է իւր մօր, Հեղինէի բերած խաչամասն, իսկ Սեղբեսարոսը ս. Գրիգորին — Պետրոս և Պօղոս առաքեալներն բաղուկներն, իւր վակասն, որ Տեառն եղբօր, Յակոբոսի վակասն է. իւր թաղը, որ Յիսուսի փակեղն է և այլն և այլն:

Ի՞նչ գովեստներ, ասէք, ի՞նչ գերազանց պատիւներ, ի՞նչ գերիշխանական իրաւունքներ, որ չէ տուած Հայոց Լուսաւորչին, և յանձին նորա Հայոց եկեղեցուն. նորա հրամանով Կոստանդիանոսն «աղ օրհնութեան» է առաքուած կախրութեան բոլոր կողմերն, որպէս զի սպանդանոցներու և տններու մօտ գործադրեն մտացուներ մորթոտելիս, «զի մի հեթանոսաբար լիցի» նորանց վաչելած կերակուրը: «Նաև, ասուած է «կախրը, զղաւանութիւն հաւատոյ սուրբ հօրս մերոյ Գրիգորի արծանագրովքարողեցաք յամենայն եկեղեցիս ուղղափառաց»: Բացի գորանից կախրը յաշտարարուած է ի դիտութիւն լայնատարած պետութեան, թէ Հայոց Լուսաւորիչ հայրապետը զարմանալի հրաշքներ է գործել. «Երեւեցան ի յերկրի մերում հրաշք զարմանալիք ի հայրապետէս Հայոց և ի թագաւորէս. քանզի ի դայն սոցա առ մեզ և յանցանելն ընդ ձովի Յունական, առաքեցի ես և ժողովեցի զամենայն իմեզս, զկազս և զկոչրս, զմիակողմանիս և զանդամալոյժս և զսոյս «ամենայն, որ նեղեալ էին ի պէս պէս ցաւս և ի տանջանս,

«և զայսպիսիս ժողովեալ հանի զնոսա ամենեսեան ընդդէմ Սրբոյն Գրիգորի, զորս միանգամ աղօթիւք բժշկեաց զամենեսեան մինչև զարմանալ մեզ ամենեցուն ի վերայ ամենայնի, «զոր արար Տէր նովալ»: Մի ուրիշ հրաշք էլ Սեղբեսարոսն է տեսել և պատմուած է. որից երևում է, թէ Հոգին Սուրբ վկայել է «սրբութեան և արժանաւորութեան Սրբոյն Գրիգորի, զի մինչդեռ կայաք ի խորանին սուրբ և զնուիրական աղօթս կատարէաք, ահա յանկարծակի լոյս անհառելի «և անընդել ի մարդկանէ էջ յերկնից ի վերայ սրբոյ սեղանոյն և աղիղնանման օդօք եօթն կրկին կամար կապեցաւ ի վերայ Սրբոյն Գրիգորի, և հիանալի փայլմամբ ճառագայթափայլեաց լոյս երեսաց նորա որպէս զլէմս Քրիստոսի ի «Թափօր: Իսկ մեր ամենեքեան ապշեալք՝ ոչ իշխեաք հաչել «ի նա մինչև կատարեաց զսուրբ պատարաղն. և ի փոքր «մի փարատել շամանդաղ ամպոյն, ապա իշխեցաք մօտել և «տալ նմա համբոյր ի սէր սրբութեան ըստ օրինացն Քրիստոնէից: Ըստորում խոնարհեալ աստուածակարգ կայսրս «սուրբ՝ սպասաւորեալ ի սրորէից, եկն ահիւ մեծաւ առաջի «Սուրբ Լուսաւորչին և ի ծունկս իջեալ համբուրեաց զբարձրս նորա ըստ օրինի օֆրանդի: Եւ ապա համարձակեալ «համբուրեաց զաչն և զխաչն և ապա զլէմսն իբրև ի նոյն «ինքն ի Քրիստոս միանալով համբուրիւ շրթանց»:

Հապա իրաւունքներն, անսահման, անկշռելի իրաւունքներն և իշխանութիւնն, որ տրուած են Ս. Գրիգորին: Ս. Լուսաւորիչն ոչ միայն դարձել է այնպիսի «Պապ, Պատրիարք և Հայրապետ», որ համապատիւ է Երուսաղէմի, Անտիօքի և Աղէքսանդրիայի պատրիարքներին, այլ մինչև իսկ նորանց արեղերական ժողովներին հրամաններ տուող իշխանութիւն՝ որ ունի միմիայն Հոռմի աթոռն, իսկ սորա բարեհաճութեամբ ստանում է և Հայոց հայրապետական աթոռն: Դեռ աւելին կայ. Հայոց Լուսաւորիչն և նորա «աթոռաժառանգներն» այնքան բարձր իրաւունք և պատիւ են ստացել, որ Երուսաղէմի, Անտիօքի և Աղէքսանդրիայի պատրիարքները չեն կարող ձեռնադրուել առանց Հայոց հայրա-

պետի ընտրութեան և կամքի. իսկ երբ այդ կամքն ստանան և ձեռնադրուեն, այն ժամանակն էլ իրանց հաւատի դաւանութիւնն, որ պիտի ներկայացնէին պապին, պարտաւոր են ներկայացնել Հայոց հայրապետին, «Սալապէս և ստորադրեցաւ հրովարտակս (Դաշանց թուղթը) հրամանաւ իմով մեծի Պապուս Հռովմայեցոց, Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս, աթոռակալ զլիսաւորաց Սուաբելոց, Սրբոց Պետրոսի և Պողոսի, որ երկնաւոր և երկրաւոր բանալեօքս ունիմ իշխանութիւն չՍրեմտից մինչև չՍրեելիս ի վերայ ամենայն ազգաց և ազանց և լեզուաց քրիստոսադաւանից, կապող և արձակող ի չերկինս և չերկրի և հրամանահան և հղօր չընդհանուր չեկեղեցիս Քրիստոսի: Ուստի ի հրամանէ հոգւոյն սրբոյ հասին առ մեզ... Տրդատէս, արքայ Հայոց, և կենդանի վկայն Քրիստոսի և մեծ խոստովանողն, Սրբազնակատար կաթողիկոսն Տէր Սուրբ Գրիգորիոս, Լուսաւորիչն ամենայն Սրեելից և չիւսիսոյ... ժամանեցին ի տեսութիւն տեղւոյս տէրունական տանս արեմտեան և արեւելաժառանգ սրբոց և զլիսաւորաց Սուաբելոցս, և փոխանորդի Սատուծոյ պատուեալ պապիս պերճապսակ... չօժարեցայ ի պատուել... զգահակիցս իմ զԳրիգորիոս... ժողովցի զամենայն արքեպիսկոպոստունս և զամենայն ուխտեկեղեցւոյ ի դուռն դռնաբացեացս արքայութեան, ի պատուեալ պատշգամս Սրբոցս Պետրոսի, զլիսափոխանիս Քրիստոսի և Պողոսի... Սօքօք ամենեքումքք և հղօր աշովսուրբ Սուաբելոցս... ձեռնադրեցաք զկաթողիկոսն Հայոց զՍուրբն Գրիգոր՝ Պապ և Պատրիարք և Հայրապետ հրամանահան ի տիեզերական ժողովս, համապատիւ մեր հղօր աթոռոյս, և Երուսաղէմացոց և Անտիոքացոց և Սղէքսանդրացոց, ... զնելով ի վերայ արժանաւոր զլիսոյ սորա զաչ Սրբոցն Պետրոսի... և արարաք զսա Պատրիարք Հայոց Մեծաց, զի ինքն և ամենայն աթոռաժառանգք սորա ինքնագլուխ եղիցին՝ չիւրեանց եպիսկոպոսացն առնելով ձեռնադրութիւն առաջարկութեամբ իւրեանց թագաւորին: Եւ

«Հայոց հայրապետն ձեռնադրէ կաթողիկոս Վրաց աշխարհին... և ուր և Հայ ազգ սփռեալք չընդհանուր աշխարհ ի մէջ աչլալեղու քրիստոնէից, իշխանութիւն ունի Հայոց Պատրիարքն ձեռնադրել նոցա եպիսկոպոս. ևս և աշխարհն Սղուանից եղիցի ընդ հնադանդութեամբ Հայոց հայրապետին, և առաջարկութեամբ Սղվանից թագաւորին Հայրապետն Հայոց ձեռնադրեցէ կաթողիկոս նոցա. և Պատրիարքքն երեքին՝ Երուսաղէմի և Անտիոքայ և Սղէքսանդրիոյ չորժամ պատրիարք ձեռնադրին՝ կամաւ և ընտրութեամբ Հայոց հայրապետին լիցի, և որոք նոր նստցի չաթոռ պատրիարքութեան, զգաւանութիւն հաւատոյն իւրոյ, զոր պարտ էր մեզ ծանուցանել՝ զայն Հայոց եպիսկոպոսին ծանուցէ. զի զնա կարգեցաք մեզ զլիսափոխան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհի. և ի չելից արեւու մինչև ի դրունս զրախաին... Գրեցի հրովարտակս ընդհանրականս առ Աւետարանչացն աթոռակալ պատրիարքունս, որ չՍրեելիս զի զՀայոց հայրապետն համապատիւ տեսցեն ինքեանց մանաւանդ թէ նախագահ իսկ, վասն զի չերկոտասան Սուաբելոցն չորքն անդ կատարեցան. անդ կայ և պատկեր Փրկչին, զոր առաքեաց Սրգարու... անդ կայ և փաշտեղէն պատկերն Սատուածածնին, զոր Տէրն տեառնադրեաց և օրհնեաց չաւուր փոխման Սատուածածոր. անդ կայ և խաչամասն Պատրոնիկեայ, որ էր ի պարսնոցի Սրբոյ Կուսին չօխիսիմէ օրիորդին, և այս մասն չեղինէի և Կոստանդիանոսի, զոր մեք պարգեւեցաք Տրդատայ. անդ կայ և զեղարդն Ղունկիանոսի հարիւրապետի, որով կոխեցաւ կող Փրկչին... անդ է և շիշ իւզոյն, զոր օրհնեաց Տէրն և ետ ի ձեռս Սուաբելոցն, որովք հիւանդք առողջացան... անդ է և բովանդակ նշխարքն Մկրտչին... անդ է և աստուածարեալ սուրբ արքայն Տրդատ և աստուածպետականն Գրիգոր զուարթունն, որոց տուաք հրաման զի չամենայն զնացս նանապարհաց իւրեանց, ուր և հանդիպեցն նշխարք սրբոց՝ առանց ամենայն հակառակութեան ամենայն որ մասն պարգեւեցէ նոցա, որպէս և մեք

«զբազուկս երկուց Առաքելոց պարզեցար և այլ անթիւ մա-  
 «սունս. վասն որոյ յետ մեր վեհագոյն հրամանացս Հայոց հայրա-  
 «պետին կայ իշխանութիւն զոր ինչ և կամեսցի ըստ առաքելական  
 «կանոնացն կապել և արձակել ի յերկինս և յերկրի. օրհնեալքն ի  
 «Հայոց հայրապետէն օրհնեալ եղիցին ի Քրիստոսէ և ի սրբոց  
 «Առաքելոց և ի մէնչ և յամենայն սրբոց. և բանալրեալքն ի  
 «նմանէ՛ ի նմին կացցեն մինչև զղջասցին. և հրաման հանէ Հայոց  
 «հայրապետն ի Հայս և ի Հոռոմս, ի Վիրս և յԱղվանս, յԱ-  
 «սորիս և ի Պարսս ի ծովէ մինչև ի ծով և ի դետոյ մինչև  
 «ի ծագո՞ աշխարհի և ի դրունս Դրախտին»:

Եւ ի՞նչպէս կարող էին միամիտ հայերը չլինալ այս-  
 պիտի զովասանքներից և իրաւունքներից, որոնք արւում  
 էին իրանց հայրապետական աթոռին, մանաւանդ երբ տես-  
 նում էին այդ աթոռն անթիւ զրկանքների, հնշումների  
 և հարստահարութիւնների ենթարկուած <sup>53)</sup>. և ինչո՞ւ ու-  
 բեմն պիտի զարմանալ, որ մինչև անգամ ԺԹ. դարում  
 այդ իրաւունքներից և պատուադրութիւնից շլացաւ Հայոց  
 Լուսաւորչի աթոռաժառանգներից մէկն և սահմանափակ  
 հասկացողութեանն յատուկ պարզմտութեամբ և ջերմեռան-  
 դութեամբ կանգնեց պաշտպանելու Դաշանց թղթի վա-  
 ւերականութիւնը: Այո, ամենքի համար էլ հասկանալի չէր  
 կարող լինել, թէ՛ հրապուրիչ խաչձի մէջ կարթի սուր ծաչ-  
 րըն է ծածկուած. թէ՛ այդ բոլոր իրաւունքների և իշխա-  
 նութեան բաշխողն Աստուծու փոխանորդն է, որ իրաւունք  
 և իշխանութիւն ունի բոլոր քրիստոնեայ ազգերի և եկեղե-  
 ցիների վերայ. և որ կարող է իւր հպատակներին և՛ կապել  
 և՛ արձակել. եթէ նա փակեց երկնքի դռները մէկի առաջ,  
 ոչ որ չէ կարող բանալ. եթէ մէկին բանադրեց, ոչ որ չէ կա-  
 բող արձակել. թէ՛ եթէ տուել է նա այնքան իրաւունքներ  
 Հայոց հայրապետին, սուել է նորա համար, որ հայրապետը  
 պարտաւորուել է հպատակ մնալ միշտ իւր գլխաւորին, կա-  
 տարել նորա հրամանները. եթէ այդ հայրապետը մեղանչի  
 հպատակութեան պարտականութեան դէմ առ եկեղեցու գլու-  
 խըն, Աստուծու փոխանորդն՝ այնուհետև նա իրաւազուրկ է.

ըստորում ուրիշ հիմք չունի իրաւունքներ վայելելու: Եւ ի-  
 բոք այդպէս էլ քարողել են Հայերի մէջ հռոմէական եկեղե-  
 ցու ներկայացուցիչներն, այդպէս էլ առարկել են նորանց  
 դէմ, որոնք մերժել են պապի գերիշխանութիւնն: Այս կող-  
 մից հետաքրքիր է լսել Կղեմէս Գալանոսի առարկութիւնը  
 Մխիթար Սկեռացու դրուածի դէմ: Խաչակիրների Արևել-  
 քում հաստատուելուց յետոյ Հայոց եկեղեցին միաժամանակ  
 ենթարկուած էր թէ՛ յունական և թէ՛ հռոմէական եկեղե-  
 ցականների նախատալից յարձակումներին, որոնք յառաջ  
 էին բերել անվերջ վիճաբանութիւններ յարձակուողների և  
 պաշտպանուողների մէջ: ԺԳ. դարի կէսում Ուրբանոս Գ.  
 պապի հրամանով «կրօնական խնդրոց համար խօսելու և վի-  
 ճելու նպատակաւ» Տիւրոսի Գուլիէլմոս արքեպիսկոպոսը  
 դալիս է Աքքիս. \*) Հեթում թաղաւորն և Կոստանդին կա-  
 թողիկոսը պապական ընտրեալ պատգամաւորի հետ խօսելու  
 և վիճելու համար ամենից ընդունակը ժամանակակից Հայ  
 եկեղեցականների մէջ զտնում են Մխիթար Սկեռացուն, <sup>54)</sup>  
 որի «հանճարը յարգում էին». և նորան ուղարկում են ի-  
 բանց ներկայացուցիչ, որ Գուլիէլմոսի դումարած լատինա-  
 կան եկեղեցականների, իշխանների և փոստաբանների ժողո-  
 վում սկսում է վիճաբանել: Խօսք չկայ, որ վիճաբանութեան  
 առաջին և ամենից կարևոր խնդիրն այստեղ էլ պիտի լինէր  
 Պետրոս առաքեալի գլխաւորութիւնը: Մխիթարը մեծ հրմ-  
 տութեամբ հերքելով այդ գլխաւորութիւնը՝ պաշտպանում է  
 ընդ նմին և Հայոց եկեղեցու հայրապետական աթոռի հա-  
 ւասար իրաւասութիւնն: Իւր վարած վիճաբանութեան պատ-  
 մութիւնն և խօսքերը դրի առնելով՝ նա բերում ընծայում է  
 Հեթում թաղաւորին: Ահա այդ դրուածի դէմն է՝ Գալանոսն  
 ուղղում հերքումն իւր աշխատութեան Բ. հատորի Բ. մա-  
 սում <sup>55)</sup>: Այս հերքումն կամ պատասխանն ուղադրութեան  
 արժանի է նաև այն կողմից, որ բնորոշում է հռոմէական  
 միաբնակների յատկանիշ ոգին, — զբաւել շողորթութեան դո-

\*) Հայկ. Հին Դպրութեան Պատմ. Ջարր. եր. 753:

վեստներով և խաբուսիկ արժանիքներով. իսկ եթէ դիմացինը չխաբուեց—խլիչ՝ ոչնչացնել այն ամենն, ինչ որ նորա ունեցած արժանիքները կարող են համարուել: Հայոց եկեղեցու հնազոյն աւանդութեամբ հայաստանում եղել են Թադէոս և Բարդուղիմէոս առաքելները: Դաշանց թղթի հեղինակներն էրկուսի փոխարէն չորս առաքելներ են ընդունում հայաստանում նահատակուած. բայց 17 դարում սպրած Գալանոսն առանձին հետեանք չտեսնելով այդպէս քարոզելուց, 500 տարի անցնելուց էլ չեաոյ՝ այլ ևս ոչ մի Առաքել չէ նանաչում հայաստան եկած: Եթէ Յոյներն, ասում է նա, մերժում էին հայոց հայրապետական աթոռի առաքելահիմն պատրիարքութիւն լինելը, հայերն ուրիշ բան չունէին ասելու բացի մի պատասխանից.—Թէ՛ Սեղբեստրոսն է վաւերացրել Լուսաւորչի պատրիարքութիւնը. մնացածն, ինչ որ ասէին՝ «սուա է և ունայն»: Յառաջ բերենք հեղինակի վիճաբանական առարկութիւնն, որ ուղղուած է Սկեռացու դրուածի—Ընդգիծաբանութեանց Ե. դլխի գէմ: Մխիթարն այդտեղ հայոց եկեղեցին իրաւունքների կողմից հաւատար նանաչելով հռոմէականին՝ ասում է հետեւեալը. «Ասեն յոյնք «և հռովմայեցիք ցհայս, թէ դուք որո՞վ պարծիք մայրաքաղաքաւ, կամ ո՞ եկն առ ձեզ չերկոտասանիցն, զի ասէք «զձեզ հաւատար մեզ, զի դուք անազան ուրեմն դարձայք, «և ոչ գհետ մեր: Առ որս պատասխանի նախ՝ թէ մեր ոչ պարծիմք մայրաքաղաքաւ, զի աշխարհական է. վասն որոյ ասէ «տէր. թէ դուք չէք յաշխարհէ, որպէս և ես չեմ... իսկ առ «այն թէ ոչ որ յառաքելոցն եկն առ մեզ, պատասխանի, թէ «եկն առաքելն Թադէոս. իսկ թէպէտ և ըստ կարծեաց ձերոց ասեմք զնա չեթանասանիցն զոյ, սակայն ոչ նուազիմք «ի ձէնչ, զի անա Բարթողիմէոս, և Յուզա Յակովբեան, և «Սիմովն նախանձայոյզ վիճակեցան ազգիս հայոց»:

Գալանոսը պատասխանում է. «Այնքան գերիվերոյ վաւերաւ բոքբոքեցաւ ի սիրա Մխիթարայ բարկութիւն և թըշնամասիրութիւն ընդդէմ ուղղափառ եկեղեցույ, մինչ չի զոր «ոչ որ ի նորա համախոհ ընկերակցացն իշխեաց ասել, և ոչ

«թերևս ամէլ զմտաւ, նա ի վեր քան զամենեսին, այլ և ի «վեր քան զկարն և զչափն վայրախօսել իշխէ, և ասէ, թէ «հայաստանեաց եկեղեցին հաւատար է հռովմայ եկեղեցույն, «Ո՛ր թշուառութեան մեծի և չիմարութեամբ արբեալ մտա- «ծութեան... Եւ արդ՝ ասա դու ինձ ո՞վ Մխիթար, թէ ո՞ւր «լուեալ ես զհռովմայեցուց նախատելն զհայս վասն չունելոյ «զմայրաքաղաք, կամ զառաքելոց քարոզութիւն, և կամ վասն «անազան դառնալոյ իւրեանց ի ս. հաւատս... Քանզի զոյով «պատրիարքութիւնն հայոց աթոռոյզ ելեալ ի յառաքելական «առաջնորդութենէ ս. աթոռոյն հռովմայ, այսինքն ի դերա- «գոյն իշխանութենէ Սեղբեստրոսի պապին, որ կացոյց զսուրբ «Գրիգոր Լուսաւորիչն և զաչորդ նորին պատրիարք հայոց «և ձեռնադրող կաթողիկոսաց այլոց ազգաց: Եթէ Մխիթարն «չանայ յանդիմանել և սուա առնել զնոյն առաջնորդութիւնն «հռովմայ, ապա ջանայ յանդիմանել և սուա առնել զամենայն «պատրիարքական իշխանութիւնն հայոց, և զգէնս մատուցանէ յունաց թշնամեաց ձերոց (խօսքը հայերին է ուղղ- «ղած), որովք կարացեն զեկեղեցուոյզ ձերոյ իշխանութիւնն «արհամարհել, զպատիւն անարգել, և զամենայն եպիսկոպոս- «սական ձեռնադրութիւնն մեղադրել և ի բաց հերքել: Ահա «առաջարկութիւնք յունաց ընդդէմ հայոցդ են այսորիկ: Ե- «կեղեցին հայոց, ասեն, ոչ է պատրիարքական, զի ոչ եղև հո- «վուպետեալ, և ոչ ևս հաստատեալ յառաքելոյ ումերէ, և «զի ոչ էառ զպատրիարքական պատիւ և զիշխանութիւն ի «տիեզերական Սիւնհոլոսէ ումերէ ոչ ի Նիկիայ, ոչ ի Կ. Պոլ- «սի, ոչ ի Յիփեսոսի ժողովոյն և ոչ յայլոց հետեողացն, և «զի անազան դարձաւ ի հաւատս Քրիստոսի և հաստատեցաւ «զկնի 300 ամաց անցանելոյ ի վերայ ծննդեանն Քրիստոսի «ի ս. Գրիգորէ Պարթևէ, որ ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի «ս. Առնոզիոսէ արհիեպիսկոպոսէն Կեսարիոյ, որ էր հնազանդ «Անտիոքայ մեր աթոռոյն: Վասնորոյ պարտ է աթոռակալին ս. Գրիգորի Լուսաւորչին հնազանդ մնալ ոչ միայն իւրում «արհիեպիսկոպոսին Կեսարիոյ, այլ ևս պատրիարքին Անտիո- «քայ... Չայսքան յոյնք ասեն, և թուի նոցա զիրաւ ասել...

«Բայց առ այսպիսի չունական առարկութիւնս ոչ կարէին  
 «հալք զայլ հաստատ պատասխանի տալ, բաց ի նմանէ, որ  
 «միայն է ստույգ և անլուծանելի. և այլ ամենայն սուտ է և  
 «ունայն: Աթոռն եկեղեցւոյս մերոյ թէպէտ ոչ հովուապետեալ  
 «և ոչ հաստատեալ եղև ի յառաքելոցն անտի, այլ ի սրբոյն  
 «Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ, սակայն ի Սեղբեսարոսէ պա-  
 «պէն և յընդհանուր եկեղեցւոյ առաջնորդէն կացուցաւ պատ-  
 «րիարզութիւն, և բազմազան իշխանութեամբք, որովք վա-  
 «րիմք, զօրացաւ, որպէս յայտ լինի ի թուղթն դաշանց, ստո-  
 «րազրեալ ի մեծն Հռոմ, յորժամ գնացեալ յանդ արքայն մեր  
 «Տրդատ և Լուսաւորիչն Գրիգոր զմիաբանութիւն արարին ընդ  
 «հռովմայեցիս հաստատուն և անջնջելի ուխտադրութեամբ» \*):

Պապի զլխաւորութեան վարդապետութեան քաղցրացը-  
 րած դեղհատր տկարամիտներին ընծայելուց յետոյ կեղծիքի  
 հեղինակները պատրաստում են մի ուրիշը: Մենք յետոյ պի-  
 տի տեսնենք թէ Հայաստանեայց եկեղեցին ինչ սկզբունքով է  
 ղեկավարուել վերջին օծման խորհուրդը միայն աղօթքով կա-  
 տարելու որոշման մէջ. մինչդեռ արեւմտեան և արեւելեան ե-  
 կեղեցիները կատարել և կատարում են հիւանդներին իւրով  
 օծելով: Հայ եկեղեցու այս խնդրումն ինքնուրոյն, անկախ հա-  
 մոզմունք ունենալն էլ համարուել է յանցանք և տեղիք է  
 տուել բիւզանդեան և հռոմէական եկեղեցիների ներկայացու-  
 ցիչներին անիրաւացի անբաւականութեան պատճառների  
 թիւր մէկով աւելացնել: Հռոմի պապերն ամեն անգամ, երբ  
 առիթ են գտել օգտուելու Հայոց եկեղեցու դառնադին օրե-  
 րից և դաւանական ու ծիսական խնդիրներում համակերպու-  
 թիւն պահանջելու, խնդիրներից մէկը, և նորանց համար կա-  
 րեւորներից մէկը, եղել է օծումն հիւանդաց. նոյնպէս և նո-  
 րանց միսիոներներն, որոնք Հայերի հոգևոր փրկութեան հոգսը  
 յանձն առած՝ ժամանակ առ ժամանակ իրանց բարի ոտքով  
 մտել են Հայաստան, պակաս ջանքեր չեն նուիրել այս պա-  
 հանջի իրադործմանը: Միւսնոյն ջանքը գործադրուած է Դա-

\*) Միաբ, Հայոց ս. եկեղեցւոյն ընդ մեծի եկեղ. Հռովմայ եր, 337—344.

շանց թղթի հեղինակների կողմից: Յիշեալ թղթից յառաջ բե-  
 րած տողերի մէջ ընթերցողները կարգացին, թէ Հայաստա-  
 նումն է զանուամ միւս սրբութիւնների հետ և «շիշ իւրոյն,  
 զոր օրհնեաց Տէրն և ետ ի ձեռս առաքելոցն, որովք հի-  
 ւանդք առողջացան և մեղաւորք արդարացան»: Եղրակա-  
 ցութիւնը շատ պարզ է: Եթէ այդ իւրն Հայաստան է բե-  
 րուել, ուրեմն բերուել է գործադրուելու համար և գործա-  
 ւորուած էլ եղել է առաքելների ժամանակին այնպէս, ինչ-  
 պէս և ուրիշ տեղերում. այդ հասկանալի է և նորանից, որ  
 ինքը Հայոց Լուսաւորիչն էլ դաշնադրի այդ կէտի եղծար-  
 տութեանը վկայել է իւր ստորագրութիւնով: Արդ՝ եթէ մի  
 սովորութիւն պահուած է եղել Հայոց Առաքելների և ս.  
 Լուսաւորչի ժամանակներում և զուցէ Լուսաւորչից էլ բա-  
 ւական անց, ու յետոյ վերացել, վերացնողները մոլորուած են  
 եղել, և մոլորութիւնը պէտք է թողնել: Սակայն եթէ պա-  
 պի դերիշխանութեան կամ զլխաւորութեան նարտարահիւս  
 կեղծիքն, Հայի ինքնասիրութեան այնքան բաւականութիւն  
 ներկայացնելով հանդերձ դարձեալ նպատակին չհասաւ, չէր  
 կարող հասնել և հիւանդաց օծման նկատմամբ մէջ տեղ զլո-  
 րածը. մանաւանդ որ մինչև ժ.Բ. դարը Հայաստանում յայտ-  
 նի եղած սրբութիւնների մէջ Քրիստոսի օրհնած իւրի շիշ  
 ամենևին ծանօթ չէ եղել: Դաշանց թղթի յօրինումից յետոյ  
 էլ նա բաւական ժամանակ չիշատակութեան առարկայ չէ  
 եղել. և միայն ժ.Գ. դարումն է, որ յիշեալ կեղծիքի ազդե-  
 ցութեամբ մեր վարդապետական գրուածներում առաջին ան-  
 դամ երևում է Քրիստոսի օրհնած իւր, որ Հայաստան է բե-  
 րուել Թագոս առաքեալի ձեռքով. բայց դարձեալ ոչ հիւան-  
 դաց օծման յատկացրած նշանակութեամբ, այլ ս. մեռոնի.  
 «Եւ ի գալն (Թագոսի) յերկիրս Հայոց, ասում է Գր. Տա-  
 թեալին, ետուն նմա օղնական զիւրն օծման զոր Քրիստոս  
 օրհնեալ էր, և զգեղարչն, և այլոց ազգացն չկայ այս պար-  
 ծանքս, զի մեր մեռոնս հանապաղ և միշտ զնոյն շնորհ ունի» \*):

\*) Հարցմանց. եր. 549.

Տաթևացուց չետոյ Հայոց նոյն իւզն երկրորդ անգամ չիշում է ժ.Ը. դարում Ղազար Կաթողիկոս Ձահկեցի, որ պատասխանելով հարցմանս— «Ձինչ են առանձնական բարութիւնք պարզեւեալք յաստուածպետականէն ազդիս Հայոց», ի միջի ալլոց ասում է. «Անդ (ի Հայաստան) է աստուածամուխ գեղարդն սուրբ, և Քրիստոսի արեամբ ներկեալ պսակն փշոյ, և իւզն սրբալոյս զօրհնեալն ի Քրիստոսէ զոր երբ առաքեալն Թադէոս ի Հայս» \*): Ձահկեցին էլ հասկանում է դարձեալ մեռոնի նշանակութեամբ. ըստորում տեսնելու ենք չետոյ թէ նա էլ, ինչպէս և Տաթևացին, պաշտպանում է իւր եկեղեցու սկզբունքը վերջին օժման նկատմամբ:

Անցնենք ուրիշ կէտերին:

1. Ասացինք վերևում թէ Դաշանց թուղթը չօրինուել է Ուռհայում:

Այդպէս համոզուած լինելու համար մենք ունենք նախ այն, որ երկու տաղանդ ոսկին, որ չատկացում է, զրուածի տակով իբր տարեկան նպաստ «ի պէտս եկեղեցւոյն և եղբարց» Տարօնի ս. Կարապետի, բայց անշուշտ և միւս վանքերին ևս, կամ սորանց էլ առանձին, արուել է Միշազետքի դանձարանից— «ի հարկացն Միշազետաց» և ոչ ուրիշ տեղից: Երկրորդ՝ այն խօսքերն, ինչ որ Կոստանդիանոսն ուղղում է իբր թէ Տրդատին և Հայ զինուորութեանը. «Գումարեսչիբ... ի զործս պատերազմի ընդդէմ ատելւոյն Քրիստոսի և թրշնամւոյն իմոյ Շապուոյ... հանելով և հալածելով զզօրս նորա անդր քան զՄաղանդարան և Տապարաստան», կարող էր մտածել և ասել տալ միմիայն Ուռհայի զաղղիացի իշխանն, որովհետև խաչակիրների ախրելուց չետոյ Պարսկաստանը շարունակ յարձակումներ էր զործում Միշազետքի և նորա մայրաքաղաքի վերայ, կրկին չեա խլելու այդ երկիրն, որին երկար ժամանակ ինքն էր ախրել: Կիլիկիայում թուղթ կազմողներն ոչ պարսիկներին Մաղանդարան քշելու, ոչ էլ Հայ զինակիր ոչժերը Սարպատականի և Սրապի կողմերն ուղար-

\*) Դրախտ ցանկալի. եր. 670—672.

կելու վերայ կմտածէին: Թղթի այս խօսքերն են ահա, որ մեզ իրաւունք տուեցին ասելու, թէ նորա չօրինողները թելադրուել են և երկրի կառավարիչ իշխանից: Երրորդ՝ երբ Կոստանդիանոսը քաղաքական դաշինք կապող կայսրից յանկարծ զառնում է տեսիլքի արժանացած ապագայ զուշակող ճղնաւոր՝ ասում է. «Եցոյց ինձ Տէր, զի չեա բազում ամաց իշխանքն Հայոց տարագրեն զտունն Տրդատայ և ինքեանք տարագրին ի հայրենեաց իւրեանց, և անկանին ընդ լծով ծառայութեան այլազգեաց զամս բազումս: Եզով որ զիպիցին այնձ ժամանակի, զի տառապանօք տառապի ազդն Հայոց մինչև ցելս հողոց իւրեանց, որոց փրկութիւն ի Տեառնէ եղիցի և օղնութիւն չազգատոհմէ իմմէ. բայց այս եղիցի ի ժամանակս չետինս, չորում յայտնեցին նշխարք սրբոցն Սուքիասեանց Քօշից, զորս ես ամփոփեցի առաջնորդութեամբ «հրեշտակի տեառն ի Բաղրևանդ զաւառի»:

Կիլիկիայում այս «տեսիլքը» բնաւ այսպիսի խօսքեր չէր կարող թելադրել. այնտեղ Հայերն ընդ լծով ծառայութեան այլազգեաց չէին այդ ժամանակում, այլ ունէին իրանց թաղաւորութիւնը: Տառապանօք տառապողները Հայաստանի բնակիչներն էին:

Հաստուածիս վերջին տողերը բնորոշում են այն խարդախամիտ քաղաքականութիւնն, որով վարձատրուել է անցեալներում Հայերի պարզամտութիւնը Կոստանդիանոսի չափողներից և այժմ էլ վարձատրուեց հռոմէական նախկին կայսրութեան, քրիստոնէութեան պաշտպանութեան անունով Արևելք եկած ժառանգներից: Դաշանց թղթի հեղինակներն իրանք էլ թելադրուած են իրանց զործունէութեան ընթացքում ի նկատի ունենալ այդ քաղաքականութիւնն, ինչպէս և Կիլիկիայում զործողները: Տառապող քրիստոնեայ Հայերին թողնել որ տառապեն «մինչև ցելս շնչոյն», մինչև որ իբրև թաղաւորութիւն և իբրև անկախ եկեղեցի ունեցող ազդ կղաղարեն զոչութիւն ունենալուց. իսկ հարկաւոր դէպքում, իրանց շահերին ծառայեցնելու համար օղնելու խոստումներ անել. բայց եթէ Սուքիասեանց նահատակների նշխարներն երևան

կգան, այդ խոստումներն էլ կկատարուեն.— այնպիսի հեղնութիւն, որից աւելի ցինիկականը շատ քիչ անգամ կպատահի լսել: Սուրբ Սուքիասեանցների նշխարները չէին յայտնուել ծինչև ժԲ. դարն, այնուհետև էլ յայտնուելու չէին երբէք: Չզիտենք թէ ո՞ր հայ Վանականը կամ ո՞ր «վերնակրօնն» է, որ արժան է համարել հայոց Յայսմաւուրքի մէջ ևս մտցնել հայերին «տեսիլքով» խոստացուած օգնութիւնը «Կոստանդիանոսի ազգատօմից», սակայն ով որ էլ լինի՝ շնորհակալութեան արժանի է, որ անկեղծաբար յայտնել է, թէ խոստմունքի կատարման պայմանաժամին—ս. Սուքիասեանց նըշխարների յայտնութեանը հայերը կարող են սպասել միայն այն ժամանակն, երբ աշխարհն իւր դոյութեան վերջին օրերն «արդէն համրած կլինի. Մարգարէացաւ սուրբ թագաւորն «Կոստանդիանոս, թէ ի վերջին ժամանակս ի զօրանալ ազգին «հայոց մօտ ի կատարած աշխարհի՝ յայտնեսցին նըշխարք սրբոց Գօշիցն Սուքիասեանց. և յայնժամ նորոգեսցի քահանայապետութիւնն հայոց յարժանաւոր ցեղէն սրբբոյն Գրիգորի, և թագաւորութիւն յազգէն Արշակունեաց. «և շինեսցի վերստին աշխարհս բարեխօսութեամբ սրբոցն».

(Յայսմ. օգոստ. 27. Չամչ. Գ. 599):

2. Որ Վասպուրականի և Տարօնի վանքերն համերաշխ և աջակից են եղել Միջագետքի հռոմէական քարոզիչների դործունէութեան՝ երևում է նախ այն տարեկան նպաստներից և առանձնաշնորհումներից, որ անում են չիշեալ տեղերի վանքերին, նորանց հետ էլ եկեղեցիներին և եկեղեցականներին: «Եկեղեցի և եկեղեցականք և վանք և վանականք ամենայն «նայն դոյլւք իւրեանց ազատ և անհարկ լիցին յամենայն «դիմօսական հարկաց»: «Որք ունին զնշան կուսութեան արք «և կանայք (կրօնաւորներ) ամենեքեան ազատք լիցին և արք «բունուստ զդեցցին»: Այս ստղերը ցոյց են տալիս, թէ մեր չիշած նահանգներում կալուածատէր իշխանների կամ առհասարակ ժողովրդի և վանքերի մէջ այդ ժամանակներում շարունակ տարածայնութիւններ են տեղի ունեցել. իշխանը կամ ժողովուրդը պահանջել է, որ վանքերն ու եկեղեցիներն

էլ իրանց վանականներով և քահանաներով միասին իրանց երկրային բերքերից տասանորդական մասը հանեն պահանջուող ծանր հարկերը լրացնելու համար (այժմ էլ հայ զիւղացիներն սկսել են այդպիսի պահանջներ անել իրանց քահանաներից). իսկ վերջինները մերժել են. և յարմար առիթով Կոստանդիանոսի, Տրդատի, Սեղբեստրոսի և Լուսաւորչի դաշինքի անունով ապահովել տալով իրանց գոյքերը՝ միևնոյն ժամանակ բանադրանքի երկիւղով հեռացնում են ամեն պահանջ. «Իսկ որք «անհնազանդին հրամանաց մերոց, և ընդ հարկաւ արկանեն «զեկեղեցի կամ զքահանայ, զկրօնաւոր կամ զհաւատաւոր, «հարեալ, հալածեալ լիցին յերեսացն Աստուծոյ. և որոշեալ «ի հաղորդութենէ սուրբ հաւատոյս»: Ի հաղորդութենէ սուրբ հաւատոյս զրկելու սպառնալիքը պարզ ցոյց է տալիս, թէ տասանորդ կամ այլ հարկ պահանջողն եղել է արդարև ինքը ժողովուրդը կամ հայ իշխանները: Անհարկ ապրելը, հողերի բերքերից տասանորդ չվճարելն և «արքունուստ զղենուլն» անդիմադրելի հրապոյր կարող էին լինել և ուրիշ տեղերի կրօնաւորների և քահանաների համար. որ ասել է թէ Գաշանց թղթի վաւերականութիւնը պաշտպանելը շատերի համար շահի խնդիր էր լինելու: Երկրորդ՝ չիշեալ համերաշխութիւնն երևում է յանուանէ նշանակուած վանքերի սրբութիւններն չիշատակելուց. օրինակ՝ Տարօնի Գլակայ վանքում վաղուց հուշակաւոր ուխտատեղ է խնդրակատար (մուրազատու) ս. Կարապետի զերեզմանը. կեղծ-Սեղբեստրոսն էլ այլ ևս չէր կարող չասել թէ «անդ է և բովանդակ նշխարքն (ամբողջ մարմինը) Մկրտչին... զոր Սուրբն Աւստուղէս Սրբոյն Գրիգորի պարզեաց»: Եթէ ասուէր. անդ է նշխար կամ մասն Մկրտչի, գերեզմանի գոյութիւնը կասկածի կենթարկէր. իսկ միւս վանքերինը մասունքներ են միայն, — այդպէս էլ չիշում են. Անձեւացեաց (Շահնազ. օրինակում սխալմամբ Ընժայեաց) վանքն ունէր Աստուածածնի պատկերն, որը Տէրը տեառնադրել էր՝— չիշուած է. «Անդ կայ և փայտեղէն պատկերն Աստուածածնին, զոր Տէրն տեառնադրեաց և աւրհնեաց յաւուր փոխման Աստուածածնի». Վարադի վանքն ունէր Պատրօնի-

կէի խաչամասն, որը մի ժամանակ ս. Նուբիսիմէն կրել է իւր պարանոցի վերայ՝— չիշուած է. «Անդ կայ և խաչամասն Պատրոնիկեայ որ էր ի պարանոցի Սրբոյ կուսին Նուբիսիմէ օրիորդին»։ Իսկ թէ թղթում չիշուած է և չեղինէի խաչամասն, որը Կոստանդիսնոսը պարզեում է Տրդատին, կամ չիշուած են նոր նուիրական առարկաներ՝ ս. Լուսաւորչին ընծայուած պապի վակասն, որ Տեառն եղբոր վակասն է եղել, միթրը, որ Յիսուսի փակեղն է, թանգազին գաւազանը, ոսկեղէն սկիհը, մողղման և այլն, կամ Պետրոսի և Պողոսի բազուկները, կամ Վաղարշապատի վանքերին ուղարկուած դանադան պարզեները— այդ բոլորը նշանակուած է եղել Վարազի վանքին ժառանգութիւն թողնելու դիտաւորութեամբ. բաւական էր, որ Սեղբեսարոսը տալիս էր այդ բոլորը Հայոց Լուսաւորչին. էլ ինչո՞ւ կ'ընէին, որ նա տանէր հասցնէր Վաղարշապատ. կարելի էր մի պատմութիւն էլ պատրաստել, թէ Լուսաւորիչը չ'ոսմից վերադառնալիս եկաւ Վասպուրական և այնտեղ թողեց կամ պարզեեց իւր ստացած առաքելական վակասը, փրկչական փակեղ-միթրը, իւր գործածած նոր դաւադանն, որ շատ նուիրական և ծանրազին է քան Աղթամարի ունեցածն, իւր սեպհական սկիհն և այլն. կամ թէ դժուար պիտի լինէր որևէ չարմարութեամբ Վաղարշապատից բերել տալ Վարազ. Վաղարշապատի վանքերն անբաւական չէին մնայ, քանի որ ոչինչ չէին ստացել և չէին կորցնելու։

Երբորդ՝ Դաշանց թղթի լեզուն Վասպուրականի դրաբարի հեաքեր է կրում։ Այս կողմերի դրաբարին չատուկ ո՞ն է բայերի ապառնի ժամանակի երբորդ դէմքը, թէ եզակի և թէ յոգնակի, գործածել ներկայ ժամանակով։ Սրդէն տեսանք վերևում կեղծ-Խորենացու առ Սահակ Սրժրունի դրած թղթում «յերկարածգէ» փոխանակ տեսու յերկարածգեսցէ, նոյն թղթում այդ ո՞նր պահպանուած է շատ տեղ, «չորդուոց «քոց... երկուքն արեամբ վկայք լինին (լիցին, լինելոց են) «Քրիստոսի. և մինն վրիպեալ ի նոցանէ և ոչ յայսմ վայելէ» (վայելեսցէ)։ Բազրատունուոյդ ասեմ. յիշէ (իշեսցէ) աէր դբանն իւր... և թ ա դ ա լ ո Ր է ք (թաղաւորեսչիք) ի Դու-

ին»։ Դաշանց թղթումն էլ կարդում ենք. «Հայոց հայրապետն ձեռնադրէ (ձեռնադրեսցէ) կաթողիկոս Վրաց»։ «պատրիարքն երեքին... յորժամ ձեռնադրին» (ձեռնադրեսցին). «հրաման հանէ» (հրաման հանցէ). «տառապի (տառապեսցի) աղզն Հայոց»։ Պէտք է ասել, որ երկու վանքեր— Անձեացեացն և Վարազինը, վերջինն առաւելապէս, առանձին ուշադրութեան և պատուազրութեան են արժանացել Դաշանց թղթում։ Կեղծ-Սեղբեսարոսը պարզեատրած վանքերի անունները չիշելիս հարկաւոր է գտնուած յայտնել այդ երկուսին ամենից շատ պարզեներ տալը. «Նա ևս առաւել առաքեցաք ընծայս բազումս Ընծայեաց (Անձեացեաց) սուրբ Աստուածածնին և Վարագայ վերնակրօն եղբարցն»։ որ ցոյց է տալիս, թէ լատինական քարոզիչներն որքան շնորհապարտ են եղել չիշեալ վանքերի վանականներին։

Սրդեօք՝ եթէ չիշեալ քարոզիչների գործունէութիւնն այս կողմերում առանձին դժուարութիւններ ունեցած չլինէր իւր առջև, և եթէ խաչակիրների տիրապետութիւնն աւելի երկարատեւեր Եղեսիայում, նոյն դարհուրելի հետեանքները չէր տայ, ինչ որ տուեց ունիթոռների գործունէութիւնը. կամ թէ՛ Հայ աղզն ի՞նչ նոր աղէաներ և կորուստներ պիտի ունենար, եթէ փառասիրական և շահասիրական տենչանքներով այդ քարոզիչների կամակատար գործիք դարձած վանքերից մէկն ու մէկին, հաւանօրէն Վարագին յաջողէր մի նոր հայրապետական աթոռ ևս աւելացնել։

Թէպէտ և ցաւալի էր, որ աղզի քաղաքական միութեան կորստաբեր պառակտումն յառաջ բերեց Վասպուրականում առանձին հայրապետութիւն հաստատելու խորհուրդն, որ դնալով հասունացաւ և դարձաւ իրողութիւն, բայց և այնպէս այդ իրողութիւնը հանդամանքների բերմամբ ազգի և եկեղեցու բարիքը դարձաւ։ Աղթամարի կաթողիկոսական աթոռն, որ իւր վերանորոգուած դոյութիւնը պարտական է Վասպուրականի մահմէտական ախրապետութեան ներկայացուցչի քաղաքադիտական հեռատեսութեան, քան մի Դաւիթ Եպիսկոպոսի փառասիրութեան, երկու նշանաւոր, անժխտելի

բարիքի պատճառ եղաւ. նախ՝ եթէ չլինէր այդ աթոռն՝ ո՞վ զիտէ, թէ Կիլիկիայում խաչակիրների և հռոմի պապերի հրամանակատար ներկայացուցիչների ձեռքում խաղալիք զարծած կաթողիկոսները դեռ ո՞րպիսի ծանրագոյն չարիքների պատճառ կարող էին լինել ազգի և եկեղեցու համար: Եթէ այդ հայրապետների շարքում տեղ բռնող մի շարք բարոյապէս ընկած, սնանկացած եկեղեցականները փոքր ի շատէ ուշադրութիւն էին դարձնում այն բողոքների և դայրոյթի վերայ, որոնք արտայայտուում էին ազգի մէջ, և զլխաւորապէս հայաստանում, կրօնական նորամուծութիւնների առիթով, այդ մի միայն շնորհիւ այն երկիւղի էր, թէ սաստկացած դայրոյթը մի օր հայոց Լուսաւորչի աթոռաժառանգ կյայտարարի Աղթամարի կաթողիկոսին, և ամբողջ մայր երկիրը խղելով իւր հոգեւոր կապը Կիլիկիայի հետ, կդառնայ դէպի աւանդապահ Աղթամարը: Այս հանդամանքն, երևի, շատ լաւ հասկանում էին և հռոմէական պապի զործակատարներն, որոնք ամեն կերպ նպաստում էին Վասպուրականի «վերնակրօն եղբայրներին» տապալելու Աղթամարի աթոռն և մի նորը դնելու, որ պիտի ընթանար իրանց հետ միևնոյն ուղղութեամբ: Երկրորդ՝ Աղթամարի աթոռի գոյութիւնն էր, որ զսպեց զանազան վանքերի համարձակութիւնն և հնարաւորութիւն չտուեց թէ նորանց, թէ միջազեռքի Լատինական քարոզիչներին ակներև զործունէութեամբ երևան դալու լիշեալ նահանգներում. այդ դէպքում Աղթամարի աթոռին բաւական էր երկրի իշխանի ուշադրութիւնն հրաւիրել:

Այսպիսով միայն լիշեալ քարոզիչների դադանագործ ջանքերն ունեցան աննշան արդիւնք.— սակաւաթիւ հետեւողներ: Այդպիսիներէից էին, հաւանօրէն՝ հռոմի Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ շինուած հայ վանքի միաբաններն, որոնց վանահայրերից մէկը «Ղազար Ստեփաննոս Աբբայ Վանեցի» լիշատակուած է միանձն Մխիթարի գերեզմանաքարի վերայ իսկ Մխիթարը վախճանել է 1246 թուին: \*) Սակայն լի-

\*) Պատմ. Կան. Վարդապետութեան ի Հայս. եր. 54:

շեալ քարոզիչների և նորանց աշակերտների զործունէութիւնը կարողացել է մի այլ կողմից փոքրիշատէ իրան վարձատրել և անշնչելի հետք թողնել.— զրական կեղծիքներով և խարդախումներով: Բացի Դաշանց թղթից՝ սորանց ձեռքերի զործերն են.— Սբգարի թղթի հայերէն թարգմանութեան մէջ մացրած այն մասը, թէ Եղեսիայի Փղոս եպիսկոպոսը ձեռնադրուել է Անտիոքի Սրապիոն եպիսկոպոսից. Սրապիոն՝ հռոմի Զեփրիանոս հայրապետից. սա էլ Պետրոս առաքելից: Սորանք են ձեռնամուխ եղել այն փոփոխութեան, որը զրանում ենք Պատրոնիկէի պատմութեան մէջ (Ժանօթ. 40):

Սորանց զործն են Մ. Խորենացու Պատմութեան Երկ. Գրքի ձգ. փոփոխուած գլուխն և ձգ. գլխի նախադասութիւնն. առաջինը Կոստանդիանոսի բորոտութեամբ հիւանդանալու և Սեղբեսարոսի ձեռքով մկրտուելով բժշկուելու պատմութեան, երկրորդը՝ Ս. Նունէի Մցխիթայում բժշկութիւն կատարելու և քրիստոնէութիւն հաստատելու առիթով: Ի հարկէ Աղթամանգեղոսն ոչ կոստանդիանոսի հիւանդութեան և մկրտուելու մասին է զրել և ոչ ս. Նունէի կատարած առաքելական քարոզութեան. երկուսի լիշատակոյն էլ Դաշանց թուղթն է. և փոփոխութիւնն ու չաւելուածն էլ սրուած են Խորենացու հեղինակաւոր անուամբ հէնց այդ թղթի գոյութիւնը վաւերացնելու ղիտաւորութեամբ. <sup>56</sup>). իսկ Խորենացին ճանաչուել է ստախօս, որ իբր թէ ուրիշ ազբերներից առածները ցոյց է տուել իբրև Աղթամանգեղոսի պատմուածք <sup>57</sup>): Վերջապէս սորանց յօրինածն է մի շարական, որը վերադրուել է այս կամ այն հեղինակին և մուտք է դաւել ու երգուում է մեր եկեղեցում, զանազան թեր և դէմ գրուածների նիւթ տալով և այլն և այլն, որոնց մասին կխօսենք առաջիկայում:

Նախօրէն արդէն ասել ենք թէ մենք զրեթէ չունենք հին և միջին դարերից մեզ հասած մատենադրութիւն, որ փոքր կամ մեծ չափով աղաւաղուած և այլալուած չլինի անհարազատ ձեռքերի սրբադրութիւններով և կեղծումներով: Պէտք է սակայն աւելցնել, թէ զրական խարդախումների սովորու-

Թիւնը շատ հին է և յատուկ է եղել բոլոր ազգերին, մէկուժ աւելի մեծ ծաւալ ստացած՝ միւսուժ փոքր. մէկուժ բացարձակ տիրող սիստեմի արդիւնք, միւսուժ՝ մասնաւոր կամ անհատական միտումներին:

Ղազար Փարպեցին այդ սովորութեան համար մեղադրում է մասամբ Յոյներին, իսկ զլիսաւորապէս Ասորիներին. «Քանզի են ոմանք ի Յոյնս, այլ մանաւանդ չ Ասորիս» \*): Ճիշտ է՝ Ասորիներն Արեւելքի քրիստոնէական զրականութիւնը խճճել, խճողել են բաղձաթիւ անփաւերական կամ կեղծ զրուածներով, բայց նորանց տուածները ժամանակի հասկացողութեան կամ, ինչպէս անուանում են, բարեպաշտ խաբէութեան պատուհներ են. իսկ այն բոլորն, ինչ որ արել է քրիստոնէական հոռմն, ինչ որ խարդախել կեղծել են նորա ներկայացուցիչները, նորա քարոզիչները, դարհուրելի են թէ՛ իրանց ուղղութեամբ և ծաւալով, թէ՛ հնարազիւտ խորամանկութեամբ, թէ՛ ընդունուած սիստեմով: Այդ կողմից Արեւելքն Արեւմուտքին հաւասարուել կամ համեմատուել չէ կարող: Առաջինը յափշտակուող վառ երեւակաչութեան սնունդ է որոնել. երկրորդը՝ նիւթական շահեր իրական կեանքում: Հոռմի համար մի նպատակ է եղել—իշխանաբար տիրել ամբողջ քրիստոնէայ աշխարհին, իսկ դորան հասնելու համար հարկաւոր էր ապացուցանել թէ հոռմի քահանայապետին Աստուած իրան փոխանորդ է կարգել երկրի վերայ, կապելու և արձակելու, ինչպէս կամենայ: Ի հարկէ աստուածաչին փոխանորդութեանը հիմք էր հարկաւոր,—այդ էլ ունեցաւ նա: Քրիստոս Պետրոսին կարգեց պուխ առաքելոց և առեց նորան երկնքի արքայութեան փականքը. արդ՝ որովհետև հոռմի եպիսկոպոսները Պետրոսի աթոռակալներն են, ուրեմն վերջինի իրաւունքներն էլ մնում են նորա յաջորդներին. մինչդեռ աչսօր ապացուցուած է, թէ Պետրոսի հոռմում աթոռակալելը զուրկ է պատմական ստուգութիւնից: Այս մասին բաւական ենք համարում ընթերցողներին առաջարկել լսելու

\*) Պատմ. Վննատ. եր. 12.

երկու հեղինակների խօսքերն, որոնցից կտեսնեն, թէ որպիսի հանգամանքներով կաթոլիկ եկեղեցուն յաջողեց հիւսել Պետրոսի զլիսաւորութեան վարդապետութիւնն և հոռմում աթոռակալելու պատմութիւնը: Ընդունելով որ՝ ինչպէս հայորդում է Տակիտոսը, հոռմում քրիստոնէաները բաղձաթիւ էին, ասում է Փառարը, «մնում է վճռել երկու խիստ մութ «խնդիրներ. մէկն այն է, թէ քրիստոնէութիւնն ե՞րբ և ի՞նչպէս մուտք դտաւ հոռմում... Առաջին հարցմանը պատասխանում է աւանդութիւնը թէ՛ Պետրոս առաքեալն է եղել «քրիստոնէութեան առաջին հիմնադիրը հոռմում. բայց այդ «պատասխանի անհիմնաւորութիւնը համարեա թէ ակներև է: Առաջին անգամ պատահում ենք նորան մի անբարենպատակ և միևնոյն միջոցին կեղծ զրուածքում, որ յօրինուած է արդէն երկրորդ դարի կէսում ի պաշտպանութիւն առանձին կուսակցութեան.— կեղծ — Կղեմէսեան զրուածքն է «այդ, որի մէջ ասում է թէ Պետրոսն է եղել հոռմի առաջին եպիսկոպոսն: Այդ աւանդութիւնն իւր չետազայ զարգացման միջոցին հանդէս բերելով նոր յաւելումներ (*donnée*), «փոքր առ փոքր սկսաւ աւելի կամ նուազ վստահութեամբ «պնդել թէ՛ Պետրոսն եկաւ հոռմ Կղոպիոսի թագաւորութեան երկրորդ տարին (փրկչ. 42 թ.). թէ՛ նա այնտեղ «հանդիպեց Սիմոն մողին և նախատեց, (թէ՛)՝ նա եղաւ հոռմի եպիսկոպոս 25 տարուայ ընթացքում, կրեց վերջապէս «մարտիրոսական մահ, խաչուելով զլիսիվայր, իւր խոնարհական ցանկութեան համածայն. և թէ՛ այդ կատարուել է «չունիսի 29-ին, միևնոյն օրն, երբ պօղոս առաքեալի մարտիրոսական մահը տեղի ունեցաւ... Այդ մանրամասնութիւնների յետին ծագումն, վրիպակներն, որոնց հետ նորանք խառնաշփոթուել են, և ակնյաչտնի կուսակցասէր «զին, որ նորանց հնարելու զրդիւն է եղած, չեն թօյլ տալիս մեզ պատմական նշանակութիւն տալ նորանց: Չկայ «բնաւ հաւանականութիւն, թէ Պետրոս առաքեալը կարող էր հոռմում լինել իւր մահուան տարուց վաղ: Յամենայն «դէպս՝ նորա հոռմում լինելու միակ ենթադրական հետքը

«Նոր կտակարանի մէջ այն խիստ վիճելի ակնարկն է թէ  
 «ողջոյն տան ձեզ և ի Բաբելոնէ»։ Նա կարող էր մեռնել  
 «Հռոմում, կարող էր նոյն իսկ քարոզել Հռոմում, կարող էր  
 «Հռոմի քրիստոնեաների հրէայ մասից ընդունուել իբրև ի-  
 «րանց «Եպիսկոպոս», բայց թէ նա չէ եղել և չէր կարող  
 «լինել, ոչ մի իսկական մտքով, հռոմէական եկեղեցու քս-  
 «կզբնական հիմնադիրն,—այդ աղաաօրէն խոստովանում են  
 «նոյն իսկ իրանք հռոմէական-կաթոլիկ հեղինակները»։ \*)

«Պապի եկեղեցական գլխաւորութիւնն, ասում է Ն. Սու-  
 «վորովը, հիմնուում է կաթոլիկական այն վարդապետութեան,  
 «կամ աւելի ճիշտ է ասել՝ այն կրկնակի վարդապետութեան  
 «վերայ, թէ Պետրոս առաքեալը Քրիստոսի կամքով դարձաւ  
 «միւս առաքեալների գլուխ, իսկ գլխաւոր առաքեալի բոլոր  
 «իրաւունքները ժառանգեց նորա յաջորդն, հռոմէական եպիս-  
 «կոպոսն։ Եւ ամբողջ հաստատութեան հիմքն այդ կրկնակի  
 «վարդապետութեան գտած հաւատն է. եթէ չլինէր այդ հա-  
 «ւատը, պապութիւնն էլ չէր ստեղծուի։ Ես ինձ ձեռնհաս  
 «չեմ համարում, և նոյն իսկ կարելի չեմ դռնում աստուա-  
 «ծաբանական քննութեան առնել այդ հաւատի հիմնաւորու-  
 «թիւնն, քստորում միլիոնաւոր քրիստոնեաներ են, որ այդ  
 «խոստովանում են. և նորանց կողքին նոյնպէս միլիոնաւոր  
 «քրիստոնեաներ են, որոնք ոչ միայն չունին, այլ և երբէք  
 «չեն ունեցել այդ հաւատն. և մինչև այսօր մէկը միւսին ոչ  
 «համոզել և ոչ տարհամոզել է նորանում։ Այդ դեռ բաւական  
 «չէ. արեւմտեան բաղձաթիւ լուրջ և հեղինակաւոր դիտնա-  
 «կանները, որոնց ձայնը կշռապատուութիւնսն չառնել չէ կարե-  
 «լի—Շոյլզէ, Փրիդրիխ, Վատենրախ, Գրեգորովիուս, Հեֆկէն  
 «և այլն ապացուցանում են թէ՛ Պետրոս առաքեալն երբէք  
 «չէ եղել Հռոմում. թէ՛ նա չէ հռոմէական եկեղեցու հիմնա-  
 «դիրը. հետեաբար՝ նա չէր կարող լինել Հռոմի առաջին եպիս-  
 «կոպոսն և իւր իրաւունքները յանձնել յետագայ հռոմէական  
 «Եպիսկոպոսներին իբրև իւր յաջորդներին։ Բայց կայ... ու-

\*) Жизнь и труды св. Апост. Павла. стр. 528—530:—

«րիչ, ոչ աստուածաբանական, այլ զուտ պատմական տեսա-  
 «կէա, որով հաւատն ինքնին ստանում է պատմական փաս-  
 «տի նշանակութիւն... Երկրորդ գարի սկզբում հրէայ-քրիս-  
 «տոնէական կուսակցութեան մէջ երեւցաւ մի դրուածք, որ  
 «կրած յետագոյն փոփոխութեան պատճառով կոչուած է կեղծ-  
 «Կղեմէսեան. քստ որում նորա աւելի նշանաւոր մասերը ներ-  
 «կայացոււմ են Պետրոս առաքեալի աշակերտ Կղեմէսի գրած-  
 «ներ։ Գրուածքը յօրինուած է Պետրոս առաքեալին գովաբա-  
 «նելու բացայայտ ձգտումով ի հաշիւ Պողոս առաքեալի։  
 «Յայտնի է, որ առաքելական քարոզութեան շնորհիւ քրիս-  
 «տոնէութիւն էին ընդունում թէ՛ հրէաներ և թէ՛ հեթանոս-  
 «ներ։ Խտրութիւնը հրէականութիւնից զարձած առաջին քրիս-  
 «տոնեաների և հեթանոսութիւնից առաջին զարձածների մէջ  
 «ընդհանրապէս այնքան մեծ էր, որ Երուսաղէմում, առա-  
 «քեալների և երէցների ժողովում առանձին քննութեան են-  
 «թարկուեց, թէ՛ մովսիսական ծիսական օրէնքը պարտադր՞ր  
 «է արդեօք հեթանոսութիւնից զարձածների համար. որով-  
 «հետև հրէութիւնից քրիստոնեայ զարձածները պահանջում  
 «էին յատկապէս, որ հեթանոսութիւնից զարձածներն էլ պահ-  
 «պանեն նոյն մովսիսական օրէնքն, ինչպէս իրանք էին պահ-  
 «պանում։ Այդ խնդրի մասին ծագած վէճը սուր կերպարանք  
 «առաւ մանաւանդ նորա համար, որ գլխաւորապէս հեթա-  
 «նոսների մէջ քարոզող Պողոսն, որ և չեսոյ հեթանոսաց ա-  
 «ռաքեալ կոչուեց, օրէնքի ձեւականութիւններին և պատուէր-  
 «ներին առանձին նշանակութիւն։ Եւ անոյ մարդ չէր. այլ ընդ-  
 «հակառակը քարոզում էր նորադարձ քրիստոնեաներին, թէ  
 «հարկաւորն էականն է. ձեւականութիւնը միայն միջոց է  
 «նորա համար. թէ՛ կարեւորը գործերն են, որոնք բղխում են  
 «հաւատից և կերպարանափոխում են ներքին մարդն, և ոչ  
 «թէ մովսիսական օրէնքի արտաքին պատուէրները։ Թէպէտև  
 «Երուսաղէմի առաքելական և երիցական ժողովում վէճը  
 «վճուուեց այն մտքով, թէ՛ հեթանոսութիւնից զարձած քրիս-  
 «տոնեաներն ընդհանրապէս պարտաւոր չեն կատարելու մով-  
 «սիսական օրէնքի պահանջներն, այլ պարտաւոր են հեռանալ

«միայն այն բաներից, ինչ որ աւելի գայթակղական են հրէա-  
 «ների համար, օրինակ՝ կերակրի մէջ արիւն գործածելուց,  
 «բայց խտրութիւնը չվերացաւ մէջտեղից և ժողովից էլ չե-  
 «տոյ: Հրէականութիւնից վարձած քրիստոնեաներն իբրև մով-  
 «սիսական օրէնքի խիստ պահպանողներ այնպիսի յամառու-  
 «թեամբ չարուած էին իրանց հայեացքներին, որ Պետրոս ա-  
 «ռաքեալն, անձնապէս ոչ բաժանորդ այդ հայեացքների՝ Ան-  
 «տիօք եկած միջոցին երկիւղ կրելով օրէնքի նախանձաւոր-  
 «ներին իւր դէմ զինելուց՝ սկսաւ հեռու մնալ հեթանոսու-  
 «թիւնից վարձած քրիստոնեաներից, և Պօղոս առաքեալն  
 «ստիպուեց այդ մասին նորանից հրապարակական բացատ-  
 «րութիւն պահանջել: Սակայն կուսակցութիւնների բաժա-  
 «նուծն շարունակուեց, և առաւել սասակացաւ Պօղոս առա-  
 «քեալի մահից չետոյ: Հրէութիւնից վարձած քրիստոնեաները  
 «նորան համարում էին ինքնակոչ, քարոզող ոչ այն վարդա-  
 «պետութեան ինչ որ ուսուցանում էին Քրիստոսից իրանից  
 «կարդուած և ուղարկուած աւազ առաքեալներն, և մանա-  
 «ւանդ Պետրոսն, որին յանձնուած էր բոլոր հաւատացեալ-  
 «ների հրահանգողը լինել: Կեղծ Կղեմէսեան գրուածքում, որի  
 «մէջ արտայայտուած են հրէայ-քրիստոնէական կուսակցու-  
 «թեան հայեացքները, Պետրոսի հեղինակութիւնը բարձրաց-  
 «նելու համար պատմուած է նորա առաքելական լայնածա-  
 «ւալ գործունէութիւնը, նորա մրցութիւնը ստուսոյց Սիմոն  
 «մոզի հետ, որին հալածում է մինչև Հոռոմ և Հոռոմում ան-  
 «գամ. այստեղ Սիմոնը կարողանում է այնքան կախարդել  
 «քաղաքացիներին, որ նորան արձան են կանդնեցնում իբրև  
 «աստուծու. Պետրոսը չալթում է նորան, հիմնում է հոռ-  
 «մէական եկեղեցին, կարգում է Կղեմէսին իրան յաջորդ, և  
 «Հոռոմումն էլ մեռնում է իրան մահով: Այդ պատմուածք-  
 «ներում Սիմոն մոզի ինքնութիւնը զարմանալի կերպով նույ-  
 «նացրած է Պօղոս առաքեալի ինքնութեան հետ. այնպէս որ  
 «երկու առաքեալներն իրանց Հոռոմում եղած միջոցին ներ-  
 «կայացուած են երկու հակառակորդներ: Շուտով կեղծ-Կղե-  
 «մէսեան գրուածքն երևում է և Հոռոմում, բայց փոփոխուած

«ձևով. բոլորն, ինչ որ ուղղուած էր Պօղոս առաքեալի համ-  
 «բաւը նուազեցնելուն, դուրս է ծղուած. ինչ որ շփոթում էր  
 «նորա ինքնութիւնը Սիմոն մոզի ինքնութեան հետ, կրճա-  
 «ւում է. և երկու առաքեալներն էլ ներկայացուած են Հոռ-  
 «մում միասին գործողներ Սիմոն մոզի դէմ. իսկ այն ամենն,  
 «ինչ որ վերաբերում է Քրիստոսից Պետրոսին առած յանձ-  
 «նարարութեան—առաջնորդել բոլոր հաւատացեալներին. այն  
 «ամենն, ինչ որ վերաբերում է Պետրոսի (այժմ արդէն Պօ-  
 «ղոսի հետ միասին) հոռոմէական եկեղեցին հիմնելուն և իրան  
 «յաջորդ կարգելուն յանձին Կղեմէսի,— բոլորը պատմուած է  
 «Հոռոմում Բ. դարի վերջում իբրև աներկբայ հշմարտութիւն...  
 «Պետրոս առաքեալի Հոռոմում լինելու և յանձին Կղեմէսի  
 «իրան յաջորդ կարգելու գրոցն իբրև պատմական անհերքե-  
 «լի փաստ հաղորդում են երկրորդ դարի վերջում և երրոր-  
 «դում ապրած եկեղեցական մատենագիրները. — Յուստինոս,  
 «Նեզեսիպոս, Երանոս, Տերտուղիանոս, Կլարիանոս և ու-  
 «րիշները. սրանք մեծ մասամբ անձամբ զալիս էին Հոռոմ և  
 «այնտեղից դուրս էին տանում գոյութիւն հաստատած ա-  
 «ւանդութիւնն. (այսպիսով) հոռոմէական եկեղեցին վաստա-  
 «կում է առանձին յարգանք չաչս քրիստոնէից, և յանձնա-  
 «բարւում է որևէ տարակուսանքի դէպքում՝ նորան զիմել,  
 «որպէս զի գիացուի Պետրոս առաքեալից ծագուածն առնող  
 «խսկական եկեղեցական աւանդութիւնը. Պետրոս առաքեալը  
 «նկատուած է իբրև հաստատութիւն, որի վերայ Քրիստոս  
 «հիմնել է եկեղեցին.— այս հայեացքն արտայայտում են և այն  
 «հեղինակներն, ինչպէս օրինակ՝ եկեղեցու երկու նշանաւոր  
 «հայրերը—Տերտուղիանոս և Կլարիանոս, որոնք առհասա-  
 «բակ սորանից յօգուտ Հոռոմի եպիսկոպոսի որևէ եզրակացու-  
 «թիւն անողներից չեն: Բաւական էր, որ իրողութեան կեր-  
 «պարանք արուեց Պետրոսի՝ հոռոմէական եկեղեցու հիմնադիր  
 «լինելուն և իրան յաջորդ կարգելուն.— Հոռոմի եպիսկոպոսի  
 «եղրակացութիւնը պատրաստ էր: Երկրորդ դարում Հոռոմի  
 «եպիսկոպոսը չէ ցանկանում ընդունել, թէ որևէ ալ եկե-  
 «ղեցում կարող է գոյութիւն ունենալ մի սովորու թիւն, տար-

«բեր հռոմէական եկեղեցու սովորութիւնից, քանի որ ինքն  
 «է, որ դործում է Պետրոս առաքեալից մնացած աւանդու-  
 «թեան հիման վերայ: Երրորդ դարում նա արդէն իրաւունք  
 «է համարում իրան իշխանաբար միջամտել ուրիշ եկեղեցի-  
 «ների դործերում: Զորրորդ դարում «խնամակալութիւն հա-  
 «մօրէն եկեղեցեաց» հռոմէական եկեղեցու պաշտօնական լե-  
 «զուի սովորական տերմինն է դառնում. և նորան համեմատ  
 «հռոմի եպիսկոպոսին արւում է եկեղեցու մէջ զերագոյն դա-  
 «տաւորի իշխանութիւն. մինչդեռ նա ինքը չաչաարարւում  
 «է չենթարկուող և ոչ մի մարդկային դատաստանի: Հինգե-  
 «րորդ դարի առաջին կէսում հռոմէական եպիսկոպոսների  
 «պիսակութիւնը դրւում է վարդապետական հիմքերի վե-  
 «րայ. այսինքն դադարում է պատմական փաստից բղխող սոսկ  
 «տրամաբանական եզրակացութիւն լինելուց և վերածւում  
 «է հաւատի վարդապետութեան աստիճանին: Ե. դարի եր-  
 «կու տիեզերական ժողովներում—Յիսեսոսի 431 թ. և Քաղ-  
 «կեդոնի՝ 451 թ. հռոմի եպիսկոպոսի ներկայացուցիչները  
 «բացարձակ չաչաարարում են, թէ հռոմի եպիսկոպոսն ընդ-  
 «հանուր եկեղեցու պապն է «զլուխ համօրէն եկեղեցեաց».  
 «Կամ թէ՛ «միշտ և ամենքին չաչանի է եղել, որ սուրբ և  
 «ևս-երանեալ Պետրոսն, իշխանն և զլուխն առաքելոց, սիւնն  
 «հաւատոյ և հիմն կաթողիկէ եկեղեցւոյ», մարդկային ազգի  
 «Քալիք և Փրկիչ Տէր Յիսուս Քրիստոսից ստացաւ արքայու-  
 «թեան բանալիներն և կապելու ու մեղաց թողութեան իշ-  
 «խանութիւն. և թէ՛ նա այժմ ևս կայ և դատում է յան-  
 «ծինս իւր չաչորդների» \*):

Պետրոսի երկնատուր դերիշխանութիւնն իրանց սեպհա-  
 կանելուց յետոյ հռոմի քահանայապետները պարաստուեցին  
 փոքր առ փոքր և երկրաւոր իշխանների վերայ ևս տիրա-  
 նալ: Ե. դարում արդէն հռոմէական եկեղեցին հող էր պատ-  
 րաստում այն հայեացքի համար, թէ եպիսկոպոսական աթոռի  
 իշխանութիւնն իւր նուիրականութեամբ առաւել մեծարելի

\*) Римское Папство. стр. 8—13:

է քան կայսերականն. և թէ՛ կայսրը մինչև անգամ պարտա-  
 կան է եկեղեցու իշխանի կամքին անսալ, նորա որոշումը  
 կատարել: Առաջին անգամ հիպպոնի եպիսկոպոս ս. Օղոստի-  
 նոսի բերանով արտայայտուեցին հետեւեալ խօսքերն. «Եթէ  
 «կայսրը հալածում և պատժում է հերետիկոսներին, այդ ա-  
 «նում է ոչ թէ նորա համար, որ իբր թէ ինքն է եկեղեցու  
 «զլուխն և եկեղեցական միութեան բարձրագոյն պահապանն,  
 «այլ նորա համար, որ նա պարտաւոր է կատարել եկեղեցու  
 «հրատարակած կարգադրութիւններն. ըստորում եկեղեցին  
 «ներկայացնողը միմիայն քահանայապետն է և ոչ կայսրը»:  
 «Իսկ Գելասիոս պապը 494 թուին դրում էր Բիւզանդիայի  
 «Սնաստաս կայսրին. «Սշխարհը կառավարում են երկու իշ-  
 «խանութիւններ—եկեղեցականն և թագաւորականն. առա-  
 «ջինն երկրորդից նախանձար է նորա համար, որ եպիսկո-  
 «պոսները նոյն իսկ թագաւորների համար ևս պարտաւոր  
 «են հաշիւ սալ Սատուծուն նորա դատաստանի առաջ: Դու  
 «ինքդ զիտես, որ թէ և դու քո աստիճանով բարձր ես կանդ-  
 «նած բոլոր մարդկանցից, սակայն ցածաբար զլուխդ խոնար-  
 «հեցնում ես քահանաների առաջ և նորանցից ես սպասում  
 «քո փրկութիւնն, որովհետեւ փրկութեան դործում դու պար-  
 «տաւոր ես յամարուել նորանց վեռին և ոչ թէ նորանց հար-  
 «կադրել հնազանդելու քո կամքիդ: Եթէ նորանք ընդունում  
 «են, որ դու ունիս բարձրագոյն իշխանութիւն հասարակաց  
 «կարգ հաստատելու համար, և եթէ հնազանդում են քո  
 «օրէնքներին մարդկային դործերում, ուրեմն դու էլ պար-  
 «տաւոր ես սիրով հնազանդել նորանց, որոնց յանձնուած է  
 «կառավարել աստուածային շնորհների միջոցներով: Եթէ  
 «հաւատացեալները պարտաւոր են իրանց սրտերը հպատա-  
 «կեցնելու քահանաներին, ուրեմն առաւել պարտաւոր են  
 «հնազանդելու հռոմի եպիսկոպոսին, որին ինքն Սատուած է  
 «կարգել բոլոր քահանաներից վեհագոյն. և որին այդ պատ-  
 «ճառով էլ չարզում է ամբողջ եկեղեցու բարեպաշտութիւնը»:  
 Մի քանի տարուց յետոյ Սիմմաքոս պապն էր դրում նոյն  
 կայսրին. «Եթէ դու քրիստոնեայ թագաւոր ես, ուրեմն պար-

«աւար ես համբերութեամբ ունկնդիր լինել ամեն մի եպիս-  
 «կոպոսի ձայնին... Մի՞թէ դու կարծում ես թէ՛ որովհետեւ  
 «դու կաշար ես, ուրեմն և քեզ վերայ Աստուածային դա-  
 «տաստան չկայ. թէ՛ որովհետեւ կաշար ես, ուրեմն կարող ես  
 «հակառակել Պետրոսի իշխանութեանն: Եթէ համեմատենք  
 «միմեանց հետ կաշարի և եպիսկոպոսի իրաւունքները՝ նո-  
 «րանց միջի դանազանութիւնը շատ մեծ է. կաշարի ունե-  
 «ցածը մարդկային է, եպիսկոպոսինը՝ աստուածային»: \*)

Թէ յետոյ օրպիսի չափեր առաւ պապական աթոռի կրօնա-  
 կան և քաղաքական գերիշխանութեան այդ ձգտումն և ճի-  
 պիսի հանդամանքներում իրագործուեց՝ պատմութիւնից  
 յայտնի է:

Իններորդ դարում հռոմէական աթոռի վերայ բազմում  
 է Նիկողայոս Առաջին, միևնույն ժամանակ առաջին թագա-  
 կիր քահանայապետը: Սորանով սկսւում է պապութեան իս-  
 կական զօրութեան շրջանը (թ. — Ժ. դար): Նիկողայոս պա-  
 պը Պետրոսի գլխաւորութեան անսակաւն վարդապետութիւնը  
 վերածեց զործնական իշխանութեան: Նա օգտուելով Կարո-  
 լոս Մեծի յաջորդների միջոցին անդի ունեցած խռովութիւն-  
 ներից՝ յայտարարել էր Արևմուտքում, թէ ինքը ոչ միայն  
 եկեղեցու գլուխ է, այլ գլուխ է և աշխարհի բոլոր թագա-  
 ւորների. այդպէս էլ պահում էր նա իրան արևելեան—չու-  
 նական եկեղեցու ներկայացուցիչների և կաշարի հետ ունեցած  
 դրագրութիւնների մէջ իզնատիոս և Փոտ պատրիարքների  
 զործերի առիթով: Նա մինչև անգամ պահանջեց Միքայէլ  
 կաշարից ժողովել և այրել տայ Կ. Պօլսում այն ամեն զրր-  
 ուածներն, որոնցում ոչ հանելի կերպով էր խօսուած պա-  
 պական իշխանութեան մասին: Նիկողայոսի եռանդին և զոր-  
 ծունէութեան եղանակին համարձակութիւն տուողն եթէ մի  
 կողմից նորա հաստատակամ բնաւորութիւնն էր, միւս կող-  
 մից պատրաստուած և տարածուած բազմաթիւ կեղծ վկայա-  
 գրերն և խարդախուած կանոններն ու վարդապետական

\*) Римское Папство. Կր. 21—22:

զրուածներն էին, որոնք երկրորդ դարից սկսած շարունակա-  
 բար յօրինւում էին, եթէ հարկաւոր էր յօրինել, կամ աղաւա-  
 դում էին, եթէ հռոմին նպաստաւոր զրուածներ չէին. չիշենք  
 օրինակ՝ մի քանիսը: Նիկիական ժողովի Ծ-րդ կանոնի բնագրի  
 մէջ «ոչ դուր և ոչ մի բառ զգերագահութենէն հռովմայ, ի  
 «հռովմէական զրչադրին ընկալաւ զյաւելուած այսպիսի. «Ե-  
 «կեղեցին հռովմայ ունէր միշտ զնախագահութիւն»: Այս  
 «նենգագործութիւն՝ յամօթ նուիրակացն հռովմայ՝ ի վեր  
 «հանաւ ի ժողովին Բագկեղոնի ընթերցմամբ բնագրին»: \*)

— «Թուղթ ժողովոյն Նիկիոյ», չորում հայցէ ժողովն ի  
 «Սեղբեսարոսէ հաստատել զսահմանս իւր. ընդ նմին պատ-  
 «մութիւն ժողովոյն, զոր արարեալ ասի Սեղբեսարոս ի հռովմ,  
 «և սուեալ զհաստատութիւն նորին: Բ. «Յայտարարութիւն  
 «Սեքստոսի Գ.», թէ կաշարն գումարէ ժողովս զօրութեամբ  
 «իշխանութեանն տուելոյ նմա ի պապէն: Գ. «Պատմութիւն  
 «Պօղիքրոնիոսի», որ արդէն յամին 455 համարէր զպապն  
 «դատաւոր արևելեան պատրիարքաց. և Գ. պատմութիւն՝  
 «թէ ճիւղէս ժողովն գումարեալ ի Սեղբեսարոսէ՝ ընկալաւ  
 «զվարդապետութիւն Գելասիոսի՝ թէ հռովմէական գերա-  
 «զահութիւնն ունի զժաղումն աստուածային, և կարգեաց  
 «զդատաւորութիւն եկեղեցեացն Աղէքսանդրիոյ և Անտիօքայ  
 «(զկնի հռոմէականին), լուութեամբ անցանելով զեկեղեցեաւ  
 «Կ. Պօլսոյ»: \*\*)

— Նիկիական Երկրորդ ժողովի արձանագրութիւնը խար-  
 դախուած:

Հողուոյն Սրբոյ և յՈրդուոյ բղխման վարդապետութիւնն,  
 որից արևելեան եկեղեցիները միշտ խորշել են, առաջին ան-  
 դամ պաշտօնապէս ընդունուել է Սպանիայում Տօլէդի 689  
 թուի ժողովում, և այդ ժողովումն էլ առաջին անգամ Կ.  
 Պօլսի Ա. ժողովի հանգանակի մէջ մուծուել է «և յՈրդուոյ»  
 բառը. (հաւատամբ ի հոգին Սուրբ, որ ի հօրէ և յՈրդուոյ  
 բղխի): Սպանիական եկեղեցին ստիպուած լինելով շարունակ

\*) Յանոսի Յաղագս պապին և ժող. նորա 126.

\*\*) Անդ. 128—129.

դիմադրական վիճաբանութիւնն ունենալու արիտսականութեան հետ, որ ստորացնում էր Որդւոյ Աստուծոյ անձն՝ աղանդի ուսմունքն ապազոր դարձնելու համար օգտակար է դաել այդ նոր վարդապետութեամբ Որդւոյ ընդ չօր համագոյութիւնն և համագորութիւնն հաստատել: Այսպիսով չաւելուած առած հանդանակն հաւատոյ Սպանիայի եկեղեցուց ընդունել է և նորա դրացին—գաղղիական եկեղեցին: Թէ վերջինս չատկապէս ե՞րբ է ընդունել հանդանակը յՈրդւոյ (*filioque*) չաւելուածով—չայտնի չէ. բայց երբ էլ լինի՝ չիշեալ հանդանակը մինչև Թ. դարի սկիզբը դեռ ամբողջ գաղղիական եկեղեցում հաստատուած չէ եղել. ըստորում Աքունիսկրանա քաղաքում 809 թուին գումարուած ժողովը Մեծն Կարոլոսի առաջարկութեամբ այդ չաւելուածի ընդունելի-չընդունելի լինելը քննութեան խնդիր դնելով՝ առանձին պատգամաւորութեան միջոցով վերջնական վճիռը խնդրում է Լեոն Գ. քահանայապետից. իսկ սա չկամենալով իւր իշխանութեամբ այդպիսի նոր վարդապետութեան խնդրին վճիռ տալ, ժողով է գումարում չռոմում. բայց ժողովի կարծիքը լսելուց չեսոյ էլ պապն յայտնում է, թէ ինքը հաւանում և հաստատում է չոգուոյն Սրբոյ և յՈրդւոյ բղխման դաւանութիւնը, միայն թէ իրաւունք չէ տալիս չիշեալ չաւելուածը մուծանել հանդանակի մէջ. միևնոյն ժամանակ՝ իրաւունք չէ տալիս այդպիսի չաւելուած կրող հանդանակը գործածել եկեղեցում ժամերգութեան միջոցին: Գաղղիական եկեղեցու պատգամաւորների երկար պնդումներն և առարկութիւններն ոչ մի օգուտ չունեցան, մինչև որ նորանք ձեակերպեցին խնդիրն հետևեալ կերպով.—պապը համաձայն է «և յՈրդւոյ» բղխման վարդապետութեան, բայց հրաման չէ տալիս և «յՈրդւոյ» բառը մտցնել հանդանակի մէջ. և Լեոն Գ. հաստատեց այդ ձեակերպութիւնը: \*)

Թէ որքան ատելի է եղել պապի համար այդ չաւելուածը՝ երևում է պատմութեան բերած այն փաստից, թէ Լե-

\*) Очерки вост. церкв. Виз.—Вост. церкв. 317—320:

ւոն Գ. քահանայապետը հանդանակի հնութիւնն և հարադատութիւնը պահպանելու համար «ես փորադրել դայն առանց չաւելուածոյ՝ չերկուս արծաթի տախտակս, ի միումն լատիներէն՝ և ի միւսումն չունարէն. զորս և հրամայեաց կախել առ զերեզմանի սրբոյն Պետրոսի» \*)

Չնայած Լեոն քահանայապետի տհաճութեան՝ չաւելուածակիր հանդանակը Կարոլոս Մեծի ժամանակից սկսած ընդունելութիւն գտաւ գաղղիական եկեղեցում. իսկ չռոմում իրանում, ինչպէս կարծում են ոմանք, այդ չաւելուածը մինչև անգամ Թ. դարումն էլ դեռ մուտք չէ ունեցել \*\*):

Ահա թէ վերջիշեալ վարդապետութիւնն որքան ուշ է ընդունելութիւն գտնում հռոմէական աթոռից: Բայց մի անգամ արդէն ընդունուելուց չեսոյ կաթոլիկ եկեղեցու պաշտօնեաների գործն է եղել այնուհետև այդ վարդապետութիւնը չընդունող եկեղեցիների մէջ պտրել, որոնել ամեն մի գրուածք, որպէս զի ուր հակառակ խօսուած կլինի—չնչել, փոփոխել. ուր ոչ մի խօսք էլ չի լինի—կեղծել, աւելցնել, ցոյց տալու համար, թէ ոչ մի եկեղեցի հակառակ չէ եղել այն վարդապետութիւններին, ինչ որ չռոմն է սահմանել, չռոմն է ընդունել:

Այդպէս վարուել են և Նիկիայի Բ. ժողովի արձանագրութեան հետ: Ժողովն 787 թուի հոկտեմբերի 13-ի նիստում կրկնում է Նիկիայի Ա. և Կ. Պօլսի Ա. ժողովի հանդանակները. և ահա ժամանակին թէ լատինական թարգմանութեան մէջ զրոււմ է իբրև ժողովի ընդունած չաւելուած Կ. Պօլսի հանդանակին «և յՈրդւոյ» բառը, և թէ վերջում մի չունական ձեռագրի մէջ, որ կարդացուած է Մլորենցիայի ժողովում 1438 թուին: Սակայն նոյն իսկ Կաթոլիկ եկեղեցու աստուածաբանների մէջ եղել են այնպիսիներն, որոնք չիշեալ ժողովի արտասանած հանդանակն այդ չաւելուածից ազատ են համարել: Նէֆէլէն ասելով, թէ ժողովը կրկնեց Նի-

\*) Պատմ. եկեղ. իգն. Փափաղ. 383: Օւերքու 320:

\*\*\*) Օւերքու ցույց. Իւտ. և այլն. 320:

կիա—Կ. Պօլսեան հանդանակն, աւելցնում է «առանց յՈրդ-  
ւոյ» (*sans le filioque*. Դ. 363):

Բայց հռոմէական եկեղեցում պատրաստուած և տարա-  
ծուած կեղծ վկայագրերի կամ փաստաթղթերի մէջ ուշադրաւ  
է ծանաւանդ Կոստանդիանոս Մեծի անունով յօրինուած պար-  
զեազիրն, որ կոչուած է *Donatio Constantini Magni*: Կ. Պօլ-  
սի Միքայէլ Կերուլարիոս պատրիարքի Արեւմուտք ուղար-  
կած (1053 թ.) նամակին պատասխանելով՝ Լեոն Թ. պապն  
ի հաստատութիւն հռոմէական աթոռի գերիշխանութեան ի  
միջի այլոց բերում է և այդ պարզեազիրը: «Որպէս զի որեւէ  
«տարակոյս չմնայ Հռոմի քահանայապետի աշխարհական իշ-  
«խանութեան նկատմամբ, գրում է պապը Կերուլարիոսին, և  
«որպէս զի ոչ որ չճտածի, թէ Հռոմէական եկեղեցին իրան  
«չատկացնում է չունեցած պատիւր, մենք չառաջ ենք բե-  
«րում ապացոյցներ այն արածնաբաշխ հրովարտակից, որը  
«Կոստանդիանոս կաշարը իւր ձեռքով զրել է երկնքի բանա-  
«լիները կրողի (Պետրոսի) սուրբ գերեզմանի վերայ,—Թող  
«չայտնուի ճշմարտութիւնն և չքանայ նանրութիւնը»: Յիշ-  
«եալ արածնաձիր հրովարտակում Կոստանդիանոսը, պապի  
«ասելով՝ չայտարարել է հետեւեալն. «օրտակար համարեցինք  
«մենք մեր բոլոր կուսակալների, սենաթի, իշխանների և Հռո-  
«մէական ժողովրդի հետ միասին, որ՝ ինչպէս ս. Պետրոսն  
«եղել է փոխանորդ Որդւոյ Աստուծոյ չերկրի, նոյնպէս և ա-  
«ռաքելոց իշխանի ժառանգները—քահանայապետներն ունե-  
«նան զլիսաւոր իշխանութիւն.— և մինչև իսկ առաւել քան  
«որչափ յատկացած է երկրաւոր կաշսերական մեծութեան:  
«Յատկապէս սահմանում ենք չերմեռանդորէն մեծարել ինչ-  
«պէս մեր էրկրաւոր կաշսերական իշխանութիւնը, նմանա-  
«պէս և Հռոմէական սրբազնասուրբ եկեղեցին. և որպէս զի  
«քահանայապետական աթոռը գերիվերոյ լինի մեր սեպհա-  
«կան երկրաւոր դահից՝ բնծայում ենք նորան արքայական  
«իշխանութիւն, մեծութիւն և պատիւ: Ընդ սմին սահմա-  
«նում ենք նաև, որ Պետրոսի աթոռը չորս աթոռների վե-  
«րայ—Ալէքսանդրիայի, Անտիօքի, Երուսաղէմի և Կ. Պօլսի

«—զլիսաւորութիւն ունենայ, որպէս և երկրազնդի բոլոր ե-  
«կեղեցիների վերայ: Հռոմէական աթոռի քահանայապետը  
«միշտ պիտի համարուի բովանդակ աշխարհի բոլոր քահանա-  
«ներից գերադոյն և փառաւորագոյն և նորա վեհոր հաւա-  
«տի և աստուածաշտական խնդիրներում թող իշխի բոլորի վե-  
«րայ»: Այնուհետև պապը նկարագրում է թէ Կոստանդիանոսն  
«չատկապէս ինչով է պարզեաւորել իրան ժամանակակից Սեղ-  
«բեստրոս պապին, պապական աթոռի շուքն աւելցնելու նպա-  
«տակով... Նա բնծայել է Սեղբեստրոսին նախ՝ արքունական ա-  
«պարանք Հռոմում: Արտոնաձիր հրովարտակում այդ մասին,  
«քստնամակի Լեոն պապի՝ ասուած է հետեւեալը. «Տալիս ենք ս.  
«առաքեալներին իրանց—ևս-երանեալ Պետրոսին և Պօղոսին,  
«և նորանց միջնորդութեամբ մեր հօրը, Սեղբեստրոս պա-  
«պին և նորա բոլոր յաջորդներին, որոնք նստելու են ս.  
«Պետրոսի աթոռի վերայ ցկատարած աշխարհի—Լատերանի  
«արքունի ապարանքն, որ աշխարհի բոլոր ապարանքներից  
«գերադանց է»: Ապա Կոստանդիանոսը զարգարում է... Հռո-  
«մի քահանայապետի անձը արքայական նշաններով... «Ըն-  
«ծայում ենք Հռոմի պապին մեր սեպհական թաղը, վտակա-  
«ներն, որոնցով զարգարում է կաշսերական պարանոցը, ժի-  
«րանի քղամիղը, ժիրանի պատմութեանն և միւս բոլոր ար-  
«քայական զգեստները. բաշխում ենք նորան մեր կաշսերա-  
«կան գալիստոնն և շուքի միւս բոլոր նշաններն և փաթոյթ-  
«ները.—մի խօսքով՝ այն ամենն, ինչ որ պատկանում է  
«կաշսերական մեծութեան»:

«Պապի նամակն ասում է նաև, թէ կաշարը կամեցել էր  
«իւր ձեռքով ի զլուխ պապի դնել իւր թաղը, բայց «պապը  
«չէ կամեցել դորձածել ոսկեղէն թագ. դորա համար էլ կաշ-  
«արը իւր ձեռքով զրել է նորա զլիսեն իւր փոխեղիական  
«թաղը, որ փայլում է սպիտակութեամբն և նշանակ է  
«Քրիստոսի յարութեան»: Նոյն նամակի խօսքերով՝ Կոստան-  
«դիանոս զարգարելով պապին արքայական շքանշաններով՝  
«կամեցել էր դորան համապատասխան և պապի շքաղիր եկե-  
«ղեցականներին շնորհել արքայական պալատականներին հա-

«Լասար պատիւ: Այդ մասին էլ ահա թէ հրովարտակր, նա-  
 «մակի ասելով՝ ի՞նչ էր օրինադրում. «Հոռոմէական եկեղեցու  
 «ծառայող բոլոր աստիճանի յարդոյամեծար կղերականներին  
 «ամբառնում ենք իշխանութեան և փառաւորութեան այն  
 «բարձրութեանն, որի վերայ զտնւում է մեր սենաթն. և  
 «հրաման ենք տալիս նորանց զարգարուել այնպէս, ինչպէս  
 «զարգարւում են մեր պատրիկներն և հիւպատոսները: Միով  
 «բանի՛ւ ինչպէս շքեղազարդուում են կայսերական զրանիկները,  
 «նոյնպէս շքեղազարդուեն և հոռոմէական եկեղեցու պաշաօ-  
 «նեաներն: Եւ ինչպէս կայսերական իշխանութիւնն ունի զանա-  
 «զանակարգ սպասաւորներ, — անկողնաչարգար, զոնապան և  
 «պահնակ, նոյնը պիտի լինի և հոռոմէական ս. եկեղեցում: Եւ  
 «դարձեալ. պապական արժանապատուութեանն անհամեմատ  
 «աւելի փայլ տալու համար թող եկեղեցականները տապ-  
 «ճակներով և սպիտակագոյն գործուածքներով զարգարուած  
 «ծիերի վերայ նստած շրջեն, և թող կրեն ճիշդ այնպիսի  
 «կօշիկներ, որպիսիքը սենաթականներն են գործածում: Եւ  
 «այսպէս՝ թող երկնային (պապական) իշխանութիւնն երկրա-  
 «ւորի (կայսերական) նման պճնազարդուի ի փառս Աստու-  
 «ծոյ»: Պապի անձի և նորան մերձ գտնուողների մասին հո-  
 «զատարութիւն չանձն առած լինելով՝ Կոստանդիանոսն, ինչ-  
 «պէս գրում է Լևոն թ., ընծայում է Սեղբեստրոսին, նորա  
 «հետ և նորա ժառանգորդներին, իրական ընդարձակ թա-  
 «ղաւորական իշխանութիւն հոռոմէական ամբողջ կէս թաղա-  
 «ւորութեան վերայ. հոռոմի քահանայապետը դառնում է և  
 «հոռոմի կայսր: Հրովարտակր, պապի ասելով՝ այդ մասին  
 «սահմանում էր. «Որպէս զի քահանայապետական իշխա-  
 «նութիւնը չնուազի, այլ զօրանայ բուն կայսերական իշխա-  
 «նութիւնից աւելի, որոշեցինք պարզել մեր հայր Սեղբես-  
 «տրոսին Լատերանի ապարանքից զատ հոռոմ քաղաքն, Ի-  
 «տալիայի նահանգներն և բովանդակ արեւմտեան կողմերն և  
 «նորանց միջի բոլոր տեղերն ու քաղաքները լիակատար ար-  
 «նօրինելու և տիրելու (իրաւունքով)» \* 58):

\* История разд. церквей 329—331:

Ակներև է Դաշանց թղթի նմանողութիւնն այս ընծայա-  
 դրին. տեղ-տեղ մինչև անգամ փոխառութիւն: Մէկու՛մ,  
 օրինակ՝ Կոստանդիանոսն է Սեղբեստրոսին կարգում չորս  
 պատրիարքական աթոռների զլիաւոր. միւսու՛մ՝ Սեղբեստ-  
 րոսն է այդ զլիաւորութիւնը տալիս Հայոց Լուսաւորչին.  
 այսպէս են և կայսերական պարզւելներն և այլն:

Այլ ևս աւելորդ ենք համարում մէջ բերել զանազան  
 սրբութիւններ կամ նուիրական առարկաներ, հոռոմէական  
 եկեղեցուն յատկացնելու համար յօրինած զրօյցներն և ա-  
 ւանդութիւնները: 42 ծանօթութեան մէջ համառօտաբար  
 ծանուցել ենք, թէ չիշեալ եկեղեցին փրկչական քանի՞ զաս-  
 տառակներ ունի և որպիսի ծագումն է ընծայում նորանց:

Հին և միջին դարերի հայ մատենադրութեան կրօմ ան-  
 հարազատութիւններն երկու տեսակի պէտք է բաժանել. ա-  
 ռաշին՝ այնպիսիների, որոնք իրանց ծագումով և անուծով  
 պարտական են թէ ժամանակի ընդհանուր հասկացոյթեան  
 պահանջին և թէ այն շարժառիթներին, որոնց մասին նա-  
 խապէս առիթ ունեցանք խօսելու. երկրորդ՝ այնպիսիների,  
 որոնք ոչ նմանողութեան օրէնքի և ոչ ընտելացած հասկա-  
 ցողութիւնների ներքին պահանջներ են, այլ բուն պատուաս-  
 տի արդիւնք: Առաջիններին հարկ չենք համարում առանձին  
 տեղ տալ այժմ, քանի որ նախ՝ մինչև այժմ, որքան պէտք է  
 եղել, մատնացոյց ենք արել այդպիսիներն, և այսուհետև էլ  
 առիթներ կունենանք նոյնն անելու. երկրորդ՝ որ վերջին ժա-  
 մանակների պատմական և բանասիրական հետազօտութիւն-  
 ները շատ ու շատ բան որոշել, պարզել են: Միւս տեսակի—  
 օտարապատուաստ կեղծիքների, աղճատումների և չաւելում-  
 ների վերայ կամենում ենք կանդ առնել, բտտարում դորանք  
 են, որ մինչև այսօր շատ փոքր բացառութեամբ կամ միան-  
 դամայն աննկատելի են մնացել պատուաստող ձեռքերի փար-  
 ժութեան շնորհիւ, կամ՝ եթէ նկատողներ եղել են, թողել-  
 անցել են, զգուշացող երկիւղածութիւնից թելադրուած: Այս  
 երկու հանգամանքների պատճառով այդ կեղծիքները կրելով  
 իրանց վերայ հնութեան այս կամ այն հեղինակաւոր կամ

յարգելի անուն՝ առթի են տուել պարզամիտների դալթակ-  
 դուլթեան և թիւրիմացութեան. և յառաջ բերել շօշափած  
 խնդիրների նկատմամբ տարակուսական, թեր ու դէմ տեսու-  
 թիւնների հարուստ գրականութիւն: Ինչպէս յայտնի է մեր  
 պատմութիւնն ուսումնասիրող ընթերցողներին, Քաղկեդոնի  
 ժողովից յետոյ չունական շարաբերութիւնները փոքր առ  
 փոքր խստացած թշնամութեան և հալածանքների փոխուե-  
 լով դէպի հայերը՝ վերջիններիս դնում են ինքնապաշտպա-  
 նութեան հարկի մէջ, որից ծնունդ են առնում կրօնական  
 բացատրութիւններ և վիճաբանութիւններ, որոնք եօթը դար—  
 Ե.—ԺԲ.—շարունակ զխաւորապէս ամփոփուած էին ի Քրիս-  
 տոս մի և երկու բնութիւն ասող վարդապետութիւնների,  
 իսկ մասնաւորապէս և մի քանի ծիսական խարութիւնների  
 վերայ, ինչպէս են,—բազարչ հացով և անխառն զինով պա-  
 տարապելը, Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօները միա-  
 սին մի օրում կատարելը, հիւանդներին իւզով չօծելը, «Սուրբ  
 Աստուած» երգի մէջ երեք անգամ «որ խաչեցար» կրկնելը,  
 խաչն առանց օծումի ի պաշտօն կամ չերկրպագութիւն չառ-  
 նելը: Սորանց վերայ Թ. դարից աւելանում է և պատկեր-  
 յարգութեան խնդիրը: Այդ կրօնական խնդիրների արծարծ-  
 ման չափովն էլ չիշեալ շրջանի հայ մատենագրութիւնն ըն-  
 դարծակում է իւր բացատրութիւնների և վարդապետական  
 հականառութիւնների ծաւալը:

Բայց ուշադրութեան արժանի է մի բան.—այդ երկա-  
 րատե ժամանակամիջոցի հայ մատենագրութեան կրօնական-  
 վիճաբանական բաժնում բացի պատկերյարգութիւնից միւս  
 եկեղեցական խնդիրների նկատմամբ չենք գտնում մի գրուածը  
 կամ ընդմիջարկութիւն, որ չունական կողմից կազմած ու  
 պատուաստած կեղծիք համարելու իրաւունք տար: Պատկեր-  
 յարգութեան մասին էլ շատ բան չենք գտնում. մի ճառ «ընդ-  
 դէմ պատկերամարտից» Վրթանէս Քերթոյին ընծայուած.  
 մինը՝ Յովհան Մալբախեցուն և մի հատուած՝ կեղծ-Իսաւ-  
 րացու նամակում: Սորանք էլ, բացի կեղծ—Իսաւրացու նա-  
 մակից,—որի մասին մեր կարծիքը յայտնել ենք 7-րորդ ծա-

նօթութեամբ,—չենք կարող որոշակի մի կողմի օտարապա-  
 տուաստ անհարազատութիւններ անուանել. կարող են լինել  
 և չունական և լատինական ծագում ունեցողներ, կարող են  
 լինել և առաջնատեսակ կամ տեղական կեղծիքներ, քանի որ  
 հայաստանի մի քանի նահանգներում, Յունաստանի հետ ու-  
 նեցած անմիջական կամ մօտիկ շփումների ազդեցութեամբ  
 Թ.—Ժ. դարերում, ինչպէս տեսանք, երևում են մի քանի  
 պատկերներ իբրև յարգութեան առած սրբութիւններ, որոն-  
 ցից երկուսի ծագման մասին մինչև անգամ յօրինուեցին իր-  
 րև տեղական պահանջներ մի գրոցը՝ Մ. Խորենացու (Եօջըր  
 մի հաւրնօրի մէջ Մանդակունու) անունով, և մի ընդմի-  
 շարկութիւն՝ Ղևոնդի Պատմութեան մէջ: Առաջինը նկատա-  
 ութեան առարկայ եղած է վերևում, երկրորդը կլինի փոքր  
 ինչ ներքև: Փրկչական դաստառակի համար էլ այդ ժամա-  
 նակից երևում են յաւելումներ կամ ընդմիջարկութիւններ  
 հայ պատմիչների գրուածներում:

Տասնևմիերորդ դարի վերջում հայոց եկեղեցուն մօտե-  
 նում է մի երկրորդ պահանջող—հոսմի աթուր: Վիրջինիս  
 պահանջներն եղածների վերայ 59) աւելցնում էին երեք նոր  
 խնդիրներ. մէկը, որ պապական աթուռի համար միշտ առա-  
 ջին տեղն է բռնել՝ Պետրոսի և նորա յաջորդների զխաւոր-  
 ութեան ու կապելու և արծակելու բացարձակ իշխանու-  
 թեան խոստովանութիւնն էր. մնացած երկուսը՝ հողոյն  
 Սրբոյ և յՈրդոյ բղխման ու քաւարանի վարդապետութիւնները:

Սրդէն տեսանք, թէ Միջադեպում հաստատուած լա-  
 տինական քարոզիչներն ինչե՞ր կատարեցին համամիա հայ  
 կրօնաւորների գործակցութեամբ: Նախ քան մեր խոստման  
 համածաշն նորից նորանց գործունէութեան թողած հետքե-  
 րին անցնելը կարևոր է տեսնել, թէ առհասարակ կաթոլիկ  
 քարոզութեան գործը, Միջադեպից և Կիլիկիայից դուրս,  
 բուն հայաստանի հողի վերայ ե՞րբ է երևան դալիս, ո՞րպի-  
 սի ծաւալ է ստանում, և ո՞րպիսի արդիւնքներ է տալիս:

ԺԳ. դարում Անի քաղաքում երևում են Թրանցիսկեան  
 կարգից 5—6 քարոզիչ—կրօնաւորներ: Դորանք գալիս երե-

ուում էին իբրև պապի դեսպաններ, որ պիտի զնային, ներկայանային Թաթարների Խանին. բայց՝ ուր որ մտնում էին, մնում էին առ ժամանակ, ուսումնասիրում բնակիչների կրօնական շրմեռանդութեան և եկեղեցականների մտաւոր կարողութեան չափն, հաստատում, որոնց հետ պէտք էր, ծանօթութիւն, և ապա անցնում զնում Խանի մօտ. ու մատուցանելով յանձնարարական նամակներն և մեծազին ընծաները՝ զրաւում էին նորա հանութիւնն և ստանում զործելու ազատութիւն և ապահովութիւն, և ապա հաստատում երկրի զխաւոր կեդրոններում և սկսում իրանց զործունէութիւնը: Հռոմի աթոռը հաստատելով բարեկամական յարաբերութիւններ Թաթարական տիրապետողների հետ՝ այնուհետև անպակաս էր անում նորանց մօտից իւր ընծաչաբեր դեսպաններին կամ ներկայացուցիչներին, որոնք արքունիքի և նորան շրջապատողների վստահութիւնն ու համակրութիւնը զրաւելով՝ դառնում էին նորանց խորհրդատուներ: Այդքան յաջողութիւնն արդէն բաւական էր նորանց, որ իրանց առաքելութեան զործին արգելք կամ երկիւղ ազդող մրցութիւններ նկատած գէպքում հակառակորդներին կասկածելի ներկայացնելով իշխանաւորների առաջ՝ հեռացնել, կոտորել, ջնջել տային: Այդպէս վարուեցին նորանք ԺԳ.—ԺԷ. դարերի ընթացքում Ասորի—Քաղզէական եկեղեցու ներկայացուցիչների հետ Միջին—ասիական երկիրներում և Չինաստանում, որոնցում չիշեալ եկեղեցին շատ վաղուց սկսել էր քրիստոնէութիւնը արածել, և դարերի ընթացքում բազմաթիւ տանարներ և մետրապօլիտական աթոռներ ունենալ: Ըստ ասորական աւանդութեան՝ զեռ Գ. դարի սկզբում Սմրղանդ և Չինաստան ասորի մետրապօլիտներ էին ուղարկուում. իսկ 630 թուին նեստորական մետրան Առքէնը բողոքիսանի պալատում ընդունւում էր ամենամեծ յարգանքով և պատիւներով \*): Երկար ժամանակում այսպիսի ամուր և ազդեցիկ զիբք ու ընդարձակ ծաւալ ունեցող եկեղեցին, որ անչազ-

\*) Современ. бытъ и жизнь Христ. востокъ 173—174:

թելի զօրութիւն էր ներկայացնում քրիստոնէական միւս դաւանութիւնների քարոզիչների դէմ 60), ապալուեց լատին քարոզիչների ձեռքերով:

Անի քաղաքում էրևեցած քարոզիչներն, հաւանօրէն՝ և իրանց յաջորդող կրօնաւորները Շիրակում սկսելով իրանց զործունէութիւնը՝ տարածել են և ուրիշ կողմեր, մինչև Վրաստանի Տփլիսի մայրաքաղաքը, փոքր ժամանակում նըշմարելի յաջողութիւն գտնելով: Այդպէս պէտք է հասկանայ Ստ. եպիսկ. Օրբելեանի առ Գր. Անաւարդեցին զրած թղթի հետևեալ խօսքերը. «Հասաւ մինչև առ մեղ, չի քարոզի այս «չայտնապէս ի թաղաւորական քաղաքն ի Տփլիս, և ի հին «տունն Բաղրատունեաց, յԱնի և ի Շիրակ»: Այդ խօսքերն ի նկատի ունենալով և հ. Ղ. Այիշանն՝ ասում է. «Ընդ զրու- «նրս Անոյ և ընդ պողոտայս՝ յայտ է թէ ոչ միայն բնիկ- «քրն... մուտ և ելս առնէին, այլ և եկր ի բազում աշխար- «հաց, թէպէտ ի պատնառս վանառականութեան և թէպէտ «տարապէմ ուղևորութեանց. որպէս և դալուստ վերոյիշեալ «քարոզիչ դեսպանին (Թիւպրիւքեալ), որ և յառաջ քան զին- «քրն կէալս անդ եղիտ հինգ այլս չիւրոյ կարդէն քարո- «զիչս, ընդ նոյն ճանապարհ ի Թաթարս ուղղեալ, թուղթս «ընծայականս ունելով ի քահանայապետէն Հոովմայ: Ի չիշ- «ման սոցին, թէև ի հարևանցի, արժան է չիշել և զկրօ- «նական ծանօթութիւնս և ընտելութիւնս ընդ արևմտեայց, «որ՝ որպէս ի տունն Կիւլիկիոյ գայնու ժամանակաւ՝ եմուտ «և ի մեծ կեդրոնս յայս Հայութեան, ըստ տհանութեամբ «իմն վկայելոյ Սանփանուի Ուուպելեան, որ ոչ միայն յԱնի՝ «այլև ի Շիրակ ասէ զնոյն ծաւալեալ»: \*)

Տասնևչորսերորդ դարի սկզբում Հայաստանի մի այլ կողմում հաստատում է հռոմէական քարոզիչների մի նոր խումբ, որ մինչև այդ ժամանակ յայտնուածներինց գերազանցում է իւր համարձակութեամբ և չանդուղն ընթացքով:

Ի՞նչպէս և ի՞նչ տեղին յայտնուեցին զորանք: Այս մասին անա թե ինչ գիտենք.—1318 թուականին պապի հրա-

\*) Շիրակ. եր. 92.

մանով Պարսկաստանի Սարգատական նահանգն է դալիս և Մարաղայի մօտ բնակութիւն հաստատում Բարդղղիմէոս լատին եպիսկոպոսն «ի կարգէ քարոզողաց», որ այդտեղ պիտի քարոզէր, և այդտեղ էլ զնէր իւր արքեպիսկոպոսական աթոռը: Դեռ տարին չէր բոլորել նորա գալու և քարոզելու օրից, որ նորա անունն և բարի համբաւը տարածուած են հեռաւոր տեղերը. հասնում են և Սյրարաան նահանգի չաչ եկեղեցականներին, որոնցից մէկը, Եսայի վարդապետ Նչեցի, որ յայտնի էր վարժապետ կոչմամբ, յանձնարարում է իւր աշակերտ Յովհան Վ. Քոնեցուն զնալ Բարդղղիմէոսի մօտ և «տեսանել թէ որպիսի իցէ վարդապետութիւն նորա»: Քոնեցին զնում է, տարի ու կէս մնում է չիշեալ եպիսկոպոսի մօտ, նորան հայերէն լեզու է սորվեցնում, ինքն էլ նորանից լատիներէն լեզուն է սովորում: Շատ շուտով դալիս հասնում է այդտեղ և մի ուրիշ չաչ վարդապետ Յակոբ անունով, յայտնի չէ թէ որտեղից եկած: Եւ այս խումբը,—Բարդղղիմէոս իւր հետևորդներով և Յովհան ու Յակոբ վարդապետները, Մարաղայից փոխադրուած են Երնշակ գաւառի Քոնա աւանն, որ Սիւնիք, Սյրարաա, Վասպուրական և Պարսկահայք նահանգների սահմանամէջ և սահմանամօտ տեղ է բռնում: Սորանց այստեղ գալու առաջին տարին իսկ դալիս հաւաքուած են չաչ վարդապետներ զանազան կոզմերից և կազմում մի բազմանդամ միաբանութիւն քարոզչական, որ իւր սկզբնաւորութիւնից 15 տարի յետոյ պապի հաստատութեամբ կոչուած է «Իոմինիկեան քարոզիչ ունիթօնների կարգ»:

Յայտնի բան է, ոչ այսքանն այդ քարոզիչների ծագման պատմութիւն կարելի է համարել, և ոչ էլ կարծել, թէ նորանց զործունէութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնն այն է տալիս, ինչ որ իսկապէս անցել—գարծել է: Մենք ունիթօններին նանաչում ենք միմիայն իրանց առած աղբիւրներով. և նանաչում ենք այնքան, որքան իրանք են կամեցել ծանօթացնել:

Հրդեհն ոչ կարող է ծագել առանց կայծի, ոչ կարող է անշիջանելի դառնալ առանց զիւրապառ նիւթերի: Պատմական խոշոր անցքերն էլ ոչ կարող են ծնունդ առնել առանց

նախապատրաստող պատճառի, ոչ կարող են աճել ու բարդաւանել առանց սննդարար հողի: Չափաչանց միամտութիւնը կարող է հաւատալ, թէ մի լատին եպիսկոպոս Պարսկաստան մտնելով հէնց առաջին տարում այնպիսի համբաւ է ստանում, որ հեռաւոր չաչոց վանքերին զարմանք է պատճառում, և նորանցից մէկի ուսուցիչ վարդապետի յանձնարարութեամբ աշակերտ Քոնեցին զնում է իմանալու, թէ ի՞նչ բան է նորա քարոզած վարդապետութիւնը: Գնացողն հազիւ տեղ է հասել, և ահա ետեւից դալիս հասնում է մի ուրիշն էլ. և այս երկուսը տարի ու կէս մնալուց յետոյ ինքնիշխան վստահութեամբ որոշում-վճռում են պապից նշանակուած արքեպիսկոպոսական աթոռը տեղից փոխել—Պարսկաստանից տանել զնել Քոնա դիւղում: Եւ որոշածն իսկոյն կատարում են: Քոնա հասնելն էր հարկաւոր. և ահա իսկոյն ժողովում դալիս են նորանց մօտ շատ չաչ վարդապետներ—որտեղից ասէք եկածներ—Ոճոպեցի, Ծուանցի, Բասենցի, Արտաղեցի, Կաղզուանցի, Խաչենցի և այլն: Եւ այս ժողովուածներն եկել են ոչ թէ հետաքրքրութիւնից շարժուած՝ «տեսանել թէ որպիսի իցէ վարդապետութիւն» լատին եպիսկոպոսի, այլ պատրաստուած եկել են նոյն վարդապետութիւնը քարոզելու և տարածելու չաչերի մէջ: Եւ դործն իսկոյն ըսկրսում է: Բարդղղիմէոսն իւր թեմումն է, իւր արքեպիսկոպոսական աթոռի վերայ բաղձած, իսկ չաչ կրօնաւորները զնացել, մտել են զանազան զաւառներ և նոյն իսկ հեռաւոր երկիրներ, ու քարոզում են այն վարդապետութիւնն, որի մասին երկու տարի յառաջ հասկացողութիւն չունէին, և մարդ էին ուղարկում հասկանալու համար:

Ամեն զանք և զզուշութիւն զործ է գրուել իսկական եղելութիւնները թաղցնելու:

Չարմանալի և մինչև իսկ անբացատրելի կլինէին այն արագութիւնն և յաջողութիւնն, որոնցով ուշադրութիւն է զրաւում չիշեալ քարոզիչների զործունէութիւնն, եթէ նայէինք նորա վերայ վերոյիշեալ պատմուածքի ներկայացրած ակնոցի միջնորդութեամբ:

Մենք այդ քարոզիչներին նոր սերմանացաններ չենք համարում, այլ սերմանածն ու ծլածը մշակողներ: Տեսանք, թե առաջին սերմանողներն եղան Միշագետքում հաստատուած լատին միսիոներներն, որոնք զործեցին թէև անաղձուկ և շատ զգուշաւոր ծածկամտութեամբ, բայց դարձեալ ունեցան հետեւողներ հայկական մի քանինահանգներից. այնպէս որ 1898 թ. ներսէս Լամբրոնացին լիշում էր, թէ ո՞ր նահանգում և ուրքէ՞ր կան իւր շանքերին համամիտներ և համակրողներ: Սչնուհեաւ՝ ժ. Գ. դարում յայտնուեցին մի խումբ քարոզիչներ, որոնք զործել սկսեցին Շիրակի գաւառում և շուտով տարածուեցին զանազան կողմեր, կարճ միջոցում աչքի բնկնելու չափ արդիւնաւոր անելով իրանց քարոզութիւնն. այնպէս որ արտունջների և վրդովմունքի առարկայ դարձան: Ահա այս միսիոներներն էին, որոնք դարերի ընթացքում շարունակելով իրանց զործունէութիւնը՝ մտքեր ընտելացրին իրանց վարդապետած սկզբունքներին, և այսպիսով պատրաստեցին համակրողներ և հետեւողներ Հայաստանի զանազան կողմերում: Միշտ հաւատարիմ իրանց ուղղութեանն և զործելու եղանակին՝ այդ քարոզիչները հեղաբարոյ և համեստ կրօնաւորներ էին, երբ մտան Հայաստան, ինչպէս սկզբում երևում են ամեն տեղ. իսկ երբ սակաւ առ սակաւ տեղացի եկեղեցականներէց հասցրեցին, կայմեցին վստահելի կամաւորների քիչ ու շատ ոչժ ներկայացնող թիւ՝ այնուհետև Հայոց եկեղեցուն պատերազմ յայտարարելու ժամը հասած էր: Սչսպէս ուրեմն՝ Հայ ունիթօռները Միշագետքի և Շիրակի լատին քարոզիչների հասցրած պտուղներն էին, որոնց և հանեցին կռուի դաշար: Մի դեկավարող զորապետ իս էր հարկաւոր այդ կամաւորների գնդին, նշանակուեց Բարդղիմէոս եպիսկոպոսն, որ Պարսկաստանի Ատրպատական նահանգը գալով և կեդրոնական իշխանութիւնից զործելու թույլտուութիւն առնելով՝ հրաւիրեց իւր մօտ արդէն պատրաստ և հրամանի սպասող Հայ կրօնաւորների գլխաւորներին. որոնց հետ խորհրդակցելով զործունէութեան շարժար կեդրոնի և սկզբնական ձեռնարկութեան մասին՝ եկան մտան Երնշակ, մանրամասնութիւնները

միւսների հետ միասին մշակելու համար: Սորանց զործելու ուղղութիւնն և ծրագիրը առողջ պապական աթոռն էր. իսկ զործի զնողները, հրահանգողներն և միջոցներ ցոյց տուողներն այն լատին կրօնաւորներն էին, որոնք իբրև պապական զեսպաններ ասիական տիրապետողների մօտ՝ անպակաս էին Արևելքի զանազան կողմերէց. և պարզամիտ արևելցիքն, Յակոբ կաթողիկոսը «զեսպան առաքեալ առ պապն հռովմայ՝ «աղաչեաց զնա, զի զրեսցէ յանդիմանութիւն առ խռովիչս «հայոց, և առ արևելեան լատինս զրգօիչս նոցա և զսպեսցէ «գնուա»: Պապն ի հարկէ յանդիմանել չէր կարող իւր կամքն և հրամանը կատարողներին. բայց Հայոց կաթողիկոսի միամբտութիւնը չխախտելու համար «զրեսաց և ազգ արար այնց լատինացուց արևելեաց» վարիլ զգուշութեամբ»: Պապն ինքն արդէն այնքան շեղմ աշակցութիւն էր ցոյց տալիս Հայերին «ուղղափառութիւն» քարոզողներին, և այնքան հետաքրքրուած էր նորանց զործունէութեամբ, որ բացի Արևելքում ունեցած աչալուրջ զործակատարներից՝ իւր քահանայապետական դրանն էլ մշտապէս ունէր ունիթօռների մի քանի ներկայացուցիչներ, նորանցից ուղղակի տեղեկանալու զործի մանրամասնութիւններին և հարկաւոր կարգադրութիւններն անմիջապէս անելու համար. բաւական էր, որ այդ ներկայացուցիչներից մէկն ու մէկը զեկուցանում էր, թէ՛ «մեք «ամենայն իրօք հնարիմք դարձուցանել զազգն ի մուրուրութենէ յուղղափառութիւն, և գհերձեալս միաւորել ընդ «կաթողիկէ եկեղեցուց». բայց Կիլիկիայի Հայոց թագաւորն և կաթողիկոսը մեզ արգելք են լինում.—այլքանը բաւական էր, որ քահանայապետը զաչրոյթով լցուած՝ թագաւորից և կաթողիկոսից բացատրութիւններ պահանջէր և սպառնալիքներ կարգար: Եւ տհա թէ սպառնալիքն էլ ի՞նչ էր և ի՞նչ զօրութիւն ունէր: Կիլիկիայի Հայ իշխաններն և թագաւորներն հռոմի պապերի և նորանց խաչակիր բանակների վերայ յոյս դրած իբրև բրիստոնեայ անկասկածելի զաշնակիցների՝ իրանց անհեռատեսութեամբ իսկական դաշնակիցներին դաւանանեցին և նորանց վրէժխնդրութեան ենթար-

կեցին իրանց փոքրիկ տէրութիւնն, որի կործանման նշաններն հետզհետէ աւելի ակնշատնի էին դառնում: Սարսափով նկատելով իրանց ոտքից մի քալ հեռու բացուած անաղին անգուճը՝ հայ թագաւորներն աղաչանք-պաղատանք էին ուղարկում քահանայապետներին, որ օգնութեան հասնեն. իսկ փոխարէնն ստանում էին քահանայապետների մխիթարական խօսքերն և այն մեծ շնորհը, որ թշնամեաց զէնքից սպանուածներին առատաձեռնել էր խոստանում սրբազան պապը «առաքելական իշխանութեամբ» նորանց մեղքերին թողութիւն շնորհելով՝ ապահովել նորանց «վարձուց հատուցումն անմահական կեանքի մէջ»: Երկրաւոր օգնութեան միակ զէպքըն այն պիտի լինէր, որ Յովհաննէս ԺԲ. պապը յանձն էր առել ապլ Լեոն թագաւորին երեսուն հազար ոսկի «ի պէտս շինութեան երկրին, և մանաւանդ ի նորոգել զաւերեալ քաղաքն Սյաս, ուր կային և բազումք չազդէ լատինացւոց». բայց այդ էլ չկատարուեց. պապը լսելով ունիթօսների վերոյիշեալ զեկուցումն թագաւորի և կաթողիկոսի արգելք լինելու մասին ուղղափառութեան տարածման գործում՝ հրամայեց չտալ այլ ևս այդ գումարը հայոց թագաւորին: Յետոյ, Յովհաննէսի յաջորդ Բենեդիկտոս պապն, ինչպէս ասում են, այդ գումարից միայն 10000 ոսկի է ուղարկել Լեոնին. իսկ երբ վերջինս արուած ողորմութեան փշրանքով չբաւականացած՝ նորից զիմեց պապին և օգնութիւն խնդրեց, պապը նորան պատասխանեց. — ձեզ օգնել չենք կարող, որովհետև յայդչափ մոլորութիւնս վարակեալ է ձեր». այսինքն՝ դեռ կրօն փոխեցէք, չետոյ խնդրեցէք: Իսկ Լեոն թագաւորն և Կոստանդին կաթողիկոսն ինչով արգելք էին եղել ունիթօսների գործունէութեան, որ Յովհաննէս պապի գալըտիւն էին շարժել. — նորանով, որ տեսնելով «զանհրնարին և անկարկատելի պառակտումն ի մէջ ազգին համօրէն, ոչ կարացին հանդուրժել, այլ՝ թագաւորական իշխանութեամբ արձակեալ սպասաւորս այսր և անդր, կալան գրադուծս ի խռովարար անձանց անտի, և եզին յարգելանս «բանդի, և զայս արսորեցին... Կալան և զներսէս և զՍի-

«մէօն զգլխաւորս նոցա, և բերին առ կաթողիկոսն. և նա «սաստիկ կշտամբութեամբ յանդիմանեաց զնոսա. բայց չետոյ «պատրեալ ի կեղծաւոր խոնարհութենէ նոցին՝ եթող զնոսա «չնալ ի տեղիս իւրեանց»:

«Ի՞նչ ծրարիր ունէին ունիթօս «ներն, որի զօրութեամբ «ամենայն իրօք հնարէին դարձուցանել զազգն ի մոլորութենէ»: Բռնայում գումարուած կրօնաւորները Բարդղիմէոսի հետ խորհրդակցելուց չետոյ կաշացնում են այսպիսի որոշումն. «Լինել քարոզիչս ուղղափառութեան, և առ յապահովս մնալ «լոյ ի նոյն և անփափօս՝ սահմանեցին ի բաց թողուլ զաւանդութիւնս ազգին բովանդակ, և վարիլ լատինականօք «յամենայն իրս, և մանաւանդ չեկեղեցական պաշտամունս, «թարգմանեալ զայնս ի հայկական բարբառ: Սյառ խորհրդը «զով սփռեալ սոցա ի տեղիս իւրեանց՝ սկսան յորդորել զազգս «հայոց, զի ի նշանակ ճշմարիտ ուղղափառութեան և անխախտելի միաւորութեան ընդ հռովմէական սուրբ եկեղեցւոյն՝ յանձն առցեն փոփոխել և զարտաքին ծէսս»:

15—18 տարի հազիւ էր անցել, որ վերոյիշեալ որոշումն բաւարար չհամարուեց «միաւորութեան» (ունիթօսութեան) գործին նուիրուածների բոլորի համար. նորանցից շատերն սկսան հայ լեզուն արտաքսել եկեղեցական պաշտամունքներից, իսկ կրօնափոխ հայերի հոգիների փրկութեան համար աւելի իրական միջոցներ գործադրել. — «յանհուն մոլորութիւնս ընկրդ «մեալ»ներից դարձի եկողներին «զոմանս ի բաղանիս, զայս «ի տունս, և զայս յանցս ջրոց կրկին մկրտէին, և ի ծածուկ տեղիս և ի վայրս անտառաց կրկին ձեռնադրէին» պատճառ բերելով թէ «մկրտութիւնն հայոց է երկբայելի». նոյնպէս համարուած էին և միւս խորհուրդները. «պատարագն հայոց ոչ է ճշմարիտ պատարադ» և այլն:

Մեր պատմութիւնը միայն շնորհիւ հ. Մ. Չամչեանի աշխատութեան այսօր ունի հատուկաօր տեղեկութիւններ չիշեալ քարոզիչների յայտնուելու և սկսած ու ընդարձակած գործունէութեան մասին. իսկ Չամչեանի աղբիւրներն են նախ՝ նոյն քարոզական ընկերութեան անդամներից մէկի, այն էլ՝

ընկերութեան հաստատութիւնից հարիւր տարի չետոյ ապրած Մխիթար Ապարանցու գրուածքը. երկրորդ՝ «գրուածք չիշատակարանաց և անծանօթ պատմութեանց» (Բ. 329): Ի՞նչ տեսակի «չիշատակարաններ» են, կամ ի՞նչ ձեռագիրներն մէջ են ամփոփուած, որ չեն նշանակուած յանուանէ. կամ ի՞նչ «պատմութիւններ» են, որոնք «անծանօթ» մնալու վիճակին են արժանացել: Այս հարցմունքները տալիս ենք այն պատճառով, որ կամենում ենք ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրել մեր պատմագիրներին կողմից նկատուած խորհրդաւոր լուութեան վերայ: Յունաստանն սկսում է կրօնական խնդիրների մասին պահանջկոտ շարաքերութիւն չափոց եկեղեցու հետ, և չափ եկեղեցականներն անուշադիր չեն թողնում զրեթէ ոչ մի առաջարկութիւն, ոչ մի պաշտօնական կամ մասնաւոր գրութիւն, առարկութիւն, և նորանց տրուած պատասխանները, նորանց առիթով եղած ժողովների պատմութիւնն, որքան իհարկէ իրանց է հասած լինում. մինչև անգամ չեն մոռանում յայտնել թէ ո՞վ և ե՞րբ եկաւ անձամբ բերելու թղթեր կամ բերանացի ապագարանքներ. ո՞ւմը ներկայացաւ, ո՞ւմ հետ անուանեց, ի՞նչ խօսեց, ի՞նչ լսեց: Այսքան հետաքրքրութիւն և այսպիսի հոգատարութիւն նորսներ ունեցել են: Գալիս են արեւմտեան եկեղեցու ներկայացուցիչներ, միևնայն պահանջկոտութեամբ, բայց ոչ լսել — տանելու պատգամաւորական պաշտօնով (Կիլիկիայի մասին չէ մեր լսօքը), այլ դալիս են տեղն ու տեղը նստում և աշխատում, ի՞նչ միջոցներով էլ լինի՝ յամառ չաչերին նանապարհի բերելու, «հերետիկոսներին ուղղափառութեան դարձնելու». և այդ մարդիկ, այդ ուղղութեամբ, այդ նպատակով գործում են չաչատանի հողի վերայ երկար, շատ երկար ժամանակ, վեց-եօթ գար շարունակ. և սակայն ոչ որ չէ նկատում նորանց, կամ չէ կամենում ուշադրութիւն դարձնել վրաները:

Այս ի՞նչ է նշանակում. ի՞նչպէս բացատրել:

Ընդունենք, որ Միջագետքում հաստատուածներն այնքան թաղնաբար են գործել, որ դարձանք չէ թէ աննկատելի մնալին. թէև նորանց գործունէութիւնն էլ տուել է աչ-

քի ընկնող հետևանքներ. բայց Անի քաղաքում մէկէնիմէկ 5—6 լատին կրօնաւորներ են յայտնուած. դալիս են անշուշտ և ուրիշները, տարածուած են քարոզչական պաշտօնով Շիրակում և զանազան կողմերում. մտնում են և Վրաստան և մայրաքաղաք Տփլիս: Սորանց գործունէութիւնն երկար աննկատելի մնալ չէ կարողանում. հետևանքները շատ շուտ են յայտնուած. մինչև անգամ Սիւնեաց արքեպիսկոպոսը լսում է և իմանում թէ նորանք ինչե՞ր են կատարում Շիրակում, Տփլիսում և այլ տեղերում. և դարձեալ ոչ որ չէ կամեցել մի բան զրել նորանց մասին: Այդ էլ դեռ դարձանալի չհամարենք: Յայտնուած են ունիթոսներն. և յայտնուած են ոչ թէ 5—6 օտարազդի մարդիկ իբրև անցորդներ, դեսպանական կոչումով, այլ մի լատին արքեպիսկոպոս դալիս է, առաջնորդական աթոռ է հաստատում Երնջակի և Նախիջևանի համար. և չաչատանի զանազան կողմերից խափոյն գալիս խմբուած են նորա շուրջը բազմութիւ չաչ կրօնաւորներ, որոնք առանց քաշուելու, առանց ժամանակ կորցնելու հէնց առաջին անգամից յայտարարում են իրանց չաչատանեաց եկեղեցու կատարի թշնամիներ և բացարձակաբար ձեռնարկում են իրագործելու այսպիսի ծրագիր. — չաչերին ձուլել միացնել հոռոմէական եկեղեցու փարախում գտնուողների հետ, իսկ հաշկական եկեղեցին քանդել, բառնալ մէջտեղից. և այս նպատակին հասնելու համար դուրս ձգել ժամերգութիւնից, պաշտամունքներից, ծէսերից այն ամենն, ինչոր ազգային է. — լեզուն և առանձնաչատուկ սովորութիւնները, փոխարէնը մտցնելով լատիներէն լեզու, լատինական ծէսեր: Շատ չանցած՝ ազդի մէջ «պառակտումն անկարկատելի» է. դալթակութիւնն և կրօնական յուզմունքներն իրանց դադարեցնելու հասած՝ վրդովում, տակն ու վրայ են անում առանց այն էլ իւր թշուառութիւնների մէջ տառապող, տանջուող ժողովրդի մարերն ու հողիները. մոլեռանդ թշնամութիւնն ամեն միջոց, ամեն դէնք գործ է դնում ազգային եկեղեցու ամբողջեան խարխիսները վշրելու. և այդ դարհուրելի դրութիւնը տեսում է ոչ մի կամ երկու տասնեակ տարիներ,

այլ երկու—երեք դար: Այդքան երկար ժամանակամիջոցում պաշտպանուող եկեղեցու պաշտօնեաների մէջ յայտնուում են դիմադիր զօրեղ սջփեր, յայտնուում են անընկճելի եռանդով և ձորի կորովով օժտուած անձինք.— Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Մաղաբիա վարդապետ և ուրիշները: Ծարունակ տեղի են ունենում կրօնական խիստ հակաճառութիւններ, որոնցից կաղմուում են մեծահատոր դրուածքներ, բայց դարձեալ առանց պատմութեան: Ոչ որ այդքան դարերի ընթացքում չէ կամենում կամ նախանցեալ կամ իրան ժամանակակից անցքերի մասին տեղեկութիւններ ժողովել և դրի առնել. չհաշուած ժ. Ե. դարի կրօնաւոր Թովմա Մեծոբեցուն, որ հարեանցի կերպով չիշում է մի բանի բաներ.— Մաղաբիա վարդապետի թուեաւորուելն ունիթօռներից և այլն: Բաւական չէ, որ մեր մատենադիրները պատմութիւն չեն տալիս մեղ վերոյիշեալ շրջանի այդպիսի խոշոր անցքերի մասին, այլ և չեն էլ ժողովել կամ պահպանել այն պաշտօնական դրազրութիւններն, հարցմունք—պատասխաններն, որոնք տեղի են ունեցել պապական աթոռի և Կիլիկիայի Հայոց կաթողիկոսների միջև կրօնական խնդիրների մասին, և ինչոր այսօր մէջ տեղ են բերուում՝ լատինական կասկածելի ազբիւրներից են առնուած: Միակ թուղթն, այն ևս պաշտօնական, որ մեզ հասել է, 1246 թուին Կոստանդին կաթողիկոսի նամակն է, որ գրուած է Հեթում թագաւորին պապի առաջարկութեան առիթով, որ Հայերը կրօնական խնդիրներում համակերպուեն Հռոմի աթոռին: Այդ թուղթը կտեսնենք շուտով:

Եւ ինչո՞ւ այդ միակը մեղ հասած պիտի լինէր, քանի որ ինքն ըստ ինքեան պարզ է, թէ որքան պաշտօնական դրութիւններ են ստացուել, այնքան էլ պատասխանները պիտի լինէին: Ասել, թէ մերայիններն անտարբեր և անփոյթ են զանուէլ կամ դրազրութիւնների պատճէններ պահպանելուն նշանակութիւն չեն տուել՝ իրաւունք չունենք, քանի որ մի տարի յառաջ լոյս տեսած «Գիրք Թղթոց» ստուար ժողովածուն ոչ այլ ինչ է, բայց եթէ, ինչպէս հրատարակող յանձ-

նաժողովը «բանաւոր կը համարի կարծել՝ պաշտօնական խրմբազրութիւն Հայաստանեայց եկեղեցւոյն և Հայրապետական աթոռոյն իբր ձեռնարկ մը». այլ բան է, որ նորանում տեղ են կարողացել դանկ և անհարազատ պատճէններ: Ուրեմն եթէ պաշտօնական թղթեր և նշանաւոր Հայերի նամակներ ժողովել—պահպանելու կարեւորութիւնը շատ լաւ հասկանալի է եղել դեռ դարեր յառաջ մինչև հռոմէական եկեղեցու հետ դործ ունենալն, աւելի հասկանալի պիտի լինէր և այնուհետև. այն ինչ նոյն Գիրք Թղթոցը նարեկացու մի նամակից չետոյ (Ժ. դար) երկու ամբողջ դար բաց է թողնում, անպատալիս է Կոստանդին կաթողիկոսի չիշեալ նամակն. իսկ նորան հետևում են հինգ վարդապետական դրուածներ, և այնուհետև Գիրքը փակուում է: Ինչ որ պակասում է «Թղթոց Գրքում» զոնէ պիտի պահուած լինէին ժամանակակից և ժամանակով մերձաւոր մատենադրութիւնների մէջ, թէկուզ մի մասը միայն և ոչ բոլորը.—բայց չկան: Որքան անկասկածելի է այդպիսի թղթերի լինելն և անհետանալն, այնքան էլ անկասկածելի պէտք է համարել, թէ դարերի ընթացքում ազդի հողեկան անդորրութիւնը վրդովող երկպառակութիւնների և բազմատեսակ աղէտների պատճառ դարձած անցքերը չէին կարող անուշաղիր մնալ և պատմութեան նիւթեր չդառնայ: Եւ սակայն այսօր պատմական չիշատակարաններ էլ չկան: Այդ դեռ բաւական չէ. Հայ մատենադրութեան մէջ ունիթօռների անունն անգամ չէ չիշատակուում մինչև Թովմա Մեծոբեցին. այդ մէկն էլ, երևի, պատահմամբ ազատ է մնացել որոնողների ձեռքերից:

Վերևում տեսանք, թէ հռոմէական եկեղեցու ընդունած սովորութիւնն էր իրան անհամամիտ եկեղեցիների մէջ որոնել, զանել ամեն մի դրուածք, որպէս զի՝ ուր որ իւր վարդապետութիւնների և պապական աթոռին հակառակ խօսուածներ կան՝ շնչուն, փոփոխուեն. ուր ոչ մի խօսք չկայ ի նպաստ կամ յսպաջուցութիւն հռոմէական սկզբունքների՝ — յօրինել, աւելցնել: Նիկոյաջոս պապը նոյն իսկ Բիւզանդիայի կայսրից էր պահանջում ժողովել, այրել այն ամեն

դրուածներն, որոնցում պապական աթոռին ընդդէմ խօսքեր կլինէին:

Լատին միսիօներներն՝ ինչպէս ամենաեղ, նոյնպէս և հալաստանում անտես չեն արել իրանց պարտաւորութիւնը. բայց ինչ որ ունիթօներն են արել այդ ուղղութեամբ՝ զժողար է մինչև անդամ համեմատութեամբ դնել միւսների արածների հետ քանակի կողմից: Նորանք յաակապէս այդ նպատակով դնում-հասնում էին ամեն տեղ. մտնում էին, հարկաւ առանց յայտնելու իրանց ով լինելն, ամեն մի մենաստան, զիւղ և քաղաք, ուր որ իմանում էին թէ ձեռագիրներ կան կամ կարող են լինել. ամեն հնարքներով վերցնում տանում էին, կամ ձեռք առնում կարգալու, ուսումնասիրելու պատրուակով. և հողալով ինչ որ իրանց կամեցածն էր՝ թողնում հեռանում էին. և հասկանալի է, թէ այն տաղնապալից, տառապակիր և ստուերամած ժամանակների հայ վանքերում ձեռագիրների պահպանութեան որքան ուշադրութիւն և խնամք նուիրուած կլինէին: Ունիթօներն՝ այդպիսի նպատակով կատարուած նանապարհորդութիւնների մասին հետաքրքրական փաստ պիտի համարել ժ. Գ. դարի վերջում և ժ. Ե. ի սկզբում ապրած Մխիթար Ապարանցու իւր մասին գրածն, որից առնում է Կ. Մ. Չամչեանը: «Սա ինքն Մխիթար՝ որ կացեալ էր յառաջնմէ առ նմին Մաղաբիայ ամս «տասն հանդերձ ալլովք, մեկնեալ չետոյ ի նմանէ՝ դնաց և «եմուտ ի կարգս ունիթօաց. և զի էր հետամուտ ուսման «և տեղեկութեան բազում իրաց, շրջեցաւ այսր և անդր ի «Մեծն և ի Փոքրն հայս, և յաշխարհին Վրաց և Յունաց. «և դաեալ ի տեղիս—տեղիս զբաղմութիւն հին ձեռագրաց «նախնեաց մերոց՝ դեղերէր չրնթերցումն նոցին» (Գ. 445): Այս Մխիթարն ինքը քարոզիչների այն խմբիցն էր, որոնք պահանջում էին հայոց եկեղեցուց հոռոմէականին զարձաճեւորին կրկին մկրտել, և ինքն էլ մկրտել է. «մկրտեցի և ես զոմանս ի յարելոց ի մեզ յազդէ մերմէ ի ծածուկ տեղիս»: Ընթերցողները կհասկանան, թէ ժ. Գ. դարի վերջերում Մեծ և Փոքր հայքերում շրջադաշտ ալլովիսի մոլեռանդ ունիթօն

ինչ «ուսման և տեղեկութեան կարող էր կարօտ լինել», և ի՞նչ նպատակով պիտի աշխատէր դոնել «զբաղմութիւն հին ձեռագրաց նախնեաց մերոց»: Անշուշտ այդպիսի «ուսման» ծարաւով շատերն էլ շրջադաշտ կլինեն հալաստանի դաճաղան տեղերը, թէև չեն չիշատակուած: Ունիթօների ձեռքերով ջնջուել են այն ամենն, ինչ որ հակառակ և վիրաւորական կարող էր լինել հոռոմէական եկեղեցուն, և այն ամենն, ինչ որ կարող էր իրանց դորժին և զործունէութեանն աննպաստ պատմութիւն կազմել: Ջնջուածների փոխարէն, հարկաւոր համարուած տեղերում, տրոււմ էին, ի հարկէ, պատրաստուած նպաստաւոր դրուածներ:

Այդպիսի անխիղճ վարմունքներն այնքան սովորական երևոյթներ են եղել, որ մինչև անդամ մի քանի հեղինակներ իրանց դրուածները խարդախող ձեռքերից ազատ պահելու միակ միջոց նդովք սահմանելն են համարել: Գր. Տաթևացին իւր «հարցմանց» ի յառաջաբանը փակում է հետևեալ տողերով. «Այլև աղաչեմ հարկելի վնուա ոչինչ քստերիւրել ի «սմանէ կամակար մտօք, որպէս այնօրիկ, որք սովոր են զգիրս «սուրբս եղծանել և թիւրել, և դատապարտութիւն անծանց «իւրեանց նիւթել: Վասնորոյ զրեալ է, եթէ որ յաւելցէ ինչ «ի սմա խոտորեալ մտօք, յաւելցէ տէր ի վերայ նորա դաճմնայն հարուածս զրեալս ի սմա: Նաև թէ պակասեցուցէ «նոյն մտօք, պակասեցի և ինքն ի գրոյն կենաց զրեալ ի «զիրս յայսմիկ: Մեծն եղիցի եղիցի»: Նդովքն էլ, ի հարկէ, իւր նպատակին չէ ծառայել. նոյն «հարցմանց» զբրում զարձեալ մի քանի խարդախումներ են տեղի ունեցել, ինչպէս պիտի տեսնենք իրանց տեղերում: Նոյն միջոցին է զիմել և Սիւնեաց Ստեփ. արքեպիսկոպոս Օրբելեանն իւր Պատմութիւնն սպարազ խարդախումներից փրկելու համար. «Բաց պատուէր «դնեմ ամենեցուն, որք հանդիպիք սմա՝ ոչ բեցել ի բանից «սորա և կամ ալլանդակել զչեղանակ կարգին, և կամ ժրխտել ի սմանէ կամ թուղթ հատանել փասն նախանձու և «նենդութեան և կամ ալ ինչ պատճառի: Սպա թէ որ ժպրը «հի յանդուպն լրբութեամբ՝ ջնջեալ եղիցի ի դպրութենէն

«կենաց և կտրեալ ի կտակէն չաւիտենից, ընդ Յուդայի և «խաչահանուազն վարձատրեսցի, ընդ սատանայի և ամենայն «չարագործացն դատապարտեսցի. և որ ոք ընդօրինակէ զսա «և դիցէ ընդ այլոց և զսակաւապիժ չիշատակս՝ առհասարակ «ամենեքեան մեր և դուք ի միասին գտցուք ողորմութիւն «չարարչական սիրոյն Աստուծոյ ի մարմնի և ի գերեզմանի» (եր. 370—371):

Պէտք է սակայն յայտնել այստեղ, թէ չայ ձեռադիր- ների բոլոր խարդախումներն և աղնատուժները միայն լատին և ունիթու քարոզիչներին վերադրելու զիտաւորութեամբ չեն չառաջ բերում այս տողերը: Շատ հասկանալի է, որ մարդկային «նախանձն և նենդութիւնն» և վրէժխնդրութիւնն ընդունակ կլինէին և են միշտ ընդունակ ստելու, կեղծելու, աղաւաղելու: Այսօր էլ այդ ստոր կրքերը նոյնն են անում որ ցերեկով, մեր աչքի առաջ: Հարկաւ ընթերցողները կլի- շեն, որ անհարազատութիւնները կամ խարդախումները մենք բաժանում ենք երկու տեսակի—տեղական և արտաքին կամ օտարապատուաստ: Այս վերջին տեսակին են, որ անկասկա- ծարար համարում ենք չիշեալ քարոզիչների արարք:

Վերոյիշեալ լիտին և չայ քարոզիչների ձեռնմխութիւն- ների շնորհիւ իրքան զրկանք է կրել չայ պատմութիւնն, որքան չեղաշրջուել են իրողութիւններն, իրքան աղաւա- զուել են հեղինակների մաքերն և ասացուածներն: Այդ մասին տալիս ենք ընթերցողներին մի նմուշ: Մինչև անցեալ տարի էլ ստիպուած էինք ընդունելու Չամչեանի պատմութեան աղբիւրների վկայութիւնը, թէ 1248 թուին Իննովկենսիոս պապն ուղարկում է մի պատգամաւոր չեթում թագաւորի մօտ՝ չայոց եկեղեցու մի քանի աւանդութիւնների և ձէսե- րի մասին խօսելու, քննելու և «ուղիղն հաստատելու» հա- մար: Թագաւորը պապական գեսպանին ուղարկում է չոռմ- կլայ, Կոստանդին կաթողիկոսի մօտ: Թէ ինչ ձէսեր և աւան- ղութիւններ էին, որոնց քննութիւնից չետոյ պապական նուի- րակը պիտի բարեհաճէր հաստատելու, թէ՛ նորա և կաթո- ղիկոսի մէջ իրարմի հարց ու պատասխաններ են տեղի ու-

նեցել, յայտնի չէր. յայտնի էր միայն այսքանը, թէ կաթո- ղիկոսն էլ, նորա եպիսկոպոսներն էլ հաւանել են «ընդ բանս գեսպանին, ցուցեալ թէ յայն միտս են և ինքեանք՝ նաև բո- լոր հայք» (Գ. 230—31): Ուրիշ խօսքով ասած՝ նորանք յայտնել են գեսպանին, թէ իրանք, իրանց հետ էլ և ամբողջ ազգն այն են ընդունում և զաւանում, ինչ որ հոռոմէական եկեղեցին,—դանաղանութիւն չկայ: Անակրեկալ հանգամանքի բերմունքով զանում է նոյն Կոստանդին կաթողիկոսի նա- մակը, յատկապէս այդ գեսպանի բերած առաջարկութիւն- ների առիթով զրած չեթում թագաւորին. և այդ նամակից բոլորովին ուրիշ բան ենք իմանում: Պապական նուիրակն եկած է եղել պահանջելու, որ չայոց եկեղեցին ընդունի մի քանի վարդապետութիւններ.—Պետրոսի և նորա չաչորդների զխաւորութիւնն ու կապող-արձակող իշխանութիւնն, չոգ- ւոյն Սրբոյ և յՈրդոյ բղխումն, և այլն: Կաթողիկոսն և նորա մօտ դանուած եկեղեցականներն ոչ թէ հաւանութիւն կամ համաձայնութիւն են տուել, այլ բացէ ի բաց մերժել են բոլոր առաջարկութիւնները: Միւս խնդիրներից մի եր- կուսը չետոյ առիթ կուենանք մէջ բերելու. այս տեղ դնում ենք կաթողիկոսական թղթի խօսքերն առաջինի մասին, նա- մակի վերնագրի հետ միասին, որ նոյնպէս մեզ չետոյ պէտք է զալու:

«Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի չայոց զոր զրեաց «առ չեթում թագաւորն ի յԱստուածապահ զղեկէս, ի չայ- «րապետական Աթոռոյս չոռմկլաէս, ի մայրաքաղաքն Սիս. «Պատասխանի թղթին որ ի Պապէն չոռմայ բերաւ առ թա- «ղաւորն չայոց չեթում, ի ձեռն Լեկաթին որ կոչէր Տի- «մանչ, ի թուիս չայոց ի ՈՂԵ. ի ձեռն արղիւնական վար- «դապետին Վարդանայ չարմար իրիս»:

«Սուրբ թագաւոր ամենայն չայոց, չառաքեալ զրոյ քո «ձանեար զըոյին հրամանսն, զոր հրամայել էիր քաղցր և «կակզադոյն առնել զպատասխանիսն թղթի պապուն և նրբ- «բատես առնդ Տիմանչիւ, որ առաքեցաւ ի պապէն դ տ ա ն ե լ «զ մ ե գ չ ե տ Ռ, և Մ. և Խ Ը. (1248) ամի դ տ ա ն ե լ ո յ ս

«մերոյ ի Տեառնէ: Կարծեն զհայոց եկեղեցին աղքատ ի  
 «զիտութենէ. և յայս զիրս գտաք ժե. սխալ և անընդունակ  
 «բան, խառնեալ ընդ նշմարիտան. է՛, զոր իմանալով և ի չար  
 «կամաց են զրել, և է՛ զի չեն կարողացել տեսանել զթիւրն:  
 «Յառաջ որ զրեալ է թէ հոռմայ աթոռն միայն ունի իշ-  
 «խանութիւն ի վերայ երկրի կապելոյ և արծակելոյ և ծառայու-  
 «թիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք: Չայս ընդէ՛ր ոչ էած  
 «զմտաւ, զի չորժամ ախտացան այսպիսի առաքեալքն թէ ո՞  
 «իցէ ի նոցանէ մեծ, սաստեաց Տէրն և ասաց. այդ հեթա-  
 «նոսաց և անհաւատից է բան, այլ ի ձեր միշի այդ ոչ լի-  
 «նի: Արդ զորա լրբութեամբ սուտ կամին առնել զՏէրն. և  
 «Յովհաննէս աւետարանիչն ասէ թէ, յետ յարութեանն փչեաց  
 «յամէն առաքեալսն և ասաց. Առէք հոգի սուրբ, թէ ու-  
 «րուք թողուցուք զմեզս թողեալ լիցի, և թէ զուրուք ունի-  
 «ցիք՝ կալեալ լիցի: Այս այլ ի՞նչ է, բան իշխանութիւն կա-  
 «պելոյ և արծակելոյ. և յժբ. (երկոտասան) աթոռսն զմէկն  
 «ետ Պետրոսի: Երեք առաքեալ չերկոտասանիցն և երեք յե-  
 «թանասնիցն ի հայք կան. պատեհ է, որ զորա կապեն  
 «զհայք: Եւ Պետրոս նախ ի Կեսարեայ Փիլիպեան հաստատ-  
 «եաց եկեղեցի, և ապա յՍնափոք և յետոյ ի հոռմ. ընդէ՛ր  
 «եղև հոռմ առաջին: Թէ զՊետրոս իւրենք սպանին ի հոռմ,  
 «զՊետրոսի Սատուածն հրէայքն սպանին յերուսաղէմ. Երու-  
 «սաղէմ ընդէ՛ր չէ հրամանատու ամենայն երկրի: Եւ այսպի-  
 «սի բանս զորա կուտան ասել. թէ ոչ, Պետրոս և իր բանքն  
 «յետ Քրիստոսի է մեղ. իսկ զոցա վարքն և բանքն չէ Պետ-  
 «րոսին: Եւ մեք վասն հարցն մերոց երգմանն սիրոյն և ուխ-  
 «տին, նոցա չարին չեմք հաւատացել և զնոցա խալատն  
 «(սխալն) շանացել եմք ողջացնել»: Որպէս զի աւելի փաստեր  
 «տուած լինենք մեր ասածների հաստատութեան համար՝  
 «պարտաւորուած ենք յառաջ բերել այստեղ կեղծումներն, ա-  
 «ղաւաղումների և յետամուտ յաւելուածների մի երկար շարք,  
 «բաժանելով այդ բոլորն երկու շրջանի. առաջինը ժՄ. ից մին-  
 «չև ժԳ. զարբ՝ Միշաղեալի լատին միսիոնարների և նորանց  
 «ընկերակից հայ կրօնաւորների զործունէութեան շրջանը

կը լինի, նորանում հասկանալով և Կիլիկիայում գործողներին.  
 երկրորդը՝ ժԳ. զարից մինչև ժԷ. զարբ՝ Շիրակում և այլ  
 կողմերում հաստատուած լատին միսիոնարների և ունիթու-  
 ների զործունէութեան շրջան: Յառաջ բերուած անհարազատ  
 յաւելուածների և ընդմիջարկութիւնների մի մասը հաւանո-  
 րէն կարող են կատարուած լինել է.—ժ. զարբումն էլ  
 հոռմի «վերածնեալների» և հայաստանից Արեւմուտք՝ այն-  
 տեղից հայաստան երթեկող հայ կրօնաւորների ձեռքով-  
 բայց զորանց առանձին շրջան տալու համար պակասում են  
 հաստատուն ցուցմունքներ. ուստի բանասէրների քննութեանն  
 ենք թողնում որոշել, թէ մեր մասնացոյց արած կեղծումնե-  
 րից ո՞րը կարող էր տեղի ունենալ առաջին շրջանից կանուխ  
 Յամենայն պէպս՝ այսպիսիներն հազիւ երկու կամ երեք լի-  
 նեն թուով, ինչքան մենք կարող ենք ենթադրել, ինչպէս  
 կատեսները յետոյ:

### Շ Ր Ջ Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Չնայած՝ որ հոռմէական եկեղեցին աչքի առաջ ունէր  
 դաւանաբանական և ծիսական շատ խնդիրներ, որոնց փոփո-  
 խութիւնը նորա համար բացարձակ պահանջ էր, այսու ամե-  
 նայնիւ միանգամից բոլորին միասին ձեռնարկելը վտանգա-  
 ւոր անզգուշութիւն համարելով՝ Միշաղեալի միսիոններն  
 և ընկերներն իրանց ուշադրութիւնը կեղրոնացրած են եղել  
 նորանցից երկուսի,—Պետրոսի և նորա փոխանորդների զըլ-  
 խաւորութեան կամ գերիշխանութեան և վերջին օժման վե-  
 րայ: Առաջինի ընդունելութիւնը մանաւանդ շատ անհրաժեշտ  
 էր հասկանալի պատճառով.—նորանից ծագող անպայման  
 հպատակութիւնն իրանում ամփոփում էր միւս բոլոր փոփո-  
 խութիւններն, ուստի և կեղծիքների զլխաւոր մասն էլ ի  
 նպաստ նորան է արուած: Պետրոսի զլխաւորութեան հետ  
 միասին վերջին օժման՝ և ոչ մի ուրիշ խնդիր կարւոր կէտ  
 նպատակի ընտրելն էլ նորա համար է, որ աղգն այդ արա-  
 րողութեան վարժուած չէր. ուստի և աւելի դիւրին է հա-  
 մարուել զանազան յարգուած անուներով նորա կարւորու-

Թիւնը ցոյց տալով՝ չաշողութիւն ունենալը, քան այնպիսի արարողութիւններէ և ծէսերի փոփոխութեան ետեից ընկնել, որոնց հետ սկզբից ի վեր հայերը վարժուած և կապուած են եղել: Ի հարկէ սորանց վերայ ևս ուշ դարձնելն և թեթև փորձեր անելը գործողներէ ծրագրից զուրս չեն մնացել, բայց սկզբում երկրորդական տեղն են տուած ելել նորանց:

Յօգուտ Պետրոսի գլխաւորութեան յօրինուած կեղծիքներէց իրանց տեղերում ցոյց տրուած են Դաշանց թուղթը, Պատրոնիկէի խաչի զիւաի զրուցի, Աբգարի թղթի և Խորենացու ԿԲ. գլխի մէջ եղած յաւելուածներն: Այժմ էլ զնում ենք նոյն խնդրի հետ կապուած հետեւեալ անհարազատութիւնները:

Ա. Հայերը Տրդատի միջոցով քրիստոնէութիւնն ընդունել են հռոմի եպիսկոպոսապետից:

Եղիշէն և Ղազար Փարպեցին ասում են, թէ հայոց եպիսկոպոսները Յովսէփ կաթողիկոսի նախադահութեամբ և նախարարներէ հետ ժողով կազմելով՝ պատգամաւորութեան ձեռքով նամակ զրեցին Թէոփոս Բ. կայսրին և օգնութիւն խնդրեցին Պարսից զէմ: Եղիշէն յառաջ է բերում և նամակի պատճենն \*), որ չունի Փարպեցին: Այս նամակի մէջ կարգում ենք հետեւեալ սողերը. «Վասնորոյ և նախնին մեր Տրդատիոս չիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ «ապրեալ սնաւ չերկրից Յունաց, և ի ձէնչ թագաւորեալ «տիրէր հայրենի աշխարհիս. սոյն պէս և զհաւատասն որ «ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսէն «(Գարագաշ. օրինակն՝ եպիսկոպոսապետէն) հռովմայ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ, զոր և այժմ կամին ի մէնչ կորդել հանել խաւարասէր որդիքն արեւելից»:

Այդ տողերի աւելթով պ. Գարագաշեանը գրում է. «Նախ չէր ուղիղ ըսել. «Նախնին մեր Տրդատիոս չիշելով զառաջին սէրն ձեր, ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ չերկրից Յուն-

\*) Պատմ. Վարդանանց, Ըստ Անձեւացեացն օրինակի. 108—109.

«նաց», փոխանակ ըսելու. «Յիշելով զառաջին սէրն ձեր՝ զնախնին մեր Տրդատիոս փախուցեալ ապրեցուցին»: Տրդատ որ էր չաչնժամ կաթնկեր մանուկ ըստ պատմութեան՝ չէր կրնար չիշել հռոմայեցւոց առաջին սէրը: Հակառակ է նաև «աւանդութեան ազգային պատմաց Ս. զաթանդեղոսի և Խորենացւոյն՝ զԱնակ, զսպանողն Խոսրովու կոչել հօրեղբարցը «Տրդատայ: Ս. զաթանդեղոս զիտէ զԱնակ ազգական Խոսրովու. իսկ Խորենացին կր համարի զԱնակ Պահլաւաց Սուրենեան տոհմէն: Նամակին հեղինակներն եթէ չէին զիտեր «տակաւին զԽորենացին՝ անշուշտ զիտէին զՍ. զաթանդեղոս: «Եւս աւելի անտեղի էր ըսել թէ Տրդատ ընկալաւ զհաւատան եպիսկոպոսապետէն հռովմայ: Ո՞ր հայր չէր զիտեր չաչնժամ, «թէ Տրդատ Լուսաւորչէն ուսաւ քրիստոնէութիւնը, հռովմայ եպիսկոպոսին հետ չունեցաւ ամենեկն զորձ: Ուստի «չիրաւի կրնանք ըսել, թէ այն նամակն չէ և չկարէ լինել «զորձ եպիսկոպոսաց և նախարարաց ժողովի, այլ անուս խաբեբայի մը, եթէ ոչ նորին իսկ Եղիշէի, որոյ պատմութիւնը «չէ ազատ բարեպաշտ խաբէութիւններէ»: \*)

Յարգելի հեղինակը շատ սխալուած է ի հարկէ, որ այդպիսի մի անճոռնի նամակ եպիսկոպոսների և նախարարների ժողովին անարժան գտնելով՝ միևնույն ժամանակ ենթադրում է թէ Եղիշէն կարող էր լինել նորա «անուս» հեղինակն: Այդքան անուս և տղիտական նամակ կազմողը չէր կարող Վարդանանց պատմութեան նման «ընտիր նիւթ մը» մեղտուող «ընտիր հանճարն և զրիչը» (Ձարբ. 336) լինել: Պէտք է ենթադրել, թէ այդ նամակն առաջին շրջանից կանուխ է.— Ժ. դարերում յօրինուած կեղծիքներից է, որոնց մասին վերևում չիշեցինք: Երևում է, որ Դաշանց թղթից յառաջ հայոց Լուսաւորչին հռոմ տանելու և Սեղբեստրոսի ձեռնադրութեամբ «պապ, պատրիարք և հայրապետ» կարգելու միտքը զեռ ծագած չէ եղել. այլ բաւականացել են հայաստանին հռոմի եպիսկոպոսից քրիստոնէութիւնն ընդունել տալով: 61)

\*) Բննակ. Պատմ. Հայոց. Մ. Գ. 365—66.

Բ. Պետրոս առաքելայր՝ փակակալ արքայութեան, զլուս առաքելոց և հաստատութիւն ամենայն եկեղեցեաց:

1. «Արդ՝ ճշմարիտ աշակերտացն երբեմն ժողովեալ առ «ճշմարիտ վարդապետն Յիսուս Քրիստոս Տէրն մեր և Փրկ- «կիչն... զորս հարցանէր... զուր զո՞ ուստէք ասէք թէ իցեմ «ես. որոց առաջինն էր Պետրոս ասէ՛ զու ես Որդի աս- «տուծոյ կենդանուոյ. վասնորոյ և դերանութիւն ընկալաւ. «ասէ՛ Երանի է քեզ Պետրոս՝ որդի Յունանու, զի ոչ չերկրէ «տոհմակցաց քոց... առեր զայդ զիտութիւն. այլ հայր չերկ- «նից ետ ի սիրտ քո, և յայտնեաց քեզ: Եւ արար զնա վէճ «հաստատութեան ամենայն եկեղեցեաց: Իսկ եղեն հիմունք «առաքելայրն. և առին շնորհս քահանայութեան՝ ճարդարէու- «թեան՝ և առաքելութեան... Եւ տէրն ետ առաքելոցն և «զփականս արքայութեան ի ձեռս նոցա. զի ինքն իսկ աս- «տուածորդին էր զուան մտոյացն»: \*)

Աղաթանգեղոսի նորագոյն՝ քննութիւններն արդէն որոշ կարծիքներ են յայտնել թէ պատմութեան և թէ Ս. Լուսա- ւորչին ընծայուած վարդապետութեան երբ զրուած լինելու մասին. այն ևս յայտնի է, որ այդ վարդապետական մասը պակասում է Աղաթանգեղոսի յունարէնում: Ս. Գրիգորի վարդապետութեան ո՞ր ժամանակի զրուած լինելը բաց թող- նելով իբրև մեր աշխատութեանը չվերաբերող, այսքանը կա- սենք, թէ պարզ նկատելի է վերոգրեալ հատուածի յե- տոյ կրած օտարամուտ նախադասութիւնն. — «Եւ արար զնա վէճ հաստատութեան ամենայն եկեղեցեաց»: Միևնոյն միջոցին նկատելի է այդ տեղ բնագիր խօսքերի կրճատում. ըստ որում յետագայ նախադասութեան «իսկ» շաղկապն երևի զրուած է նախընթաց և յաջորդող նախադասութիւնները միմեանց հետ կապելու համար. այլպէս նորա զործածութիւնն ոչ խօսքի իմաստին և ոչ լեզուի պահանջին է համապատաս- խան:

\*) «Վարդապետութիւն ս. Գրիգորի». Ազամանգեղոս. Կ. Պոլիս. 1709. 196—97.

— Նոյն Վարդապետութեան այլ տեղում. (եր. 303) «Արդ «Քրիստոսագունդ և խաչակիր առաքելոցն. Որոց գլխա- «ւորն Պետրոս և Անդրէաս, Յակոբոս, և Յովհաննէս, «Փիլիպպոս և Բարդուղիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակո- «բոս, Սիմոն, Թադէոս, Բարսաբաս, Մարկոս, Դուկաս, Պո- «ղոս, Բառնաբաս: Եւ այլ ևս որ նման իցեն սոցին»:

Կասկած չկայ, թէ սկզբնականն եղել է. «Արդ Քրիս- տոսագունդ խաչակիր առաքելոցն անուանք են Պետրոս և Անդրէաս, Յակոբոս» և այլն:

2. «Ճշմարիտ հաւատն է եկեղեցի, որ զուճարէ և շինէ «զմեզ ի մի միաբանութիւն դիտութեան որդւոյն Աստուծոյ. «քանզի նոյն ինքն կենարարն ուսուցանէ ասելով ցՊետրոս, «զու ես վէճ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ... «Արդ՝ զի՞նչ իմանայցեմք ասելն ցՊետրոս զու ես վէճ. «մի՞թէ որպէս զմի ի քարանց. քաւ լիցի. այլ մարդ բանաւոր «և զլուս առաքելական դասուն»: \*)

3. «Զինչպիսի բանս ասասցէ Պետրոս զկնի ուրանալոյն «զտէրն... «Քանզի ահա... և յառաջածայնեալս ի տեառնէ «վէճ, շարժիմ ի բարձր աշտինանէ կատարելութեանն՝ յամե- «նեկն ի ստորին և ի վերջին խոնարհումն... զիտեմ հնչե- «ցուցեալ առ իս զտէրունականն քաղցր բարբառ, որ անդէն «ընդ լսելի լինել, փութացայ... միանդամայն անխափան «զնալ ընդ շաւիղս ծաղելոյ փրկական լուսաւորութեանն. «չորմէ և պատուեցայ այնուհետեւ առաջնոցն առաջա- «գոյն գոլ դահերիցութեամբ... սակայն կամաւորա- «պէս զիմեցից իբրև յարդարև Կարապետ ուրախութեան, «որպէս զի առ սակաւ սակաւ արծարծմամբ լաւագունիցն «հասից յառաջին ծայր կատարելութեանն, և եղէց փակա- «կալ արքայութեանն, հիմն եկեղեցւոյ»: \*\*)

4. «Այլ ասեն՝ Պօղոս ասաց. թէ յափշտակեցաւ այն- «պիսին մինչև չերրորդ երկինս: Եւ զայն ոչ զիտեն թէ՛ չև

\*) Ս. Սահակ Պարձևին ընծայուած «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն Տեառնէ Գրիգորէ» և այլն. Կանոնագիրք:

\*\*) Խորեն. Յաղագս Պիտոլից. 522—524.

«Լս յայտ է՝ թէ մինչև ցերրորդ երկինս ասիցէ, կամ թէ  
 «մինչև ցերրորդ ինչ մասն ի բազում մասանց միոյ երկնիս  
 «ասիցէ. զի բանն ի յոյն լեզու՝ յերկոսին հարկանէ... ուստի  
 «տայ ակնարկութիւն, եթէ ի մասն ինչ երրորդ ի բազում  
 «մասանց երկրի յափշտակեցաւ Պօղոս. վասն որոյ ածէ զնո-  
 «րին զկնի թէ՛ յափշտակեցաւ այնպիսին ի դրախտն... Եւ  
 «լուաւ զբանս անճառս զոր ոչ է պարտ ումեք խօսել. թէ-  
 «պէտ և առաքեալ և անօթ ընտրութեան էր, սակայն էր  
 «ընկեր Պետրոսի, լծակից որդւոցն որոտման, և քարոզակից  
 «Բառնաբայ: Ձիսրդ էր, զի նմա միայն պարտ էր լսել և  
 «խօսիլ զբանս անճառս՝ և իւրոց ընկերացն ոչ: Ո՞չ ապա-  
 «քէն մի շնորհք էին յամենեսին, և միւսնոյն հողի և ի նոսա...  
 «է և զայս իմանալ, թէ՛ ոչ էս միայն արժանի  
 «եղէ խորհրդոյն որ տրուպս եմ առաքելոց ալլ  
 «թէ և Պետրոս որ զլուսն է առաքելոց՝ տեսա-  
 «նիցէ, չկարէ ճառել. և թէ լսիցէ չկարէ պատ-  
 «մել»: \*)

5. «Ածէք... զուրացողսն առ արքայութեան դռնապանն  
 «և փակակալ Պետրոս». Յովհան Մանդակունի: \*\*)

Յովհան Մանդակունու ճառի մասին Վենետիկ հրատա-  
 րակիչը ծանօթութեան մէջ հետեւեալն է ասում. «Գուցէ  
 «ըստ ճեպիճեպոյ և յանպատրաստից խօսից հայրապետին  
 «զրեալ է ճառդ. չորում ընդ բազում վայելուչ և պատշաճ  
 «իմաստից՝ են և անյարմար բանք, լաւազոյն օրինակօք ստու-  
 «ղելիք»: Իսկ պ. Գարագաշեանն ալ կարծիքի է: Նա ճառն  
 ամբողջովին համարում է «ոչ արժանի, թէ ըստ լեզուին և  
 «թէ ըստ մտացն, անուան Մանդակունուցն, որ եթէ ոչ ա-  
 «շակերտակից՝ զէթ մօտ էր ժամանակաւ. թարգմանչաց:  
 «Ճառն է ոչ չորդորակ, ոչ զովեստ, ոչ շնորհակալութիւն:  
 «Ձիք ի նմա ամենեին ոչ ակնարկութիւն վերջին յաջող ելից,  
 «չորմէ թելադրեալ խօսի ատենաբանն, ոչ չիշատակութիւն

\*) Եզնիկ. Եղծ Աղանդոց. 238—40.  
 \*\*) Ճառ Դուինի եկեղեցում. Դ. Փարպ. Պատմ. 627.

«Վահանայ անձին և վաստակոց, և ոչ չիշատակութիւն տի-  
 «րոց իշխանութեան շնորհաց. պարագաներ՝ զորս ակնարկել  
 «հարկ էր և վայել. ալլ է հասարակաց տեղի Ս. Գրոց պատ-  
 «մական զիպաց ինչ, որ չունին ամենեին պատշաճութիւն  
 «օրուան նիւթոյն... Եթէ չլինէր վկայութիւն Փարպեցւոյն,  
 «որ կ'ընծալէ զճառն Յովհաննու, և կապակցութիւնն չէր  
 «այնպէս սերտ ընդ պատմութեան Փարպեցւոյն՝ մարթ էր  
 «թերևս համարել զայն յեանազոյն ժամանակի և զրչի գործ.  
 «այսինքն առանց պատրաստութեան խօսուած ի Մանդակու-  
 «նուցն, և չետոյ յայլմէ յօրինուած ըստ մտացն»: \*)

Իսկապէս այդպէս էլ պէտք է համարել: Երևի Դ. Փար-  
 պեցին չիշկլ է, թէ հայրապետն ատենաբանեց եկեղեցում, կամ  
 մինչև իսկ մի քանի խօսք է նուիրած եղել ատենաբանութեան  
 բովանդակութեանն, որից առիթ են գտել ճառը կազմելու. և  
 այդ կարող էր տեղի ունենալ է. դարից ոչ վաղ: Այդպէս հա-  
 մարելու իրաւունք են տալիս մեզ ճառի հետեւեալ խօսքերն,  
 որոնք Սրաբացիներին են միայն պատշաճում. «Մի... յածել  
 «ի խնդիրս որդւոց Հագարու, զիսահակայ աուր սիրել զգա-  
 «ւակ, և ի նորա խնդրել ի զաւակէ զմարդացեալն Աստուած:  
 «Քանզի զհարճորդեզիրն ի քարեղէն զրեալ սալսն՝ համակ  
 «խստութիւն քարոզէ քարասրտացն և չարաց». — ակնար-  
 կութիւն Մահմէտի և Ղուրանի մասին: Սրաբացիների Հայաս-  
 տանում յաշանուելուց չետոյ՝ Հայոց նախարարների քաղաքա-  
 կան ձգտումներն երկու տարբեր ուղղութեան բաժնուեցին.  
 մի մասը կամենում էր Յունաստանի կայսերական իշխանու-  
 թեանը հաւատարիմ մնալ, և զործել Սրաբացիների դէմ. միւս  
 մասն օղտակար էր համարում նոր տիրապետութիւնն. և վեր-  
 ջինների պարագլուխն էր նշանաւոր հայրենասէր Թէոփորոս  
 Ռշտունին: Ճառի վերոգրեալ խօսքերը սորանց ուղղուած չոր-  
 դոր է, որ նախամեծար համարեն քրիստոնեայ կայսրի իշխա-  
 նութիւնը:

Այսպիսով Մանդակունու անունը կրող ճառի յօրինման  
 ժամանակ աներկբայապէս է. դարը հանաչելով՝ զտնում ենք,

\*) Քննակ. Պատմ. Դ. 258:

որ այդ ժամանակից բաւական չեալ նոյն հասի մէջ արուել է ընդմիջարկութիւն, որպիսին է վերեւում կարգուածը Պետրոսի փակակալութեան մասին:

6. Եղիշէի հառերի մէջ ևս օտարածուա ընդմիջարկութիւններ արուած են յօգուտ Պետրոսի և նորա աթոռի զըլխաւորութեան: «Ամսօրեայ Հանդիսի» (1897, 131) «Սուրբ զրոց յարգն ու արժէքը հին Հայոց քով» յօգուածի հեղինակն, որ կամեցել է ծածուկ մնալ, մի կողմից գտնում է, թէ Եղիշէի «անուամբը մեզի հասած հառերուն հարադատութիւնը «կասկածելի է՝ ոճոյն տարբերութեանը պատճառաւ», միւս կողմից ասում է. «Սակայն Թափօր լերան վրայ սոյն հառերուն տուած տեղեկութիւնը՝ թէ հոն երեք սրբափայրք կան, «նման է 570-ին Անտոնինոսի աւանդածին: Բաց աստի՛ այս «հառերուն մէջ Պետրոսի զլխաւորութեան և Հռովմէական «եկեղեցւոյ վրայ շատ գեղեցիկ վկայութիւններ կան. այն- «պէս որ Զ. դարու Հայոց հերձուած էն (բառիս ընդգծուծը «մերն է) յառաջ պէտք է որ զրուած ըլլան: Ըստ այսմ Ե- «ղիշէէն շատ ետքը զրուած չեն, և այս պատճառաւ ասոնցմէ «ալ կոչում ընելու բաւական հիմ կայ»:

Եթէ Պետրոսի զլխաւորութեան խօսքը չլինէր մէջ տեղում՝ այդ հառերին աւելի ուշ ժամանակին պատշաճելը ցոյց արուած կլինէր:

7. «Ի Հռովմ հանգերձեալ էր կարգել զաթոռն Պետրոսի և Պօղոսի, և զզլխաւորութիւն «եկեղեցւոյ»: \*)

8. «Պետրոս վէմ անուանեցաւ ի տեառնէ, և հիմն եկեղեցւոյ եղաւ»: \*\*)

Սակայն վերոգրեալները դեռ այնպիսի յաւելուածներ և ընդմիջարկութիւններ են, որոնց կատարման կատարելիութեան մասին զարմանալու բան չկայ. այլ զարմանալին այն է, որ հարպիկ կեղծողները ձեռնամուխ են եղել նոյն իսկ ե-

\*) Զաքարիա կաթողիկոս, ծառ ծննդեան Քրիստոսի. Ստուածար. Ե. Հիւրմ. Ս. 212:

\*\*) Խոսք. Անձև. Մեկն. ժամագրոց. Անդ:

կեղեցում զործածուող պաշտամանց զրբերին, ինչպէս են Մաշտոցը, ձաշոց Գիրքն և Շարականը: Մաշտոցում տեղի գտած խարդախումներն երկրորդ շրջանի արդիւնք ընդունելով՝ պիտի տեսնենք յետոյ, իսկ այստեղ մէջ կրբերնք միւս երկուսը:

9. ձաշոց Գիրք: (Վ. Պօլիս, 1723 թ.) «Առեալ ընդ քեզ «գերիս չաշակերտացն քոց զ Պետրոս զեկեղեցւոյ զվէմն՝ «որում զփականս արքայութեան խոստացար: Ե. «գերկուս եղբարսն, զՅակոբոս և զսիրելին քո զՕհաննէս»: Այս աղօթքն, ինչպէս վերնագիրն է ասում՝ զրել է ս. Բարսեղը «Վասն այլակերպութեանն Քրիստոսի». ուստի ցանկալի էր յունարէն բնագրի հետ համեմատել, եթէ այդպիսին կայ ներկայումս, ինչպէս և ձեռագիր ձաշոցների հետ:

10. Շարական: Մեր եկեղեցում միշտ ղեկավարներ ամսի վերջում կատարում են չորս տօներ, որոնք սովորաբար կոչւում են աւագ կամ մեծ տօներ, և սորանք են. 1. Դաւիթ Մարգարէի և Յակոբ առաքեալի. 2. Ստեփաննոս Նախավկայի. 3. Պետրոս և Պօղոս առաքեալների. 4. Որդւոց Որոտման. չորսն էլ ունեն իրանց յատուկ շարականների «կանոններ»: Երրորդ տօնի շարականի վերնագիրն է. «կանոն Պետրոսի և Պօղոսի զլխաւոր առաքելոց»:

Մեր եկեղեցու բոլոր հայրերն, երբ ստիպուած են եղել հռոմէական աթոռի քարոզած Պետրոսի զլխաւորութեան վարդապետութիւնը հերքել, միշտ այն համոզմունքն են պաշտպանել, թէ առաքեալների մէջ զլխաւոր և ստորապրեալ, մեծ և փոքր չէ եղել և չկայ. այլ ամենքն էլ հաւասար են իրանց ստացած առաքելական իշխանութեամբ: Այդ վարդապետութեան պաշտպանութեանն էր նուիրուած, ինչպէս տեսանք, և Կոստանդին կաթողիկոսի առ չեթում զրած նամակի մի յօդուսը: Նոյն միտքն է յայտնում և Գրիգ. Տաթևացին. «Ամենեքեան (առաքեալները) համահաւասար զիշխանութիւն «առաքելութեան և քահանայապետութեան ունէին... նախ՝ «ղի յեա յարութեանն հաւասար եա զիշխանութիւնն, փչեաց «ի նոսա և ասէ (զոր ոք կապիցէք՝ կապեալ լիցի և այլն)»:

«Որ և զգատողական աթոսս՝ երկոտասանիցն հաւասար շնոր-  
«հեաց»։ \*)

Թէև շատ օտարաւի է, որ այգպիսի սկզբունք դաւա-  
նող եկեղեցու մէջ «զլխաւոր» խօսքը զործ է գրուել Պեա-  
րոսի և Պօղոսի համար, բայց դեռ հասկանալի է, ըստ որում  
ԺԲ. դարից սկսած մեր եկեղեցու հայրերից ոմանք զլխաւոր  
և զլուխ բառերը զործ են ածել Պեարոսի անուան հետ: Այգ-  
պիսիներից առաջինը Ներսէս Ննորհալին է նանաչուած, որ  
«Այսօր աննառ» երգի երրորդ տան մէջ ասում է. «Գլխօյն  
ընտրեալ հօտին փորու»: Կասկած չկայ, որ այգբանն էլ հռո-  
մէական վարդապետութեան, կամ աւելի հիշող ասած՝ վերը  
յառաջ բերուած օտարապատուաստ յաւելումների և խարդա-  
խումների արդիւնքն է, բայց և այնպէս՝ մեր հայրերն այգ  
բառերի զործածութեանը վարժուելով հանդերձ՝ երբէք նո-  
րանց իմաստը չեն ըմբռնել հռոմէական մտքով.— զլուխ կամ  
իշխան առաքելոց նշանակութեամբ. այլ ընդունել են իբրև  
պատուանուն, որ տրուած է Պեարոսին ըստ հասակի ծերու-  
թեան՝ խմբապետ կամ դասապետ հասկացողութեամբ. այգ-  
պէս էլ բացատրուած է Գր. Տաթևացին. (Պեարոսը) «զլուխ  
«կոչի վասն երից. նախ՝ վասն դաւանութեանն նախկին. երկ-  
«րորդ՝ վասն սիրօյն. երրորդ՝ վասն ծերութեանն»: 62)

Աւագ ուրբաթի շարականի մէջ Պեարոսը «վէմ հաւա-  
տոյ» ևս կոչուած է. «Այսօր զվէմն հաւատոյ շարժեալ փոր-  
ձողին». սակայն այգ կոչման նշանակութիւնն էլ ոչ մի կապ  
չունի հռոմէական վարդապետութեան հետ: Տաթևացին ա-  
սում է. «Եւ վէմ դաւանութիւնն էր, որ խոստովանեցաւ  
«գՔրիստոս որդի Աստուծոյ կենդանույ. և ի վերայ այնմ դա-  
«ւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից»:

Մեր եկեղեցին երզում է մի ուրիշ շարական ևս, որի  
մէջ «վէմ հաւատոյ» ասացուածի իմաստն այնքան պարզ է  
արտայայտուած, որ ոչ մի կասկած չէ թողնում ասելու, թէ  
արդարև նորա հասկացածը դաւանութիւնն է և ոչ մի կամ

\*) Գիրք Հարց. 546.

միւս անձնաւորութեան առանձնական արժանիքը կամ ար-  
տօնութիւնը. «Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց և  
մարգարէից շինեցեր զք՞ սուրբ զեկեղեցի»: Մի ուրիշ շարա-  
կանում էլ երզում ենք. «Երևեցար յարուցեալ՝ եկեղեցուց քո  
հիմանց». իսկ վէմ և հիմն խօսքերը միմեանց հետ անբաժան  
կապուած են:

Կրկնում ենք դարձեալ, թէ «զլուխ», «զլխաւոր» բա-  
ռերի զործածութիւնը հասկանալի է, ուստի և դարմանալի  
չէ. նորանց նշանակութիւնը բացատրուած է. իսկ ի՞նչպէս բա-  
ցատրել Պեարոս-Պօղոսի տօնի օրը եկեղեցում երզուած հե-  
տեւեալ շարականատները.

1. «Որ զերազօյն ընտրելոց առաքելոցն դասուց անուա-  
«նեցեր լինիլ զերանելին զՊեարոս, զլուխ սուրբ հաւատոյ  
«հիմն եկեղեցուց»:

2. «Որ խոստացար տալ զփականս արքայութեան երկ-  
«նից երանելոյն Պեարոսի»:

3. «Փակողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն  
«Պեարոս»:

Այգ տողերի մէջ բացայայտ երևում է հռոմէական եկեղեցու  
վարդապետութիւնը. Պեարոսը փառաբանուած է իբրև «զլուխ  
և իշխան առաքելոց», իբրև «զլուխ սուրբ հաւատոյ», որ ա-  
սել է զլուխ համօրէն եկեղեցեաց, և իբրև «փակակալ ար-  
քայութեան». — կապող և արձակող իշխանութիւն:

Սրեկիւան բոլոր եկեղեցիներն, որոնց հետ և հայաստան-  
եացցս, զլուխ եկեղեցուց միայն զՔրիստոս են դաւանում. իսկ  
Քրիստոսի աշակերտներին բոլորին միմեանց հաւասարապա-  
տիւ, բոլորին ևս տուած միանման իշխանութիւն — կապելու  
և արձակելու միւսնոյն իրաւունքն. ոչ աւելի՞ մէկի համար,  
ոչ պակաս՝ միւսների: Այգպէս էլ երզում է մեր եկեղեցին  
բոլոր առաքեալների չեշատակին նուիրուած տօնի օրը. «Կա-  
«նոն համօրէն առաքելոցն Քրիստոսի. Օրհ. Որք առիք իշխա-  
«նութիւն ի վերայ ազգի մարդկան, կապել և արձակել ի չե-  
«կինս և ի չերկրի:

«Որոց խոստացար նստիլ յաթոռ դատողական»:

Հայոց եկեղեցու այս մասին յայտնած և պաշտպանած սկզբունքն այնքան ակներև, այնքան անժխտելի է, որ չենք կարծում թէ անկողմնակալ մէկը դժուարանալ խոստովանել, թէ Պետրոսի զերիշխանութեան և փակակալութեան նուիրուած վերոկարգեալ շարականաւորներն օտարապատուաստ անհարազատութիւններն են:

Իսկ անհարազատութիւնն ե՞րբ յօրինուած և մէջտեղ հանուած պիտի լինի: Այդ իմանալու համար հարկաւոր է նախ դանել աւագ տօների շարականների հեղինակին:

Ներկայումս, այս սողերը դրելիս, թէև աչքի առաջ չունենք Շարականի հին ձեռագիր օրինակներ, որոնց ցուցմուքներով առաջնորդուելով՝ նշանակէինք թէ ո՞ր հեղինակ ի՞նչ շարական է յօրինել, բայց ունեցած աղբիւրների հիման վերայ էլ ապահովապէս կարելի է ասել, թէ նոյն իսկ ձեռագիրների մէջ շարականների մի մասի հեղինակներն նկատմամբ չկայ համաձայնութիւն: Մեր աղբիւրներն են՝ Գր. Տաթևացու հարցմանց Գիրքն, և Կ. Պօլսի՝ 1852 թ. ս. Էջմիածնի՝ 1861 թ. և Երուսաղէմի՝ 1884 թ. տպագրուած Շարականները: Տաթևացու ցանկը կազմուած է ԺԴ. դարի վերջում, անշուշտ՝ նոյն ժամանակում իրան: յայտնի Շարական ձեռագիրների և այլ աղբիւրների վկայութիւնների համեմատ, բայց դարձեալ չզիտէ մի քանիսի իսկական հեղինակներին. և ստիպուած է տարակուսական դատմներն այնպէս էլ դնել: Այսպէս են՝ 1. Մ. Խորենացուն ընծայուած մի քանի շարականներ, որոնք ըստ ոմանց ոչ նորա, այլ Անանիա Շիրակացու գրածներն են. — «Այլև զկարգն Յարութեան... Եւ զՊենտեկոստէին, և զՎարդապետին, և զսուրբ Գրիգորին, և զՅովհաննէնուն, և զՄարգարէիցն, և զՎարդանանցն (Պօլսի և Երուս. ի «Շար. զՎարդապետացն), և զԱռաքելոցն, և զԹագաւորացն, և զԱնտօնին: Զայս ամենայն ոմանք Անանիայի տան և ոմանք Խորենացոյն»:

2. Հռիփսիմեանց, «Անսկիզբն բանն Աստուած». — «Եւ զԱնսկիզբն Յօհան Մանդակունին: Եւ այլք ասեն թէ Օձնեցին»:

3. Ս. Յակոբի շարականը. — «Ներսէս Կլայեցին... Յոմանց լուսք թէ զսուրբ Յակոբին այլ...»:

Յիշեալ ցանկում բացի վերոգրեալներից մնացած շարականների յօրինողները նշանակուած են անկասկածաբար. այն ինչ այդ մնացածներից մի քանիսի համար էլ միւս ցանկերը չեն համաձայնում նորան, իհարկէ ուրիշ ձեռագիրների համեմատ կազմուած լինելով:

Ահա օրինակներ.

ՏԱԹԵԻԱՅԻ

1. «Նախ մեծն Մեսրոպ զկարգն Ապաշխարութեան, և սուրբն Սահակ զԱւագ շարութեանն»: Համաձայն են Պօլսի և Երուս. ի ցանկերը:

2. Ինչ որ Տաթևացին թէ անկասկածաբար և թէ կասկածօրէն տալիս է Խորենացուն՝ այդպէս դնում են նաև Պօլսի և Երուս. ցանկերը:

3. «Զ Մեղաք յամենայնին և զկարգ մեծ տօնիցն, Յօհան Օձնեցին»: Պօլսի և Երուս. ցանկերը «զկարգ մեծ տօնիցն» ն. Շնորհալու գրածն են համարում, «ըստ ոմանց». «Ոմանք զկարգ մեծ տօնիցն ևս սմա (Շնորհալուն) տան»:

Ս. ԷՋՄ. ՇԱՐԱ. ԿԱՆ

«Նախ ս. Իսահակ և ս. Մեսրոպ սասցին զութն եղանակաւոր ձայնսն, և զերկու ձայն ստեղիս: Ապա ս. Իսահակ՝ զՂազարուն, և զկարգն Աւագ շարութուն: Բ. Եւ ս. Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան»:

Ս. Էջմիածնի ցանկը մնացածներում համաձայն է միայն կասկածաւորներից մէկը — «զՅարութեան հարցսն» անկասկածաբար Խորենացուն է տալիս:

Ս. Էջմիածնի ցանկը «զկարգ մեծ տօնիցն» Յովհ. Օձնեցուն է համարում:

ՏԱԹԵԻԱՅԻ

Ս. ԷԶՄ. ՇԱՐԱԿԱՆ

4. «Զխաչին և զԵկեղեցւոյ, Սահակն որ պնաց ընդդէմ տանկաց» (Զորափորեցին):

Պօլսի և Երուս. ցանկերը համաձայն են:

5. «Զորս ըստ պատկերին՝ Գրիգոր Մաղխարոսն»: Համաձայն են Պօլսի և Երուսաղէմի ցանկերը:

6. «Իսկ զՆերսէսին մեծի և զԽոտանարակացն՝ Յօհաննէս Պլուզն»:

7. «Եւ զԼեոնդեանց Մանկուներն Սարկաւազ վարդապետըն որ ի հաղբատ»:

Պօլսի և Երուս. ցանկերը Սարկաւազ Վարդապետի անունը բնաւ չեն չիշուծ:

8. «ԶՍրբութիւն սրբոցն Խաչի, Սանփաննոս Սիւնեցին»: Պօլսի և Երուս. ցանկերը Ստ. Սիւնեցու անունը չեն չիշուծ իբրև «Սրբութեան սրբոցի» յօրինող:

Ս. Էջմ. ցանկը բացի վերոգրեալներէն՝ Զորափորեցուն է տալիս նաև «ՂԿենդանազիր անարատն» և «Որ զարդարեաց». իսկ կասկածաբար՝ «Զորս ըստ պատկերին»:

Ս. Էջմ. ցանկ. «Գր. Մաղխարոսն՝ զԶորս ըստ պատկերին, զոր այլը՝ Իսահակայ Զորափորեցուց տան»:

Ս. Էջմ. Պօլսի և Երուս. ցանկերը Յովհաննէս Պլուզի զրածրն են համարուծ «և զԼուսաւորչի Անծինքն»: (63)

Ս. Էջմ. ցանկ. «Յօհաննէս վարդապետն՝ Սարկաւազ կոչեցեալ՝ զԼեոնդեանց Մանկուներ՝ զՊաշտառացան այսօրն»:

Ս. Էջմ. ցանկ. «Ստ. Սիւնեցի երկրորդն՝ զՍրբութիւն սրբոց Խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչի»:

ՏԱԹԵԻԱՅԻ

Ս. ԷԶՄ. ՇԱՐԱԿԱՆ

9. Տաթևացու, Պօլսի և Երուսաղէմի ցանկերը չեն չիշուծ մի քանի շարականներ:

Ս. Էջմ. ցանկն չիշուծ է երեք հեղինակների երգած շարականներ ևս. 1, Յակոբ վ. Սանահնեցի՝ «ՂՅանսկզբնական ծոցոյ հօրն.» 2, Խաչատուր վ. Տարօնեցի՝ «ՂԽորհուրդ խորինն.» 3, Կիրակոս վ. Եզնկացի՝ «ՂԱրևելք զերարփինն, զոր ոմանք Կիրակոսի թարգմանչի տան»...

Շարականների հեղինակների մասին աիրող անհամաձայն կարծիքների և տարակուսանքների վերայ այսքան խօսել հարկ համարեցինք, որպէս զի թէ այժմ և թէ յետոյ այս կամ այն շարականի յօրինման ժամանակի և յօրինողի մասին խօսելիս ընթերցողներն հնարաւորութիւն ունենան մեր ասածների նկատմամբ հաւանողական կամ ոչ-հաւանողական համոզմունք կազմելու:

Դառնանք մեր խնդրին:

Ինչպէս տեսանք, Տաթևացու և ս. Էջմիածնի ցանկերը Աւագ տօների շարականներն ընծայուծ են Յ. Օձնեցուն. իսկ Պօլսի և Երուսաղէմի ցանկերը—Ն. Շնորհալուծն: Մեր կարծիքով, և նոյն իսկ խորին համոզմունքով՝ այդ շարականների հեղինակն ոչ Օձնեցին է և ոչ Շնորհալին:

Օձնեցու մասին շատ թէ քիչ խօսող պատմիչներն են՝ Յովհաննէս Զ. կաթողիկոս, Սա. Ասողիկ, Սամուէլ երէց, Մխիթար Այրիվանեցի, Վարդան վ. և Կիրակոս Գանձակեցի: Սորանցից առաջինն է Օձնեցուն ժամանակով մերձագոյն, նա էլ միայն այսքանն է ասուծ իմաստասէր հայրապետի զրաւոր վաստակների մասին. «Սա գրով զրոշմեալ՝ տաչ եկեղեցուց Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտաման «ժամուց, զեղեցիկ իմն յօրինուածով հոխացուցեալ և բացաւ «յայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս ի մխիթարու»:

«Թիւն կղերց եկեղեցոյ: Այլ և նառս ևս ինքնախօսս բս-  
 «նաստեղծս յարդարեալ՝ զղջացուցիչս չար դործոց և յորդո-  
 «րականս ի պէտս ապաշխարողական սակի» (Պատմ. 57):  
 Ուրեմն յօրինած շարականների մասին ոչ մի խօսք: Թէպէտ  
 յառաջ բերուած տողերից չետոյ գալիս են և հեռակալները.  
 «Սա ամենայն առաքինի քաջողջութեամբ զանձն տուեալ աշ-  
 «խատասիրաբար կրթական շանիւ զինքն զինէր յերգս հո-  
 «գևորս պահօք և աղօթիւք և ամենազիշեր տընութեամբ»,  
 սակայն մի ուրիշ օրինակում յերկս բառն է, որ իսկապէս  
 էլ յարմարում է խօսքի իմաստին: Միւս պատմիչներից մի-  
 միայն Կիրակոսն է լիշում իմաստասէրի գրուածների թուում  
 և մի շարական—Դաւթի մարգարէի և Յակոբայ առաքելոյ  
 տօնի «հարցր», «Մեղաք յամենայնի». «Կարգեալ զընթեր-  
 «ցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրղի, և զամենայն տօնսն՝ որ-  
 «պէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի՝ տօնեցին ի խե. գեկ-  
 «տեմբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքե-  
 «լոյն, զոր յայլ ազգս ծննդեան Տեառն տօնէին. և երգեաց  
 «շարական հարցին. Մեղաք յամենայնի և զպատուի, որ մին-  
 «չև ցայսօր պաշտի չեկեղեցիս Հայոց, սկսեալ ի ճՅԵ. (175)  
 «Թուականէն մինչև ի ՈՂ. (690) Թուականս, որ այժմ յա-  
 «ւուրս մեր է»: \*)

Որչափ էլ Եզր կաթողիկոսի միաբանութիւնն Յոյների  
 հետ և նորան յաջորդող մի քանի կաթողիկոսների համամիտ  
 ջանքերն անկարող եղան իրանց ընդունած կրօնական նորա-  
 ծիսութիւնները մտցնել Հայոց եկեղեցու լրութեան մէջ, այ-  
 սուլամենայնիւ այդ նորամուծութիւնները յունական բաժնի  
 մի քանի տեղերում ընդունուած և դործադրուած են եղել.  
 այդ պատճառով ազգի մէջ տեղի ունեցած յուզմունքներն,  
 երկպառակութիւններն և թշնամանքները շարունակ անպա-  
 կաս են եղել մինչև Օծնեցու ժամանակն, որ եկեղեցու և ազ-  
 րի անդորրութիւնը վերահաստատելու միջոցներից զլիսաւորը  
 համարեց նորածիսութիւնները խափանել և վերանորոգել ազ-

\*) Կիրակ. Պատմ. եր. 39.

գալին ձէսերն և արարողական կարգերը: Պատմիչների խօս-  
 քերը զլիսաւորապէս Օծնեցու այդ մասում մատուցած ծա-  
 աւայութիւնների վերայ են շեշտում.— Ասողիկ, Վարդան, Կի-  
 րակոս:

Կիրակոսի խօսքերից այն է երևում, թէ յառաջագոյն ևս  
 մեր եկեղեցում գեկտեմբերի 25-ին կատարել են Դաւթի մար-  
 ցարէի և Յակոբ առաքեալի տօնը. բայց վերջիշեալ ժամա-  
 նակում տեղ-տեղ սկսած են եղել այդ օրը Մնունդի տօն կա-  
 տարել, և Օծնեցին ժողովական կանոնադրութեամբ նորա-  
 մուծութիւնը բառնալով՝ վերստին հաստատել է առաջին տօնը,  
 և այդ առիթով «երգել» է «Մեղաք յամենայնի» շարականը:  
 Հ. Զարբանսկեանն այդ շարականն Օծնեցուն վայել գրուած  
 չհամարելով՝ չէ կամենում «երգելը» յօրինելու մաքով ընդու-  
 նել (64). սակայն ինչ մաքով էլ ընդունելու լինենք, պարզ է,  
 թէ մինչև ԺԳ.—ԺԴ. դարն ևս Օծնեցի հայրապետի անուան  
 հետ կապուածն այդ միակ շարականն է եղել և ոչ մեծ տօ-  
 ների սմբոյշ կարգը: Տաթևացին էլ Կիրակոսի նման այդ  
 շարականն է համարել Օծնեցուն և գրել է. «Զմեղաք յա-  
 մենայնին՝ Յօհան Օծնեցին». իսկ չետոյ ուրիշն աւելացրել է  
 «և զկարգ մեծ տօնիցն». բայց անհարազատ յաւելուածն իս-  
 կոյն հասկացուած է: «Մեղաք յամենայնին» Դաւթի և Յա-  
 կոբի տօնի «հարցի» շարականն է. եթէ Տաթևացին ասած  
 լինէր թէ Յովհան Օծնեցին է մեծ տօների «կարգի» (շարա-  
 կանների) հեղինակն, այն դէպքում աւելորդ կլինէր տօներից  
 մէկի հարցի շարականն առանձին և ամենից վեր չիշելը. բա-  
 ւական էր միայն ասել. «Զկարգ մեծ տօնիցն Յովհան Օծնե-  
 ցին». ինչպէս անում է ս. Էջմ. ցանկն, որ այդ դէպքում հե-  
 տեւած լինելով Տաթևացուն՝ միևնոյն ժամանակ բաց է թո-  
 դել «Զմեղաք յամենայնին» և գրել միայն—«Յօհան Օծնեցի  
 իմաստասէրն զկարգ մեծ տօնիցն»:

Նորանք, որոնք կատարուեան Տաթևացու ցանկի մէջ  
 «և զկարգ մեծ տօնիցն» անհարազատ յաւելուած ընդունել,  
 թող չմոռանան, որ Պօլսի և Երուսաղէմի ցանկադրիւրներն  
 էլ այդ շարականներն Օծնեցուն չեն տուել, որ ասել է թէ

նորանց հեղինակի նկատմամբ կասկածներ եղել են. իսկ Տաթևացին կասկածալորները նշանակելիս զանց չէ արել ասել. — ոմանք էլ այս ինչ հեղինակին են վերագրում. մինչդեռ վերոգրեալների համար այդպիսի բան չկայ:

Կիրակոսի և Տաթևացու վկայութիւնների հիման վերայ սրբոց Դաւթի և Յակոբի «Մեղաք յամենայնի» շարականն Օձնեցունն ընդունելուց յետոյ՝ մնում է գիտենալ, թէ միւս տօների «կանոններն» ե՞րբ և ո՞վ է գրել:

Ի հարկէ տօն առանց հողևոր երգերի չէ կատարուում. իսկ թէ չիշեալ երեք տօներն ևս—Ստեփաննոսի, Պետրոս-Պօղոսի, Որդուց Որոտման—նոյնքան հին համարենք, որքան առաջինը, պէտք էր կարծել, թէ վերջինների «կանոններն» էլ յօրինուած և երգուած լինելու են շատ վաղուց. սակաջն տօնի հնութիւնը դեռ շարականի հնութեան ապացոյց չէ: Յայտնի է, որ եղել են տօներ, որոնց յատուկ շարականները շատ յետոյ են յօրինուել քան տօնակատարութեան սկզբնաւորութիւնն. որ ցոյց է տալիս, թէ երգուածներն եղել են ուրիշ «կարգերից» առնուած շարականներ. ինչպէս այժմ ևս լինում է: Եթէ այս պատճառով դժուար է միւս մեծ տօների շարականների յօրինողներին և յօրինման ժամանակը գրտնել, գոնէ կարելի է ասել, թէ ԺԳ.—ԺԴ. դարերում նորանք գոյութիւն են ունեցել. իսկ թէ յետոյ ե՞րբ պիտի ընդունուած և անցած լինեն եկեղեցում երգուողների կարգը՝ չենք կարող ասել:

Մեզանում սակաւ չեն այնպիսի շարականներ, որոնք թէև յօրինուել են, բայց կամ ամենեւին կամ երկար ժամանակ եկեղեցում մուտք չեն գտել. կամ եթէ տեղ տեղ էլ երգուել են՝ յետոյ գործածութիւնից ընկել են: Այդպիսիներից են օրինակ՝ ս. Գեղարդի, ս. Գէորդի և այլ շարականներն, որ պահուած են ձեռագիրներում: Տաթևացին այդպիսի դանազան և անպատշաճ շարականներն աչքի առաջ ունենալով՝ իւր ցանկը փակում է հետևեալ ազգարարութեամբ. «Այս «քան շարականս ընդունելի է յեկեղեցի. և աւելին քան «զայս՝ խոտելի է և անպիտան»». և քանի որ նորա ցանկի

«մէջ միայն Մեղաք յամենայնի» է, կարելի է կարծել, թէ մնացած մեծ տօների շարականները նորա օրով դեռ եկեղեցում գործածական չեն եղել: Այս խնդիրը պարզելու համար շատ մեծ նշանակութիւն կունենար մի այնպիսի ձեռագիր տօնացոյց, որ թէ Գր. Տաթևացուց յառաջ գրուած լինէր և թէ գրիչն ու տեղը յայտնի: Ս.ա. այժմ մեր եղրակացութիւնն այս է. նախ՝ չիշեալ երեք մեծ տօների շարականների ոչ յօրինողն է յայտնի և ոչ յօրինման ժամանակը. հետևաբար և հիմք չկայ ընդունելու թէ նորանք մի մարդու և մի ժամանակի գործ են: Երկրորդ՝ ս. Պետրոս-Պօղոսի «կանոնն» անհարազատ ձեռնմխութիւն է կրել ԺԳ.—ԺԴ. դարերում. և ձեռնմխութեան արդիւնքն են վերը կարգուած շարականատներն: Երրորդ՝ խարդախումն կատարողներն և նորանց յաջորդողները շանք են գործ դրել նոյնը եկեղեցու գործածական երգերի մէջ անցկացնել. և օգտուելով այն հանդամանքից, որ միւս մեծ տօների շարականների հեղինակն էլ յայտնի չէ, բացի մէկից, որը «երգել» է Յովհ. Օձնեցին, աշխատել են բոլորը միասին նոյն հալրապետի գործ համբաւել. բայց Օձնեցու թէ ժամանակն և թէ ազգի մէջ վաչելած անպայման վստահութեան չիշատակր տեղի չեն տուել այդպիսի յետադոյն և մեր եկեղեցուն խորթ վարդապետութեան, որպիսին է Պետրոսի զխաւորութիւնն և արքայութեան միայնակ փակակալի իշխանութիւնն, և կասկած է չարուցուել մէջտեղ հանուած համբաւի նկատմամբ, որ զնալով այն կարծիքն է զոչացրել, թէ այդ շարականների հեղինակ Ն. Շնորհալին կարող է լինել, քանի որ վերջինի մի երգի մէջ Պետրոսի համար նոյնպէս ասուած է՝ «զլխոյն ընտրեալ հօտին փօքու». այսպիսով ձեռագիրներից մի քանիսի մէջ մուտք են գտել թէ սկզբնական համբաւն և թէ յետոյ զոչացած կարծիքը: Տաթևացին երկուսն էլ մերժողներիցն է. բայց և այնպէս նորա մահից յետոյ խարդախող ձեռքն հէնց նորա ցանկի մէջ էլ աւելցրել է Օձնեցու անուան մօտ «և զկարգ մեծ տօնիցն»:

Անշուշտ ընթերցողներից ոմանք կարող են զարմանալ և հարցնել թէ՛ ի՞նչպէս ուրեմն եկեղեցում ընդունուել և եր-

զուել կարող էր մի շարահան, եթէ արդարև անպատշաճ է նա եկեղեցու ոգուն կամ նորա համար խորթ վարդապետութիւն է արտայայտում: Յաւօք սրտի պիտի պատասխանենք, թէ շատ են օրինակներն, որոնք ապացուցանում են, թէ ինչ որ անկարելի է մի ուրիշ եկեղեցու համար, ուր յարդուած է և պահպանուած է անպայման հետեւողականութիւն, մեղսնում կարելի է եղել միմիայն նորա համար, որ եկեղեցու պաշտօնեաներից և ղեկավարներից ոմանք շատ աղօս և սահմանափակ հասկացողութիւն են ունեցել իրանց պարտքի և իրաւունքի մասին, այնքան սահմանափակ, որ ոչնչով չէ զանազանուել կամայականութեան և քմահանձօքի հասկացողութիւնից: Այդ է պատճառն, որ մեղանում միայն մէկը կամ երկուսը չեն այնպիսի երգեր և աղօթքներ, որոնք մանաւանդ յետին ժամանակների ապաղրուած Շարականների և Մաշտոցների մէջ մուտք են դաել և դարձել զործածական. բաւական է չիշել, որ նոյն իսկ մեր օրերում Գէորգ Գ. կաթողիկոսը չկամեցաւ իւր անուանակից սուրբ Գէորգի տօնն առանց յատուկ շարականի կատարել և ձեռագիրների անգործածականներից մէկը առաւ և մտքրեց եկեղեցու ընդունածների մէջ: Կամայականութիւններն այն հետեւանքներն են ունեցել, որ Հայոց եկեղեցու Տօնացոյցի չունեցած մի տօն, որ չէ կատարուած Մայր Աթոռում և նորա անմիջական տեսչութեան ստորադրուած եկեղեցիներում, կատարուած էր մի ժամանակ Տաճկաստանի բոլոր Հայ եկեղեցիներում, և այսօր էլ կատարուած է Երուսաղէմի Հայոց պատրիարքական աթոռում և նորան ստորադրուած եկեղեցիներում. այլ ևս չենք խօսում այն անտեղի և անկանոն դանազանութիւնների մասին, որոնք տիրում են մեր եկեղեցիներում և վերջերս նաև Մայր աթոռում տօնական և այլ արարողութիւնների և պաշտամունքների մէջ հակառակ նախնաւանդ սովորութիւնների և կարգերի: Գորանց մասին կխօսենք ուրիշ տեղում:

Գ. Հայոց Լուսաւորիչը Հռոմի աթոռից է ստացել հայրապետական կամ պատրիարքական իշխանութիւնը:

«Կեց՛ ո՞ր զորդի ծառայի քո,  
 «Ձոր ի հօովմայ զահիցն վերապատուեցեր.  
 «Ուր եղին զվէ՛մն հաւատոյ,  
 «Հիման սուրբ եկեղեցւոյ»:

Այս շարականի մասին կխօսենք յետոյ:

Դ. Ջրախառն բաժակի զործածութիւն Հայոց եկեղեցում:

«Այլ մի՛ իբրև ի լոկ հաց հայիցիս, և մի՛ իբրև զգինի  
 «համարիցիս և տեսանիցես, զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնս. քանզի  
 «ոչինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս ի խորհուրդն և  
 «ի մկրտութիւնն, այլ իմանալի: Ջուր տեսանեմք, այլ աստուածային բանին հաւատամք, որ ասէն, եթէ այս է մարմին իմ և արիւն. որ ուսէ ի մարմնոյ իմմէ և ըմպէ չարենէ իմմէ, նա չիս բնակեցէ և ես ի նմա». Յովհան Մանգակունի. Ճառ ԻԲ. «Վասն զզուշութեամբ և երկիւղիւ ի ս. խորհուրդն մերձենալոյ»:

Հատուածիս աղաւաղումն այնքան ակներև է, որ հաղիւ թէ պէտք լինէր նորա վերայ կանգ առնել: Ամեն անկողմնասէր անձն վերոգրեալը կարգալիս իսկոյն պիտի համոզուի, թէ հառի հեղինակն (ոչ Մանգակունին) երկու խորհրդի վերայ է խօսել — հաղորդութեան և մկրտութեան. բայց խարդախող ձեռքը կրնատել և աղաւաղել է այնքան, որ դուրս գայ, թէ Մանգակունին չուր բառը զործ է ածել բաժակի մէջ խառնելու համար. և կրնատման հետեւանքն այն է եղել, որ «ի մկրտութիւն» խօսքը մնացել է նշանակութիւնից զրկուած. իսկ չուր բառը թէև մօտեցել է հաց և զինի բառերին, բայց առանց իմաստով չարուելու նորանց. — չուր ենք տեսնում, բայց աստուածային խօսքին ենք հաւատում, որ ասում է «այս է իմ մարմինն և արիւնը»: Սակայն հանդ. Յովսէփ վ. Գաթրրոնեան զաել է թէ՛ այդ աղաւաղումն կատարուել է հաչապաւան ընդնորինակողի ձեռքով բոլորովին հակառակ զիտաւորութեամբ, այսինքն՝ որ Մանգակունին «ուղղափա-

\*) Յովհ. Մանգակունու շառք. Վննետ, 1860. 168:

ուական» մտքով շուրջ նշանակել է իբրև դիմուն խառնելի, իսկ ընդօրինակողը կամեցել է նախադասութեան մէջ «հաց և դինին» զեղչել, թէև աղաւաղումն չէ յաջողել: Ի հարկէ այդքանը բաւական չէ եղել չիշեալ հեղինակի համար. նա իւր արած զիւտն իբրև դէնք ձեռք է առնում հայ եկեղեցու Ութերօրյ դարում, Յովհան Օձնեցի հայրապետի նախադասութեամբ գումարած ժողովի ստախօսութիւնն էլ նշաւակելու համար, ժողովի, որ համարձակել է ասել՝ «Արժան է և զհացն՝ «անխմոր, և զդինին՝ անապակ հանել ի սուրբ սեղանն, ըստ «աւանդելոյն մեզ սրբոյն Գրիգորի և ոչ խոնարհել յայլ ազգաց «քրիստոնէից աւանդութիւնս»: Անապակ բաժակի հնութիւնը տանել Լուսաւորչի անուան հետ կապել.— այդ է անհա, որ հեղինակի զայրոյթը հասցրել է վերին աստիճանին: Նա արդէն սուտ է գտել այն, թէ Լուսաւորիչը պատարագ և հանդանակ է սուել իւր եկեղեցուն. թէ՛ «Իսկ մեր փառաւորեսցուքը» նորս չաւելուածը չէ. բայց դեռ կարող էր ներել մեզ այդքանն, եթէ հայոց եկեղեցին այդքանով բաւականանար. այն ինչ նա չէ բաւականացել, և ս. Գրիգորին այնպիսի «մեծ խայտառակութիւն և անհանդուրժելի այլանդակութիւն» է ընծայել, որպիսին է անապական բաժակի աւանդումն: Բերենք հեղինակի իսկական խօսքերն, որոնք տպագրուած են 1897 թուին, Վիեննայի Միսիթարեան տպարանում, զեր. Արսէն արքեպիսկոպոս Ալարնեանի արքայութեան օրով և հ. Յակ. Տաշեանի հրատարակութեամբ ու ծանօթութիւններով. «Սակայն, ասում է հեղինակն, սիրով կը ներուէր ասանկ «ըսողներուն՝ եթէ մինակ հոս մնային: Բայց մեծ դժբաղդութեամբ մը անանկներ ալ սրբազան խորհրդոյն նկատմամբ «կ'ընծայուին Սրբոյն՝ որ մեծ խայտառակութիւն և անհանդուրժելի այլանդակութիւն է: Եթովպացի սէւերը թուիս «կը նկարեն հրեշտակներն ալ: Հայերը անապական պատարագել կուտան իրենց Սրբոյն: Ասոնք խաւարային ժամանակէ մը ժառանգելով աս մոլորութիւնը՝ չանկարծ իրենց «Լուսաւորչին բեռնաւորելով կ'ուզեն անմեղացնել: Տրդ դարուն եպիսկոպոսաց ժողով մը կը յանդգնի աս վճիռը չա-

«խուռն բերել. «Կանոն Ը. Արժան է և զհացն՝ անխմոր, և «զդինին՝ անապակ հանել ի սեղանն, ըստ աւանդելոյն մեզ «սրբոյն Գրիգորի, և չխոնարհել յայլոց ազգաց քրիստոնէից «աւանդութիւնս: Զի սուրբ Լուսաւորիչն՝ յօրինականէն բե- «րեալ զայս, տաքելաբար հրաման ետ կատարել իւրօցն վի- «ճակելոցն»... Իրաւ է, Սուրբերն ալ անսխալ չեն, կրնան «սխալիլ, սակայն դժուարին է մտածել որ Աստուած իւր «քաղցրութեամբն ասանկ քարոզութեան համար ընտրեալ «մարդոյն թոյլ տայ որ չափերն այնպէս անցնի՝ մինչև մո- «լորեցնել ժողովուրդ բազում և դարեր:

«Աստուած իր Սուրբն արդարացուցած է: Նոյն իսկ չի- «շեալ ժողովոյն զահերէցը քանի մը տարի ետքը բոլոր հայաս- «տանի կանոնադրութիւնները կը հաւաքէ,— ունինք այսօր «դանիկայ անթերի,— բայց չի գտներ կանոն մը ի Սրբոյն Գրի- «գորէ կամ անոր յաջորդներէն՝ որ նման ըլլայ իրենին, Տրդ «դարուն. կը պակսի այսպէս բոլորովին աս ձրի ենթադրու- «թեան վկայութիւն մը՝ 400 տարի Սուրբէն ետքը:

«Այսպէս ստած է ինք զինք ան վճիռը բաց առա- «պէս աշխարհօրէն: Հազիւ անկէ ետքը խենթ բաներ խօ- «թուած են:

«Խնամած է Տէր՝ Սրբոյն համբար դրականապէս «ալ տիեզերական եկեղեցւոյն առջև: Աս վճռէն 200 տարի «չառաջ՝ հայաստանի համար կը վկայուի որ այսպիսի չարա- «չար սովորութիւն չկայ, այլ անոր հակառակ՝ հաց, դինի և «չոր կելլէ պատարագի, և բոլոր ժողովուրդը զասոնք կը «տեսնէ: Այսպէս վկայուած է, ինչպէս իր ժամանակակիցը «կ'անուանեն, «հրեշտականման» Կաթողիկոսէ մը հրապա- «րակախօսութեամբ, որուն աս նուիրագործական իրաց հրմ- «տութեանը, (թէ հաւատալեաց և թէ բարոյական) վարդա- «պետութեան մաքրութեանը նման երկրորդ հայ մը դժուար- «րին է ցուցնել. Յովհան Կաթողիկոս Մանդակունի է որ մեր «բոլոր ոսկի դարուն սիրար կրներկայացնէ, Ս. Սահակայ աշա- «կերտ, աննմանն Գիւտայ Կաթողիկոսի եղբորորդի:

«Ի՞նչ կ'ըսէ աս հրեշտականման հայրը:

«Ինք Քրիստոս է. մի իբրև հասարակ հաց նաչիս, և «մի իբրև զինի կարծես և տեսնես. վասն զի տեսնելու բան «չէ սուրբ Խորհրդոյ անաւոր եղած բանը, հապա մտքով իմա- «ցուելու իրողութիւն. որովհետև ոչինչ տեսանելի աւանդեց «մեզի Քրիստոս սուրբ Խորհրդոյն և մկրտութեան մէջ, «այլ իմանալի: (հաց և զինի և) ջուր կը տեսնենք, բայց աս- «տուածային բանին կը հաւատանք (սրբազործութենէն «եաքը) թէ Այս է մարմինս և արիւնս...»

«Ընդօրինակողն իմաստը շփոթելու աղաւաղելու ջանք «մ'ընել ուղած է «հաց և զինին» զեղչելով, որոնք արդէն «չառաջագոյն չիշուած են և ետքէն նորէն կ'ենթադրուին «մարմին և արիւն» համապատասխանող խօսքերով, բայց ա- «նոնցմէ ետքը հաղորդութեան խօսքն երկնալով՝ ո՛ր զեղ- «չումն անկատար թողուցած է: Բաւական բացայայտ խօսո- «ղին իմաստը կ'ազդարակէ: Նշանաւոր է ջուր բառին Խոր- «հրդեան համար մնալը: Եթէ ասիկայ ջնջէր և նախընթաց- «ները թողուր, կ'անցնէր նենգութիւնն առանց իմացուելու, «բայց չէ եղած: Փնօք Տեառն»: \*)

Ձեւը դարձանում, երբ Գաթրրոնեանից ենք լսում այս խօս- «քերը: Հանգուցեալի մոլեռանդ ատելութիւնը դէպի ամեն ինչ ոչ-հռոմէական և ի մասնաւորի դէպի հայոց եկեղեցին այն- «քան մեծ է եղել, որ թոյլ չէ տուել նորան իւր կեանքի մէջ «գոնէ մի անդամ մանել հայոց եկեղեցի. ուստի և ի լրոյ միայն «զիտէ, թէ այդ եկեղեցում ս. հաղորդութիւնը տալիս՝ բահա- «նան սեղանի վերայ չորած է լինում, իսկ հաղորդողներն՝ «ոտքի վերայ կանգնած. «Ինչպէս կը լսենք անճաղ սովորու- «թիւն մը կայ տեղ տեղ ոչ կաթողիկեայ հայոց բով՝ բեմին «ձայրը նստած ս. հաղորդութիւն բաշխելու՝ կանգուն կենա- «լով ընդունողաց»: \*\*) Նորա բոլոր դրուածներն էլ այդ զրոշմն են կրում: 65) Մի բան միայն դարձացնում է մեզ, որ Հ. Յ. Տաշեանը համերաշխ և ձայնակից է Գաթրրոնեանին թէ վե-

\*) Սրբազան Պատարագամտոյցը Հայոց. Հ. Ա. 66—69.  
\*\*) Անդ. 105.

րոյիչեալ աղաւաղումն Մանդակունու ճառի մէջ կատարուել է այն մտքով, ինչ որ ներկայացնում են վերոկարգեալ սողերը (66). մինչդեռ, եթէ չենք սխալուած, ինքն է, որ Մանդակու- նու ճառերի հարադատութեան վերայ եղած կասկածը չիշել է. «Մանդակունու ճառերն այլ—որոնց հարադատութեան վրայ նմանապէս կասկած կայ» (հանդ. Ամս. 1897. 131):

Որ այդ ճառերի անհարադատութիւնը կասկածից դուրս է, կաշխատենք ապացուցանել մի փոքր յետոյ. այժմ, ըստ պահանջման հարկի՝ կարևոր ենք համարում խօսք նուիրել մի ուրիշ խնդրի, որին առիթ է տալիս հանդ. Գաթրրոնեանի կրօնական նեղսրտութեան յարձակումները հայ եկեղեցու և ի մասնաւորի՝ Լ. դարում գումարուած եկեղեցական ժողովի վերայ, որ իւր կանոններից մէկում ս. հաղորդութեան բա- «ժակի անշրախառն մատուցուելու սովորութիւնը անուանել է ս. Գրիգորի աւանդածը:

Իսկապէս մեղանշում, կամ՝ ըստ Գաթրրոնեանի՝ «մոլո- «րութիւն, մեծ խայտարակութիւն և անհանդուրժելի ալլան- «դակութիւն» է գործում հայաստանեայց եկեղեցին՝ հետեւելով այդպիսի սովորութեան. կամ սո՛ւտ են խօսել Յովհան իմաս- «տասէրն և նորա մեծադուժար ժողովը՝ այդ սովորութեան սկիզբը ս. Գրիգոր Լուսաւորչին հասցնելով:

Որ քրիստոնէութեան բուն սկզբում բոլոր եկեղեցիները, նորանց թուում և հռոմէականը, սովորութիւն են ունեցել ան- «շրրախառն, զուտ զինի գործածել ս. հաղորդութեան Խորհրդի համար, և որ այդ սովորութիւնը բաւական երկար ժամա- «նակ պահուել է՝ այդ փաստ է, և անժխտելի փաստ: Գա- «թրրոնեանի անտեղի և անհիմն յարձակումն ցրելու համար բա- «ւական է յառաջ բերել դարձեալ հռոմէական եկեղեցու հայ վարդապետի, այն ևս աստուածաբան վարդապետի և արքե- «պիսկոպոսի վկայութիւնն, որ դեռ 40 տարի յառաջ չէ բա- «շուել ճշմարտութիւնը խոստովանելուց. «Սովորութիւն է «ամենայն ազգաց քրիստոնէից և փոքր մի ջուր ի բաժակ «անդր արկանել ի խորհուրդ կրկնավտակ աղբերն՝ որ էլ ի «աիդախոց կողէ Փրկչին արիւն և ջուր, որովք փրկիմքն,

«այսինքն արեամբն Գրիստոսի և սուրբ աւագանաւ: Եւ թէ-  
 «պէտ րստ վարդապետութեան՝ աստուածաբանից չիցէ սս  
 «յէութենէ խորհրդոյն, այլ այնպէս ընդհանուր և զեղեցիկ  
 «արարողութիւն ի նախնի չարց աւանդեալ, զի ամենայն  
 «ազգաց քրիստոնէից ընկալեալ է զայն. թէպէտ և ոչ ամե-  
 «նեցուն միահաղոյն և միօրինակ, ի պատճառս ջրամատու-  
 «ցիցն աղանդաւորաց՝ որք ջրով և եթ ուսուցանէին պատա-  
 «րագել. զորս և սուրբ Ոսկերեբանն յանգիմանէ ասելով (ի  
 «մեկն. Մտթ. Ճառ ԶԲ. հատ. Գ. 106) «Եւ ընդէր ոչ ջուր  
 «արք յորժամ յարեաւն, այլ զինի. զի և զմիւս չար հեր-  
 «ժուածն խլեսցէ. զի են ոմանք՝ որ ի խորհուրդն ջուր ի կիր  
 «արկանեն, ցուցանէ՝ թէ յորժամ զխորհուրդն աւանդեաց, զին-  
 «ւով աւանդեաց. և յորժամ յարեաւն՝ առանց խորհրդոյ ի լոկ  
 «սեղանն զզինին ի կիր արկ. ի ծննդենէ որթոյ ասէ, և որթն  
 «զինի և ոչ ջուր ծնանի»: 67)

«Այլ ի բառնալ վտանդին և չանհետ լինել ջրամատու-  
 «ցից և Յոյնք և Ստորիք առհասարակ ընկալան հաստատու-  
 «թեամբ զայս զեղեցիկ սովորութիւն: Եւ սուրբն Սղէքսան-  
 «դրք քահանայապետ Հոովմաչ կանխաւ ևս ի սկիզբն երկ-  
 «րորդի դարուն՝ որպէս է ընթեռնուլ ի վարս նորա՝ «Նրա-  
 «մայեաց խառնել ջուր ի զինին վասն արեան և ջրոյն, որ  
 «բղխեցին ի կողէն Գրիստոսի»: \*)

Նեղինակիս ասելով՝ հռոմէական եկեղեցին երկրորդ դա-  
 րի սկզբումն է ընդունել ջրախառն բաժակի զործածութիւնն,  
 իսկ Յոյներն և Ստորիներն՝ աւելի ուշ, — ջրամատուցների  
 վտանգն անցած համարելուց յետոյ. իսկ այդ վտանգը մինչև  
 Գ. դարի վերջն անցած չէր, եթէ յոյն և լատին աստուա-  
 ծաբանների ասելով՝ Ոսկերեբանի խօսքն ուղղուած է նորանց  
 պէմ. հետևաբար՝ պէտք է ընդունել, որ մինչև Ոսկերեբանի  
 ժամանակն Արևելեան եկեղեցում զործածուել է անջրախառն  
 դինի: Արևմտեան եկեղեցումն էլ, թէկուզ երկրորդ դարի  
 սկզբում մուտք գտած լինի ջրախառնելու սովորութիւնը՝ բայց  
 հաւանական է երևում կարծել, թէ ամեն մասերումն ևս

\*) Աստուածաբանութիւն Տես. Եղ. արքեպ. Հիւրմիւզ. Հ. Բ. 372:

նոյնը զործադրութիւն գտած չէ եղել երկար ժամանակ: Այս-  
 պէս կարծելու իրաւունք է տալիս Վօրմսի 868 թուին գու-  
 ծարուած ժողովի կանոնների 4-րդ յօդուածն, որ պարտաւո-  
 րութիւն է դնում եպիսկոպոսների վերայ «մատուցանել պա-  
 «տարագ հացով և զինուով. իսկ զինին պիտի ջրով խառնուած  
 «լինի. և խառնումն է հաւատացելոց՝ Գրիստոսի արեան հետ  
 «միանալու խորհուրդն. ըստորում ջուրը նշանակում է նորոզ  
 «միաւորութիւն հաւատացելոց»: \*) Նէֆէլէի ասելով՝ այս ժո-  
 ղովի կանոնները նախկին սահմանուածների կրկնութիւններն  
 են. բայց չէ՞ որ օրէնքը կամ կանոնը կրկնելու հարկ է լինում  
 միայն այն դէպքում, երբ նկատուած է նորա խանդարուելը  
 կամ անտես առնուելը:

Արդ՝ եթէ բոլոր եկեղեցիներն սկզբում սովորութիւն են  
 ունեցել անջրախառն զինուով պատարագել, և եթէ այդ սովո-  
 րութիւնը տեւել է մի քանի դարեր անդամ, ինչո՞ւ ուրեմն  
 պիտի զարմանալ կամ զայրանալ, որ Գ. դարի սկզբում Հայոց  
 Լուսաւորիչն էլ այդ սովորութեան հետևող պիտի լինէր. և  
 ինչո՞վ է մեղաւոր մի եկեղեցի, որ մի անգամ ընդունածը պահ-  
 պանել է:

Հ. Միք. Չամչեանն էլ կաթոլիկ եկեղեցու վարդապետ  
 է, և շերմեռանդ կաթոլիկ. բայց ահա թէ նա ի՞նչ է ասում  
 Յովհ. Օմնեցու և նորա ժողովի կանոնի խօսքերի առիթով.  
 «Արդեօք է՞րբ և զիարդ եղև սովորութիւն ի հայս առանց  
 «ջրոյ պատարագել, ըստ որոյ եղեալ է և կանոն Յովհաննու  
 «իմաստասիրի: Յարտաբին հին մատենագրաց չունիմք ինչ  
 «վկայութիւն ի մէջ բերել: Իսկ եթէ հայեացուք ի գիրս հայոց,  
 «յամենեսին զրեթէ միօրինակ գտանեմք աւանդեալ, թէ Լու-  
 «սաւորիչն մեր անդատին ի սկզբանէ սահմանեաց միապէս  
 «անխմոր և անջուր պատարագել և յայնմհետէ ասեն հաս-  
 «տատեալ մնաց այն սովորութիւն ի հայս... Այլ մեր զայս  
 «մի ինչ ճշմարտութեամբ կարե՞ք ասել, թէ սուրբ Լուսա-  
 «ւորիչն մեր՝ որպէս և եզիա ի յոյնս բնակեալս ի Կեսարիա,  
 «այնպէս աւանդեաց ի հայս. քանզի անհաւատալի իմն երևի,

\*) Hef. Hist. des Conc. b. 589:

«Թէ ալլազդ իցէ կարգեալ նա՝ քան զոր տեսեալ էր ի յոյնս: «Ուստի եթէ անշուր առնէին յայնժամ յոյնք ի կողմանս Կե- «սարիոյ, հարկ լինի ասել՝ Թէ և Լուսաւորիչն անշուր է «հաստատեալ. որպէս ասն հայք: Իսկ Թէ շրով առնէին յայն- «ժամ յոյնք, Լուսաւորիչն մեր ևս շրով է հաստատեալ: Եւ «սակայն ի համարիլ զայս այսպէս, (Թէ շրով սահմանած է «եղել) և ի խնդրել՝ Թէ ո՞վ եղև արդեօք որ եբարձ յետոյ «զայն սովորութիւն, և հնարեաց զանշուր պատարագել, ոչ «զոր գտանեմք, և ոչ ուստեք հնար է ստուգութեամբ ցուցանել «զսկիզբն ազորիկ՝ հայելով ի ստուգ զրուածս և ի պատ- «մութիւնս նախնեաց: Կլեմէս Գալանոս զրէ ի բազում տեղիս... «Թէ մինչև ցՅովհան հայրապետ հայք շրախառն սլատարա- «դէին, և նա ինքն Յովհան եբարձ ասէ զայք: Բայց այդ չէ «ճշմարիտ. նախ՝ զի նա ինքն Յովհան հայրապետ իմաստա- «սէր ի ժողովն, զոր արար համօրէն եպիսկոպոսօք և վար- «դապետօք աշխարհին հայոց, վկայէ առաջի այնչափ բազ- «մութեան յատենաբանութեան և ի կանոնի իւրում, Թէ ի «Լուսաւորչէ և այսր ունիմք զայս սովորութիւն. իսկ եթէ «ինքն լինէր առաջին սահմանիչ, ոչ էր նմա կարելի զայս ա- «սել. ապա Թէ ոչ՝ ամենեքին ընդդէմ դառնային նմա, և «ստղաանէին զնա: Երկրորդ՝ զի նաև ինքն Կլեմէս այլուր յայտ- «նի ցուցանէ, Թէ նախ քան զՅովհան հայրապետ հայք ան- «շուր պատարագէին. ուրեմն նա ոչ եղև բարձող շրոյն... Այլ «եթէ ասիցի, Թէ ի ժամանակս Ներսիսի Շինողի ի վրդովիլ «աշխարհին ժողով արարեալ ոմանց վարդապետաց առաջնոր- «դութեամբ Յովհաննու տեղապահի՝ աշակերտի Անծախսածո- «րեցուոյն, մուծին զայս սովորութիւն անշուր պատարագե- «լոյ, այդ ևս ամենեւին չունի տեղի: Նախ՝ զի ի պատմու- «թեան Ասողկայ և այլոց, նոյնպէս և ի պատմութեան այնր «ժողովոյ՝ զնի, Թէ ի սկսանիլ ոմանց շրախառն պատարա- «դել՝ արդելին նղովիւք, զի մի՛ որ ևս իշխեսցէ այնպէս առ- «նել: Երկրորդ՝ զի Կլեմէս... ի պատմել զժողովոյն Կարնոյ «ասէ, Թէ Եզր կաթուղիկոս՝ որ էր յառաջ քան զայդ Յով- «հաննէս, և այլ ևս հայք «ընդունեցին (ի ժողովի անդ)...

«զաւանդութիւն յազազս խառնելոյ սակաւիկ մի շրոյ ի բա- «ժակ սրբոյ պատարագին». ուր ի լատիներէնն որոշակի ևս «զնէ, Թէ յայն ժողով Կարնոյ առաւել քան զայլ ամենայն «ձէս՝ զայս շրախառնութիւն ընկալան: Եթէ այսպէս է քստ «Կլեմէսի, ուրեմն հայք նախ քան զԵզր ևս անշուր պատա- «րագէին. և ոչ Թէ սկիզբն լեալ իցէ այգմ յետ Եզրի ի ժա- «մանակէ անտի Ներսիսի Շինողի և Յովհաննու: Երրորդ՝ «եթէ յաւուրս Ներսիսի Շինողի լեալ էր այդ նոր փոփոխու- «թիւն, զիտակ լինէր այգմ Յովհան Իմաստասէր. զի մօտ էր «ժամանակաւ. նոյնպէս և հայրապետք այնր ժամանակի. բայց «ահա սա զներհական վկայէ յատենաբանութեան իւրում առաջի «բազմութեան եպիսկոպոսաց, և ասէ յայտնապէս՝ Թէ սկսեալ «են ոմանք յայսմ դարու վրդովիլ զխաղաղութիւն աշխարհիս «մերոյ նորածևս առնելով ի մէջ աղղին. և Թէ զի՞նչ նորա- «ծնութիւն իցէ, յայս առնէ ասելով. շուր սկսան խառնել «ի բաժակն, զոր առանց շրոյ ասէ ընկալաք ի սկզբանէ. զսոյն «ցուցանեն և բանք Ասողկայ... և այլոց»: \*)

Հեղինակը զրել է այս առդերը ԺԼ. դարում, մի այնպիսի ժամանակում, երբ ուղղակի անկարող էր ասել, Թէ Հայոց եկեղեցին պահպանել է այն սովորութիւնն, ինչ որ կար միւս եկեղեցիներում սկզբնական դարերում. բայց այնքան էլ, ինչ որ կարողացել է ասել՝ նոյն մտքով է տտած. — Հայոց Լուսաւորիչը Կեսարիսյում միայն զինի զործածելու սովորութիւնը տեսած և իւր եկեղեցուն էլ աւանգած է: Նորանից աւանդածը Հայերը անխախտ պահպանել են, որովհետև ոչ մի այսցոյց չկայ, Թէ երբևիցէ շուր խառնելու սովորութիւն մտցնող է եղել. այդպիսի նորածիտութիւն նկատուած էր տեղ տեղ Օծնեցու ժամանակին և նա էլ ժողովական կարգադրութեամբ արգելեց:

Ուրեմն ինքն քստ ինքեան հասկանալի է, Թէ Մանդակունին չէր կարող ասել «շուր կը տեսնենք, բայց աստուածային բանին կը հաւատանք, Թէ Այս է մարմինս և արիւնս» ինչպէս մոլեռանդօրէն ճզնում է բացատրել Գաթրրճեանը:

\*) Պատմ. Հայոց Բ. 645—647.

Անցնենք Մանգակունու ճառերին:

Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնն առաջին անգամ 1836 թ. և երկրորդ անգամ 1860 թ. հրատարակել է այս հաշրապետի անունով քսանեւեց ճառեր: Երկրորդ հրատարակութեան Յառաջարանից իմանում ենք թէ՛ երկու ձառնարկներում (մէկը Պարիզում) այս ճառերի մեծ մասը նշանակուած են Եփրեմի անունով. իսկ մի ուրիշ, աւելի հին, երկաթագիր օրինակումն էլ, որ մեծ նշանակութիւն պիտի ունենար ներկայ խնդրի համար, խանդարուած է «անուն մատենագրին առ հնութեանն»: Միայն մի չորրորդ ձեռագիրն է, այն էլ վերագրեալներից ուշ զրուած, որի մէջ չիշեալ ճառերն «ամենայն չանուն Մանգակունու մակագրին»: Միւսնոյն ժամանակ ի նկատի առնուել են նաև «այլ և այլ զրչագիրներ», որոնցից մի քանիսում այս ճառերի մի մասը Մանգակունուն են արուած, մի մասը՝ Եփրեմին. «չորմէ, ասում է Յառաջարանն, և ոչ վաչրաբար երկբայեցի հնախոյզ ուսումնասէրն, «եթէ զոր ի նոցանէ որոյ մատենագրի սեփականել արժան իցէ».

բայց աւելացնում է. «Չայս և եթ յայտնի դիտեմք, զի ի յոյն «և յատրի բնագիրս մատենագրութեան Եփրեմի չիք և ոչ «մի ի ճառից աստի: Այլ թէ նորին Մանգակունու իցեն «թարգմանութիւնը չԵփրեմայ որոյ բնագիրն կորուսեալ իցէ, «կամ թէ ի բանից Եփրեմի և Ոսկերեբանի ծաղկաբաղ արարեալ և յանձնէ յայլ կերպարան ածեալ իցէ զնոսին ըստ «ժամուն պիտոյից ի բեմբասացութիւն ժողովրդեան, չորմէ «չոմանս ի նոցանէ երևի անուն Եփրեմի և ուրեք ևս Ոսկերեբանի, չիշխեմք առժամս պատաստան առնել համարձակ: «Այլ եթէ յայսպէս և եթէ այն, կարծեմք եթէ չիցեմք վրիպակ ինչ գործեալ եթէ Մանգակունու զնոսին ընծայեցար «ցորչափ օրինակ յանուն նորին ի ձեռին ունիմք, և ի հակառակէն ոչ զօրաւոր ինչ հաւաստիք»:

Այդքանն, այսինքն՝ ձեռքում մի օրինակ ունենալու հիման վերայ կարծել թէ վրիպակ չէ գործուած՝ արդէն վրիպելու հաւանականութեան նշան է: Գոնի որ հնագոյն օրի-

նակները միւսնոյն ճառերը կամ ուրիշի անուանն են ընծայուած, կամ՝ մի մասը մէկին, միւսը՝ երկրորդին, ի՞նչ վտահութիւն կարող է ներշնչել մի օրինակը, մանաւանդ ժամանակով չետագոյնը: Երուսաղէմի մատենագարանի մի ձեռագիր ևս, ինչպէս տեսնում ենք հ. Զարբանալեանի մէջ բերած ցանկից (Պատմ. հ. Գպր. 331), պարունակում է Մանգակունու անունով 24 ճառեր, որոնք սակայն, բացի հնդից, բոլորովին տարբեր բովանդակութիւններ ունեն. և նորանցից 4-րդը «վասն երկու բնութեան»: Եթէ իրաւամբ պէտք է ասել, թէ «երկու բնութեան» վերայ խօսելը Մանգակունու ժամանակի պահանջ լինել չէր կարող, մի՞թէ նոյնքան իրաւամբ չէ կարելի առարկել, թէ «վասն անօրէն թատերաց զիւականաց» զրելը հաշկական կեանքը չէր կարող թելադրել:

Մեր կարծիքով՝ նախ պէտք է խնդիր դնել, թէ կա՞նց այնպիսի հիմնաւոր ապացոյց, որով կարողանանք աներկբայօրէն ընդունել, թէ Մանգակունին ճառեր է գրել. և միայն պատասխանից չետոյ կարելի է երկրորդը յարուցանել.— ինչով կարող ենք Մանգակունու անունը կրող ճառերի հարազատ ու անհարազատը զանել, որոշել.— այդ ճառերից որոնք իրանց բովանդակութեամբ Ե. զարում ապրած հաշրապետինը լինելու արժանիքն են կրում:

Այս հաշրապետին ընծայուած են թէ մի շարք բարոյներ, աղօթքներ, եկեղեցական պաշտամունքի կարգաւորութեան վերաբերեալ կանոններ և երգեր, և թէ՛ վարդապետական ճառեր. բայց ընծայողներն են ոչ ժամանակակից կամ ժամանակով մերձաւոր, այլ չետագոյն հեղինակներ: Այստեղ ճառերի մասին ենք խօսում: Ո՞վ է առաջին անգամ վկայում, թէ նա ճառեր է գրել.— Յովհաննէս կաթողիկոս պատմաբանը. «Յաջորդէ զաթոռ հաշրապետութեան Յոհան Մանգակունի, որ «աւլցեալ իսկ էր ամենայն հոգևոր հանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պաշտառապէս զամենայն աղօթական «ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ, և յարգար է ևս «ճառս զգուշացուցիչս զիտաւորական կենցաղոյս, որ «բերէ զողոցն փրկութիւն» (եր. 35—36):

Քանի որ այդ երկու հայրապետներին միմեանցից հե-  
ռացնում է չորս դարերի ժամանակամիջոց, Դրասխանակերտ-  
ցու վկայութիւնը միայն այն նշանակութիւնն ունի, որ ա-  
պացուցանում է թէ Թ. դարի վերջում կամ Ժ. ի սկզբում  
եղել են Մանդակունու անունը կրող ճառեր. այլ թէ այդ  
ժամանակում նոյն անունով եղած ճառերի հեղինակն իսկա-  
պէս չիշեալ հայրապետն է, — հիմք չկայ դրական պատաս-  
խան տալու: Մանդակունու զրուածներ չիշատակում է և  
Ասողիկ, բայց նա ճառերի անուն չէ տալիս. «Ձայտու ժա-  
մանակու երանելին Յովհան Մանդակունի... զՆայոց բազում  
«կարգս ուղղութեան կատարեաց, զքարոզս զիշերի և տուրն-  
«չեան, զկարգս մկրտութեան, զսարկաւազի, զքահանայի և  
«զեպիսկոպոսի և զօրհնութիւնս եկեղեցւոյ և զխոյրիմք զպա-  
«տարագամատոյցն, զոր Աթանասի ասեն լինել» (եր. 81):  
ճառերի երկրորդ չիշատակող լինում է Վարդան վարդապետը  
ԺԳ. դարում. «Յօհան Մանդակունի, իմաստասէր և լի հոգ-  
«ւով Աստուծոյ, որ բարիօք յօրինեաց զկարգս ձեռնադրու-  
«թեան և ժամակարգութեան և զճառս խրատուց» (55): Իսկ  
Վարդանի աշակերտակից Կիրակոսը չիշելով Մանդակունու  
յօրինած կարգաւորութիւններն, աղօթքներն և քարոզները՝  
դարձեալ ոչ մի խօսք չէ ասում ճառերի մասին:

Այսպիսով մնում է ուրեմն երկրորդ հարցման լուծումն: Ար-  
դեօք վերջիշեալ ճառերը կամ գոնէ նորանց մի մասն իրանց բո-  
վանդակութեամբ քիչ ու շատ պատշաճում են Մանդակունու  
անուանն և ժամանակին: Պատասխանը մի մասի համար բացա-  
սական է, իսկ մի մասի համար էլ ասարկուսական. օրինակ՝ պ.  
Գարագաշեանը խօսելով Գիւտ և Յ. Մանդակունի կաթողիկոս-  
ների զրուածների վերայ՝ ասում է. «Բայց զորժք որ կ'ընծայուին  
«նոցա՝ ոչ չիշուած են ժամանակակից աղբերէ, և ոչ ներքին հան-  
«զամանք այն զորժոց կուտան մեզ ստուգ վկայութիւն՝ թէ այն  
«զորժք են նոցա հարազատ մատենագրութիւն».) իսկ մի  
քանի առից չետոյ առանձնապէս վերջինի ճառերին զալով՝

\*) Գննակ. Պատմ. Դ. 74.

ասում է. «Մանդակունուն ընծայեալ ճառք, թէպէտ չէ  
«ստուգիւ յայտ, թէ են նորա մտաց ծնունդ, քանզի ընտիրքն  
«այն ճառերէն ունին յոյն և ասորի հարց ոճը՝ ըստ լե-  
«զուին դոնէ, թէև ոչ հաւասար լեզուին թարգմանութեանց  
«Ոսկերերանի և Կիւրղի՝ են, բայց ի սակաւուց՝ ոչ շատ  
«օտար հինգերորդ դարու ճաշակէն, ուստի և կարեն լինել  
«նորին իսկ Մանդակունուն, ժամանակակցի, թերևս և զոր-  
«ժակցի թարգմանչաց: Սա ևս չէ անհաւանական, թէ մեծ  
«մասն ճառից որ հասած են մեզ յանուն Մանդակունուն՝  
«կրած են աղէտներէ աղաւաղութիւն, առանց որոյ անտա-  
«րակոյս աւելի վստահութեամբ պիտի ընդունէինք զՄան-  
«դակունին աշակերտակից թարգմանչաց, և զգործս ընծայ-  
«եալս նմա՝ արդարև արժանի նմա»:

Այսքանը բաւական համարելով Մանդակունուն ընծայուած  
ճառերի անհարազատութիւնը պարզած լինելու նկատմամբ՝ ա-  
ռանձնապէս կասենք հետեւեալը նորա 22-րդ ճառի մասին. —  
«Վասն զզուշութեամբ և երկլուզիւ ի ս. խորհուրդն՝ մերձենալոյ»:

Այդ ճառը չետադոյն գործ հանաչելու անկասկածելի  
նշան ենք համարում և լեզուն, որ տեղ տեղ մատնում է ուշ  
ժամանակի ռամկօրէնի աղղեցութիւնը հեղինակի զրչի վերայ,  
ինչպէս օրինակ. «Յիտտ ձեռօք ի կերակուրս խղճիս մերձե-  
նալ». «Ոչ հերկահար ես ժողովրդեանդ, և ոչ արտունձ և  
կասող». «Զի՞նչ օգուտ է լուանալն, յորժամ դարձեալ ցիտտ  
լինիս». «Մի օր հեռանաս ի դիւէն». «Ի միտս քո խորհիս  
եթէ վաղիւն հեռանամ և զկամս անձին իմոյ կատարեմ»:

Ե. Օծումն հիւանդաց կամ վերջին օծումն:

1. Երուսաղէմի Մակար եպիսկոպոսի կան. 4-րդ. «Եւ  
«զիւզն օծման մեռելոցն և հիւանդացն և մկրտելոցն առանձ-  
«նակ օրհնեսցին քահանայքն և եպիսկոպոսքն: Զայս սահմա-  
«նեցին սուրբ հարքն մեր, և մի՛ որ իշխեսցէ փոխել զուղիղ  
«եղեալ սահման, զի մի զնոցին կապանք նզովիցն ընկալեալ  
«որոշեսցի յԱստուծոյ»:

Հայկական հին գրականութեամբ պարապօղներին յայտնի  
է այն կանոնական թուղթն, որ կրում է Երուսաղէմի Մա-

կար եպիսկոպոսի անունն և համարում է գրուած ս. Վրր-  
թանէս կաթողիկոսի խնդրանքի առիթով. այսինքն թէ՛ վեր-  
ջինը գրել, ազաչել է, որ եկեղեցական մի քանի կարգերի մա-  
սին Մակարը հրահանգութիւն տայ իրան թէ ինչպէս պէտք  
է վարուել, և նա էլ խնդիրը կատարել է չեղեալ թղթով,  
ամփոփելով նորանում ութը կանոններ:

Թղթի օրինակը գտնում ենք այժմ և «Գիրք Թղթոցի»  
մէջ այսպիսի վերնագրով. «Երանելոյն Մակարայ սրբոյ քա-  
ղաքին Երուսաղէմի հայրապետի, կանոնական թուղթ ի  
«հայս վասն կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ կար-  
«զաց, զոր չէ արժան ընդ սահման և ընդ կարգ անցանել.  
«զլուխը ինն»:

Մինչև այսօր էլ այդ թուղթը մեզանում ընդունուած  
է իբրև անկասկածելի հարազատութիւն. և շատերն են հար-  
կաւոր դէպքում մատնացոյց արել նորա վկայութիւնը. մէկն  
էլ շատերից չ. Եդ. Նիւրմիւղն է, որ կամենալով ապացու-  
ցանել վերջին օժման նախնաւանդ զւշութիւնն և հայոց եկե-  
ղեցում՝ բերում է իբրև հաստատուն փաստ վերոկարգեալ  
4-րդ կանոնը. «Սուրբն Մակար հայրապետ Երուսաղէմի գրէ  
«առ Սուրբն Վրթանէս որդի սրբոյ Լուսաւորչին մերոյ.  
«Զիւղ օժման մեռելոցն և հիւանդացն մկրտելոց առանձնակ  
«օրհնեացն քահանայք և եպիսկոպոսուներ»:

Միակ ազբիւրն, որի վերայ հիմնուել է այդ «կանոնա-  
կան թղթի» ծագումն՝ կանոնադրքի այն ժողովածուն է, որ  
համարում է Յովհան Իմաստասէրի կազմածը: Իսկ ո՞վ է  
ասում կամ ինչի՞ց է յայտնի, թէ նա այդպիսի ժողովածու է  
կազմել: Այս հարցը տալիս ենք, ըստօրում ի նկատի ունենք  
հետևեալ հանգամանքը: Որքան մեծ է եղել Յովհան Օձնեցու  
համբաւաւոր չիշատակը հայոց եկեղեցում, այնքան էլ բուռն  
և անընկճելի է եղել այն եռանդն և այն ձգտումն, որ ջա-  
նացել է մեր չիշած առաջին շրջանում նոյն հայրապետի  
անուան հետ կապել մի շարք կեղծիքներ. — նորան ուսուցիչ

\*) Ստորաւար. Տես. Բ. 435.

լինելու համար պատրաստել են սրբութիւնով և ամեն ուս-  
մունքներով փայլած Թէոփորոս Գութենաւոր անունով մէկին,  
որպէս զի ուսուցիչը լինի Յովհան «Մայրազոմեցու» մոլո-  
րական աղանդը շախշախոյ, այն «Մայրազոմեցու», որ հրո-  
չակուել էր իբրև Եզրի ընդունած դաւանաբանական և ծի-  
սական փոփոխութիւնների հակառակորդ. և այդ միւսնոյն  
ժամանակ անուղղակի ապացոյց պիտի լինէր, թէ մեծ ու-  
սուցչի ոգուն և ուղղութեանը ժառանգորդ պիտի լինէր  
և մեծ աշակերտն. իսկ այդ հաստատող փաստերն էլ մէկը  
միւսի ետևից երևան են եկել. — Օձնեցին շարականներ է յօ-  
րինել, որոնցում խոստովանում է Պետրոսի զլսաւորութիւնը  
միւս առաքեալների վերայ և արքայութեան միակ փակա-  
կալի իշխանութիւնն. — Օձնեցին պաշտպան է եղել պատկեր-  
ների երկրպագութեան (մինչև անգամ ոչ շարքութեան, այլ  
երկրպագութեան). — Օձնեցին ընդդէմ երևութականաց նառ  
է գրել, որի մէջ երկու բնութիւն է խոստովանել ի Քրիստոս  
համաձայն Գաղկեդոնի ժողովի վարդապետութեան. — Օձնեցին  
սահմանել է կատարել վերջին օժումն իւղով, սահմանել է և  
փոքր մկրտութիւնը կամ երեխայից օժումն: Այդքան կեղ-  
ծիքները նկատելով՝ հարկաւ իրաւունք կուսենանք և Օձնե-  
ցուն ընծայուած կանոնական ժողովածուի կազմութեան վե-  
րայ զգուշութեամբ և կասկածով նայելու. իրաւունք կունե-  
նանք այդտեղ էլ նոյն նպատակն որոնել. — այդպէս ասելը նո-  
րա համար չէ՞ արդեօք հնարուած, որ Մարդիկէի ժողովի կա-  
նոնները, Մակար երուսաղէմացու կանոնական թուղթն և  
այլ այդպիսիներն Օձնեցու անուամբ վաւերական զօրութիւն  
ստանան. այսինքն՝ ապացուցուի նորից, ուրիշ փաստերով  
ևս, թէ նա ընդունել է Պետրոսի յաջորդին, հռոմի հայրա-  
պետին զլուխ և բացարձակ դատաւոր եկեղեցւոյ, թէ նա,  
վերջին օժումն օրինադրողը նոր բան չէ տուել իրանից, այլ  
այն, ինչ որ գեո. ս. Վրթանէսի ժամանակին պարտադիր է  
եղել անբակտելի նդովքի զօրութեամբ:

Յայտնի բան է, կանոնների ժողովածու կազմելու նկատ-  
մամբ ոչ մի հիմք չէր լինի կասկած յայտնելու, եթէ փոքր

ի շատէ երաշխաւորող վկայութիւն լինէր նորա մասին. ի՞նչն աւելի վայելուչ և պատշաճ կլինէր Օձնեցու անուանն և հովուապետական գործունէութեանը, քան ձեռնարկել ծի սեղ ամփոփելու ծինչև իրան հասած եկեղեցական կանոնները. բայց բանն այն է, որ պատմիչներից ոչ ոք նորա այդպիսի զբաւոր վաստակի մասին չէ խօսում: Միակ չենակէան այդ կողմից այն վերջաբանութիւնն է բնորոշուած, որով նա ինքը վկայում է իւր ձեռնարկած և աւարտած աշխատութեան համար. սակայն այդ վերջաբանն ինքն էլ հարադատութեան առանձին կնիք չէ կրում. նախ նորա համար, որ հազիւ երեւում է ծի կամ երկու ձեռագիրներում: Ս. Էջմիածնի մտանադարանի 50 օրինակ ձեռագիր կանոնադրքերից միայն մէկումն է գտնուում, ինչպէս ցոյց է տալիս պ. Սիր. Տիգրանեանի կատարած հետադատութիւնն \*). երկրորդ՝ որ նորանում հանդիպում ենք այնպիսի խօսքերի, որոնք Օձնեցուն և իւր ժամանակին չպատշաճող անհամեստութիւն են ցոյց տալիս. օրինակ՝ ինքն իրան «իմաստասէր» անուանելը. «Յովհաննէս նուստադոյն իմաստասիրաց խմբից». կամ թէ՛ «Այն՝ «որ պարզեաց ինձ ի վերայ երկրի տէրութիւն»... որոյ բարեղթութեամբն և ի հանդերձեալսն ի նոյն վստահանամ վայելել ի փառս:» \*\*)

Բայց կայ աւելի զխաւոր խնդիր, որի նկատմամբ ծի վերջաբան, թէկուզ և հարադատ՝ ոչ ծի նշանակութիւն չունի: Եթէ ծինչև անգամ աներկբայօրէն բնորոշենք, թէ իմաստասէր հայրապետը կազմել է կանոնադրքի ժողովածու, ստիպուած պիտի լինենք նոյնպէս աներկբայօրէն համոզուելու, որ այդ ժողովածուն հարադատութեամբ չէ պահպանուել և ձեզ չէ հասել, այլ խանգարուել և աղաւաղուել է զանազան ձեռքերով և բնորոշել է կամահաճ չաւելուածներ և փոփոխութիւններ, ինչպէս վկայում է և հ. Մ. Չամչեան. «Յայս կանոնդիրք սորա չաւելին չետոյ և այլը զայլ կանոնս և զվար-

\*) Արարատ. 1902, փետր. 124.

\*\* ) Չամչ. Բ. 396.

«դասկետութիւնս պէսպէսս՝ զչարս և զբարիս յայլ և այլ «ազգաց, առանց բնարութեան. և ոչ այսչափ միայն, այլ և «ի բուն կանոնսն իսկ՝ զոր կարգեալ էր, ձեռս արկին ոմանք «չանարգաց, և աղաւաղեցին ի տեղիս տեղիս, որպէս տեսա- «նեմք ի բազմաթիւն զայն բնդ ուղիղ բնադիր օրինակս» (եր. 396). թէպէտև անհասկանալի է այս խօսքերից չետոյ ծի բան, որ նոյն հեղինակը ծանօթութիւնների մէջ (եր. 575) խօսելով զարծեալ չիշեալ կանոնադիրք-ժողովածուի վերայ՝ նորանում զբուռած Սարգիսիկէի ժողովի կանոնների առիթով կարողանում է ասել. «Քանզի զնէ զայնպիսի կանոն ևս, որով «չայտնի երեւի բնորոշիլ նմա զհայրապետն Հռովմայ գլուխ «եկեղեցւոյ. և է այն՝ կանոնն Սարգիսեաց ժողովոյն... ի կանոնն Ե... Եւ զարծեալ ի կանոնն Թ. նորին Սարգիսեաց՝ «զգահ Հռովմայ հայրապետին զնէ լինել վերին տետան. չոր «եթէ ոք բողոքեսցէ, դադարեն ստորին տետանք: Եւ չերրորդ «կանոնի ժողովոյն Կ. Պոլսոյ, ի զլ. ԺՍ. զնէ լինել Հռովմայ «հայրապետին զերագոյն քան զայլսն. իսկ Կ. Պոլսին չետ նորա ըստ պատուոյ: Սրդ՝ զայսոսիկ կանոնս ի մէջ բերելով «Յովհաննու Իմաստասիրի՝ յայտնի ցուցանէ, թէ դիտաւորութիւն իւր ոչ է զազգն բաժանել յայլոց ազգաց՝ և կամ ի «հայրապետէն Հռովմայ, այլ՝ մանաւանդ միաբան պահել բնդ «այն. ապա թէ ոչ՝ զիարդ հնար էր զայսպիսի կանոնս առաջի զնէլ, և զիւրսն ի նոյն չորդորել:» (68)

Ինչպէս էլ որ բնորոշենք Յովհան Իմաստասէրին բնծաւուած ժողովածուն՝ նորանում զետեղուած «Մակարի կանոնական թուղթը» շատ չետոյ է չօրինուած փոքր ինչ չառաջ բացատրուած նպատակով: Այդ ապացուցանելու համար ունենք հետեւեալ կէտերը.

1. Երուսաղէմը քարուքանդ լինելուց և զխաւոր քաղաքի կամ մայրաքաղաքի նշանակութիւնը կորցնելուց չետոյ զրկուել էր և իւր եպիսկոպոսական աթոռի նախամեծարութիւնից: Դեռ ս. Վրթմանէսից յառաջ Նիկիայի ժողովն, որին մասնակցում էր և ինքն չիշեալ Մակար եպիսկոպոսն, 7-րդ կանոնով Երուսաղէմի աթոռին միայն անուանական նախա-

մեծարութիւնը թողնելով՝ իշխանութեան իրաւունքը չափազանց մաշտաբաղաբի (Կեսարիա Պաղեստինի) եպիսկոպոսական աթոռին. որով Երուսաղէմի աթոռն, ինչպէս ասում է և Հէֆէլէն մի ուրիշ անվաւեր նամակի առիթով (որ կրում է նոյնպէս Մակարի ստորագրութիւնն), կորցրեց իւր նախկին շուքն և նշանակութիւնն \*) . ուստի և նորա եպիսկոպոսը չէր կարող այնուհետև ոչ ժողով գումարել և ոչ մի ուրիշ եկեղեցու համար կանոններ սահմանել, ինչպէս ասուած է թղթում. (ձեր դիրք) «որ ի ձեռն երկիւղածաց քահանայից մատուցաւ առաջի բազմութեան եպիսկոպոսացս, որք «մի մի ժողովեալ չիւրաքանչիւր քաղաքաց, որոց առաջի անկեալ հոգևոր մաղթանօք խնդրեցին զգրոյն պատասխանիս, «գոր թէպէտ և ոչ կամէաք, ծանրացեալ տկարութեամբ հրամանատուութեանս մեծամեծ կրօնիւր եկեղեցւոյ, սակայն հոգևոր ժառութիւն և փոյթ աստուածասէր քահանայիցս հարկաւորեաց զձեզ զրել և տալ ձերում կամաջօժար բարեպաշտութեանդ, զյուլս կարևոր կարգաց եկեղեցւոյ, զհաստատութեան հաւատոյ, ոչ մի ինչ երկբայութեամբ, և զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն, որ վասն հերձուածոյացն եղև, զորս կարևոր է բնդունել ամենայն բարեպաշտաց»:

2. Ս. Գրիգոր Լուսաւորիչն արդէն աւանդած էր իւր հիմնած եկեղեցուն այն ամեն արարողական կարգերն և կանոններն, ինչ որ կար բնդհանուր քրիստոնէական եկեղեցում. արդ՝ նորանից չետոյ, այգքան կարճ միջոցում, ի՞նչ նոր «կարևոր կարգք եկեղեցւոյ» կարող էին լինել, որոնք սախպել են Ս. Վրթանէսին գիծել Մակարին և խնդրել նորան, որ հանի զրել և ուղարկել. կամ մի՞թէ Հայոց եկեղեցին իւր Լուսաւորչից չետոյ պէտք ունէր Երուսաղէմի եպիսկոպոսից էլ սփորել «հաւատոյ հաստատութեան» կարգերն, և Մակարն էլ բարեհաճում է զրել և տալ, ոչ այնքան Վրթանէսի խնդրին զիջանելով, որքան ուղարկուած քահանաների թախանձան-

\*) Hist. des Conc. U. 430:

քին (ժառութեան). կամ թէ՛ զիցուք՝ Վրթանէս կաթողիկոսը «կարգեր և կանոններ» է խնդրել, և Մակարն էլ կամենալով «զարթուցանել զբարեսէր և զպարզամիտ սիրտս» նորա և նորայիւնների «ի խնդիր ուղիղ բարեպաշտութեան ճշմարիտ կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ և կարևոր կարգաց Աստուծոյ», տուել է. բայց այդ ո՞ր «սուրբ ժողովն» է, որ կանոնադրութիւններ է կազմել.— Մակարի իւր իսկ կազմած ժողովը: Եթէ այդ ժողովն է, նա պիտի գումարուած լինէր Հայոց կաթողիկոսի առաջարկած խնդիրների լուծումն տալու արդ՝ թղթում չիշած «կանոնադրութիւն սրբոյ ժողովոյն, որ վասն հերձուածոյացն» ի՞նչ բան է: Վրթանէսն էր նորանց մասին կանոններ խնդրել. և ի՞նչ հերձուածոյներ էին դորանք:

3. Եթէ ենթադրենք մինչև անդամ, թէ Հայոց եկեղեցու Լուսաւորչի մահից չետոյ կարող էին չառաջ եկած լինել այնպիսի եկեղեցական խնդիրներ, որոնք ինքը ս. Լուսաւորիչն ոչ տեսել և ուսել էր Կեսարիայի եկեղեցում, ոչ էլ չետոյ նախատեսել և կարգադրել էր, ուստի և նորա որդին տարակուսանքներից սախպուած զիմել կարող էր մի ուրիշ աթոռին և հրահանգութիւն խնդրել: Այդ պէպքումն էլ զիմումն ոչ թէ Երուսաղէմի, այլ Կապադովկացւոց Կեսարիայի արքեպիսկոպոսին պիտի լինէր. ըստորում պեռ այդ վերջինի հոգևոր իրաւասութեան ներքոյ էր գտնուում Հայոց եկեղեցին Վրթանէսի ժամանակին. իսկ Երուսաղէմի աթոռի հետ ոչ մի կապ չունէր:

4. Ո՞րպիսի մեծ կամ լուրջ խնդիրներ են եղել, որոնց համար ս. Վրթանէսն հօր մահից չետոյ հարկադրուել է ուղարկել «զիր ի հեռարնակ աշխարհէն, ի կողմանցն արևելից ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի ձեռն երկիւղածաց քահանայից», որպէս զի Պաղեստինի եպիսկոպոսները «մի մի ժողովեալ չիւրաքանչիւր քաղաքաց» խորհեն, խորհրդակցեն և վճռեն՝ Հայոց կաթողիկոսի տարակուսանքները, քանի որ վերջինս միայն Երուսաղէմի եպիսկոպոսի իրաւունքն է համարել մի քանի եպիսկոպոսներով տեղական ժողով կազմելն և խնդիրներ որոշելն, իսկ իւր իրաւունքից վեր է համարել

այդպիսի ժողով Հայ եկեղեցում և իւր եպիսկոպոսներից գումարել նոյն նպատակով:

Ահա այն խնդիրներն, որոնք Հայոց եկեղեցին հարկ է համարել առաջարկել. և որոնք թղթի «կարեօր» կոչուածներն են:

Ա. «Թէ արժան իցէ՞ սարկաւազաց մկրտութիւն առնել. և կատարեալ իցէ՞ խորհուրդն»:

Բ. «Եթէ աւագան սրբեալ ոչ ունին և յանպէտ ամանի մկրտեն»:

Գ. «Եթէ զիսորդ կարգը եկեղեցւոյ չօրինին»:

Դ. «Եւ ռոպէս հրամայիցի բաւականանալ իւրաքանչիւր լեղեալ կարգի»:

Ե. «Եւ ռոպէս մերձեցողք առ սեղանն սուրբ և կենդանարար խորհուրդն»:

Զ. «Եւ զիսորդ է արժան զխորհուրդն կատարել, զիբրկական խորհուրդ մարմնոյ և արեանն Տեսուն»:

Է. «Եւ ռոպիսի օրինակաւ նուէր սրբութեանն չօրինեսցի»:

Ը. «Եւ զիսորդ եկեսցէ ի ձե սեղանն խորհրդոյն, և այլ ևս Գ. կարգըն»:

5. Վրթանէսի ութը հարցումների լուծումն տալուց չետոյ Մակարն իւր կողմից աւելացնում է ահա թէ ինչ.— «Զայս աւանդեմ ձեզ պատուիրան հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, ըստ խնդրոյ աղաչանաց ձերոց, և նդովեմք ի վերայ այսոցիկ զայլածեան խորհեցեալսն, զի ի միմեանց ընկալեալ ձեռնադրութեամբ զշնորհս, ոչ բերեմք պակասութիւն, և միապատիւ ոչ իրաւունս վարկանիմք զկարգեալսն «ուղղապէս եկեղեցւոյ, և զփառամոյ անձինս կշտամբեմք, որք խորհրն հակառակ որպէս պատմեալ եղև մեզ զՏուրղեայ Բասենոյ և Բազրեանդայ եպիսկոպոսաց (եպիսկոպոսէ), որ սակաւութք ընդ Սրիստոսս միաւորեալ է, և զարձեալ խղճեալ, և «արդ և այլևս յանդգնադոյնս խորհի. եպիսկոպոս միայն աթոռաւ, և ընդ արքեպիսկոպոսին ինքեամբ տայ պատիւ, զոր չէ արժան ընդունել, զի և ոչ հարքն աւանդեցին այսպիսի ինչ հակա-

«ռակութիւնս չեկեղեցի մուծանել, և անվայելուչ է համարել հաւասար, մինչև կոչմամբ ի պատիւ աթոռոյն ժամանեսցէ: Եւ արդ պարտ է զայնպիսին քաղցրութեամբ ի հնազանդութիւն կոչել, և եթէ ի նոյն մնասցէ, խորշել իբրև «յօտարէ»:

Ի՞նչպէս հասկանալ, ի՞նչպէս բացատրել այդ խօսքերը: Դիցուք թէ Վրթանէսի հայրապետութեան ժամանակում Հայոց եկեղեցին այնպիսի անկազմակերպ, խղճալի մի հաստատութիւն է եղել, որ մինչև անդամ չէ զիտեցել ամենօրեայ պաշտամունքների արարողութիւններն և ամենասովորական կարգերն էլ. թէ՛ ի՞նչպէս պէտք է մօտենալ սեղանին, երբ ս. պատարագն է մատուցւում. թէ՛ ինչպէս պէտք է պատարագի նուէրները (հացն և զինին). թէ՛ ի՞նչպէս վարուել այն դէպքում, երբ քահանաները մկրտութիւնը կատարում են անպէտք ամանի մէջ՝ «սրբեալ» աւագաններ չունենալու պատճառով, և այլն: Այո՛, դիցուք թէ նա չէ զիտեցել այդ բաներն, ըստորում ոչ նորա Լուսաւորիչն է տեսել և աւանդել իւր որդիներին, ոչ որդիներն—Սրիստակէսն ու Վրթանէսն են Կեսարիա դնացել որ սովորէին. նոյնիսկ Սրիստակէսը Նիկիա դնացած լինելով՝ փոյթ չէ ունեցել զոնէ այնտեղ ծանօթանալու այդ կարգերին, և այսպիսի անհոգութեան և սպիտութեան հետեանքն է այնքան զգալի եղել Վրթանէսի համար, որ վերջապէս դտել է մի ելք. ուղարկել զիր, ուղարկել քահանաներ, որ զրի հեա միաժամանակ ազաչեն, թախանձեն Մակար եպիսկոպոսին, իրանց, անհարմնացածներին մի ճար, մի օգնութիւն անել, հրահանգներ տալ: Շատ լաւ. բայց չէ՞ որ ինչքան էլ ստիպուած լինէր Հայոց կաթողիկոսը խնդրել, զարձեալ նորա խնդիրը մասնաւոր նշանակութիւն պիտի ունենար. նա ուղղուած կարող էր լինել ոչ ստորադրեալից առ իշխանաւորն, այլ հաւասարից առ հաւասարը, ծանօթից առ ծանօթը: Մակարի տուած հրահանգներն էլ միայն այդ նշանակութեամբ կարող էին զրուել և ընդունուել. ուրեմն մասնաւոր հրահանգութեան

հետ նդովքն ինչ կապ ունի. կամ ի՞նչպէս ինքը Մակարը թող կտար իրան մասնաւորապէս արուած հարցումներ ի պատասխաններին «հաւատոյ պատուիրանի» և եկեղեցու պարտաւիր կանոնների նշանակութիւնը տալ և նդովքով ամրապնդել նորանց անփոփոխ պահպանութիւնը. ի՞նչ իրաւունք ունէր նա և ի՞նչպէս կհամարձակէր քրիստոնէական ընդհանրական եկեղեցու աչքի առաջ բանադրանքով խօսել օտարերկրեայ և իրանից անկախ եկեղեցու հետ: Թողնենք այդ կէտերն էլ. մի բոպէ ենթադրենք, թէ քանի որ Վրթանէսը թէթեւամտութիւն է ունեցել այդպիսի դիմումն անելու, Մակարն էլ մեծամտութիւն կունենար իւր զրածները կանոններ համարելու և նորանց զործադրութիւնը բանադրանքով ապահովելու. հապա ի՞նչպէս բացատրենք Բասենի և Բաղրեանի եպիսկոպոսի խնդիրը: Մի՞թէ մի այնպիսի ժամանակում, երբ վիճակների բաժանումն դեռ այն էր, ինչ որ Լուսաւորիչն էր կարգադրել, երբ դեռ այդ վիճակները կառավարում էին Լուսաւորչի կարգած եպիսկոպոսներով, երբ արքեպիսկոպոսական աթոռ միայն հայրապետականը պիտի համարուէր, մի Տուրդ (Տուրք) եպիսկոպոսին հայոց կաթողիկոսն ո՞չ պատժել և պաշտօնանկ անել է կարողանում, երբ «ընդ Արիանոս միաւորեալ էր» և ո՞չ իւր իրաւունքով կամ թաղաւորական իշխանութեամբ նորան զսպել, երբ «յանդզնազոյնս» ձգտում է նա արքեպիսկոպոսութեան պատիւ իրան չափացնելու. և հարկաւոր է համարում այդպիսի մի աննշան խնդիրն էլ, մի եպիսկոպոսի փառասիրական տենչանքն էլ Վաղարշապատից մինչև Երուսաղէմ հասցնել, Մակարի խօսքին սպասել, որպէս զի նա էլ վճիռ տայ, թէ «պարտ է զայնպիսին քաղցրութեամբ ի հնազանդութիւն կոչել». իսկ եթէ չկամենայ հնազանդել՝ «խորշել իբրև յօտարէ»:

Կեղծիքն ակներև է:  
Կեղծ—Մակարեան «կանոնական թղթի» բուն միջուկը վարդապետական մտքեր են. իսկ մնացածները՝ նորանց պատեանը կամ ծածկոյթը, հիւսուած այնպիսի սովորութիւններից և կարգերից, որոնք կամ ինքն ըստ ինքեանց հայ եկե-

ղեցու նախնաւանդ սովորութիւններն ու կարգերն էին, կամ ԺԲ.—ԺԳ. դարերում արծարծուած կարող էին լինել, ուրեմն և ընտել (69). որպէս զի՝ սովորականների և ընտելականների հետ խառնուած՝ աննկատելի անցկենան անսովորականները, մինչև որ փոքր առ փոքր ընտելանան հայ մարդու ականջին և հասունանան: Այդ խորամանկ հնարիմացութեամբ յօրինուել է և նդովքը: Եթէ միամիտ հայերը կարող էին հաւատալ, թէ Երուսաղէմի հայրապետը դեռ Գ. դարում բանադրել է «անապական զինի» չործածողներին, նորանց կարելի էր մասնացոյց անել թէ նոյն հայրապետը բանադրել է նոյնպէս քրիստոնէական եկեղեցու միւս հին վարդապետութիւններն ու սովորութիւնները չընդունողներին. և հայոց Լուսաւորչի որդին, ս. Վրթանէսն էլ՝ հետևել է նորան:

«Կանոնական թուղթը» մի վարդապետութիւն է կամենում անցկացնել և երկու սովորութիւններ: Վարդապետութիւնը Պետրոս առաքեալի զլիսաւորութիւնն է. բայց ուղղակի այդ ստելը Գ. դարի սկզբում ապրած Երուսաղէմի եպիսկոպոսի բերանից կարելի չէր, ուստի կեղծիքի հեղինակը բաւականացել է միայն նախապատրաստող ակնարկներով.— առաքեալները բոլորն էլ հաւասարապատիւ էին. նորանց մէջ կային զլիսաւորներ (ի հարկէ Պետրոս - Պօղոս), նոյնը հասկանալու է և նորանց չաչորդների մասին, որոնք ամենքն էլ «միապատիւ» չեն կարող լինել. «Գ. Եւ զիմորդ կարգը եկեղեցոյ սրբոյ յօրինին: Վերատեսուէք ըստ կարգեալ կայենիցն ընկալցին իշխանութիւնս... մի՛ փրասցին ամբարհաւանութեամբ «զանձինս առ իմաստունս ունելով, և անկցին չիմարութեամբ, «և անկցին ի չարութիւն: Զի թէպէտ միապէս տուեալ «չնորհքն ի հաւատացեալքն, այլ ոչ միապատիւ ամենեքեան: «Եւ թէպէտ և... առաքելոցն ամենեցուն չեա չարութեանն «երևեալ կենարարին, այլ զօժանս դեր ի վերոյ կարգէ, «և նոյն սկզբնաւորեալ ի մեզ հաստատեցաւ»:

Մակար եպիսկոպոսի բերանից քարոզած երկու սովորութիւններից մէկը՝ «մկրտելոց» իւրը կամ առաջին օծումն զործադրելն է, և զարծեալ պարզ ստելուց զզուշացել են, որ

խորթութիւնը մէկէնիմէկ աչքի շարնի. ուստի բաւականացել են Մակարին ասել տալ, թէ ս. Վրթանէսի թղթատար քահանաները սուրբ քաղաքում «բազմազգուշալի կենարար մկրտութեան» խորհրդի կատարումն տեսնելով և «հիացեալ զարմանալով» պատմել են Մակարին իրան, «թէ կողմանք արևելից (հասկացիր հայաստան) թերի են զգուշութեամբ չաչսպիտիս բաղում ինչ իրօք... Եւ է զի զժողովուն կարգեալն ոչ ասեն ուրեք ուրեք քահանայքն «ի ժամ մկրտութեանն». և Մակարն էլ լսածնեբի հիման վրայ հրամայում է Վրթանէսին. «բաղում զգուշութեամբ «և երկիւղէլ կատարել զկարգաւորութիւն մեծի «խորհրդոյն Աստուծոյ, որ կատարի ի կաթողիկէ «եկեղեցւոջ... Եւ չայսմ ամենայնի չէ պարտ ծուլանալ և «զանդաղիլ եպիսկոպոսացն և երիցանցն... և մի՛ ումեք լի- «նել պատեառք կորստեան, անհնազանդութեամբ, և թերա- «կատար ինչ կարգօք մկրտութեան»...»

Այդ խօսքերից չետոյ Դ. յօդուածի մէջ «իւղ մկրտելոց» չիշատակուել է:

«Մեռելոց» և «հիւանդաց» օծումն է, որ պարզօրէն հանուած է մէջ տեղ, բնորոշում կեղծ-Մակարի թղթի յօրինումից շառաշ արդէն «Իաշանց Թուղթն» է յօրինուած եղել, ուր չիշուած է Քրիստոսի օրհնած իւղն չատկապէս հիւանդներին նորանով «բժշկելու»: Բայց նկատելու արժանին այն է, որ Մակարի կանոնական թղթում զրուած են թէ «մեռելոց» և թէ «հիւանդաց» խօսքերը միասին: Վերջին խօսքն անշուշտ նորա համար է, որ Մակար երուսազէմացու բերանից է խօսուած. իսկ Երուսազէմի եկեղեցում հասկանալի էր միայն «հիւանդաց օծումն». այնինչ կեղծիքի յօրինողն հոգեվարքի—համարեա «մեռելոց» օծումն է կամենում հասկացնել: Յետոյ պիտի տեսնենք, թէ հոգեվարք հիւանդներին օծելն, որ առել է «վերջին օծումն» անունն, ե՞րբ է մուտք գաել հռոմէական եկեղեցում: Ճիշտ այս մտքով էլ արուած է մի ընդմիջարկութիւն և կորիւնի պատ-

մութեան մէջ ս. Սահակ Պարթևի մահուան նկարագրի մէջ որ հետևեալն է.

2. «Եւ կորիւն ի պատմել զվախեան սրբոյն Իսահակայ «Պարթևի զիւրոյ վարդապետին՝ ասէ. «ի կատարել ամսեանն «Նաւասարդի, ի պաշտաման անուշահոտ իւղոյն՝ հանդերձ ասա- «ուածահանոյ աղօթիւք, ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ»: \*)

3. Յովհան Մանդակունի: Հայրապետիս անունը կրող ճառերից 26-րդն ունի վերնագիր՝ «Թուղթ վասն հմաչից զիւթականաց և անօրէն չութողաց»:

Այս թղթի մէջ երկու տեղ չիշուած է հիւանդաց իւղն. առաջինն (եր. 193) երբ խօսքն ուղղուած է ի նախատինս այնպիսի եկեղեցականներին, որոնց համար փոքր մի վերն ասուած է. «Այլ և զզիրն ևս սպասաւորք եկեղեցւոյ և արեղայք զրեն»:

Այլպիսիներն, ասում է թուղթը, «լոկ անուամբ զան- «ծինս Աստուծոյ նուիրեն, և ի տան Աստուծոյ կերակրին... «զօրէնս Աստուծոյ ընթեռնուն, և տգիտաց վարդապետ ա- «նուանին, և մոլորելոց առաջնորդ, և ինքեանք մոլորեալք են. «թողեալ զշնորհսն Աստուծոյ, զաղօթսն և զիւղն օծման՝ «զոր պատուիրանք հրամայեցին հիւանդին, և զպահս և զա- «ղօթս ցաւածին, և ինքեանք չուութս և ի զիր զառածին»:

Եր. 195. «Զինչ հրամայեն մեզ պատուիրանք Աստու- «ծոյ. ո՞չ ապաքէն ամենայն զործոց մերոց զխաչն հրամայէ «պահապան և յօրինիչ, հիւանդաց աղօթս և օծումն իւղոյ, «և լլկելոցն ի սատանայէ պահս և աղօթս»:

Արդէն Յովհան Մանդակունու ճառերի մասին ասել ենք ինչ որ հարկաւոր էր, և այլ ևս կրկնելու հարկ չկայ. իսկ թէ վերջին օծման կամ հիւանդաց իւղ զործածելու սովորութիւնն եղե՞լ է թէ ոչ հայոց եկեղեցում՝ կտեսնենք առաջիկայում, Յովհան Օձնեցու ճառի և կանոնի առիթով խօսելիս:

4. Յովհան Իմաստասէր հայրապետ Օձնեցի: «Բայց տես- «ցուք և զայս ևս ի կարգիս, զոր մանաւանդ թէ և չառա- «ջագոյն իսկ արժան էր չիշել զմեծադործ և զբազմերախտ «իՔրիստոսէ մեզ պարգևեալ աւանդ. զիւղոյն սրբոյ ասեմ,

\*) Եղ. Հիւրմ. Աստուածաբ. Տես. Բ. 435.

«որով զհողին սուրբ ի մեզ ձգեմք ի Քրիստոս միանալովն:»  
 «Քանզի յոյժ օտարաբար նովաւ և այլապէս ի միմեանց վա-  
 «րիմք. զոր և տեսաք իսկ առ մերով ժամանակաւ: Քահա-  
 «նայից ձէթ բնդունել յերուսակէմէ բերեալ, խաչի ձէթ զնա  
 «անուանելով, և զնոյն նովին ամանօք առ մի ըստ միոջէ  
 «մկրտեալսն իւրաքանչիւր ումբք վերստին օրհնել: Զոր զան-  
 «գաղիմ ասել, որպէս թէ բազում անգամ օրհնութեամբքն,  
 «յոյովագոյնս ի ներքս յեւզն կոչել զշնորհն. և կամ թէ ի  
 «գալստենէ նորոյ շնորհին զհնացեալն ի բաց մերժել չամա-  
 «նոյ անտի: Եւ դարձեալ նովին ձիթով օծանէին զմկրտեալսն  
 «և զերեխայսն, այլ և զհիւանդս և զեկեղեցի և զսեղանս և  
 «զխաչս: Որ թէպէտ և չողին մի է, և առհաւատչեալ չող-  
 «ւոյն եւզն նոյն է, սակայն բազմազգի մերում ըստ փրկու-  
 «թեանն, բազմօրինակ և խորհուրդ փրկութեանն հրաշագոր-  
 «ծի. ընդ նմին և տեղիքն որոշին ի միմեանց՝ որովք փր-  
 «կեալն լինիմք, և անուանք տեղեացն: Ապա և աղօթքն և  
 «գործառնութիւնն ոչ ամենայն զմիոյ մատուցանէ մեզ փր-  
 «կութեան պարզեւ, և ոչ մին զամենեցուն. և ոչ նմանապէս  
 «միմեանց օգտամատոյց մեզ լինելով. այլ երեսալութեանն  
 «օծումն զհրաւիրականն ունի դրօշմ. և աւաղանին օծումնն՝  
 «զըստ հողւոյն մեզ չարմարէ վերստին ծնունդ. իսկ որ զկնի  
 «մկրտութեանն է օծումն՝ զօրպեղրութեանն աստուծոյ ի մեզ  
 «կոչէ շնորհ: Դարձեալ՝ սեղանն կերակրէ զմեզ, և ոչ ծնանի.  
 «աւաղանն ծնանի, այլ ոչ կերակրէ. խաչն մարանչի ընդ մեր  
 «առ թշնամիսն, և ոչ ծնանի, և ոչ կերակրէ. ի հիւանդու-  
 «թեանն՝ զառողջութեանն ունիմք կարօտութիւն, ոչ ևս զայ-  
 «լոցն: Սորա ապաքէն և աղօթքն և քարոզութիւնն և օծ-  
 «մունքն՝ բաժանաբար ըստ իւրաքանչիւրոցն վայելէ լինել  
 «խորհրդոյ: Եւ պատեառ ոչ ունիմ ասել, զանփոյթն առնե-  
 «լոյ զառաջնոցն այսպիսի խառնափնդոր և եղծագործ սո-  
 «վորութեանց, եթէ ժամանակի կարծութիւն, եթէ հիւան-  
 «դութեանց ի վերայ անկումն, եթի անպարապութիւն յաշ-  
 «խարհակայացն հարստահարութենէ. զայս ի նոսա և յԱս-  
 «տուած թողլի է: Իսկ մեզ իբրև հայրասիրաց ոմանց որդ-

«ւոց՝ զառ ի նոցանէ անտես մնացեալն,՝ ձեռն տալովն Աս-  
 «տուծոյ, տեսանել արժան է. և ի բարեկարգութիւն և ի  
 «բարեգարգութիւն ամել»: \*)

(Բայց այստեղ այս ևս տեսնենք, որք մանաւանդ յա-  
 ուաշագոյն իսկ արժան էր չիշել, իբրև Քրիստոսից մեզ պար-  
 դուած մեծագործ և մեծաշահ աւանդ. խօսքս ս. իւզի մա-  
 սին է, որով միանալով Քրիստոսի հետ՝ ս. չողին ենք ընդու-  
 նում: Ս. իւզի գործածութիւնը մեղանում շատ օտարաբար  
 և միմեանցից տարբեր է լինում, ինչպէս տեսանք և մեր ժա-  
 մանակում: Քահանաներն Երուսաղէմից ձէթ են ընդունում  
 և բերում՝ խաչի ձէթ անուանելով. և նոյնը միևնոյն աման-  
 ներով ամեն մի մկրտուածի համար (գործ դնելիս) իւրաքան-  
 չիւր մէկը (քահանաներից) կրկին օրհնում է. որով, — ասելն  
 էլ դժուարանում եմ, — որպէս թէ շատ անգամ կրկնուած  
 օրհնութիւնով ևս առաւել շնորհ պիտի իջնի և հանգչի իւ-  
 զի վերայ. և կամ թէ՛ նոր շնորհի իջնելովը հինը պիտի  
 մեկնի ամանների միջից: Եւ դարձեալ՝ նոյն ձէթով օծանում  
 էին թէ մկրտուածներին, թէ երեսաներին և թէ հիւանդնե-  
 րին, որպէս նաև եկեղեցի, սեղաններ և խաչեր: Թէպէտ չո-  
 ղին մի է, և չողուոյ առհաւատչեան, այսինքն իւզը նոյն է,  
 սակայն նորա փրկական հրաշագործումն բազմատեսակ է,  
 ինչպէս բազմօրինակ է և մեր փրկութեան խորհուրդն, (և)  
 ինչպէս միմեանցից զանազան են մեր փրկութեան տեղերն էլ  
 և տեղերի անուններն էլ: Նեաւաբար՝ ոչ բոլորի աղօթքներն  
 և իւզը մէկի՝ և ոչ մէկինը բոլորի համար գործադրելը փր-  
 կութեան պարզեւ է մատուցանելու մեզ. ոչ էլ նմանապէս  
 մէկի համար սահմանածների գործադրութիւնը կարող է փո-  
 խանակել միւսների համար սահմանածներին, օգտակարու-  
 թեան կողմից. ըստ որում երեսալութեան օծումն հրաւիրա-  
 կան (նախապատրաստութեան) նշանն է. իսկ աւաղանի  
 օծումն՝ մեր վերստին ըստ չողուոյ ծնունդն է պատրաստում.  
 մկրտութիւնից չետոյ եկող օծումն էլ Աստուծուն որդեգիր  
 լինելու շնորհն է տալիս մեզ: Ուրիշ խօսքով ասենք, — սեղա-

\*) Մատնագրութիւնք, նր. 7—8.

նր մեզ կերակրում է, բայց չէ ծնանում. աւազանը ծնանում է, բայց չէ կերակրում. խաչը մեր փոխարէն մարանչում է թշնամիների հետ, բայց ոչ ծնանում է և ոչ կերակրում. (իսկ) հիւանդութեան ժամանակ առողջութեան պէտք ունենք և ոչ միւսների. ուրեմն սորանց և՛ աղօթքն, և՛ քարոզութիւնն, և՛ օծմունքը բաժանաբար պիտի լինեն ինչպէս ամեն մէկի նշանակութեանը վայել է: Չգիտեմ, ի՞նչ պատճառով առաջիններն անփոյթ են եղել դէպի այս սովորութիւնների խառնափնդորութիւնն և խանգարումն.— արդեօք ժամանակի կարեւորութիւնն է եղել պատճառը (ժամանակ չեն ունեցել) թէ վերահաս հիւանդութիւնները, կամ թէ աշխարհակալական հարստահարութիւններից աչք չբանայր,— Սատուծուն և նորանց է գիտելի. իսկ մենք, իբրև մեր հայրերին սիրող որդիներ, նորանց անտես արածը պիտի տեսնենք, բարեկարգենք և բարեղարգենք Սատուծու օգնականութեամբ):

Նոյն Օձնեցի հայրապետի կանոն ԺՍ. «Սրժան է և «գհիւանդացն դձէթ քահանային օրհնել ըստ իւրում աղօթիցն, և ըստ բաւականութեան պահանջելոյ ժամուն պիտոյից»:

Յովհանն կամ Յովհաննէս Դ. որ Ութերորդ դարի սկրզբում նստաւ հայրապետական դահի վերայ, կոչւում է Օձնեցի՝ ճաշիրք զաւառի Օձուն զիւղում ծնուած լինելու, և Իմաստասէր՝ արտաքին գիտութիւնների մէջ սւնեցած հմտութեան համար: Դժբաղդաբար այս մեծ հայրապետի վերայ խօսող ժամանակակից պատմական լիշատակարաններ չկան. որ ասել է՝ կամ չեն եղել, կամ եղել՝ միայն մեր ձեռքը չեն հասել. իսկ չետազայ պատմիչները շատ աննշան տեղեկութիւն ունեն նորա կեանքի և գործունէութեան մասին: Դորանցից ժամանակով Օձնեցուն մերձադոյնն, ինչպէս ասել ենք, Դրասխանակերտցի Յովհաննէս Զ. կաթողիկոսն է, որ իւր պատմութեան միայն երկու երեսն է նուիրել նորան, զլխաւորապէս նորա փառահեղ և զեղեցիկ դէմքի ու արտաքին պնդարդութեան նկարագրին: Այդ նկարագրին նայած՝ Օձնեցին այնպիսի հիացնող և պատկառանք աղղող կերպարանք ունէր և կերպար-

րանքին պատշաճ այնպիսի փառահեղ հանդերձ, որ մինչև անդամ Վլիթ ոստիկանը զնացած լինելով ամիրապետի մօտ՝ սորան էլ պատմել էր նորա զարմանալի կերպարանքն և զարգարուն հաղնուելն. ուստի ամիրապետն ինքն էլ ցանկանալով նորան տեսնել՝ հրաւիրում է իւր մօտ, չատուկ հրաւիրակ ուղարկած և պատուէր տուած լինելով, որ ճանապարհին ամեն տեղ հայրապետին պատիւներով ընդունեն: Երբ որ Օձնեցին ժամանում է մայրաքաղաքն, ամիրապետն ուղարկում է չալտնելու, թէ ցանկանում է տեսնել նորան «ըստ սովորականին զարդու զինքն զգեստաւորեալ». և համաձայն բարձրագոյն ցանկութեան հայրապետը «զաւարտահասակ զիտակն իւր և ս առաւել փայլուն և պաղպաղուն պծնաւօրեալ՝ և զաղէբեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կաղմեալ, և «զոսկիանկար զաւազանն... ի ձեռն առեալ, այնպէս ապա զօնեան այրն և թիկնաւէտ առ ամիրապետն մտանէր: Զոր «տեսեալ հիացեալ զարմացեալ ընդ զեղեցիկութիւն նորա բարեհամբօյր հասակին և շքեղաշուք վիտակին», ամիրապետն աթոռ է առաջարկում նստելու, և խօսակցութեան միջոցին հարցնում է թէ ինչո՞ւ «այդպէս պծնապաճոյծ լինիս. վասն զի Քրիստոսն ձեր զպարկեշտ և զչնչին զգեստ պատուեաց և զնոյն արարին աշակերտք նորա»: Կաթողիկոսը բացատրում է պատճառը. Քրիստոս և իւր աշակերտներն, ասում է, հրաշքներ էին գործում և հրաշքների գորութեամբ էին զարթեցնում մարդկանց մտքերը դէպի Սատուծոյ երկիւղը. մենք զուրկ ենք հրաշքներ գործելու շնորհից, ուստի կամենում ենք աղղել արտաքին փառաւորութեամբ: Այս ասելով՝ իրաւունք է խնդրում ցոյց տալու մարմնի վերայ ներքուստ կրած հագուստն, և ամիրապետն երբ տեսնում և շօշափում է նորա հագած կոշտ մաղեղէնը— «զցփսիսն այժեայս» — զարմանում է և հարցնում. ի՞նչպէս կարող է մարդու մարմինը զիմանալ «այսպիսի դժոխքմբերելի բրձի, եթէ ոչ չՍատուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն»: Եւ ապա մեծամեծ պարզւներ և թաղաւորական հանդերձներ և «զանձս ոսկոյ և արծաթոյ» տալով նորան՝ պատուով վերադարձնում է տեղը:

ինչպէս տեսնուծ են ընթերցողներն, Օձնեցին ներկայացուած է այստեղ իբրև խստակեաց նշնաւորական կեանք վարող կրօնաւոր, այս գիտենալը մեղ չետոյ պէտք կգայ:

Նոյն պատմաբանն յիշուծ է Իմաստասէր հայրապետի զրաւորական զործունէութիւնն էլ, բայց մի քանի տողով, որը նորից այս տեղ կրկնելը կարևոր ենք համարուծ. «Մեծ «Իմաստասէրն Յովհաննէս... զրով զրոշմեալ տայ եկեղեցւոյ «Քրիստոսի զրովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժաւմուց, գեղեցիկ իմն յօրինուածով նոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս ի մխիթարութիւն կղերց եկեղեցւոյ: Այլ և նաուս ևս ինքնախօսս բանաստեղծս յարգարեալ՝ զղջացուցիչս շար զործոց և յօրդորականս ի պէտս ասպաշխարողական սակի»:

Իրասխանակերտցու խօսքերից այնպէս է հասկացուծ, թէ նա Օձնեցու զրած սեպհական աշխատութիւններ միայն նաուերն է համարուծ—«նաուս ինքնախօսս».— իսկ եկեղեցական «կարգաւորութիւնները»՝ նորա ձեռքով նոխացրած և բացայայտուած: Երևի այդպէս էլ ընդունել է եկեղեցին, որ նորա անունը չէ զրել պաշտամուծներին վերաբերեալ յատուկ զրուածներ տուող հեղինակների շարքուծ: Մենք ունենք երեք զիրք, որոնք բովանդակուծ են պաշտամուծներին «կարգաւորութիւններն». և ամեն մի զրքի նակատին յիշուած են կարգաւորող հայրապետների անունները: Գրքերը սորանք են.— Ժամագիրք, Տօնացոյց, Մաշտոց:

1. Ժամագիրք Ատենի՝ (ս. էջմ. 1862) «Արարեալ սուրբ «և Սատուածաշնորհ թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ, «և Երանելի չայրապետացն մերոց Գիւտոյ և Յովհաննու Մանգակունուոյ և սրբոյն Ներսիսի Շնորհալուոյ»:

2. Տօնացոյց (Ատենի Ժամագրքի հետ). «չորուծ պարուծ նակին տօնք և պահք, ընթերցուածք և արարողութիւնք «չայստանեալցս ս. Եկեղեցւոյ, սկզբնաւորեալ ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ... և կարգաւորեալ Սրբոյն Սահակայ Պարթևի և Երանելի չայրապետացն մերոց Գիւտոյ և Յովհաննու Մանգակունուոյ, և հուսկ ասպա Սրբոյն Ներսիսի Շնորհալ-

«ուոյ. իսկ ի մեր ժամանակս Տեառն Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսի»:

3. Գիրք որ կոչի Մեծ Մաշտոց. (Կ. Պօլիս, 1807). «չորուծ հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին Կարդք «և Կանոնք արարողութեան չայստանեալցս Սուրբ Եկեղեցւոյ: Արարեալ ի նախնեաց և կարգաւորեալ ի մերոց «սրբոց Թարգմանչաց և ի շնորհափայլ մեծաց Վարդապետաց»:

Սակայն ամենայն հաւանականութեամբ պէտք է ընդունել, թէ Օձնեցու զրուածներ այն չեն եղել միայն, ինչ որ այժմ անկասկածաբար նորանք համարել կարող ենք և նորա՝ Եկեղեցուն մատուցած ծառայութիւնները թէ զրաւոր և թէ վարչական մասերուծ շատ աւելի և շատ արդիւնաւոր են եղել. այնպէս որ Եկեղեցին նորան ոչ թէ Գիւտի, Մանգակունու և Ն. Շնորհալու հետ հաւասարապատիւ է նանաչել, այլ նորանցից շատ բարձր է դասել: Նորան տուել է այնպիսի մի պատիւ, որին վերոյիշեալները չեն արժանացել: Նա ոչ միայն սուրբ է և տօն ունի, այլ և ազգային սուրբերի մէջ առանձին յարգանք և երախտադիտութիւն վայելող սակաւաւորներից մէկն է. նա թէ տօնուծ է Յովհան Որոտնեցու և Տաթևացու հետ մի օրուծ, և թէ տեղ է բոնուծ Եկեղեցու այն երախտաւոր և նշանաւոր չայրերի կարողուծ, որոնք իրանց զործունէութեամբ և իրանց վարդապետական սկզբունքներով բացարձակ վստահութիւն են վայելուծ: Մաշտոցի բահանայական ձեռնադրութեան կանոնի մէջ ձեռնադրուել կոչուածի կրօնական դաւանանքն և համոզմունքը հարցաքննող եպիսկոպոսը մեր ս. Լուսաւորչի, նորա Որդուց և Թոռանց և ս. Թարգմանչաց «աշակերտելու» պարտադիր խոստուծն առնելուց յետոյ հարցնուծ է դարձեալ. «Աշակերտի՞ս սրբոցն Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, և աշակերտի նորին Գրիգորի Տաթևացւոյն». մինչպեա Օձնեցուց մինչև Որոտնեցին կան ս. չայրեր, որոնք նոյնպէս տօնուծ են, և մինչև իսկ Պատարագի «Սուաքելոցի» մէջ յիշատակուողներ են, ինչպէս Գրիգոր Նարեկացին, Ներսէս Կլայեցին, բայց դարձեալ

Եկեղեցին այն վաստակները չէ ընծայել նորանց, ինչ որ Օձնեցուն, Որոտնեցուն, Տաթևացուն:

Որոտնեցուն և Տաթևացուն վեց դար չառաջ ապրած Օձնեցու հետ միասին սօնելը, միասին Մաշտոցում իբրև անպայման վաստակեան արժանացած «ուսուցիչներ» ընդունելը ցոյց է տալիս, թէ Եկեղեցին երեքի վարդապետական արդիւնաւոր վաստակները միասեակ է համարել և միասին զնահատել: Որոտնեցու և Տաթևացու զործունէութիւնն և զբաւոր աշխատութիւնները մեղ յայանի են. բայց նոյնչափ յայտնի են արդեօք և Օձնեցունը: Փոքր ինչ չառաջ սասցիներ, թէ զժբաղդաբար նորա մասին տեղեկութիւններ տուող ժամանակակից չիշատակարաններ չկան. մեր բոլոր գիտեցածն այն է, ինչ որ Յովհաննէս պատմաբանն է թողել: Եթէ չետոյ եկած պատմիչներէրէր եղել են Օձնեցու անունն չիշատակողներ, զորանք էլ կամ Դրասխանակերտցու ասածներն են կրկնել (Ստողիկ, Վարդան, Յայսմաւուրք և այլն) կամ եթէ տուել են մի նոր յաւելում՝ այդ էլ մէկը միւսից փոխ առած այն տեղեկութիւնն է, թէ Օձնեցի հայրապետը ժողով է կազմել Մանաղկերտում եկեղեցական մի քանի նորամուտ սովորութիւններ բառնալու համար (Ստողիկ, Վարդան, Կիրակոս, Մխիթար Այրիվանեցի, Գրիգ. Տաթևացի, Յայսմաւուրք):

Պատմական աղբիւրների չդոյութեան շնորհիւ չունենք հարկաւոր տեղեկութիւնն Օձնեցու կեանքի մասին նախ քան կաթողիկոսութիւնն. օրինակ՝ թէ ո՞ւմն է աշակերտել և ինչ զործեր է կատարել: Յովհաննէս կաթողիկոսը նորան անուանում է «մեծ իմաստասէր»: Բայց այդպիսի զիտնական տիտղոս մեղանում միշտ զգուշաբար է արուել արդեօք միմիայն նորանց, որոնք իսկապէս ուսած են եղել փիլիսոփայական զիտութիւններ: Յովհան Մանգակունին էլ տեղ-տեղ կոչուած է իմաստասէր. Սրշարունեաց Գրիգոր եպիսկոպոսին էլ Ստողիկը «փիլիսոփայ» է անուանում, առանց յայտնելու թէ նա ի՞նչ է ուսած եղել. փիլիսոփայ կոչուած են Յովհան Մայրափանեցին էլ, Սիւնեաց Մաթուսաղայ եպիսկոպոսն էլ: Այս կայ,

որ Օձնեցուն «իմաստասէր» անուանող Դրասխանակերտցին ցոյց է տալիս և նորա ուսած զիտութիւնը. «Նմուտ և տեղ-«եակ զոլով բոլոր քերթողական շարագծաց, մասանց բանի «և մասնականաց, այլ և վարժից սեռից և որք ընդ զոչա-«ցութեամբ են սեռական տեսակարարութիւնը մինչև ցան-«հատ վայր, և սարբերութեանցն ևս հանդամանաց և պա-«տահմանց անշատից և անանշատից ոչ անտեղեակ: Կարծեալ «և կրթական վարժից թէ՛ոնականաց (թէ՛որիականաց), որ «զարուեստին ծառոյ զպատուս առողանապէս ներադրէ յա-«րուեստասէրն»:

Բայց ո՞վ է եղել այն ուսուցիչն, որ Օձնեցուն վարժեցրել է այդ ուսմունքների մէջ:

Նարկաւ այսպիսի մի հարցումն առաջին անգամից շատ օտարտալ պիտի թուի նորանց, որոնք աներկբաբար ընդունած են ինչ որ արդէն մեղանում յայանի է. թէ՛ այդ ուսուցիչն եղել է Թէոդորոս Քոթենաւորի նման «երևելի» վարդապետն, «այր մեծիմաստ, ուսեալ և վարժեալ ի զիտութիւնս հելլենական իմաստից» (Չամչ. Բ. 361). կամ ըստ հ. Զարբանալեանի՝ «թէ՛ հաչկական և հելլենական զիտութեամբբը և թէ՛ սստուածային ուսմամբը նշանաւոր, իմաստութեամբն և առաքինութեամբ անուանի» (Պատմ. չ. Դպր. 469):

Խնդիրն էլ հէնց նորանումն է, թէ արդեօք սպացուցաբար յայտնի է որ՝ Թէոդորոսն այդպիսի զիտութիւններ ունեցող մի վարդապետ է եղել, և որ՝ նա է Օձնեցու ուսուցիչը:

Իրաւ է, Օձնեցու «Ստենաբանութեան» մէջ ստուած է. «Վարժապետ վեհագոյն ունէի յաստուծոյ պարզեալ ինձ, «հայր միանգամայն և հրահանգող հողեկան վարժութեանց՝ «զիմն Թէոդորոս, ըստ մերումս սստուածաշնորհ պապշանեալ «լեղուի». սակայն նախ՝ նոյն իսկ այդ «Ստենաբանութեան» հարադատութիւնն աղաւաղուած է, ինչպէս պիտի տեսնենք փոքր ինչ ներքև. երկրորդ՝ այդ տեղ միայն Թէոդորոս է սստուած. ուստի՞ առել աւելցրել են ուրիշները Քոթենաւոր մակչիրն, և հայերէ՞ն է արդեօք այդ բառը: Ն. Մ. Չամչեանն չիշեալ «Ստենաբանութեան» հարադատութիւնն ապա-

ցուցանող փաստերից մէկն էլ վերոգրեալ խօսքերը համարելով՝ ասում է. «Հեղինակ այնքա՛ն զովելի գրոց Յովհաննէս հայ-  
 «բապեա ասէ զանձնէ լինել աշակերտ Թէոդորոսի մեծի վար-  
 «գապետի... Իսկ արդ՝ ի պատմութեանց յայտնի ունիմք, որ-  
 «պէս զնի և Յայսմաւուրս... Թէ Յովհաննէս իմաստասէր՝ որ և  
 «Օձնեցի՝ էր աշակերտ այնքա՛ն Թէոդորոսի երեւելի վարդապե-  
 «տի... Ուր հարեանցիկ արժան է գիտել, զի այս Թէոդորոս  
 «վարդապետ և նոյնաւոր՝ որպէս ասացաք... կոչիւր ևս իբր  
 «մականուամբ Քոթենաւոր, Թերևս պարտ էր ասել Թոքե-  
 «նաւոր՝ ի յունական բառէս Թոքիքինաս, այսինքն խարաղնա-  
 «զգեաց, վասն զգլխոյ զխարաղն, ըստ որում արար և աշա-  
 «կերտ նորա: Յիշատակի և առ յոյնս և առ հռոմայեցիս,  
 «յապրիլի 20. մի ոմն Թէոդորոս երեւելի նոյնաւոր՝ կոչեցեալ  
 «նոյնպէս Թոքիքինաս վասն խարաղնազգեաց կեանս վարելոյ»  
 (Բ. 588): Հարկաւոր ենք համարում յայտնել այստեղ, Թէ  
 հ. Չամչեանի «ի պատմութեանց յայտնի ունիմք... Թէ Յովհ-  
 Իմաստասէր... էր աշակերտ այնքա՛ն Թէոդորոսի երեւելի վար-  
 դապետի» խօսքերից պէտք չէ կարծել, Թէ ուրեմն կան պատ-  
 մական այնպիսի աղբիւրներ, որոնց վկայութիւնը բաւա-  
 կան կարող է լինել աւելորդ համարել տալու մեր յարուցած  
 հարցերը: Չամչեանի ունեցած «պատմութեանց» աղբիւրները  
 ցոյց տրուած են Թէոդորոս Քոթենաւորի մասին խօսող էջի  
 լուսանցում (Բ. 361) և սորանք են «Ճառքնս. Յիշատ. Պատմ.».  
 վերջին բառը կրճատ գործ է ածուած ամեն անգամ «զանա-  
 զան պատմութիւնք անձանօթ անձանց» նշանակած լինելու  
 համար (Ս. 19). հետևաբար այդպիսի աղբիւրները չեն կա-  
 րող պատմական ապացոյցների պակասութիւնը ծածկել: Ընդ-  
 հակառակը՝ կայ մի ուրիշ չիշատակարան, որ բոլորովին այլ  
 բան է հասկանալ տալիս: Նորա խօսքերին նաչած՝ Յովհան  
 Օձնեցին մի ուրիշ զպրօցի կամ ուսուցչի բան Թէոդորոս  
 Քոթենաւորի աշակերտ պիտի ճանաչուի, և եթէ վերջինի մօտ  
 ևս եղած է, այն ժամանակն է եղած, երբ ինքն արդէն արտաքին  
 ուսմունքը սովորած և փիլիսոփայ կոչման հասած էր, բայց  
 պէտք է զգացել վանք մտնելու և Թէոդորոսի մօտ ս. Գրոց

մեկնութեանն և վանական կարգ ու կանոններին վարժուելու,  
 որպէս զի կուսակրօն քահանայ լինի: Յառաջ ենք բերում այդ  
 հետաքրքիր չիշատակարանի խօսքերը. «Մեզ բաւական հա-  
 «մարելի է զսակաւսն ի բաղմաց, զոր ունին զիրք չիշատա-  
 «կարանաց, և զլուրն զիպողական յաւանդութեանց, և անտի  
 «կազմեցաք բարեբաղդ տուազաստի մեծին Յովհաննու հիւսակ  
 «պսակի... Սրդ հայրն մեր Աստուածապարզ և հայրապետ  
 «փառազգեաց Յովհաննէս էր, որպէս զիրք պատմադրաց ցու-  
 «ցանեն, աշխարհաւ երկոտասաներորդ ի Գուգարաց, զաւա-  
 «ռաւ չորրորդ ի Ճաշրոյ, բնակութեամբ ի նշանաւոր գիւ-  
 «ղաքապաքէն Ուծնայ ի յարենէ ծննդեան յազատ տանէ: Քա-  
 «չաբօյս զոյով մանուկ և ուշիմ ի վարժս կրթութեան, հոե-  
 «տորական ուսման և փիլիսոփայական արհեստից պարա-  
 «պեալ. զաիս տղայութեան անցուցանէր առ հան-  
 «ճարեղս, քանզի գօյր յայնժամ այսպիսի ուս-  
 «ման զպրօցք յաշխարհիս հայոց և Յունաց և Ասոր-  
 «ւոց ճարտարաց, յազազս որոյ առեալ և զիմաստասի-  
 «րական անունն կոչմամբ և արդեամբ զարդա-  
 «րեալ ամենայն առաքինութեամբ: Երթալ յայնու-  
 «հետե եռանդնոտ բնութեամբն... առ մեծ նոյնաւորն և ա-  
 «նուանի վարդապետն Թէոդորոսն Քոթենաւորն կոչեցեալ...  
 «զորոյ սիրեցեալ զվարս սուրբս, խոշորս և պարկեշտս, յանձն  
 «առնոյր յաւելուածով... ուսանէր ի նմանէ ըստ հանոյ  
 «կարդին զամենայն գիրս աստուածաշուէնչս հին  
 «և նոր մատենից, որովք ընդարձակեալ սրտիւ աճէր  
 «խստամբեր վարուք և հանճարով գրոց, փառաւորեալ Յս-  
 «տուծոյ և ի մարդկանէ... Զոր տեսեալ հայրն նորա ըստ  
 «հողւոյ՝ տալը նմա կոչել զնա յաստիճան շնորհաբաշխու-  
 «թեան ի կատարման մարմնաւորական և հոգեւորական հա-  
 «սակին և ձորուաց՝ ի կարգ սարկաւազութեան և ի պա-  
 «տիւ քահանայութեան, որովք և աղբիւրանայր յորդառաս  
 «իմաստութեամբ, և Թարգմանութեամբ և մեկնութեամբ զրօց  
 «զարդարէր զեկեղեցի, և ժիր և մաքուր քահանայազօրծու-  
 «թեամբ հաշտեցուցանէր զԱստուած ընդ կենդանիս և ընդ

«Ճեռեալս: Քանզի թէպէտև թագաւոր ոչ զոյր աշխարհիս  
 «Հայոց յայնմ ժամանակի, այլ ընդ ժառայութեամբ ծառկաց  
 «էին, որ կոչին Ամիր Մեհնիք, սակայն ի ղթութիւնս ել Տէրն  
 «զազգս առաջի նոցա աղօթիւք սրբասիրին Յովհաննու, և որք  
 «ընդ նմա զկամս Աստուծոյ կատարէին. ուղղափառ հաւա-  
 «տով և խաչաչարչար ճգնութեամբ առ լերամբն որ Սոթից  
 «կոչի, Գէորդ վարդապետն սքանչելագործ և Մաթէոս խոտա-  
 «ճարակն, և իւր իսկ վարդապետն և այլ բազում խստա-  
 «կրօնք և երկնաթուիչք»: \*)

Յիշատակարան-գրքերից և աւանդութիւններից ընտրո-  
 դարար այս «հիւսակ պսակի» կազմող հեղինակն, որին հ.  
 Զարբանալեան անուանում է «Մեր նախնեաց մէջ՝ իր (Օձ-  
 նեցու) վրայ զարմացողաց մէկը», այսչափ սակաւատող հա-  
 տուածով աւելի լոյս է սփռում Իմաստասէրի կեանքի և  
 Գործունէութեան վերայ, քան մինչև այժմ չիշատակուած-  
 ները: Նա պարզապէս ասում է թէ՛ Օձնեցին իմաստասիրա-  
 կան ուսմունքն ուսել է ուրիշների մօտ և ոչ Թէոփորոսի-  
 թէ՛ այդ Թէոփորոսը յայանի է եղել իւր ճգնակիր վարքով  
 և վարդապետական մեկնաբանութեան հմտութեամբ, այլ ոչ  
 թէ իբրև «այր մեծիմաստ, ուսեալ և վարժեալ ի զիտու-  
 թիւնս հելլենական իմաստից»: Միւս տեղեկութիւնն, որ հա-  
 ղորդում է հատուածն, ոչ պակաս հետաքրքիր նորութիւն է.  
 նա ցրում է մինչև այժմ ընդունուած աւանդութեան այն  
 մասը, թէ Թէոփորոս վարդապետն եղել է Արագած լերան  
 ստորոտում կառուցուած մի վանքի վանահայր ուր, հետևա-  
 բար, զնացել և ուսել է Օձնեցին: Հատուածում յայտնապէս  
 երևում է, թէ Յովհան Իմաստասէրը կրօնաւորական կոչման  
 նուիրուելու համար մտել է Սոթից լերան մօտ կամ ստորո-  
 տում դանուած վանքն, ուր և երկար տարիներ, թերևս և  
 մինչև կաթողիկոսանայր մնացել է, պարապելով թարգմա-  
 նութեամբ և մեկնութիւններով: Այդ տեղ էլ եղել է այն կրօ-  
 նաւորն, որ նորան մեկնաբանութեան մէջ վարժեցնելու հա-  
 մար կոչուել է նորա «վարդապետը» (ուսուցիչ):

\*) Հայկ. Հին Դպր. Պատմ. եր. 478—479.

Վերողրեալ հատուածի խօսքերի արժանահաւատութեան  
 ի նպաստ զտնում ենք հետևեալ ցուցմունքները. նախ՝ հա-  
 տուածից օգտուած Յայտնաւորքն էլ զնում է թէ՛ Օձնե-  
 ցին արդէն ուսած էր իմաստասիրական ուսմունքն՝ երբ որ  
 Թէոփորոսի մօտ զնաց. «Սուրբ հայրապետն մեր՝ փառա-  
 «զգեացն Յովհաննէս Օձնեցին... ի մանկութենէ վարժեալ յու-  
 «սումն աստուածային և շարուեստս իմաստասիրական հան-  
 «ճարոյ... զնացեալ շարեցաւ առ մեծ ճգնաւորն և յանուանի  
 «վարդապետն Թէոփորոս՝ քութենաւորն կոչեցեալ: Յանձին  
 «կայեալ զնուրբ և զխոշոր վարս նորա, աւելուածովքն»...

Երկրորդ՝ որ Տաշիրք և Սոթք կամ Սոտք (այժմ թա-  
 թար հնչմամբ Զօթ) զաւառների մերձակցութիւնն էլ աւե-  
 լի հաւանական է դարձնում հատուածի ասելը, թէ Օձնեցին  
 և նորա ուսուցիչն եղել են Սոթից լերան մօտիկ մի վան-  
 քում, քան Արագածի ստորոտի վանքում: Մինչև անգամ  
 վերջինի զոյութիւնն էլ տարակուսական է: Ի՞նչպէս է պա-  
 տահել, որ է. դարում Այրարատեան նահանգում Արագածի  
 ստորոտում զոյութիւն է ունեցել միանձանց այնպիսի մի  
 նշանաւոր վանք, որի վանահայրն է եղել Թէոփորոս Քութե-  
 նաւոր «երևելին իբրև այր մեծիմաստ», նշանաւոր իբրև շատ  
 աշակերտների ուսուցիչ—«որ աշակերտեաց զբազումս»—և  
 դարձեալ մեր պատմիչներից ոչ մէկը չէ արժան համարել չի-  
 շատակել ոչ վանքն ու նորա շինողի անունն և շինութեան  
 թուականն, ոչ նորա դպրոցի արդիւնաւոր գործունէութիւնն,  
 և ոչ նորա համբաւաւոր զիտնական—ուսուցիչ վանահօրը:

Այժմ պիտի տեսնենք, թէ իսկապէս եղել է Թէոփորոս  
 Քութենաւոր վարդապետ. կամ նա, որին այդ անուամբ հաս-  
 կանում են, կարճ էր լինել Յովհան Իմաստասէրի ուսու-  
 ցիչը. և ի՞նչ զբաւոր վաստակների հիման վերտջ նա համ-  
 բաւուած է իբրև այր մեծիմաստ կամ զիտնական:

Հ. Մ. Զածչեանը գրում է. «Մարթ է ասել, թէ սոյն  
 «այս Թէոփորոս է այն՝ որ ասի լինել երրորդի Կոմիտասայ  
 «կաթողիկոսի և բեռորդի Եղրի. զի ժամանակն կարէ շար-  
 «մարիլ երկարութեան կենաց նորա» (Բ. 361): Հ. Զարբա-

նախանն ևս ասում է. «Ոմանք կ'աւանդեն թէ այս Թէոզո-  
 «րոս ըլլայ Կոմիտաս կաթողիկոսին եղբորորդին և Եղբին  
 «քեռորդին, որ Սիւնեաց հռչակաւոր վարդապետանոցը զնաց  
 սովորելու, և Մաթուսաղայի աշակերտելու» (Պատմ. Դպր.  
 470): Եթէ Քաթենաւոր անունը կրողն այդ Թէոզորոսն  
 ընդունուի, ևս առաւել անհիմն կլինի նորան համարել Յովհ.  
 Իմաստասէրի ուսուցիչ: Նախ՝ նորա համար, որ նա երբէք չէ  
 կարող լինել մեծիմաստ և հելլենական գիտութիւններով յայտ-  
 նի անձն. բնորոշմ Յովհ. կաթողիկոս պատմաբանը նորան  
 ճանաչում է կիսակատար կամ թերուս ոմն: Եղբ կաթողի-  
 կոսն երբ որ Կարին զնաց, ասում է պատմաբանն՝ «ոչ տա-  
 «նէր ընդ իւր զՅոհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ էր  
 «յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ և Աստուածային  
 «զրոյց գիտութեան բանիրուն ճանաչէր, այլ զայլ ոմն զիւր  
 «քեռորդի՝ կիսակատար ուսմամբ» (եր. 45): Նոյնը կրկնում է  
 և Ասողիկը. «Զոմն կիսակատար գիտութեամբ ընդ իւր առ-  
 նոյր» (եր. 87):

Երկրորդ՝ հ. Զամչեանն ասում է, թէ Իսրայէլ կաթո-  
 ղիկոսի օրով «ժողկէր ի մէջ հայոց Թէոզորոս վարդապետ  
 Քաթենաւորն կոչեցեալ»:

Իսրայէլը կաթողիկոսացել է 667 թուին և վախճանել  
 է 677-ին: Արդ՝ եթէ Թէոզորոսի ուսուցչական և վարդա-  
 պետական զործունէութիւնն այս ժամանակումն է համբաւ  
 ստանում ազգի մէջ՝ նշանակում է, թէ նա այդ թուական-  
 ներին ասպարէզ մտնելիս երիտասարդ է եղել. այլապէս  
 «ժողկէր» խօսքի իմաստն անհասկանալի կլինէր, և զործա-  
 ծութիւնն անտեղի. իսկ Կոմիտասի եղբորորդի Թէոզորոսին  
 երիտասարդական հասակ Իսրայէլի օրով պատշաճ չէ զայիս:  
 Եթէ ընդունենք, թէ 629 թ. Եղբի հետ Կարին զնացող Թէ-  
 ոզորոսը զոնէ 30 տարեկան լինելու էր, 667—677-ին նա  
 70 տարեկան զառամեալ մէկը պիտի լինէր. իսկ այդ հասու-  
 կում մտաւոր զործունէութեան նկատմամբ «ժողկէր» ասելը  
 նոյնքան ծիծաղելի է, որքան եթէ տարիքի համար ասուի:  
 Համաձայնենք մինչև անգամ, թէ մի ծերունի պահպանած

լինելով մարմնաւոր և մտաւոր առողջութիւնն ու կորովը՝  
 դեռ կարող էր ուսուցանել. և այդ դէպքում՝ ժամանակի  
 նկատմամբ, անպատեհութիւն չէր լինի Օմնեցուն նորան ա-  
 շակերտ անուանել: Իսկ ի՞նչպէս ընդուել, թէ Սահակ Գ. Զո-  
 րափորեցին էլ նոյն Թէոզորոսի աշակերտն է եղել. «Եւ եղև  
 մի յաշակերտաց նորա երանելին Սահակ կաթողիկոս»  
 (Զամչ. Բ. 361): Սահակը յաջորդել է վերոյիշեալ Իսրայէլին  
 677 թուին. ուրեմն քանի՞ տարեկան պիտի լինէր կաթողի-  
 կոսական զահր բարձրացած միջոցին, եթէ այդ ժամանակում  
 նոր «ժողկէր» սկսող ուսուցչի աշակերտն է եղել:

Անցնենք Թ. Քաթենաւորի անունը կրող զրաւոր վաս-  
 տակներին, որոնցից կարելի է եղել այնպիսի մեծ համար-  
 մունք կազմել հեղինակի ունեցած հաչկական և հելլենական  
 ուսմունքների և գիտութեան վերայ:

Ըստ հ. Զամչեանի՝ Քաթենաւորը զրել է մի «ընդար-  
 ծակ ճառ՝ զօրաւոր բանիւք» մայրագոմեցիների դէմ, որոնք  
 զանազան ժանտ մոլորութիւնների հետ միասին ունէին և  
 Յուլիանոս Աղիկառանցու աղանդը: Իսկ հ. Զարբանալեանը  
 գտնում է թէ՛ «այս ճառով Քաթենաւորը հանճարի տէր,  
 «և ճարտարխօսութեան ձիրքն ունեցող կ'երևնայ, հմուտ  
 «սուրբ զրոյց և հարց, և արտաքին իմաստասիրութեանց ալ  
 «լիուլի տեղեակ»: Հ. Զամչեանի ասելով՝ այդ ճառից զատ  
 Քաթենաւորը «զրեաց և բազում ճառս զեղեցիկս զովին (վե-  
 րոյիշեալի) ոճով». իսկ հ. Զարմանալեանի բազմաշխատ խու-  
 րարկութիւնը «բազում ճառերից» նոր ոչ մի բան չէ գտել,  
 որ կրէր Քաթենաւորի անունը, բացի այն երկու միւս ճա-  
 ուերից, որոնք հրատարակուած են Վենետիկում դեռ 1833 թ.  
 մէկն է՝ «Ներբողեան ի ս. Խաչն աստուածընկալ». միւսը՝  
 «Գովեստ ի սուրբ Աստուածածինն և ի կոյսն Մարիամ»: Սո-  
 րանցից առաջինը «հետեղութիւն» է Դաւիթ Անյաղթի  
 խաչի ճառին, որ այժմ համարւում է չեաին ժամանակի ար-  
 դէտ զրչի արդիւնք (Գարազաշ. Գ. 55). իսկ երկրորդի հա-  
 րազատութեան վերայ «բանասէրներէն ոմանք կը տարակու-  
 «սին «վերագրելով զայն» կամ նոյն անունն ունեցող վարդա-

«պետի մը, կամ Թալէոս անունով մէկու մը, որուն ուրիշ  
«քանի մը ներբողական գրուածները ձեռուրնիս հասած են,  
«նոյն գժուարիմանալի լեզուով և խրթին կամ աւելորդ բա-  
«ռերով»:

Ահա Քռթենաւորի զիտնականութեան բոլոր սպացոյց-  
ները:

Այժմ տեսնենք նորա հմտութիւնը հայերէն լեզուի մէջ:  
Քռթենաւորին այդ մատուցն էլ «նշանաւոր» համարող  
հ. Զարբանալեանն հետեւեալ եղրակացութիւնն է անում նո-  
րա ճառերի լեզուի մասին: Ընդդէմ Մայրադոմեցւոյն գրած  
ճառի մէջ Քռթենաւորն երևում է «հայկական լեզուի հմտու-  
«թեամբն ալ ոչ աննշան, իրեն յատուկ ոճովն և բացատրու-  
«թեամբ, մանաւանդ եթէ յունարանութիւնը յանախ չըլլայ-  
«ին, և իմաստից և բառից խրթնութիւնը և բարբուսութիւնը,  
«որոնցով ոճոյ պարզութիւն և զրուցուածքի յստակութիւն  
«փնտռողաց համար կը պակսեցնէ իր գրուածոց յարգը»: Ըն-  
«թերցողներին ենք թողնում դատել, թէ այլ ևս հաչ լեզուի  
«ոչ աննշան» (թողնենք «նշանաւոր») հմտութիւն կարելի՞ է  
ընծայել մի հեղինակի, որի գրուածի մէջ ոճի պարզութիւն  
և հայերէն յստակ խօսելու կարողութիւնը չկայ, կան միայն  
յունարանութիւններ, իմաստի և բառերի խրթնութիւններ  
և լեզուին խորթ, օտար բարբուսութիւններ: Սակայն, ինչպէս  
երևում է, այդ ճառի լեզուն դեռ տանելի հայկարանութիւն  
պիտի համարել, քանի որ վերոյիշեալ «թերութիւնքն առա-  
ւելպէս կ'երևան» միւս «երկասիրութեանց», այսինքն վե-  
րոյիշեալ երկու ճառերի մէջ:

Վերոգրեալների հիման վերայ դալիս ենք հետեւեալ եղրա-  
կացութեան: Թէ Յովհան Օձնեցին որի՞ մօտ և ո՞րտեղ է ուսել  
արտաքին գիտութիւններ՝ յայտնի չէ. յայտնի երևում է մի-  
այն այն, որ նա ուսումն աւարտելուց չետոյ է մտել վանք՝  
ս. Գրբի գիտութեան և վանական կեանքի կանոնների մէջ  
վարժուելու համար, որպէս զի կուսակրօն քահանայ ձեռնա-  
գրութիւն ալ վանքն ոչ թէ Սրադածի ստորոտում կառուցուածն  
է եղել, այլ Սիւնեաց նահանգի Սոթք զաւառի վանքերից մէկը:

Օձնեցուն եկեղեցական զիտելիքների, թերևս և հայերէն  
լեզուի մէջ վարժեցնող կրօնաւորն, որ չիշեալ վանքի վանա-  
հայրն է եղել, կարող էր կոչուել, կամ՝ շատ կարելի է իս-  
կապէս կոչուել է Թէոփորոս, բայց ոչ Քռթենաւոր: Թէոփո-  
րոս անունով կարող էր լինել և մի ուրիշ կրօնաւոր, լինի  
նա Եզրի քննորդին թէ մի այլ ոք. իսկ հայկական և հելլե-  
նական գիտութիւններով նշանաւոր և է. դարում սպրած  
Թէոփորոս Քռթենաւորի զոյութիւնը հնարուած է, քանի որ  
ոչ նախնեաց վստահելի վկայութիւնը կայ նորա մասին, և  
ոչ այնպիսի մի գրուածք, որ արդարացնէր նորա ուսելու-  
թեան համբաւն: Այդ անունով և այդպիսի արժանիքի շու-  
քով զարգարուածը կեղծ անձնաւորութիւն է, հանդէս բե-  
րուած պարզ նշմարուող նպատակով, որը կտեսնենք առա-  
ջիկայում:

Եօթներորդ դարում իրանց ուսման և վարդապետական  
խորին հմտութեան շնորհիւ ազգի մէջ մեծ յարգ և համբաւ  
էին վայելում երկու եկեղեցականներ, Մաթուսաղա և Յով-  
հան: Առաջինը Սիւնեաց երկրի արքեպիսկոպոսական աթոռի  
տեղապահ և վարժարանի ուսուցիչ. երկրորդը՝ Գուին քաղա-  
քի կաթողիկոսական եկեղեցու փակակալ կամ յուսարարա-  
պետ: Երկուսն էլ յայտնի էին իբրև ազգային եկեղեցու վար-  
դապետական սկզբունքների և ձէսերի նախանձանդիր և  
պաշտպան. և այդ կողմից այնքան վստահութիւն էին վայե-  
լում, որ երբ Եզր կաթողիկոսը չերակլ կայսրից հրաւեր ստա-  
ցաւ կարին զնալու և մասնակցելու կրօնական խտրութիւն-  
ների մասին դումարելի ժողովին, Թէոփորոս Ռշաունի մարդ-  
պանն և միւս նախարարները խորհուրդ տուին նորան  
ընտրել և հետը տանել ազգի բանիրուն եկեղեցականներին.  
մանաւանդ, ասում են նորանք, առանց Մաթուսաղայի և  
Յովհանի աեղիցդ չշարժես. «Խորհուրդ արարեալ սպա իշ-  
«խանին Թէոփորոսի Ռշաունուոյ այլովք նախարարօք չայոց  
«ընդ կաթողիկոսին Եզրի՝ ասէն, մեք երթամք փութա-  
«նակի ի ծառայութիւն արքայի, դու ընտրեա զգիտունս  
«ազգիս և եպիսկոպոսօք չայոց և՛կ ի ժողովն. բայց մի՛ լիցի՛

«քեզ շարժիլ ի տեղույս առանց Մաթուսաղայի Սիւնեցույ  
«և Յովհաննու Մայրադոմեցույ. մի՛ դուցէ փլուցանէ չարն  
«զգեղեցիկ շինուած հաւատոյ մերոյ»: \*)

Սակաչն Եղբր զիտէր, թէ ինչի համար է գնում ժողով,  
և Յովհան վարդապետին չառաջարկեց հետը գնալ: Մաթու-  
սաղային հրաւիրեց թէ և երկու անգամ, բայց նա չանձն չա-  
ռաւ գնալ, սուաչին անգամ պատճառ բռնելով՝ թէ իւր հե-  
ռանալով վարժարանը կարող է խափանուել. իսկ երկրորդ  
անգամ՝ տկարութիւնը. միայն զրեց մի վաւանաբանական  
թուղթ և յանձնեց իւր աշակերտ Թէոփորոսին, որ անձամբ  
յանձնի կաթողիկոսին, որին և ուղղեց հետևեալ խօսքերը.  
«Դուք ինքնին գիտուն էք և բնդ ձեզ ունիք զվարդապետդ  
«Յովհան, և այլ գիտունք և հարտարք չոլով կան առ ձեզ.  
«և ի մեզնէ առաքեցաւ մեր աշակերտդ Թէոփորոս, այդ բա-  
«ւականասցի»: Այս խօսքերից երևում է, որ Մաթուսաղան  
չէր հաւատում կաթողիկոսի անկեղծութեանն և հրաւերն  
համարում էր լոկ ձևականութիւն, քանի որ իրան յայտնի  
պիտի լինէր, թէ Յովհանի նման նշանաւոր եկեղեցականն և  
ուրիշ լրջամիտ անձինք անտես են անում, չեն կոչուած ու-  
ղեկցելու հայրապետին: Շատ կարելի է, որ Թէոփորոս վար-  
դապետի համար էլ կաթողիկոսի կողմից հրաւիրակներն բե-  
րանով ցանկութիւն յայտնուած լինէր Մաթուսաղային՝ իւր  
չգալու գէպքում նորան ուղարկել. սպա թէ ոչ ինքն հրա-  
ւիրուած լինելով անձամբ գնալու՝ ի՞նչ իրաւունքով իւր փո-  
խարէն աշակերտին էր ուղարկելու մի այնպիսի ժողով, որտեղ  
փոքրիկ սխալմունքն էլ լուրջ հետևանքներ էր ունենալու. և ի՞նչ-  
պէս թող կտար իրան ապագայի պատասխանատուութիւնն առ-  
նել իւր վերայ, զրելով թէ, աշակերտիս ուղարկեցի, նա բաւա-  
կան է: Երբոր կաթողիկոսն իւր հետն ունեցած մարդկանց հետ  
միասին համակերպելու յօժարութիւնն արդէն յայտնել էր կայս-  
րին, բայց միանգամ ևս կամենում էր հաւատասցնել Թէո-  
փորոս Ռշտունուն և միւս իշխաններին թէ շատ շիւարած է

\*) Ստ. Օրբելեան. Պատմ. Մոսկ. 1861. 83:

և չգիտէ ի՞նչ պատասխանել, ասպետ իշխանը սաստիկ զայ-  
րացած ասում է նորան. «Ոչ ասացի քեզ, և թէ առանց Մա-  
«թուսաղայի և Յովհաննու մի՛ դար ի ժողովս. ահա քո  
«ապիտուութեամբ կորուսեր զձեզ». իսկ նա պատասխանում է.  
«Մաթուսաղայ ոչ եկն, և Յովհան զեկեղեցին և զկաթողի-  
«կոսարանն ոչ կամեցաւ թողուլ. և ամենքեան ասացին  
«մինչ Մաթուսաղայի աշակերտն ի հետ է, ոչ է կարիք ձեզ  
«որ՝ դա բաւական է»:\*) Իսկ թէ Մաթուսաղայի աշակերտն  
ինչպէս «բաւական» եղաւ ուրիշների փոխարէն՝ երևում է  
նորանից, որ երբ ասպետն ու իշխանները կաթողիկոսի հետ  
էին խօսում և նորան էին յանդիմանում, Թէոփորոսն է մէջ  
ձանում և ասում. «Ընդէ՛ր վիճիք և տրտմեալ էք. ոչ գոչ ի  
«նոսա թիւրութիւն ինչ վասն հաւատոյ՝ մի եմք մեր և նո-  
«քա. նոքա բուն արմատք են, և մեր ոստ մի՛ ի նոցանէ  
«բուսեալ և առեալ դիւաւատս և զամենայն կարգս քրիստո-  
«նէութեան. ոչ է պարտ ապստամբիլ ի նոցանէ և խղիլ յար-  
«մատոյն մեր. այլ մեր կրասերազոյնքս հնազանդիմք երիցա-  
«գոյն հրամանաց նոցին՝ և լիցի մի հօս և մի հովիւ»:

Կարինի ժողովից յետոյ Մաթուսաղան և լուսարարա-  
պետ Յովհանը բողոքաւոր են հանդիստնում Եղբր զէմ: Մա-  
թուսաղան դալիս է Դուին յատկապէս տժգոհութիւն յայտ-  
նելու կաթողիկոսին, բայց շուտով մեղմանում և լուծւում է:  
Օրբելեանի ասելով՝ Եղբր Դուին վերադառնալով՝ ժողով է  
կազմում, որպէս զի բնդունած վարդապետական և ծիսական  
փոփոխութիւնները ժողովական վճռով հաստատի և գործադ-  
րել տայ: Մաթուսաղան եկաւ այդ տեղ և «չոյժ տրտմեցաւ  
ընդ եղեալսն. բայց ի ժամուն ափիբերան եղև», իբրև թէ  
նորա համար, «զի չիւր աշակերտէն էր բուսեալ չարն». սա-  
կաչն ճիշտն այն է, ինչ որ պատմիչը յետագայ տողերումն է  
ասել. այսինքն՝ որ կաթողիկոսն և նորա մարդիկը կարողա-  
ցել են թէ՛ խնդրելով և թէ՛ Սիւնեաց արքեպիսկոպոսու-  
թիւնը խոստանալով այնքանն անել, որ նա միմիայն յայտնի

\*) Ստ. Օրբ. Պատմ. Միւնեաց. 85:

բողոքաւոր չլինի. իսկ իրանից և իւր թեմից չի պահանջուի նորամուծութիւնների ընդունելութիւնն. և նա համաձայնել է վերջին պայմանով. «Իսկ ժողովոյն և Եզրի բազում ողոր-  
«քանօք պատրեալ զմիտս նորա՝ ածին ի հաւանութիւն ձեռ-  
«նադրիլ եպիսկոպոս Սիւնեաց, և արարին իսկ. և մեծաւ  
«պատուով արձակեցին յաթոռն իւր և ի վիճակ. որոյ եկեալ  
«ամենայն շանիւ զզուշացոյց զվիճակն իւր ոչ խմորիլ ի կրօնն  
«Քաղկեդոնի, այլ զաւանդեալն ի սուրբ հարց ուղղափառ  
«հաւատն պինդ ունիլ» (եր. 86):

Միանգամայն այլ կերպ է վարուած Յովհան վարդապետը: Յովհաննէս կաթողիկոսը զրոււմ է, թէ երբօր Եզրը Կարինից վերադարձաւ՝ Դուին մտնելու միջոցին եկեղեցական դասն ըստ սովորականին հանդիսով ընդառաջեց նորան: «Փիլիսոփոսն Յովհան» միւսների հետ չէ գնում «լնուլ զսակ հարկին»: Նորա բացակայութիւնը նկատելով՝ կաթողիկոսն հարցնում է, թէ նա ինչո՞ւ չէ երևում: Լսողներն հաղորդում են Յովհանին և մեղադրում չընդառաջելուն համար. իսկ նա պատասխանում է. «Զիմրդ պարտ վարկանիմ յողջոյն կամ չեր-  
«կրպագութիւն նմա երթալ, որ բակեացն իսկ զսահման կա-  
«նոնի հարցն մերոց ուղղափառաց»: Այնուհետև նա բռնութեամբ տարոււմ է կաթողիկոսի մօտ և նորա երեսին էլ նախտական ծանր խօսքեր ասելու պատճառով պատժոււմ և արքայութեան է Բշնի ամրոցի մօտիկ Մալրոյ վանքը. բայց Եզր չետոյ մտածելով՝ թէ զօրեղ հակառակորդի մերձաբնակութիւնը վնասակար կարող է լինել, ենթադրելով զուցէ, թէ Դուին ելեմուտ ունեցող եկեղեցականներին և ժողովրդականներին զրգուել կարող է և իւր դէմ շարուցանել՝ արքայութեան է նորան Աղուանից Գարդման դաւառն. և նորա ժամանակաւոր բնակած սրբավայրը «գոմ» է անուանում: Արքայականին այդ սրբավայրի անունով սկսել էին կոչել Մալրավանեցի. Եզրը պատուիրեց կոչել Մալրագոմեցի: Սակայն անարգանքն և արքային էլ չընկճեցին Յովհանին. և նա մինչև իւր մահն էլ մնաց պարսաւադիր՝ փոփոխութեան հեղինակներին. որով զրաւելով ազգի համակրութիւնը՝ միւսնոյն ժամանակ շարու-

ցեց իւր դէմ նորամուծութիւնների ժամանակակից և չետապայ կուսակիցների բուռն ատելութիւնը: Զգացմունքների այդ երկու տեսակն էլ ամենից չառաջ արտայայտուել են նորա կրկին մահանուններով: Մալրավանեցի կոչումով ճանաչուել է եկեղեցու անձնուէր և յարգելի հայրերից մէկը, որի անունն ապառաջ սերունդների երախտազէտ հիացմունքն երբեմնակի սուրբ վերադրով է պատուել. այն ինչ Մալրագոմեցի մահվիրը գործածուել է անարգ, աննշան և ատելի բառերի իմաստով: 70)

Մալրավանեցու արքայական օրերում անցուցած գործունէութեան մասին հաստատուն և բաւարար տեղեկութիւն չունենք. Յովհաննէս կաթողիկոսը միայն այսքանն է ասում, թէ նա իրան նուիրած է եղել կրօնաւորական կեանքի խօտակեցութեան, և աշակերտներ է ունեցել, որոնցից մէկին՝ Սարգրսին, նկատելով խմորուած հերձուածական ուսմունքով՝ արտաքսել է իւր մօտից. իսկ թէ ի՞նչ է եղել այդ հերձուածը՝ չէ ասում: Ասողիկն էլ միայն այսքանն է կրկնում, զարձեալ չբացայայտելով հերձուածի տեսակը: Այսքանն է ահա Թ.—Ժ. դարերի երկու պատմիչներից մեզ հասած տեղեկութիւնը. մինչև անգամ այդ երկուսն այն էլ չեն ասում, թէ Մալրավանեցին որևէ զրաւոր վաստակ ունեցել է թէ ոչ. մինչդեռ միւս կողմից զանում ենք բոլորովին հակառակ տեղեկութիւն. — Մալրագոմեցին աղանդամիտ է եղել. Մալրագոմեցին աղանդամիտ զրբեր է գրել:

Շատ հասկանալի է, որ Մալրավանեցու մահից չետոյ՝ նորա չիշատակը նսեմացնելու համար շանքեր կլինէին աննպաստ համբաւներ տարածելու. բայց թէ սկզբում և թէ բաւական չետոյ ևս նորան իբրև մոլորամիտ զրբերի հեղինակ ևս ներկայացնելու միտքը դեռ ծագած չէ եղել: 71) Յովհաննէս կաթողիկոսի խօսքերից երևում է, որ նորա ժամանակում քիչ ու շատ մտքեր պղտորելու զրոյցների առարկան Մալրավանեցու նկատմամբ այն է եղել, թէ նա դառն հերձուած է մտքրել եկեղեցու մէջ. իսկ եթէ եղել է մոլորամիտ զրուած՝ նորա հեղինակ ճանաչուած և ընդունուած է եղել

ոչ ինքը Յովհանն, այլ նորա արտաբոլած աշակերտ Սարգիսն, և պատմաբանն ինքն էլ կարգացել է այդ գիրքը. «Չսմանէ (Յովհաննից) ապա համբաւ ամբաստանութեան պատմի, «իբր դառն հերձուածս իմն մուծածել չեկեղեցի սուրբ. սա- «կայն ես ոչ կարեմ հաւանութիւն իմոց կարծեացս տալ վասն «աջնպիսելոյ առնն, թէ գիտորդ նա կարէր խորհիլ առ ի փլու- «ցանել զուղիղ հաւատոյ շինուածս: Այլ կարծիս իմն ընդու- «նի սիրա իմ ի հակառակապիւր և յոխորիմաց այլոց կամաց «այս գործ համբաւոյ լեալ: Բայց եթէ սակս Սարգսի աշա- «կերտի նորա համբաւէ որ գայնպիսի չար հերձուածս ըն- «ծիւղեալ՝ և ես ոչ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ըն- «թերցեալ է զիր վնասու նորա: Այլ վասն զի Յովհանն ի բաց «չիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաբոլ կա- «մաց նորա ասեմ զնորայն հերձուած» (եր. 46):

ԺԲ. դարուսն էլ Սամուէլ Անեցին է չիշուծ Մայրավա- նեցու աշակերտ Սարգսի աղանդը, զարծեալ առանց տեսակը յայանելու, և միևնոյն ժամանակ ուսուցչին բոլորովին ազատ համարելով որևէ կասկածից. «Ո՞՞՞: Յայանեցաւ աղանդ յա- «շակերտաց Յովհաննու Մայրազոմեցուց. որոց Սարգիս ասէին. «զոր մի որ իշխեսցէ զսուրբ այրն բամբասել»: Առաջին ան- «գամ ԺԳ. դարում Վարդան վարդապետն է թէ Մայրավա- նեցու գրած գրքեր չիշատակում, և թէ՛ նորա աշակերտի մո- լորութիւնը Սարէլականութիւն անուանում. «Սա (Յովհանն) «գրեաց երիս գիրս, զանուն իւր չգնելով ի նոսա. զմինն կո- «չեաց Խրատավարք, զմինն հաւատարմատ, և զմինն նոյնմակ, «էր սորա աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍարէլին ախ- «տանայր, զոր հալածեալ մերժեաց չինքենէ» (եր. 62):

Յ. Մ. Չամչեանն Ասողիկի համար էլ գրում է, թէ չի- շել է «Մայրազոմեցու» գրքեր գրած լինելն և մտանանիշ է անում պատմագրի Բ. Հանդէսի 2. դիւի վրայ. «Գրեն աս- «տանօր Ստեփաննոս Ասողիկն և Վարդան, թէ այս Յովհանն «Մայրազոմեցի արարեալ իցէ զերիս գիրս... Իսկ թէ ընդէ՞ր «ոչ իցէ եղեալ զանուն իւր, յայտ է պատճառն՝ զի մի մեր- «ժեցի ի հայոց, ըստորում զրէ Ասողիկ. Բ. 2. «զանունն իւր

«ոչ վերագրեաց ի նոսա վասն չընդունելոյ ժողովրդեանն»: \*)  
 Յ. Չարբանալեանն ևս Ասողիկին Վարդանի հետ միասին վկայ է բերում. «Երեք գրուածք այ շարագրեց կ'ըսեն Ասողիկ և «Վարդան պատմիչները. բայց որովհետև զանազան մոլորա- «կան վարդապետութիւններ կը բովանդակէին այն գրքերը, «չը համարձակեցաւ Յովհանն իր անուամբն հրատարակել, այլ «անձանօթ անուններ զրաւ վրանին... բայց ազգը չընդունե- «ցաւ այս գրուածները, և անհետ ըրաւ»: \*)

Հարկ ենք համարում յայտնել, թէ Ասողիկի Պատմու- թեան երկրորդ տպագրութիւնն, որ կատարուել է Պետեր- բուրգում 1885 թուին՝ առաջին տպագրածի և մի քանի ձե- ուղիւրների հետ բաղդատուելուց յետոյ, չունի որևէ չիշատա- կութիւն Յովհ. Մայրավանեցու գրած գրքերի մասին. հետե- ւաբար՝ հ. Չամչեանի ի նկատի ունեցած ձեռագրի խօսքերն անհարազատ ընդմիջարկութիւն լինելու պարզ ապացոյցն են տալիս միայն: Այս հասկանալի է և նորանից, որ Ասո- ղիկն ինքն էլ մէկն է այն պատմիչներից, որոնք բոլորովին մերժում են Մայրավանեցու մասին տարածուած «համբաւը», թէ իբր նա «հերձուած է մուծել չեկեղեցի», և պնդում են, թէ հերձուածով խմորուածը նորա աշակերտն է եղել, որին և «հալածեաց Յովհանն չիւրմէ», ուրեմն այսպէս վկայող հե- ղինակը չէր կարող ասել, թէ նա գրքերի վերայ չլրեց իւր անունը «վասն չընդունելոյ ժողովրդեանն»:

Այսպիսով ուրեմն՝ Մայրավանեցու գրած գրքեր առաջին անգամ չիշատակող մնում է Վարդանն. իսկ այդ էլ զեռ հարց է.—արդեօք պատմիչն ինքն է տարածուած «համբաւ- ներին» ենթարկուած Մայրավանեցու գրած գրքեր չիշում, թէ՞ այդքանն էլ նորա Պատմութեան մէջ տեղի գտած մի քանի անհարազատ յաւելումներից մէկն է միայն: Որն էլ և լինի՝ հաղիւ թէ այդ գրքերի բովանդակութիւնը Վարդանին կամ մի ուրիշին յայանի եղած լինի, և հաւանօրէն՝ հայ մա-

\*) Պատմ. Բ. 331—332.

\*\*) Պատմ. Դպր. 429—430.

տենագրութիւնն այգպիսի զրբերի երես չէ տեսել. զորանց միայն անուններն են յօրինուել և մէջ տեղ զրուել, որպէս զի ասէն և հաւատացնեն, թէ «Մայրագոմեցին» զրել է մոլորամիտ զրբեր. զորա ապացոյցն այն տարբեր կարծիքներն են, որ լսել են մինչև այժմ «Մայրագոմեցու» ունեցած կամ քարոզած մոլորութեան մասին. ոչ որ որոշ մի բան ասել չէ կարողանում թէ ո՞րն է եղել նորա հերձուածը. մէկը ենթադրաբար մի աղանդ է անուանել, միւսը մի ուրիշ: 72) Այգ բոլորը արդիւնքն են հնարուած զրպարտութիւնների, որոնց ոչ տալու համար տարածել են նաև, թէ է. դարում ապրած Գրիգորատուր անունով մի վարդապետ կռուել է Մայրագոմեցու և նորա մոլորութեան դէմ. որի մասին իբր թէ վկայել է, հ. Զամչեանի ունեցած տեղեկութեան համաձայն՝ Դաւիթ վանահայր, որ ապրել է Թ. դարում. և որին վերադրուած է մի ճառ «Պահոց», այսպիսի վերնադիւով. «Հարցմունք երկուց փիլիսոփայից», մինչդեռ հ. Զարբանայեանի ասելով՝ Թ. դարի պատմիչ Շապուհ Բաղրատունին պիտի լինի Գրիգորատուրի կռուի մասին վկայողն. բայ որում «վերջինիս «չրուածոց մասն կը համարուի (անշուշտ ի ճառէն պահոց) «հետեւեալ հատուածը՝ որոյ կը հանդիպինք ի զրչաղիքս (Մատ. Երուս. 999). «Այր ոմն, անուն Գրիգորատուր, ի դաւառէ «Արձախից ծորոց, այլ ուղղափառ հաւատովք և զօրութեամբ «արուեստիւք... զՅովհաննու Մայրագոմեցու զաղանդն խա- «փանեաց»: \*)

Այս տեղ էլ միւսնոյն բանն է կրկնուած, ինչ որ տեսանք և ուրիշ տեղերում.—պատմութիւնը չէ, որ խօսուած է, այլ ձառքնաբրի մի անկիւնում լռելեայն Շապուհի անունով գետեղած մի ճառ: Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին, որ այնքան օգտուել է Շապուհ Բաղրատունու զրուածրից, թէ իբրև պատմաբան և թէ իբրև եկեղեցու հայրապետ վկայում է, թէ Մայրավանեցու մասին տարածուած լուրերն, որ իբր թէ հերձուած է մուծել եկեղեցում, ոչ այլ ինչ է, բայց թէ զրպարտութիւն:

\*) Պատմ. Դպր. 429:

Այսքանով գեռ չեն վերջանում Մայրավանեցուն անուանարկելու և անարդելու նպատակին ուղղած շանքերը: Մի «անձանօթ» պատմութիւն ևս գալիս է վկայելու, թէ երբ որ Եզրի մահից չեաոյ Մայրագոմեցին սկսաւ գլուխ բարձրացնել, Ներսէս կաթողիկոսը (Շինոյ) «կոչեալ զնա ի ժողով «եպիսկոպոսաց և նախարարաց՝ առաջի Թէոփորոսի Ռշաու- «նեաց տեառն՝ արար քննութիւն ի վերայ նորա. և զիտեալ «ամենեցուն զնա անբժշկելի յախտէ հերձուածոյն՝ դատապար- «տեցին և աղուէսալորոշմ եղեալ ի հակատն՝ հալածական ա- «րարին ի լերինս Կովկասու» (Զամչ. Բ. 543): Այս միւսնոյն զրոյցը յառաջ է բերուած և Յունաց Փոտ պատրիարքի անունից յօրինուած նամակի մէջ, որ իբր թէ գրուած է Զաքարիա կաթողիկոսին և մուծուած է Վարդանի Պատմութեան մէջ. «Արար և Հերակլ եօթներորդ ժողով, ասում է «կեղծ-Փոտն. իսկ Մայրավանեցին Յոհան ոչ ընկալաւ. զոր «Թէոփոս Ռշաունի և Ներսէս հալածեցին ի Կովկաս. և յետոյ «եկն ի Հայս և արար զոր ինչ կամեցաւն»: Այլ նամակի մասին խօսելու ենք յետոյ:

Մի ուրիշ «համբաւ» էլ Մայրավանեցու մասին յօրինուել է ուրիշ նպատակով. և այդ էլ լսել՝ ու հերքելու արժանի է համարել Ստեփ. եպ. Օրբելեանն. «Ոմանք զրպատեն «զսուրբ հայրն Յովհան մայրագոմեցի եթէ նա ասաց եթէ Հայք «պարտաւորեցան (երևի Յոյների հետ Քաղկեդոնի ժողովի ա- «ռիթով է), որ և քաւ և մի լիցի» (Պատմ. 144):

Յովհան Մայրավանեցու մասին եղած պատմական և ոչպատմական տեղեկութիւնների վերայ համառօտ ակնարկ ծրգելը կարևոր գտանք միայն նորա համար, որ պարզած լինենք մեր ասածը, թէ որպիսի հանգամանքների շնորհիւ հանդէս է բերուած Թէոփորոս Բռթնաւորը:

Կրկնում ենք վարձեալ, որ է. դարում ապրած այգպիսի Հայ կրօնաւոր, հաշկական և հելլենական զիտութիւններով «նշանաւոր» մէկը զոյութիւն չէ ունեցել: Հարկաւոր է եղել այգպիսի «հեղինակաւոր» անձնաւորութիւն ստեղծել մի կողմից Յովհան «Մայրագոմեցու» դէմ հակառակորդ և նորա

մորորութիւնը հերքող դուրս բերելու, միւս կողմից Յովհան Իմաստասէրի նման մեծ և անուանի հայրապետին անուանի ուսուցիչ կարգելու համար. որպէս զի ուսուցչի «ուղղափառութեան» համբաւի շնորհիւ կարելի լինի աշակերտի գրուածները մէջ «ուղղափառական» փոփոխութիւններ և շաւելուածներ անել առանց կասկած չարույանելու. և իբրև իսկական Օձնեցունն ազգին ընդունել տայ: Ուսուցչի և աշակերտի մէջ դադափարական համանմանութիւն պատրաստելուց յառաջ կամ միաժամանակ հարկաւոր է եղել նորանց երկուսի վարած կրօնաւորական խստակեաց կեանքի մէջ ևս համանմանութիւն ցոյց տայ: Օձնեցի հայրապետի համար տիրող համոզումն այն է եղել, թէ նա փառահեղ և թանկացի հազուստի ներքև ճգնաւորական խոշոր խարաղն էր կրում մերկ մարմնի վերայ. ուստի և նորա ուսուցչի տիպը լինելու ամենամեծ չարմարութիւնը ներկայացրել է յունական և հռոմէական եկեղեցիներում չիշատակուող «երևելի ճգնաւոր» Թէոդորոսն, որ խարաղեղէն հազուստի համար ստացել է Թոբիթինաս մականունը: Հ. Չամչեանը շատ իրաւացի է նկատել, թէ Քռթենաւոր խօսքը «թերևս պարտ էր ասել Թռքենաւոր՝ ի յունական բառէս թռիքինաս, այսինքն խարաղնազգեաց»: Թռքենաւորն հայերէնում շատ շուտով բռթենաւորի կարող էր փոխուել:

Յովհան Իմաստասէրի անունով 1833 թ. Վենետիկի Մխիթարեան տպարանից լոյս են տեսել 12 զրուածներ. վերջին երեքն իբրև «երկրայականք». այսինքն այնպիսիներ, որոնց հեղինակը չաչանի չէ թէև, բայց դարձեալ հրատարակիչները նորանց ոճն ու դարձուածներն ի նկատի առնելով՝ հաւանել են Օձնեցունը համարել, ինչպէս ստում է հետևեալ ծանուցումը. «Ձայտոսիկ կրկին ճառս ի միում ուրբ ի հնա-«զիր մատենից զտաք առանց անուան մատենագրի. այլ պէպք «բանիցն և դարձուածք ոչ օտարք ի բանից Յովհաննու Ի-«մաստասիրիս, նորին զոլ հաւանեցուցին մեզ. և ահա իբրև «երկրայականս շաւելար զինի այլոց մատենագրութեանց նո-«րին հայրապետի, մինչև ժամանակն բաղմիմաստ ստուղա-

«զոյնս ինչ ուսուցէ»: Մնում են ութը ճառեր, որոնց հարադատութեան մասին մինչև այսօր կասկած չէ չաչանուել, և սորանք են. 1. Ատենաբանութիւն կանոններով միասին. 2. Ընդդէմ Պաւղիկեանց. 3. Ընդդէմ Երևութականաց. 4. Յաղագս կարգաց եկեղեցուց. 5. Դարձեալ չաղագս կարգաց եկեղեցուց. 6. Վասն մեծի աւուր միաշարթին. 7. Սակս զիշերային ժամու. 8. Յիշատակարան: Նոյն հայրապետի անունը կրող երկու զրուածք էլ գտնում ենք «Դիրք Թղթոց» ի մէջ. մէկի վերնագիրն է. «Յովհաննու Իմաստասիրի հայոց Կաթուղիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի հայք». իսկ միւսինը. «Նորին Տեառն Յովհաննու հայոց Կաթուղիկոսի ընդդէմ այնոցիկ որ ապականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոց և և ջրոց»:

Աշխատութեանս ծրագրից դուրս համարելով վերոգրեալ բոլոր զրուածների մասին խօսելը՝ պիտի կանգ առնենք միայն երեքի վերայ:

Եթէ աներկբապէս կարելի է ընդունել թէ հարադատաբար մեզ հասել են Իմաստասէր հայրապետի եոխացրած և բացաչայտած եկեղեցական պաշտամունքների գրաւոր «կարգաւորութիւններն» որոնց մասին խօսում է Դրասխանակերացին, այդպիսիներ պէտք է համարել միմիայն վերոկարգեալ ցանկի 4, 5, 6 և 7 թուահամարների ներքոյ նշանակուածներն, որոնց յստակ հայերէն լեզուն և պարզ ու ընտիր բացատրութեան ոճն արդարև պատշաճում են Իմաստասէրի վայելած հաչաղիտութեան համբաւին. մինչդեռ նախընթաց երեք ճառերն աչքի են ընկնում ներհակարար: Դորանցից առաջինն—Ատենաբանութիւնն անհարադատ չէ, այլ միայն աղ-ճատուած և օտար շաւելուածներ ընդունած. իսկ միւս երկուսն—Ընդդէմ Պաւղիկեանց և Ընդդէմ Երևութականաց՝ ամբողջովին կեղծիքներ են:

Իմաստասէրի Ատենաբանութիւնն, որ գրաւում է 33 երես, բաղկացած է 18 յօդուածներից, որոնցում խօսւում է հետևեալ նիւթերի վերայ. 1, «Յառաջին կենցաղն իւր և ի զայն յաթոռ հայրապետութեան», 2, «Զկրօնից և զկարգեալ

պաշտամանց».  
 3, «Վասն ս. մեռոնին և այլ իւրոցն».  
 4. «Վասն հանդերձելոցն զայ ի մկրտութիւն».  
 5. «Վասն զսլսակն չեկեղեցւոչ տալ».  
 6, «Վասն շաբաթու և կիւրակի Քառասնորդացն».  
 7. «Կիւրակէի աւուր ցաչդապաշտոն (հրսկուծն) առնել».  
 8, «Առաւօտին պաշտաման».  
 9, «Յաղագս երեկորին պաշտաման».  
 10. «Կանոնք» (32 յօդուածներ):

Թէ ատենաբանութիւն վերնադիրն, որ տրուած է նառին, և թէ նորանուծ ամփոփուած կանոնական որոշումներն ակներև ցոյց են տալիս, որ Օձնեցին ժողովի հետ է խօսել, և եկեղեցական բարեկարգութիւնները ժողովով է սահմանել. իսկ թէ ե՞րբ և ո՞րտեղ է գումարուել այդ ժողովը — զեռ վերջվերջնաբար որոշուած է: Ն. Մ. Չամչեանի խօսքերին նախած ժողովը գումարուել է Դուին քաղաքում 719 թուին. բայց այդ մասին նորա ունեցած աղբիւրը մեզ անչափ մի «Յիշատակարան» է, որին վստահութիւն ընծայել է կարելի, քանի որ Յովհան Իմաստասէր հայրապետի վերայ խօսող հեղինակներից Յովհաննէս կաթողիկոս պատմաբանն ամենեւին չէ չիշուծ նորա օրով կազմուած որևէ ժողով. իսկ չետադաները թէև վկայուծ են, որ նա ժողով է գումարել, բայց դորանք լոյս տեսնել ժողովի տեղը զնուծ են Մանաղկերտն և ոչ Դուինն.— Ասողիկ, Սամուէլ Անեցի, Կիրակոս, Վարդան, Մխիթար Այրիվանեցի, Գրիգոր Տաթևացի և այլն: Մ. Այրիվանեցին Մանաղկերտի ժողովի գումարման տարին էլ զնուծ է 719 թուականն, ինչ որ Չամչեանը Դուինի ժողովի տարի է անուանուծ:

Անցնենք Ատենաբանութեան այն յօդուածներին, որոնցում աղետատուծն և անհարազատութիւն ենք նկատուծ:

Ատենաբանող հայրապետն իւր «առաջին կենցաղի» և ստանձնած պարտաւորութեան մասին խօսելուց չետոյ մի փոքր նախարանով, որ բ. յօդուածն է, ներկայացնուծ է մի շատ ախուր պատկեր.— ժամանակակից եկեղեցականների և աշխարհականների կեանքի մէջ մուտք դտած այն անկարգութիւններն և վնասակար սովորութիւններն, որոնց բարձման կարևորութիւնը ստիպել է իրան ժողով գումարել. «Քանզի

«տեսանեմ, ասուծ է նա, ի յոլովադոյն և ի ծանր իրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն ի ժողովրդականս, այլ «առաւել յուխտի մանկուծնս, և յառաջնորդս եկեղեցեաց: Որք «մին լեզու՝ ի ծեռն միոյ քարողի ի մի ելաք ճշմարտութեան «ճանապարհ, և արդ բազմահետք և բազմաշաւիղք եղաք «յանչափաբար և զանազան և այլաձևսն առնելոյ՝ թէ զվարս «և եթէ զփառաբանութիւնսն առ աստուած: Մինչ զրեթէ «զնոյն կրել զվնասս քստ հնոյ պատմութեանն՝ պատեւազմել «մեղ այք ընդ եղբօր, և այք ընդ ընկերի, քաղաք ընդ քաղաքի և օրէնք ընդ օրէնս: Երկրական զբօսանօքն և վաճառացն տուրևառութեամբք խօսակիցք և հաշուակիցք իրերաց «լինելով, և առ խաղաղութեանն աստուած ժողովեալք՝ զխաղաղութիւնն խնդրել խուճապիմք և խռովիմք: Եւ իբրև «այլազգիք և այլաչեղուք՝ տանիմք և բերեմք զմիմեանս, լի «նելով սա նմա խուժ, և այլք այլոց դուժ»:

Եկեղեցու մեծանուն հայրապետի բերանից և եկեղեցական պատկառելի ժողովի մէջ արտասանուած այս խօսքերն ընթերցող ամեն մի հարկաւ իրաւունք ունի լարուած ուշադրութեամբ սպասելու, որ լսի թէ՛ որո՞նք են եղել արդեօք այն ժամանակի «յոլովադոյն և ծանր» բաներում նկատուած անկարգութիւններն, որոնցում միակերպ մեղադրուծ են և եկեղեցականներն և ժողովրդականները. թէ՛ ո՞րպիսի ցաւալի հանդամանքների պատճառով մի մայրենի լեզուով խօսող և մի վարդապետի միջոցով քրիստոնէական կրօնի ճշմարտութեան ճանապարհը սովորած հայերն Ութերորդ գարուծ սկսած են եղել միմեանցից տարբեր շաւիղներով ընթանալ, տարբեր ձևեր և սովորութիւններ ընդունել թէ իրանց նիստ ու կացի և թէ աստուածպաշտական կարգերի մէջ. թէ՛ ո՞րպիսի լուրջ պատճառի շնորհը պիտի հասած լինի հայերին, որ նորանք կորցրած առ միմեանս սէրն և խաղաղութիւնը՝ դարձել են եղբայրն եղբօր, ընկերն ընկերի և քաղաքը քաղաքի հետ կռուող թշնամիներ. կամ թէ՛ ի՞նչ են նշանակուծ այս խօսքերն—առևտրական և այլ դորձերուծ դարձեալ միմեանց հետ ասել, խօսել, հաշիւներ տալ և առնել,

իսկ խաղաղութեան Աստուծու մօտ ժողովուած միջոցին խաղաղութիւն խնդրելուց խոյս տալով՝ միմեանց նախաաել և հայհոյել այնպէս, որ կարծես թէ այդպէս անողները լեզուի և ազգութեան կապով միմեանց հետ կապուած չեն, այլ մէկը միւսի համար այլազգի է և այլալեզու, մէկը միւսի համար հեթանոս է կամ բարբարոս:

Եւ իրաւ. ո՞վ չի հետաքրքրուի զիտենայ, թէ ի՞նչ «անկարգութիւններ» պիտի լինէին, որ այդքան աղէտալի արդիւնքներ են ունեցել ընդհանուր երկրի և ամբողջ ազգի համար. ի՞նչ սոսկալի չարիքներ է նկատել եկեղեցու պատուական հովուապետն, որ այդքան հողեկան չուղմուռքի շեշտով է խօսում:—Ահա թէ չարիքներից ամենից յառաջ չիշուելու արժանին, հետեաբար՝ ամենից մեծը կամ ծանրը ի՞նչն է եղել, Ատենաբանութեան խօսքերով.—այն, որ մի քանի տեղերում եկեղեցիների սեղաններն և աւաղաններն այնպէս չէին շինուած, ինչպէս երանելի Հայրերն են աւանդել և հրամայել. այսինքն՝ նախնի Հայրերն հրամայել են որ՝ թէ սեղանն և թէ աւաղանը քարից լինեն և անշարժ հաստատուած. այն ինչ Օծնեցու ժամանակին սկսած են եղել տեղ տեղ փայտեայ և շարժուն սեղան շինել. իսկ աւաղանը՝ ձեռք ընկած որևէ անօթից, ինչպէս տեղն ու ժամանակը պահանջել են. «Ընդ «որովք և դոյս էհաս տեսանել. զի ի տեղիս տեղիս զսեղանս «և զաւաղանս ոչ առնեն ըստ հրամանի և աւանդութեան «երանելեացն մերոց հարանց՝ քարեղէն և անշարժաբար զեր- «կոսինն հիմնացուցանելով, այլ զսեղանն փայտեղէն և շար- «ժուն առնելով, իսկ զաւաղանն ըստ պիտոյիցն, ըստ ժա- «մուն և ըստ տեղեացն, որ ինչ անօթով և ի ձեռն զայցէ, «կատարեն զկարգն»:

Ընթերցողն անշուշտ զարմանքով պիտի նկատի.—ի՞նչ էր կանխաբանն, և ի՞նչ եղաւ մատնացոյց արած առաջին փաստը: Սակայն ամենևին պէտք չէ զարմանալ. աղճատումն շուտ նկատելի տեսակից է: Նախաբանի (բ. 304.) խօսքերից շատ բացառապէս երևում է, որ հայրապետն աչքի առաջ է ունեցել և անշուշտ ճառի մէջ ևս մի առ մի չիշել է այնպիսի խրն-

զիրներ, որոնք իսկապէս ազգի և եկեղեցու անդորրութիւնը տակն ու վրայ էին անում.—գաւանական և ծիսական խրնզիրներն էին դորանք, որոնք Եզր կաթողիկոսի ժամանակից սկսած՝ երկպառակել էին ազգի միութիւնն, ատելութիւն ու թշնամութիւն ձգելով ազգային եկեղեցուն հաւատարիմ որդիների և նորանից օտարացած նորասերների մէջ: Յովհան Օծնեցու հայրապետական զահր բարձրանալը տեղի ունեցաւ այնպիսի ժամանակում, երբ կրօնական-վիճաբանական չուղմուռքներն ու թշնամութիւններն արդէն ցաւալի կերպարանք էին առել: Երախտաւոր հայրապետն ամենից յառաջ իւր հոգատարութեան առարկայ է անում ազգի անդորրութիւնը վերահաստատել. բայց այդ ուրիշ կերպ չէր կարող լինել, եթէ ոչ տեղ տեղ մուտ գտած նորածիսութիւնները բառնալով, խափանելով: Իսկ ի՞նչպէս կարող էր խափանել.—եկեղեցական ժողով զուճարելով, որպէս զի ժողովական կանոնադրութեամբ բոլորի համար պարտադիր լինէր ազգային-նախնասուանդ ձէսերի ու սովորութիւնների անխախտ պահպանութիւնը:

Նա այդ ժողովը զուճարեց, և կանոնական որոշումները տրուեցին. բայց նորանցով դեռ անդորրութիւնն ու խաղաղութիւնը բոլորովին ապահովել հնարաւոր չէր: Նորածիսութիւնները մուտք գտած լինելով չունական բաժնի Հայերի մէջ՝ Յունաստանի յայտնի և ծածուկ քաշալերութեամբ շարունակ ուղարկուած էին Հայաստանի արևելեան բաժինը գործակատար-քարոզիչներ, որոնք աշխատում էին նորից տարածել այն, ինչ որ ջնջել էր կամենում հայրապետն. և նորից գալթակղութիւնն ու վրդովմունքը յառաջ էին գալիս. ըստորում այդ քարոզիչ-գործակատարներն, որոնք ընտրուած էին թէ Յոյներից և թէ չունազաւան Հայերից, շարունակ երթեկեկելով Մեծ Հայք, հարկաւ և շատերը բնակութիւն հաստատելով այնտեղ՝ չէին զադարում ըստ հ. Չամչեանի (Բ. 387) «խռովել զժողովուրդն, և վարիլ ընդ նոսա անարգանօք, և կոչել զնոսա հերետիկոսս և աստուածաչարչարս, և արհամարհել զպատարագն և զպաշտամունս նոցա, և եպիսկոպոս զտօնսն»: Եւ Օծնեցին հարկադրուած է լինում այդ քա-

բողիչներէ ծուարք խափանել այդ իսկ. կարող էր լինել միայն տէրութեան հանութեամբ: Արդէն ինչ որ սկսել էր հայրապետանել իրանից կախուած միջոցներով ընդդէմ յունամուտ սովորութիւններէ, զրաւել էր դէպի նա Վլիթ ոստիկանի վստահութիւնն, որի ղեկուցմամբ՝ և ամիրայեաի: Երբ Օձնեցին զիմուծ է վերջինին անձամբ և իւր խնդիրներն առաջարկուծ 73), ամիրայետը կատարուծ է խնդրածներն և իրան էլ առանձին պատիւներ ցոյց տալով վերադարձնուծ: Որ խնդիրներից մէկն յատկապէս Մեծ Հայքուծ բնակող կամ ժամանակաւորապէս այնտեղ անցուդարծ անող Յոյներին և Հայ—Հոռոմներին երկրից հանելու, հեռացնելու մասին եղած պիտի լինի՝ երևուծ է մի քանի պատմիչների խօսքերից, թէ հայրապետ ամիրայետի մօտից վերադառնալուն պէս սկսել է լիշեալ մարդկանց դուրս քշել: Թէպէտե Կիրակոսն ասուծ է թէ դուրս քշուածներն էին «յոյն վերակացուք և զինուորք» (եր. 38), բայց այդ թիւրիմացութեան արդիւնք է միայն. արաբական սիրապետութեան միջոցին յոյն զինուորներ և վերակացուներ այլ ևս չկային Հայաստանուծ: Վարդան Վարդապետն այս խօսքերը չունի, այլ միայն Յոյներ է ասուծ. «Իսկ սուրբ պատրիարքն Յոհաննէս եհան յաշխարհէս Հայոց դատարածեալ Յոյնն յամենայն տեղիս, հրամանաւ Ուծարայ» (եր. 73): Աւելի պարզ զրուծ է Մ. Այրիվանեցին. «Յովհան Օձնեցի արար ժողով ի Մանազկերա և եհան զհոռոմն և զհայսն իւր ի հայոց» (եր. 66—67): Թէև հ. Չամչեանն և նորա հետ ուրիշներն ասուծ են, թէ Օձնեցու հայածած—հեռացրածները պօղիկեաններն էին, սակայն այդ միանդամայն անհիմն է. Օձնեցին պօղիկեանների դէմ զինուելու հարկի մէջ զրուած չէր կարող լինել. նորա արսօրածներն եղել են Յոյն և Հայ—Հոռոմ բնակիչներն և այն երթեկող քարոզիչ-գործակատարներն, որոնք կրօնափոխական ձգտուծներով գայթակղութիւն և երկպառակղութիւն էին սերմանուծ:

Վերադառնալու Ստեփանութեանը կամ ճառին:

Թէ արդարև Յովհան Իմաստասէրը չիշչ է ուրիշ աւելի կարևոր խնդիրներ, բայց խարդախող ձեռքը նորա ճառն

աղնատել է, այդ մասին կասկած չեն թողնուծ հետեւեալ փաստերն.

1. Ինչպէս տեսանք վերոգրեալներից, Իմաստասէրը ժողով դուծարեց նորա համար, որ կանոնական կարգադրութեամբ խափանէր կրօնական-ժիսական օտարամուտ սովորութիւններն. իսկ այդ սովորութիւններն էին—խծօրուծ հացով և շրախաուն զինուով պատարազելը, Մննդեան տօնը բաժանաբար, դեկտեմբերի 25-ին կատարելը, Սուրբ աստուած երզն առանց «խաչեցարի» երգելը, հիւանդաց և երեխայից իւղի գործադրութիւնը: Հայրապետի ատենաբանական ճառի մէջ յուղուած շեշտով ակնարկուած «անկարգութիւններն» էլ սորանք էին. հեաւարար՝ նախաբանից անմիջապէս յետոյ սորանք են եղել յառաջ բերուածներն և ոչ սեղանի ու աւագանի քարից շինելու աննշան խնդիրն, որ, ի դէպ ասած՝ եթէ արդարև այդպէս արդէն «հրամայուած և աւանդուած էր մեր երանելի Հայերից» հաղիւ թէ ժողովի առարկայ դառնալու չափ խանդարուած լինէր. տեղ տեղ նկատուած խանդարուծներն էլ բառնալու համար բաւական էր հայրապետական մի հրաման, որ ամենքը պարտաւորուէին ճշղութեամբ պահպանելու նախնեաց սահմանածը: Խօսք չկայ, որ այս յօղուածն՝ «Ընդ որովք և զայս էհաս տեսանել» և այլն, անհարազատ է և կրկնուծ է կեղծ-Մակարեան կանոնական թղթի խօսքերն: Արդէն տեսանք վերևուծ, որ Մակարն էլ ասուծ էր, «Հայ քահանաներից լսած» թէ «կողմանք արևելից թերի են... բաղուծ ինչ իրօք. զի ի տեղիս տեղիս աւագան կարգաւոր ոչ ունին, և յորպէտ ամանի մկրրտեն». և ապա տալիս էր այդ մասին կանոն. «Բ. Եթէ աւագան սրբեալ ոչ ունին և յանպէտ ամանի մկրտեն... Եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է և մկրտատունս առնել և աւագան»: Սեղանի համար էլ ասուած է Ը. յօղուածուծ. «Եւ զիա՞րդ եկեցէ ի ձև սեղանն խորհրդոյն: Սեղանն քաւութեան... և աւագանն յետոյ առ նմին տամք և պատուով, հատատեալ յաջմէ»:

2. Հայրապետը կարգադրութիւնների կարօտ խնդիրները

մի առ մի չիշելուց չետոյ ժողովին առաջարկել է իւրաքան-  
 չիւրի համար կանոն սահմանել. «Կանոնական սահմանադ-  
 «րութեամբ ըստ իւրաքանչիւր դիտող՝ զհիմնացեալ զանկար-  
 «զութիւնն քակել և ի բաց հանել չեկեղեցույ աստուծոյ, և  
 «փոխանակ նոցա դբարեկալելուչսն և զօգտակարագոյնսն ի տեղ-  
 «ւոջն արծանացուցանել»: Այդպէս էլ արել է ժողովն. ուս-  
 տի՛ ինչոր հանուած են հառից—անշուշտ միւս եկեղեցիներին  
 անհանոյ ոնով կամ բացատրութեամբ խօսուած լինելու պատ-  
 ճառով, — պահուած են համապատասխան կանոնների մէջ.  
 1. անխմոր հացով և անշրախառն զինուով պատարագելը,  
 2. Սուրբ աստուած երգի մէջ «Որ խաչեցար»ն երեք անգամ  
 կրկնելը, 3. Ծննդեան և Յայտնութեան (Մկրտութեան) տօնը  
 միասին չունլարի Ե-ին կատարելը, 4. հիւանդաց օծման սո-  
 վորութիւնը խափանելը:

Ճառի խարդախողը կանոններն էլ փոփոխել-սրբազրելն  
 անտես արած չլինելով՝ միւսնոջն ժամանակ անօղուտ է հա-  
 մարել չեղաշրջել առաջին երեք խնդիրների մասին սահմանած  
 կանոններն, ըստ որում այդ սովորութիւնները բուն սկզբից  
 ընդունուած և պաշտուած լինելով Հայոց եկեղեցում՝ մի եր-  
 կու փոփոխուած կանոնների շնորհիւ նորանք էլ փոխուած  
 կամ ի բաց հանուած չէին լինի. ամենաշատն այդ դէպքում  
 այն կրկնէր, որ Յովհան Օձնեցու վայելած վստահութիւնը  
 կրկնէր. իսկ այդ էլ ցանկալի չէր կարող լինել, քանի որ  
 նորա անունից օգտուել էին և կարելի էր օգտուել նաև ու-  
 ըիշ դէպքերում, ինչպէս հէնց հիւանդաց օծման սովորու-  
 թիւնն ընդունել տալու փորձում: Այս արարողութիւնը կամ  
 ծէսը նոր պիտի զործադրուէր. ուրեմն և կարելի էր միւս-  
 ների կարգում դնելով՝ համարել Օձնեցու վերահաստատածն.  
 այո, վերահաստատածն և ոչ նոր սահմանածը, քանի որ կան  
 ապացոյցներ, թէ Հայոց եկեղեցին ունեցել է այդ արարողու-  
 թիւնը, միայն չետոյ անտես է արուել. և ապացոյցներն էին  
 — Լուսաւորիչը վկայել է, թէ Քրիստոսի օրհնած իւղն «որովք  
 հիւանդը առողջացան», Հայաստանումն է. Երուսաղէմի Մա-  
 կար հայրապետը կանոնական թղթով պատուիրել է այդ ծէսը

կատարել և Հայոց կաթողիկոսն ընդունել է հնազանդու-  
 թեամբ. և սուրբ Սահակ Պարթևն ինքն իւր վերայ կատա-  
 րել է տուել, և այլն: Այդ կողմից պակասութիւն չէր թող-  
 նուել. բայց դարձեալ կասկած չտալու համար, թէ Օձնեցու  
 նման հայրապետը կարող էր լինել վերահաստատողը՝ կան-  
 խահող մտածութեամբ հարկաւոր է դատուել հայրապետի բե-  
 րանից նաւի զանազան մասերում այսպիսի նախապատրաս-  
 տող խօսքեր մտցնել. (Յօդ. Գ.) Պէտք է հաւանութեամբ և  
 վստահութեամբ հեռակէ միւս քրիստոնեաներին. «Հարկ է հա-  
 «ւանութեամբ և հաւատովք հեռակէ զկնի բոլոր քրիստոսա-  
 «կանաց»: (Յօդ. Գ.) Քահանաներն Երուսաղէմից ձէթ էին  
 բերում, և նորանով օծանում էին թէ մկրտուածներին, թէ  
 երեխաներին և թէ հիւանդներին: (Յօդ. Ը.) Օրինազանցու-  
 թիւն են կարծում, եթէ Հոգին սուրբ մէկին հրամայում է  
 հների թերի թողածը լրացնել: Աստուծու եկեղեցին միշտ  
 յառաջադիմում, անում և նոխանում է. հնար ևս չկար, որ  
 Աստուած մի մարդով և մի ժամանակում իւր բոլոր կամքը  
 անօրինէր մարդկանց մէջ. «Օրինազանցութիւն կարծելով  
 «դայս, եթէ զառ ի հնոցն զթերի ինչ ըստ խորհրդոյն խընդ-  
 «րոջ՝ կատարելագործել ումեք հրամայէ Հոգին սուրբ: Եւ  
 «մանուաւդ եթէ եկեղեցի աստուծոյ հանապազօր յառաջա-  
 «տութեամբ աճէ և հարստանայ. զի և չէր իսկ հնար միով մար-  
 «դով ըստ միում զործոյ, և ըստ միում ժամանակի՝ զբովան-  
 «դակ իւր կամս անօրինել Աստուծոյ ի մարդիկ»:

Չանազան տեսակի իւղերի զործածութեան կարևորու-  
 թիւնը ցոյց տալու նպատակով կեղծուած Գ. յօդուածը  
 զրել ենք վերևում աշխարհարար թարգմանութեան հետ միա-  
 սին: Նորան համապատասխան չեղաշրջումն կատարուել է և  
 կանոնների յօդուածի մէջ: Օձնեցու և նորա ժողովի ընդդէմ  
 հիւանդաց օծման սահմանած կանոնից կաղմել են երեք կա-  
 նոններ. — Թ. Ժ. ԺԱ: Առաջինում իբր թէ ժողովը ս. մեռո-  
 նի օրհնութիւնը չատկացնում է հայրապետի իրաւունքին,  
 որ առանց այն էլ մեղանում սկզբից ի վեր հայրապետական  
 իրաւունք է եղել. ապա՝ այդ խօսքերից չետոյ յօդուածն չի-

շում է և եպիսկոպոսի իւղ օրհնելու իրաւունքը, միայն թէ իւղ բառը յայտնապէս չդնելով: Ահա յօդուածը. «Պարտ և «արժան է զսուրբ միւռոնն, այսինքն դեղն անուշահոտու- «թեան, հայրապետին օրհնել. և իւրաքանչիւրոց եպիսկոպո- «սացն մի անգամ ի զատկին հինգշաբաթին օր, որպէս և «հրամայեալն է»:

Թէ նախադասութեան մութ իմաստն և թէ կանոնը խարդախողի զէմքը պարզելու համար հարկաւոր ենք համարում ասել, որ Սպանիայում (*Aix—la—Chapelle*) 836 թ. գումարուած ժողովի կանոնների 2. դլխի 1. յօդուածի 8-րդ պարբերութիւնը հրամայում է. «Եպիսկոպոսը պարտաւոր է «հիւանդաց իւղն օրհնել Տիրոջ ընթրեաց (*Caena Domini— «Աւագ հինգշաբթի*) օրն. և ոչ այլպէս կատարել օրհնութիւնն, ինչպէս պատահում է շատ անգամ»: \*)

Օձնեցու անուամբ կեղծուած նոյն Թ. կանոնի շարունակութիւնն ասում է, թէ քահանաներն եպիսկոպոսից պիտի ստանան օրհնուած իւղն և նորանով օծին սեղան, եկեղեցի, խաչ. նորանով տան մկրտուածներին օրգեղրութեան օծումն, որ մկրտութիւնից չետոյ է լինում. իսկ ուրիշ օծումների համար այդ իւղը չգործածեն. և թէ՛ իրանք իրաւունք չունեն այդ իւղն օրհնել. «Եւ քահանայիցն ի նոցանէ ընդունել, և օծանել նովաւ զսեղանս և զեկեղեցիս և զխաչս. առ «մկրտեալսն մատուցանել միայն յօրգեղրութեանն օծումն, «որ չեա մկրտութեանն լինի. և յայլ ի պէտս օծման մի՛ խառ- «նեսցէ զնա, և մի՛ ինքեամբ յանդրեսցի օրհնել քահանայն»:

Ինչպէս կանոնիս առաջին մասը, նոյնպէս և այս երկրորդն արեւմտեան եկեղեցում սահմանուածի ճիշտ պատճէնն է ներկայացնում: Ս. Բոնիփակիոսի (753 թ.) սինօդական կանոնների երկու ժողովածուներից մէկի 28. յօդուածն ևս ասում է. «Բոլոր քահանաները պարտաւոր են եպիսկոպոսից «խնդրել հիւանդաց իւղն և ունենալ իրանց մօտ»: \*\*) Իսկ Կարոլոս Մեծի հրամանով նոյն *Aix—la—Chapelle*-ում, բայց

\*) *Héfélé. Hist. des Conc. t. 289.*

\*\*) *Անդ. Դ. 491.*

վերջիւնալ ժողովից յառաջ, 809 թ. գումարուած ժողովի 17-րդ կանոնը պատուիրում է քահանաներին Տիրոջ Ընթրեաց օրը երկու անօթ ունենալ. մինը՝ ս. մեռոնի, միւսը՝ երեխաների և հիւանդների օծման իւղի համար: \*)

Նայերէնի տարբերութիւնը միայն երկու տեսակ իւղերի գործածութեան տեղերն յատկացնելու մէջ. մէկով (մեռոնով) պիտի կատարուեն սեղանի, եկեղեցու, խաչի և մկրտուածների օրգեղրութեան օծումները. միւս զէպրերում նա չէ գործածուելու. եկեղեցուց դուրս օծման ուրիշ զէպրեր էլ չեն մնում, բացի հիւանդաց օծումից, որի համար էլ առանձին իւղ կայ: Վերջապէս աւելի պերճախօս փաստ կայ, թէ Օձնեցու կանոնների մէջ մուծած Թ. կեղծ յօդուածի հեղինակը կամ լատին կամ լատինահայ մի կրօնաւոր է. և թէ՛ կեղծիքն էր յօրինուել կարող էր: Ն. Չամչեանի ասելով՝ ճոռմի Լուսիոս պապը 1184 թուին նամակ է գրում Հայոց Գրիգոր կաթողիկոսին, ուր մի քանի ծիսական փոփոխութիւնների առաջակարգութեանն «չարէ անմիջապէս». «Յետ այսր զքեզ «որպէս բարձր և դուրս ամենայն եկեղեցուց ազաչեմք. ի «մեծի հինգշաբաթուն՝ որ է աւագ շաբաթն, զսուրբ օծութիւնն՝ որպէս մեր նուիրագործեմք մի անգամ յամենայն «ամի՛ օրհնեցէք. և (ի մկրտելն զերեխայս) զնոյն հեղէք ի «չուր մկրտութեանն. և (ի գրոշմելն նովին) կնքեցէք զմկրտ- «տեալսն և (նովին) օձէք զքար սրբոյ սեղանոյն»: \*\*)

Յառաջ բերենք այժմ միւս երկու կանոնները:

Կան. Ժ. «Պարտ և արժան է զմկրտութեանն մէթ՝ քահանային օրհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից. և նոյն ժամայն առ մկրտեալսն «մերձեցուցանելով՝ զօրհնեալն սպառել, և մի՛ իշխել զմիան- «գամ օրհնեալն բաղում անգամ օրհնել. և միայն օծանել նո- «վաւ զերեխայսն և զմկրտեալսն ընդ մկրտելն յաւազանին. «և յայլ խորհուրդ օծման մի իշխեսցէ մատուցանել զնա»:

\*) *Անդ. Ե. 175.*

\*\*) *Պատմ. Հայոց. Գ. 144.*

(Մկրտութեան ձէթը պէտք է և արժան է, որ քահանան օրհնի ամեն մի անդամ մկրտելու միջոցին. և օրհնի այնքան, որքան հարկաւոր է մի անդամի համար. և իսկոյն դործ զնելով մկրտուածների վերայ՝ սպառել. և չհամարձակի մի անգամ օրհնուածը շատ անգամ օրհնել: Այդ իւրով քահանան պիտի օծանի երեխաներին և մկրտուածներին՝ աւազանում մկրտած միջոցին. իսկ օծման ուրիշ խորհրդի համար նոյն իւրը գործադրելու իրաւունք չունի):

Կան. ԺԱ. «Սրժան է զհիւանդացն զձէթ քայանային «օրհնել ըստ իւրում աղօթիցն և ըստ բաւականութեան պա- «հանջելոյ ժամուն պիտոյից»: (Սրժան է, որ հիւանդաց ձէթը քահանան օրհնի իւր աղօթքով, այնքան որքան ամեն մի դէպքի համար հարկաւոր է):

Այս երկու կանոններն էլ կազմուած են Ատենաբանութեան Գ. յօդուածին համապատասխան մտքով: Այնպէս պախարակուում է այն, որ քահանաներն Երուսաղէմից ձէթ բերելով՝ 74) իւրաքանչիւր անգամ, մկրտութիւն կատարած միջոցին՝ վերստին օրհնում են արդէն օրհնուածը. կանոնն էլ պատուիրում է, որ քահանաներն ամեն մի դէպքի համար (մկրտութիւն կատարելիս) առանձին օրհնեն իւրն, որ այնքան պիտի լինի, որքան մի անգամի համար հարկաւոր է: Ատենաբանութեան յօդուածում պախարակուում է, որ միևնոյն իւրով կամ ձէթով թէ երեխաներին և մկրտեալներին են օծում և թէ եկեղեցի, սեղան և խաչ. կանոնն էլ պատուիրում է, որ քահանան իւր օրհնած իւրով միմիայն մկրտուածներին և երեխաներին օծի. իսկ միւս դէպքերում այդ իւրը գործ զնելու իրաւունք չունի: Օծման դէպքերից մէկի՝ հիւանդին օծելու համար ԺԱ. կանոնն առանձին իւր է չատկացնում, որ նոյնպէս քահանան է օրհնում. իսկ եկեղեցի, սեղան և խաչ օրհնելու իւրի մասին էլ արդէն Թ. կանոնն է խօսել:

Կանոններիս նկատմամբ ուշադրութեան առնելու մի կէտ հետեւեալն է: Հիւանդաց և երեխաների իւրերն օրհնելը միայն չունական—արեւելեան եկեղեցին է թոյլատրում քահանաներին. իսկ հռոմէական եկեղեցին թէ մեռոնի և թէ հիւանդաց

օծման իւրի օրհնութիւնն եպիսկոպոսի իրաւունք է համարում: Ինչպէս բացատրել ուրեմն վերոկարդեալ Ժ. և ԺԱ. կանոնների գոյութիւնն, եթէ նորանց ծագումն լատինական ենք ընդունում, կհարցնի ընթերցողը:

Արդէն տեսանք վերևում, թէ ս. Մակարի 4-րդ կանոնն էլ «մեռելոց և հիւանդաց և մկրտելոց» իւրի օրհնութեան իրաւունքը թէ եպիսկոպոսներին և թէ քահանաներին է տալիս: Ս. Մակարի անունով կանոններ պատրաստելը նոյնքան կարևոր էր, որքան Օծնեցու. իսկ չունական եկեղեցու ներկայացուցչի բերանով հիւանդաց և երեխայից իւրի օրհնութեան իրաւունքը միմիայն եպիսկոպոսի իրաւունք սահմանել չէր կարելի. և զիջանել պէտք էր: Այդքանը զիջանելուց յետոյ Օծնեցու կանոններն էլ պիտի համակերպուէին Մակարեաններին. ս. Վրթանէսն այդպէս էր ընդունել:

Թէ վերը կարգուած կանոններն երեքն էլ, ինչպէս և Ատենաբանութեան Գ. յօդուածն Յովհան Օծնեցունը չէ՝ 75) անկասկած է:

Իմաստասէր հայրապետը չէր կարող հաւանդաց օծումն օրինադրել նախ նորա համար, որ ինքն աշխատեց խափանել ազգի դալթակողութեան և երկպառակութեան առիթ տուող նորածեղութիւններն և նորանց տարածողներին՝ ամիրապետի հրամանով երկրից արտաքսել. իսկ նորածեղութիւններից մէկն էլ հիւանդաց օծումն էր. երկրորդ նորա համար, որ նա չէր կարող իւր մահից յետոյ եկեղեցու բացարձակ վստահութեանն արժանանայ և ազգային նախամեծար սուրբերի կարգն անցնել, եթէ որևէ կրօնական խնդրում եկեղեցու վարդապետական սկզբունքներին հակառակ վարուած լինէր:

Աշխատութեանս 232 երեսում խոստացել ենք ստել, թէ Հայաստանեայց եկեղեցին ի՞նչ սկզբունքով է զեկավարուել՝ հիւանդներին օծելու փոխարէն միայն աղօթել նորանց համար:

Եկեղեցու եօթը խորհուրդներից մէկը հիւանդների համար սահմանուածն է, որ կատարուում է աղօթքով և օծումով. այս արարողութիւնը չունական եկեղեցում կոչուել է

օծումն հիւանդաց. իսկ հռոմէական եկեղեցում՝ վերջին օծումն, խորհուրդ հոգեվարքների և մեռնողների. անուներ, որոնք չեազոյն ժամանակի ծագում ունեն. այն ժամանակի, երբ չիշեալ եկեղեցին սովորութիւն արեց հիւանդին օծել միմիայն հոգեվարք կամ մերձ ի մահ վիճակում: Այս սովորութիւնն, որ նոյն իսկ լատին աստուածաբաններից մի քանիսի վկայութեամբ՝ համարուած է սկիզբն առած ժ.բ. դարից ոչ վաղ, չունական եկեղեցու աստուածաբանների կարծիքով խոտելի է. ըստորում, ասում են նորանք, խորհուրդը բահմանուել է ոչ միմիայն հոգեվանքների, այլ արհասարակ ծանր հիւանդների համար, որոնք կարող են և առողջանալ: \*) Խորհրդի նշանակութիւնն էլ իսկապէս այդ է ցոյց տալիս:

Այս խորհրդի հիմքը Յակոբոս առաքեալի խօսքն է. «Նիւ-  
«ւանդանացէ՞ որ ի մէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, և  
«արասցեն ի վերայ նորա աղօթս, օժցեն իւղով շանուն տեա-  
«որն: Եւ աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն. և եթէ  
«մեղս ինչ իցէ զործեալ՝ թողցի նմա» (Ե. 14):

Թէ քրիստոնէական եկեղեցում ե՞րբ է սկիզբն առել հիւանդներին իւղով օծելու սովորութիւնն՝ որոշակի չաչտնի չէ. չաչտնի է միայն այն, որ այդ օծումն առաջին անգամ «խորհուրդ» է անուանուել Ե. դարում. և անուանողն է հռոմի պապ Իննովկենտիոս Ա. (402—417): Իսկ թէ հայոց եկեղեցին ե՞րբ է ընդունել այս խորհուրդը՝ հաստատապէս չենք կարող ասել. բայց կարելի է կարծել, թէ հաւանօրէն ժ.բ. դարից ոչ չառաջ. այն էլ մի կողմից հռոմի պապերի պահանջներից ճնշուած, միւս կողմից ժողովրդին զայթակողութիւնից ազատ պահելու համար. ըստորում հռոմէական եկեղեցու կրօնաւոր քարոզիչների շարունակ հայ եկեղեցու գրիտին թափած մեղադրանքներից մէկն էլ այն է եղել, թէ նորա «խորհուրդները» լրիւ չեն: Այսպէս կարծելու իրաւունք են տալիս մեզ թէ խորհրդի նոյն իսկ անուանակոչութիւնը մեղանում—վերջին օծումն—և թէ աղօթելն «ի բերանոյ հո-

\*) Православно-Дом. Богословіе. Т. 2. 355:

ղեվարին», որոնք, ինչպէս տեսանք, հռոմէական եկեղեցում մէկն իբրև անուն և միւսն իբրև սովորութիւն (օժման հետ) զործածական են դարձել ժ.բ. դարից ոչ վաղ: Գրիգոր Տաթևացին էլ խորհուրդն այդ մտքով է հասկանում. «Վերջին օծումն... տուեալ լինի հիւանդաց ի հոգեվարի օրն» (Հարցմ. 604): Բայց միևնոյն ժամանակ՝ հայոց եկեղեցին այս խորհուրդն ընդունելով հանդերձ՝ վարուել է առանձին սկզբունքով. խորհրդի կատարման մի մասը՝ հիւանդին օծելը, թողել և բաւական է համարել միայն աղօթել նորա համար, քանի որ կարևոր մասն էլ իսկապէս այդ է. այսինքն՝ հիւանդին առողջութիւն և մեղքի թողութիւն տուողն, Առաքեալի խօսքի համաձայն՝ աղօթքն է. «Եւ աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն (զհիւանդն). և եթէ մեղս ինչ իցէ զործեալ՝ թողցի նմա»:

Թէ ինչո՞ւ համար հայաստանեայց եկեղեցին չանձն չէ առել հիւանդների օծումն զործապրել՝ բացատրում են եկեղեցու հայրերը.—թէ՛ նորա համար յատկապէս, որ, ինչպէս նկատուել է ուրիշ քրիստոնէայ աղղերի մէջ, ազէա ամբօխի հասկացողութեամբ աղօթքի զօրութիւնն օժման զօրութիւն ընդունուելով՝ այն վնասակար հեռեանքն էր ունենում, որ մարդիկ անտես էին անում իրանց քրիստոնէական պարտաւորութիւններն, և մանաւանդ սպաշխարելու և խոստովանելու պարտաւորութիւնն. այն սխալ յուսով, թէ ինչ մեղքեր էլ ունենան՝ օժման միջոցին թողութիւն կգանեն: Ժ.Գ. դարի վերջում նորածնութիւններ մտցնել կամեցող Գրիգոր կաթողիկոս Անաւարդեցին հիւանդաց օժման զործապրութիւնն էլ մտադրուել էր մուծանել եկեղեցում. ուստի նորա դէմ բողոքող արեւելեան հայ եկեղեցականների և իշխանների թղթի մի կէտն էլ հիւանդաց օծումն սահմանելու դիտաւորութեան դէմ է ուղղուած, և գրում են. «Թէպէտ առաքե-  
«լական իմանամք կարգ զձէթ օրհնելն հիւանդաց և մեղո-  
«ցելոց, ի հարցն ոչ ունիմք սովորութեամբ աւանդեալ մեզ.  
«կարծեմ և համարձակութիւն յոյժ մատուցանէ ժրագունիցն  
«ի մեղս՝ մեղօք սպականել զոյխն յուսով ձիթին. սակաւ

«գրամիկ մտխել, և ձէթ օրհնել, և արդարանալ: Այլ զիւտը  
«շահիցն ի բաց ընկեցի ի մէջ. և ընդ հարցն շաւիղ ան-  
«սալթաք ընթացողք ոտիւք. բայց թէ զանկատար իւղն՝  
«որ վասն երեսալիցն սահմանէք՝ ընդունելի է»: \*)

Գրիգ. Տաթևացին ասելով, թէ մենք էլ ունենք «գիտը-  
հուրդ օծմանն, այլ ծածկապէս», իբրև պատասխան լինելի  
հարցման, թէ ինչու ծածկապէս և ոչ յայտնապէս, որպէս  
միւս աղգերն են անուծ, գրուծ է. «Ի հնարից չարին բար-  
«ծին մարդիկը գիտաստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն  
«ապաւինեալ թէ՛ ի վերջին օրն օժանիմք իւղով բալասամի-  
«նաւ և արդարանամք... Վասնորոյ հայրապետք եկեղեցւոյ  
«լաւ համարեցան զվայելչականն բառնալ որ ոչ ի լինելն յա-  
«ւելուած առնէ, և ոչ ի բառնիլն ապականէ զկարգ եկեղեց-  
«ւոյ, որ է վերջին օծուծն. քան թէ բառնալ գիտաստովանու-  
«թիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ոչ գոյ ներդործական  
«մեղացն թողութիւն գտանել:.. Իարձեալ՝ մահու չափ մեղ-  
«քըն բանիւ սրբի ի ձեռն քահանային. այսպէս և ներելին  
«սրբի բանիւ քահանային և աղօթիւք: Որպէս ասէն Յակո-  
«բոս (կոչեսցեն զերիցունս, և արասցեն աղօթս և թողցի  
«նմա)» (Նարցմ. 604):

Ղ. կաթ. Ջահկեցին ևս նոյն խօսքերն է կրկնուծ. բայց  
սորա ասելով՝ չայոց եկեղեցին մի ուրիշ պատճառ էլ ունե-  
ցել է, որ հարկաւոր է համարել հիւանդաց օծման սովորու-  
թիւնը թողնել իբրև առանձին արարողութիւն և միացնել  
զրոշմի հետ. «Վասն զի խոստովանութիւնն բառնայր, որ-  
«պէս այժմ յազգս ասորոց և վրաց բարձեալ է. նոյնպէս  
«ազգս մեր վասն օծման ձիթոյն ոչ խոստովանէին և ի մեղս  
«մեռանէին... Յորժամ տեսին վարդապետք եկեղեցւոյ որ յա-  
«ղագս օծմանն խոստովանութիւնն բառնայր ի տղիտաց և  
«ի սուպու չիմարակարծ քրիստոնէից, և մանաւանդ տեսին  
«էրանելիքն մեր որ ի բառնալ թագաւորութեան մերոյ ազգս  
«հայոց ասարազրեալք եղեն ի վիճակաց իւրեանց և սփռեցան

\*) Ստ. Օրբ. Պատմ. Սիւնեաց. Փարիզ. եր. 206—207:

«ընդ ոլորտս աշխարհաց, վասն այն սահմանեցին զի զզրոշմն  
«ընդ վերջին օծմանն ի ժամ մկրտութեանն տացեն, զի մի՛  
«գուցէ ի մէջ տանկաց և ի պանդխտութեան մեռանիցին  
«թարց քահանայի, և մնասցեն առանց զրոշման և վերջին  
«օծման»: \*)

Պէտք է սակայն նկատել, թէ չայոց եկեղեցին ոչ երբ  
և իցէ վերջին օծման արարողութիւնն է ընդունել, և ոչ էլ  
չեւոյ զրոշմի հետ միացրել: Որ այդ սովորութիւնն ամենե-  
ւին մուտք չէ դուրս մեղանուծ՝ նորանով ակներև է նախ,  
որ մինչև Տաթևացին մեր եկեղեցական հեղինակներից ոչ ոք  
չէ խօսուծ և ակնարկութիւն անյամ չէ անուծ սովորութեան  
ոչ գոյութեան և ոչ բարձման մասին. ընդհակառակն՝ Անա-  
ւարդեցուն բողոքադիր ուղարկող արևելեան եկեղեցականները  
մի վար յառաջ ասուծ էին, թէ հիւանդաց իւղ օրհնելն «ի  
հարցն ոչ ունիմք սովորութեամբ աւանդեալ մեզ»: Երկրորդ՝  
Յոյների և չայ-ճողոմենների է. դարի վերջուծ և Լ. ի սկզբուծ  
գործ զրաժ շանքերն էին ի միջի այլոց և այլ սովորութիւնն  
ընդունել տալ չայերին. բայց չկարողացան: Այլ միևնոյն նպա-  
տակով էլ լատին և հայալատին քարոզիչների ձեռքով այնքան  
կեղծիքներ են կաղծուել հեղինակաւոր անուններով, որպէս  
զի ցոյց տան, թէ այս ոք ընդունել և գործադրել է այլ  
սովորութիւնը, կամ այս ոք գործադրութեան կողմնակից է  
եղել, — և դարձեալ անօգուտ: Երրորդ՝ չայոց եկեղեցին իւր  
կատարած արարողութիւնների բոլորի համար ծիսարանուծ  
ունի համապատասխան կարգեր. մինչդեռ վերջին օծման հա-  
մար կարգ չենք գտնուծ և ոչ մի ձեռագիր Մաշտոցուծ: Չոր-  
րորդ՝ արևելեան եկեղեցիներուծ զրոշմի խորհուրդը մկրտու-  
թեան հետ միասին կատարելու սովորութիւնը շատ վաղ է  
ընդունուած քան այն ժամանակն, երբ Ջահկեցու ասելով՝  
կարող էին տարազրուել և «ի մէջ տանկաց» մեռնել ու  
մնալ «առանց զրոշման և վերջին օծման» (76): Նինգերորդ՝  
եթէ զրոշմը տրուծ է երեսային մկրտութեան միջոցին՝

\*) Դրախտ Յանկ. 383—384:

նպատակը շատ հասկանալի է. իսկ վերջին օժուժն էլ այդ միջոցին կատարելն ի՞նչ սկզբունքով պիտի սահմանուած լինէր: Եթէ նորա բուն նշանակութիւնը միմիայն հիւանդին առողջութիւն և ներգործական մեղքերին թողութիւն պարգևելն է, նորածին անմեղ երեխան, որ զեռ նոր է ոտք դրել աշխարհի վերայ, ի՞նչ կարօտութիւն ունի այդ խորհրդին.— որ կանխաւ իրան ապահոված լինի ապագայում գործելի մեղքերի թողութեան կողմից:

Վերջապէս կայ և ուրիշ փաստ, այն էլ զլխաւորը:

Իսկապէս դրոշմի կատարման միջոցին լինում են այնպիսի տեղերի օժուժներ, որոնք նոյն խորհրդից արտաքոյ են. և հետեւաբար՝ պիտի համարուեն վերջին օժման նշանակներ: Յառաջ բերենք այդպէս ասողներից առաջինի, Տաթևացու խօսքերը: Ինչպէս երևում է, մի կողմից ունիթօւները նախատալից խօսքերը, թէ Հայոց եկեղեցու խորհուրդները թերի են, միևս կողմից՝ նորանց աշակերտեալների մէջ կատարուող օժման արարողութեան՝ իբրև մեղաց թողութեան միջոցի՝ Հայ ժողովրդի համար ունեցած հրապուրչութիւնը չեն դրսւտել այն պատասխանով, թէ Հայոց եկեղեցին կատարում է վերջին օժման խորհուրդը, բայց՝ միմիայն ազօթքով. ուստի և եկեղեցու Հայրերն սախուրած են եղել ուրիշ, աւելի հանդստացնող պատասխան դանել, ինչպէս արել է Տաթևացին. «Եւ թէ որ ասիցէ՝ օժուժն խորհուրդ է, ընդէ՞ր մեք ոչ «ուսիմք: Ասեմք թէ, ունիմք զխորհուրդ օժմանն, այլ ծածկապէս. որպէս ի մկրտութիւնն, զոր ասացաք ի վերոյ, թէ «զգրոշմն և զառաջին օժուժն և զվերջին օժուժն կատարեմք «ի մկրտեալն». իսկ «ի վերոյ» ասածն այս է. «Եւ զիտելի է, «զի որ ի նակատն և ի սիրան և ի թիկնամէջն օժանէ, այն «զրոշմ է. և որ զհինգ զգայութիւնսն օժանէ՝ այն ի խորհուրդ օժման է ծածկապէս (այսինքն՝ վերջին օժման). և որ «զայլ մասունս օժմանէ՝ յայնմ խորհրդոյ է՝ որ յառաջ քան «զմկրտութիւնն օժանեն այլ ազգք քրիստոնէից» (եր. 593): Բացի վերոգրեալից՝ նոյն հեղինակը մատնացոյց է լինում և ուրիշ արարողութիւնների վերայ, որոնք, նորա ասելով՝ դարձ-

եալ վերջին օժման նշանակներ են. ինչպէս են ստնալուացի միջոցին ստին կամ ձեռին իւր քսելը, չունվարի վեցի Ջրօրհնէքն և վախնանուած քահանայի օժուժն. «Այլ և զայս «օժուժնս ունիմք ի յտնալուացն: Այլ ի մկրտութեան «տեառն չաւուր յատնութեան: Այլ և զայս օժուժնս ունիմք «ի ննչեցեալ քահանայս» (եր. 604): Ի հարկէ այս չիշուած երեք ձէսերից ոչ մէկն էլ վերջին օժման խորհրդի նշանակութեան հետ կապ չունին. այլ միայն ապացուցանում են մեր կարծիքը, թէ ժողովրդին գոհացուցիչ պատասխան տալը ժամանակի սախուրդական հարկն է եղել: Դառնանք ուրեմն դրոշմի հետ միասին կատարուող օժուժներին:

Ինչ որ ասել է այդ մասին Տաթևացին, նոյնը կրկնում է և Ջահկեցին. «Դիտելի է, զի... որ նակատն և սիրան և «թիկնամէջն օժանի՝ այն դրոշմանն է: Եւ որ զհինգ զգայա-«րանսն օժանէ, այսինքն զաչսն, զականչսն, ըզուունկսն, զբե-«րանն և զձեռսն՝ այն խորհուրդ վերջին օժմանն է: Եւ որ «զոտան օժանի, այնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զմկրտու-«թիւնն օժանեն այլ ազգ քրիստոնէալք»: Ուրեմն Տաթևացու այլ մասունքներ ասածը միայն ոտքերն են մնում:

Թէ չիշեալ օժուժները բոլորն էլ դրոշմի խորհրդի արարողութեան մասերն են և ոչ վերջին օժման՝ այդ ապացուցանում են հետեւեալ անժխտելի փաստերը: Նախ՝ Քրիստոնէական եկեղեցու նախնի Հայրերից մի քանիսն յանուանէ լիշատակում են հաւատացեալի մարմնի այն մասերն, որոնք պիտի ս. մեռնով օժուեն յատկապէս իբրև դրոշմի խորհրդի պահանջ: Ս. Կիւրեղ Երուսաղէմացին լիշում է նակատի, ա-կանչների, հոտոտելիքների (ունդունք) և թիկունքի օժման մասին. ս. Եփրեմ Ստորին՝ առհասարակ մարմնի զգայարանքների և անդամների օժման մասին. Երկրորդ Տիեզերական ժողովն և Տրուելեանը՝ նակատի, աչքերի, ալանչների, հոտոտելիքի և բերանի օժման մասին: Այդ դէպքում Հայոց եկեղեցին հարկ չունէր և չէր կարող ունենալ՝ յետոյ փոփոխութիւն մտցնելու ի սկզբանէ հետէ արևելեան եկեղեցիների հետ միաժամանակ և միասին ընդունած խորհրդի արարողու-

Թեան մէջ: Երկրորդ՝ միւս եկեղեցիներում վերջին կամ հիւանդաց օժման խորհրդի արարողութեան կատարման միջոցին ևս օժումն վերստին խաչանման տրուում է հիւանդի ճակատին, հոտոտելիքներին, ծնօտին, բերանին, թիկունքին և ձեռքերին. ուրեմն՝ Հայոց եկեղեցին չէր կարող այդ խորհրդի արարողութիւնը միացնել զրոշմի հետ. ըստ որում այդ դէպքում նա ստիպուած կլինէր երկուսի օժումները մէջ էլ կրճատուածներ անել. իսկ այդ ի՞նչ հիման վերայ և ի՞նչ դժուար պատճառի համար, դորանից 8—10 օրական երեսապի համար ի՞նչ օգուտ: Երրորդ՝ եկեղեցու այս կամ այն խնդրի նկատմամբ ունեցած բուն հայեացքն անվրէպ իմանալու համար պէտք է ուշ դարձնել նորա պաշտօնական կարգացոյց մատենաների վերայ: Թէ Հայոց եկեղեցին մկրտութեան վերջում մկրտուածին տուած օժումները զրոշմի խորհուրդ է հասկանում և ոչ հիւանդաց կամ վերջին օժման՝ վկայում է Մաշտոց գիրքը: Որքան չիշում ենք, Մաշտոցի հին ձեռագիրներին ոչ մէկի մէջ չկայ ասուած, թէ այս ինչ տեղերի օժումն զրոշմի խորհուրդ է, այս ինչ տեղերինը՝ հիւանդաց օժման: Նոյն իսկ աւելի յետին ժամանակի մի ձեռագրում, որն այժմ աչքի առաջ ունենք, և որ գրուած է Կարին քաղաքում Ժէ. դարի երկրորդ կեսում, մկրտութեան խորհրդի կարգից յետոյ գնում է զրոշմի խորհրդի կարգն այս խրատով. «Յետ այսորիկ կնքէ ս. իւղովն և ասէ զայս. — կնքեմ զքեզ ս. խաչիւս և զրոշմեմ ս. մեռոնաւս» (և այլն):

«Նախ զնակատն՝ ասելով. իւղ անոյշ (և այլն)»	Առանձին
«Սպա գաչան,            »            »	աղօթքներ
» Զակունչն,            »            »	խրատքան-
» Զհոտոտելիսն,       »            »	չիւրի հա-
» Զբերանն,            »            »	մար:
» Զափկիցն,            »            »	
» Զսիրան,             »            »	
» Զքամակն,            »            »	
» Զոտն,                 »            »	

«Եւ հաղորդեցուցանէ ի սուրբ խորհուրդն»:

Վերջին օժման չիշատակութիւն չկայ:

Նոյն ժամանակում (1667 թ.) Ս.մատերգամում տպագրուել է «Գիրք ս. Մաշտոցայ Վարդապետի, ծախիւք և սրբազրութեամբ Ոսկանայ վարդապետի և Արքի Եպիսկոպոսի Երևանցոյ»: Մաշտոցիս մէջ մկրտութեան կարգից յետոյ գալիս է «զրոշմ տալոյ» կարգն, որի մէջ երեսապի բոլոր տեղերն օժելը նոյնպէս համարուած է զրոշմի արարողութիւն:

1858 թ. Շուշի քաղաքում տպագրուել է «Ծիսարան որ կոչի Մաշտոց», «Հրամանաւ Հայոց Սիւնհոգոսին Արքոյ Կաթողիկէ Էջմիածնի»: Մաշտոցիս մէջ նոյնպէս մկրտութեան, զրոշմի և հաղորդութեան կարգերը յաջորդում են մէկ մէկի: Հիւանդաց օժման չիշատակութիւն չկայ. այլ կայ առանձին «Կանոն զիշերաժամու աղօթից՝ որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի բժշկութիւն ցաւոց և ի քաւութիւն յանցանաց». իսկապէս այն, ինչ որ եկեղեցին ընդունել և սահմանել է:

1807 թուին Կ. Պոլսում տպագրուել է «Մեծ Մաշտոց», որ մկրտութեան խորհրդի աւարտումից յետոյ գնում է այս ժանուցումը. «Եւ սկսանին երկրորդ, երրորդ և չորրորդ խորհուրդն. այսինքն՝ զրոշմին, վերջին օժման և հաղորդութեանն նոր մկրտելոց»: Այս Մաշտոցն օժումների դուրմարը «կարգ Դրոշմի և Վերջին օժման» համարելով՝ նակատի օժումն յանուանէ չիշում է իբրև զրոշմ. «Եւ կնքէ ս. իւղովն դնակատն (որ է սուրբ Դրոշմն) և ասէ. իւղ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի»:

Եթէ այդ խօսքերից պէտք է հասկանալ, թէ Մաշտոցի զրոշմ նանաչածը միայն նակատի օժումն է, իսկ մնացած տեղերինը՝ վերջին օժման արարողութիւն, կմնայ ուրեմն անկասկածաբար նկատել այդ տեղ հոռոմէական եկեղեցու վարդապետութեան ազդեցութիւն. ըստորում այդ եկեղեցին է, որ հաւատացեալի միայն նակատն է զրոշմում: Եւ յայտնի է, թէ Կ. Պոլսում ԺԹ. դարի սկզբում ազգային և հոռոմէական դաւանութեան Հայերի մէջ միութեան անունով զորպիսի բա-

նակցութիւններ և ժողովներ էին տեղի ունենում, և Հայոց պարտաբեր ինքնագլուխ, առանց ամենայն Հայոց հայրապետի դիտութեան և հաւանութեան սրբախի դիշողութիւններ էր յանձն առնում անել կրօնական մի քանի խնդիրներում:

Մեզ մնում է այժմ ուշադրութեան առնել մի կէտ ևս: Թէ Տաթևացու և թէ Ջահկեցու խօսքերից իմացանք, որ մեր եկեղեցին բացի վերջին օծման արարողութիւնը դրոշմի հետ կատարելուց՝ կատարում է և այլ նշանակութիւն ունեցող մի օծումն.— «որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ աղգք քրիստոնէից»: Ո՞րն է միւս եկեղեցիներում մկրտութիւնից յառաջ կատարուող օծումն:

Յունական եկեղեցին սովորութիւն ունի նախ օծել իւզով, չեռոյ մկրակ և մեռոնով դրոշմել: Այդ սովորութիւնն է, որի յամար Ջահկեցին, նոյն եկեղեցու առանձնական սովորութիւնները թուած միջոցին, ասում է. «Ջերեսայն ի ժամ «մկրտութեան կրկին օծանեն. մինն յառաջ քան զմկրտութիւնն փոքր մեռոնաւ, և միւսն յետ մկրտութեանն մեծա-«գոյն մեռոնաւ» (եր. 531): Փոքր մեռոն կոչուածն յատկապէս մկրակեց համար օրհնուող իւզն է: Կեղծ—Մակարի թղթում չիշուած «իւզ մկրակելոցն» էլ այդ է. բայց մենք տեսանք Իմաստասէրի Ատենաբանութեան մէջ զետեղուած Դ. յօդուածում մի ուրիշ օծումն ևս, «երախաչից» կոչուածն, որն իբր թէ կատարուել է Հայոց եկեղեցում նախ քան Օծնեցին այն միւսնոյն իւզով, ինչով որ կատարուում էր և «մկրակելոց» օծումն. այսինքն՝ Երուսաղէմից բերած ձէթով. իսկ չիշեալ հայրապետը սահմանում է (կան. Ժ.); որ քահանաները իրանք ամեն անգամ օրհնեն առանձին ձէթ՝ երախաներին և ի մկրտութիւն եկածներին օծանելու համար: Վերելում տեսանք, թէ օծումն երեսաչից և նորա իւզի օրհնութիւնն որ եկեղեցումն է սահմանուած: Հայոց եկեղեցին չէրնդունել ոչ «մկրակելոց», ոչ «երախաչից» և ոչ հիւանդաց օծման արարողութիւններն. ուստի և նորանց համար յատկացրած իւզերն էլ նորան անձանօթ են եղել: Այդ օծումների և իւզերի չփոխութիւնն է մեղանում, որ առիթ է տուել

հոռմէական քարոզիչներին Հայոց եկեղեցու մկրտութիւնը թերի անուանել: Կեղծ—Մակարի «կանոնական թուղթն» այդ է ակնարկում, ասելով. «Մի՛ ումեք լինել պատճառք «կորստեան... թերակատար ինչ կարգօք մկրտութեան... առ «ոչ ամել զամենայն կարգաւորութիւն ի վերայ մատուցելոցն «ի մկրտութիւն». իսկ ունիթօւներն իրանց աշակերտայններին կրկին մկրտում էին ասելով, թէ Հայոց մկրտութիւնը թերի է, ուստի և երկբայելի: Ահա այս հանդամանքումն էլ Գրիգոր Տաթևացու բացատրութիւնն երևում է զոհացուցիչ պատասխան տալու ժամանակակից ստիպողական հարկ. ապա թէ ոչ՝ ինչպէս ասացինք փոքր մի յառաջ, չկան հաւատացեալի մարմնի «այլ մասունք», որոնց օծումներն արտաքոյ լինեն դրոշմի խորհրդից, և համարուեն կամ «ի խորհուրդ (վերջին) օծման», կամ «յայնմ խորհրդոյ, որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ աղգք քրիստոնէից»: Ջահկեցու զտած միակ տեղն էլ—ոտքը—դարձեալ կապ չունի այդ օծման հետ. ոտքերն էլ օծուում են իբրև դրոշմի խորհրդի արարողութեան համար սահմանուածի մի մասը:

Յոյս ունենք, թէ վերոգրեալ բացատրութիւններից չետոյ դժուար թէ դարձեալ զտնուի մէկը, որ պնդելու լինի Իմաստասէր հայրապետի Ատենաբանութեան Դ. յօդուածի և Թ. Ժ. ԺԱ. կանոնների հարադատութեան վերայ:

Որովհետև մեր աշխատութեան այս մասը պիտի շատ ստուարանար, եթէ կամենայինք այն բոլորն ասել և աւարտել, ինչ որ ի նկատի ունենք, ուստի ակամայ ստիպուած ենք շարունակութիւնը թողնել Երկրորդ մասին:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՒՆՆԵՐ

1. «Եկեղեցին հաւանում էր պատկերչարգութեանն. և «այդ մասին պաշտօնապէս սահմանուած վարդապետութեամբ «հրաման չտալով հանդերձ՝ իւր հաւանութեամբն օգնում էր «նորա տարածմանը» (Веберъ, Всеоб. Ист. Ե. 220—21):

2. Ն. Յովնանեանցն (Պատմ. Տիեղ. Ժող. 471) ասում է, թէ Եղիզին յաշորղոյ ճշամ եղբայրը հրաման տուեց և վերստին «սուրբ պատկերք ըստ առաջին կարգի ի պատուի և ի մեծարանս եղեն». իսկ հ. Չամչեանը գրում է. «Բայց այս «սու ամենայնիւ ըստ առաջնոյ (Եղիզի) հրամանի ուր և «գտանէին պատկեր ինչ կամ արձան խորտակէին, այրէին և «ջնջէին, մինչև անհետ առնել և ի դրամոց զպատկեր թա- «գաւորի և լոկ զիր զրոշմել» (Ն. Բ. 420):

3. «Թէ որչափ աշխարհական բարձր դասակարգերի «մարդիկ կային պատկերամարտութեան սկզբնական շրջա- «նում՝ կարելի է նորանով իմանալ, որ երբ Լեոնը պատկեր- «ների խնդիրը վճռելու համար զուժարեց սենաթը՝ վերջինը «խանդավառ միաձայնութեամբ ընդունեց կայսրի պատկերա- «ջինջ առաջադրութիւնը» (Лебедевъ, Всел. Соборы, 2., 139):

4. «Չորրորդ և հինգերորդ դարերի ս. հայրերը բացա- «յայտ վկայել են այն օգտի համար, որը պատկերների դոր- «ծածութիւնը պիտի բերէր և բերել է բրիտանական դաս- «տիարակութեան և լուսաւորութեան դործում... Եկեղեցու «ուրիշ հայրեր պատկերներն օգտակար էին գտնում անգրա- «պէտ մարդկանց հաւատի մէջ հրահանգելու համար: Այդպի- «սի մարդկանց համար պատկերները կարող էին բռնել զբը- «քերի տեղը» (Անդ. 130):

5. Մուսուլմանների և ոչ-մուսուլմանների մէջ իրա- «ւունքների խտրութիւններ սահմանող օրէնքն անշուշտ արա-

բական խալիֆաներն իրանք էլ առնել կարող էին հռոմէական օրէնսդրութիւնից: Սկզբում՝ հեթանոսական մի կրօն դաւանող հռոմայեցիներն համար քաղաքացիական իրաւունքներն օգտուելու զանազանութիւնը չկար. իսկ քրիստոնէայ կախարհներն միջոցին հերետիկոսներն, հաւատուրացներն, հրէաներն ու կապաշաններն ենթարկուած էին շատ ճնշող սահմանափակումների, մանաւանդ կաշք ժառանգելու և վկայ լինելու իրաւունքի կողմից. միայն չորս անհատական ժողովների որոշումներն ընդունող քրիստոնէաներն էին անթերի փայլելով քաղաքացիական իրաւունքներ (Մակկենդի, 87):

6. Կեղրենոսը, Զօնարն և ուրիշ պատմիչներ Լեոն կայսրի անդուծ պատիժների շարքում զրել են և այն, թէ նա կամեցել է իրան համաձիա գարծնել ս. Սոփիա եկեղեցուն ձօտիկ գտնուած մատենադարանի (որ պարունակում էր երեսունվեց հազար հատոր) տասներկու ուսուցչապետներին և իրանց տեսչին. բայց նպատակի չհասնելով՝ այրել է տուել մատենադարանը, նորանում փակել տուած 13 դիանականների հետ միասին: Նէֆէլէն սուտ է գտնում այդ: Նորա ասելով՝ քանի որ Գրիգոր Բ. Թէոփանէս և Նիկեփորոս չեն խօսում Լեոն Իսաւրացու գործած այսպիսի մի ոճիրի մասին, — մինչդեռ պատմել են նորա բոլոր անդթութիւններն, — ուրեմն յայտնի երևում է, որ Կեղրենոսի և միւսների պատժածը պարզ հնարսփի մի զրոյց է: Յիշեալ դիանականը կարծում է, թէ այդ տեղ լոկ անուան վրիպակ է տեղի գտել, և Լեոն կախարին շփոթել են Զենոն կախարի հետ, որի թագաւորութեան օրով այրուեց այդ մատենադարանը 480 թուին և ոչ Լեոն կախարի օրով (Hist. des Conc. Գ. 262):

7. Աւթերորդ դարի հեղինակ Լեոնդ վարդապետն իւր Պատմութեան մէջ յառաջ է բերում Օմար ամիրապետի և Լեոն Գ. Իսաւրացու միջև տեղի ունեցած նամակագրութիւնն: Որովհետև կախարի նամակի մէջ երևում է և պատկերչարութեան պաշտպանութիւն, ուստի աւելորդ չենք համարում մեր կարծիքը յայտնել այդ նամակների հարադատութեան մասին:

Ըստ Լեոնդի՝ Լեոն Իսաւրացին Օմարին զրած նամակում հետևեալն է ասում պատկերների համար. «Այլ փասն պատկերի չունիմք այսպիսի կարծիս, զի ոչ ընկալաք իսկ ի զրօց այսպիսի պատուէրս: Թէպէտ և գտանեմք ի հնումն հրամայեալ Աստուծոյ Մովսիսի՝ ի խորանին վկայութեան առնել զնմանութիւն բերովբէիցն: Այսպէս և մեր փափա-

«զանօք աշակերտացն տեսան և նորին իսկ տեսան մարմնացելոյն սիրովն վառեալք՝ հաւաստեալ կենդանագրութեան և նմանագրութեան, որ ի նոցունց ժամանակաց առ մեզ եհաս՝ որպէս զկերպարանս իսկ նոցա յանդիման տեսանելով՝ զուարեացեալ փառաւորեմք զԱստուած, զՓրկողն զմեզ ի ձեռն «այսպիսի նմանութեամբ զգեցողին որդւոյն իւրոյ միածնի և «փառաւորողի զսուրբս իւր, և ոչ թէ փայտին և դեղւոյ նորա ի «վերայ փայտին՝ երկիրպազանեմք» (Պետերբ. 1887, 90—91):

Նանդ. պրոֆ. Գեր. Պատկանեանցը ուսուսերէն թարգմանել է. «Պատկերների մասին մենք այսպիսի կարծիք չենք ու. Խաչի մասին է ասել՝ չունենք. ըստորում ս. Գրքից այսպիսի պատուէրներ չենք ստացել. թէպէտև գտնուած ենք, որ հնումք Տէրն հրամայել է Մովսէսին բերովբէների նմանութիւններ շինել և դնել վկայութեան խորանի մէջ: Այսպէս էլ և մենք հետևելով Տիրոջ աշակերտներին՝ և փառուած սիրով դէպի մարմնացած Աստուածը՝ պահպանում ենք նորանց կենդանագրութեան նմանութիւններն, որոնք այն ժամանակից մեզ են հասել իբրև նորանց իսկական նմանագրութիւններ: Զուարեանալով փառաւորում ենք զՏէր, — մեր Փրկիչն և Աստուծու Որդին, որ զգեցաւ այսպիսի նմանութիւն, և որ փառաւորում է իւր սուրբերը: Մենք ոչ փայտին ենք երկրպագում և ոչ փայտի վրայի ներկին» (Ист. Халиф. եր. 64): Որովհետև ոչ Իսաւրացուն ժամանակակից և ոչ չեռադայ Յոյն պատմիչներից մէկն ու մէկը չէ յառաջ բերում այդ նամակներն, ուստի նորանց հանդիպող ուսումնականներին մնում էր վճռել մի խնդիր. — որքան փաստութեան արժանի կարող են լինել նորանք, քանի որ նորանց օրինակները մեզ հասցնողը լինում է միմիայն մի հայ պատմագիր:

Առաջին անգամ այդ նամակների վերայ մատնանիշ անողը հ. Իգ. Փափաղեանցն է, որ փաստանում է իբրև աղբիւր առնելով ասել. «Աւանդէ Լ. Վ. պատմագիր ութերորդ «դի դարուն եթէ՝ Օմար ամիրապետն հազարացւոց, որ թագաւորեաց յամին 717, չերկրորդ ամի կաշտերութեանն Լեոնի՝ խնդրեալ իցէ ի նմանէ տեղեկութիւն փասն քրիստոսական հաւատոց: Զխնդիր ամիրապետին կատարեալ Լեոնի, ազդու և զօրաւոր բանիւք ետ զրել զբովանդակութիւն «քրիստոսական դաւանութեան, զոր քաղուածոյ ի մէջ բերէ «նոյն մատենագիր: Յայնմ վարդապետութեան նշանակի համառօտիւ և յարգութիւն պատկերաց, որոց պատիւն և պաշտօն վերածին, ասէ, առ սկզբնատիպն և ոչ յարուեստա-

«կերտն: Այս աւանդութիւն չերևի յարտաքին մատենագիրս «այնր զարու վասն Լեոնի, թերևս զանց արարեալ իցեն «զայնու՝ սակս յետին ապիրատութեանց նորա» (Պատմ. Եկեղ. եր. 334):

Օտար զխոնականներից երկուսն են կարծիք յայտնել Օմար—Լեոնեան նամակների մասին. զորանցից մէկը, պ. Մօլը (Mohl) կասկածել է նորանց հարադատութեան վերայ. իսկ պ. Եզուարդ Մուրալը, որ Մ. Բրոսսէ-ի խնդրելով կազմել է մի զեկուցումն, ընդունում է իսկականներ: «Այն նամակն, «ասում է նա, որ Օմարը զընել է Լեոն Իսաւրացուն, նորան իսլամ «մութեան դարձնելու համար, համաձայն Թէոփանէս Ժամանա- «կազրի վկայութեան, պահպանուել է, ինչպէս և Եւսեբիոսի Ժա- «մանակագրութիւնը, հայ թարգմանութեամբ, քրիստոնեայ «կայսրի մի շատ ընդարձակ և շատ կարևոր պատասխանի «հետ միասին: Պարտք ենք համարում ուսումնական աշխար- «հի ուշադրութիւնը դարձնել Բիւզանդական պատմութեան «թերին լրացնող այդ թղթակցութեան վերայ, որ հետաքրք- «րի է նաև այն կողմից, որ նորածին իսլամի քրիստոնէու- «թեան մասին արած այս առաջին ըննադատութիւնն ամեն «Ժամանակում կրկնել են թէ մահմեդականներն և թէ թերա- «հաւատ քրիստոնեաներն անգամ: Հետաքրքիր է տեսնել, թէ «ի՞նչպէս այդ ընդդիմաբանութիւնները զրում է մի կայսր, «որ ինքն էլ արատաւորում է հերետիկոսութեան մեղքով՝ «պատկերչարգութեանը ցոյց տուած հակառակութիւնով, «որը սակայն 720 թուականից յետոյ յայտնուեց. մինչդեռ «վիճաբանութիւնն Օմարի հետ տեղի է ունեցել իւր թագա- «ւորութեան երկրորդ տարում (717—718). այն Ժամանա- «կին, երբ Սրարները սպառնում էին տիրել Կ. Պօլսին, որին «արգելք եղաւ Լեոնի քաջութիւնը, Լեոնի՝ որ այն միջոցին «դեռ բարեպաշտ էր անուանւում... Իսկ ս. Գրքից մեծ քա- «նակութեամբ բերուած վկայութիւնների մասին պիտի ա- «սենք, որ նորանք մեզ թուում են ոչ միշտ ըստ պատշաճի «կարգուածներ և ոչ ազգու ապացուցական նշանակութիւն «ունեցողներ» (Ист. Халиф. Манахзаран. IX—X):

Հայ զխոնականներից Բ. Պատկանեանցն և Մ. Էմիրն \*) նույնպէս ընդունել են այդ նամակների իսկականութիւնը: Յառաջ ենք բերում Պատկանեանցի կարծիքները. «Պ. Մօլ, «որին Նահնապարեանցը ցոյց է տուել այդ նամակը (կայս-

\*) Всеобщ. Ист. Варм. Великаго, Уаило. ер. 122—123:

«րինը), կասկածում է նորա իսկականութեան մասին. մենք «մեր կողմից պատճառներ չենք գտնում կասկածելի համարե- «լու», ասում է նա, և ցոյց է տալիս թէ ի՞նչ հիմքեր է գտնում այդպէս համոզուած լինելու համար: Այդպիսի հիմքերն են.

1. «Թէ Լեոն Գ. Օմարի հետ ունեցել է թղթակցութիւն «կրօնական բովանդակութեամբ—պատմական փաստ է. ըստ- «րում այդ մասին չիշում է Թէոփանէսը. նույնպէս և Կեղրենոսը:

2. «Բացի Լեոնից այդ զրազրութեան մասին խօ- «սում են նաև ուրիշ հայ հեղինակներ: Թովմա Արծրու- «նին, որ ապրել է Ժ. դարի վերջում, ասում է. «Ումառ «որդի Աբդլապիդա... ազնուագոյն եղեալ քան զամենեսին, «զրէ թուղթ հաւատոց առ Լեոն կայսր Յունաց, և ընկա- «լեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ ան- «տի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն» (եր. «105): Վարդանն ոչ միայն չիշում է այս թուղթն, այլ և «կարգում է իւր Պատմութեան մէջ նորա համառօտ բովան- «դակութիւնը: \*) Կիրակոսը զրում է. «Սա (Ումառ) զրեաց «առ Լեոն կայսր տեղեկանալ վասն քրիստոնէական ուսմանցս. «և կայսրն զրէ պատասխանի լի իմաստութեամբ, կարի «ձաղելով զօրէնս նոցա: Եւ իբրև ընթերցաւ Ումառ՝ ամա- «չեաց յոյժ, և սկսաւ զգարչելիսն ի դուրս հանել յօրինացն «իւրեանց, թէպէտ ոչ համարձակեցաւ զամենայն եղծանել, «սակայն բազում ինչ ուղղացոյց յանկարգիցն, և այնուհետև «բարեմտութեամբ հայր առ ամենայն քրիստոնեայս»: Այս «բոլորից երևում է, թէ երկու թուղթն էլ կային Ժ. դա- «րում հայերէն լեզուով:

3. «Այդ նամակի իսկականութեան յայտարար մէկն էլ «այն է, որ նորանում Ժամանակագրական վրիպակներ չկան, «որոնցից զԺուար կլինէր ազատուել, եթէ նամակը չետոյ «Ժամանակում գրուած լինէր:

4. «Որ այդ նամակը Լեոնի յօրինածը չէ՝ երևում է և «նորանցից, որ պատահում են նորանում մի քանի հակասու- «թիւններ Լեոնի իւր զրքում ասածներին: Այսպէս՝ նա «կարծում է, թէ Սասանեանների թագաւորութիւնը տևել է

\*) Վարդանը Լեոնի նամակի մի կէտն է միայն յառաջ բերել և ոչ ամբողջ նամակի բովանդակութեան համառօտութիւնը. Վարդանի ասածն այս է. «Յայնմ Ժամանակի զրեաց Ումար առ Լեոն կայսր շատ ինչ քանս, և զայն ևս, թէ լուեալ է մեր թէ եօթանասուն և երկու բաժին են քրիստո- նեայր: Նա զրեաց պատասխանի թէ երկուսասն են. Յոյնք, Հոռոմք» և այլն (եր. 73):

«401 տարի, իսկ նամակում ասուած է թէ՛ Պարսից թա-  
«գաւորութիւնը դոյութիւն է ունեցել 400 տարի:

5. «Որ այդ նամակը չունարէն է գրուել և հայերէնի  
«թարգմանուել՝ նորանից է երևում նախ՝ որ ամբողջ նամա-  
«կի լեզուի ոճն ու չունաբանութիւնը թարգմանութիւն է  
«մասնացոյց անուծ. երկրորդ՝ որ ս. Գրքից բերուած վկայ-  
«ութիւններն այնպէս չեն, ինչպէս հայերէն Աստուածաշուն-  
«չի մէջ, այլ նոր թարգմանութիւն չունարէնից, որ այնքան  
«էլ չաչող չէ. երրորդ՝ որ նամակի մէջ պատահում են չու-  
«նական բառեր, եւքառիստէ, պարակղիտոս, միւսինոս և  
«այլն, որոնք բնաւ դործածական չեն հայ լեզուի մէջ և հեղ-  
«տութեամբ կարող էին փոխարինուել հայ բառերով: Այս  
«ամենից երևում է, որ թարգմանիչը կատարելապէս հմուտ  
«չէ եղել յոյն լեզուին»:

Պատկանեանցի կարծիքով՝ նամակը «հայերէնի թարգ-  
«մանուել է իսկոյն, գրուելուց չետոյ, թերևս Կ. Պոլսում,  
«ուր պալատի աստիճանաւորների մի նշանաւոր մասը հայ-  
«երից էր բաղկացած. կամ զուցէ և Դամասկոսում, ուր չաչ-  
«աստանի լաւագոյն մարդկանցից հաղարաւորներ կային իբրև  
«պատանդներ» (Ист. Халиф. Յառաջ. I—X):

Մեր համեստ կարծիքով՝ Օմար—Լեոնեան թղթակցու-  
«թիւնն այն պարզ կեղծիքներէն է, որոնց նմաններով հա-  
«րուստ են միջնադարեան պատմական և վարդապետական  
«գրուածներն. և անա թէ ինչո՞ւ այսպէս ենք կարծում.

1. Միակ յոյն հեղինակն, որ ասում է, թէ Օմարը Լեոնի  
«հետ թղթակցութիւն է ունեցել կրօնական բովանդակու-  
«թեամբ՝ Թէոփանէս վանահայրն է (թողնում ենք Կեղրենո-  
«սին, որ ԺԱ. դարի հեղինակ է և կրկնել է միայն առաջինի  
«խօսքերն): Թէոփանէսն ապրել է Լ. դարի երկրորդ կեսում  
«և վախճանել է 818 թուին: Ասել է թէ՛ նա Լեոնին ժամա-  
«նակակից հեղինակ համարուել չէ կարող, երբէք էլ կայսերա-  
«կան պալատի և դիւանի երես չէ տեսել. և հալածուած է  
«եղել իբրև պատկերասէր կրօնաւոր. ուրեմն նորա ժամանա-  
«կազրութիւնն իբրև աղբիւր՝ առանձին վստահութիւն ներ-  
«կայացնել չէ կարող:

2. Նպատակն, որ տրուած է այդ թղթակցութեան  
«—թէ Օմարը կամենում էր Լեոն կայսրին իսլամութեան  
«դարձնել—ծիծաղելի է. և շատ միամտութիւն կլինէր հա-  
«ւատալ, թէ Օմարն այնքան թեթեամիտ կամ անմիտ  
«մէկն է եղել, որ այդպիսի ձգտումն է ունեցել քրիստո-

նեայ մի կայսրի նկատմամբ: Վերջինս էլ իւր կողմից այնքան  
«պարզամիտ մէկն է եղել, որ ամիրապետի նպատակը չհաս-  
«կանալով, կամ թէկուզ հասկանալով հանդերձ՝ պարտք է հա-  
«մարել մահմեդական ամիրապետի մոլորութիւնները քրիստո-  
«նէական կրօնի մասին զրել այն զրքի վկայութիւններով, որը  
«հակառակորդը չէ ընդունում իբրև հեղինակութիւն:

3. Հնարաւոր է հաւատալ, թէ այն ժամանակում, երբ  
«Սրաբացիները թշնամական յարձակումներ գործելով կայսրու-  
«թեան վերայ՝ կամենում էին տիրել մայրաքաղաքին, և Լե-  
«ոնն իւր բոլոր ուշ ու միտքը դարձրել էր պատերազմական  
«պատրաստութիւնների վերայ,—այդպիսի մի ժամանակում  
«ամիրապետը նամակ է գրում կայսրին, այն նպատակով, որ  
«քրիստոնէական կրօնի ստութիւնը ցոյց տալով՝ նորան հա-  
«մողի իսլամութիւն ընդունել. իսկ կայսրն էլ աստուածաբա-  
«նական բոլոր ճիշդ գործ է դնում հերքելու նորա հակաճա-  
«ռութիւնները:

4. Ենթադրենք, թէ այդպիսի բովանդակութեամբ թղթ-  
«թակցութիւն տեղի է ունեցել. և մինչդեռ ոչ մի Յոյն մարդ  
«չէ մտածել նորանց պատեհէններն ունենայ և ապագային ա-  
«ւանդել, մի հայ է դանուել կամ Կ. Պոլսի արքունիքի պաշ-  
«տօնեաններից կամ Դամասկոսի նշանաւոր պատանդներից, որ  
«հասկանալով նորանց պատմական և կրօնական նշանակու-  
«թիւնը, թարգմանել և պահել է օրինակները. բայց չէ՞ որ  
«այդ դէպքում դնահատուած կլինէր երկու կողմի թղթակ-  
«ցութիւնն ևս. հապա ինչո՞ւ չէ պահպանուել կամ չառաջ չէ  
«բերուել Օմարի նամակը: Ինչ որ Լեոնը իւր Պատմութեան  
«մէջ տալիս է, նամակ չէ, այլ իբրև թէ նորանից արուած  
«համառօտ» քաղուածք (Պատկանեանցի կարծիքով՝ այդ իս-  
«կական նամակն է, միայն թէ ոչ ամբողջութեամբ մեզ հասած.  
«եր. VII): Անցնենք այժմ նամակների բովանդակութեան և  
«ընտրոջ յատկութիւններին:

5. Երկու ինքնակալներ թղթակցութիւն են ունենում  
«միմեանց հետ՝ միանգամայն մոռացած ընդունուած պատուա-  
«պահութեան, մեծարանքի և պատշաճութեան սովորութիւն-  
«ներն ու կանոնները. մէկը նամակն ուղղում է դիմացինին  
«սոսկ «Լեոն կայսր հռոմոց» տիտղոսով. միւսը պատաս-  
«խանում է. «Օմարայ Սարակինոսաց առաջնորդին»: Մէկը  
«հարցմունքներ է տալիս, միւսը պատասխանում է նորան  
«պինդ հայհոյելով: Սակաւ չեն կայսրի նամակի մէջ այսպիսի  
«խօսքեր. «Թէպէտ հպարտացեալ ես բռնակալութեամբ»:

— «Զխմրդ ընդ յայտնութիւնդ ոչ ամաչէք»։— Կամիս զի ստու-  
թեանդ քո ընկե՞ր գտանէիր»։— «Զխմրդ զայսպիսի անազին  
հայհոյութիւն... խօսել ոչ պատկառես»։— «Թէ արդարեւ մարմ-  
նեղէն և ոչ քարեղէն ունիս երեսս՝ ամաչես ընդ այսքան  
յայտնութիւնս յայտնի ստութեանդ»։

Եւ բանից դուրս է դալիս, որ երկուսն էլ դարձեալ կա-  
րողացել են այսպիսի համեմած նամակներ միմեանց զրել և  
ստանալ. ըստորում Լևոնի նամակն ասում է. «Սասցեր գրո-  
վըն քով թէ բազում անդամ գրեցաք առ ձեզ»։

Մէկը, ամիրապետը գրում է քրիստոնեաների Սւետա-  
րանի քննադատութիւնը, բայց ոչ ինքն է ծանօթ Սւետա-  
րանին, ոչ էլ զգուշացել է ճիշդ տեղեկութիւններ ստանալ  
նորա մասին իւր արքունիքում ելեմուտը ունեցող ուսեալ  
քրիստոնեաներից, — նեստորականներից, կամ հաղարներով իրան  
շրջապատող մահմեդականացած քրիստոնեաներից. այնպէս  
որ հէնց առաջին հարցովն իրան ծաղրելի գրութեան մէջ է  
գնում, երբ ասում է. «Վասն էր ասաց Յիսուս առ աշա-  
կերտսն, թէ՛ մերկ եկիք և մերկ դառնայք». և նորան պա-  
տասխանում է, թէ Յիսուս այդպիսի բան չէ ասել: Բայց  
նորանից պակաս անդուշ և պակաս ծաղրելի չէ լինում և  
գիմացիներ, Բիւզանդիայի կայսրը, որ յանձն առնելով մահ-  
մեդական ամիրապետին՝ քրիստոնեաների ս. Գիրքը չընդու-  
նողին, չին և Նոր կտակարանի բազմաթիւ վկայութիւննե-  
րով համոզելու ջանքը, չէ յանձնում դոնէ մայրաքաղաքի ձե-  
ռընհաս եկեղեցականներից մէկն ու մէկին պատշաճաւոր վկայ-  
ութիւնները ցոյց տալ. ուստի և «գործադրում է յանախ  
անակղի վկայութիւններ»։

6. Եթէ ասում լինէր, թէ Օմարը Լևոն կայսրին հարց-  
մունք է տուել աստուածային անձանց երրորդութեան, խաչի,  
մասանց և պատկերների պաշտամունքների մասին, և այլն, դեռ  
հասկանալի կլինէր. իսկ արքայութեան, դժոխքի և վերջին  
չարութեան մասին հարցնելու կարիք նա չէր ունենայ, ըստ  
որում ինքը մահմեդականութիւնն էլ ընդունում է այդ հա-  
ւատալիքներն իբրև կրօնի հիմնական վարդապետութիւններ.  
հետևաբար՝ մի ամիրապետ ոչ կկարօտէր մի քրիստոնեայ  
կայսրից «գասուղութիւնն» լսելու, և ոչ իրան կներէր այդ-  
պիսի խնդիրների մասին առարկութիւն անել ծաղրելու  
մտքով:

7. Սրղեօք մի կայսրի նամակում գետեղուել կարող էին  
սխալաստիկային յատուկ այսպիսի խօսքեր. «22 են արարածք

Սստուծոյ, զորս ի սկզբանն ի 6 աւուրս գործեաց. 22 դիրք  
աստուածայինը, նոյնքան և թիւ այլաբեւոյցն նոցա»։

8. Ի՞նչ է նշանակում 717—718 թուին նամակ գրող  
կայսրի ասելը «ութհարիւր ամբ են, փոքր ինչ պակաս  
կամ աւելի, յորմէ (հետէ) Քրիստոս երևեցաւ»։ Եթէ «մի-  
այն փոքր ինչ պակաս» ասում լինէր, մասամբ հասկանալի  
կլինէր. իսկ «կամ աւելի» ասելը:

9. Ասում են (Մուրալի, Պատկանեանց), թէ Լևոնը  
պատկերների պաշտպան է եղել այն ժամանակին, երբ դեռ  
«բարեպաշտ» էր, իւր թագաւորութեան երկրորդ տարում.  
Իսկ հայածող չետոյ դարձաւ: Սակայն պէտք է մոռանալ  
որ նախ՝ պատկերատեսաց ուղղութիւնը բոլոր զասակարգերից  
աւելի յունական դորքի մէջ էր տարածուած. և Լևոնն երկա-  
րամեայ ժառանգ զինուոր էր, երբ կայսերական զահր բարձ-  
րացաւ. ուրեմն նա ոչ հետը բարեպաշտական համոզմունք  
կարող էր բերած լինել, ոչ բերելուց չետոյ այնքան շուտով  
թողնել. երկրորդ՝ եթէ նա այդպիսի պաշտպանողական խօս-  
քեր զրած լինէր պատկերների նկատմամբ, և մահմեդական  
ինքնակալին յայտնած, թէ պատկերների ծագումն սկսում է  
նոյն իսկ չին կտակարանով, իսկ Նոր ուխտին նոյն իսկ  
Քրիստոսի աշակերտներն են պատկերներ տուել ճշգրիտ նմա-  
նահանութեամբ—այդպիսի պաշտպանութիւնը ծածուկ չէր  
մնայ. և երբ նորա ընթացքին դիմադրող երկու նշանաւոր  
եկեղեցականները (թողնենք միւսներին), Կ. Պօլսի Գերմանոս  
կատարիսրքն և Հռոմի Գրիգոր պատյը աշխատում էին վկայ-  
ութիւններով հաստատել պատկերաբողութեան վաղեմի մուս-  
քըն և վաւերականութիւնը, կայսրի հետ խօսելիս, մինը բե-  
րանացի, միւսը զրաւոր, մի անդամ էլ գոնէ չիշեցրած կլի-  
նէին նորան իւր գրածը:

Վերոգրեալ հիմքերի վերայ Օմար—Լևոնեան չիշեալ նա-  
մակադրութիւնն աներկբայօրէն անհարազատ հանաչելով՝  
չենք կարող որոշակի ասել, թէ ո՞ր ժամանակի և ո՞ւմ գործն  
է լինելու. բայց ենթադրում ենք, թէ հաւանօրէն յօրինուած  
է լինի թ. դարում և հայաստանի յունական բաժնի հայ-  
պիտի լինի թ. դարում և հայաստանի յունական բաժնի հայ-  
հոռոմ կրօնաւորներից մէկի ձեռքով: Հեղինակը կամեցել է իւր  
զրուածը Լևոն կայսրի դորձ ընդունել տալ, որպէս զի մահ-  
մեդականների յայտնի ամիրապետին պտպանեցնողը Լևոն  
Գ. կայսրը լինի. բայց նորա թագաւորութեան ժամանակը  
հաստատապէս չէ իմացել. ուստի նամակում Քրիստոսի երե-

ուսմն կարծիքով դրուած է «ութհարիւր ամբ, փոքր ինչ պակաս կամ աւելի»:

Հեղինակին մօտաւորապէս ճանաչելու չենակէտ տալիս են նախ՝ նամակի լեզուի ոճն և յունաբանութիւնն. երկրորդ՝ ս. Գրքից բերուած վկայութիւններն, որոնք մեծ մասամբ նոր թարգմանութիւններ են և ոչ Հայ թարգմանութիւնից առած. երրորդ՝ զործ դրուած յունական բառերը.— եւքարիստէ, պարակղիտոս, միւռինոս և այլն: Կեղծիքը կատարելուց չետոյ պէտք էր զեանդել այնպիսի հեղինակի դրուածքում, որպիսին Աւոնդն էր, որի թէ ժամանակը, թէ պատմութեան նիւթը բոլորովին ապահովացնել կարող էին դադանիքի պահպանութիւնը: Թէ արդարեւ այդ նամակն չետոյ են զեանդել Աւոնդի Պատմութեան մէջ, և զեանդելու պատճառով փոփոխութիւն են արել չիշեալ Պատմութեան դիսակարգութեան: մէջ՝ մատնացոյց է անուծ ժե. գլուխը. «Եւ դաչս ի պատեհն պատասխանուց գրեալ կաշտերն Աւոնի՝ առաքէ ի ձեռն միոյ հաւատարիմ ծառայի իւրոյ» և այլն.— 13 տող բան, որ իսկապէս առանձին գլուխ կազմելու կարևորութիւն չունի, այլ միայն նոր առում նոյն գլխի շարունակութիւնը պիտի լինէր: Բայց վերագրեալից կայ և լեզուի զանազանութիւնը Աւոնդի Պատմութեան և այդ նամակների մէջ:

Ի՞նչն է եղել այդ կեղծումի նպատակը:

Յայտնի է, որ Արաբացիները սիրում էին քրիստոնէաների հետ խօսել, վիճել կրօնների առաւելութիւնների և թեութիւնների վերայ. երբեմն պարզապէս հարցմունքներ տալ տարակուսական խնդիրների նկատմամբ: Այսպիսի դէպքերում՝ երբ վիճաբանութիւնը տեւական բնաւորութիւն է ստանում, անցնում է գրականութեանը. գրական ձեռնհաս մարդիկն են շառաջ դալիս պաշտպանելու մի կողմն և զինաթափ անելու միւրը: Բայց հնութեան ոգին, որ մինչև այսօր էլ ապրում և իշխում է սահմանափակ մտքերի վերայ, խօսքի և զրչի վիճաբանութեան մէջ էլ իւր ճաշակի այն պահանջն էր դրնում, ինչ որ ֆիզիքական բմբշամարտութեան մէջ: Ամբոխն այն ժամանակն է հիանում, ծափահարում, երբ երկու մենամարտողներից մէկը պինդ ուժով միւսին գետնին է դարնում: Գրչի մարդու խօսքն էլ այն ժամանակը զին ունէր, երբ շատխօսութիւնն իբրև դիտութիւն՝ և հայհոյելու կոպտութիւնն իբրև բարոյական իրաւունքի առաւելութիւն՝ միւսի լեզուն կապէր, պապանձեցնէր: Ճիշդ այդ տեսակ վիճաբանու-

թիւններից մէկն է չիշեալ կեղծ թղթակցութիւնն, և նոյն ամբոխային ճաշակի պահանջով դրոշմուած: Մէջ տեղում երեւում է մի քանի թույլ և կցկտուր հարցմունքներ տուող մահմեդական. իսկ նորան բնդդիմաբանում է քրիստոնէայ հռոռոմախօս կրօնաւորը ս. Գրքի վկայութիւնների հոխ պաշարով. բայց վկայութիւնների բուն իմաստներն և պատշաճ գործադրութիւնը նորա հասկացողութիւնից վեր է. այդ թեութիւնը ծածկուած է հայհոյելու մեծ կարողութիւնով:

Թէ արդարև չիշեալ նամակը ժամանակակից ամբոխին հիացումն է պատճառել իբրև քրիստոնէայ նշանաւոր կաշտի չաղթելու և մահմեդական անուանի ինքնակալի չաղթահարուելու ապացոյց՝ կարելի է հասկանալ այն նշանակութիւնից, որով ամբոխը զարդարել է այդ նամակն, և որը ժամանակի բնթացքում արտացոլացել է ամբոխի հասկացողութեան մօտիկ կանգնած Հայ պատմիչների գրուածներում: Արդէն ժ. դարի հեղինակ Թովմա Արծրունու համար Աւոն կաշտի նամակն ազդու է եղել, որ ստիպել է Օմարին Աւրանը սրբազրել, դուրս ձգել շատ բաներ, որոնք «առասպելադոչն» են եղել: Իսկ ժ. դարում Կիրակոս Գանձակեցին աւելին է իմացել.— կաշտը իմաստութեամբ լի նամակը գրելով Օմարին՝ այնպէս ձաղել է նորանց կրօնն, որ ամիրապետը կարգալուսն պէս սաստիկ ամաչել է, և սկսել է իրանց օրէնքից (Աւրանից) դուրս ձգել «ղգարչելիսն» և անկարգ բաներից շատերն ուղղել, Հիւստոնիւնով բոլորը շնչել:

8. Չնայած՝ որ ժողովն ինքը բացարձակ բանադրում է սրբոց բարեխօսութիւնը չընդունողներին, այսու ամենայնիւ եղան ասողներ, թէ նա մերժել է սրբոց բարեխօսութիւնն և ս. մասանց պաշամունքը: Թէև Հէֆէլէն (կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս) այդ ժողովի մասին խօսելիս տեղ տեղ չէ պահպանում լրջութիւն (օրինակ՝ թէ Սնաստասի մահից չետոյ Կ. Պօլսի աթոռի թափուր լինելը նպաստեց կաշտի մտադրութեան չաղողութեանն, ըստորում փառասիրութիւնն, որ բոլոր եպիսկոպոսներին ձգտել էր տալիս պատրիարքական զահր ձեռք բերելու, խիստ խնդրական էր դարձնում կաշտին զիմադրելու որևէ մտադրութիւն, Գ. 297), բայց և այնպէս վերոյիշեալի առիթով ասում է. «Libellus synodicus պատմում է, թէ Կոստանդին կաշտը այդ սինօդի մէջ խափանել է տուել սրբոց բարեխօսութիւնն և մասանց երկրպագութիւնը: Ս. Ստեփաննոսի կենսադրութիւնն էլ ասում է, թէ սինօդը անարգեց սուրբերին և Տիրոջ անարատ մօրն, իբր թէ

նորանք բնաւ չեն կարող մեզ օգնել իրանց մահից չեաոյ: Սա-  
կայն վերագոյն տեսանք, թէ չարաժողովի (conculiabile) նը-  
ղովքներից մէկն էլ ուղղուած էր նորանց դէմ, որոնք պա-  
խարակում էին առ (կոյսն) Մարիամ աղօթելն և մերժում  
նորա բարեխօսութիւնը: Հաւանական է, որ այդ արգելքները  
կայսրը դրած լինի աւելի անաղան. իսկ չետազաները սխա-  
լուելով՝ անիրաւացի կերպով յատկացրել են սինօղին» (Գ. 305):

Ինչ որ այստեղ հեղինակը հաւանօրէն է ընդունում, փոքր  
ինչ ներքև չիշատակում է իբրև անկասկածելի իրողութիւն,  
ասելով. «Միայն պատկերները չեղան կայսրի զայրոյցքի նշա-  
ւակածները. Կոստանդինը նոյնպէս վարուեց և մասունքների  
հետ. ամենուրեք, ուր որ կարողացաւ, մասունքները վերաց-  
նել տուեց: Թէոփանէսը պատմում է ի մասնաւորի, թէ նա  
գերեզմանից հանել տուեց ս. Եփիմիայի մարմինն, որ Քաղ-  
կեդոնում իւր անուանը նուիրած նշանաւոր եկեղեցումն էր,  
ու մեծ պատուով ընդունուած. և զազաղով միասին ծովը  
նետել տուեց, իսկ եկեղեցին էլ վերջում զինարան զարծրեց:  
Առ սուրբս ուղղուած աղօթքները խսաիւ արգելուեցին»  
(Գ. 316):

Սակայն հաւատալ զժուար է, թէ Կոստանդինի կայս-  
րութեան միջոցին Բիւզանդական եկեղեցու մէջ որպիսի և  
իցէ պաշտօնական հայածանք շարուցուած լինի սրբոց մա-  
սանց և բարեխօսութեան դէմ: Եթէ կայսրը այդ արած լի-  
նէր նախ քան Կ. Պօլսի ժողովի դուժարումն, վերջինիս սահ-  
մանած նդովքը կայսերական հաւանութեան և հաստատու-  
թեան չէր արժանանայ. իսկ զնել, թէ այդ արուած լինի  
աւելի ուշ, ինչպէս չէֆէլէն է կարծում, կնշանակէր առանց  
որեւէ պատմական փաստի ասել, թէ Կոստանդին կայսրը իւր  
զուժարած ժողովի նշանակութիւնն և իրանից հաստատուած  
կանոնները խափանել, ոչնչացրել է: Միակ հաւանականն այն  
է, որ ս. Եփիմիայի շիրիմն, երևի, ամբօխի համար ծայրա-  
յեղ երկրպագութեան առարկայ էր դարձած եղել, ուստի  
հարկ է եղել այն տեղից հանել և մի ուրիշ տեղ թաղել.  
բայց երբ ամբօխը շարունակել է նոյն պաշտամունքը նուի-  
րել նորա գերեզմանի տեղին և հողին՝ ստիպուած են եղել  
եկեղեցին էլ փակել զիճոյ ամբօխի առաջ՝ զինարանի վերա-  
ծելով: Եւ պէտք չէ դարձանայ, եթէ Թէոփանէսն ասում է,  
թէ ս. Եփիմիայի մարմինը կայսրի հրամանով ծովը նետե-  
ցին: Նորա հօր՝ Լևոն կայսրի համար էլ դրել են, թէ Կ.  
Պօլսի թանգազին դրասունն իւր 13 ուսուցչապետներով

միասին այրեց. որ, ինչպէս տեսանք, չունի որեւէ նշմարա-  
նամանութիւն: Թէոփանէս վանահայրը Նիկիայի Երկրորդ  
ժողովում ներկայ գտնուողներից է, և հայադղի Լևոն կայս-  
րի հրամանով արքայուեց Սամոտրակէ կղզին, ուր և մեռաւ  
818 թուին: Ս. Եփիմիայի մարմինն երևի փոխադրուած է  
եղել Լեմնոս կղզին, որտեղից չեաոյ Իրինէ կայսրուհու հրա-  
մանով կրկին բերուեց և ամփոփուեց Քաղկեդոնում. և ոչ  
թէ ծովն է նետուել ու ալիքներն են տարել հանել չիշեալ  
կղզին, ինչպէս Թէոփանէսից առնում և ասում են չէֆէլէն  
և ուրիշները:

9. չէֆէլէն Ոսկերեանի խօսքերի մէջ փոփոցներ,  
շուկաներ և ճանապարհներ չէ գնում: Նա ասում է. «Հայ-  
րերի վկայութիւններն սկսուեցին Յովհ. Ոսկերեանի ի սուրբն  
Մելիտոս դրած դովեստի ճառով, որի մէջ ասուած էր թէ  
հաւատացեալներն ամենուրեք զետեղել էին այս սուրբի պատ-  
կերն իրանց մատանիների, իրանց բաժակների, իրանց տաշ-  
տերի և իրանց պատերի վերայ» (Գ. 256—57):

10. Թէ Կոստանդին Գ. համոզմունքով որքան պատ-  
կերչարգութեան պաշտպան էր՝ ցոյց է տալիս հետևեալը:  
Նորա մայրը՝ Իրինէն ինքը որդուն նշանադրած լինելով  
Քաղկիայի Լուչովիկոս արքայի հոռթրիզա աղջկան հետ, Նի-  
կիայի ժողովից մի քանի ամիս չեաոյ, յայտնի չէ ի՞նչ պատ-  
ճառով՝ ստիպեց որդուն մերժել այդ նշանադրութիւնն և  
ամուսնացրեց նորան, հակառակ նորա կամքի, հայադղի Մա-  
ամուսնացրեց նորան, հակառակ նորա կամքի, հայադղի Մա-  
մի քանի տարուց չեաոյ Կոստան-  
դինն հեռացրեց Մարիամին և փակեց մի վանքում իբրև  
կրօնաւորուհի. իսկ ինքը կին առաւ պալատի նաժիշտ Թէո-  
դոտային: Երբ որ Տարասիոս պատրիարքը հակառակ զտնուեց  
կայսրի այս կանոնընդդէմ ամուսնութեանը՝ Կոստանդինն  
սպառնացաւ վերստին հանել, հեռացնել պատկերները (Hef.  
Գ. 388): Պատրիարքը լուեց. և մի քահանայ կատարեց կայս-  
րի պսակադրութիւնը:

11. Ն. Յովնանեանցի ասելով՝ Նիկիայի Բ. ժողովի ար-  
ժանադրութեան մէջ չիշուած են չեաոգալ եկեղեցականներն  
«ի հայաստան աշխարհէս.—Վարդան եպիսկոպոս Տարօնոյ,  
Սղէքսանդր եպիս. Սմատունեաց և երէց մի Գրիգոր անուն»  
(Պատմ. Տիեզ. ժող. 493):

12. «De meme qu'une faute entraîne d'autres, de  
meme l'herésie des calomniateurs des impiétés. On n'a pas

seulement enlevé les saintes images, on a aussi mis de côté plusieurs pratiques ecclésiastiques qu'il est nécessaire de remettre en honneur. Nous ordonnons donc que, dans tous les temples qui ont été consacrés sans avoir de reliques, on en place maintenant avec les prières accoutumées. Si, à l'avenir, un évêque consacre une église qui n'a pas de reliques, il devra être déposé» (Héf. Hist. des Conc. 7. 373):

13. «За нечестивою ересію клеветниковъ на Христіанство послѣдовали и инныя нечестія. Ибо какъ зракъ честныхъ иконъ отъяли у Церкви, такъ оставили и другіе нѣкіе обычаи, кои подобасть возобновити, и тако содержати, по писанному и неписанному законоположенію. Сего ради, аще которые честные храмы освящены безъ святыхъ мощейъ мученическихъ, опредѣляемъ: да будетъ совершено въ нихъ положеніе мощейъ съ обычною молитвою. Аще же отнынѣ обрящется нѣкій епископъ, освящающій храмы безъ св. мощей: да будетъ изверженъ, яко преступившій церковныя преданія» (Опытъ Курса Церк. Закон. Вып. втор. 524—525).

Այս կանոնն չառաջ բերելով՝ չիշեալ գրքի հեղինակը գնում է այսպիսի բացատրութիւն. — «Պատկերամարտութեան «ժամանակին հալածանքի էր ենթարկուած ամեն ինչ, որ վերաբերում էր Սուրբերի շարգութեանն: Այսպիսով տանարներից արտաքսուեցին ոչ միայն նորանց պատկերներն, այլ և «ս. մասունքները. հերետիկոս եպիսկոպոսները նուիրագործուած էին տանարներն առանց ս. մասունքներ գնելու նորանցում: է. տիեզերական ժողովը վերանորոգելով պատկերների շարգընծայութիւնը՝ վերահաստատեց և Եկեղեցու «այն կարգադրութիւնն, որը ժողովն անուանում է հին աւանդութիւն և անգիր օրէնք. այսինքն՝ որ տանարները «չօրհնուէն առանց մասունք ունենալու: Այդ կարգադրութեան հիմքը Գրիստոսեանների նախնաւանդ սովորութիւնն է. — հաստատել սեղաններ և կատարել եկեղեցական համախորհրդումներ և Ստաւրամաչին պաշտամունքը ս. Մարտիրոսների զերեզմանների վերայ»:

14. Մի կողմը թողնելով թէ հ. Յովնանեանցի կամահաս ժողովրդութիւնն և թէ այն տարբերութիւնն, որը նախկարգուած երկու հեղինակները տալիս են իբրև միևնույն

բնադրի թարգմանութիւն՝ կարևոր ենք համարում ասել միայն, թէ ամենեին հիմք չկայ վերը կարգուած 7-րդ կանոնից այդպիսի իմաստ դուրս բերելուն, ինչպէս անում են Опытъ Курса Церк. Закон. գրքի հեղինակն իւր բացատրութիւնով և հ. Յովնանեանցն. և անա թէ ինչու: Նախ՝ տեսանք իւր տեղում, որ Կ. Պօլսի 754 թուի ժողովը բանադրեց բարեխօսութիւնը չընդունողներին. արդ՝ մի ժողովի մէջ ներկայ դառնուող եկեղեցականներ չէին կարող մի կողմից սրբոց մասունքներն եկեղեցիներից արտաքսել, միւս կողմից այդ նոյն սրբոց բարեխօսութիւնն իրանց դաւանաբանական վճիռների կարգն անցկացնել: Երկրորդ՝ Նիկիայի Բ. ժողովի որոշումներին և արձանագրութիւններին ուշադրութեամբ հետևողը նկատում է, թէ սկզբից մինչև վերջը քննուած, հերքուած և դատապարտուած է միայն պատկերամարտութիւնն. և ոչ մի անգամ խօսք կամ չիշատակութիւն չի լինում այն մասին, թէ այդ պատկերատեաց կուսակցութիւնը մեղանչել է նաև սրբոց մասանց դէմ՝ արտաքսելով եկեղեցիներից: Մինչև անգամ երբ որ ժողովում քննուած էին թողութիւն խնդրող 11 եպիսկոպոսների՝ պատկերների դէմ դրժած շանցաւորութեան չափը, ոչ ոք առարկեց կամ ակնարկեց, թէ այդ անձերից մէկն ու մէկը մասունք է դուրս հանել եկեղեցուց, կամ՝ թէկուզ խօսքով արհամարհել և անարդել է ս. մասունքները: Այդ կողմից բաւական հետաքրքիր է լսել դարձի եկողներից մէկի, Սնկիւրիայի Բարսեղ եպիսկոպոսի ժողովում կարգացած զղջման և խոստովանութեան դիրք. «Ընդունում եմ Տեառն՝ մերօր, վասն մեր մարդացեալ «Յիսուսի Գրիստոսի ս. պատկերն, այլ և Սմենասուրբ Սատուածածնի, երկնային հրեշտակների, ս. առաքեալների, մարգարէների, մարտիրոսների և բոլոր սուրբերի պատկերներն. «համբուրում եմ այդ պատկերներն և բնծայում եմ նորանց «վաչելչական երկրպագութիւն. ի բոլոր անձնէ և ի բոլոր «մտաց նդովում եմ և մերժում անողջմտաբար դուժարուած «ժողովն, որ անուանուեց եօթներորդ տիեզերական. վասնզի «Թանձրամտաբար, չանդգնաբար և նոյն իսկ անօրինաբար «վատաբանեց չարաչար հայհոյութեամբ աստուածաւանդ եկեղեցական կարգադրութիւններն, և սուրբ պատկերները մատնեց անարգութեան: Վկայ Սատուած՝ հետեւալ նդովներն «արտասանում եմ անկեղծ սրտով և ողջմտութեամբ: Նդովում եմ քրիստոնեաների հակառակորդներին. նդովում եմ «նորանց, որոնք ս. Գրքի՝ ընդդէմ կռոց ասուած խօսքերը

«դործադրում են պատկերների յարգութեան նկատմամբ, նր-  
 «զովում են պատկերներ չհամբուրողներին. նզովում են նո-  
 «րանց, որոնք յանդրնում են ասել թէ եկեղեցին երբևիցէ  
 «կռապաշտացել է. նզովում են նորանց, որոնք ասում են,  
 «թէ պատկերները սատանայի մեքենայութեան գիւտն են և  
 «ոչ հայրերի աւանդութիւն:—ժողովը զովեց Բարսեղի զրզը-  
 «ման անկեղծութիւնն» (Всепл. Собр. Р. 184). որ ասել է,  
 թէ ուրիշ յանցանք չունէր խոստովանելու, բացի պատկեր-  
 ներ անարգած լինելուց:

Վերոկարգուած 7-րդ կանոնի իմաստը պարզ է, մեր  
 կարծիքով: Ութերորդ դարում Բիւզանդական կայսրութեան  
 մէջ շատ բազմացել և զօրացել էին Պաւլիկեան աղանդաւոր-  
 ներն, որոնք թէև իրանց կրօնական ուսմունքները բոլորը  
 հրապարակ չէին հանում, բայց յայտնի էին ընդհանրապէս  
 իբրև խաչ, պատկեր և մասունք մերժողներ: 754 թուի  
 Կ. Պօլսի ժողովն առաջինն եղաւ, որ նորանց նզովեց (բարեխօ-  
 սութիւն չընդունողներ):

Նիկիայի Բ. ժողովի 7-րդ կանոնն էլ այդ աղանդաւոր-  
 ներին է մատնանիշ անում իբրև եկեղեցական «շատ սովո-  
 րութիւններ» մէկ կողմը զնողների. բայց միևնոյն ժամանակ՝  
 նորանց համարձակութիւն տուող համարում է պատկերա-  
 մարտներին.—Եթէ վերջիններս այնպիսի բուռն հալածանք չա-  
 րուցած չլինէին պատկերների դէմ՝ առաջիններն էլ չէին համար-  
 ձակի բացարձակաբար անարդել, մերժել նաև բարեխօսութիւնը,  
 մասունքներն և այլն: Երբ ամբարշտութիւնն այդքան վստա-  
 հութիւն էր ստացել, հարկաւ յայտնապէս կամ ծածկապէս  
 նորան յարուած եկեղեցականներ եկեղեցիներում մասունքներ  
 ունենալուն և այլ սովորութիւններին ուղ չէին դարձնի:

15. Կան պատմիչներ, որոնք Թէոդորա կայսրուհու  
 բռնած ուղղութեան մէջ նորա հօրեղբօր, Մանուէլ իշխանի  
 (Մամիկոնեան) ազդեցութիւնն են նկատում քան սեպհական  
 համոզմունք: Այս Մանուէլը Լևոն, Միքայէլ և Թէոփիլոս  
 կայսրների ժամանակներում գինուորական ծառայութեան մէջ  
 մեծամեծ քաջութիւններ ցոյց տուած լինելով՝ սպարապե-  
 տութեան աստիճանին էր հասել և մեծ յարգանք ու սէր էր  
 վայելում բոլորից, մանաւանդ Թէոփիլոսից, որի մահից չե-  
 տոյ կարգուեց արքունի պալատի հոգաբարձու կամ զործա-  
 կալ: Սա, երևի քաղաքական նպատակից թելադրուած՝ յա-  
 րել էր պատկերաչարդ կուսակցութեանն, ուստի և կարծում

են թէ հարկադրել է կայսրուհուն պատկերչարգութիւնը վե-  
 րանորոգող հրովարտակ տալ:

16. Մինչդեռ պատկերը դէմ ուղղութեան հետևող ա-  
 րևելեան կայսրները—Լևոն Իսաւրացին, Կոստանդին Կոպրո-  
 նիմոսն և ուրիշները կոչուել են հերետիկոս, անօրէն, և բա-  
 նադրուել են իրանց մահից չետոյ, Մեծն Կարոլոս, որ նոյն-  
 պիսի ուղղութեան հետևեց, հերետիկոս անունը չստացաւ.  
 ընդհակառակը մահից չետոյ նորա չիշատակը պատուեցին  
 «ուղղափառ» կոչումով. նորա տապանի վերայ գրուեց. «Աստ  
 հանդի մարմին Կարոլոսի մեծի, ահանաւոր և ուղղափառ  
 կայսեր» (Փափագ. Պատմ. Եկեղ. 356): Ինքն ըստ ինքեան  
 այս մի պերճախօս փաստ է, թէ Արևմուտքում պատկեր-  
 յարգութիւնը պատրաստի հող չունէր իւր համար, այլ մի-  
 այն պապերն էին աշխատում բռնի պատուաստել:

17. «Յամին 794 զուճարեալ ժողով ի Փրանկորա քա-  
 «ղաք, երեքհարիւր եպիսկոպոսք Գաղղիոյ, Գերմանիոյ, Սպա-  
 «նիոյ և Իտալիոյ, կամ թէ ասել բովանդակ արևմտեան եկե-  
 «ղեցին համարելով զարևելեանն իբր անարգու աստուածային  
 «պատուոյ՝ դատապարտեաց զաիեզ. Սիւնհոգոսն Նիկիոյ»  
 (Փափ. Պատմ. Եկ. 338):

18. «Պապն Ադրիանոս Ա. թէպէտև զամենայն հնարս  
 «հնարեաց՝ զի վճիռքն երկրորդի ժողովոյն Նիկիոյ յազազս  
 «յարգութեան պատկերաց ընկալեալ լիցին նաև ի մեծէն Կա-  
 «րոլոսէ և չեպիսկոպոսաց Գաղղիոյ, բայց ոչ եղև զամադիտ.  
 «—ժողովն եկեղեցական զուճարեալ ի Փրանկիորաիա յամին  
 «794 հակառակեցաւ և մերժեաց զսահմանս երկրորդի Նի-  
 «կիական ժողովոյն. և պապն Ադրիանոս ոչ իշխեաց ընդդէմ  
 «կալ նմին և հերքել զբանս նորա: Նաև յամին 824 եպիս-  
 «կոպոսունքն ժողովեալը ի Փարիզ խստագոյն և անխնայ  
 «բանիւր յարձակեցան ընդդէմ այլանդակ բանից պապին Ադ-  
 «րիանոսի, որ պատուէր տալը ընդունել զսնտաի պաշտօն  
 «ըստ ասելոյ նոցա՝ պատկերաց» (Յանոսի յազազս պապին. 87):

19. «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց  
 պատրիարքի» (Երուսաղէմ, 1871, էր. 105), որ հրատարա-  
 կողի կարծիքով՝ թարգմանուել է հայերէնի ժ. Գ. դարի առա-  
 ջին կէտում, ասում է թէ՛ Արգարն առաջին զեսպանների  
 դարձից չետոյ է ուղարկել նկարչին, Յովհաննէս անունով, որ  
 նկարի և բերի Փրկչի պատկերը. «Առաքեաց Արգար չաչոց  
 «արքայն առ Յիսուս թուղթ աղաչանաց ի ձեռն Անանիայի  
 «հաւատարմին իւրոյ, աշխատել և զալ առ նա, և լինել թա-

«գաւորակից նմա, և հաւատաց ի նա և երկրպագեաց նմա՝ յառաջ քան զչարչարանսն: Եւ Յիսուս զրեաց պատասխանի «և երանեաց զՍբգար, և խոստացաւ յետ յարութեան իւրոյ «առաքել նմա քարոզ և պատնառ կենաց զմի յաշակերտաց իւրոց: Իսկ նա վասն շերմութեան սիրոյն զոր ունէր առ «Տէր մեր, առաքեաց զարծեալ զՅովհաննէս նկարագիր փոխել և բերել զպատակեր նորա, զի զոնէ յայնմանէ վայելեացէ: «Եւ զնացեալ Յովհաննէս ոչ կարէր հաւասարել վայելչութեան զեղոյ նորա. այլ և փոփոխէր փառաց ի փառս. և «հիանայր նկարիչն: Եւ ապա ողորմութեան և զթութեան «աղբիւրն խնդրեաց զգաստառակն և եղ ի վերայ երեսացն, «և նկարեցաւ ախպն ի հանդերձեղէն»:

Որովհետեւ հայ պատմագիրներէից ոչ ոք չէ չիշուծ Յովհաննէս անուևով նկարչին, ուստի «Ժամանակագրութեան» հրատարակիչը կարծում է թէ Յայսմաւուրքը թերևս Միխայէլից է առել այդ անունը:

20. Այս պատմութիւնը Խորենացու տպագրուած Մատենագրութեանց մէջ կրում է վերնագիր. «Պատասխանի «թղթոյն Սահակայ. յորում և բանք մարգարէականք. և «վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղև կամ որպէս շնորհեցաւ անարատ ախպ պատկերին ի փայտն»:

Մի հին ձառնարի մէջ («որ ի ս. Սարգիս Բաղիշու») Յովհան Մանդակունուն է ընծայուած մի զրուածք այսպիսի վերնագրով. «Պատմութիւն և զիւտ փոխման աստուածածնին և մաւր (մօր) տեառն, թէ որպէս եղև փոխուծն, կամ «որպէս շնորհեցաւ անարատ պատկերն ի փայտն և տուաւ «հայոցս» (Պատմ. հայկ. հ. Դպր. 333): Անշուշտ միևնոյն պատմութիւնն է կամ նոյնութեամբ կամ որևէ փոփոխութեամբ. բայց ափսոս, որ հ. Զարբանայեանը չէ զնում ձառնարի զրուութեան թուականն, որպէս զի կարելի լինէր ասել, թէ այդ պատմութիւնը մինչև զոր զեռ վերջնականապէս Խորենացու անուան հետ կապուած չէ եղել:

21. «Որ շինեաց զԴարօնից եկեղեցին» Աշոտի համար է ասում Վարդանը, հետևելով Աւետիսին և Ասողիկին. իսկ հանդ. էմիւրը թարգմանել է այնպէս, որ եկեղեցի շինողն հասկացուած է ոչ Աշոտն, այլ նորա Սմբատ եղբայրն, որ ժառանգեց Աշոտի կիւրապագատութիւնը. «Сембать... получили достоинство Курапалата послѣ Ашота: онъ построилъ въ Даронкѣ церковь во имя иконы» (Всеоб. Ист. եր. 91):

22. Յիշուծ է ներսէս վ. Մովսէսի ժէ. զարուծ, որ զրել է ս. Աստուածածնի պատկերի պատմութիւնն ոտանաւոր շարադրութեամբ. իսկ նորա Ստեփաննոս աշակերտն ուսուցչի այդ զրուածի վերայ իրանից աւելացրել է երեքհարիւր տուն ևս (Չամչ. Գ. 565):

23. Որպէս զի ընթերցողներէից ոմանք չկարծեն, թէ Ասողիկի խօսքերը չակերտներով փակելուց անմիջապէս յետոյ ասելն «և այն մանաւանդ ի հայս» չիշեալ աղբիւրի վերայ հիմնուած տեղեկութիւն է, հարկ ենք համարում յայտնել, թէ Ասողիկն իբրև «Տիեզ. Պատմութեան» դէպքեր նշանակող պատմիչ՝ չիշատակել է և Եղիղի տուած հրամանը. բայց ոչ նա և ոչ մի ուրիշ հայ պատմիչ ամենեւին ասած չունի, թէ այդ պատկերաչինջ հրամանը հայաստանուծն էլ զործադրուել է:

24. Այս կարգի հեղինակների մէջ չկամեցանք դնել Մ. Բրօսսէ-ին, ըստորում վերջինս միայն հարեանցի, Վահան կաթողիկոսի դէպքի առիթով զրուած ծանօթութեան մէջ ասել է, թէ սուրբ պատկերները հայոց եկեղեցիներում ընդունուած են եղել շատ հնուց. «Comme les saintes images sont, de toute antiquité, admises dans les églises arméniennes... (Hist. de la Siounie, 166—67): Ծանօթութեան յայտնած կարծիքը մէջ կբերուի ուրիշ տեղում:

25. Նոյն հեղինակը ասում է (եր. 240—41). «Յոյները կարգ (ЧИНЬ) ունէին, սահմանած՝ ուղղափառ եկեղեցու զիրկը դիմել ցանկացող հայերին ընդունելու համար: «Թէ երբ է սահմանուել այդ կարգը, մեզ երիտ յայտնի չէ, «սակայն կարծում ենք, թէ այն մեով, որով նա պատահում է մեզ հասած հնազոյն ձեռագիրների մէջ՝ ԺԱ. զարից վաղ «երևան չէ եկել. ըստ որում նորանում թուարկուած են արդէն տարբերութիւնների այն բոլոր կէտերն, որոնք երևում են միմիայն Ժ. զարի վերջում. ինչպէս ցոյց են տալիս մեզ «հասած զրական այն չիշատակարաններն, որոնք պարունակում են հայերի հետ վարած ուղղափառական վիճարանութիւնները»:

Ինքը Տրօիցկին այդ «կարգի» մի օրինակն, որ վերաբերում է ԺԲ. զարին, գտել է Մոսկուայի սինօղական զրադարանում: Կարգը սահմանուած էր, ասում է, որ ուղղափառութեան դիմող հայերից նախապէս պահանջուէր նշովելով հրաժարուել նախկին հերետիկոսական մոլորութիւններից: Եւ որովհետև օրթոլոքս եկեղեցին հայ եկեղեցուն նայում էր

իրբե պատկերներն յարգութիւնը մերժողի վերայ, ուստի իրան դիմող հային ստիպում էր ասել ի միջի այլոց և հետեւալ նզովքը. «Նզովում եմ պատուական և սուրբ պատկերներին չերկրպագողներին. և նորանց, որոնք ասում են թէ պէտք է երկրպագել կենսատու ս. խաչի պատկերին, քանի զեռ օծուած չէ» (եր. 243): Իսկ նզովներից յետոյ յանձնառական խոստումներին զալով՝ ասել էր տալիս. «խոստանում եմ յարգանքով երկրպագել ս. պատկերներին և կենսատու ս. խաչի պատկերին, որոնք ուղղափառների նկարածները կլինեն»:

26. Յիշեալ Գերմանոս պատրիարքի յիշատակը Յալսմաւուրքը դնում է առանձին, նոյն 741 երեսում. «Մարերի «Ե. և մալիսի ԺԲ: Յիշատակ վարուց երանելոյն Գերմանոսի «պատրիարզին: Սուրբ հայրապետն Գերմանոս՝ ներքինի էր «ի Կ. Պօլիս քաղաքէ... Եւ էր այր նշանապործ... մինչ զի «զհիւանդս և զախտաժէտս բանիւ միայն բժշկէր, և զգլխսն «ի մարդկանէ հալածէր: Իսկ թագաւորն Լեոն սատանայա- «կան խորհրդակցութեամբ սկսաւ անարգել զտէրունական «պատկերսն և զնշխարս սրբոցն Սատուծոյ: Եւ ս. հայրա- «պետն Գերմանոս խրատէր զնա ի բաց կալ յայնպիսի չար «մտածութեանցն, և նա ոչ լսէր նմա: Այլ մանաւանդ բա- «ղում ցաւ հասոցց և նեղութիւն ս. հայրապետին: Եւ զաս- «տուածային զիրս նորա, զոր ինքն յիւրմէ զրեալ էր, այր- «եաց. և սակաւ ճառք մնացին ի թագստեան»:

27. Ստեփ. եպ. Օրբելեանն ասում է, թէ այս Յակոբ եպիսկոպոսը շինել է մի եկեղեցի ևս 929 թուին Եգեղեաց գաւառում, և նոյնպէս «զանազան երանգօք զարդարէ զնա ի նկարս զեղեցիկս» (եր. 188): Այս եկեղեցին Շատիկ վանք կամ անապատ կոչուածն է:

28. Ս. Գրիգ. Լուսաւորիչ եկեղեցու պատկերների մասին խօսում է հ. Ա. Ալիշանն, առանց չիշելու ս. Գրիգորի կեանքից վերցրած տեսարանները. «Նշանաւոր շնորհք են «եկեղեցւոյս զեղանկար պատկերքն չափաւոր իմն վաչելչու- «թեամբ, յորոց սակս ի թուրքաց Նագրչլը գիլիսէ (նր- «կարէն եկեղեցի) կոչի, և նկարողքն համարին Յոյնք. այն «զի յունարէն զրեալ են անուանք սրբոցն նկարելոց. զտա- «նին և յոյն և վրացի արձանադիրք ինչ չեկեղեցւոջս... Ըստ «Մուրաւիէֆի, ի կամարամիջի դրանն է պատկեր Փրկչին, «յորոյ մի կողմն էջքն ի խաչէն. ի միւսն Տիրամայրն, հրեշ- «տակք և այլ մի ի բուն. ի ներքին ճակատ եկեղեցւոյն՝ «Տիրամայրն Սատուածորդւովն ի դրկի, Սեղան յետին ընթ-

«րեաց, և Սուրբք Նիկողայոս, Ղևոնդիոս, Արիստակէս և «այլք, յունագիր անուամբք. ի կողմնական որմունսն նկարեալ «են Մուրք Գրիստոսի յերուսաղէմ իշով, և Վերափոխումն «Կուսին: Ներկագեղով ևս զրեալ է ի վերայ կամարածե բա- «րաւորի դրանն յունարէն տուն սաղմոսին. «Տէր սիրեցի «զվաչելչութիւն տան քո». և ի ներքոյ վրացերէն՝ միւս «տուն. «Այս է դուռն Տեառն և արդարք մտանեն ընդ սա» (Շիրակ, եր. 78—79):

29. Այս ձեռագիր օրինակների ցանկն և հարկաւոր տեղեկութիւնների քաղուածք մեր խնդրանքով կաղմել է հ. Բագրատ վ. Վարդապարեանց, որին և յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը: Նոյնպէս յայտնում ենք շերմ շնորհակալութիւն այն բոլոր եկեղեցական և աշխարհական անձանց, որոնք սիրաջօժար յանձն առան զանազան ձեռագիր և տպագիր զրքեր գտնել և հասցնել մեզ:

30. Վիեննայի կայսերական գրատան հայերէն ձեռագիրների ցուցակում գտնում ենք Մաշտոց երեք օրինակ. թ. 5, 6 և 7 (Նանդ. Ամս. 1891, եր. 17, 45): Թ. 6-ի բովանդակութիւնն յառաջ բերուած չէ. մնացած երկուսից թ. 5, որ զրուած է Լեհաստանի Կամենից քաղաքում փրկչ. 1700 թուին, ունի երկու տեղ «Կանոն նկարեալ եկեղեցի աւրհնել». ունի և «Կանոն պատկեր աւրհնելոյ»: Ձեռագիրս բացի մեր Մաշտոցի սովորական կանոններից ունի Կանոն՝ «Յորժամ քրիստոնեայ առնեն» (մկրտութեան կանոնն առանձին է գրուած): Կան. «Ձէթ աւրհնել»: «Աւրհնութիւն օծօֆօրօնի»:

Մաշտոց թ. 7, որ զրուած է Լեհաստանի Չաժօսցա քաղաքում 1638 թ. ունի «20 կանոնք Մաշտոցի. իսկ «Յիշատակագրութենէ վերջն ուրիշ ձեռքէ մը գրուած. «Կանոն պատկեր աւրհնելոյ». «չաւուր փոխման ամենօրհնեալ կուսին Մարիամու օրհնութիւն դալար խոտոյ». «օրհնութիւն նոր տան». «օրհնութիւն չրոց». «օրհնութիւն առագաստի»:

31. Կիր. Գանձակեցին ունի մի պատմուածք Գառնեցի Յովհաննէս կրօնաւորի բերանից. «Ես զնացի ս. Երուսաղէմ, ասում է նա, և իջեան ունենալով ս. Յակոբի վանքում՝ մնացի մի քանի օր: Մի գիշեր ազգարարից յառաջ զնացել էի եկեղեցին. և մինչ աղօթում էի՝ ս. Յակոբի իշխան (յուսարար) վարդապետը կոչեց ինձ և ասաց. «Եկ, լսիր իմ մանկագոյն քահանայի պատմած զարմանալի բաները»: Երբ որ ձօտ զնացի՝ կոչեց զարմանալի տեսիլը տեսնող քահանային և ասաց. «Նիմայ ասա, ինչ որ յառաջագոյն ինձ պատմեցիր»:

որ սա էլ լսի»: Եւ քահանան պատմեց, թէ նախ քան ձեր գալն ես աղօթում էի եկեղեցու վերնատանն, և յանկարծ Գաբրիէլ հրեշտակապետի պատկերն, որ ս. Սատուածածնի պատկերի զիմացն է, խօսեց և ասաց. «Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ բեզ. օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ յորովայնի քո: Բոլոր սրբոց պատկերներն էլ սկսան ձիւնոյնը բարբառել բաւական երկար ժամանակ. և ես զարմացած՝ փառք տուի Սատուածուն. և սօմարահաշիւ անելով գաայ, որ այդ օրը Արեգի 30-ն էր և Ապրիլի եօթը: Այս հրաշայի տեսիլը վկայում է, թէ Հայերն են ուղիղ սօնում ս. Կուսի Աւետեաց օրը Ապրիլի եօթին և ոչ թէ ուրիշ աղգերն և մանաւանդ Յոյներն, որոնք Մարտի 25-ին են սօնում»:

Կիրակոսի ասելով՝ այս խօսքերը Գառնեցուց լսողն և իրան պատմողն եղել է Վարդան վարդապետն, որ լինելով իրան աշակերտակից՝ ձիւնոյն ժամանակ Գառնեցու հետ էլ «սիրով կապեալ էին ընդ ձիւնանս». այն ինչ Վարդանն իւր Պատմութեան մէջ «սիրով կապեալ» բարեկամի և եղնազդեաց կեանքով ու հրաշագործութիւնով յայտնի Գառնեցու անունն չէ տալիս: Զրոյցը յօրինուել է յայտնի միտումով. և դուրէ Կիրակոսի Պատմութեան մէջ յետոյ մուծուած է:

32. Դիւրրդոնի մահուան (1864) պատճառով նորա դործի (բնագիրն և թարգմանութիւնը ծանօթութիւններով հանդերձ) տպագրութիւնն աւարտում է նոյն 1864 թուին «բարեկամ նորա Վ. Վրայթ վարդապետ Փիլիսոփայութեան և «մի ի պահապանաց ձեռագրաց Բրիտանական մուսէոնի... «Բազդատեալ ընդ անգղիականին (ոչ զիտելով զասորի դպրութիւն) զտաք զրեաթէ բառ առ բառ հաւասար մերումս» (Վենետ. հրատ. Յառաջ. Թ.—Ժ.):

33. 1. Յառաջ բերելով Յովհաննու աւետարանի խօսքերը— («Էին անդ ոմանք և հեթանոսք չելելոցն անդր, զի երկիրպագանիցեն ի տօնին: Նորա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսալիդայ Գալիլիացուցն էր, աղաչէին զնա և ասէին. «ոէր կամի՞ք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս և ասէ զՍնդրէաս. Սնդրէաս և Փիլիպպոս ասեն զՅիսուս» ԺԲ. 20—23), ժառարն ասում է. «Մի քանի յոյներ, հաւանօրէն հրէական կրօնի դարձածներ, տօնի պատճառով Երուսաղէմ «եկած և սքանչացած լինելով իրանց լսածներով ու տեսածներով՝ մօտեցան Փիլիպպոսին և խնդրեցին նորանից պատկերութիւն տալ իրանց առանձնապէս խօսելու Յիսուսի

«հետ... Ովքեր էին նորանք. ինչո՞ւ էին կամենում տեսնուել «Նորա հետ՝ չգիտենք: Մի հետաքրքիր աւանդութիւն, որին, «ափսոս, առանձին արժանահաւատութիւն ընծայել չէ կարելի, ասում է, թէ դորանք ուղարկուած էին Եգիպտոսի թագաւոր Սբգար Հինգերորդից, որ իմացած լինելով Յիսուսի «սքանչելագործութիւններն և այն վասնդներն, որոնց նա «ենթարկուելու էր այդ միջոցին՝ ուղարկեց այդ դեսպաններին առաջարկելու նորան ապաստարան իւր աէրութեան «մէջ: Աւանդութիւնն աւելացնում է թէ՛ Յիսուս թէ՛ և մեր «Ժեց առաջարկութիւնը, բայց վարձատրեց Սբգարի հաւատը՝ «գրելով նորան նամակ և բժշկելով նորան հիւանդութիւնից» (Ժանօթ. 1098): «Սբգարի անվաւերական նամակն առ «Քրիստոս մէջ է բերել Եւսեբիոսն (Եկ. Պատմ. Ա. 13), որ «իբր թէ առել է ասորական չիշատակարաններից, որոնք «պահուած են եղել Եգիպտոսում և յառաջ բերուած են Մովսէս Խորենացուց... Նամակն և պատասխանը հաւանօրէն «վերաբերում են Գ. դարին» (Жизнь Иисуса Христа. եր. 448—449. Մանօթ. եր. 775):

2. Ն. Յ. Տաշեան՝ խօսելով Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանի վերայ. «Գրութիւնն «նրս ծնունդ է ասորական այն զրական շարժման որ խնդրած է քրիստոնէական մատենագրութիւնն անվաւերական «անթիւ պատմութիւններով, շատ մը կեղծ և աղաւաղեալ «վկայարանութեամբք և նմանեօք. և որուն շնորհիւ ասորի «և նաև հայ պատմութեան ոչ սակաւ մասը հիւստուած է «կարգ մը աւելի կամ նուազ աստիճանաւ ստալօզ զրոյցներով, որ շատ անգամ հազիւ թէ ըստ գոյացութեան «միայն ճշմարտութեան հետքերը կը բովանդակեն, և որուն «ամենէն նշանաւոր ծնունդն է Ս. Գրէի կամ լաւ ևս Սբգար «րու զրոյցը. այն՝ որ մեր պատմութեան մէջ նշանաւոր «կենիւ մը յօդած է» (Հանդ. Ամսօրեայ. 1893. լուսնվար. եր. 2):

3. «Սբգարու դարձին և թղթակցութեան վրայ մեր «քննութիւնը կը բովանդակենք ըսելով, թէ աղբիւրն, ուստի «առնու Խորենացին—քանզի չէ իրաւացի ըսել թէ Խորենացին կ'ստեղծու անձամբ—էր գործ ասորուց ուրուք դպրօր «ցին Եգիպտոս, իբրև Ա. դարու ծնունդ, թէպէտ չէր հին «քան զԳ. և զԴ. դար չեա Քրիստոսի. գործ, որոյ նման «ներն բազում էին ի դիւանին Եգիպտոս. և որ եթէ կ'ընծայ «ուրի ժամանակին յառաջ քան զՔրիստոս, կամ իբր ժամա-

«նակակից նմա՝ կր կրեն յայտնապէս առասպելական դրոշմ» (Քննակ. Պատմ. Հայոց, Մ. Գ. եր. 269):

4. «Այսօր տարակոյս չկայ, որ Լաբուրնայի անունը կրող այս պատմութիւնն էլ կեղծիք է, Գրիստոսի ծնունդից զոնէ 250 տարի յետոյ կատարուած: Այս իրողութիւնը հաստատուած է նշանաւոր դիտնականների բազմաթիւ հետազոտութիւններով, որոնք տարակոյսի այլ ևս տեղիք չեն թողնում» (Ստ. Մալխասեանց. Մուրճ 1901. փետր. 203):

34. 1. Վենետիկեան օրինակի հրատարակիչն ասում է. «Անգղիացի թարգմանն (Իլլերդոն) ողջմտութեամբ ընդունի «գհարաղատութիւն և զհնութիւն թղթոյս Աբգարու կամ «զվարդապետութեանն Թաղէի (որ Աղղէոս զրի ՚Ստորին և «Աղէ ի մերումս) բաց ի յայտնի եկամուտ բանից... Եւ մեր, «աւելցնում է հրատարակիչն, այնպէս ընդունիմք մեծագոյն «մասամբ. այսինքն է, համարիմք զի մեծ մասն զործոյս ա- «նայլայլակ արտադրութիւն և փոխադրութիւն է բանից «Լաբուրնայ, և ժամանակակից նորին դիւանադրաց... զյե- «տին զովասանական բանս զբրիտոնէից ժամանակին Աբգա- «րու եկամուտ և յետնադիր համարիմք: Են դարձեալ և այլ «ուրեք բանք ինչ յայտնապէս եկամուտք, զորոց ի ծանօթու- «թիւնս յայտ առնեմք: Բայց զյխաւոր քան զամենայն են «չիշատակք զրոց նորոց Կտակարանաց... Եւ արդ յայսմ ա- «մենայնէ զոյ մեզ զյխաւորել եթէ թուղթս այս Աբգարու «մասամբ այլ ոչ բոլորովիմք իսկադիր զործ իցէ Լաբուրնայ «դպրի և դիւանադրի Եղեսիոյ, ժամանակակցի առաքելոցն «և աշակերտացն Գրիստոսի» (Յառաջ. ԺԱ. ԺԲ. և ԺԵ.):

2. «Արդարև ոմանք յարդի քննչաց, ինչպէս Տիլլման «զաղղիացի, Բաւէ անգղիացի և Վէլտէ դերմանացի, ըստ «Գաթրրենեանի, արգարացողին իւր իւր զթուղթն Գրիս- «տոսի առ Աբգար (թէպէտ այլք առհասարակ կր մերժեն)... «Գաթրրենեան կր թուի արգարացողացնել մանաւանդ Տիբերի «թուղթն առ Աբգար, ուր ըսուած է թէ ծերակոյտն մերժեց «զառաջարկութիւն Տիբերի՝ կարգել զԳրիստոս ՚Ստուածս: «Առ այս կր թուի յենուլ Գաթրրենեան ի վկայութիւնն Տեր- «տուղիանոսի (Պատասխանատու. Ե.) թէ՛ «Տիբերիոս չորոյ «ժամանակն իսկ եմուտ յաշխարհ ըրիստոնէութիւն, չորժամ «պատմեցաւ նմա ՚Ստորեց Պաղեսախնացոց որ ինչ ի յայտ- «նութիւն Նշարտութեան աստուածեղէն մարդոյն էր՝ հան «նա զամենայն յանդիման ծերակուտին յաւելուածով առա- «ւելութեան վնոյն իւրոյ: Այլ ծերակոյտն, քանզի չէր ինք-

«նին քննեալ, մերժեաց: Իսկ կայսր եկաց յառաջնում խոր- «հրդեան իւրում, սպառնացեալ պատուհաս որոց ամբաստանն «կայցեն զբրիստոնէից»... Սակայն դիտողութեան արժանի «է, որ հարկ չը կար ամենեին Տիբերի արգելուլ ամբաստանել «զբրիստոնեայս, քանզի բրիստոնէից դէմ հալածանք դեռ ըս- «կած չէին առ Տիբերիւ, մինչ տակաւին ի խանձարուրս էր «բրիստոնէութիւն, նա՛ զրեթէ անձանօթ իսկ» (Քննակ. Պատմ. Հայոց. Մ. Գ. 269—270):

3. «Հաւանական կարծեօք հմտագունից՝ ըստ մեծի մա- «սին Ղերուբնայ և կամ Լաբուրնայ դիւանագրի Եղեսիոյ, «ժամանակակցի առաքելոց և աշակերտաց կր վերաբերի այս «զրուածքը. սակայն երկուհարիւր տարուան մէջ շատ փոփո- «խութիւններ կրած՝ ու երբեմն նաև յաւելուածներ չիրա- «համարձակ ձեռաց և զրչաց. և վերջին ու զյխաւոր խմբադ- «րութիւնն՝ երրորդ դարուն առաջին կիսուն մէջ եղած կ'ե- «րևնայ» (Պատմ. Հ. Իպր. 100):

35. «Չէ նոյնպէս անհաւանական, ինչ արդէն իսկ ի «սկզբան առաջին դարուն տարածեցաւ քարոզութիւն Աւե- «տարանին ՚Ստորիս և ի Միշադետս, ուստի անշուշտ չնդե- «սիա, մինչև Աբգարու անդամ միտել ի բրիստոնէութիւն: «Սակայն կան պարագաներ ի դարձին Աբգարու, որ են վր- «կայաբանական կեղծիք» (Քննակ. Պատմ. Հայոց. Մ. Գ. 262):

36. «Ի վկայաբանութիւնս ինչ սրբոց արևելից որք «զրեալ են յասորի լեզու՝ չերկրորդ դարու Գրիստոսի, և ի «սկիզբն ևս դարուն՝ ինչին չիշատակք զործոց Աբգարու և «Թաղէի» (Յառաջ. Վենետ. օրինակի, եր. 2):

37. Վենետ. օրինակի հրատարակիչը (եր. 5, ծանօթ. 3) զտնում է թէ «Վայելչագոյն ևս է բնագրիս պատմութիւն, «ասելն Յիսուսի ցԱնան, կամ բերանացի նուիրակութիւն «նորա, քան զրելչն զիր, թէպէտ և ի ձեռն Թուծայի, ըստ «Եւսեբեայ և Խորենացոյ և այլոց, վասնորոյ և այնքան «վէճք և անհաւանութիւն աստուածաբանից, և ընդ անվա- «ւերս և օտարս ի Ս. Գրոց համարիլ թղթոյն, վնուով Գե- «լասիոսի պապի յամին 494»:

Երուսաղէմի օրինակի հրատարակիչն էլ (եր. 74, ծա- նօթ. 8) «ոչ զրով՝ այլ բանիւ լոկով» պատասխանելը հա- մարում է «հաւատարմագոյն ևս». բայց միևնոյն ժամանակ Խորենացու հեղինակութեանը դիպած չլինելու համար՝ ա- սում է թէ՛ երևի «բաց ի չիշատակարանացն Ղերուբնայ էին

նորա և այլ աղբիւրք յորոց առ ժողովեաց զգէպս իրաց այսր ժամանակի»:

Հ. Զարբանայեանն էլ «հաւանականագոյն» է գտնուած թէ «Տէրն մեր Աբգարու թղթոյն պատասխանը ոչ գրով այլ բերնով և եթ տուած ըլլայ» (Պատմ. հ. Դպր. 387):

38. Գեյասիոս պապի գուճարած ժողովի որոշումն (Hefélé, Գ. 224), որով անվաւերական գրուածները շարքուճն է գրուել Բրիտանոսի նամակն, իրաւունք է տալիս կարծելու, թէ Լաբուրնայի գրուածն արդէն հինգերորդ դարի վերջում քիչ ու շատ ուշագրութիւն է գրուած եղել. և ո՞վ գիտէ՞ գուցէ հէնց այն ջանքերի պատճառով, որ Եղեւսիայի եկեղեցին գործադրած է եղել Գ. և Ե. դարերում՝ իւր աթոռի առաքելական նշանակութիւնը պաշտպանելու համար, որ չէր կարող ի հարկէ գուր գալ հռոմի աթոռին:

39. Երուսաղէմի օրինակի հրատարակիչը (Յառաջ. Ը.—Թ.) ասում է. «Եւ զի պարագայք պատմութեանս այսորիկ ըստ մասին իմիր նման է պատմութեան հեղինակայ մօր մեծի Կոստանդիանոսի, որ համարի երկրորդ գաղի սրբոյ Խաչին, վասնորոյ Լանկուա ասէ զառաջնոյն՝ լինել վրիպակ ժամանակագրական և յայլոց ոմանց յետագայից մուծեալ ի բնագիրն: Թէպէտեւ չդուցէ մեր առձեռն պատրաստ վկայութիւնը ի նպաստ ստուգութեան պատմութեանս, յայլոց «պատմաբանից երկրագրունից ժամանակաւ խօսեցեալ, սակայն «չմեղանչէ որ թերևս ընդդէմ պատմական ստուգութեան՝ կարծել զառաջին զիւս խաչին եղեալ ի ձեռն Պատրոնիկեայ, որ եկաց յաւուրս եպիսկոպոսապետութեան Յակովբայ Տեառնեղբոր: Բանդի գրի առ մեղ ի ճառընտիրս ի վարս «հռիփսիմեայ կուսին որ էր յաղգականութենէ Կղոզեայ կայսեր, բերեալ նորա ընդ իւր ի հայս զմասն սրբոյ նշանին «զոր Պատրոնիկեայ ընդ իւր տարեալ էր ի հռովմ ի դարձին «չԵրուսաղէմէ՝ հնդրեկով զնոյն ի սրբոյն Յակովբայ. և այն «է հաւանեալն առ հայս սուրբ խաչն Վարդապ: Իսկ եթէ «առ քարոզութեամբ Թաղէի, այսինքն յառաջին ամսն համբառնալոյ Փրկչին չեւ էր տակաւին դտեալ սուրբ խաչն, «յայնժամ կարեմք զայս և եթ ասել ի լուծումն տարակուսանաց, եթէ ի բուն բնագիրն ասորական յետոյ յաւելեալ իցէ ի նորին Ղերուբնայ»:

Վենետ. օրինակի հրատարակիչն ասում է. (Ասորի բնագրում) «պակասէ բովանդակ Պատմութիւնն Պատրոնիկեայ կամ Առաջնոյ զիւտի Խաչին, որոյ աւանդութեանն հնու-

«թեան վկայէ և Խորենացի և Սահակեան հին տօնացոյցն».  
Իսկ 11 երեսում 2 ծանօթութեան մէջ. «Աւանդութիւնս «այս Պատրոնիկեայ թէպէտ և հին՝ օտարամուտ է ի պատմութեանս կամ ի քարոզութեան Թաղէի, որ եղև յառաջ քան զերթալ առաքելապետին ի հռովմ, յորմէ ասի աշակերտեալ և մկրտեալ Պատրոնիկեայ... հնագոյն ևս վկայութիւն միանգամայն և սրբազան վարկուճն աւանդութեանս՝ «և գրութեանս՝ նշանակի ի հին տօնացուցի՝ որ Ս. Սահակայ ասի կարգած, ի ժ. մարերի (17 մալխի) հրամայէ ի «տօնի «Գիւտ Խաչին» «չԱբգարու թուղթն զՊատրոնիկէն «զիւտ և ընթերցիր» (Յառաջ. Ժ.):

Եթէ «հին տօնացուցի» գրութեան թուականն էլ կարգուած լինէր այդ տեղ՝ յառաջ բերուած վկայութիւնը գուցէ փոքր ի շատէ նշանակութիւն ունենար Պատրոնիկէի «պատմութեան» յօրինման ժամանակի նկատմամբ, այլ ոչ բնաւ նորան «սրբազան վարկուճն» տալու: Եթէ յետին ժամանակի մի կեղծիք զանազան եկեղեցական և եկեղեցախօս մատեններում կարող է մուտք գտնել իբրև Թաղէոսի քարոզութեան նիւթ՝ ինչո՞ւ պիտի չկարողանար մուտք գտնել և Տօնացուցի մէջ իբրև Սահակի կարգադրութիւն: Յամենայն դէպս՝ մեղ յայտնի չէ տասներորդ դարից յառաջ գրուած մեռաղիր, բացի Ս. Էջմիածնի և Լաղարեան հեմարանի Աւետարաններից:

40. Ի դէպ՝ Պատրոնիկէի պատմութեան Վենետիկեան օրինակն «Աբգարի թղթում» կրում է այնպիսի տարբերութիւններ միւս երկու օրինակներից (Երուսաղէմի և Վենետ. հրատարակութեան վերջում գրուած), որոնք յայտնապէս երևում են զիտաւորեալ փոփոխութիւններ:

Ինում ենք ահա այս տեղ այդ տարբերութիւնները.  
Երուսաղէմի օր. Վենետ. վերջին օր. Աբգարի թղթի օր.  
«էր Պետրոս ի հռոմ «էր Պետրոս ի «էր Պետրոս ի  
«քաղաքի, որ էր «հռոմ քաղաքի, որ «հռովմ քաղաքի, մի  
«մի յաշակերտացն «էր զլուխ աշա- «մի յաշակերտացն  
«Քրիստոսի: «կերտացն Քրիս- «Յիսուսի, որ էր  
«տոսի»: «տոսի»: «զլուխ ամենե-  
«ցուն»:  
«Եւ եմուտ ի հռոմ «Եւ եմուտ ի հռովմ «Եւ իբրև եմուտ  
«զլխոյն և պատ- «զլխոյն և պատ- «նա ի հռովմ քա-  
«մեաց Կղոզեայ «մեաց զլխոյն «զաք՝ պատմեաց...  
«կայսեր... և պատ- «Պետրոսի զսքան- «Սյլ և առաջի Սի-

«ճէր դշխոյն և Պետ- «չելիսն որ եղեն» : «ճովնի վիմի պատ-  
 «րոսի զսքանչելիսն «մեաց տիկինն» :  
 «որ եղև» :

Աբգարի թղթի օրինակի խօսքերն— «որ էր գլուխ ամե-  
 նեցուն», հրատարակիչն համարում է «նշանակելի բան ընդ  
 հնազոյն վկայութիւնս հարց վասն զխաւորութեան Պետ-  
 րոսի առաքելոյ» :

41. Ինչպէս տեսանք վերևում՝ տասներորդ դարի երկու  
 պատմագիրներն— Ուխտանէս և Ասողիկ, Եղեսիայի պատկերի  
 մասին միայն այնքանն են յիշում, որքան Խորենացու Պատ-  
 մութեան մէջ գտել են. «Ձկենդանագրութիւն փրկչական  
 պատկերին, որ կայ յԵղեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժա-  
 մանակի». Ասողիկը՝ «որ կայր մինչև ցաւուրս Նիկիֆօռայ» :

Ի դէպ՝ հարկաւոր ենք համարում տալ ընթերցողներին  
 թէ գաստառակի փոխադրութիւնների մասին եղած տեղե-  
 կութիւնների և թէ մի քանի ուրիշ գաստառականների կամ  
 փրկչական պատկերների ծագումը ճառող աւանդութիւնների  
 համառօտութիւնը :

Թէև Ասողիկը վերոգրուած խօսքերից յետոյ աւելցնում  
 է, թէ Նիկիֆօրոս (Փոկաս) կայսրը գաստառակը տանել  
 տուեց Կ. Պօլիս, բայց այդ փոխադրութիւնը, յունական աղ-  
 բիւրների պատմելով՝ կատարուել է Նիկիֆօրոսից շառաչ,  
 944 թուին, Հայաղզի Ռոմանոս կայսրի օրով և նորա աշխա-  
 տութեամբ : Սա, ինչպէս գրում է իւր փեսայ Կոստանդին  
 Պերփեռուժէն կայսրը՝ (Վասիլ Սրշակունի կայսրի թուր),  
 ջերմեռանդ փափաղ ունենալով առ Աբգար ուղարկուած փրկչ-  
 չական պատկերն իւր մայրաքաղաքը բերելու՝ Եղեսիային  
 աիրող մահմեդականներին առաջարկում է մեծ գումար, իբրև  
 պատկերի գին. բայց մահմեդականները յանձն չեն առում  
 տալ. իսկ երբ Ռոմանոսն ուժի է դիմում, և նորա զօրքերը  
 Դիարբէքիից սկսած սրով, հրով և զերութիւններով աւե-  
 րելով անցած երկիրները՝ ձօտենում են Եղեսիային և պա-  
 հանջում գաստառակը, փոխարէնը խոստանալով զբերվարած  
 մահմեդականների աղատութիւն, քաղաքի աիրապետողը պայ-  
 մանագրելով կայսրի հետ, որ Յունաստանի կողմից երբէք  
 չարձակուան չլինի Ուռհայի, Խառանի, Սարոսի և Սամոսա-  
 տի վերայ՝ յօժարում է տալ պատկերն, որից յետոյ կայսրի  
 հրամանով Եղեսիա է դալիս Աբրահամ եպիսկոպոսն և ստա-  
 նալով թէ գաստառակն և թէ Քրիստոսի առ Աբգար գրած  
 նամակը՝ տանում է Կ. Պօլիս, ուր թափօրական հանդիսով

ընդունուելով՝ գրում են ս. Սոփիայի եկեղեցում : Այդ փո-  
 խադրութեան հանդէսներն և կատարուած զանազան հրաշք-  
 ները պատմում են Կեղրենոսն և Պերփեռուժէնը :

Դաստառակը մնում է Կ. Պօլսում մինչև ԺԴ. դարն.  
 իսկ Քրիստոսի նամակը վերադարձնում են Եղեսիա. բայց  
 երբ որ Ռոմանոս Գ.ի օրով, 1030 թուին Յոյները խլում են  
 Եղեսիա քաղաքը մահմեդականներից՝ նամակը կրկին Պօլիս  
 է բերում. սակայն այս տեղ էլ 1325 թուին զողացում է,  
 չայտնի չէ թէ ո՞ւմ ձեռքով : Իսկ գաստառակը մնում է իւր  
 տեղում մինչև 1360—1363 թուականներն, երբ Յովհաննէս  
 Պալէօլօղ կայսրի կողմից պարգև է արւում զհնուացիների  
 զօրապետ Լէօնարդօ զը Մօնտայտօլին, որ հետը տանելով  
 հայրենիք՝ նուիրում է Գենուայի Հայ կրօնաւորների ս. Բար-  
 դողիմէոս վանքին :

Յունական աղբիւրները չեն խօսում այս փոխադրութեան  
 մասին. պատմողները միայն արեւմտեան հեղինակներն են—  
 Ջուստինիանի իտալացին և ուրիշներն : Այս պատճառով էլ  
 արեւելեան և արեւմտեան կողմերից միմեանց ներհակ կար-  
 ծիքներ են յայտնուել : «Ոմանք աշխատում են ապացուցանել  
 թէ Մնձեռագործ Պատկերը գտնուում է Հռոմում. ոմանք՝  
 թէ նա գտնուում է Ասիայում. ոմանք՝ թէ նա բոլորովին  
 կորել է և այլ ևս չկայ. իսկ ոմանք... թէ այդ պատկերն  
 այժմ Գենուայումն է և պահպանւում է ս. Բարդողիմէոսի  
 վանքում» :

Բացի այդ պատկերից՝ աւանդութիւններն չիշատակում  
 են և յետագայ փրկչական պատկերները :

1. Վերոնիկայի պատկեր : Երբ որ Փրկիչը Խաչն ուսին  
 Գողգոթա էր բարձրանում յողնած ու բրտնած՝ Վերոնիկա  
 անունով մի կին կարեկցաբար ձօտեցաւ նորան և թաշկի-  
 նակն առաջարկեց՝ երեսի քրտինքը սրբելու համար : Առաւ  
 Փրկիչն և երեսը սրբեց, և իսկոյն կերպարանքը նկարուեց  
 թաշկինակի վերայ : Այս պատկերը Հռոմ է բերում Տիբերիոսի  
 կայսրութեան օրով, և կայսրն ինքն էլ նորանից բժշկու-  
 թիւն է գտնում : Պատկերն այժմ Հռոմի ս. Պետրոս եկեղե-  
 ցումն է :

2. Մնձեռագործ մի այլ գաստառակ Հռոմի ս. Սեղբես-  
 տրոս եկեղեցու դժբէթի վերայ : Արեւմտեան եկեղեցական հե-  
 ղինակներից շատերն այս պատկերն են համարում Եղեսիայի  
 իսկական անձեռագործ գաստառակը :

3. Մի այլ գաստառակի պատկեր էլ կայ դարձեալ Հռո-

մի ս. Պետրոս եկեղեցում: Պերկէն կանոնիկոսի ասելովն էլ՝  
սա է Փրկչի իսկական անձեռագործ դաստառակը:

4. Գեթսեմանի պատկեր: Երբ որ Փրկչը Գեթսեմանի  
ծորում աղօթելիս ջրտինքը սրբեղ՝ կերպարանքը դրոշմուեց  
Թաշկինակի վերայ: Այս պատկերն, ըստ աւանդութեան՝  
պահուում է Բաւարիայի Ս. Լեառն կոչուած տեղում:

5. Պօղոս Անապատականի պատկեր: Երբ որ Փրկչի ան-  
ձեռագործ դաստառակը տանում էին Եղեսիայից Կ. Պօլիս,  
հանապարհին Պօղոս անունով մի անապատական կալստից  
հրաման է առնում պատկերի վերայ դնելու յատկապէս այս  
նպատակի համար պատրաստուած կտաւը: Կտաւը զբուծւած է  
և իսկոյն Փրկչի կերպարանքը նկարուած է նորա վերայ:

6. Փրկչի առ Աբգար ուղարկուած անձեռագործ դաս-  
տառակը նագարէթում: Ռուս ուսումնական Ս. Ս. Նօրովը  
դէպի Ս. տեղերը կատարած ձանապարհորդութեան մէջ զբ-  
րում է, թէ նագարէթի կաթողիկական մի մատուռի սեղանի  
վերայ անսել է Փրկչի պատկերն, որի վերայ լատիներէն զբ-  
րուած էր. «Իսկական պատկեր Փրկչի և Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի (առաքեալ) առ Աբգար արքայ»:

7. Փրկչական մի անձեռագործ պատկեր էլ կայ Վրաս-  
տանում, որ Անչի քաղաքի (Սխալցխայի գաւառ) անունով  
կոչուում է Անչխախախի պատկեր: Մուրեմովիովն իւր ձանա-  
պարհորդութեան մէջ (դէպի Վրաստան և Հայաստան) զբ-  
րում է, թէ այդ պատկերը փայտի վերայ է, և համարուում  
է ապաւորուած այն միջոցին, երբ տախտակը դրուել է իս-  
կականի վերայ: Պատկերի արժաթեալ շրջանակի վրայի չի-  
շատակազրութիւնն, որ պատկերը նորոգող կաթողիկոս—  
պատրիարք Դոմենտիոսինն է, ասում է, թէ պատկերն սկզբ-  
բում Եղեսիայից բերուել է Կ. Պօլիս. բայց երբ որ այնտեղ  
երեւացել են Լեոն Իսաւրացին և ուրիշ պատկերամարտներ,  
պատկերը Կ. Պօլսից փոխադրել են Կլարժէտ (արեւմտեան  
Վրաստան), և զբել են Անչխախախի եպիսկոպոսական եկեղե-  
ցում, Թամար Թագուհու հրամանով (ԺԲ. դար): Երբ որ  
Սամցխէն (արեւմտեան Վրաստան) մահմեդականութիւն է ըն-  
դունել, մի վաճառական Թիֆլիսից այդ տեղ զայով՝ մեծ գու-  
մարով գնել է պատկերն և բերել, տուել է Դոմենտիոս պատ-  
րիարքին. իսկ վերջինս զբել է Թիֆլիսի մայր եկեղեցում:

Փրկչական մի պատկեր էլ կայ Մարտղոսի վանքում:

Վերոգրեալ տեղեկութիւնները համառօտել ենք հանդ.

9. Մանրեանցի աշխատութիւնից— Подробное еказаніе о

нерукотворенномъ Образцѣ Господа Нашега Іисуса  
Христа, именуемомъ Свѣтлый Уборусъ, Москва, 1865.

42. Պ. Ստ. Մալխասեանցը 1898 թ. «Մշակի» 102  
համարի «Պատմական գրականութիւն» յօդուածում ասում  
է. «Մենք էլ մի ուրիշ տեղ (Մուրն, 1892, զեկտ.) աշխատե-  
ցինք ապացուցանել, թէ Խորենացու Բ. զրքի 83. գլուխը,  
«որ պատմում է Կոստանդիանոսի դարձը, նոր չաւելուած է  
«և թէ սկզբում այդ տեղ եղել է Հայոց դարձի պատմու-  
«թիւնը: Եթէ այս ուղղութեամբ բնութիւնները շարունակ-  
«վեն և արդիւնաւոր հետեւանք ունենան՝ այն ժամանակ կը  
«հաստատվի, թէ Ե. դարում ապրող փիլիսոփայ Մովսէսը  
«Մովսէս Խորենացին է. և թէ նա զբել է ի միջի այլոց և  
«հայոց պատմութիւն, որ V—VIII դարերում նոր խմբագ-  
«րութեան է ենթարկվել, նորանոր չաւելուածներ և կրճա-  
«տումներ կրելով»:

43. Վստահանում ենք բանասէրների ուշադրութիւնը  
դարձնել Խորենացու Պատմութեան Երկ. զրքի Լ. ԼԱ. ԼԲ.  
ԼԳ. գլուխների վերայ: Արդեօք նորանցում տեղի չե՞ն ունե-  
ցել նորամուտ փոփոխութիւններ և աղճատումներ, որոնց  
պատճառով էլ օտարոտի բաժանմունք են կազմուել: Գուցէ  
Աբգարի նամակն սկզբում եղել է շարունակութիւն Լ.  
գլխի վերջին տողերին.— «ետ տանել նմա թուղթ աղա-  
չանաց, դալ և բժշկել զնա ի ցաւոցն, օրինակ զայս.  
Աբգար Արշամայ իշխան աշխարհիս»... իսկ նորանցից  
չետոյ եկող ութ տողերի վերջին նախագասութեանը— «Թրդ-  
թոյ արժանի արար զնա, որ ունի այսպէս»—անմիջապէս  
հետեւել է Քրիստոսի պատասխանը, զուցէ և Առաքեալի գա-  
լուստն ու քարոզութիւնը. հիշող այնպէս, ինչպէս զնում է  
Եւսեբիոսը—մի գլխի մէջ, կամ վերջինը միայն առանձնա-  
բար. իսկ այժմեան Խորենացու մօտ Աբգարի նամակն առան-  
ձին զլուխ է, պատասխանն առանձին և Առաքեալի գալուս-  
տըն առանձին, թուի թէ աղճատուած կամ չապաւած մա-  
սերի զլխակարգութեան պակասը փոխարինելու համար: Դար-  
ձեալ՝ Խորենացու աղբիւրն՝ Եւսեբիոսը չէ ասում, թէ Թով-  
մասը զրեց Փրկչի նամակն. այլ միայն զբել է. «Պատասխա-  
նի թղթոյն ի Յիսուսէ»: Թովմասն իբրև նամակազիր ան-  
չայտ է և Լաբուբնային, որ նոյնպէս ծանօթ էր Խորենա-  
ցուն. մանաւանդ թէ Լաբուբնան զրաւոր նամակ չգիտէ, այլ  
բերանացի ապսպրանք: Խորենացու մօտ Քրիստոսի նամակն  
առանձին զլուխ է կազմել այս վերնագրով. «Պատասխանի

Թղթոյն Աբգարու, զոր զրեաց Թուճաս Առաքեալն հրամա-  
նաւ Փրկչին» (Թովմաս, Թովմա անուան Թուճաս զորժա-  
ծութիւնն էլ յետադոյն է. Խորենացին Թովմաս զիտէ): ԼԳ.  
զլխի մէջ զեանդուած են հինգ նամակներ. բայց զետեղուծն  
կատարուել է այնպէս, որ կասկած է զարթեցնուծ օտար մի  
ձեռքի միջամտութեան մասին: Այնտեղ, ուր ասուած է, թէ  
Թաղէոսն Աղբէին ձեռնադրելուց յետոյ «առեալ հրովարտակ  
յԱբգարէ... դայ առ Սանատրուկ քեռորդի նորին», այդ ժա-  
մանակը միայն Աբգարը նամակներ է գրուծ Տիրերիոսին,  
Ներսէհին և այլն. մինչդեռ Լարուբնայի պատմածով՝ Թաղէո-  
սը զեռ. Եղեսիայուծն էր և քարոզուծ ու բժշկութիւններ էր  
կատարուծ, երբ Ներսէհ թագաւորն ուղարկեց խնդրել Աբ-  
գարից. «կամ տուր ածել ինծ զայրդ որ զնշանադ առնէ առ  
«քեզ, զի տեսից զդա և լուայց զբանս դորա, և կամ տուր  
«դիտել ինծ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է դորա ի  
«քաղաքիդ քուծ»: Նոյն Լարուբնայի ասելով՝ Ներսէհին պա-  
տասխանելուց յետով Աբգարը նամակ է գրուծ Տիրերիոսին.  
այն ինչ Խորենացու Պատմութեան մէջ գրուծ են նախ Տի-  
րերիոսին գրածը, վերջինի պատասխանը, կրկին Աբգարի գրա-  
ծը Տիրերիոսին, յետոյ Ներսէհին ու Արտաշէսին գրածները:  
Ընդունենք, թէ Խորենացին իրանից կեղծել-հիւսել է ե-  
րեք նամակներ (Տիրերիոսին գրածն ու պատասխանն ունի  
Լարուբնայ), մասամբ օգտուելով Լարուբնայի տեղեկութիւն-  
ներից. հասցա ի՞նչ նպատակով պիտի չկամենար այնպէս էլ  
դնել, ինչպէս աղբիւրն է ցոյց տալիս.—որ Աբգարը գրուծ է  
նամակները զեռ Թաղէոսի Եղեսիայուծ եղած միջոցին, զեռ  
նորա քարոզութեան տպաւորութեան ներքոյ: Արդեօք կեղ-  
ծիքի համար ի՞նչ զաղտնի առաւելութիւն պիտի ունենար՝  
աղբիւրին հակառակ նախ Թաղէոսին սահմանից դուրս հա-  
նել, ուղարկել Սանատրուկի մօտ, ապա թէ Աբգարին յօժա-  
րեցնել գրելու: Կամ թէ՛ ի՞նչ նպատակ կարող էր թելադրել  
Խորենացուն Աբգարի բերանից նամակներ պատրաստել Ներ-  
սէհի և Արտաշէսի վերայ: Դիցուք Ներսէհին գրելու  
հասկանալի շարժառիթ կարող է համարուել այն, որ  
Աբգարը վկայի, թէ Թաղէոսն «ի կողմանս Հայոց առա-  
քեցաւ». զիցուք՝ Թաղէոսին Հայոց առաքեալ ունենալը  
պահանջել է Խորենացու ազգային ինքնասիրութիւնն, և նա  
կեղծիքը կաղծել է. իսկ Սիմոն առաքեալին Պարսկաստան  
ուղարկելուն և երկու թագաւորներին առանձին առանձին  
վկայութիւն, յանձնարարութիւն անել տալուն ի՞նչ զրդիչ

պատճառ կարող էր լինել Խորենացու համար, երբ փոքր ինչ  
ներքե նորա մասին պիտի ասէր. «Իսկ զՍիմովնէ, որ Պար-  
սիցն վիճակեցաւ, ոչ զհաւաստիսն կարեմ պատմել՝ եթէ  
զի՞նչ զորժեաց և կամ ո՞ւր կատարեցաւ»:  
Աւելի պարզած լինելու համար կասկածը Խորենացու  
պատմութեան վերոյիշեալ գլուխների նկատմամբ, զնուծ ենք  
այս տեղ թէ իսկականն, որ եղած ենք ենթադրուծ, և  
թէ անհարազատը. վերջինուծ բաժանուած նշանադրելով այն  
ամենն, ինչ որ փոփոխուած կամ աւելցուած կարող են լինել  
օտար ձեռքերից:

Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի Հ Ա Ր Ա Ջ Ա Տ

ԿԼ. Լ. ... «Ընդ որ զարմացեալ Աբգարու... ետ տանել  
«նմա թուղթ աղաչանաց, դալ և բժշկել զնա ի ցաւոցն, օրի-  
«նակ դայս. «Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս  
«Փրկիչ և բարերար...  
«Որոց տարեալ զթուղթն, պատահեցին նմա յԵրուսա-  
«ղէմ: Իսկ ինքն Փրկիչն յայնմ ժանանակի յորուծ կոչեացն  
«զնա, ոչ առ յանձն, բայց թղթոյ արժանի արար զնա, որ  
«ունի այսպէս. «Երանի իցէ այնմ, որ հաւատայ չիս՝ իբրև  
«ոչ իցէ նորա տեսեալ զիս»... Զայս թուղթ եբեր Անան  
«սուբհանդակ Աբգարու:  
ԿԼ. ԼԳ. «Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թով-  
«մաս առաքեալ, մի յերկոտասանիցն, առաքեաց մի յեթա-  
«նասնից անտի՝ զԹաղէոս, ի քաղաքն Եղեսիայ՝ բժշկել զԱբ-  
«գար և աւետարանել ըստ բանին Տեառն: Որոյ եկեալ ի  
«տուն Տուբիայ իշխանի հրէի. . Եւ ել համբաւ նորա ընդ  
«ամենայն քաղաքն: Լուեալ Աբգարու ասէ. Նա է վասնորոյ  
«գրեացն Յիսուս. և իսկոյն կոչեաց զնա: Եւ եղև ի մտանելն  
«Թաղէի, տեսիլ մեծ երեւեցաւ Աբգարու յերեսն Թաղէի, և  
«չարուցեալ ի դահուիցն անկաւ ի վերայ երեսաց իւրոց և  
«երկիր եպագ նմա... Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թա-  
«ղէի, աւետարանեաց նմա և քաղաքի նորա. և եղեալ ձեռն  
«ի վերայ բժշկեաց զնա... Եւ հաւատացին ամենեքեան. և  
«մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն... Իսկ Առա-  
«քելոյն Թաղէի զխոյրարար ոմն մետաքսադործ մկրտեալ, և  
«անուն կոչեցեալ Աղբէ, ձեռնադրեալ ի վերայ Եղեսիոյ, փո-  
«խանակ իւր թողու առ արքայի: Եւ իւր առեալ հրովար-  
«տակ յԱբգարէ, զի ամենեքեան լուիցեն աւետարանին Կրիս-

«տոսի («Եւ հրամայեաց Արզար եթէ... ժողովեացին ամե-  
«նայն մարդիկ քաղաքի իւրոյ և լուիցեն զքարոզութիւն  
«Թաղէոսի» Եւսեբ. Ս. 66), զայ առ Սանատրուկ քեռորդի  
«նորին, զոր կարգեալ էր ի վերայ աշխարհին և զօրացն:

«Ղերուբնայ որդի Ափշադարայ զպրի զրեաց զամենայն  
«զործս, որ ինչ յաւուրս Աբգարու. և եղ ի զիււանին յԵղե-  
«սիայ»:

Գլ. ԼԳ. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւո-  
«րութիւնն յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց  
«Թագ՝ թագաւորել յԵղեսիայ, և քեռորդի նորա Սանատ-  
«րուկ ի Հայս: Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ չա-  
«ռաշաղոյն զրեալ յալլոց: Նոյնպէս և որ ինչ վասն կատար-  
«մանն Աղղէի աշակերտի Առաքելոյն յԵղեսիայ յորդուոյն Աբ-  
«գարու, որ իբրև թագաւորեաց յետ մահուան հօրն, ոչ եղև  
«ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ երաց զտաճարս  
«կոոցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն: Եւ յղեաց առ  
«Աղղէ, զի արասցէ նմա խոյր բեհեղեաց անգուածով ոսկուոյ,  
«որպէս չառաշաղոյն առնէր հօրն նորա: Եւ պատասխանի  
«ընկալաւ, թէ ոչ արասցեն ձեռք իմ խոյր զազաթան անար-  
«ժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանուոյ:  
«Եւ իսկոյն հրամայեաց միում ի զինակրացն կտրել զոտս  
«նորա սրով: Որոյ երթեալ, և տեսեալ զնա՝ զի նստէր չա-  
«թոռ վարդապետութեանն, էած սուսերաւ և ի բաց կրտ-  
«րեաց զսրունս նորա, և նոյն ժամայն աւանդեաց զօրին:  
«Չայս ծայրաքաղ արարեալ համառօտ չիշատակեցաք, որպէս  
«զառ ի յալլոց պատմեալ նախկին»:

Խ Ո Ր Ե Ն Ե Յ Ի Ե Մ Է Ե Բ Ե Ջ Ե Տ

Գլ. Լ. ... «Ընդ որ զարմացեալ Աբգարու... ետ տանել  
«նմա թուղթ աղաչանաց, զայ և բժշկել զնա ի ցաւոցն, օրի-  
«նակ զայս:

ԼԱ. «Թուղթ Աբգարու առ Փրկիչն Յիսուս  
«Քրիստոս:

«Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ  
«և բարերար...»

«Որոց տարեալ զթուղթն, պատահեցին նմա յԵրու-  
«սաղէմ: Չայս վկայէ աւետարանական բանն,  
«եթէ էին ոմանք ի հեթանոսաց եղելոց առ նա.  
«Վասնորոյ ոչ համարձակին, որք լուանն, ասել

«ց Յիսուս, այլ ասեն ց Փիլիպպոս և ց Անդրէաս. և  
«նոքա ասեն ց Յիսուս: Իսկ Փրկիչն յայնմ ժամանակի  
«յորում կոչեացն զնա, ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի  
«արար զնա, որ ունի այսպէս:

ԼԲ. «Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր  
«գրեաց թուժմաս Առաքեալն հրամանաւ Փրկչին:  
«Երանի իցէ այնմ, որ հաւատայ չիս՝ իբրև ոչ իցէ նո-  
«քա տեսեալ զիս...»

Չայս թուղթ եբեր Անան սուրհանդակ «Աբգարու, ընդ  
«որում և զկենդանագրութիւն Փրկչական պատ-  
«կերին, որ կայ յեղեսացւոց քաղաքին մինչև  
«ցայսօր ժամանակի:

ԼԳ. «Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թովմաս  
«առաքեալ, մի յերկոտասանիցն, առաքեաց մի յօթանասնից  
«անտի՝ զԹաղէոս, ի քաղաքն Եղեսիայ՝ բժշկել զԱբգար և  
«աւետարանել ըստ բանին Տեառն: Որոյ եկեալ ի տուն Տու-  
«բիայ իշխանի հրէի... Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն  
«քաղաքն: Լուեալ Աբգարու ասէ. Նա է վասն որոյ զրեացն  
«Յիսուս. և իսկոյն կոչեաց զնա: Եւ եղև ի մտանել Թաղէի,  
«տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսն Թաղէի. և յարուց-  
«եալ ի գահոյնցն անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր  
«եպագ նմա...»

«Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թաղէի, աւետարա-  
«նեաց նմա և քաղաքի նորա. և ելեալ ձեռն ի վերայ բժշ-  
«կեաց զնա... Եւ հաւատացին ամենեքեան և մկրտեցաւ ինքն  
«Աբգար և ամենայն քաղաքն... Իսկ Առաքելոյն Թաղէի  
«զխոյրաբար ոմն մետաքսադործ մկրտեալ, և անուն կոչե-  
«ցեալ Աղղէ, ձեռնադրեալ ի վերայ Եղեսիայ, փոխանակ իբր  
«թողաւ առ արքայի: Եւ իւր առեալ հրովարտակ յԱբգարէ,  
«զի ամենեքեան լուիցեն աւետարանին Քրիստոսի, զայ առ  
«Սանատրուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր ի վերայ աշ-  
«խարհին և զօրացն: Բայց Աբգար յօժարեցաւ գրել  
«թուղթ առ Տիրերիոս կայսր, որ ունի օրինակ  
«զայս:

«Աբգար արքայ Հայոց, տեառն իմում Տի-  
«բերի...»

«Պատասխանի թղթոյն Աբգարու ի Տիրե-  
«րեայ:

«Տիրերիոս կայսր հռովմայեցւոց, Աբգարու  
«թագաւորին Հայոց խնդալ...»

«Գարձեալ գրէ թուղթ Աբգար առ Տիբերիոս:  
«Աբգար արքայ չայոց, տեառն իմուժ Տիբե-  
«րի կայսեր հռովմայեցւոց խնդալ:

«Զթուղթ գրեալ արժանի քոչոյ տէրութեա-  
«նըդ...»

«Զայս գրեալ Աբգարու, զհաւասար թղթոյն  
«եղի դիւանի իւրուժ, որպէս և զայլսն: Գրեաց  
«և առ Ներսէս մանուկ արքայ Ասորեստանի ի  
«Բաբելոն:

«Թուղթ Աբգարու առ Ներսէս: Աբգար ար-  
«քայ չայոց, որդւոյ իմոյ Ներսէսի խնդալ: Զգիր  
«ողջունի քոչոյ տեսի...»

«Եւ յաւել ևս գրել առ Արտաշէս արքայ  
«Պարսից օրինակ զայս:

«Թուղթ Աբգարու առ Արտաշէս: Աբգար ար-  
«քայ չայոց, Արտաշիսի եղբօր իմուժ Պարսից  
«արքայի խնդալ...»

«ԼԻ. Յազազս վկայութեան Առաքելոյն մե-  
«րոյ:

«Յեա մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն  
«չայոց չերկուս. քանզի Անանուժ որդի նորա կապեաց թագ՝  
«Թագաւորել չեղեսիայ. և քեռորդի նորա Սանատրուկ ի  
«չայս: Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ յառաջագոյն  
«գրեալ չայոց. զգալուստ Առաքելոյն ի չայս, և  
«հաւատալ Սանատրուկոյ, և թողուլ զհաւատն չեր-  
«կիւղէ նախարարացն չայոց, և կատարուժն  
«Առաքելոյն և որք ընդ նմա՝ ի դաւառին Նա-  
«ւարշան որ այժմ կոչի Արտաղ. և պատառուժն  
«քարին և չիրար գալ և ընդունել զմարմին Առա-  
«քելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել  
«ի դաշտին, և մարտիրոսանալ թագաւորի դստե-  
«րըն Սանգիստոյ հուպ ի ճանապարհն. և ասս.  
«ուրեմն չայանել նշխարաց հրկոցուժն և փոխել  
«չԱռապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, այ-  
«լոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչինչ  
«կարեւորագոյն համարեցաք ոճով երկրորդել:  
«Գոյնպէս և որինչ վասն կատարմանն Ագդէի  
«աշակերտի Առաքելոյն չեղեսիայ չորդւոյն Աբ-  
«գարու, գտանի այլոց պատմեալ յառաջագոյն  
«քան զմեզ:

«Որ իբրև թագաւորեաց չեա մահուան հօրն, ոչ եղև  
«ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ երաց զառ-  
«ճարս կոոցն և կայաւ զպաշտօն հեթանոսութեանն: Եւ  
«չղեաց առ Ագդէ զի արասցէ նմա խոյր Բենեղեայ անգուա-  
«ժով ոսկուչ, որպէս առնէր յառաջագոյն հօրն նորա: Եւ  
«պատասխանի ընկալաւ, թէ ոչ արասցեն ձեռք իմ խոյր  
«գաղաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստու-  
«ծոյ կենդանուչ: Եւ իսկոյն հրամայեաց միում ի զինակրացն  
«կտրել զոտս նորա սրով: Որոյ երթեալ և տեսեալ զնա՝ զի  
«նստէր յաթոռ վարդապետութեանն, էաժ սուսերաւ և ի  
«բաց կարեաց զսրունս, նորա, և նոյն ժամայն աւանդեաց  
«զհողին: Զայս ծայրաքաղ սրարեալ համառօտ չիշատակե-  
«ցաք, որպէս զառ ի չայոց պատմեալ նախկին:

«Բայց վիճակեցաւ չայոց և Բարդուղիմէոս  
«Առաքեալ, որ կատարեցաւ առ մեզ յԱրեւանոս  
«քաղաքի: Իսկ զՍիմովնէ, որ Պարսիցն վիճակե-  
«ցաւ, ոչ զհաւաստին կարեմ պատմել՝ եթէ զինչ  
«գործեաց և կամ ուր կատարեցաւ: Քանզի պատ-  
«մի յօմանց, Սիմովնի ուժեմն Առաքելոյ կատա-  
«րիլ ի Վերիոսփորայ. և թէ նա իցէ ճշմարտիւ,  
«և թէ էր ազագաւ գալուստ նորա անդր ոչ զի-  
«տեմ. այլ միայն նշանակեցի, զի գիտասցես՝ թէ  
«ոչինչ մնայ չիմմէ շանից պատմել ընդ զամե-  
«նայն, որ ինչ անկ է:

ԼԵ. «Սանատրուկ թագաւորեալ, զօրս ժողովէ ի ձեռն  
«քաջացն բազրատունեաց և արծրունեաց դայեկաց իւրոց,  
«իշանել տալ պատերազմն ընդ որդիսն Աբգարու...»

«ԼԶ. Այլ որինչ գործք եղեալ Սանատրուկոյ, ոչ ինչ չիշա-  
«տակաց արժանի համարեցաք բայց ի շինուածոյ Մծբին  
«քաղաքի...»

«Սա... կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ չորսի, նետիւ ու-  
«րուք զիպեալ փորոտեացն, իբր թէ վրէժս հատուցեալ  
«ընդ չարչարման սրբոյ դստերն:

«Ղերուբնայ որդի Ափշադարայ դպրի գրը-  
«եաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Աբգա-  
«րու և Սանատրուկոյ, և եղ ի դիւանին չեղե-  
«սիայ»:

44. «Զէ անհաւանական թէ Գրիգոր, ըստ ոգւոյ ժա-  
«մանակին... կ'առանձնանար երբեմն երբեմն ի մենաստան  
«ուրեք. բայց թէ թողուց իսպառ իւր հօտը և մեռաւ յան-

«Ճանօթս, մինչև թաղել ի հովուաց յանդէտս և ապա յայտ-  
 «նել մարմնոյ նորա տեսեամբ՝ զայս չեն զիտեր ոչ Ազաթան-  
 «զեղոս և ոչ Բուզանդ. մանաւանդ թէ Բուզանդ անդէն իսկ  
 «առ կենդանութեամբ Գրիգորի զիտէ զԹորդան կալուած  
 «Գրիգորի, ուր կը բնակէր նա, ուր և թաղուեցաւ... Ի դլ.  
 «ԺԳ. յայտնապէս կ'ըսէ, թէ ինչպէս Յովհաննու և Առաքե  
 «լոց մատուռներն ի Տարօն՝ նոյնպէս եկեղեցին Թորդանու  
 «Վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի՝ կանոնաւ—այս-  
 «ինքն սովորութեամբ ի վաղուց—ի հայրապետացն և ի թա-  
 «ղաւորացն պատուեալք լինէին»: Ապա Բուզանդ չգիտեր ա-  
 «մենէին, թէ նշխարք Գրիգորի թաղեցան ի հովուաց յան-  
 «ճանօթս, մնացին «ճածկեալ ամս բազումս»... և յետ բա-  
 «զում ժամանակաց յայտնեցան «տեսեամբ» և բերեալ եղան  
 «ի զիւղն Թորդան» (Գարադ. Քննակ. Պատմ. Գ. 370):

45. Բիւզանդի ասելով՝ ներսէսը սենեկապետի պաշտօն  
 ունէր Արշակ արքայի մօտ, երբ բնտրուեց կաթողիկոս. և  
 նախապէս սարկաւազ ձեռնադրուելով Փոստոս եպիսկոպոսից՝  
 ուղարկուեց Կեսարիա (Դպր. 2որ. Գ—Դ.):

46. Ուխտանէս եպիսկոպոսը (Պատմ. 120) Վրաց բա-  
 ժանման մասին տառւմ է. «Դարձան Վիրք և եղեն Բաղկե-  
 զոնիկ ի սագրելոյ... Կիւրօնի, միանգամայն և ի կամաց կայ-  
 սերն Մուրկայ»:

47. Սանի. Ստոյիկը չիշում է (եր. 82) ս. Թադէոսի,  
 ս. Սանդխաի և ս. Գրիգորի նշխարների զիւտը միաժամանակ,  
 Քրիստափոր Բ. ի կաթողիկոսութեան և Վահան Մամիկո-  
 նեանի մարդպանութեան օրով. «Տէր Սահակ ի զաւառէն  
 «հարբայ... Եւ յետ նորա տէր Քրիստափոր փիլիսոփայ ի  
 «զաւառէն Բազրեանդայ... Իսկ Վահան զեկեղեցիս Աստու-  
 «ծոյ լուսազարդեալ նորոզէր, զպաշտօնեալս ուխտին մեծա-  
 «բելով... Իսկ յաւուրս Վահանայ յայտնեցան նշխարք սուրբ  
 «Առաքելոյն Թադէոսի և Սանդխտոյ՝ և սրբոյն Գրիգորի  
 «Լուսաւորչին մերոյ»:

Երևի Ստոյիկն առել է այնպէս, ինչպէս գտել է վկայա-  
 բանական մի զրուածում.— Վահան մարդպանը վախճանել է  
 510 թուին. իսկ Քրիստափոր Բ. կաթողիկոսացել է նորա  
 մահից հինգ ասորի յետոյ 515 թ. Յայսմաւուրքի մէջ մուտք  
 է գտել մի խոշոր վրիպակ: Ս. Թադէոսի և Սանդուխաի նըշ-  
 խարների զիւտը թէև գրուած է Վահան Մամիկոնեանի  
 մարդպանութեան միջոցին, բայց Վահանն ինքը զարձել է  
 հայոց ձ՛. և փրկչ. 723 թուականի մարդ. ուստի հ. 2ամ-

չեանն համարում է այդ «յայտոց մուծեալ ինչ. զի յաւուրս  
 մարդպանութեան Վահանայ Մամիկոնու չէ էր եղեալ թուա-  
 կան հայոց» (Ս. 586):

48. «Ինչ որ ըսինք զպատմութիւնէ պատկերին՝ զնոյն  
 «պարտ է ասել հռիփտիմեանց պատմութեան համար, որ է  
 «նոյնպէս առասպելական և զործ տղէտ խաբերայի» (Քննակ.  
 Պատմ. Գ. 89):

49. Թովմայի պատմութեան դէպքերը շատ տարբեր-  
 ւում են մեր միւս պատմիչների գրածներից. օրինակ՝ նորա  
 ասելով՝ Ապուսէթ վերադառնում է առանց պատերազմելու.  
 այնինչ միւսների ասելով՝ Ապուսէթ գալով Տարօն՝ խաբէու-  
 թեամբ ձերբակալում է Բազարատ Բազրատունուն և շրղ-  
 թայակապ ուղարկում է ամիրապետին. այդ բանի վերայ  
 զայրանում են Սասունցիներն և յանկարծ յարձակուելով՝  
 սպանում են անպատրաստ գտնուած Ապուսէթին (2ամչ. Բ.  
 444): Թովմայի ասելով՝ Սասունցիների սպանածն Ապուսէ-  
 թի Յովսէփի (Յուսուփ) որդին էր, որ ոտտիկանի պաշտօնով  
 ուղարկուել էր հայաստան (եր. 119):

50. Բազրատունի իշխանների այդպիսի վարձունքն ի  
 հարկէ Արծրունիների դժգոհութիւնը կյարուցանէր. և Թով-  
 ման իւր ազգակիցներից լսած դժգոհութեան թարգման է  
 հանդիսանում Գ. զպրութեան Ս. զլիսում, թէև բնդհանրաց-  
 րած խօսքերով. «Թէպէտ մինչ այժմ, ասում է նա, նեղեալք  
 «և չարարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայ-  
 «էլական ազգացն տանկական տէրութենէն՝ այլ սակաւա-  
 «գոյնք, և առ փոքր ինչ ժամանակս. և բազում այն էր որ  
 «ի մէնչ հարեալ լինէին, քան թէ մեր հարկանէաք. քանզի  
 «դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեա-  
 «նրս բնակէին իշխանք հայոց ազատագունդ բազմութեամբ  
 «և զօրաց նոցա, թէպէտե ի ծածուկ ունէին զերկբայու-  
 «թիւն նենգութեանց: Իսկ իբրև սկսաւ սպրդել մասնել ի  
 «ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռա-  
 «յաւ մեկնեցաւ զնաց շնորհ աստուածատուր զօրութեանն,  
 «և խորհուրդք խորհրդականացս յօշինչ համարեալ լինէին ի  
 «զործս մարտից և յայլ կարգս հողաբարձութեան աշխար-  
 «հիս... Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միա-  
 «բանութիւն աշխարհիս... Եւ թուղթս և դեսպանս առ թա-  
 «ղաւորն չղէին ծածուկ ի միմեանց. այլև բնդ միմեանս ար-  
 «կանէին բանս քսութեան, և ոչ որ մնայր դէթ երկու ի միա-  
 «սին. և յօյժ ուրախ առնէին զթշնամիսն ի քակել միաբա-

«նութեան իրերաց: Եւ յոլով այն լինէր զոր ինչ զրէինն՝ զոր «ոչ էր գործեալ չայոց, և դամենայն վնասս և զգործս ապրս- «ամբութեանն ի վերայ Աշոտի (Արծրունի) կուտէին»:

51. Թերևս յօղուտ առաջին ենթադրութեան պէտք է առնել հ. Զարբանայեանի աշխատութեան (Պատմ. հ. Դպր. 384—85) մէջ մի երկու ձեռագիրներից առած այն հատուածներն, որոնցից երևում է, թէ այդ պատմութիւնն առաջին անգամ հրատարակ հանելու համար մտածուել է ասել թէ՛ պատմութեան օրինակը Սանահինի վանքից է բերուել, չոգեաց վանքում յօրինուելուն կասկած չտալու համար. «Մե- «տասաներորդ դարու գրչագիր մը՝ ասում է հ. Զարբ. հետեւե- «եալ հեաքքերական տեղեկութիւնը կուտայ Խորենացուցն «այս երկասիրութեանը վրայ. «Չայս ցանկալի պատմութիւ- «նըս՝ բազում ըզծիւ և ցանկալի չուզմամբ գրեալ մեծ հոգե- «տորն Մովսէս՝ որ կոչի Խորենացի գրեաց (ղզ)ստուգիւ «հաւաստեաւ. և քանզի էր աղօտացեալ չաւազաց մերոց, և «ուր ուրեք գտանէին. մինչև ի ձեռն կրօնաւորի միոջ գրտ- «եալ՝ որ էր յերկրէն Խոր չայոց, ի գաւառէն որ կոչի Զո- «րոգետ, ի համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ, պա- «տահումն բարի եղև. և հրամայեաց մեծն և բնաւն ի լաւս՝ «Ստովմ, որչի Սենքերիմայ, չայոց նահանգի Վասպու- «րական կոչեցեալ, որոյ մասն փրկութեան հաւատացեալ էր «Ստովմայ՝ պատկեր մօր տեառն ի բաժին Սնձեացեաց. հրա- «մայեաց գրել մեծաւ յուսով և խնդութեամբ բողմաւ. որոյ «անուամբ պարսպեալ եղիցի մեծաշուք իշխանութիւնն ոցայ, «չորից հարազատ եղբարց՝ Իաւթի և Ստովմայ, Կոստանդեայ «և չամաղասպայ, զեղեցիկ և շքեղազարդ Բագրատունեաց»:

Իսկ 2. ծանօթութեան մէջ. «Ըստ այլոց» ուրեք ուրեք «գտանի յարկեղ զիւանի մերում: Վասնորոյ բազում փութով «խնդրեալ Ստովմայ որչուց Սենքերիմայ, գտանէ ի մեծ սուրբ «ուխտն Սանահին կոչեցեալ: Եւ ի ձեռն մեծագոյն պարզե- «լացն և զրոյ ձեռին՝ հայցէ ի նոցունց. և բերեալ զրով «ստուգապէս հաւաստի պատմութիւնս: Եւ տայ զնել մերժ «առ պատկեր սրբոյ Կուսին, բնաւորեալ սուրբ հոգւոյն: «Վասն զի որք կամիցին զիտել զպատեառ տպաւորեալ սուրբ «պատկերի Ստուղածամաւրն, ընթերցեալ զիւրաւ. ի վերայ «հասանիցեն ամենայնի հաւաստի ի վերայ հասեալ ստոյգ «գիտութեամբ»:

52. «Շինեաց» գործ է ածուած վերաշինեց կամ վերա- նորոգեց նշանակութեամբ:

53. Վարդան վարդապետի Պատմութեան մէջ ևս մուտք է գտել Դաշանց թղթի բաշխած առասպելական իշխանու- թեան և պարզւեաների մի մասը. միայն թէ այս տեղ պար- զեաարողը Սեղբեսարոսը չէ, որ էլ ստացողը՝ չայոց Լու- սաւորիչն. այլ Կեղեստիսնոս պապն է ս. Առաքեալների ա- նունով յայտարարում չայոց կաթողիկոսի իշխանութիւնն և ուղարկում պարզւեաներ: Յիշեալ Պատմութեան ասելով՝ ԺԲ. դարում Կ. Պօլսում այնքան շատ էին չայերն, որ ունէին երեք եպիսկոպոսական աթոռ և հազարվեցհարիւր քահանա- ներ: Իսահակ Փիսիկ կասրը հայաժամանքներ է յարուցանում չայերի դէմ և բռնի ստիպում է նորանց կրօնափոխութեան: Գրիգոր Ապիրատ կաթողիկոսն աղաչանքի զիր է գրում նո- րան, որ ազատ թողնի իւր հոգևոր օրդիններին իրանց կրօնի մէջ. սակայն կաշարը մերժում է խնդիրն. և շարունակելով իւր խիստ հայաժամանքները՝ «զյոլովս դարձօց ի կրօնս իւր, և զայլս հայաժամականս արար»: Կաթողիկոսը տեսնելով իւր հօտի տառապանքը՝ «առաքէր... եպիսկոպոս մի Գրիգոր ա- «նուն ի Պապն չոռոմայ վասն վտանդին, որ ի Յունաց կրէ- «ին չայք». և պապը «հաւաքեաց առ ինքն զամենայն պա- «տուաւորս, զկաշարն Սլամանաց, և զթագաւորն Սնկլիզաց, «և զթագաւորն Փռանցիսաց, իւրեանցայովքն. և զպատրի- «արզն Սլամանաց... և զարհի եպիսկոպոսն Սպանիոյ... և «զարքեպիսկոպոսն սուրբ Յակոբայ... և զմեծ արքեպիսկո- «պոսն մեծի քաղաքին Մեյանայ... և յայսմ կողմանէ զպատ- «րիարզն Երուսաղէմի: Եւ ի խորհուրդ մտեալ նորօք՝ զրեաց «զիր հրամանաւ սուրբ առաքելոցն ի նոցա երեսաց, եթէ «չայոց պատրիարզն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի ի «վերայ չայոց և Յունաց և ամենայն աղգաց, որպէս մեք «յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօք: Եւ վասն «զի երկայն հանապարհ է ի մէջ իմ և եղբօրն իմոյ, չայոց «պատրիարզին, առաքելի նմա զիմ վական և զպօսակն և զկօ- «շիկն, զի զայն զղեցեալ պատարազեացէ մատանեաւ հանուերձ: Եւ «ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. Տար և զղեցո պատրիարզին. «և յայնմ հեռէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւի- «տենից» (եր. 133—34):

Այս տողերին Վենետիկեան հրատարակիչն այսպիսի ծա- նօթութիւն է նուիրում. «Մեծարանութիւնը նմանածայն Դաշանց թղթոյ. բայց ստոյգ միայն է թղթակցութիւնն և առաքումն ընծայից առ մերս հայրապետ»: Իսկ ասում ենք, թէ և ոչ «թղթակցութիւնն և առաքումն ընծայից» է

ստուգ. ըստ որում այդ մասին չկայ քիչ ու շատ վստահելի աղբյուրի վկայութիւն: Մեր կարծիքով՝ վերոկարգուած հատուածը յօրինուած և վարդանի Պատմութեան մէջ մուծուած է ունիթօաների ձեռքով, որոնք ղեկավարուել են այդ տեղ նոյն նպատակով, որով ղեկավարուել են և Դաշանց թղթի հեղինակները:

54. Ն. Մ. Զամչեանն այս եկեղեցականի համար միայն այսքանն է կարողացել ասել. «Ի նոյն աւուրս էր և Մխիթար «քահանայ ոմն Սկեռացի, որոյ լուեալ երբեմն զբանս ինչ «գեսպանի պապին ի խօսել նորա ի վերայ իշխանութեան «սրբոյն Պետրոսի՝ զժկամակեալ շարժեցաւ յատելութիւն. և «զրեաց աղաւաղ և խառնիխուռն բանիւ ինչ ինչ ընդդէմ «գլխաւորութեան առաքելոյն» (Գ. 231): Իսկ հ. Զարբանաւեանը բոլորովին այլ հայեացք ունի Սկեռացու և նորա զբուածի վերայ. «Երեքասաներորդ դարուս մէջ, ասում է նա, զիտութեամբն և խոհական զգօնութեամբ համբաւեալ «էր յազգին Մխիթար ոմն վարդապետ Սկեռացի, զոր Կոստանդին կաթողիկոս և Նէթուս, յարգելով անոր հանճարը, «նուիրակ խրկեցին առ արքեպիսկոպոսն Տիւրոսի Գուլիէլմոս, ... առջի բերան ոչ այնչափ սիրալիր ընդունելութիւն մը բրաւ անոր Գուլիէլմոս. բայց ետքը կաթողիկոսին «կողմանէ խրկուած ընծաներն ընդունելով, յարգեց ու մեծարեց նաև անոր նուիրակը, տեսնելով անոր հմտութիւնն «և տուած իմաստուն պատասխաններն: Օր մը կոչեց զնա ի «ժողով... և սկսան վիճել սրբոյն Պետրոսի առաքելոյն զըլխաւորութեան վրայ: Եւ թէպէտ Մխիթար բաւական հրմտութեամբ կուտար պատասխաններն, բայց մերթ նաև «կանխակալ կարծեօք և հողուով, չափազանց յարմամբ ազգային եկեղեցական զլխոյն իշխանութեան և իրաւասութեան, և մեծ համարելով զնա քան զայլ ամենայն պատրիարքունս» (Հայկ. Ն. Դպր. 751—52):

55. 17-րդ դարի առաջին կէսում արևելեան քրիստոնեաների մէջ երկար տարիներ քարոզական պաշտօնով մնացել և գործել է հռոմէական եկեղեցու այս միսիոներն, որ սովորելով հայերէն լեզուն՝ գրել է իւր երկհատոր աշխատութիւնը պատմական և վարդապետական-վիճաբանական բովանդակութեամբ, որ տպագրուած է հռոմում նոյն դարում, Պրոպականտայի ժողովի հրամանով, որի կողմից նշանակուել է այդ գրուածի գրաբնիչ «Տէր Գրիգոր Մործորեցի ի կարգէն քարոզողաց, Հայկազան սեռէ»: Աշխատութեան Ա. հա-

տորում Գալանոսն իւր քարոզական գործունէութեան համար հետեւեալն է ասում. «Յորժամ առաքեցաք ի սրբազան «հռովմայ պապէն Ուրբանոսէ Ութերորդէ քարոզել այլոց «ազգաց զուղղափառ հաւասան Գրիստոսի, շրջեցաք պանդրխտաբար զարևելեան աշխարհիւ, քարոզելով զուղղափառութիւնն, ուսուցանելով զաշակերտս, կարդալով զճառս այլազգ քրիստոնէից... ևս առաւել բնակեցաք ի մէջ հայոց «ազգի ամս յոլովս ի բազում տեղիս, ի յաշխարհն հայաստանեաց, և ասորոց, և վրաց, և պոնտացւոց, և թաթարաց, «և ի սմիւռնիացւոց, և ևս ի յարբայանիստ քաղաքն Կ. «Պօլսի»:

56. Այդպէս էլ օգտուել է հ. Մ. Զամչեանը նոյն անհարազատ յաւելումներին, Դաշանց թղթի վաւերականութիւնն ի միջի այլոց և Խորենացու վկայութեամբ ցոյց տուած լինելու համար. «Թէ այս Թուղթ դաշանց ոչ է կեղծիք, «այլ՝ նշմարիտ, բանդի օրինակ նորա միշտ գտանիւր յազգի «մերում, նաև յաւուրս Խորենացւոյն. և համարիւր պատճէն «բանից այնր թղթոյ աւանդեալ յԱզաթանդեղոսէ... Նաև «Խորենացին իսկ անտի առնու ըստ մասին զպատմութիւն «սրբոյ կուսին Նունեայ՝ յասելն Բ. 83. «զոր համարձակիմ «ասել առաքելուհի եղեալ քարոզեաց... որպէս ուսուցանէ «քեզ Ազաթանդեղոս»: Արդ՝ ի կարգի պատմութեան Ազաթանդեղոսի ոչ գտանի այսպիսի բան վասն Նունեայ, այլ «միայն համառօտիւ ի Թղթին դաշանց... Սոյնպէս և ի չիշել Խորենացւոյն զմկրտիլ Կոստանդիանոսի, և զերեւումն «խաչին և այլն, վկայ բերէ և զԱզաթանդեղոս, որ զայդ «աւանդէ ի Թուղթն դաշանց» (Ս. 642):

Խորենացու Բ. զրքի 29. զլսի փոփոխութիւնը բացի Դաշանց թղթի ստուգութեան ի վկայութիւն ունենալու զիտաւորութիւնից՝ նաև ուրիշ կողմից շատ սերտ կապ ունի նոյն թղթի հետ.—պէտք էր Կոստանդիանոսին մկրտել տալ, որ Հայոց թագաւորն և Լուսաւորիչը կարողանային զնալ հռոմ թէ խնդակցութեան և թէ «դաշինք» կապելու համար:

57. Հաւատացած ենք, թէ մեր առածը մի օր պիտի ստուգուի, երբ երևան գայ Խորենացու Պատմութեան Ժ.—ԺԱ. դարերի ձեռագիրը: Պակաս նշանակութիւն չի ունենայ այս կէտի նկատմամբ, եթէ մէկն յանձն առնէր ցոյց տալ, թէ չիշեալ Պատմութեան այժմ յայտնի ձեռագիրներին ամենից հինը Հայաստանի ո՞ր նահանգումն է օրինակուած և ո՞վ է գրելը:



«անոն շարադրութիւն: Այս սխալման գլխաւոր պատճառ՝  
 «Կիրակոս պատմչին մէկ խօսքն եղած կ'երևնայ որ կ'ըսէ.  
 «երգեաց շարական և զհարց՝ Մեղաք յամենայնի, որ  
 «մինչև ցայսօր պաշտի չեկեղեցին հայոց»: Մտադրութեան  
 «արժանի է որ պատմիչն երգեաց կ'ըսէ և ոչ թէ յօրի-  
 «նեաց, որով անշուշտ կ'ուզէ հասկցնել թէ խափանուած էր  
 «այն շարականին երգեցումը, և թէ Իմաստասէրը սահմանեց  
 «որ նորէն երգեցուի» (Պատմ. հայկ. Դպր. 486):

Անշուշտ ընթերցողներէրից ոմանք, որոնք վերջիշեալ շա-  
 րականներին անձանթ են, պիտի հետաքրքրուեն զիսկնալու,  
 թէ ո՞րպիսի մեծ տարբերութիւն կայ բովանդակութեան և  
 լեզուի կողմից Դաւիթ մարգարէի և Յակոբ առաքեալի սօ-  
 նին երգուող շարականի և մնացած երեք տօների շարական-  
 ների մէջ, որ վերջորուած երկու պատուարժան հեղինակնե-  
 րից մէկը առաջինի նկատմամբ ցանկանում է որ պատմիչը  
 դրած լինէր թէ աւագ տօների շարականների մէջ միայն  
 «Մեղաք յամենայնի է, որ Օձնեցու ասածը (յօրինածը) չէ».  
 որովհետև այնքան անալի է, որ եթէ Իմաստասէրը կամեցած  
 էլ լինէր, չէր կարող այդպիսի բան յօրինել: Իսկ երկրորդն  
 այն աստիճանի ստոր է գտնում այդ շարականն, այնպիսի  
 խակ և անոն շարադրութիւն, որ մինչև անգամ Օձնեցու մի  
 աշակերտին էլ վերագրել գժուարանում է:

Տարբերութիւնը միայն և միայն այն է, որ «Մեղաք  
 յամենայնի» շարականի մէջ հետևեալ տներն են գտնուում.  
 «Սա (Յակոբ) եղև գլուխ առաքելոց սրբոց:—Որ  
 «երկօրումբք ընտրելովք՝ առաքելաւն Յակոբաւ և մարգա-  
 «րէիւն Դաւթիւ հաստատեաց զհիմունս սուրբ եկե-  
 «ղեցւոյ»: Եւ ի՞նչպէս կարելի է այսպիսի «անալի» խօսքե-  
 րըն Իմաստասէրինն ընդունել, քանի որ «զորս խօսի սոյն  
 «այս Յովհան հայրապետի շարականի վասն գլխաւորութեան  
 «Պետրոսի՝ առաւել է քան զամենայն. և մարթ է ասել՝ թէ  
 «ոչ ոք ի հայրապետաց այնչափ մեծացուցեալ իցէ զիշխա-  
 «նութիւնն Պետրոսի, որպէս սա՝ յասելն զնմանէ... «Որ գե-  
 «րագոյն ընտրելոցն առաքելոցն դասուց անուանեցեր լինել  
 «զերանելին զՊետրոս՝ գլուխ սուրբ հաւատոյ՝ հիմն  
 «եկեղեցւոյ» (Չամչ. Բ. 576):

65. Հեղինակի գրուածներէ մէջ հայոց եկեղեցու այս  
 կամ այն գաւանաբանական և ծիսական խնդրի մասին խօ-  
 սելիս ոչ մի տեղ չէ խնայուած «հայկական հերժուած», «մո-  
 լորութիւն» և այլ բառերի գործածութիւնը: Վերը բերուած

խօսքերից էլ տեսանք, թէ անապական բաժակ խօսքը ս. Լու-  
 սաւորչի անուանը մօտեցնելն անգամ «խայտառակութիւն» և  
 «անհանդուրժելի այլանդակութիւն» է, ուր մնայ այդպիսի  
 բաժակով պատարագելը:

66. Հ. Յ. Տաշեանը Դաւթրոնեանի մատնացոյց արած  
 աղաւաղումն «անսովոր երևոյթ մը» չհամարելով՝ ի հաս-  
 տատութիւն նորան ծանօթութեան մէջ (եր. 19) դնում է  
 հետևեալ օրինակն ևս. «Եւսեբիոսի Եպ.ի վասն հարցման  
 «Աղէքսանդրու վասն կիւրակէի» տակաւին անտիպ (Մատղբ.  
 «հարց Միսիթարեանց Վենետ.») ճառին մէջ, որ յունարէնէ  
 «(տես զայս Card. Mai, Spicil. Rom. IX. իսկ զերմ. թարգ-  
 «մանութիւնը և քննութիւնը ի Դ. Յանէ... որ և ճառին  
 «գրութեան տարին կը գնէ իբր 350-ին), Ե. դարուն  
 «թարգմանուած է, միևնոյն երևոյթը կ'երևայ: Ահաւասիկ  
 «յոյն բնագրին և այսօրուան հայ թարգմանութեան բնագ-  
 «րին համեմատութիւնը:

ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐԸ

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

«Պահել մեզ զսուրբ կիրակէն  
 «և ի բացն կալ ի դործելոյ  
 «այս է պատճառ: Յորժամ  
 «Տէրն զաւրինակ Խորհրդոյն  
 «սահմանէր՝ առեալ զհացն  
 «աւրհնեաց, եբեկ և ետ իւրոց  
 «աշակերտացն՝ և ասէ. Առէք  
 «կերայք, այս է մարմին իմ,  
 «որ վասն ձեր և բազմաց բե-  
 «կանի ի թողութիւն մեզաց:  
 «Նոյնպէս և զբաժակն չեա  
 «խառնելոյ և օրհնելոյ, ետ  
 «և ասէ. Այս է արիւն իմ, որ  
 «վասն ձեր և բազմաց հեղանի  
 «ի թողութիւն մեզաց, զայս  
 «արարէք առ իմոյ չիշատակի:

«Պահել մեզ զկիրակէն այս  
 «է պատճառ: Յորժամ մատ-  
 «նէր Տէր մեր, աշակերտացն  
 «Խորհրդոյն զաւրինակն ետ.  
 «առեալ զհացն աւրհնեաց, և-  
 «բեկ, ետ և ասէ.  
 «Այս է մարմին իմ, որ վա-  
 «սն ձեր փշրի ի թողութիւն  
 «մեզաց.  
 «Պայս արարէք առ իմոյ չիշա-  
 «տակի:

«Յայտնի է որ ընդ օրինակողը դուրս թողած է խառ-  
 «նելոյ բաժակին չիշատակութիւնը, առանց միտ գնելու  
 «որ Բրիտանոսի զոհին մէջ միայն հացի նուիրագործումը դը-  
 «նելով՝ իւր խարդախութիւնն ինքնին կը մատնէ»:

Աղաւաղումն և կեղծումն որ կողմից էլ, ինչ նպատա-

կով էլ եղած լինի, մենք պախարակում ենք, ինչպէս տեսնում են ընթերցողները: Պատրաստ էինք և հ. Տաշեանի յառաջ բերածը հայադաւան մէկի կատարած խարդախութիւն ընդունելու և պախարակելու, եթէ մեզ համար տակաւին տարակուսական՝ և նախապէս զոհացուցիչ լուծման կարօտ չլինէին հետեւեալ հարցերը:

1. Հինգերորդ դարի սկզբում հայրապետական դահի վերայ նստող Յովհան Ոսկեբերանն ասում էր. «Զի են ոմանք՝ «որ ի խորհուրդն շուր ի կիր արկանեն... (Տէրն) յորժամ «զխորհուրդն աւանդեաց, զինուով աւանդեաց. և յորժամ յարեալն՝ առանց խորհրդոյ ի լոկ սեղանն զգինին ի կիր արկ. «ի ծննդենէ որթոյ ասէ, և որթն զինի՝ և ոչ շուր ծնանի»:

Յոյն և լատին վարդապետները մեկնում են, թէ այս խօսքերն ասուած են «ի պատճառս ջրամատուցիցն աղանդաւորաց»: Այդ մեկնութիւնն ընդունելով՝ պիտի կարծինք, թէ Զրամատուցներն այնքան երկիւղ են ազդել եկեղեցուն, որ մինչ անգամ Ոսկեբերան հայրապետն ստիպուած է եղել նորանց մոլորութեան ընդդէմ դնելու համար բացատրել Մատթէոսի աւետարանի «ի բերոյ որթոյ» խօսքը, թէ՛ այդ նշանակում է, որ Քրիստոս ինքը խորհուրդը կատարելիս գինի խմեց և ոչ շուր: Արդ՝ եթէ մինչև անգամ հինգերորդ դարի սկզբումն էլ դեռ շուր բառը արտասանելն երկիւղալի է եղել, կարճը էր միթէ Ոսկեբերանից կէս դար յառաջ զրոյց Եւսեբիոսն ասել. — Քրիստոս տուեց աշակերաններին բաժակն՝ «յետ խառնելոյ»:

2. «Յետ խառնելոյ» ասացուածը բաժակի մասին եղած տիրական խօսքի հետ միասին զործածուած կ'ա՛յ արդեօք մինչև հինգերորդ դարն ապրած յոյն հեղինակներից մի ուրիշի գրուածում ևս, թէ այդ անողը միայն Եւսեբիոսն է:

3. Եւսեբիոսի ճառի յունարէն բնագիրը ո՞ր դարի գրչութիւն է, և սկզբից մինչև այժմ յունական մատենագրութեան մէջ յայտնի իսկական բնագիր է, թէ իսկականի կորուստից չետոյ լատիներէնից նորից թարգմանուած: Եւ թէ՛ մինչև այսօր, դարերի ընթացքում ջրախառն և անջրախառն բաժակի մասին վիճակարանող կողմերից մէկն ու մէկին յայտնի՞ է եղել և չիշատակուե՞լ է երբեք Եւսեբիոսի ճառի «յետ խառնելոյ» ասացուածը:

4. Արդեօք՝ հայերէն թարգմանութեան ընդօրինակողը բաժակի մասին բնագրում գտնուածը խարդախել կամ ենալով՝ ո՞րն աւելի նպատակաշարժար պիտի համարէր. — յետ

խառնելոյ խօսքը միայն բաց թողնե՞լը, թէ հացի հետ անբաժանօրէն կապուած բաժակին վերաբերեալ ամբողջ տողեր:

67. Մեր եկեղեցու վարդապետները բացատրում են Ոսկեբերանի խօսքերն ասուած ջրախառն բաժակի զործածութեան նկատմամբ:

68. Աւելորդ չենք համարում ասել, թէ ո՞րպիսի ժողով է Սարգիկէում գումարուածն, և ի՞նչ նշանակութիւն ունեն նորա կանոններն, որոնց վկայութեանն այնքան յանախ դիմել են հռոմէական եկեղեցու վարդապետութեանը, պապի դերազօյն իշխանութիւնն ապացուցանելու դէպքերում:

Բացի տիեզերական ժողովներից՝ քրիստոնէական իւրաքանչիւր եկեղեցի հարկը պահանջած ժամանակին կազմել է, և միշտ էլ կարող է կազմել առանձին ժողովներ, որոնք և կոչւում էին անդական, բստ որում քննում և որոշում էին այնպիսի խնդիրներ, որոնք միայն մի եկեղեցու սեպհական ներքին խնդիրներ էին:

Տիեզերական երեք ժողովներից յետոյ նորից զօրացած հերետիկոսական ուսմունքներից արևելեան եկեղեցում յառաջ եկած յուզմունքներին վերջ տալու նպատակով Կոստանդիոս կայսրի կամքով որոշուեց 347 թուին գումարել տիեզերական մի նոր ժողով. և ժողովատեղ նշանակեցին Սարգիկէն այն պատճառով, որ գտնուելով հռոմէական պատրիարքութեան շրջանում՝ թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան կայսրութեան սահմանադուրիս էր. ուստի երկու մասերի եպիսկոպոսներին էլ դիւրութիւն կար այդ տեղ ժողովուելու: Հրաւերն արդէն ուղղուած էր արևմտեան և արևելեան եպիսկոպոսներին, սակայն ժողովը կազմուեց միմիայն արևմտականներով. արևելեանները չեկան այն պատճառով, որ նորանցից շատերը լիւնելով Արիոսականներ՝ մի պայժան առաջարկեցին, որից կախուած էր իրանց մասնակցութեանը. — որ ժողովը պիտի հաստատի ս. Աթանասի դատապարտութիւնն: Արևմտեաններն իբրև Աթանասի կողմնակիցներ այդ առաջարկութիւնը չընդունեցին, զորանից էլ ծագեց դժտութիւն և արևելեան եպիսկոպոսները չզնացին Սարգիկէ. ուստի ժողովը կազմուեց միայն արևմտեան եպիսկոպոսներով Ոսիոս եպիսկոպոսի նախագահութեամբ. հետեւաբար կրելով մասնաւոր, տեղական բնաւորութիւն, քննեց և որոշեց մի քանի խնդիրներ, որոնք միմիայն արևմտեան եկեղեցում ունէին նշանակութիւն. և սահմանեց համապատասխան կանոններ: Այդ կանոնների 4-րդ

յօղուածն ասուծ է. «Եթէ մի եպիսկոպոս զաւառի եպիսկոպոսների դատաստանով ամթողազուրկ լինելու վճիռ է ստանուծ և պարտք է համարուծ արդարացնել իրան, նորա տեղը ուրիշը չկարգուի, մինչև հոռմի եպիսկոպոսը զործը քննի և իւր վճիռը տայ»: Իսկ 5-րդ յօղուածն էլ խմբագրուած է այսպէս. «Եթէ հոռմի եպիսկոպոսը կամենայ լսել դատապարտուածի խնդիրն և արդարացի գտնի նորա զործը վերստին քննելը, թող բարեհասնի զրել նոյն դաւառին սահմանակից եպիսկոպոսներին որ նորանք ուշադրութեամբ և մանրամասնաբար քննեն զործի հանգամանքներն և նշմարտութեան մասին կաղմած համոզմունքի համաձայն դատաստան անեն: Իսկ եթէ մէկը աղաչի, որ իւր զործը վերստին քննուի, եթէ հոռմի եպիսկոպոսն արժան կգատի չարգել նորա խնդիրը՝ իւր իրաւունքն է իւր կողմից փոխանորդներ ուղարկել քննելու և եպիսկոպոսների հետ միասին որոշուծն տալու համար: Իսկ եթէ զործի մասին եղած վճիռը բաւական կհամարի, կկարգադրի ինչպէս ինքը բարուօր է համարելու»:

«Հին ընդհանրական կանոնների համաձայն, ասուծ է «Опытъ курса перк. закон. гррѣт հեղինակը (т. I. 475 «—76) յանցանքի մէջ մեղադրուած կամ ուրիշների հետ վէճ ունեցող եպիսկոպոսները դատելի էին զաւառական ժողովներուծ, որոնց նախագահն էր մետրապօլիտը (Ս.ա.ք. 74, «Ս. տիեղ. 5, Բ. տիեղ. 2, 6 և այլն). իսկ դատը մի շրջանից միւսը տանելն, յամենայն դէպս՝ արգելուծ էր (Ս.նախօքի 15, Կարթ. 37):

«Սարգիկէի վերոգրուած կանոնների նկատմամբ գիտենալու է... հոռմի եպիսկոպոսն իբրև զլխաւորն Արևմուտքուծ ունէր իշխանական իրաւունք ամբողջ Արևմուտքի եկեղեցական զործերի վերայ. ինչպէս Ս.դէքսանդրիաչինը՝ «Եզիպտոսի, Ս.նախօքինը՝ Սիրիաչի և Կ. Պօլսինը՝ բոլոր «Արևելքի (յուճական) եկեղեցական զործերի վերայ. որպիսի իրաւունքներ այդ եպիսկոպոսների նկատմամբ ճանաչել են «տիեղ. ժողովներն և հաստատել են կանոններով... Այսպիսով «Սարգիկէի ժողովն այդ կանոններին հակառակ չէ վարուծ, «եթէ ընդունուծ է հոռմի եպիսկոպոսի մի քանի առանձին իրաւունքներն Արևմուտքի եկեղեցական զործերուծ. օրինակ՝ «ժողովը թոյլ է տալիս, որ արևմտեան եպիսկոպոսները դատաստանական զործերի համար բողոքեն հոռմի եպիսկոպոսին, որպէս զի վերստին քննուեն այդ զործերը, ժողովա-

«կան վճիռներից յետոյ: Բայց պէտք է նկատել այս դէպքուծ, որ առաջին ժողովը հոռմի եպիսկոպոսին բողոքելը «չէ ընդունուծ անպայմանաբար, իբրև օրէնք. և պապին «իրան չէ տալիս անմիջական իրաւունք իւր մօտ պահանջելու բոլոր դատաստանական զործերն, այլ՝ երբ որ դատաւորներն իրանք կներկայացնէին, և դատաստանի ենթարկուածների իրանց սեպհական ցանկութիւնն և խնդիրը կը «լինէր այդ... Իսկ եթէ դատուածներն իրանք բողոք չէին «չայտնուծ՝ դատարանի որոշուծն զործադրուելու էր պապից «անկախ: Երկրորդ՝ ժողովն ոչ թէ պապին իրաւունք է տալիս անձամբ հոռմուծ ինքնիշխանաբար վերադատելու և զործերի վճիռներ փոխելու, այլ միայն զրելու յանցաւորին դատող եպիսկոպոսներին կամ նորանց սահմանակիցներին, որ «նորանք զործը վերաքննեն. և թէև ժողովը տալիս է պապին «իրաւունք իւր կողմից ներկայացուցիչներ ուղարկելու, բայց «ոչ նորա համար, որ այդ ներկայացուցիչներն իրանք ըստ «կամս որոշուծն տալին, այլ որ միայն մասնակից լինէին «եպիսկոպոսների դատավարութեան: Երրորդ՝ ժողովը խօսուծ է միայն եպիսկոպոսների ձեռքով եպիսկոպոսների վերայ կատարուող դատաստանի մասին այլ ոչ թէ Եկեղեցու «բարձրագոյն պաշտօնեաների դատաստանի, ինչպէս օրինակ՝ «Արևելեան պատրիարքներն էին կամ Ս.փրիկէի նախաթոռ «եպիսկոպոսներն և ուրիշներն, որոնք իրանք իրաւունք ունէին իրանց շրջաններուծ բարձրագոյն դատաւորներ լինելու. «որոնց արձակած դատավճռի դէմ այլ ևս իրաւունք չկար «ուրիշ որևէ տեղ բողոքելու... Սորա համար էլ արևմտեան «այդ ժողովի, Սարգիկէի կանոնները չէին կարող վերաբերուել Արևելեան Եկեղեցուծ»:

Սարգիկէի ժողովը արևմտեան—տեղական ժողով էր միայն և այդպէս էլ ճանաչել են արևելեան բոլոր եկեղեցիներն, որոնց թուուծ և հայկականն. և թէև այդ ժողովի կանոնները միւս եկեղեցիների կանոնադրերուծ տեղ են գտել, բայց ոչ պարտադիր նշանակութեամբ, այլ իբրև օժանդակ ցուցմունքներ, որպիսի նշանակութեամբ ընդունուած են և միւս տեղական ժողոնների կանոններն, — Անկիւրիաչի, Նէոկեսարիաչի, Գանդրի, Ս.նախօքի և Լաւողիկէի: Յունական եկեղեցին բաւական ուշ է մուծել Սարգիկէի ժողովի կանոններն իւր կանոնադրի մէջ— 680 թուին. շատ հաւանական է ուրեմն, որ նորանց թարգմանութիւնը հայաստանուծ յայտնի եղած լինի էլ աւելի ուշ, բան Յովհան Իմաստասերի ժամանակը:

69. Կեղծ-Մակարի յօդուածներէց առաջինը սարկա-  
ւազներին արգելում է մկրտել: Արդեօք «կանոնական թղթի»  
յօրինողները ժամանակին կարօղ էր լինել Հայաստանում այդ-  
պիսի սովորութիւն, որին յօդուած էին նուիրում:

Պէտք է ասել, որ Քրիստոնէական եկեղեցին սրբազան  
խորհուրդները կատարումն յատկացրել է բուն սկզբից եպիս-  
կոպոսներին և քահանաներին. սակայն մկրտութիւնն այնպի-  
սի մի անհրաժեշտ խորհուրդ է, որ եպիսկոպոսի և քահա-  
նայի չգանուած տեղում, եթէ հարկը պահանջում է, պիտի  
կատարուի. իսկ այդպիսի դէպքում կարող է կատարել և  
սարկաւազն, ինչպէս արեց Առաքելոց ժամանակին Փիլիպ-  
պոս սարկաւազը, մկրտելով ներքինի եթովպացուն. միայն  
դրոշմի խորհուրդը պիտի մնայ մինչև քահանայի կամ եպիս-  
կոպոսի հանդիպելը: Այդպիսի խիստ անհրաժեշտութեան  
դէպքերում միայն սարկաւազներին չէ տրուում մկրտելու ի-  
րաւունքն, այլ աշխարհականներին էլ, թէ տղամարդկանց և  
թէ կանանց (Православно-Догм. Богосл. т. II. 262): Իսկ  
հռոմէական եկեղեցին մինչև անգամ անվաւեր չէ համարում  
հրէայ կամ հեթանոս մարդու ձեռքով կատարուած մկրտու-  
թիւնն, եթէ միայն մկրտողն, որքան էլ իւր համոզմունքով  
հակառակ լինի քրիստոնէական խորհրդի նշանակութեան,  
այսու ամենայնիւ լուրջ դիտաւորութեամբ կատարի արարո-  
ղութիւնն. «է խորհուրդ՝ որ եպիսկոպոսաց և եթ է անկ,  
«որպիսի է ձեռնադրութիւն. և է որ քահանայից, որպիսիք  
«են առաւելագոյնք ի խորհրդոց. և է՝ զոր ի պահանջել հար-  
«կին ամենայն ոք այր և կին կարէ կատարել, որպիսի է մը-  
«կրտութեանն խորհուրդ»:

«Առ վաւերականութիւն խորհրդոյ՝ կարևոր է զի իցէ ի  
«պաշտօնեայն, զէթ զօրութեամբ, դիտաւորութիւն կատա-  
«րելոյ զխորհուրդն... Քանզի և ճրէայ ոք և հեթանոս եթէ  
«արասցէ զմկրտութիւն դիտաւորութեամբ առնելոյ՝ որ ինչ  
«քրիստոնեայք առնեն, կամ որ ինչ եկեղեցին Քրիստոսի կամի,  
«վաւերական է մկրտութիւնն, թէպէտե կատարիչ նորին  
«համարիցի զայն սնապաշտութիւն» (Սատուածար. Տես. Եզ.  
Նիւրմիւզ. Բ. 314—315):

Վստահօրէն կարելի է ասել, թէ Հայաստանեայց եկեղե-  
ցին սարկաւազներին չէ արգելել մկրտել, միայն անհրաժեշ-  
տութեան դէպքում: Դուինի երկրորդ ժողովն, որ դուժա-  
րուեց 527 թուին, Ներսէս Բ. Աշտարակցի կաթողիկոսի նա-  
խագահութեամբ, ԺԼ. կանոնով ասում է. «Սարկաւազունք մի՛

իշխեսցեն մկրտութիւն առնել առանց հարկի»: Պէտք է աս-  
ել, որ Կանոնադրքի մի օրինակում, որ ս. Էջմիածնի մատե-  
նադարանի ձեռագիրը լինելով, այժմ գտնուում է Աստրախա-  
նի կոնսիստորիայում, և որի «թուականն և անունն զրչին  
անյայտ» են, Ներսէս Աշտարակցու կանոնների մէջ վերոգրեալ  
յօդուածն իբրև 17-րդ՝ դրուած է միանգամայն ներհակ մրտ-  
քով. «Սարկաւազունք մի՛ դուցէ մկրտութիւն առնիցեն յան-  
դգնաբար ի կորուստ». բայց աներկբայօրէն նկատում ենք այդ  
տեղ կանոնի խարդախումն. նախ՝ որ աւելի վստահելի օրի-  
նակներում դրուածն այն է, ինչ որ վերը կարգեցինք. երկ-  
րորդ՝ որ դուինի ժողովը չէր կարող սարկաւազի կատարած  
մկրտութիւնն անուանել մի յանցանք, որ տանում է «կո-  
րուստ». քանի որ ընդհանուր քրիստոնէական եկեղեցին ըս-  
կզբից ի վեր թույլատրել է սարկաւազներին մկրտել անհրա-  
ժեշտ դէպքերում. մանաւանդ որ ժողովի համար Փիլիպպոս  
սարկաւազի մկրտութեան օրինակը կար: Որ արդարև Դուի-  
նի ժողովը սարկաւազներին չէ արգելել մկրտել անհրաժեշ-  
տութեան դէպքերում, և հետևաբար նորանք ըստ պահանջ-  
ման հարկի կատարել են մեղանում այդ խորհուրդը, նկա-  
տելի է և կեղծ-Մակարի կանոնների առաջին յօդուածից:  
Յօդուածն յօրինողները կամենալով խափանել սարկաւազների  
մկրտելու իրաւունքը՝ միևնոյն ժամանակ չեն կարողացել  
անվաւեր համարել նորանց ձեռքով կատարուած խորհուրդը  
կամ մեղադրել կատարողներին. ուստի և խուսափել են դը-  
րուած հարցին որոշ պատասխան տալուց. — նախապէս քնն-  
նեցէք, ասում են, եթէ զաւառում սովորութիւն է սարկա-  
ւազներին մկրտութիւն կատարել, և եթէ սարկաւազի մէկը  
մկրտել է եկեղեցու կարգերը չիմանալով՝ անմեղ է. ըստ  
որում զաւառի սովորութեանն է հետևել. իսկ թէ զիտէր  
եկեղեցու կարգն և զանց է արել՝ պիտի պատժուի. — անմիտ  
խօսքեր. ըստորում եթէ մի երկրում եղել է սովորութիւն,  
որ սարկաւազներն էլ անհրաժեշտ դէպքում մկրտեն, կնշա-  
նակի թէ եկեղեցին ինքն է սահմանել այդ սովորութիւնն.  
ուրիշն ըստ սովորութեան վարուող սարկաւազների նկատ-  
մամբ եկեղեցական կարգ զիտել — չգիտելու հարց չէ կարող  
լինել:

Իսկ թէ ի՞նչ նպատակով Մակարի կանոնական թղթ-  
թի մէջ դրուել է այդպիսի յօդուած՝ դժուարանում ենք բա-  
ցատրել: Արդեօք այն ժամանակում, երբ «կանոնական թուղ-  
թը» յօրինուում էր, սարկաւազներն ընդարձակ չափով են

զործ դրել այդպիսի իրաւունքն, և այդ տրտուենչի և անբաւականութեան տեղիք է տուել, որից օգտուել են «կանոնական թղթի» հեղինակներն, թէ նորանք աչքի առաջ են ունեցել մի այլ շահ կամ նպատակ, որ թելադրել է յօդուածներից առաջինը դնել սարկաւազների մկրտութիւն կատարելու իրաւունքի և սովորութեան դէմ:

70. Մայրագոմեցի մականունը Հայ պատմիչներից միայն երկուսի գրուածներումն ենք տեսնում.— Սամուէլ Անեցու և Ստեփ. Օրբելեանի, որ դժուար բացատրելի է. ըստորում երկուքն էլ Յովհաննի վերայ յարգանքով են խօսում, երկուքն էլ մինչև անգամ «տուրք այլ» են նանաչում նորան: Մի՞թէ կարող էին նորանք անգիտանալ այդ մականուան անարգական նշանակութիւնը:

71. Կիրակոս Գանձակեցու ասելով՝ իբր թէ դեռ բուն սկզբում Եզր կաթողիկոսն է Մայրափանեցուն մոլորածիտ գրուածի հեղինակ յայտարարել, աշակերտի հերձուածական գրուածը նորան վերագրելով. «Իսկ մի ոմն յաշակերտացն «Յոհանու, Սարգիս անուն, հերձուած յարոյց. և Եզր համբաւեաց էթէ Յոհանու է հերձուածն և զիրս շարադրեաց. «և այլ հերձուածողաց բանս եղեալ, զբանս աշակերտի նորա՝ Յովհանու վերագրելով. զոր մի ոք իշխեսցէ բամբասել «զտուրբն» (եր. 31):

Իժուար չէ նկատել Կիրակոսի խօսքերի անեղուութիւնը: Կարինի ժողովը գումարուեց 629 թուին. իսկ Եզրը վախճանեց 639 թ. ուրեմն ընդ ամենը տասը տարի է մէջ տեղ անցնում. և Մայրափանեցին այդքան կարճ ժամանակամիջոցում չէր կարող նախ մի տեղ առժամանակ մնալուց և նորից մի ուրիշ տեղ արտորուելուց չետոյ այնպիսի հասուն աշակերտ հասցնել, որ ուսուցչի աւանդածները սովորելուց զատ ուրիշ մոլար ուսմունքների հետեւէր, զբաւոր վաստակներ ունենար նորանց պարզաբանելու և պաշտպանելու միտումով. և նորա գրուածն այնքան հեռուն տարածուելու բողոքին արժանացած լինէր, որ մինչև կաթողիկոսին հասնէր և նորան զէնք տար ուսուցչին մեղադրելու իբրև հեղինակի:

Կիրակոսից յառաջ Սամուէլ Անեցին է չիշում Մայրափանեցու Սարգիս աշակերտի աղանդը. բայց նա աղանդի յայտնուելը դնում է 645 թուին. ուրեմն Եզր կաթողիկոսի մահից 6 տարի յետոյ:

72. Ն. Բարսեղ Սարգիսեանը 1893 թուին լոյս ընծայած «Ուսումնասիրութիւն Մանիքէա—Պաւղիկեան Թոնրա-

կեցիներու աղանդին» աշխատութեան մէջ Մայրափանեցու մոլորածութիւնն աւելի խոշոր աղանդներից բարդուած է տեսնում: Նորա Մայրագոմեցին «տաղանդաւոր և հայրենասէր անձ» ոչ միայն իւր աշակերտի հետ միասին Յուլիանոս Աղիկառնացու աղանդն ընդունած և նորա զրքերի թարգմանիչներն են, այլ և պատճառ զանազան հակաքրիստոնէական աղանդների, մինչև իսկ Պաւղիկեան աղանդի համար ճանապարհ հորդոյներ կամ կամուրջ կապողներ. «Իտելու «ենք որ Յովհանն Մայրագոմեցին և իր աշակերտը Սարգիս,— «որ մոլորութեան շաղին մէջ անցաւ անգր բան զիւր վարդապետը,— յամի Տեառն 645 ժաղած կրօնական և եկեղեցական տարածայնութեանց պատճառաւ՝ արդէն Պաւղիկեանց ցանկիւք սերմերը բուսուցանելու համար հայ հոգը «պատրաստած էին: Այս տաղանդաւոր և հայրենասէր անձս, «այսինքն է Մայրագոմեցին, որ յառաջագոյն այնքան արդիւնաւոր հանգիստացած էր,— գէթ հակաքաղկեդոնեան կուսակցութեան առջև,— Հայաստանեայց եկեղեցւոյ առանձնաշնորհութիւնները պաշտպանելուն և Յունաց ուսնագութեանց «դէմ դնելուն համար, դժբաղդաբար չի մնաց այն սահմանին «մէջ, այլ մղուեցաւ և մղեց զայլս ի ծայրայեղութիւն անգր: «Սա իր աշակերտին Սարգիս հետ մէկ կողմանէ Յուլիանոսի Աղիկառնացու մոլորական գրութիւնները թարգմանելով, իսկ միւս կողմէն ալ երկասիրելով զԽրատ վարք, «զճաւատարմատ և զնոյեմակ և տարածելով ամէն կողմ «պատճառ եղան Երևութականաց և Կաթարոսաց և ուրիշ «հակաքրիստոնէական աղանդոց. մասաւանդ թէ կամուրջ մի «կապեցին անցնելու աստի ի Պաւղիկեութիւն անգր»:

Մենք ուրիշ տեղում առիթ կուենենանք խօսելու հ. Սարգիսեանի աշխատութեան վերայ:

73. Կիրակոս Գանձակեցու ասելով՝ Յովհ. Իմաստասէրն ամիրապետին մատուցել է նաև հետեւեալ խնդիրներն, որոնց կատարման հրովարտակն ստացել է. «Առաջինն այս. ի բրիստոնէից զոր մի՛ բռնադատեսցես թողուլ զհաւատս իւր, այլ «չիւրաքանչիւր կամս թողցես. և երկրորդ՝ զազատութիւն եկեղեցւոյ ընդ հարկաւ մի՛ դնիցես, և ի սարկաւազաց և ի քահանայից մի՛ ինչ առնուցուս. և երրորդ՝ ուր և իցեն բրիստոնէայք «ի տէրութեան բում, համարձակութեամբ պաշտեսցեն զպաշտօնս իւրեանց, զայս գրով տուր մեզ և ամենայն ազգ իմ «ժառայեսցէ բեզ: Եւ վաղվաղակի հրամայեաց զիր դրել ըստ «խնդրոյ նորա և կնքեաց մատանեաւ իւրով» (եր. 38):

74. Հ. Մ. Չամչեանը թէ այս խօսքերի և թէ Ժ. և ԺԱ. կանոնների վերայ հիմնուած ասում է. «Գիտելի է, զի զոր- «ժածութիւն սոցա (երեխաների և հիւանդների իւզերի) այլ «և այլ օրինակաւ երեխն եղեալ չազգի մերում յայլ և այլ «դարս. քանզի եղև ժամանակ, զի բնաւ ոչ ի զործ ածէին «զայսոսիկ. և եղև ժամանակ ինչ, զի խառն ի զործ ածէին. «Իբր զի ըստ զրելոյ Յովհաննու Իմաստասիրի՝ քահանայք «բերել տաչին յճրուսաղէմէ իւզ ինչ՝ զոր խաչի ձէթ անուա- «նէին և նովին ձիթով օծանէին ոչ միայն զերեխայսն, այլ «և զհիւանդս: Իսկ ոմանք այլազգ առնէին. և բազումք ևս «ոչ այսպէս և ոչ այնպէս: Ապա կամելով Յովհաննու Իմաս- «տասիրի անշիոթ և անխառն կարգել զայսոսիկ՝ սահմանեաց «ի կիր առնուլ առանձին ձէթ վասն երեխայից, և առանձին «վասն հիւանդաց, և սակայն չմնաց այն հաստատուն. իսկ «թէ ընդէր, ոչ է յայտ» (Պատմ. Բ. 649—650):

Արդէն ինչ որ պէտք էր ասել կանոնների մասին՝ ասել ենք. այս տեղ կամենում ենք միայն յօդուածի ի վկայութիւն առնուած խօսքերի անհեթեթութիւնը մատնացոյց անել: Հինգերորդ դարի կէսից առանձին ինքնակաց դիրք բռնող հայ- ոց եկեղեցին չէր կարող ութերորդ դարում Երուսաղէմից թէ մի այլ տեղից իւզ սաանալ, որպէսզի նորանով թէ երե- խաներին և թէ եկեղեցի, սեղան և խաչ օծեն: Առաջին օծու- մըն (երեխաների) նա չէ ունեցել, իսկ եկեղեցի, սեղան և խաչ օծելու դէպքում միշտ գործադրուել է եկեղեցու օրհնութեամբ սրբազործուած սեպհական իւզը—ս. մեռոնը:

75. Իմաստասէրի թէ Ստենարանութեան և թէ կանոն- ների մէջ կան ուրիշ մի քանի յօդուածներ ևս, որոնք նոյն- պէս անհարագատութեան նշաններ են կրում իրանցում. սա- կայն նորանց վերայ էլ խօսել չենք կամենում. ըստորում առանց նորանց էլ աշխատութեանս այս մասը ընդարձակուում է:

76. Գուցէ Չահկեցին ինքն էլ անքննաբար կրկնում է ուրիշի խօսքը. սակայն պէտք է չմոռանար, որ ինքն իսկ վկայում է թէ՛ «Ոչ իւզն տայ զառողջութիւն հիւանդաց և «թողութիւն մեղաց, այլ անուն տեառն, չորժամ աղօթիւք «և շերմեռանդական բղձիւ խնդրեն յաստուծոյ առողջութիւն «և թողութիւն մեղաց հիւանդին ըստ վկայութեան առաքելոյս» (Եր. 390): Արդ՝ եկեղեցու տեսակէտով անքահանայ օտարութեան մէջ մեռնող հային ի՞նչ օգուտ պիտի բերէր մանկութեան հասա- կի օծումն, երբ ապագայ ներգործական մեղքերի թողութիւն տուողը—քահանայի աղօթքը, զարձեալ պիտի պակասէր:

### ՎՐԻՊԱԿՆԵՐ


Երես	տող	Ս Խ Ա Լ	Ո Ի Ղ Ի Ղ
4	2	խեթալի	խիթալի
14	10	բռնապատուար	բռնապատուասա
43	30	ձերբերի	ձիրբերի
44	31	կայսեր	կայսեր.
48	27	վրացի	վրալի
49	ճան.	Néf. (նոյնը մի քանի տեղ)	Héf.
63	14	կաթուղիկեաց	կաթուղիկեայ
63	15	յաշխար և նեռինք	յաշխարն նեռինք
64	30	խրին	խրին
73	21	կրօնսն	կրօնսն
76	23	կալանաւորեց	կալանաւորեց
78	7	դորսովին	դսրովին
78	9	ունեմք	ունիմք
80	11	անսպայ	անոպայ
81	9	ի ձէսս	ի ձէսս
84	7	հաւաց թառայ	հաւուց թառայ
85	8	տղիտաբար	ղոկետաբար
88	16	Nistoire, Dogmes	Histoire, Dogmes
89	ճան.	Բնդունի՞	Բնդունի՞ս
90	16—17	ի վերայ դադաթան	ի վերայ դադաթան
96	3	Գաղկու	Գաղկա
103	11	ի թ. ձժդ.	ի թ. չժդ.
103	16	ձկդ.	չկդ.
105	8	Վարդիտաբան	Վարդիտուբան
107	14	չձդ.	չձդ.
107	18	չղե.	չղե.
110	29	Չաղամ	Չաղամ
111		988 թուահամարը կրող Մաշտոցի դիմաց՝ ծանօթութեան գծի մէջ բաց է թողնուած հե- տեւայր.—Սորանում առաջին անգամ չիշուած է օծումն մեռոնաւ:	
116	2	մինչև ժէ. դարի կէսը	մինչև ժե. դարի կէսը
116	10	դրուած	դրուած
118	1	չերկունց	չերկուց
128	2-3	«Որ մերձ առ Աստուած են թողեալ՝ զանբար- բառ պատկերսն որ մերձ առ Աստուած են թող- բառ պատկերսն որ մերձ առ Աստուած են թող- բարեխօս»:	«Որ մերձ առ Աստուած են թողեալ՝ զանբար- բառ պատկերսն որ մերձ առ Աստուած են թող- բարեխօս»:

Երես	տող	Ս Խ Ա Լ	Ո Ի Ղ Ի Ղ
		եայ՝ զանբարբառ պատկերս ունիք բարեխօս»:	
131	16	տեսնելով	տեսանելով
132	9	ի հին ինչ իրուց	ի հին ինչ իրաց
137	15	սրբոյ պատիւը	սրբոց պատիւը
138	33	զանծեալ	զարծեալ
153	22	ի տունէ անտի	ի տանէ անտի
180	11	ի սատրելոյ	ի սաղրելոյ
181	3	հայաճահացն	հայաճանացն
182	27	եկեղեացն	եկեղեցեացն
184	17	քան զԺ. դար	քան զԺ. դար
186	29	Ես Բագրատունւոյդ	Եւ Բագրատունւոյդ
186	31	չունեմ	չունիմ
189	10	անձամբ իւրոյ	անձամբ իւրով
200	6	Լինելով Երեսէս Գ.-ին	Լինելով Երեսէս Գ.-ին
204	20	աւելացել են	աւելացրել են
205	4	զերպանոցն	եղպանոցն
206	20	Բաց է թողնուած ամբողջ նախապատուութիւն. պէտք է կարգալ—վերջինս ասել է. «չորոյ վերայ եհեղ զարիւն իւր ծիածին որդին». շարականն էլ ասում է. «որ ի վերայ սորա հեղեր զարիւնդ»:	
220	10	բացի նորանցից	բացի նորանից
224	6	այսքան	այնքան
224	32	ընդ ծովի	ընդ ծովն
224	32	իմեղս	խեղս
249	21	յամարուել	յարմարուել
255	29	զլխեն	զլխին
261	10	չի բարոզի	զի բարոզի
261	18	(Թիւարիւքեայ)	(Թիւարիւքեայ)
263	2	Չափաչանց	Չափաղանց
272	6	համեմատութեամբ	համեմատութեան
272	21	Կ. Մ. Չամչեանը	Յ. Մ. Չամչեանը
273	10	տրուում էին	զրուում էին
274	20	լիտին	լատին
281	26	կարապետ	կարապետ
284	29	կատարելիութեան	կարելիութեան
297	31	ընդնորինակողի	ընդորինակողի
318	21	ընդ Արիանոս	ընդ Արիանոսս

Երես	տող	Ս Խ Ա Լ	Ո Ի Ղ Ի Ղ
335	4	ընդուել	ընդունել
357	17	առաջակարգութեանն	առաջարկութեանն
360	10	հոգեվանքների	հոգեվարքների
364	31	օժմանէ	օժանէ
365	30	Տրուելեանը	Տրուլեանը
375	24	հայր	կայր
375	32	նորանցից	նորանից
377	5	զրել	ցրել
397	33	մի մի յաշակերտացն	մի յաշակերտացն
398	16	դաստառակաների	դաստառակների
398	29	չեն առում	չեն առնում
400		Երեսից յետոյ զալիս է երեսների թուահամարի սխալ շարունակութիւն. փոխանակ սկսելու 401, տպուած է 441, և այդպէս շարունակուել է մինչև վերջը:	
441	1	Образѣ	Образѣ
441	2	СВѢТЫЙ	СВЯТЫЙ
441	24	նորանցից յետոյ	նորանից յետոյ
444	26	եղելոց առ նա	ելելոց առ նա
449	4	զպատմութիւնէ	զպատմութենէ
451	39	Իսկ ասում ենք	Իսկ մենք ասում ենք
454	19	Թուրքիկ Ֆրանցիսկեան	Բուրքիկ Ֆրանցիսկեան
457	6	չհամարելով	չհամարելով
458	35	վիճակաբանող	վիճաբանող
459	10	վարդապետութեանը	վարդապետները
459	31	մասնակցութեան	մասնակցութիւնը
463	34	ուրիշն	ուրեմն
		Բացի վերոգրեալներից շատ տեղերում մի քանի բառեր փոխանակ գլխադիր ունենալու՝ դրուել են հասարակ առեւորով. և տեղ տեղ էլ հասարակ բառերը դրուել են ներհակաբար: Այսպէս են օրինակ՝ առաջիններից—խորենացի, խորենացու, թովմա առաքեալը, շնորհալի (Ներսէս), զարբնաց բար, թէոզորոս եպիսկ. վիլլոզը, իսկ երկրորդներից—Կաթողիկոս, Իշխանի, Կայսրը, Կայսրի:	
		Տպագրական վրիպակներից յետոյ հեղինակը հարկ է համարում ուղղել բնագրում տեղի գտած երկու սխալ. առաջին՝ 89 երեսի 20-րդ տողը պէտք է լինէր—թէ հեղինակի ազբիւր Մայ կարդինալն ի՞նչ Մաշտոցից է օղտուել՝ չգիտենք: Երկրորդ՝ 116-րդ երեսում, Մաշտոցների թուերը պէտք է	

ուղղել այսպէս. (տող 1) 55, փոխ. 59-ի. (տող 11) չած.  
Մաշտ. 23 օր. փոխ. 25-ի. (տող 13) Մայր Մաշտ. 5 օր.  
փոխ. 6-ի. (տող 22) 55 օր փոխ. 58-ի. (տող 23) 16 օր.  
փոխ. 17-ի:





<< Ազգային գրադարան  
NL0181105

8368

281.6

U-34